

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՏԱՐԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՇԽ ՍԱՐԳՍՅԱՆ, ԱՐԱՐԱՏ ՀԱԿՈԲՅԱՆ

## ՅԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

(Յնագույն շրջանից մինչև մեր օրերը)

Ուսումնական ձեռնարկ

*Լրամշակված վերահրատարակություն*

«ԲԱՐՏԱՐԱԳԵՏ»  
ԵՐԵՎԱՆ 2004

ՀՏԴ 941 (479.25) (07)  
ԳՄԴ 63.3 (23) ց 7  
Ս 259

Երաշխավորված է վերահրատարակման  
ՀՊԵՎ գիւ 24.12.2003թ. նիստում

Ս 259 Սարգսյան Ա., Յակոբյան Ա.

Յայոց պատմություն (Յնագույն շրջանից մինչև մեր օրերը):  
Ուսումնական ձեռնարկ/ Յայաստանի պետական ժարտարագիտական համալսարան. Եր. ճԱՐՏԱՐԱԳԵՏ, 2004: 352 էջ:

Ձեռնարկում հակիրծ ու հանրամատչելի ներկայացված է հայ ժողովողի համակարգված պատմությունը՝ ինագույն ժամանակներից մինչև մեր օրերը: Առանձնապես հանգամանալից է տրված XX դարի պատմությունը:

Լրամշակված ձեռնարկը օգտակար կարող է լինել նաև բուհերի դիմորդներին, ուսուցիչներին, հայոց պատմությամբ հետաքրքրվող ընթերցող լայն շրջաններին:

Պատասխանատու խմբագիր՝

պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Ա.Ա. ԽԱՌԱՏՅԱՆ

Գրախոսներ՝

պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Գ.Մ. ԳԵՂԱՄՅԱՆ

պատմ. գիտ. թեկն., դոցենտ

Պ.Ր. ՇՈՎՐԱՆՆԻՍՅԱՆ

Խմբագիր և վերստուգող սրբագրիչ՝

Հ.Ց. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Ս 0503020913  
0139(01)2004-2004

ԳՄԴ 63.3 (23) ց 7

© Սարգսյան Ա., 2004թ.


© Յակոբյան Ա., 2004թ.

© Հ Պ Ե Վ Հ 2004թ.

ISBN 99941-923-1-0



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԵՐՐԻԳԵՐԱԿԱՆ ՏԻՓԳՐԱՆ ՄԱՍԻ (88-55 թվ. մ.թ.ա.) ՕՐՈՍ



Վահագանական բարեկարգություն

Կապիտուլարի բարեկարգություն

Կապիտուլարի բարեկարգություն

## Խոսք ընթերցողին

Վերջին մեկուկես տասնամյակում մեր կյանքում տեղի ունեցած արմատական փոփոխությունները նոր խնդիրներ են դրել նաև պատմաբանների առջև: Երբեմնի գաղափարաքաղաքական կաշկանդումներից ու շերտանստվածքներից ձերբազատումը այժմ հնարավորություն ու կենս ական անհրաժեշտություն է առաջացրել անաշառ շարադրելու յուրաքանչյուր երկրի ու ժողովրդի մոտիկ և հեռավոր անցյալի պատմությունը: Այդպիսի քայլեր ձեռնարկվում են նաև հայ ժողովրդի պատմության ուսումնասիրման ուղղությամբ: Արդեն հրապարակի վրա են հայոց պատմության, հիմնականում նոր պահանջներով գրված, դասագրքեր և ձեռնարկներ: Ներկայումս զգացվում է հանրամատչելի և համառոտ շարադրված հայոց պատմության միհատորյակի անհրաժեշտությունը: Այդ նպատակով է գրված սույն աշխատությունը:

Գրքում տրված է հայ ժողովրդի ամփոփ պատմությունը հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը՝ հաշվի առնելով ներկա ժամանակաշրջանի

պատմագիտական պահանջները: Մասնավորապես, XIX-XX դարերի պատմությունը շարադրված է նորովի և համեմատաբար հանգամանալի:

Ինքնին հասկանալի է, որ նման փոքրածավալ գրքում հնարավոր չէ լնդգրկել հայ ժողովրդի բազմադարյան հարուստ պատմությունն իր բոլոր դրվագներով ու մանրամասներով: Աշխատությունը ինչ-որ տեղ հայոց պատմությամբ հետաքրքրվող լնթերցողի համար կարող է տեղեկատուի դեր ծառայել, հարստացնել նրա գիտելիքները աշխարհի հնագույն ժողովուրդներից մեկի՝ հայ ժողովրդի անցած պատմական ուղու մասին:

Սա գրքի հերթական՝ բարելավված ու քարմացված հրատարակությունն է:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆԱՇԽԱՐՀԸ

**Հայկական  
լեռնաշխարհը,  
սահմանակից  
երկրները, լեռները  
և լեռնաշղթաները**

Պատմաշխարհագրական այն տարածքը, ուր անհիշելի ժամանակներից ապրել է հայ ժողովուրդը, իր լեռնային կառուցվածքի պատճառով անվանվում է Հայկական լեռնաշխարհ (բարձրավանդակ): Հայկական լեռնաշխարհը հայ ժողովրդի բնօրրանն է:

Այն սահմանակից էր արևմուտքում՝ Անատոլիական (Փոքրասիական) բարձրավանդակին, հարավում՝ Ասորիքին ու Միջագետքին, հարավ-արևելքում՝ Իրանական սարահարթին, իսկ հյուսիսում՝ Կուր գետի հովտին (Վրաստանին ու Աղվանքին):

Հայկական բարձրավանդակը, որն ավելի բարձր դիրք է գոավում հարեան երկրների նկատմամբ, ընդարձակ լեռնային մի զանգված է, որի միջին բարձրությունը ծովի մակարդակից կազմում է 1500-1800 մետր: Հայկական լեռնաշխարհը կազմված է հրաբխային ապարներից և գտնվում է սեյսմիկ երկրաշարժային ակտիվ գոտում: Դրա ամենաթարմ և հիշարժան փաստերից է 1988 թ. դեկտեմբերի 7-ի Սպիտակի ավերիչ երկրաշարժը:

Հայկական լեռնաշխարհի գրեթե կենտրոնում բարձրանում է գեղատեսիլ Մասիսը կամ Արարատը՝ իր մեծ ու փոքր գագաթներով: Մեծ Մասիսի բարձրությունը հասնում է 5165 մետրի: Ավանդության համաձայն, Արարատ լեռան գագաթին է հանգրվանել Նոյի տապանը: Լեռնաշխարհի հայտնի լեռնագագաթներից են Արագածը, Սիփանը, Նեմրութը, Թոնդրակը, Կապուտջուղը: Տարբեր ուղղություններով ձգվում

Են բազմաթիվ լեռնաշղթաներ: Դրանցից, օրինակ, հիշարժան է Հայկական պար լեռնաշղթան, որը սկիզբ է առնում Փոքր ու Մեծ Մասիս ներից և ձգվելով դեպի արևմուտք՝ ավարտվում է Եփրատ գետի հովտում: Հայկական պարը Հայաստանը բաժանում է Երկու հյուսիսային և հարավային մասերի: Լեռնաշխարհի հյուսիսարևմտյան մասում ընկած են Բարձր Հայքի լեռները: Հայտնի են նաև Հայկական Տավրոս, Փոքր Կովկաս լեռնահամակարգերը և այլն:

### **Գետեր ու լճերը, դաշտերը և կլիման**

Հայկական լեռնաշխարհը հարուստ է գետերով ու լճերով, որոնք սնվում են ձնիալքից գոյացող ջրերից, անձրևներից ու սառնորակ աղբյուրներից: Հայոց լեռներից են սկիզբ առնում Առաջավոր Ասիայի խոշոր գետերը՝ Եփրատը, Տիգրիսը, Կուրը, Արաքսը և նորոնիը: Եփրատը Հայկական լեռնաշխարհով հոսող ամենաերկար գետն է, ունի 2700 կմ երկարություն, որից 500 կմ անցնում է բուն լեռնաշխարհով: Եփրատն ունի Երկու գետաբազուկ՝ Արևմտյան Եփրատ, որը սկիզբ է առնում Երգրումի սարահարթից, և Արևելյան Եփրատ կամ Արածանի (Մուլադ), որը սկիզբ է առնում Շաղկանց լեռներից: Երկու Եփրատներն իրար են միանում պատմական Շոփք նահանգի Խարբերդի դաշտում և շարունակելով հետագա հոսքը Ասորիքով (Սիրիա) ու Միջագետքով՝ թափվում Պարսից ծոցը: Հայ ժողովրդի պատմական ճակատագրում առանձնապես մեծ նշանակություն է ունեցել Արաքս (Երասխ) գետը, որին ժողովուրդը անվանել է «Մայր Արաքս»: Արաքսը հոսում է հիմնականում Արարատյան դաշտով, որը Հայկական լեռնաշխարհի ամենաընդարձակ ու բարեբեր հարթավայրն է: Այն ընկած է Մասիս և Արագած լեռների միջև: Արարատյան դաշտն իր արգավանդ հողերով և ռազմավարական նշանակությամբ դարեր շարունակ եղել է Հայաստանի քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքի կենտրոնը: Եվ պատահական չէ, որ այդտեղ են կառուցվել հայոց մայրաքաղաքների մեծագույն մասը՝ Արմավիրը, Երվանդաշատը, Արտաշատը, Վաղարշապատը, Դվինը, Երևանը: Պատմական Հայաստանի նշանավոր դաշտերից են նաև Շիրակը, Տարոնը (Մուշը), Բասենը, Խարբերդը, Ալաշկերտը: Արագած լեռան ստորոտից դեպի արևմուտք ձգվում է Շիրակի դաշտը: Այստեղ է գտնվել պատմական Հայաստանի նշանավոր Անի մայրաքաղաքը:

Պատմական Հայաստանի բնաշխարհի անզուգական զարդերն են

բազում մեծ ու փոքր լճերը: Իրենց մեծությամբ ու նշանակությամբ դրանցից առանձնանում են Վանա լիճը (Բզնունյաց ծով), Սևանա լիճը (Գեղարքունի կամ Գեղամա ծով) և Ուրմիա լիճը (Կապուտան ծով): Սևանա լիճը համարվում է աշխարհի լեռնային ամենամեծ ու ամենաքարձոր լճերից մեկն է, որի բարձրությունը ծովի մակերևույթից հասնում է շուրջ 2000 մետրի: Նրանից է սկիզբ առնում Յրազդան (Զանգու) գետը: Լճի հյուսիսարևմտյան մասում գտնվում է Սևանա կղզին, որը ջրի մակարդակի իջեցման հետևանքով դարձել է թերակղզի: Լիճն ունի քաղցրահամ ջուր և հայտնի է իշխան ձկնատեսակով:

Վանա լիճը շուրջ երեք անգամ մեծ է Սևանա լճից, ունի աղի ջուր և հայտնի է տառեխ կոչվող ձկնատեսակով: Լճում կան մի շարք կղզիներ, որոնցից նշանավոր են՝ Լիմը, Կտուցը, Առտերը ու հատկապես միջնադարյան հուշարձաններով հարուստ Աղթամարը:

Ուրմիա լիճը Յայկական լեռնաշխարհի ամենախոշոր, բայց և ամենածանծաղ լիճն է: Այն գտնվում է լեռնաշխարհի հարավարևելյան սահմանագլխին: Լճի ջուրը խիստ աղի է, այդ իսկ պատճառով զուրկ է կենդանական աշխարհից:

Յայաստանը գտնվում է բարեխառն գոտում, ուր կլիման ցամաքային է, և ունի ջերմաստիճանի մեծ տատանումներ. ձմեռը բավականին ցուրտ է, իսկ ամառը՝ շոգ ու չոր:

### **Բուսական և կենդանական աշխարհը, օգտակար հանածոները**

Յայաստանի բնաշխարհը հարուստ է զանազան բույսերով ու կենդանիներով: Երկրամասի առանձին շրջաններ անտառածածկ են: Յիշենք, որ Յայաստանը համարվում է հացահատիկի մշակության հնագույն հայրենիքը և երկրագործության բնօրրաներից մեկը: Յնուց ի վեր Յայաստանը հայտնի էր իր խաղողով, ծիրանով, դեղձով, կեռասով և այլն: Ծիրանը համարվել է զուտ հայկական պտուղ, և արևին տվող նրա դեղին գույնը՝ հայ ժողովորի ազգային խորհրդանշիշներից մեկն է:

Յարուստ ու բազմազան է Յայկական լեռնաշխարհի կենդանական աշխարհը վայրի և ընտանի կենդանիներով: Ընտանի կենդանիներից տարածված են խոշոր և մանր եղջրավոր անասնատեսակները, ինչը ինքնին ցույց է տալիս, որ լեռնաշխարհի բնակիչները վաղնջական ժամանակներից երկրագործությունից զատ զբաղվել են նաև

անասնապահությամբ: Հնուց ի վեր Հայաստանում տարածված է եղել ձիաբուծությունը: Հայկական սքանչելի ձիերն ունեցել են ոչ միայն տնտեսական, այլև ռազմական նշանակություն:

Հայաստանի ընդերքը հարուստ է ամենաբազմազան հանքային հանածոներով, Դ. Մենդելեևի պարբերական համակարգի մետաղական և ոչ մետաղական շատ ու շատ տարրերով: Դեռ վաղ ժամանակներից հայտնի են եղել պղինձը, երկաթը, կապարը, արծաթը, ոսկին, աղը, շինարարական քարերը, հանքային բուժիչ ջրերը և այլն: Ապացուցված է, որ Հայաստանը եղել է մետաղագործության հնագույն օրրաներից մեկը:

## **Աշխարհագրական գործոնի դերը**

Այս կամ այն ժողովրդի կյանքում որոշակի դեր են խաղացել աշխարհագրական գործոնը, լեռնաաշխարհագրական պայմանները, ռելիեֆը, կլիման, բուսական և կենդանական աշխարհը, բնական հարստությունները և այլն: Աշխարհագրական պայմանների դերը հատկապես վճռորոշ է եղել հին ժամանակներում: Հայաստանի լեռնային քարդ կառուցվածքը (քարձրաբերձ, աննատչելի լեռներ, անտառապատ լանջեր, խորունկ ձորեր ու հովիտներ, անանցանելի գետեր, կիրճեր և այլն) հայ ժողովրդի պատմական ճակատագրում խաղացել է երկակի դեր. մի կողմից այն դարերի ընթացքում օտար նվաճողների և այլ բռնացողների դեմ ունեցել է բնական պատճեշի ինքնապաշտպանական նշանակություն (հիշենք հայ Փիդայիների պայքարը), իսկ մյուս կողմից՝ դժվարացրել է հայոց կենտրոնացված ու միասնական պետության հարատևանական գործընթացը: Հայաստանի կլիման անպայմանորեն ազդել է ժողովրդի բնավորության, նկարագրի և ազգային խառնվածքի առանձին հատկանիշների վրա, իսկ բուսական, կենդանական աշխարհը, օգտակար հանածոները մարդկանց զբաղմունքի վրա և այլն:

Իր աշխարհագրական դիրքով Հայաստանն ընկած է հյուսիսից հարավ և արևելքից արևմուտք տանող առևտրական ճանապարհների խաչմերուկում: Արևելքի երկրները Եվրոպայի հետ կապող հայտնի «մետաքսի ճանապարհը» անցել է նաև Հայաստանով: Այս հանգամանքը, մի կողմից, նպաստել է Հայաստանում առևտրական, սոցիալ-տնտեսական հարաբերությունների զարգացմանը, համաշխարհային քաղաքակրթության արժեքներին հաղորդակից լինելուն, մյուս կողմից՝ դարերի ընթացքում այդ նույն ճանապարհներով հայ ժողովուր-

Դը պարբերաբար Ենթարկվել է Արևելքի և Արևմուտքի քազմապիսի նվաճողների, ավարառու և քոչվոր ցեղերի ասպատակություններին ու ավեր-կոտորածներին:

Հայաստան աշխարհը, գտնվելով Եվրոպա և Ասիա մայրցամաք-ների սահմանագլխին, դարերի ընթացքում մի տեսակ կապող օղակ է հանդիսացել Եվրոպական և ասիական քաղաքակրթությունների միջև։ Հայաստանը նման դեր է կատարել, օրինակ, Յոռմի և Իրանի, Բյուզանդիայի և Արաբական խալիֆաթի, իսկ ավելի ուշ՝ Եվրոպական Երկրների և մահմեդական Արևելքի միջև՝ միաժամանակ կովախնձոր լինելով դրանց միջև։ Սակայն այդ նույն հոլովույթում հայ ժողովուրդը ստեղծել է իր սեփական, ինքնատիպ մշակութը, որը, իրավամբ, արժանի տեղ է զբաղեցնում համաշխարհային քաղաքակրթության մեջ։

**Վարչատարածքային  
քաժանումը:  
Մեծ Հայքը ըստ  
«Աշխարհացույցի»**

Հայ ժողովողի պատմաքաղաքական կյանքը ընթացել է պատմականորեն ձևավորված երեք հիմնական վարչատարածքային միավորներում՝ Մեծ Հայքում, Փոքր Հայքում և Կիլիկիայում։ Այս երեքից բուն հայկական պատմական տարածքը կազմում է Մեծ Հայքը։ Մեր նկարագրած Հայկական լեռնաշխարհն էլ հիմնականում համընկնում է Մեծ Հայք պատմաաշխարհագրական հասկացությանը։ Մեծ Հայքը զբաղեցրել է ավելի քան 300 հազ. քառ. կմ տարածք։ Մինչդեռ ներկայիս Հայաստանի Հանրապետությունը, պատմական դառը ճակատագրի բերումով, զբաղեցնում է ընդամենը շուրջ 30 հազ. քառ. կմ, այսինքն՝ պատմական Հայաստանի տարածքի ընդամենը 1/10-ը։

Ըստ VII դարի գիտնական Անանիա Շիրակացու «Աշխարհացույցի», Մեծ Հայքը բաղկացած էր 15 նահանգներից («աշխարհներից»), որոնց կազմում հաշվվում էր շուրջ 200 գավառ։

Այդ աշխարհներն էին՝ Տայքը, Բարձր Հայքը կամ Կարինի աշխարհը, Ծոփքը կամ Չորրորդ Հայքը, Աղձնիքը, Կորճայքը կամ Կորդվաց աշխարհը, Մոկքը, Պարսկահայքը, Փայտակարանը, Սյունիքը, Արցախը, Ուտիքը, Գուգարքը, Տուրութերանը, Վասպուրականը և Այրարատը։

Փոքր Հայքը գտնվում էր Փոքր Ասիա թերակղզու հյուսիսարևելյան հատվածում՝ Գայլ, Յալիս, Եփրատ և նորոյն գետերի վերին հոսանքների հովիտներում։ Մոտ 200 տարի՝ մ.թ.ա. IV-II դարերում, գոյություն է ունեցել Փոքր Հայքի հայկական ազգային պետականություն։

Կիլիկիան ընկած է Փոքր Ասիայի հարավ-արևելքում՝ Միջերկրական ծովի ափին, Յայկական լեռնաշխարհի հարևանությամբ։ Միջնադարում այնտեղ շուրջ երեք հարյուրամյակ (XI-XIV դարերում) գոյություն է ունեցել Կիլիկիայի հայկական պետությունը։

## **ԲԱԺԻՆ ԱՌԱՋԻՆ**

### **ՀԱՅԳՈՒՅՆ ԵՎ ՀԻՆ ԴԱՐԵՐ**

**Գլուխ առաջին**

### **ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ**

(Յնագույն ժամանակներից մինչև մ.թ.ա. VI դար)

#### **1. Հայաստանը նախնադարում**

##### **Նախնադարյան կարգերը**

Մարդկային հասարակության ապրած հնագույն ժամանակաշրջանը ընդունված է անվանել նախնադարյան կարգերի շրջան: Գիտնականները պարզել են, որ պատմական Հայաստանի տարածքը համաշխարհային քաղաքակրթության սակավաթիվ օրիաներից մեկն է եղել, և այստեղ մարդը երևան է եկել ավելի քան մեկ միլիոն տարի առաջ՝ չորրորդական ժամանակաշրջանում:

Սկզբում մարդիկ ապրել են հոտերով կամ հորդաներով, երբ կարգավորված չեն եղել մարդկային հարաբերությունները: Գոյություն են ունեցել խառն ամուսնություն, մայրիշնանություն: Հետագայում առաջացել է նախնադարյան տոհմը, որի հիմքում ընկած էր արնակցական կապը, իսկ ավելի ուշ՝ տոհմացեղային միությունը:

##### **Նախնադարյան հասարակության դատնության դարբերացումը**

Նախնադարյան հասարակության պատմությունը բաժանվում է հին քարի դարի (պալեոլիթ, որ հունարեն նշանակում է «հին քար»), նոր քարի դարի (նեոլիթ կամ «նոր քար»), պղնձի-քարի դարի (էնեոլիթ), բրոնզի և երկարի դարերի: Նման բաժանում կատարելիս հաշվի է առնվել տվյալ ժամանակաշրջանում գենքեր ու աշխատանքային գործիքներ պատրաստելու համար գոր-

ծածվող հիմնական նյութը քարը, պղինձը, երկարը և այլն:

Յայաստանում հին քարի դարը տևել է 600-800 հազար տարուց ավելի: Նախնադարյան մարդու բնակության վայրեր (կայաններ) են հայտնաբերվել Արտին լեռան լանջերին՝ Սատանի դար կոչվող վայրում (Թալինի շրջան), Արգնի-Նուռնուս, Ֆանտան գյուղերի շրջակայքում, Յրազդանի կիրճում, Կարսում, Մալաթիայում և այլ կայաններում: Դրանցում հայտնաբերված քարե գործիքների ու գենքերի տարիքը հասնում է մոտ 800 հազար տարվա: Յին քարի դարում մարդիկ որսում էին կենդանիներ, ծուկ, հավաքում պտուղներ, օգտվում բնության պարզեցնելու հարիքներից, օգտագործում էին բնական և արհեստական եղանակներով ստացված կրակը, բնակվում քարայրներում, կիրճերում և անտառներում:

Յին քարի դարին հաջորդում է նոր քարի դարը (Անոլիթը), որը սկսվել է մեզանից շուրջ 10 հազար տարի առաջ և տևել մոտ 4-5 հազար տարի: Նեոլիթյան բնակավայրեր են հայտնաբերվել Թալինի և Նոյեմբերյանի շրջաններում, Արարատյան դաշտում և այլուր: Դրանցում գտնված քարե, փայտե և ոսկրե իրերը (դանակ, կացին, մուրճ, իլիկ, խեցեղեն, գենք և այլն) ավելի հղկված ու կատարելագործված են: Այս շրջանում էլ սկսվում է նետ ու աղեղի գործածությունը, կենդանիների ընտելացումը, երկրագործությունը: Աստիճանաբար մայրիշխանությունից անցում է կատարվում դեպի հայրիշխանություն: Զեավորվում է ժամանակակից բանական մարդը: Առաջանում է պաշտամունքի երևույթը: Սկիզբ է առնում խեցեգործությունը: Բազմանում է բնակչությունը: Զեավորվում է ընտանիքը: Արյունակից տոհմերը միավորվելով՝ ստեղծում են ցեղեր: Առաջ են գալիս ցեղային լեզուներ:

Այսպիսով, եթե նախկինում մարդն ապրում էր հավաքչության և որսորդության միջոցով, ապա այժմ սնունդն արտադրում էր ինքը. աճեցնում էր հացահատիկ, խաղող, մրգեր, բանջարեղեն, բազմացնում կենդանիներ: Դրանով իսկ մարդը յուրացնող տնտեսությունից անցում է կատարում արտադրող տնտեսության:

Յայաստանի ընդերքի մետաղի հարուստ պաշարները պայմանավորեցին մետաղամշակության վաղ զարգացումը: Պղնձի մշակումով սկիզբ է դրվում պղնձի-քարի դարի (Էնեոլիթ) ժամանակաշրջանին, որը տևել է VI-IV հազարամյակները (մ.թ.ա.): Էնեոլիթյան բնակավայրեր կան Շենգավիթում, Եջմիածնում, Կոտայքում, Վանում, Կարինում, Բագրևանդի շրջանում և այլուր:

Պղնձի-քարի դարը շատ երկար չի տևել, որովհետև, պղնձի փափուկ լինելու պատճառով դրանից պատրաստված գենքերն ու գոր-

ծիքները շուտ էին շարքից դուրս գալիս: Այդ պատճառով նպատակահարմար է դառնում պղինձը համաձուլել անագի հետ և ստանալ ավելի ամուր ու դիմացկուն մետաղ՝ բրոնզ: Այդպիսի մետաղաձուլարան է գտնվել, օրինակ, Մեծամորում, որը աշխարհում հայտնի հնագույն արհեստանոցներից մեկն է: Մ.թ.ա. III հազարամյակում էնեոլիթին փոխարինելու է գալիս բրոնզի դարը, որը տևում է մինչև II հազարամյակի վերջը (մ.թ.ա. XI-X դարերը): Բրոնզեդարյան տիպիկ բնակավայրեր են Լճաշենի հնավայրը՝ Սևանա լճի ափին, Մոխրաբլուրը՝ Էջմիածնի մոտ, Վանաձորի դամբարանադաշտը և այլն:

Բրոնզի դարում ավելի են առաջադիմում երկրագործությունը, արհեստագործությունը: Պատրաստվում են բրոնզյա երկրագործական գործիքներ, այդ թվում՝ արոր: Զարգանում են դարբնությունը, ուսկերչությունը, արծաթագործությունը, զինագործությունը, խեցեգործությունը և այլն: Մարդիկ անտաշ մեծ քարերից կառուցել են, այսպես կոչված, կիկլոպյան ամրոցներ, «վիշապներ», լեռներում հայտնաբերվել են ժայռապատկերներ՝ կենդանիների ուրվապատկերներով և որսի տեսարաններով: Արդեն բրոնզի դարում Հայկական լեռնաշխարհում կազմավորվեցին մի քանի հզոր ցեղային միություններ կամ պետական կազմավորումներ՝ Հայասա, Արմե, Նահրի, Էթիունի և այլն:

## **Նախնադարյան կարգերի բայցայումը**

Մ.թ.ա. II հազարամյակի վերջերին և I հազարամյակի սկզբներին բրոնզի դարն իր տեղը գիշում է երկաթի դարին: Բրոնզի փոխարինումը ավելի կարծր մետաղով՝ երկաթով, առաջ է բերում հեղաշրջում արտադրության ոլորտում: Բուռն վերելք են ապրում տնտեսությունը և ռազմական գործը: Եթե պալեոլիթում և նեոլիթում մարդիկ հազիվ էին կարողանում սնունդ հայթայթել, ապա բրոնզի ու հատկապես երկաթի դարում, արտադրողական ուժերի զարգացման հետևանքով, առաջանում է նյութական քարիքների ավելցուկ, որը սկսում է կենտրոնանալ տոհմի ավագանու, ավելի ուժեղ մարդկանց ձեռքին: Քայլայվում են տոհմատիրական կարգերը, հանդես է գալիս սեփականությունը, տեղի է ունենում մարդկանց ունեցվածքային շերտավորում: Այս շրջանում ցեղերի և ցեղային միությունների տնտեսական և էթնիկական միավորման ու ձուլման ճանապարհով ավարտվում է ժողովորդի ձևավորումը, հանդես են գալիս պետական կազմավորումներ:

Այսպիսով, Հայկական լեռնաշխարհում քայլայվում է հարյուր-հա-

զարավոր տարիներ տևած նախնադարյան հասարակությունը, և մ.թ.ա. II-I հազարամյակներում սկիզբ են դրվում դասակարգային հասարակությանը և պետությանը:

## 2. Հայկական լեռնաշխարհի հնագույն ցեղերն ու ցեղային միուլթունները: Հայ ժողովրդի կազմավորումը

### Հայերը՝ Հայկական լեռնաշխարհի ժեղաբնիկներ

Հայ ժողովրդի պատմության ամենաստվերոտ և վիճելի հանգամանքներից են հայ ժողովրդի էթնոգենեզի (ցեղասերման) ու կազմավորման հիմնահարցերը: Ցավոք, հայերն

իրենց ծագման ու կազմավորման մասին պատմական լիարժեք տեղեկություններ չեն պահպանել: Այդպիսիք չկան նաև օտար սկզբնաղբյուրներում: Հայ ժողովրդին հասակակից հարեւան հնագույն ժողովուրդներից շատերը՝ շումերներ, աքքադացիներ (քաղեացիներ), խեթեր, խուրիմիտացիներ և այլն, վաղուց հեռացել են պատմության ասպարեզից, ուստի չեն պահպանվել զուգահեռ և բավարար պատմական գրավոր, բանավոր ու նյութական ապացույցներ հայ ժողովրդի կազմավորման վերաբերյալ: Սակայն վերջին 3-4 տասնամյակներում գիտության նորագույն տվյալները որոշակի լույս սփռեցին այդ կարենորագույն հիմնահարցի պարզաբանման վրա:

Հայերը Հայկական լեռնաշխարհի բնիկներն են: Հայերի՝ Հայկական լեռնաշխարհում բնիկ լինելը հաստատվում են լեզվաբանական, հնագիտական, նարդաբանական, նյութական մշակույթի նորահայտ նյութերով և այլ տվյալներով: Ամեն մի ժողովրդի կազմավորման գործում կարենորագույն դեր ունի լեզուն: Ժողովուրդների լեզուները, ըստ լեզվական կառուցվածքի և բառամթերքի, պայմանականորեն բաժանվում են լեզվաընտանիքների: Այդպիսի լեզվաընտանիքներից են՝ հնդեվորականը, սեմականը, թուրքականը, չինականը, ուգրաֆիննականը և այլն: Աշխարհի խոշոր լեզվաընտանիքներից է հնդեվորապականը, որի մեջ մտնող լեզուներով խոսող ժողովուրդները զբաղեցնում են աշխարհագրական շատ մեծ տարածք՝ Հնդկաստանից մինչև Եվրոպա: Դրա համար էլ այդ լեզվաընտանիքին պատկանող ժողովուրդները պայմանականորեն անվանվում են հնդեվորապական: 1837 թ. գերմանացի լեզվաբան Յ. Պետերմանն առաջին անգամ ապացուցեց, որ հայերենը ևս պատկանում է հնդեվորապական լեզվաընտանիքին: Տվյալ լեզվաընտանիքի նախամայր ցեղի զբաղեցրած տարածքի (նախա-

հայրենիքի) ճիշտ որոշումով կարելի է պարզել այդ լեզվալուսանիքին պատկանող այս կամ այն ժողովրդի կազմավորման գործընթացը:

Գիտության նորագույն տվյալներով (Օ. Շիրոկով, Վ. Իվանով, Թ. Գամկրելիձե և ուրիշներ) հիմնավորվում է, որ հնդեվրոպացիների մայր ժողովրդի նախահայրենիքը նոր քարի դարում գտնվել է ոչ թե Հնդկաստանում կամ Եվրոպայում, ինչպես կարծում էին նախկինում, այլ Առաջավոր Ասիայում՝ ընդգրկելով նաև Հայկական լեռնաշխարհը: Գանգաբանական հետազոտության նյութերը ցույց են տալիս, որ Փոքր Ասիայի, Հյուսիսային Միջագետքի և Հարավային Անդրկովկասի հնագույն ժողովուրդներն ունեցել են միևնույն մարդաբանական հատկանիշները: Մ.թ.ա. մոտ VI-IV հազարամյակների ընթացքում տեղի է ունեցել հնդեվրոպական նախամայր ժողովրդի լեզվի տրոհումը: Հնդեվրոպական նախամայր ցեղի ներսում տրոհման ճանապարհով ինքնուրույն էթնիկական միավորները (ցեղերն ու ցեղախմբերը), կազմելով ինքնուրույն լեզու (լեզվաճյուղ), աստիճանաբար հեռացել ու տարածվել են տարբեր ուղղություններով՝ դեպի Եվրոպա և Հնդկաստան: Իսկ հայկական լեզվաճյուղին պատկանող ցեղերը մնացել են տեղում և որպես ժողովուրդ ձևավորվել իրենց իսկ գբաղեցրած հայրենիքում՝ Հայկական լեռնաշխարհում: Դրա հավաստի վկայությունն են լեռնաշխարհում տարածված ցեղային տեղանունները, որոնք ստուգաբանվում են հայերեն կամ հնդեվրոպական այլ լեզուներով: Օրինակ, հայ-հնդեվրոպական ծագում ունեն «Մեծ Հայք», «Փոքր Հայք», «Բարձր Հայք», «Ծոփք», «Անգեղտուն», «Հարք», «Կամախ», «Եկեղյաց» և այլ տեղանունները: Ուշագրավն այն է, որ հայերենով են բացատրվում առանձնապես Հայաստանի արևմտյան հատվածի տեղանունները, որն ինքնին ցույց է տալիս, որ հայկական ցեղերը սկզբում ապրել են Հայկական լեռնաշխարհի արևմտյան մասում: Այդ նշանակում է, որ հերթվում է Հայկական լեռնաշխարհում հայերի եկվոր լինելու մասին վարկածը: Պատահական չէ, որ Հայկական լեռնաշխարհի բնիկները պատկանում են «արմենոիդ» կոչվող մարդաբանական տիպին:

## Հայ ժողովրդի

**կազմավորման գործընթացը:**

**Հայկական ցեղային**

**միությունները՝ Հայաստան,**

**Արմե-Շուլտրիա, Նախրի**

Ինչպես ամեն մի ժողովրդի, այնպես

էլ հայ ժողովրդի կազմավորման գոր-

ծընթացը ընդգրկել է տևական ժամա-

նակ, գուցե հազարամյակներ: Հնդեվ-

րոպացիների մայր լեզուն կրող ցեղից

անջատված հայկական ցեղերը տնտեսական և քաղաքական գործուների ազդեցությամբ համախմբվել և որպես ժողովուրդ կազմա-

վորվել են, ըստ Երևույթին, մ.թ.ա. III-II հազարամյակներում: Յասկանալի է, որ հայ ժողովուրդը կազմավորվել է ոչ միայն զուտ հայկական ցեղերից, այլ նաև բազմաթիվ օտար, ոչ ազգակից ցեղերի ու ցեղախմբերի միաձուլումից, ինչը հատուկ է նաև աշխարհի մյուս ժողովուրդներին: Սակայն անվիճելի է, որ հայ ժողովորդի կազմավորման էթնիկա-լեզվական հիմքը կամ միջուկը եղել են «Յայ» և «Արմեն» հայկական ազգակից ցեղախմբերը:

Յայ ժողովորդի ծագման ու կազմավորման վերաբերյալ մեզ են հասել հայկական, հունական և վրացական առասպելախառն ավանդություններ: Դրանցից ամենաարժեքավորն ու գնահատելին, իհարկե, պատմահայր Մովսես Խորենացու «Յայոց պատմությունից» մեզ հասած «Յայկ և Բել» ավանդապատումն է, որի հիմքում, անշուշտ, ընկած են ճշմարտության հատիկներ: Մ. Խորենացին մեզ տեղեկացնում է, որ հայերի նախահայր Յայկ Նահապետը (որը միաժամանակ և նրանց գլխավոր աստվածն էր) Թորգոմի որդին էր՝ Նոյի սերնդից: Նա գեղարվեստորեն պատկերում է երկու հսկաների՝ Յայկի և Տիտանյան Բելի հակադրությունը և ապա կոհիվը: Այդ կովում հայերի առաջնորդ Յայկը հաղթում է Բելին, որից հետո նրա սերունդը տարածվում է Յայկական լեռնաշխարհով մեկ, և երկիրը նրա անունով կոչվում է Յայք (Յայաստան):

Սկսած III հազարամյակից՝ օտար աղբյուրներում հիշատակություններ կան հայկական ցեղերի և ցեղային միությունների մասին: Մ.թ.ա. XXIII դարում Միջագետքում գտնվող Աքքադական պետության թագավոր Նարամ-Սինի թողած արձանագրություններում մի քանի անգամ հիշատակվում են դեպի հյուսիս՝ Արմանի (նաև՝ Արմանում) երկրի վրա կատարած նրա արշավանքների մասին, երկիր, որը, դատելով ըստ ամենայնի, Յայաստանն է: Յատկանշական է, որ աքքադացիները «արմանում» են անվանել նաև ծիրանը, զուտ հայկական համարվող այդ միրգը, որով այնքան հարուստ էր Արմանում (Արմենիա) երկիրը: Կարծիք կա նաև, որ այդ երկիրը գտնվել է Ասորիքում և կապ չունի Յայաստանի հետ:

Մ.թ.ա. II հազարամյակում Յայկական լեռնաշխարհի ցեղային միություններից կենտրոնական դեր է կատարել Յայաստան, որը և հայ ժողովորդի էթնիկական ձևավորման գլխավոր ատաղձներից մեկն է: Յայաստան կամ Յայասա-Ազգի ցեղային միության (թագավորության) մասին տեղեկություններ են տալիս խեթական արձանագրությունները (մ.թ.ա. XIV-XIII դդ.): Այդ արձանագրություններում Յայաստան հիշվում է որպես թագավորություն, իշխանություն: Յայասայի կենտրոնը

Եղել է Կումախան, հետագայում՝ Անի-Կամախը Եփրաւո գետի ափին: Ուշագրավ է, որ հնում Անի-Կամախը եղել է հայերի հեթանոսական կենտրոնը: Այստեղ է գտնվել նաև հայ արքաների ու մեծատունների պանթեոնը (գերեզմանատունը):

Հայասան գտնվում էր Բարձր Հայքի տարածքում՝ Սև ծովից հարավ, Եփրաւ գետի վերին հոսանքի ավազանում և դեպի հարավ մինչև հայկական ներքին Տավրոս: Նրան հարևան էին արևմուտքում՝ Խեթական Խաթթի, իսկ հարավում՝ Խուռիական Միտաննի թագավորությունները: Խեթական թագավորները հաճախակի բախվել են Հայասայի հետ: Հայասայի բնակիչները եղել են հայերը, իսկ նրանց լեզուն՝ նախահայերենը: Ըստ ամենայնի, «հայ» և «Հայաստան» (Հայք) անվանումները ծագում են «Հայասա»-ից: «Հայասա»-ի «հայ»-ը արմատն է, իսկ «ասա»-ն վերջածանցը, որը խեթերեն նշանակում է հայերի ապրած երկիր՝ Հայք, Հայաստան:

Այսպիսով, Հայասան եղել է հայ ժողովրդի կազմավորման միջուկը և նրա հայրենի երկրի Հայք (հետագայում՝ Հայաստան) ծևով ինքնանվանման հիմքը: «Հայ» անունը ծագում է այս ցեղի անվանումից: Հայասանները հայ ժողովրդի նախնիներն են եղել:

Կան նաև առանձին հետազոտողներ, որոնք Հայ և Հայք բառերի ծագումը բացատրում են փոքրասիական «Հաթ» կամ «Խաթ» կոչվող ցեղի անունով:

Հայկական մյուս հայտնի ցեղերը եղել են «Արմե-Արիմները», որոնք երկրորդ հազարամյակի վերջերին և առաջին հազարամյակի սկզբներին Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևմուտքից շարժվում են հարավ և հաստատվում են Շուպրիա երկրում (Վանա լճից արևմուտք՝ Աղձնիքի նահանգում) և IX դարում ստեղծում Արմե-Շուպրիա հզոր ցեղային միությունը (պետական կազմավորումը): «Արմե» կամ «Ուրմե»-ից էլ սկիզբ են առել «Արմենի», «Արմինա», «Արմենիա» անունները, ինչպես հայերին և նրանց երկիրն անվանում են օտարները: «Արմենի»-ի «նի» մասնիկը խուռի-ուրարտական ծագում ունի և հայերենի «ք» կամ պարսկերենի «ստան» մասնիկի նման մատնանշում է տվյալ ցեղի կամ ժողովրդի բնակության վայրը: Մեզ հասած հավաստի տվյալներով, առաջին անգամ Հայաստանը՝ «Արմենիա» ծևով հիշատակված է պարսկական Դարեհ I արքայի թողած Բեհիսթունյան հոչակավոր արձանագրության մեջ (VI դ. մ.թ.ա.): Դարձյալ ըստ ավանդության, «Արմեն», «Արմենիա» անվանումների ծագումը կապվում է Հայոց Արամ թագավորի (Հայկի սերնդից) անվան հետ, որով, իբրև, մեզ ու մեր երկիրը անվանել են օտար ազգերը: Արա-

րատյան դաշտում և նրանից հյուսիս Սևանա լճի ավազանում տարածվում էր եթունի ցեղային միությունը: Այս միության մեջ մտնում էին բազմաթիվ ցեղեր: Եթունի մշակույթի մասին են պատմում Լճաշենի դամբարանների հնագիտական նյութերը: Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևմուտքում գտնվում էր Դայա ցեղային միությունը, որից էլ առաջացել է հայկական Տայք նահանգի անվանումը:

Հայկական ցեղերի ու ցեղային միությունների մասին, սկսած մ.թ.ա. Հ.Ն. դարից, տեղեկություններ են հաղորդում ասսուրական արձանագրությունները: Ասորեստանի Թիկուլտի-Նինուրտա, Սալմանասար, Թիգլաթ-պալասար, Ասուրնասիպալ և ուրիշ թագավորներ հիշատակում են «Նախի Երկրի» մասին, որ նշանակել է գետերի ու լճերի Երկիր: Այդ նույն Երկիրը հիշատակել են նաև «Ուրուատրի-Ուրարտու» ձևով: Ասորեստանի գահակալների կատարած ավարառություններից երևում է, որ Նախյան ցեղերը ունեցել են զարգացած և հարուստ տնտեսություն:

Այսպիսով, մ.թ.ա. ԽIV-IX դդ. ասորական աղբյուրներում «Նախի» ձևով անվանվող Երկիրը ոչ այլ ինչ է, եթե ոչ Հայաստանը:

Վանա լճի ավազանում և հարավարևենտյան մասում ապրող հայկական, ինչպես և ոչ հայկական այդ բազմաթիվ ցեղային միությունները ընդհանուր թվով 40-60, Ասորեստանի և այլ օտար հարձակուներից պաշտպանվելու նպատակով կազմել են դաշնակցային միություն, որը կետագայում ստանալով նոր որակ, վերաճում է պետական միավորումների: Դրանցից ամենահզորն ու ամենահայտնին դարձավ Վանի թագավորությունը:

### **3. Վանի (Արարագյան) թագավորությունը (մ.թ.ա. IX-VI դդ.)**

**Թագավորության  
կազմավորումն ու  
հզորացումը**

Մ.թ.ա. IX դարում Հայկական լեռնաշխարհում կանա լճի ավազանում, հանդես է գալիս Նախի-Բիայնիլի կամ Վանի թագավորությունը: Այդ պետությունն ասորեստանցիներն անվանել են Ուրուատրի-Ուրարտու: Աստվածաշնչում այն անվանվում է Արարատյան թագավորություն: Ոմանք գտնում են, որ «Ուրարտու» բառը պարզապես «Արարատ» անվանման աղավաղված ձևն է: Թագավորությունը անվանվել է նաև Բիայնա պետությունը կազմավորող Բիայնիլի կոչվող գլխավոր ցեղախմբի անունով:

Իհարկե, չի կարելի անվերապահորեն ասել, թե Վանի կամ Ուրարտական կոչվող թագավորությունը զուտ հայկական (համահայկական) պետություն էր: Գիտական տվյալները հավաստում են, որ այդ պետության (թագավորության) մեջ հայերի հետ միասին նկատելի դեկավար դիրք ու կշիռ են ունեցել նաև խուրիական կոչվող (ոչ հնդեվրոպական) ցեղերը, ոչ հայալեզու այլ ցեղեր ու ցեղախմբեր: Եթե թագավորության առաջին փուլում ավելի ազդեցիկ ու գերակշիռ էին խուրիները, ապա երկրորդ փուլում հայերը: Տեսակետ կա, որ հայ ժողովրդի կազմավորումը, սկսվելով II հազարամյակից, ավարտվել է հենց այս թագավորության ժամանակաշրջանում (IX-VI դդ. մ.թ.ա.):

Բայց սրան հակառակ զարգացվում է նաև մի այլ հայեցակետ այն մասին, որ խուրիական համարվող ուրարտացի ցեղերը և ցեղախմբերը ոչ այլ ինչ են, եթե ոչ հայախոս հայեր, միայն նրանց գրավոր, պաշտոնական լեզուն, որը մեզ է հասել արձանագրությունների ձևով, եղել է պարզապես նոր խուրիերենը: Ասվածից հետևում է, որ այլ լեզուներով Հայաստան երկրին տրված Նահրի-Ուրարտու-Արարատ անվանումները արտահայտել են սոսկ աշխարհագրական իմաստ, վերաբերել են Հայկական լեռնաշխարհին, նրանում ապրող հայկական ու ոչ հայկական ցեղերին և պետական կազմավորումներին:

Վանի (Արարատյան) թագավորության հիմնադիրն է Արամե կամ Արամ թագավորը (860-843 թթ. մ.թ.ա.): Թագավորությունը, որն սկզբում ընդգրկում էր Վանա լճի շրջակայքը, հաջորդ թագավորների օրոք ընդլայնվում է: Այն ընդարձակվում ու հզորանում է հետագա արքաների՝ Սարդուրի I-ի, Իշպուհնի, Մենուայի ու հատկապես Արգիշտի I-ի օրոք իր մեջ ներառելով գրեթե ամբողջ Հայկական լեռնաշխարհը:

Սարդուրը մայրաքաղաք է դարձնում Տուշպան՝ Վան քաղաքը: Մենուա արքան (810-786 թթ.) Վանի մոտ կառուցել է տալիս 72 կմ երկարությամբ «Շամիրամի ջրանցքը», որն, ի դեպ, գործում է մինչև օրս: Հյուսիսում Մենուան հասնում է Արաքսի հովիտը և ափի մոտ կառուցում Մենուախինիլի քաղաքը:

Մենուայի որդի Արգիշտի թագավորը, ընդարձակելով իր տերության սահմանները, մուտք է գործում Այրարատ և մ.թ.ա. 782 թ. հիմնում երեքունին (Երևանը), իսկ մ.թ.ա. 776 կամ 774 թ. Արգիշտիխինիլի (Արմավիր) քաղաք-ամրոցները: Հիշենք, որ մ.թ.ա. 782 թ. համարվում է ներկայիս ՀՀ քաղաքանայր Երևանի հիմնադրման տարեթիվը, ինչի վերաբերյալ Արգիշտի արքան թողել է համապատասխան սեպագիր արձանագրություն: Նա միաժամանակ հարավում հաջողությամբ

մարտնչում էր ահեղ ախոյան Ասորեստանի դեմ: Արգիշտի I-ի ժամանակ (786-764 թթ. մ.թ.ա.) Վանի թագավորությունը հասնում է իր հզորության գագաթնակետին: Թագավորն իր գահակալության տարիներին իրականացրել է 14 խոշոր արշավանքներ, որոնց մասին տեղեկացնում է Վանի մոտ թողած 400 տողանոց հսկա արձանագրությունը: Այդ արշավանքների հետևանքով նա ընդարձակում է թագավորության սահմանները՝ ներառելով գրեթե ամբողջ Հայկական լեռնաշխարհը:

### **Թագավորության թուլացումը և անկումը**

Սկսած Արգիշտի I-ի հաջորդներ Սարդուր II-ից (764-735 թթ. մ.թ.ա.) և Ռուսա I-ից (735-714 թթ. մ.թ.ա.) Վանի թագավորությունը աստիճանաբար կորցնում է իր քաղաքական հզորությունն ու թուլանում: Մ.թ.ա. VIII դարի վերջերից Հյուսիսային Կովկասից Հայկական լեռնաշխարհ են ներխուժում կիմմերական, իսկ VII դարում սկյութական քոչվոր ռազմատենչ ցեղերը, որոնք մեծ հարված են հասցնում Վանի թագավորությանը: Առանձին երկրամասեր մասնատվելով, ինչպես, օրինակ, Արմե-Շուապրիան, դուրս են գալիս թագավորության ենթակայությունից:

Սակայն Բիայնիլի-Վանի պետության գլխավոր ախոյանը շարունակում էր մնալ Ասորեստանը, որը VIII դարի վերջերից կարճատև հզորացում ապրեց: Մ.թ.ա. 714 թ. Ասորեստանի թագավոր Սարգոն II-ը իր բանակով թափանցում է Բիայնիլի երկրի խորքերը և կողոպտում գլխավոր աստծոն Խալդի տաճարը, որը գտնվում էր Մուսասիր (Մուժածիր) քաղաքում: Ռուսա արքան, լուր ստանալով Մուսասիրի տաճարի գոավման ու կողոպտման մասին, ինքնասպան է լինում:

Արդեն VII դ. վերջերին, տևական արշավանքների ու հակամարտությունների հետևանքով, խիստ թուլանում են ինչպես Բիայնիլի-Վանի թագավորությունը, այնպես էլ Ասորեստանը: Այդ նույն ժամանակ Իրանական սարահարթի հյուսիս-արևմուտքում հզորանում է հնդեվրոպական ցեղերից կազմված մարական պետությունը՝ Մարաստանը կամ Մեդիան եքրատան (հետագայում Համադան) կենտրոնով, իսկ Հայկական լեռնաշխարհի հարավարևմտյան մասում՝ Արմե-Շուապրիա երկրում, սկսում է հզորանալ Հայկ նահապետի սերունդներից Հայկազունների արքայատոհմը՝ հանձին Սկայորդու և նրա որդի Պարույրի: Մ.թ.ա. 612 թ. Պարույրը դաշնակցելով Մարաստանի և Նոր Բաբելոնի (քաղդեական) թագավորների հետ՝ մասնակցում է Ասորեստանի հոչակավոր մայրաքաղաք Նինվեի կործանմանը: Այդ հաղթանակից հետո Պարույր Նահապետը (մ.թ.ա. 609 թ.) ճանաչվում է

հայոց թագավոր Երկրի արևմտյան նասում: Իսկ Վանի թուլացած ու մասնատված թագավորությունը, պարփակվելով միայն Վանա լճի արևելյան ափով ու Այրարատով, իր գոյությունը պահպանում է ևս մի 20 տարի, մինչև VI դարի 80-ական թվականները և դրանից հետո վերջնականորեն դուրս է մղվում պատմության ասպարեզից: Ուշագրավ է, որ VII դ. վերջին Ասորեստանի կործանումով վերանում է «Ուրարտու» անվան հիշատակությունը:

### **Պետական կարգը, Տնտեսությունը և մշակույթը**

Վանի կամ Արարատյան թագավորությունը շուրջ Երեք դար (մ.թ.ա. IX-VI դդ.) Յին Արևելքի ռազմաստրկատիրական հզոր պետություններից մեկն էր: Երկրում պետական իշխանությունը կենտրոնացված էր թագավորի և նրա մերձավոր ազնվագարմ ավագանու ձեռքում: Թագավորն ուներ անսահմանափակ իրավունքներ: Պետական իամակարգում մեծ կշիռ ուներ քրմապետը՝ հոգևոր առաջնորդը: Երկիրը բաժանված էր խոշոր նահանգների: Պետությունը պաշտպանվում էր իր ժամանակի իամար բավական լավ զինված ու իանդերձավորված բանակի միջոցով: Պատերազմը Վանի թագավորության իամար ստրկական ուժի և հարստացման հիմնական աղբյուրներից էր: Սակայն ստրկական աշխատանքից զատ Երկրի տնտեսական կյանքում զգալի տեսակարար կշիռ էին կազմում ազատ արտադրողները: Յայկական լեռնաշխարհում մինչև այժմ՝ գտնված ավելի քան 600 սեպագիր արձանագրությունները, տարբեր վայրերում հայտնաբերված հնագիտական բնակավայրերի ու այլ հուշարձանների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Վանի թագավորության շրջանում Յայաստանն ունեցել է զարգացած տնտեսություն (Երկրագործություն, անասնապահություն, արհեստներ, առևտուր) և մշակույթ: Արժեքավոր նյութեր են ստացվել Վանի (Տուշպա), Արմավիրի (Արգիշտիխնիլի), Կարմիր բլուրի (Թեյշեբախնի), Արին-բերդի (Երեբունի) պեղումներից: Կառուցվել են ջրանցքներ, գործածվել են երկաթե Երկրագործական գործիքներ, Կարմիր բլուրում (Երևանի մոտ) կավե մեծ կարասների մեջ հայտնաբերվել են ցորենի, կորեկի, գարու ածխացած սերմեր, խաղողի մնացորդներ և այլն: Զարգացած են եղել արհեստի բազմաթիվ տեսակներ՝ մետաղամշակությունը, կավագործությունը, քարագործությունը, մանածագործությունը, կաշեգործությունը և այլն:

Վանի թագավորության ժամանակաշրջանում Յայաստանն ունեցել է հարուստ և բարձրարվեստ մշակույթ: Մշակութային կենտրոններ են եղել հատկապես խոշոր քաղաքները՝ իրենց բերդերով, ամ-

րոցներով, բնակելի շենքերով, պալատներով։ Թագավորության կարևորագույն կենտրոնն էր մայրաքաղաք Տուշպան՝ Վանը։ Յայտնի էին Երեբունի, Թեյշեբահնի (Երևանում), Արգիշտիխինիլի քաղաքներ։ Տարբեր վայրերից հայտնաբերվել են պղնձից, բրոնզից, ոսկուց, արծաթից պատրաստված արձաններ, արձանիկներ, մեղալիոններ, դրամներ, խորաքանդակներ, բազմագույն որմնանկարներ, գեղազարդված սաղավարտներ, դեկորատիվ վահաններ, ռազմակառքեր, գեղարվեստական այլ իրեր։ Մշակութային օջախներ էին աստվածների պաշտամունքային սրբավայրերը՝ տաճարները։

Դեռևս հնագույն ժամանակներից (նեոլիթից) ծայր է առել երկնային լուսատուների, երկնքի, պտղաբերության և բնության տարերքի պաշտամունքը։ Յեթանոսական կրոնին բնորոշ էր բազմաստվածությունը։ Արարատյան թագավորության սեպագիր արձանագրություններում հիշատակվում են 79 աստվածներ, որոնց մեջ գլխավորը Խալդի աստվածն էր։ Խալդի գլխավոր սրբավայրը գտնվում էր Մուսասիրում։ Գլխավոր աստվածուին Խալդի կին Վարութանին էր՝ արհեստների և արվեստների հովանավորը, բնության, տարերքի, պատերազմի աստվածը՝ Թեյշեբանը, արևի աստվածը՝ Շիվինին և այլք։ Յայերը, ասորեստանյան սեպագրերը հարմարեցնելով իրենց լեզվին, ստեղծել են իրենց սեպագրերը։ Օգտագործվում էին նաև գաղափարագրեր՝ հիերոգլիֆներ։

Այսպիսով, Վանի կամ Արարատյան թագավորությունն իր 270-ամյա գոյության ընթացքում ստեղծեց Յին Արևելքի զարգացած մշակույթներից մեկը, որը արժանի տեղ է գրավում համաշխարհային քաղաքակրթության անդաստանում։

## Գլուխ երկրորդ

### ՀԱՅԱՍՏԱՆ Մ.Թ.Ա. VI-Ի ԴԱՐԵՐՈՒՄ

#### 1. Երվանդունիների (Նայկազունիների) համահայկական թագավորությունը (մ.թ.ա. VI-III դդ.)

##### Համահայկական թագավորության կազմավորումը

Ասորեստանի կործանումից հետո մարերի Կիաքսար թագավորը, ի հատուցումն Պարույր Սկայորդու ցույց տված օգնության, վերջինիս ճանաչում է հայոց թագավոր Արմե-Շուպրիա երկրում:

Շուտով, VI դարի 80-ական թվականներին, Վանի թագավորությունը լիովին վերանում է: Թագավորության մայրաքաղաք Տուշպա-Վանի գրավումից հետո, փաստորեն առանց ընդհատման, հաստավում է Երվանդունիների համահայկական պետությունը: Թագավոր է կարգվում Երվանդ Սակավակյացը: Ըստ պատմահայր Մովսես Խորենացու, Երվանդ Սակավակյացը Պարույր Սկայորդի Նայկազուն արքայի ազգականներից էր: Երվանդ թագավորի անունով էլ հայ թագավորական այս ճյուղը կոչվեց «Երվանդյան» կամ «Երվանդունի»: Մովսես Խորենացին Երվանդունիների դինաստիան անվանում է «Նայկազանց»:

Երվանդունիներն իրենց պետության մեջ միավորեցին նախկին Վանի թագավորության տարածքները՝ Ուրմիա լճի և Կուր և Եփրատ գետերի միջև ընկած ընդարձակ հողերը: Սա արդեն զուտ հայախոս, միատարր հայահայկական ազգային պետություն էր: Մայրաքաղաքն էր Տուշպա-Վանը:

Սակայն Հայաստանի դաշնակցային հարաբերությունները Մարատանի (Մեղիայի) հետ երկար չեն տևել: Մարերի Աժդահակ թագա-

վորի օրոք (585-550 թթ. մ.թ.ա.) Հայաստանը կախման մեջ է ընկնում և հարկատու դառնում Մարաստանին: Մ.թ.ա. VI դարի կեսերին թուլանում է մարերի պետությունը՝ որին կործանիչ հարված է հասցնում պարսից արքա Կյուրոս Սեծը՝ Աքեմենյան տոհմից (550-529 թթ. մ.թ.ա.):

## Հայաստանը Աքեմենյան թետության կազմում

Մ.թ.ա. 550 թ. ստեղծվում է պարսկական հզոր պետություն: Մարաստանի թագավորության վերացման գործում Կյուրոսին

օգնում է հայոց Տիգրան I Երվանդունի թագավորը՝ Երվանդ Սակավակյացի որդին: Տիգրան Երվանդունին հույս ուներ Կյուրոսին օգնելով վերականգնել Հայաստանի անկախությունն ու ինքնուրույնությունը: Սակայն հայերի հույսերը չեն արդարանում: Ծուտով Հայաստանն ընկնում է Աքեմենյան Պարսկաստանի գերիշխանության տակ, դառնում հարկատու՝ պահպանելով միայն իր ներքին ինքնուրույնությունը: Այսպիսով, արտաքին միջամտության հետևանքով Երվանդույաց Հայաստանը երկար չպահպանեց իր անկախությունը և միասնությունը:

Արդեն Դարեհ I-ի գահակալության ժամանակ (522-486) Պարսկաստանի տիրապետության տակ գտնվող մի շարք երկրներ, այդ թվում նաև Հայաստանը, 521 թ. ապստամբում են՝ պարսկական լուծը թոթափելու համար: Մեծ դժվարությամբ ու դաժանությամբ հաջողվում է ճնշել ապստամբությունը: Այդ դեպքերի մասին Դարեհը փորագրել է տալիս երեք լեզվով (իին պարսկերեն, բարելա-ասորերեն և էլամերեն) մի ընդարձակ սեպագիր արձանագրություն, որը հայտնի է «բեհիսթունյան» անունով: Այս արձանագրության մեջ, ինչպես արդեն նշվել է, Հայաստանը մի դեպքում կոչվում է «Արմենիա», իսկ մյուսում՝ «Ուրարտու»: Այսինքն, սրանով հիմնավորապես հաստատվում է, որ Արմինիան և Ուրարտուն նույն երկիրն է:

Ապստամբության ճնշումից հետո Հայաստանը շուրջ 200 տարի մնաց Աքեմենյան Պարսկաստանի տիրապետության տակ: Դարեհ I-ի աշխարհակալ տերությունը, որի սահմանները ձգվում էին Հնդկաստանից մինչև Միջերկրական ծով ու Ջյուսիսային Աֆրիկա, բաժանվեց 20 խոշոր մարզերի, որոնք կոչվում էին սատրապություններ, իսկ դրանց կառավարիչները՝ սատրապներ: Մ.թ.ա. V դարի հույն խոշորագույն պատմիչ Յերոդոտը հաղորդում էր, որ Հայաստանը մտնում էր 13-րդ և 18-րդ սատրապությունների կազմի մեջ, որոնց սատրապները եղել են հայոց Երվանդունի արքայատոհմի ներկայացուցիչները:

Հայաստանն աքեմենյանների տիրապետության ժամանակ զարգացած տնտեսությամբ հարուստ երկիր էր: Միայն Պարսկաստանին,

որպես հարկ, տարեկան վճարվում էր 600 տաղանդ արծաթ (1 տաղանդը հավասար էր 2 փթի կամ 32 կգ-ի) և 20000 ձի: Դարեհը կառուցում է 2400 կմ երկարությամբ «արքայական» կոչված ճանապարհը, որից 320 կմ անցնում էր Յայաստանի հարավային՝ Աղձնիք և Ծոփք նահանգներով: Յայերը Եփրատ գետով աշխույժ առևտուր էին անում Միջագետքի երկրների հետ: Այդ ժամանակվա Յայաստանի և հայերի մասին հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում հույն պատմագիր և զորական Քսենոֆոնը իր «Անարասիս» կամ «Տասը հազարի նահանջը» գրքում:

### **ԱԼ. Մակեդոնացու արշավանքները և Հայաստանի անկախության վերականգնումը**

Մ.թ.ա. IV դարի երկրորդ կեսին Աքեմենյան տերությունը աստիճանաբար թուլանում է: Եվ մ.թ.ա. 331 թ. Գավգամելա բնակավայրի մոտ Մակեդոնիայի թագավոր Ալեքսանդր Սեծը

(Մակեդոնացին) խորտակիչ պարտության է մատնում Դարեհ III Կոդոնանի գործերին և կործանում Աքեմենյան տերությունը: Մ.թ.ա. 323 թ. Ալ. Մակեդոնացու վաղաժամ մահից հետո, նրա հսկայածավալ կայսրությունը, որը ձգվում էր մինչև Յնդկաստան ու Եգիպտոս, քայլավում և բաժանվում է իր զորավարների միջև: Զորավար Սելևկոսը մ.թ.ա. 312 թ. Առաջավոր Ասիայում հիմնում է Սելևկյան հելլենիստական տերություն: Պետության մայրաքաղաքն էր սկզբում Բաբելոնը, հետո՝ Սելևկիա քաղաքը Տիգրիս գետի ափին, իսկ այնուհետև՝ Աստիոքը (Ասորիքում):

Գավգամելայի ճակատամարտից հետո Յայաստանը, թոթափելով աքեմենյան գերիշխանությունը, վերականգնում է իր անկախությունը: Սակայն այն տրոհվում է մասերի: Առաջանում են հայկական երեք ինքնուրույն թագավորություններ՝ Մեծ Յայքի, Փոքր Յայքի և ավելի ուշ՝ Ծոփք-Կոմմագենեի: Երեքում էլ իշխել են Երվանդյան արքայատոհմի ներկայացուցիչները:

Փոքր Յայքի թագավորությունն ընդգրկում էր Եփրատ, Շորոխ, Գայլ և Յալիս գետերի վերին հոսանքների միջև ընկած տարածքը: Փոքր Յայքը իր անկախությունը պահպանեց մոտ 200 տարի, և 11 դարի վերջերին Միհրդատ Պոնտացին նվաճեց այն ու կցեց Պոնտական թագավորությանը:

Յամեմատաբար փոքր թագավորություն էր Ծոփք-Կոմմագենեն, որն անջատվել էր Մեծ Յայքից: Եփրատ գետի աջ և ձախ հատվածներում ընկած Ծոփք-Կոմմագենեի միացյալ պետությունը III դարի վերջերին (Արշամի մահից հետո՝ մոտ 220 թ.) բաժանվում է երկու

ինքնուրույն թագավորությունների՝ Ծոփքի և Կոմմագենեի, որոնցում շարունակում էին իշխել Երվանդունի արքայատոհնի ներկայացուցիչները: Ծոփքի մայրաքաղաքն էր Արշամաշատը, իսկ Կոմմագենեինը՝ Սամոսատը: Հայկական առաջին դրամները հատել են Ծոփքի Երվանդյան թագավորները:

Այս թագավորություններից կենտրոնականը Մեծ Հայքին էր: Հաշվի առնելով հարավից եկող Սելևկյան պետության նվաճումների սպառնալիքը՝ Մեծ Հայքի Երվանդունիները իրենց մայրաքաղաքը ՏուշպաՎանից տեղափոխում են Արարատյան դաշտ, սկզբում՝ Արմավիր (նախկին Արգիշտիխինիլի), իսկ հետո՝ Արաքս և Ախուրյան գետերի միախառնան տեղանքում կառուցված Երվանդաշատ քաղաքները: Բագավան ավանը վերածվում է հեթանոսական կրոնի կենտրոնի:

### **Սելևկյան Տերությունը և Հայաստանը**

Ինչպես տեսնում ենք, մ.թ.ա. III դարում Հայաստանը մասնատված էր առանձին թագավորությունների, որից և օգտվելով՝ Սելևկյան գահակալները ձգտում էին այն նվաճել ու միացնել կայսրությանը: III դարի վերջերին Սելևկյան պետությանը ենթարկվեցին Ծոփքը և Մեծ Հայքի մի զգալի մասը՝ որպես սատրապություններ: Այստեղ ստրատեգներ (ռազմակառավարիներ) նշանակվեցին հայ մեծատոհմիկներից՝ Մեծ Հայքի հարավային նահանգներում Երվանդունիների տոհմից Արտաշեսը, իսկ Ծոփքում՝ Զարեհը: Սելևկյանների հովանավորությամբ (օգնությամբ) Երվանդ Վերջինի (IV-ի) դեմ դուրս եկավ զորավար Արտաշեսը: Վերջինս, պարտության մատնելով Երվանդ IV-ին և գրավելով Երվանդաշատ մայրաքաղաքը, մ.թ.ա. 201 թ. վերջ տվեց Երվանդունիների թագավորությանը:

**Հելլենիզմը** Ալ. Մակեդոնացու արշավանքներով արևելյան երկրների պատմության մեջ սկսվում է մի դարաշրջան, որը կոչվում է հելլենիզմ (հունականություն): Հելլենիզմի բնորոշ կողմնական, քաղաքական և արտադրական ավելի զարգացած ձևերն ու միջոցները, մշակույթը, գիրն ու գրականությունը թափանցում են Արևելք, այդ թվում՝ նաև Հայաստան: Առաջանում են հելլենիստական քաղաքներ, որոնք դառնում են արհեստների, առևտուրի և մշակույթի հայտնի կենտրոններ: Այդ ընթացքում հունական և արևելյան ժողովուրդների ստեղծած տեղական մշակույթների միախառնումից առաջանում է մշակույթի մի նոր որակ՝ հելլենիստական: Հելլենիզմի աղդեցությունը շարունակվեց ընդհուպ մինչև քրիստոնեության տա-

րածումը և հաստատումը Հայաստանում մ.թ. III-IV դարերը: Յելլենիստական մշակույթը հույների և Արևելքի ժողովուրդների արժեքավոր ներդրումն է համաշխարհային մշակույթի պատմության մեջ:

## 2. ՄԵԾ ՀԱՅՔԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՎԹԵՅՈՒՆը: ԱՐՏԱՉԵՍ I

### ՄԵԾ ՀԱՅՔԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ

Մ.թ.ա. II դարի սկզբներին Արևմուտքից սկսեց Արևելք թափանցել ռազմաստրկատիրական հզոր պետությունը՝ Հոռոմը: Մ.թ.ա. 190 թ. Փոքր Ասիայի Մագնեսիա քաղաքի մոտ տեղի ունեցած ճակատամարտում հոռոմեական զորքերը (լեգենները) ջախջախեցին սելևկյան բանակը: Դրանից հետո Սելևկյան տերությունը սկսեց քայքայվել: Օգտվելով այդ նպաստավոր դրությունից Մեծ Հայքի ստրատեգ Արտաշեսը և Ծոփքի կառավարիչ Զարեհը իրենց հոչակում են թագավոր: Այսպիսով, մ.թ.ա. 189 թ. վերականգնվում է Հայոց անկախ թագավորությունը Մեծ Հայքում և Ծոփքում:

Արտաշես I-ը Մեծ Հայքում սկիզբ է դնում մի արքայատոհմի, որն իր անունով կոչվում է Արտաշեսյան: Արտաշեսյան թագավորությունը գոյատևել է 190 տարի մինչև մ.թ. 1 թվականը:

Արտաշես I-ը (189-160 թթ. մ.թ.ա.) միավորում է համարյա բոլոր հայկական հողերը (բացի Ծոփքից) և հիմնում Մեծ Հայքի միասնական ու կենտրոնացված պետություն: Նախ, նա որոշում է իր պետությանը միացնել Արարատյան դաշտը և Յուսիսային Հայաստանը, ուր տակավին իշխում էին Երվանդունիները: Ըստ հույն աշխարհագիր Ստրաբոնի, այդ միացումը կատարվել է մինչ Արտաշեսի թագավոր հոչակվելը (201 թ. Իպսոսի ճակատամարտից հետո): Մովսես Խորենացին հայտնում է, որ Արտաշեսը, մուտք գործելով Արարատյան դաշտ, գրավում է Երվանդունիների մայրաքաղաք Երվանդաշտը, որի ժամանակ պատահաբար սպանվում է Երվանդ IV Վերջինը:

Թագավորության հոչակումից հետո Արտաշես արքան, մի շարք հաղթական կոիվներ նղելով, թագավորությանն է միացնում նաև Գուգարքը, Տայքը, Վասպուրականը, Արցախը, Սյունիքը, Ուտիքը, Փայտակարանը, մի խոսքով՝ Մեծ Հայքի բոլոր նահանգները, բացառությամբ Ծոփքի, որը Կապադովկիայի միջամտությամբ չի հաջողվում միացնել: Այն հնտագայում միավորում է Տիգրան Մեծը: Արտա-

շես արքան ամրացնում է Հայաստանի հյուսիսային սահմանները կովկասյան լեռնականների ալանների (օսերի) հարձակումներից և կնության է առնում նրանց թագավորի դատերը Սաքենիկին:

### **Արտաշես I-ի բարենորդումները**

Արտաշեսի օրոք հայկական կենտրոնացված պետության ստեղծումը, բնականաբար, նպաստեց Երկրի տնտեսական և մշակութային կյանքի վերելքին: Արտաշես արքան, պետության անվտանգությունն ապահովելու նպատակով, թագավորությունը բաժանեց չորս ռազմական շրջանների (զորավարությունների), որոնք հետագայում կոչվեցին բդեշխություններ (կուսակալություններ): Դրանց կառավարումը նա հանձնեց իր որդիներին ու մերձավորներին, միաժամանակ վերակառուցվեց բանակը:

Արտաշես արքան կատարեց հողերի վերաբաժանում և հողակտորների միջև դնել տվեց սահմանաքարեր, որոնց վրա կան արամերեն արձանագրություններ: Այդ սահմանաքարերը, որպես կանոն, դրվում էին դաստակերտների (ագարակներ) և գյուղական համայնքների հողերի միջև, որպեսզի ազարակատերերը չզավթեն համայնական հողերը: Պետության կառավարումը հեշտացնելու նպատակով Երկիրը վարչապես բաժանեց 120 գավառների: Բարեփոխվեցին նաև տոմարը և օրացույցը:

### **Արտաշեսի հիմնադրումը**

Արտաշես I-ը ուշադրություն է դարձնում նաև քաղաքաշինությանը: Նա կառուցում է մի նոր մայրաքաղաք Արարատյան դաշտում՝ Արաքս և Սև ջուր գետերի խառնման տեղանքում, հելլենիստական տիպի Արտաշատ մայրաքաղաքը: Յուշն պատմագիրները վկայում են, որ Արտաշատի տեղի ընտրության և հատակագծման գործում Արտաշեսին իր խորհուրդներով օգնել է Կարթագենի հռչակավոր զորավար Յաննիբալը: Մայրաքաղաքը գտնվում էր պետության գրեթե կենտրոնում՝ առևտրական բանուկ ճանապարհների հանգույցում: Քաղաքը շրջապատված էր հզոր պարիսպներով ու ջրապատճեղով: Արտաշատը մի քանի դար շարունակ Հայաստանի տնտեսական, քաղաքական և մշակութային նշանավոր կենտրոններից մեկն էր: Արտաշես արքայի օրոք հիմնվեցին Զարեհավան և Զարիշատ անվանումներով մի քանի քաղաքներ:

**Հայաստանը** Արտաշես I-ի օրոք Հայաստանը բարձավ խիտ բնակչությամբ ռազմատնտեսապես հզոր ու բարգավաճերկիր, որը, պատմահայր Մովսես Խորենացու վկայությամբ, այնքան էր շենացել, որ չուներ ոչ մի թիգանմշակ հող: Եվ պատահական չէր, որ նույն Պատմահոր պատկերավոր արտահայտությամբ. «Արտաշեսի փեսայության ժամանակ ոսկի էր տեղում, իսկ Սաքենիկի հարսնությանը՝ մարգարիտ»:

Արտաքին քաղաքականության ասպարեզում Արտաշես արքան հաջողությամբ դիմագրավում էր Սելևկյաններին և այլ ախոյան պետությունների: Նրա օրոք Մեծ Հայքի միասնական թագավորությունը դառնում է Մերձավոր Արևելքի ուժեղ և ազդեցիկ պետություններից մեկը: Արտաշես I-ը մահացել է մոտ 160 թ. մ.թ.ա.: Հետագայում Արտաշես I-ի գործը շարունակեց նրա հետմորդներից ամենատաղանդավորը՝ Տիգրան II-ը:

### 3. Հայաստանի հզորացումը Տիգրան Մեծի օրոք

**Տիգրան Մեծի գահակալությունը** Ս.թ.ա. 95 թ. Մեծ Հայքում գահ է բարձրանում հին Հայաստանի ամենախոշոր քաղաքական գործիչներից մեկը՝ Տիգրան II-ը, որին, իրավամբ, անվանում են Տիգրան Մեծ: Նա մինչև գահ բարձրանալը, շուրջ 25 տարի, պատանդ էր հարեւան պարթևական պետությունում Պարսկաստանում: Պատանդությունից ազատվելու համար Տիգրան թագաժառանգը, որպես փրկագին, պարթևներին է զիջում Հայաստանի հարավ-արևելքում գտնվող «70 հովիտներ» կոչված տարածքը և բարձրանում է Հայոց գահը: Արտաշես I-ի թոռ Տիգրան II-ը կամ Մեծը գահ է բարձրացել 45 տարեկան հասակում՝ 95 թ. մ.թ.ա. և թագավորել է մինչև 55 թ. մ.թ.ա.:

**Տիգրան Մեծի նվաճումները** Տիգրան Մեծի օրոք Հայաստանը հասավ իր տնտեսական և ռազմաքաղաքական հզորության գագաթնակետին: Հայաստանի հզորացումը պայմանավորված էր ինչպես Տիգրան Մեծի քաջությամբ ու քաղաքական հեռատեսությամբ, այնպես էլ այդ ժամանակներում Հայաստանի համար ստեղծված արտաքին ու ներքին նպաստավոր պայմաններով: Այդ ժամանակաշրջանում Հայաստանին ախոյան երկու գլխավոր պետությունները արևմուտքից հռոմը, իսկ արևելքից Պարթևստանը (չհաշված հարավից՝ խիստ թուլացած Սելևկյաններին),

գրադած էին իրենց ներքին հիմնախնդիրներով՝ գահակալական կրիվներով, ստրուկների ապստամբությունները ճնշելով և այլն:

Նախ, Տիգրան II-ը դաշինք կնքեց Սև ծովի հարավային ափին գտնվող Պոնտոսի զորեղ պետության թագավոր Միհրդատ VI-ի հետ: Այդ դաշինքը ամրապնդվեց Միհրդատի 15-ամյա դստեր՝ Կլեոպատրայի և 46-ամյա Տիգրանի ամուսնությամբ:

Ապա Տիգրանն ավարտեց Արտաշես I-ի կիսատ թողած գործը՝ հայկական հողերի միավորումը. 94 թ. մ.թ.ա. նա Մեծ Հայքին միացրեց Ծոփքը. դրանով իսկ ամբողջացվեց Մեծ Հայքի թագավորությունը: Տիգրանին հնագամնեցին աղվանները և վրացինները: 93 թ. մ.թ.ա. հայ-պոնտական զորքերը գրավեցին Կապաղովկիան: Այնուհետև Տիգրանը հարձակվեց Պարթևանի վրա և վերադարձրեց Հայաստանից «70 հովիտները», մեկը մյուսի հետևից գրավեց Ատրպատականը, Մարաստանը, Յյուսիսային Միջագետքը և միացրեց հայոց թագավորությանը: Հաղթողի իրավունքով Տիգրանը Պարթև Արշակունիններից խլեց «արքայից արք» տիտղոսը:

Դրանից հետո նա գրավեց և իր գերիշխանությանը ենթարկեց Ասորիքը (Սիրիան), Կիլիկիան, Փյունիկիան՝ Սելևկյանների Անտիոք մայրաքաղաքով և այլն: Այսպիսով, մինչև մ.թ.ա. 70 թ., հաղթական պատերազմների շնորհիվ, Տիգրան Մեծը ստեղծեց մի ընդարձակ աշխարհակալ տերություն, որի սահմանները ձգվում էին Կովկասյան լեռներից մինչև Եգիպտոս, Կասպից ծովից մինչև Միջերկրական ծով: Դա բռնի ուժով ստեղծված բազմազգ, հելլենիստական, ստրկատիրական պետություն էր: Տերության մեջ խոսում էին 15-ից ավելի լեզուներով, և նվաճված երկրներն ու ժողովուրդները գտնվում էին զարգացման տարբեր մակարդակների վրա: Բազմազգ էր նաև Տիգրան II-ի բանակը, որի թիվը հասնում էր 300 հազարի:

Մեծ տերության ստեղծումից հետո Տիգրանը որոշեց հիմնել մի նոր մայրաքաղաք, որը գտնվեր երկրի աշխարհագրական կենտրոնում: Եվ 70-ական թթ. Աղձնիք նահանգում նա հիմնում է մեծաշուր Տիգրանակերտ մայրաքաղաքը, որն ուներ շուրջ 300 հազար բազմազգ բնակչություն: Կառուցվեց Արտաշատ-Տիգրանակերտ «արքունի ճանապարհը», զարկ տրվեց հելլենիստական մշակույթին, արհեստներին ու առևտրին:

**Պայմանագիր**  
**Շռոմի դեմ**

Տիգրան Մեծի աշխարհակալ թագավորության վերելքին հաջորդում է վայրէջքը: Սպարտակի ապստամբության ճնշումից հետո հզորացած Յոռմը սկսում է ակտիվորեն միջամտել Արևելքի գործերին: Յոռմեական

գորավար Լուկուլլոսը սկզբում պարտության է մատնում Պոնտոսի թագավոր Միհրդատին և, ապա, պատրվակ բռնելով վերջինիս ապաստանելը Հայաստանում, առանց Շռոմի Սենատի որոշման, պատերազմ է սկսում Հայաստանի դեմ: Մ.թ.ա. 69 թ. հոկտեմբերին Տիգրամակերտի մոտ տեղի ունեցած խոշոր ճակատամարտում, տեղանքի անհաջող ընտրության պատճառով, Տիգրանի բանակը պարտվում է: Այնուամենայնիվ, մինչ այդ հայոց հեծելազորին հաջողվում է ծեղթել հռոմեացիների շրջափակումը և մայրաքաղաքից դուրս բերել արքունիքն ու գանձարանը: Թշնամին գրավում և թալանում է մայրաքաղաքը: Հաջորդ տարի՝ 68 թ., Լուկուլլոսը որոշում է գրավել Հայաստանի հյուսիսային մայրաքաղաք Արտաշատը, և նրա գորքերը սկսում են հարավից, Տիգրանակերտի մոտով, Արածանիի հովտով շարժվել դեպի հյուսիս՝ Արտաշատի վրա: Այս անգամ հայկական զորքերը, դիմելով պարտիզանական պայքարի, մեծ կորուստներ են պատճառում և արյունաքամ անում հակառակորդին: 68 թ. հռոմեական զորքը փաստորեն անհաջողություն է կրում Արածանի գետի վերին հոսանքում տեղի ունեցած ահեղ ճակատամարտում: Դրանից հետո հռոմեացիները ստիպված նահանջում են Հյուսիսային Միջազգետք՝ Մծբին քաղաքը:

**Մ.թ.ա. 66 թ.  
Արտաշատի  
դայնանագիրը**

Լուկուլլոսը հետ է կանչվում Շռոմ և նրա փոխարեն 67 թ. Արևելք է ուղարկվում հոչակավոր զորավար Պոմպեոսը: Միհրդատին վերջնականապես հաղթելուց և Պոնտոսը նվաճելուց հետո Պոմպեոսը շարժվում է Արտաշատի վրա: Եվ Տիգրան II-ը, հաշվի առնելով Հայաստանի համար ստեղծված ներքին ու արտաքին աննպաստ հանգամանքները, հաշտության առաջարկ է անում Պոմպեոսին: Վերջինս ընդունում է Տիգրանի առաջարկը, և մ.թ.ա. 66 թ. կնքվում է Արտաշատի հաշտության դաշնագիրը: Այդ պայմանագրով հայոց արքան հրաժարվում է իր նվաճած բոլոր երկրներից և պարտավորվում է վճարել մեծ ռազմատուգանք: Մյուս կողմից՝ Շռոմը ճանաչում է Մեծ Հայքի թագավորության տարածքային ամբողջականությունը՝ Եփրատից մինչև Կուր գետը և Կասպից ծովը: Միաժամանակ, Հայաստանը հօչակվում է «հռոմեական ժողովրդի դաշնակից ու բարեկամ», այսինքն՝ ընկնում է Շռոմի քաղաքական ազեցության տակ:

Մ.թ.ա. 66 թ. Արտաշատի հաշտությունից հետո Տիգրանը թագավորեց և 11 տարի և մահացավ խոր ծերության հասակում:

## **4. Հայաստանը Տիգրան Մեծի հաջորդների օրոք: Արտաշեսյան թագավորության անկումը**

### **Արտավազդ II-ի գահակալությունը**

Տիգրան II-ի մահից հետո թագավորեց նրա որդին՝ Արտավազդ II-ը (մ.թ.ա. 55-34 թթ.), որը հեռատես, հայրենասեր և հելլենիստական բարձր կրթության տեր անձնավորություն էր: Այդ ժամանակ Հայաստանը գտնվում էր Երկու հզոր տերությունների՝ հռոմեական ու պարթևական պետությունների մրցակցության ոլորտում և կռվածաղիկ էր դրանց միջև: Այդ երկուսից Հայաստանի համար առավել վտանգավոր էր Հռոմը: Արտավազդը ջանում էր պահպանել Հայաստանի ինքնուրույնությունը և տարածքային ամբողջականությունը:

Արտավազդ II-ի օրոք Հայաստանը դեռևս բավականին ընդարձակ և ուժեղ պետություն էր: Մեզ են հասել Արտաշատի դրամատանը կտրված Արտավազդի գեղեցիկ արծաթյա դրամները, որոնց վրա դրոշմված են «Արքայից արքա» տիտղոսը: Եթե հռոմեացիները, հենվելով Արտաշատի պայմանագրի վրա, աշխատում էին հայկական ուժերն օգտագործել իրենց նվաճողական նպատակների համար, ապա պարթևները, ուղղելով իրենց սխալը, ձգտում էին դաշնակցել հայերի հետ՝ ընդդեմ Հռոմի: Արտավազդ արքան ձգտում էր, օգտագործելով հռոմա-պարթևական հակասությունները, Հայաստանը դուրս բերել Հռոմից ունեցած կախվածությունից:

### **Հռոմի արևելյան արշավանքները**

Մ.թ.ա. 60 թ. Հռոմում կազմվեց առաջին եռապետությունը (տրիումվիրատ), որի մեջ մտան զորավարներ Պոմպեոսը, Կեսարը և Կրասոսը: Վերջինիս հանձնվեց Արևելքի Երկրների կառավարումը:

Մ.թ.ա. 54 թ. մեծ բանակով Արևելք Եկավ Սպարտակի ապստամբությունը դաժանորեն ճնշողը՝ զորավար Սարկոս Կրասոսը: Պարթևատանի դեմ պատերազմ վարելու համար նա հայոց թագավոր Արտավազդ II-ից պահանջեց, 66 թ. Պոմպեոս-Տիգրան II դաշինքի հիման վրա, իբրև «հռոմեական ժողովրդի դաշնակցի ու բարեկամի», օգնական զորք ուղարկել իրեն: Արտավազդը խորհուրդ տվեց Կրասոսին, որ արշավանքը կատարի ոչ թե Միջագետքի տափաստաններով, այլ Հայաստանով, որի ժամանակ հռոմեական զորքը կստանա ռազմական օգնություն և նյութատեխնիկական աջակցություն: Սակայն Կրասոսը մեծամտաբար մերժեց այդ խորհուրդը:

Իրականում Հայաստանի շահերը պահանջում էին մերձենալ քիչ

վտանգավոր, հարևան պարթևների հետ: Դրա համար էլ Արտավազդը գործնականում ոչ միայն չօգնեց Հռոմին, այլև դաշինք կնքեց իր անմիջական հարևան Պարթևստանի հետ: Մ.թ.ա. 53 թ. Միջագետքի խառան քաղաքի մոտ տեղի ունեցած վճռական ճակատամարտում հռոմեական բանակը ծանր պարտություն կրեց պարթևներից: Կովում հռոմեացիների բանակը տվեց 20 հազար զոհ: Սպանվեց նաև զորավար Կրասոսը: Ի նշան հաղթության պարթևների Սուրեն զորավարը Կրասոսի կտրված գլուխը ընծա ուղարկեց պարթևների թագավոր Օրոդեսին, որն այդ ժամանակ գտնվում էր Արտաշատում, և այն ցուցադրվեց հանդիսատեսին՝ այդ պահին ընթացող թատերական ներկայացումներից մեկի ժամանակ: Խառանի ճակատամարտից հետո Հայաստանը վերականգնում է իր պետական ինքնուրությունը:

Մ.թ.ա. 44 թ. մարտի 15-ին դիկտատոր Հուլիոս Կեսարի դավադիր սպանությունից հետո, 43 թ. Հռոմում կազմվում է երկրորդ եռապետությունը, որի կազմի մեջ են մտնում Օկտավիանոսը (Կեսարի քրոջ որդին), Անտոնիոսը և Լեպիդոսը: Արևելքը բաժին է ընկնում Անտոնիոսին: Մ.թ.ա. 38 թ. նա մեծ ուժերով գալիս է Արևելք: 37 թ. ստիպում է Արտավազդին կրկին ընդունել Հռոմի գերակայությունը, իսկ հաջորդ տարի՝ 36 թ., սկսում է արշավանքը պարթևների դեմ:

Այդպիսով, Կրասոսին փոխարինած Անտոնիոսը կրկին փորձում է շարունակել Հռոմի նվաճողական քաղաքականությունը Արևելքում: Նա, հաշվի առնելով պարթևների դեմ առաջին արշավանքի ժամանակ Կրասոսի թույլ տված սխալը (այն ժամանակ Կրասոսն արշավանքը կազմակերպեց Ասորիքի տափաստաններով), ծրագրում է պարթևների վրա արշավել Հայաստանի և Ատրպատականի վրայով: Սակայն այս անգամ էլ հռոմեացիների արշավանքը ձախողվում է: Եվ այդ անհաջողության մեջքը կրկին բարդելով Արտավազդի վրա Անտոնիոսը մ.թ.ա. 34 թ. ձերբակալում է հայոց թագավորին և շղթայված ուղարկում Ալեքսանդրիա՝ իբրև նվեր իր սիրուհուն՝ Եգիպտոսի Կլեոպատրա թագուհուն: Ալեքսանդրիայում կազմակերպված հաղթահանդեսի (տրիումֆ) ժամանակ Անտոնիոսը պահանջում է, որ շղթայակապ Արտավազդը Կլեոպատրա թագուհու և բազմության ներկայությամբ ազատություն աղերսի: Սակայն, ինչպես վկայում է հռոմեական պատմիչ Դիոն Կասիոսը, հայոց գերված արքան արհանագով իրաժարվում է նսենանալուց: Դրանից հետո Արտավազդը բանտարկվում է և ապա՝ մ.թ.ա. 31 թ. գլխատվում: Արտավազդի մահը մեծ կորուստ էր հայ ժողովրդի համար: Նա հայ առաջին մտավորական գործիչներից է, որ գրել է պատմական երկեր, ճառեր ու ողբերգություններ:

## **Արտաշեսյանների դինաստիայի անկումը**

Անտոնիոսի արևելյան արշավանքի անհաջողությունից հետո՝ մ.թ.ա. 32 թ. Անտոնիոսի և Օկտավիանոսի հարաբերությունները սրվում են: Երկու կոնսուլների միջև բախումը դառնում է անխուսափելի: 31 թ. սեպտեմբերի 2-ին Յունաստանի ծովափնյա Ակտիում քաղաքի մոտ տեղի է ունենում ծովային ճակատամարտ, որն ավարտվում է Օկտավիանոսի հաղթանակով: Անտոնիոսը և Կլեոպատրան ինքնասպան են լինում: Այս դեպքերից հետո՝ մ.թ.ա. 27 թ., Յոռմում վերջ է տրվում հանրապետությանը, և հաստատվում են միապետական կարգեր: Յոռմեական առաջին կայսրն է դառնում Օկտավիանոսը (մ.թ.ա. 27 թ. - մ. թ. 14 թ.), որն իրեն օժում է Օգոստոս, այսինքն՝ «Սրբազան» մականունով:

Արտավազդ II-ի սպանությունից հետո նրա որդի Արտաշես II-ը պարթևների օգնությամբ թոթափում է հռոմեական տիրապետությունը և հաստատվում հայոց գահին (մ.թ.ա. 30-20 թթ.): Նա լուծում է իր հոր վրեժը, սպանում կամ Յայաստանից դուրս է քշում բոլոր հռոմեացիներին, վերականգնում Յայաստանի անկախությունը: Արտաշես II-ը ևս իր հոր նման կտրել է արծաթյա դրամներ, որոնց վրա դարձյալ դրոշմված է «Արքայից արքա» տիտղոսը: Ցավոք, երկար չի տևում Յայաստանի անկախությունը: Շուտով Յոռմը կրկին միջամտում է Յայաստանի ներքին գործերին: Մ.թ.ա. 20 թ. դավադրաբար սպանվում է Արտաշես II-ը:

I-ին դարի վերջին երկու տասնամյակները Արտաշեսյան դինաստիայի անկման տարիներ եղան: Յոռմից կիսակախյալ դրության մեջ ընկած Յայաստանում թագավորեցին Արտաշես II-ի կրտսեր եղբայր, հռոմեասեր Տիգրան III-ը (մ.թ.ա. 20-8 թթ.), իսկ մ.թ.ա. 8-1 թթ. որոշ ընդհատումներով միասին գահակալեցին Տիգրան IV-ը և նրա քույր երատոն:

Այս ընթացքում ևս հայ ժողովուրդը շարունակեց պայքարել Յոռմի դեմ իանուն իր անկախ պետականության: Ի վերջո՝ մ.թ. 1 թվականին հյուսիս-կովկասյան լեռնականների դեմ մղված կռիվներում սպանվում է Տիգրան IV-ը, իսկ նրա քույր երատոն էլ հրաժարվում է գահից, և դրանով սպառվում է Արտաշեսյան արքայատոհմը:

## Գլուխ երրորդ

### ՀԱՅԱՍՏԱՆԸ Մ.Թ. I-V ԴԱՐԵՐՈՒՄ

#### 1. Արշակունյաց թագավորության հաստափումը Հայաստանում: Տրդափ I

**Տրդաս** 1 թ. Հայաստանում վերացավ Արտաշեսյան դի-  
**Արքակունին** նաստիան, սակայն պահպանվեց պետակա-  
**հայոց գահակալ** նությունը: Արտաշեսյան դինաստիայի անկումից հետո Հայաստանը փաստորեն դարձավ կովակին-  
ձոր երկու հզոր տերությունների Հռոմի և Պարթևական թագավո-  
րության միջև: Գլխավոր վտանգը դարձյալ գալիս էր Հռոմից, որը  
ձգտում էր Հայաստանը, մյուս նվաճված երկրների նման, դարձնել  
Հռոմեական կայսրության մարզ: Հռոմեական կայսրերը I դարի ա-  
ռաջին կեսին հայոց գահին նստեցնում են իրենց հլու կամակատար  
օտարազգի դրածոների: Հռոմի դրածո թագավորները ամենին էլ  
շահագրգուված չեն Հայաստանի ճակատագրով, ուստի հայերը չեն  
հանդուրժում նրանց: Որպես կանոն, հայերը նրանց սպանում կամ  
դուրս էին քշում երկրից: Համեմատաբար երկար է թագավորել Զե-  
նոն-Արտաշեսը (Պոնտոսի թագավորի որդին): Զենոնը, որին հայերը  
սիրով կոչել են Արտաշես, թագավորել է մ.թ. 18-34 թթ., և նա միակն  
էր, որ մահացել է իր բնական նահով: Զենոն-Արտաշեսի օրոք Հա-  
յաստանը ապրեց խաղաղության ու ներքին անդորրության շրջան: 34 թ., նրա մահից հետո, պարթևների արքայից արքա Արտավան III-ը,  
անտեսելով Հռոմին, հայոց գահին նստեցրեց իր ավագ որդուն՝  
Արշակին, որը հայ մատենագրության մեջ հայտնի է Սանալորուկ  
անունով: Ստացվում է, որ Հռոմն ու Պարթևանը փոխնիփոխ մրցակ-

ցում են իրար հետ, թե հայոց գահին ում թեկնածուն կնստի:

Մեծ Հայքի գահի նկատմամբ հավակնություններ ուներ նաև իբերական (Վրացական) արքայական տունը, որը նախկինում խնամիական կապեր է ունեցել հայկական արքայատոհմերի հետ: Եվ ահա Հռոմի Տիբերիոս կայսեր (14-37 թթ.) հովանավորությամբ վրաց թագավոր Փարսմանի եղբայր Միհրդատին հաջողվում է կաշառել հայ պալատականներին (ավագանուն), թունավորել Արշակ-Սանատրուկին և 35 թ. նստել Հայոց գահին: Ավելի ուշ՝ 51 թ., Միհրդատը զոհ է գնում իր եղբոր՝ Փարսմանի և եղբորորդի Հռադամիզդի խարդավանքներին: Վերջինս, գալով Հայաստան, նենգաբար, ծանր գորգերի տակ խեղդել է տալիս իր հորեղբորը՝ Միհրդատին և նրա կնոջը (որը միաժամանակ իր քույրն էր) և 51 թ. իրեն հայտարարում Հայաստանի թագավոր: Հռադամիզդը դա անում էր իր հոր իրահրումով, որը ցանկանում էր որդուն հեռու պահել իր գահի նկատմամբ ուժնձգություններից: Իսկ այդ ամենը տեղի էր ունենում Հռոմի թողտվությամբ:

Մինչեւ հայ ժողովուրդը մտադիր չէր հաշտվել անկախ պետականության կորստի հետ: Հայ ավագանին, տեսնելով, որ պարթևներին առանձնապես ձեռնտու չէ սպառնալ Հայաստանի անկախությանը և տարածքային ամբողջականությանը, դաշնակցում է Պարթև Արշակունի արքայատոհմի նշանավոր թագավոր Վաղարշ I-ի հետ (51-75 թթ.՝ ընդդեմ Հռոմի:

52 թ., հայերի համաձայնությամբ, Վաղարշ թագավորն իր զորքով մտնում է Հայաստան: Հայ-պարթևական միացյալ ուժերը դուրս են քշում հռոմեացիներին ու նրանց դրածո վրաց թագաժառանգ Հռադամիզդին<sup>1</sup>, ազատագրում Արտաշատ և Տիգրանակերտ մայրաքաղաքները և Վաղարշ I-ի եղբայր Տրդատին կարգում Հայաստանի թագավոր: Տրդատի գահակալության լուրը Հայաստանում ցնծությամբ է ընդունվում: Այսպիսով, Հայաստանում սկզբնավորվում է Արշակունյաց թագավորությունը: Հարկ է հիշեցնել, որ «Արշակունի» անվանու-

<sup>1</sup> Հռոմեական պատմիչ Կ. Տակիտոսը վկայում է, որ վրաց թագաժառանգ Հռադամիզդը ստիպված դիմում է փախուստի դեպի Իբերիա: Զիերով փախչելու ժամանակ նա դաշունահարում է իր հղի կնոջը՝ Զենոբիային և գցում Արաքսը, որպեսզի իր սիրեցյալը չընկնի թշնամու ձեռքը և անարգվի: Սակայն հայ հովիվները գտնում և փրկում են Զենոբիային: Նրան տանում են Տրդատի պալատը, ուր նա ծննդաբերում ու արու զավակ է ունենում: Տղայի անունը դնում են Փարսման պապի անունով, որը հետագայում թագավորում է Վրաց աշխարհում իբրև Փարսման II (100-114 թթ.):

մը գալիս է մ.թ.ա. 250 թ. Իրանում հիմնված պարթևական պետության հիմնադիր Արշակ թագավորի (ցեղապետի) անունից:

**Հռոմեական  
արշավանքները և  
Հռանդեայի հաւատության  
դայնանագիրը**

Արշակունյաց արքայատոհմի հաստատումը Հայաստանի գահին առաջ բերեց պատերազմ մի կողմից Հռոմեական կայսրության, իսկ մյուս կողմից Պարթևական թագավորության ու նրա դաշնակից Հայաստանի միջև, որը որոշ ընդհատումներով տևեց 10 տարի (54-64 թթ.):

Հռոմի Ներոն (54-68 թթ.) կայսրը Արևելք ուղարկեց հմուտ զորավար Գնեսոս Կորբուլոնին: 58 թ. հռոմեական զորքերը մեծ դժվարությամբ գրավեցին Հայաստանը և հիմնահատակ ավերեցին նրա մայրաքաղաք Արտաշատը: Տրդատը ստիպված իր զորքով հեռացավ Հայաստանից: Հռոմեացիներին հաջողվեց գրավել նաև Հայաստանի Երկրորդ մայրաքաղաքը՝ Տիգրանակերտը:

61 թ. Վերսկսկվեց պատերազմը Հռոմի հետ: Հայ-պարթևական միացյալ ուժերը, ծանր կացության մեջ գցելով հռոմեական զորքերին, հարկադրեցին Կորբուլոնին Մօքին քաղաքում կնքել զինադադար (61 թ.): Այդ զինադադարի համաձայն, Տրդատը ճանաչվում էր Հայոց թագավոր, իսկ Հայաստանը հռչակվում էր անկախ և ինքնուրույն պետություն: Երկրից դուրս էին բերվելու Հռոմի և Պարթևատանի ռազմական ուժերը: Բայց Ներոնը չճանաչեց այդ պայմանները և 62 թ. Արևելք ուղարկեց նոր բանակ Քեսենիոս Պետոս զորավարի հրամանատարությամբ: Սակայն Պետոսը անտաղանդ գորավար էր: Նույն 62 թ., Խարբերդի դաշտում գտնվող Հռանդեա կոչված վայրում հայ-պարթևական միացյալ զորքերը շրջապատում են հռոմեացիներին և ստիպում անձնատուր լինել: Հռոմեական զորավարը ստիպված նույն վայրում հաշտություն է առաջարկում: Կնքված հաշտությամբ, հռոմեացիները պետք է հեռանային Հայաստանից, իսկ Տրդատը ճանաչվեր հայոց թագավոր, պայմանով, որ անձամբ գնար Հռոմ և Ներոնի ձեռքից ստանար թագը: Բացի այդ, հռոմեական զինվորները ստիպված են լինում կատարել նվաստացուցիչ մի արարողություն զինաթափ անցնել երեք նիզակից պատրաստված «լծի» տակով: Հռոմեական պատմիչ Տակիտոսի վկայությամբ, Հայաստանից հեռացող Պետոսը օրական կտրում անցնում էր 40 մղոն (62 կմ):

63 թ. Վաղարշ 1-ը դեսպաններ է ուղարկում Հռոմ Հռանդեայի հաշ-

տությունը վավերացնելու համար: Սակայն Ներոնը իրաժարվում է «անպատճեր խաղաղությունից» և որոշում է շարունակել պատերազմը: Բայց այս անգամ նա սիրալիր է վերաբերվում Վաղարշի դեսպաններին և առատ ընծաներով նրանց ետ է ուղարկում:

64 թ. կրկին Յայաստան եկած զորավար Կորբուլոնը նույն Յօանդեայում կնքում է վերջնական հաշտության պայմանագիրը, որով հաստատվում է նախորդ հաշտության պայմանագիրը: Ներոն կայսեր կողմից թագը ստանալու համար 65 թ. Տրդատը մեծ շքախմբով (3000 հոգի) ճանապարհվում է Յոռմ, հանդիսավորությամբ թագադրվում և մեծ նվերներով (50 մլն. դենարի) 66 թ. վերադառնում: Վերականգնվեց Կորբուլոնի կողմից ավերված Արտաշատ մայրաքաղաքը և փառասեր կայսեր խնդրանքով այն ժամանակավորապես կոչվեց Ներոնեա:

Այսպիսով, վերականգնվեց Յայաստանի քաղաքական անկախությունը, և միջազգայնորեն հաստատվեց Արշակունիների արքայատոհմը, որը տևեց մինչև 428 թ.: Տրդատ I-ը (52-88 թթ.) Յայաստանում սկիզբ դրեց Արշակունիների թագավորությանը: Տրդատի գահակալությունը կարելի է բաժանել երկու ժամանակաշրջանի. առաջին՝ 52-65 թթ., երբ նրա գահակալությունը պաշտոնապես չէր ճանաչվել Յոռմի կողմից, և երկրորդ՝ 65-88 թթ., երբ նա պաշտոնապես թագադրվեց և միջազգայնորեն ճանաչվեց Յոռմի ու այլ պետությունների կողմից:

**Տրդատ I-ի  
գործունեությունը:  
Հայաստանը II-III  
դարերում**

64 թ. Յօանդեայի դաշնագրից հետո Երկարամյա խաղաղություն հաստատվեց Արևելքում մինչև Տրայանոսի արշավանքը՝ 1:14 թ., որը նպաստեց Յայաստանում քաղաքների, արհեստների, առևտրի և մշակույթի զարգացմանը:

Տրդատ I-ի գահակալության տարիներին վերականգնվեց ավերված Արտաշատ մայրաքաղաքը, վերակառուցվեց Գառնիի ամրոցը: Այդ նույն ժամանակ էլ 77 թ., կառուցվեց Գառնիի այունազարդ և հիասքանչ հեթանոսական տաճարը:

Տրդատ I-ի գործունեությունից մեզ հայտնի է նաև, որ նա պատերազմել է հյուսիսից ներխուժած ալանական ցեղերի դեմ:

Պետք է ասել, որ հայոց պատմությունը առաջին դարի վերջերին և Երկրորդ դարում բավական մութ է, քանզի փաստական տվյալները սուղ են ու կցկոտուր: Տրդատ I-ին հաջորդել է Սանատրուկ թագավորը

(88-110 թթ.): Յայոց Վաղարշ և թագավորի օրոք (117-140 թթ.) հիմնադրվում է Վաղարշապատը (այժմ՝ Եջմիածին), որը դառնում է հայ Արշակունիների թագավորության երկրորդ մայրաքաղաքը: Յայաստանի հետագա պարթևազգի գահակալները հայկական միջավայրում շուտով հայանում են: Արդեն II դարի վերջերից, սկսած Վաղարշ II-ից (185-198), հայ Արշակունիների գահը դառնում է ժառանգական անցնում է հորից որդուն, իսկ գահակալն այլևս չէր հաստատվում Յոռնի կողմից, ինչպես նախատեսված էր Յոանդեայի պայմանագրով: 198 թ. Վաղարշ II-ը զոհվեց կովկասյան լեռնականների՝ ալանների ու մազքութեների դեմ մղված կոհվների ժամանակ: Նրան հաջորդեց որդին՝ Խոսրով I-ը (198-215 թթ.):

II-III դարերում Յայաստանը կրկին վերածվեց պատերազմների թատերաբեմի: Յոռնեական տիրակալները ձգտում էին Յայաստանը դարձնել կայսրության պրովինցիա: Այդպիսի բացորոշ ուղեգիծ էին վարում հատկապես Տրայանոս և Կարակալլա կայսրերը: 215 թ. վերջինս գալիս է Անտիոք, խաբեությամբ իր մոտ հրավիրում Խոսրովին, ձերբակալում նրան և ուղարկում Յոռն: Յայերը, զայրացած կայսեր նենգ արարքից, երկրից վտարում են Կարակալլայի ուղարկած զորքերը և հայոց նոր թագավոր կարգում Խոսրովի որդուն՝ Տրդատ II-ին (215-252 թթ.):

III դարում Յայաստանի և Պարսկաստանի քաղաքական կյանքում տեղի ունեցան շրջադարձային փոփոխություններ: 224-226 թթ. ընթացքում իրանում կատարվեց քաղաքական հեղաշրջում: 226 թ. վերացվեց Պարթև Արշակունիների թագավորությունը, և հաստավեց Սասանյան արքայատոհմը: Արտաշիր Սասանյանը (226-241) իրեն հայտարարեց «արքայից արքա»: Այս հեղաշրջման հետևանքով սրվեցին հայ-իրանական հարաբերությունները: Սասանյանները հզրանալով՝ սկսեցին սպառնալ և Յայաստանին, և Յոռնին: Սասանյան իրանի թագավորները հենց սկզբից էլ թշնամական դիրք գրավեցին Յայաստանի հանդեպ, մանավանդ, որ այստեղ թագավորում էր հայ պարթև Արշակունիների արքայատոհմը, որը համարվում էր թշնամի Սասանյաններին: Ստեղծված պայմաններում հայերը հարկադրված փոխում են իրենց քաղաքական կողմնորոշումը՝ անկախությունը պահպանելու համար և օգնության դիմում այժմ արդեն թուլացած և նվազ վտանգավոր Յոռնին: Սկսած այս ժամանակաշրջանից՝ նկատելի է դառնում Յոռնի և Յայաստանի արտաքին քաղաքական շահերի հակադրության մեղմացում: Յայ պարթև Արշակունիների արքայատոհ-

մին թշնամի Սասանյան Պարսկաստանի գահակալները ձգտում էին գահընկեց անել հայ արքաներին, Հայաստանը նվաճել և իրենց ենթարկել: Այնուամենայնիվ, Հռոմի օգնությամբ Հայաստանում թագավոր է հոչակվում Տրդատ II-ի որդի Խոսրով II-ը (273-287 թթ.): 287 թ. պարսից թագավորը Հայաստան է ուղարկում Անակ Պարթևին (Գրիգոր Լուսավորչի հորը), որն էլ Վաղարշապատում սպանում է Խոսրովին: Սասանյանները կրկին նվաճում են Հայաստանը: Թագաժառանգ Տրդատը փախչում է Հռոմ:

Հայաստանին տիրելու համար պարսկա-հռոմեական պայքարը նոր թափ ստացավ III դարի վերջին, որն ընթացավ փոփոխակի հաջողություններով: Ի վերջո, հռոմեական բանակը, հայկական զորամասերի օգնությամբ, խոշոր հաղթանակ տարավ Սասանյանների դեմ: 298 թ. Հռոմեական կայսրության և Սասանյան Պարսկաստանի միջև Մծրինում կնքվեց 40-ամյա հաշտության պայմանագիր, որով Երկուստեք ճանաչվում էր Հայաստանի անկախությունը և տարածքային ամբողջականությունը: Թագավոր է դառնում Խոսրով II-ի որդին՝ Տրդատ III Մեծը (298-330 թթ.):

## 2. Հին Հայաստանի փնտեսական կյանքը և պետականարակական կարգը

### Տնտեսությունը.

### Երկրագործություն և անասնաբանություն

Հնուց ի վեր Հայաստանն ունեցել է զարգացած տնտեսություն, անասնապահություն, արհեստագործություն, քաղաքային կյանք և առևտուր: Մ.թ.ա. V դարի վերջին Հայաստանով ճանապարհորդած հույն գորավար-պատմիչ Քսենոֆոնը իր «Անաբասիս» (Տասը հազարի նահանջը) աշխատության մեջ պատմում է, թե որքան հարուստ գյուղատնտեսական երկիր էր Հայաստանը: Հայերի տները լի էին տարբեր տեսակի ուտելիքներով ու խմիչքներով:

Հայաստանի տնտեսությունը վերելք է ապրում հելլենիստական դարաշրջանում, երբ ծաղկում են քաղաքները, արհեստագործությունը, ընդարձակվում են ցանքսերը, կատարելագործվում գործիքները: Պատմահայր Մ. Խորենացին վկայում է, որ Արտաշես I-ի ժամանակ Հայաստանում անմշակ հող գրեթե չէր մնացել: Հայաստանի հարուստ ալպիական մարգագետինները նպաստում էին անասնապա-

հության զարգացմանը: Նախալեռներում և լեռներում պահպում էին խոշոր և մանր եղջերավոր անասունների մեծաքանակ հոտեր: Ժամանակի ընթացքում վերանորոգվում էին հին ջրանցքները, կառուցվում նորերը: Հայաստանի անկախ և միասնական պետականության վերականգնումը նպաստում էր տնտեսության առաջընթացին: Դին Հայաստանի տնտեսությանը բնորոշ էին ինչպես բնատնտեսական ու տնայնագործական, այնպես էլ՝ ապրանքաշուկայական հարաբերությունները: Թե ժողովրդի կյանքում երկրագործությունը որքան մեծ դեր էր խաղում, այդ երևում է հայոց նախաքրիստոնեական պաշտամունքից: Դեռանոսական աստվածներից շատերի՝ Արա Գեղեցիկի, Վահագնի, Անահիտի, Տիրի, Միհրի պաշտամունքը, այսպես թե այնպես, կապված էր երկրագործության, բնության, բերքութարիքի առատության հետ:

**Դին Հայաստանի հետաքնները, արհեստները և առևտուրը** Հայաստանի տնտեսական զարգացման հետևանքները: Առաջանում են տասնյակ նոր քաղաքներ՝ Երվանդաշատ, Արշամաշատ, Զարեհավան, Զարիշատ, Արտաշատ, Տիգրանակերտ, Գառնի, Վաղարշապատ, Նախճավան, Դվին և այլն: Քաղաքներն ունեն ներքին ինքնավարություն, հողային տիրույթներ: Քաղաքագլխին կոչում էին շահապ: Քաղաքների զարգացումը նպաստում է արհեստների վերելքին: Մի կողմից Հայաստանի ընդերքի օգտակար հանածոների առատությունը, իսկ մյուս կողմից՝ գյուղատնտեսական հումքի առկայությունը խթանում էին արհեստագործության շատ ճյուղերի զարգացումը: Առանձնապես տարածված արհեստներից էին դարբնությունը, զինագործությունը, ոսկերչությունը, հյուսնությունը, բրուտագործությունը, ջուլիակությունը, գորգագործությունը, քարագործությունը և այլն: Հայաստանում էր ստացվում համբավավոր որդան կարմիր ներկը: Հայմատենագիրները հիշատակում են շուրջ 30 տեսակի արհեստներ:

Գյուղատնտեսության, քաղաքների ու արհեստների զարգացումը, բնականաբար, նպաստում էր ներքին ու արտաքին առևտուրի վերելքին: Աշխույժ ապրանքափոխանակություն էր կատարվում երկրի ներսում տարբեր նահանգների ու գավառների, քաղաքի և գյուղի, երկրագործ շինականի և քաղաքաբնակ առևտրականի ու արհեստավորի միջև: Հայաստանի հարմար աշխարհագրական դիրքը նպաստել է նաև արտաքին առևտուրի զարգացմանը: Հայաստանով էին անց-

նում միջազգային տպարանցիկ առևտության ճանապարհները: Դույն պատմիչ Հերոդոտը նկարագրում է Եփրատ գետի վրայով Միջագետքի հետ հայերի աշխույժ առևտության գործունեությունը: Արտահանվում և ներմուծվում էին բազմապիսի գյուղատնտեսական և արդյունագործական ապրանքներ: Դին Հայաստանում զարգացած առևտությի մասին են վկայում հնագիտական պեղումների ժամանակ հայտնաբերված տարբեր երկրների մեծ թվով դրամները: Գործածության մեջ էին ինչպես հռոմեական ու պարսկական, այնպես էլ հայկական դրամները: Ցավոք, մինչև օրս հայ Արշակունի թագավորների դրամներ չեն գտնվել: Նրանք հավանաբար դրամ կտրելու իրավունք չեն ունեցել:

Հայաստանը միջազգային տարանցիկ առևտություն կատարում է ոչ միայն կամրջի դեր, այլև ինքը ևս իր արտադրած ապրանքները հանում էր շուկա: Հայաստանը արտահանում էր մետաղագործական իրեր, գինի, հացահատիկ, «որդան կարմիր» ներկ, կաշի, ձիեր ու ջորիներ, ձկնեղեն, քարատեսակներ և այլն:

### **Հասարակության սոցիալական (դասային) կառուցվածքը**

Հասարակությունը սոցիալական կառուցվածքի տեսակետից կարելի էր բաժանել երեք խմբի՝ ազնվականություն (արտոնյալ դաս), ազատներ (միջին դաս) և անազատներ (ստորին դաս): Հայաստանի արտոնյալ դասը ազնվականությունն էր: Երկրի գերագույն ազնվականը թագավորն էր: Այս դասի մեջ մտնում էին թագավորի ընտանիքի անդամները, նրա հարազատները, նախարարները, պալատականները, բարձրաստիճան իոգևորականությունը, զորահրամանատարները, արքունի պաշտոնյաները, մանր ծառայողները և այլն: Երկրի ամբողջ պաշտոնավարությունը իրականացնում էր այդ դասը: Իր հերթին, արտոնյալ դասը բաժանվում էր խոշոր և մանր ազնվականության: Սոցիալական այս խումբը հասարակության վերնախավն էր:

Հասարակության սոցիալական կառուցվածքում միջանկյալ դիրք էին գրավում առևտության առաջնականական ու արհեստավորական դասերը՝ քաղաքում, իսկ ազատ գյուղացիությունը՝ շինականները, գյուղում: Վերջիններս կազմում էին գյուղական բնակչության հիմնական զանգվածը: Կարելի է ասել, որ սոցիալական այս խմբերի վրա էր հիմնականում ընկած երկրի պաշտպանությունը, քանզի սրանք էին կազմում հայկական բանակի հիմքը:

Հասարակության սոցիալական կառուցվածքի ստորին աստիճանն էին զբաղեցնում անազատները՝ կիսակախյալ և կախյալ վիճակում գտնվող ծառաները, մշակները, ռամիկները, ինչպես նաև ստրուկները (գերիներ) և այլն: Յարկ է նշել, որ, որպես կանոն, ստրուկ էին դառնում պատերազմների ժամանակ գերի ընկած այլազգիները: Այսինքն՝ պատերազմներն են եղել ստրուկների գլխավոր աղբյուրը: Իրավագուրկ սոցիալական այս խնբերի վրա էլ ընկնում էր հարկերի և պարհակների հիմնական ծանրությունը:

Ըստ զբաղմունքի՝ հասարակությունը կարելի է բաժանել հետևյալ պրոֆեսիոնալ խնբերի՝ երկրագործների, լեռնաբնակ կիսավաչկատուն անասնապահների, արհեստավորների, առևտրականների, վաճառականների, հոգևորականության, գինվորականության, պետական ծառայողների և այլն:

Չնուց ի վեր հայ ժողովրդի սոցիալական կյանքում շատ կարևոր դեր է խաղացել ընտանիքը: Դարեր շարունակ հայ ավանդապահ ու ամուր ընտանիքը եղել է ազգի գոյատևման կարևոր կռվաններից մեկը:

## **Գյուղական համայնք**

Ըստ բնակության վայրի՝ Հայաստանի բնակչությունը կարելի է բաժանել գյուղաբնակների (գյուղացիների) և քաղաքաբնակների (քաղաքացիների): Հայաստանի բնակչության ճնշող մեծամասնությունը ապրում էր գյուղերում՝ գյուղական համայնքներում: Ազգային կազմի տեսակետից քաղաքներում, հայերից բացի, ապրում էին մեծ թվով հրեաներ, ասորիներ, հույներ, պարսիկներ և այլն: Մրանք ապրում էին ըստ քաղանասերի:

Հայաստանում նյութական բարիքների հիմնական արարողը ազատ գյուղացին էր՝ շինականը: Գյուղացիները համախմբվում էին գյուղական համայնքներում: Համայնքի անդամ գյուղացիները ունեին հավասար իրավունքներ: Նրանք համայնքի ընդհանուր ժողովում ընտրում էին գյուղապետին՝ գեղջավագին, վճռում հողաբաժանության, ծխաբաժանության, հարկերի և այլ ներքին բնույթի խնդիրներ: Համայնքի ներսում հողը բաժանվում էր ըստ շնչերի՝ հավասար սկզբունքով: Գյուղացիները պարտավոր էին պետությանը հարկ վճարել, կատարել պարհակներ (շինարարական աշխատանքներ), պատերազմի ժամանակ մտնել աշխարհազորի մեջ: Սակայն, ժամանակի ընթացքում, համայնքի ներսում տեղի է ունենում ունեցվածքային (սոցիա-

լական) շերտավորում: Ավելի ուժեղ ընտանիքները տեր են դառնում լավագույն հողերի, իսկ թույլերը կախման մեջ են ընկնում նրանցից: Դին Հայաստանում հիմնական աշխատուժը ազատ գյուղացիությունն էր: Սակայն դրա կողքին օգտագործվել է ծառա-մշակների, ինչպես նաև ստրուկների աշխատանքը: Ծառաները կամ մշակները աշխատում էին արքունական կալվածքներում կամ վերնախավի՝ թագավորներից նվեր ստացած ագարակ-դաստակերտներում: Ագարակատերերը կամ կալվածատերերը ձգտում էին զավել նաև գյուղական համայնքների հողերը: Այդ կանխելու նպատակով Արտաշես I-ը սահմանաքարերով հստակ սահմանագատեց ագարակների և համայնքների հողերը:

### **Պետական կարգը**

Հայկական պետությունն իր բնույթով արևելյան տիպի միապետություն էր: Հայաստանում պետության գլխավոր պաշտոնատար անձը թագավորն էր (միապետը), որի իշխանությունը անսահմանափակ էր: Նա էր երկրի ներքին և արտաքին քաղաքականության հարցեր վճռողը, ինչպես նաև հայոց ամբողջ զորքի գերագույն իրամանատարը: Թագավորի իշխանությունը ժառանգաբար փոխանցվում էր հորից որդուն: Հայոց թագավորները կտրել են դրամներ, կրել են տարբեր տիտղոսներ՝ «թագավոր», «արքա», «արքայից արքա» և այլն:

Վարչական տեսակետից Հայաստանը հնուց բաժանվում էր 15 նահանգների, սրանք էլ գավառների: Նահանգները և գավառները կառավարում էին թագավորի նշանակած կառավարիչները նախարարները, որոնք էլ հետագայում դառնում էին դրանց ժառանգական տերերը:

### **Գործակալու- թյունները**

Երկիրը (պետությունը) կառավարվում էր գործակալությունների (նախարարությունների) միջոցով: Գործակալությունների ղեկավարներին գործակալներին, նշանակում էր թագավորը: Հայոց թագավորության հայտնի գործակալություններից էին հազարապետությունը, սպարապետությունը, թագադիր ասպետությունը, մարդպետությունը, մաղիսագությունը, սենեկապետությունը, մեծ դատավորությունը:

Հազարապետը պետության գլխավոր պաշտոնյան էր, որ տնօրինում էր տնտեսության, հարկերի գանձման, ֆինանսների, պետական շինարարական աշխատանքները: Հազարապետությունը գնունինե-

բի, այնուհետև Ամատունիների տան ժառանգական պաշտոնն էր:

Հայաստանի զինված ուժերը կազմակերպում և գլխավորում էր սպարապետը: Այս պաշտոնը Մամիկոնյանների մենաշնորհն էր:

Թագաղիր ասպետության գործակալությունը, բացի արքային թագով պսակելը, վերահսկում էր արքունիքի գործերը, կարգուկանոնը, օտար դեսպանների ընդունելությունը և այլն: Այս պաշտոնը տնօրինում էր Բագրատունյաց նախարարական տոհմը:

Մարդպետության գործակալությունը վերահսկում էր արքունի գանձերը, կալվածքները և բերդերը: Այն ապահովում էր արքունիքի մատակարարումը և հարեմի պահպանումը:

Մաղիսազը արքայի անձնական պաշտպանն էր և արքայի թիկնապահ գործի հրամանատարը: Մաղիսազության գործակալությունը հետևում էր նաև արքունիքի անվտանգությանը: Այդ պաշտոնը ժառանգաբար անցնում էր Խորխոռունի նախարարական տանը:

Սենեկապետության գործակալությունը վարում էր պետական գրասենյակի և դիվանի (արխիվի) գործերը: Այս գործակալությունում էին մշակվում թագավորական հրովարտակների ու արձանագրությունների տեքստերը:

Մեծ դատավորի պաշտոնը հեթանոսական ժամանակներում գլխավորում էր քրմապետը, իսկ քրիստոնեության շրջանում՝ Հայոց կաթողիկոսը: Այս գործակալությունը զբաղվում էր իրավունքի և դատարանի խնդիրներով: Մինչև քրիստոնեության ընդունումը այս պաշտոնը երկար ժամանակ վարել է Վահունիների նախարարական տոհմը:

Հայոց արքունիքում նախարարները բազմում էին բարձերի կամ գահերի վրա և, ըստ իրենց ռազմութիւնների մեծության և զբաղեցրած պաշտոնների կարևորության, մոտ էին նստում թագավորին: Նախարարական տոհմները գրանցվում էին հատուկ մատյանում, որը կոչվում էր «գահնամակ»: Պետության համար կարևոր նշանակության հարցերը քննարկվում էին աշխարհաժողովում:

## Բանակը

Պետական համակարգի անբաժան մասն էր կազմում բանակը, որը բաղկացած էր արքայական և նախարարական հեծյալ ու հետևակ միացյալ զորքերից: Տիգրան Մեծի օրոք հայոց բանակի թիվը հասնում էր շուրջ 300 հազարի: Զորքի գլխավոր հարվածող ուժը զրահավորված հեծելազորն էր (այրուձին): Սակայն զորքի մեծ մասը կազմում էր հետևակը, որը համալրվում էր հայ շինականներից: Կար նաև 6000 մարտիկներից բաղկացած բա-

գավորական ընտիր հեծյալ թիկնապահ գունդ (Դրանիկ): Հայկական բանակում գործածվել է սառը զենք: Բանակի ընդհանուր հրամանատարն էր սպարապետը: Հայաստանի սահմանների պաշտպանության համար ստեղծվել էին Աղձնիքի, Կորդուքի (հետագայում՝ Ծոփքի), Նոր-Շիրականի և Գուգարքի բդեշխությունները, որոնք գլխավորում էին սահմանապահ իշխանները՝ բդեշխները:

### 3. Հին հայկական մշակույթը

(հնագույն ժամանակներից մինչև մ.թ. III դարը)

#### Հայ մշակույթի ակունքները

Հասարակության առաջընթացի որոշակի փուլում մտավոր աշխատանքը անջատվեց ֆիզիկական աշխատանքից, որն էլ ինքնըստինքյան նպաստեց մշակույթի համակողմանի զարգացմանը:

Հայ ժողովրդի կազմավորումով ձևավորվեց նաև նրա միասնական մշակույթը: Հայկական ազգային մշակույթի մեջ ձուլվեցին նաև ոչ հայկական ցեղերի մշակույթի տարրեր: Թեև հայկական մշակույթը ժամանակի ընթացքում ենթարկվել է փոխազդեցությունների, սակայն պահպանել է իր ազգային ինքնատիպությունը: Հայկական պետականության առաջացումն ու հզորացումը նպաստեցին հայ մշակույթի զարգացմանը: Դրա դրսնորման ուրույն ու բարձր աստիճան էր Արարատյան թագավորության մշակույթը, որի անմիջական կրողն ու ժառանգորդն էր հայ ժողովուրդը:

Դժբախտաբար, մենք շատ քիչ բան գիտենք իին Հայաստանի մշակույթի մասին, քանզի IV դարի սկզբում, Հայաստանում քրիստոնեության ընդունումից հետո, գործնականում ոչնչացվեցին նախաքրիստոնեական մշակութային շատ արժեքներ:

#### Առաստելներն ու վիդական երգերը

Նախաքրիստոնեական (հեթանոսության) շրջանում տարածված է եղել ժողովրդական բանահյուսությունը, պատմապանդական վիպերգությունը: Դրանցից առանձնանում են հատկապես «Հայկ և Բել», «Արա Գեղեցիկ և Շամիրամ», «Տորք Անգեղ», «Տիգրան և Աժդահակ», «Արտաշես և Սաքենիկ» և ուրիշ առասպելներ ու վիպական զրույցներ: Դրանք, ինչպես և ժողովրդական բանահյուսության ուրիշ գոհարներ, մեզ է հասցրել V դարի պատմիչ Մովսես Խորենացին իր «Հայոց պատմություն» գրքում:

## **Նյութական մօւլտիպլ**

Ալ. Մակեղոնացու արշավանքներից և Աքնմենյան Պարսկաստանի անկումից հետո Արևելքում ու Հայաստանում սկսվեց «հելլենիզմի», այսինքն՝ «հունականության» դարաշրջանը: Հայկական հարուստ մշակույթը յուրացրեց այն առաջադիմականը, որը կար հունական մշակույթում: Լայն տարածում ստացան հունարեն լեզուն, գրականությունը, արվեստը, քաղաքաշինությունը: Հունական առաջավոր մշակույթի և հայ մշակույթի սինթեզից առաջացավ հայկական հելլենիստական մշակույթը: Հելլենիստական մշակույթը զարգանում էր առավելապես քաղաքներում: Հելլենիզմի դարաշրջանի քաղաքաշինության գլուխգործոցներն էին Արտաշատ և Տիգրանակերտ մայրաքաղաքները: Արտաշատի, Գառնիի, Արմավիրի, Վաղարշապատի հնագիտական պեղումների ժամանակ հայտնաբերվել են բազմաթիվ բարձրարվեստ իրեր, մարմարյա և կավե արձաններ ու արձանիկներ, գենք ու զրահ, ոսկուց և արծաթից պատրաստված բազմատեսակ զարդեր, խեցե գեղարվեստական իրեր, ապակեղեն և այլն: Հայաստանում կառուցվել են անառիկ ամրոցներ, պալատներ, տաճարներ, թատրոններ, կամուրջներ, հյուրանոցներ, բաղնիքներ: Օրինակ, Տիգրանակերտի պարիսպների բարձրությունը հասնում էր 25 մետրի, և դրանք ունեցել են այնպիսի լայնություն, որ ներսում տեղավորվել են զորանոցներ, ախոռներ և այլն:

Հելլենիստական դարաշրջանի ճարտարապետության բազն ու պսակն է Գառնիի հեթանոսական լածարը (մ.թ.ա. I դար): Հայտնի է նաև Գառնիի թագավորական ամրոցը՝ իր հզոր պարիսպներով, պալատներով, տաճարներով և այլ շինություններով: Պալատի մոտակայքում է գտնվում խճանկար հատակով բւսողիքը (մ.թ. III դար):

Ներկայումս Արևմտյան Հայաստանի տարբեր վայրերում պահպանվել են հեթանոսական աստվածների՝ Արամազդի, Վահագնի, Սիհրի հսկայական արձանները: Հատկապես գեղեցիկ է Անահիտ դիցուհու աշխարհահօչակ բյոնզե գլուխը, որը պահպում է Լոնդոնի Բրիտանական թանգարանում: Այն կերտված է գեղարվեստական բարձր ճաշակով ու մեծ վարպետությամբ: Շատ գեղեցիկ են Արտաշեսյան թագավորներ Տիգրան Մեծի և նրա որդի Արտավագդ II-ի հատած դրամները:

**Հեթանոսական** Մինչև 301 թ.՝ Հայաստանում քրիստոնեության ընկրոնը դուռը էր, հայ ժողովրդի մեջ տարածված էր հեթանոսական կրոնը (բազմաստվածությունը), պաշտել են ոչ թե մեկ, այլ բազմաթիվ աստվածների, որոնք կազմել են դիցարան (պանթեոն):

Յայերն ունեցել են հեթանոս աստվածների երկու դիցարան: Առաջին հին դիցարանի գլխավոր աստվածն էր Յայկը՝ երկրի, երկնքի և բարիքներ ստեղծող աստվածը: Յայկը համարվել է նաև հայ ժողովրդի նախահայրը: Յին դիցարանի աստվածներն էին Արան՝ գեղեցկության, բուսականության, մահվան և հարության, Տորքը՝ ճարտարապետության, Ծովինարը՝ ջրի, անձրևի, Արալեզը՝ սպանված զինվորի վերակենդանացման և այլն:

Յետագայում հայ դիցարանը, պարսկական զրադաշտական կրոնի ազդեցությամբ, կրում է փոփոխություններ: Յանդես են գալիս նոր աստվածներ, չնայած հին աստվածների պաշտամունքը դրանից հետո էլ երկար ժամանակ պահպանվում է ժողովրդի մեջ: Նոր դիցարանի գլխավոր աստվածն էր Արամազդը՝ աստվածների հայրը, երկնքի և երկրի արարիչը: Նա փոխարինում է Յայկին ու Խալդին: Արամազդի տաճարը գտնվում էր Դարանայյաց գավառի Անի ամրոցում: Այստեղ էին գտնվում նաև հայոց արքաների դամբարանները:

Նոր դիցարանի ամենասիրելի աստվածուիին Արամազդի դուստր Անահիտն էր, որ պարսկերեն նշանակել է մաքուր, անքիծ: Անահիտը համարվում էր հայոց երկրի հովանավոր դիցուիին՝ պտղաբերություն ու մայրություն արգասավորողը: Նա միակ աստվածն է, որ ունեցել է ոսկեծույլ արձան: Բայց այդ արձանը մեզ չի հասել: Անտիկ հեղինակ Պլինիոս Ավագը հաղորդում է, որ հռոմեական զորավար Անտոնիոսը իր արշավանքների ժամանակ ջարդուփշուր արեց Անահիտի արձանը (Եկեղյաց գավառում) ու ոսկին բաժանեց իր և զորականների միջև: Նոր դիցարանի մյուս հայտնի աստվածն էր Վահագնը, որը համարվում էր քաջության, ուժի պատերազմի, ամպրոպի աստվածը: Յեթանոսական մյուս աստվածներն էին Աստղիկը՝ սիրո և գեղեցկության, Միհրը՝ արեգակի, կրակի, լուսի, Տիրը՝ դպրության, ճարտարապետության, Նանեն՝ իմաստության, մայրության և օջախի պահպան աստվածուիին, Ամանորը՝ Նոր տարվա, Վանատուրը՝ հյուրընկալության, օթևանի և այլն: Յավանաբար հայ ժողովրդի ազգային խառնվածքին այնքան բնորոշ հյուրասիրության բարձր զգացումը մեծ չափով կապված է եղել Վանատուրի պաշտամունքի հետ: Ինչ վերաբերում է Աստղիկ դիցուիու պաշտամունքին, ապա պետք է ասել, որ նրա հետ է կապված մինչև օրս նշվող Վարդավառի տոնը: Աստղիկը Վահագնի սիրուիին էր: Իբրև սիրո աստվածուիի, Աստղիկը օժտված էր հմայիչ գեղեցկությամբ: Ժողովրդի մեջ պահպանված ավանդական մի զրույցում պատմվում է, որ Աստղիկը սովորություն

ուներ գիշերները լոգամք ընդունելու Արածանիի կիրճի իր լողարանում: Հայ կտրիճները, նրա մերկությունը տեսնելու և նրա գեղեցկությամբ զմայլվելու համար, լեռների լանջերին, դարան մտած, կրակ վառելով, փորձել են դիտել դիցուհուն, բայց աստվածուին, տղաների տարփուտ հայացքներից քողարկվելու համար, մշուշ է տարածել հովտում, որից էլ այդ վայրը կոչվել է Մուշ:

Հելլենիզմի դարաշրջանում հայ իրականության մեջ տարածվում է նաև հունական դիցաբանությունը՝ Հայկական դիցարանի աստվածները համեմատվել ու նույնացվել են հունական համապատասխան աստվածների հետ: Այսպես, Արամազդը նույնացվել է Զեսի, Անահիտը՝ Արտեմիսի, Վահագնը՝ Յերակլեսի, Աստղիկը՝ Աֆրոդիտեի, Միհրը՝ Յելիսի, Տիրը՝ Ապոլոնի, Նանես՝ Աքենասի հետ և այլն:

### **Գրականությունը և բատրոնը**

Հայոց լեզուն ունի հազարամյակների պատմություն, սակայն հայկական տառերը ստեղծվել են միայն V դարում: Մինչ հայերեն գրերի ստեղծումը հայերը գրել են հունարեն, իին պարսկերեն, արամեերեն և այլ լեզուներով: Հայտնաբերվել են բազմաթիվ վիմագրեր՝ քարերի վրա գրված արձանագրություններ:

Գրական առաջին հայ դեմքը, որի մասին մեզ տեղեկություն է հասել, Արտաշես I արքայի որդի Վրույրն է (մ.թ.ա. II դար), որին Խորենացին անվանում է «այր իմաստուն և բանաստեղծ»: Գրականության ավելի խոշոր ներկայացուցիչ է համարվում Արտավազդ II արքան (մ.թ.ա. I դար), որը գրել է պատմական երկեր, ճառեր և ողբերգություններ: Սակայն դրանք մեզ չեն հասել:

Հայ ժողովուրդը ավանդաբար մեծ սեր է ունեցել թատրոնի նկատմամբ: Դեռևս երկու հազար տարի առաջ Հայաստանում գոյություն է ունեցել թատրոն: Հելլենիզմի շրջանում թատերական կյանքի խոշոր օջախներ էին Արտաշատ և Տիգրանակերտ մայրաքաղաքները: Տիգրան II-ը Տիգրանակերտում կառուցել էր տասնյակ հազարամոց հանդիսատեսներ տեղավորող թատերական շենք (ամֆիթատրոն) և Հայաստան էր իրավիրել հույն անվանի դերասսամների: Տիգրան արքայի թատերական արվեստին ցուցաբերած հովանավորությունը շարունակել է նրա որդի Արտավազդը: Հիշենք մ.թ.ա. 53 թ. Արտաշատում տրված Եվրիապիդեսի «Բաքրոսուիիները» թատերական ներկայացումը: Իր հերթին, Արտավազդն էլ է գրել պիեսներ, որոնք ներկայացվել են հույն հեղինակների ստեղծագործությունների կողքին:

Այսպիսով, իին Հայաստանի թե՛ նյութական և թե՛ հոգևոր մշակույթը հասել էր բարձր մակարդակի և դարձել այն հիմքը, որի վրա հաջորդ դարաշրջանում պետք է ծաղկեր միջնադարյան հայ ազգային հարուստ մշակույթը:

#### **4. Ավագարիրական հարաբերությունների ձևավորումը: Քրիստոնեության ընդունումը**

**Ավատական  
հողատիրության  
ձևավորումը**

III-IV դարերում համաշխարհային պատմության մեջ տեղի ունեցան հասարակական մեծ տեղաշարժեր թե՛ տնտեսության, թե՛ մշակույթի, թե՛ կրոնի և թե՛ պետական կառուցվածքի կազմակերպման բնագավառներում: Ինչպես անտիկ ստրկատիրական դասական երկրներ համարվող Հռոմում ու Հունաստանում, այնպես էլ Մերձավոր Արևելքում ու Հայաստանում ստրկատիրական հարաբերությունները քայլայվում են, և դրանց փոխարինելու է գալիս ավատատիրական (ֆեոդալական) հասարակարգը: Հայաստանում այդ անցումն ավելի արագ կատարվեց այն պատճառով, որ ստրկատիրությունը մեզանում առանձնապես խոր արմատներ չեր ծգել:

Աստիճանաբար ձևավորվում է ավատատերերի (ֆեոդալների) դասը, որը տարբեր ճանապարհներով տիրում է համայնական գյուղացիների շինականների հողերին և նրանց գցում կախման մեջ:

Հայաստանում ֆեոդալական հողատիրության բնորոշ կողմերից մեկն այն էր, որ դարեր շարունակ, ընդհուպ մինչև XX դարի սկիզբը, համայնական գյուղացու կախումը հողատիրոջից արտահայտվել է ոչ թե անձնական կախվածության, գյուղացու՝ հողին ամրացվելու (ինչպես եղել է Ռուսաստանում), այլ հարկեր ու տուրքեր գանձելու և պարհակներ կատարելու ձևով: Այդ ընթացքում գյուղացին ունեցել է որոշակի ինքնուրույնություն և ազատ տեղաշարժման իրավունք: Այսինքն, Հայաստանում, ըստ էության, բացակայել են ֆեոդալիզմին բնորոշ ճորտատիրական հարաբերությունները կամ դրսևորվել են շատ թույլ ձևով:

Բացի այդ, Հայաստանում հետագա դարերի ընթացքում սոցիալ-դասակարգային ներհակությունները սրությամբ չեն դրսևորվել: Հայ ժողովրդի աշխարհաքաղաքական յուրահատուկ վիճակը (անկախ պե-

տականությունը ժամանակ առ ժամանակ կորցնելը, միջազգային ճանապարհների խաչմերուկների վրա գտնվելը, օտար նվաճողների պարբերական ասպատակությունները (և այլն) հարկադրել է նրան ավելի շատ հոգ տանել ազգային հավաքականության ու ինքնապաշտպանության, ներհամայնքային խնդիրների ուղղությամբ, քան խորացնել սոցիալ-դասակարգային ճնշումն ու հարստահարումը:

Ամենախոշոր հողատեր-ավատատերը թագավորն էր: Նրա կալվածքները տարածվում էին Արարատյան դաշտում, Տարոնում, Կոգովիտում, Բարձր Հայքում և այլուր: Արքունի կալվածքները կոչվում էին ոստան: Խոշոր ավատատերը կոչվում էր իշխան կամ նախարար, իսկ նրանց տիրույթները՝ իշխանություն կամ նախարարություն: Նախարարական իշխանությունը ժառանգական էր: Նախարարի որդին կոչվում էր սեպուհ: Ամեն մի նախարարություն ուներ իր գորաջոկատը, զինանշանը և դրոշը: Խոշոր հողային սեփականության տեր են դառնում նաև Եկեղեցին ու հոգևորականությունը:

Հայաստանում գոյություն են ունեցել ավատական հողատիրության երեք հիմնական ձևեր՝ «հայրենիք», «պարգևանք» և «գանձագին» կամ «դրամագին»: «Հայրենիք» կոչվում էին այն հողերը, որոնք նախարար-ֆեոդալը, ստանալով թագավորից, օգտագործում էր ժառանգական սեփականատիրության իրավունքով: «Հայրենիք» հողատիրության ձևը նմանվում կամ նույնանում էր արևմտաեվրոպական «դոմենին» և ռուսական «վոտչինային»:

Զինվորականներին և մյուս պետական պաշտոնյաներին իրենց ծառայության համար որպես ռոճիկ տրված հողերը կոչվում էին «պարգևական»: Սա ժառանգական չէր, այլ ցմահ: «Պարգևանքը» հիշեցնում էր արևմտաեվրոպական «լենը», «բենեֆիսիումը» և ավելի ուշ՝ Արևելյան Հայաստանում տարածված հողատիրության «թիուլ» կոչվող ձևը: «Պարգևանքի» տերերը կազմում էին մանր ավատատեր-հողատերերի կարգախումբը: Իսկ հողերի այն տեսակը, որը ձեռք էր բերվում գնելու միջոցով, կոչվում էր «գանձագին» կամ «դրամագին»:

Այսպիսով, III-IV դարերում Հայաստանում ձևավորվեց ավատական հողատիրությունը:

<b>Քրիստոնեության ընդունումը</b>	IV դարի սկզբին, Տրդատ III-ի թագավորության օրոք (298-330 թթ.), տեղի ունեցավ պատմական նշանակություն ունեցող մի իրադարձություն՝ Հայաստանում քրիստոնեությունը ընդունվեց որպես պետական կրոն:
--------------------------------------	---

Քրիստոնեությունը սկիզբ է առել Հրեաստանում մ.թ. և դարում և մեծ դժվարությամբ ճանապարհ է հարթել իր գաղափարների տարածման ու հաղթանակի համար: Քրիստոնեությունը սկզբում ճնշված երի կրոնն էր, իսկ հետո ծառայեցվում էր իշխող դասակարգերի շահերին: Հայաստանում քրիստոնեական վարդապետության առաջին տարածողներն են եղել Հիսուս Քրիստոսի 12 աշակերտներից՝ սուրբ Թաղես և սուրբ Բարդուղիմեոս առաքյալները՝ և դարում: Իրենց հավատքի ու քարոզչական գործունեության համար այս երկու սուրբ հայրերը հայոց Սանատրուկ թագավորի հրամանով նահատակվում են: Առաջին առաքյալ քարոզիչների անունով էլ հայ Եկեղեցին կոչվում է «առաքելական»: Չնայած հետապնդումներին ու հալածանքներին և III դարերում քրիստոնյաների թիվը Հայաստանում գնալով աճում էր:

Տրդատ III-ը սկզբում խիստ հալածում էր քրիստոնյաներին: Նա տանջահար է անում և խորվիրապի բանտը նետում Անակ Պարթևի որդի Գրիգորին (Լուսավորչին) (252-325 թթ.), նահատակել է տալիս Հռոմեական կայսրությունից Հայաստան ապաստանած կույս Հռիփսիմեին և նրա ընկերուիկիներին: Սակայն շուտով Տրդատ թագավորի վերաբերմունքը քրիստոնեության նկատմամբ փոխվում է: Նա բանտից ազատում է Գրիգոր Լուսավորչին, իրաժարվում է հեթանոսությունից և 301 թ. քրիստոնեությունը հայտարարում է պետության պաշտոնական կրոն: Այսպիսով, Հայաստանը դարձավ աշխարհում առաջին երկիրը, որտեղ քրիստոնեությունը ճանաչվեց պետական կրոն: Ի դեպ, 2001 թ. մեծ համբաւավորությամբ տոնվեց այդ դարակազմիկ իրադարձության 1700-ամյակը: Միլանի իրովարակուվ (Էդիկտով) Հռոմեական կայսրությունում քրիստոնեությունը պաշտոնական կրոն ճանաչվեց միայն 313 թ.:

Ազաթանգեղոս պատմիչը նկարագրում է, որ քրիստոնեությունը արմատավորելիս մեծ ավերածություններ կատարվեցին՝ ավերվեցին հեթանոսական տաճարներ և աստվածների արձաններ, կոտորվեցին քրմեր և հեթանոս շատ հավատացյալներ, ոչնչացվեցին մշակութային շատ արժեքներ: Հեթանոսական տաճարների ու մենյաների տեղերում կառուցվեցին քրիստոնեական Եկեղեցիներ ու սրբավայրեր, իսկ դրանց հողերն անցան Եկեղեցուն: 303 թ. Վաղարշապատում հիմնադրվեց Ս. Էջմիածնի մայր տաճարը, որը դարձավ հայոց հոգևոր կենտրոնը: Հեթանոսությունը մեծ դժվարությամբ էր իր տեղը զիջում

նոր կրոնին: Եվ պատահական չէ, որ հեթանոսական որոշ ծեսեր ու սովորություններ, օրինակ, «Մատաղը», «Վարդավառը», «Տյառնընդառաջը» (Տրընդեզ) և այլն, պահպանվեցին և փոխանցվեցին քրիստոնեական եկեղեցուն:

Սուրբ Գրիգոր Լուսավորիչը կարգվում է հայոց առաջին կաթողիկոս և կազմակերպում եկեղեցական համակարգը: Նշենք, որ մինչև Պապ թագավորը, հայոց կաթողիկոսը ձեռնադրվում էր դրսում՝ Կապադովկիայի Կեսարիա քաղաքում: 325 թ. Փոքր Ասիայի Նիկիա քաղաքում գումարվում է քրիստոնյա աշխարհի Տիեզերական առաջին ժողովը, որին հայերի կողմից մասնակցում է Ս. Գրիգոր Լուսավորչի որդին՝ Արիստակես Եպիսկոպոսը: Նիկիայի տիեզերական ժողովը սահմանում է քրիստոնյաների հավատո հանգանակը (կրեդոն) և հոգևոր ծիսական կանոնները: Հայոց եկեղեցին հետզհետեւ դառնում է երկրի իշխող գաղափարական ուժը, միաժամանակ՝ խոշոր հողատեր-ավատատեր: Հայաստան; այց Առաքելական եկեղեցին կոչվել է «լուսավորչական» և «Գրիգորյան»՝ այդ եկեղեցու առաջին քարոզիչ ու հիմնադիր Գրիգոր Լուսավորչի անվան քաղադրիչներով: Անուրանալի է Հայաստանյաց Առաքելական եկեղեցու դերը երկրի միասնության ու անկախության, հայ ազգի, լեզվի, կրթության, գիտության ու մշակույթի պահպանման ու զարգացման գործում: Եվ պատահական չէ, որ քրիստոնեության ընդունումից հետո (հետագա դարերում, ընդհուպ մինչև XVIII-XIX դդ.) հայ գրականության, կրթության, գիտության և այլ բնագավառների ներկայացուցիչները գերազանցապես եղել են հոգևորականներ:

Այսպիսով, քրիստոնեության ընդունումը շրջադարձային իրադարձություն եղավ հայ ժողովրդի հասարակական-քաղաքական ու հոգևոր-մշակութային կյանքում և էական նշանակություն ունեցավ քաղաքակրթության արժեքներին նրա հաղորդակցվելու գործում: Քրիստոնեության ընդունումով Հայաստանը քաղաքականապես ու մշակույթով ավելի է կապվում Հռոմեական կայսրության հետ: Իսկ դրան հակառակ՝ սրբում են հարաբերությունները Սասանյան Պարսկաստանի հետ:

Հռոմի հետ Հայաստանի կապն ավելի ուժեղացավ, երբ 330 թ. մայիսին հռոմեական Կոստանդին I Մեծ կայսրն իր մայրաքաղաքը Հռոմից տեղափոխեց Բյուզանդիոն, որն էլ նոյն պատվին վերանվանվեց Կոստանդնուպոլիս: Ավելի ուշ՝ 395 թ., Հռոմեական կայսրությունը

վերջնականապես բաժանվեց Երկու մասի՝ Արևմտյան Հռոմեական կայսրություն Հռոմ կենտրոնով, և Արևելյան Հռոմեական կայսրություն (որը կոչվեց նաև Բյուզանդիա՝ Բյուզանդիոն կամ Կոստանդնուպոլիս կենտրոնով):

## 5. Պայքար հայկական պետականության պահպանման համար IV դարում: Արշակ II

**Հայաստանը**

**Խոսրով Կոտապի և  
Տիրանի օրոք**

Տղատ Մեծի մահից հետո գահ է բարձրանալ նրա որդի Խոսրով III-ը (330-338 թթ.), որը կարծահասակ լինելու պատճառով կոչվել է Կոտապ։ Նրա օրոք մի քանի նախարարական տոհմեր (Մանավագյան, Որդունի, Բզնունի) ապստամբում են կենտրոնական իշխանության դեմ՝ ձգտելով ներքին լիակատար ինքնուրույնության։ Խոսրով Կոտապը դաժանորեն ճնշում է կենտրոնախույս նախարարների ելույթները և կոտորում այդ տոհմերի բոլոր տղամարդկանց։ Նրանց տիրույթները բռնագրավվում են և հանձնվում եկեղեցուն։

Խոսրով III-ի օրոք Հայաստանը ննթարկվեց մերձկասպյան մազգութ ցեղերի ասպատակությանը։ Սպարապետ Վաչե Մամիկոնյանին հաջողվեց ջախջախել և դուրս քշել թշնամուն։ Խոսրովի կարճատև թագավորությունը նշանավորվեց շինարարական գործունեությամբ։ Նա Արտաշատից ոչ հեռու գտնվող մի բլրի վրա հիմնադրեց նոր մայրաքաղաք՝ Դվինը։ Նոր մայրաքաղաքի հիմնադրման պատճառն այն էր, որ Արաթսի վտակ Մեծամոր գետի հունը փոխվել էր, և Արտաշատի շուրջը ճահիճներ էին առաջացել, ողջ դարձել էր վատառողջ։ Խոսրովը կատարել է նաև արհեստական անտառատունկ։ Նրա օրոք Գառնիից մինչև Դվին, Ազատ գետի երկու կողմերում, անտառ տնկվեց, որը պահպանվում է մինչև օրս և հայտնի է «Խոսրովի անտառ» անունով։

Խոսրով արքայի խաղալ, շինարարական գործունեությունը շարունակվեց այնքան ժամանակ, քանի դեռ ուժի մեջ էր Մծբինի 298 թ. պայմանագլուխը։ Սակայն երբ պայմանագրով նախատեսված 40-ամյա խաղաղության ժամկետն անցավ, Սասանյան արքայից արքա Շապուհ II Երկարակյացը (310-379 թթ.) պատերազմ սկսեց Հռոմեական կայսրության ու Հայաստանի դեմ։ Հենց այդ ժամանակ

Էլ 338 թ. մահացավ Խոսրով Կոտակը, և նրան հաջորդեց որոին Տիրանը (338-350 թթ.):

Տիրանի և նրա հաջորդների օրոք հայկական պետականության ամրապնդման և հայերի քաղաքական կողմնորոշման խնդրում բացորչ կերպով դրսևորվել են երեք հոսանք: Դայ ավագանու մի մասը հակված էր դեպի Պարսկաստանը, իսկ մյուս մասը, հայոց եկեղեցու հետ միասին, դեպի Հռոմեական կայսրությունը: Դայ քաղաքական շրջաններում գոյություն ուներ նաև մի այլ՝ երրորդ հոսանք, որը հավասարապես դեմ էր թե՛ պարսկական և թե՛ հռոմեական կողմնորոշմանը ու գտնում էր, որ հայ ժողովուրդը պետք է հույսը դնի իր վրա: Այս տեսակետի գաղափարակիրն էր խոշոր քաղաքական ու պետական գործիչ Հայր Սարդաբետը: Նա պայքարում էր հայ կենտրոնախույս նախարարների դեմ և գտնում, որ Հայաստանը պետք է վարի ինքնուրույն քաղաքականություն և զանա ամրապնդել հայոց անկախ պետականությունը:

Տիրանի գահակալության տարիներին կենտրոնախույս ձգտումներ ունեցող նախարարները վերսկսեցին պառակտողական գործողությունները: Թագավորի հետ գժտվեց նաև կաթողիկոսը: Սպանվեց Հուսիկ կաթողիկոսը: Այս իրավիճակից օգտվելով՝ պարսից Շապուհ արքան իր մոտ՝ մայրաքաղաք Տիգրոն է կանչում Տիրանին և կուրացնել տալիս:

### **Արշակ II-ի ներքին և արտաքին քաղաքականությունը**

Տիրանին հաջորդում է նրա որդի Արշակ II-ը (350-368 թթ.): Լինելով ուժեղ ու հաստատական անձնավորություն, նա կարողանում է վարել անկախ ու ինքնուրույն քաղաքականություն և կայունացնել Հայաստանի ներքին ու արտաքին վիճակը: Վերականգնվում է հայ-հռոմեական դաշինքը, որն ամրապնդվում է Արշակ II-ի և Օլիմպիայի ամուսնությամբ: Մեծ ջանքեր են թափվում նաև պառակտված նախարարներին հաշտեցնելու ուղղությամբ: Սպառապետ է նշանակվում Վասակ Մամիկոնյանը, իսկ կաթողիկոս՝ Ներսես I-ին Մեծը (353-372 թթ.): Ներսես կաթողիկոսի օրոք Հայաստանում ամրապնդվում է քրիստոնեական հավատը:

354 թ. Տարոնի գավառի Աշտիշատ ավանում տեղի է ունենում հայ եկեղեցու առաջին օրենսդիր ժողովը: Աշտիշատի ժողովը ընդունում է թե՛ կրոնական և թե՛ աշխարհիկ կյանքին վերաբերող բազմաթիվ կանոններ: Արգելվում են, մասնավորապես, հեթանոսական ժա-

մանակներից հարատևած բազմակնությունը, մերձավոր հարազատների և անչափահասների ամուսնությունը, թաղումների ժամանակ կատարվող մարմնական վնասները, անվայելու լացուկոծը: Որոշվում է կառուցել վանքեր, դպրոցներ, հիվանդանոցներ, որբանոցներ և այլն:

Արշակ II-ը Մասիս լեռան հարավային կողմում՝ Կոգովիտ գավառում, կառուցում է Արշակավան քաղաքը և հրավիրում է բոլոր ցանկացողներին, այդ թվում՝ կախյալ և փախստական բնակիչներին, գալ և բնակություն հաստատել նորահիմն քաղաքում, ինչը հասկանալի դժգոհություն է առաջացնում նախարարների շրջանում: Վերջիններս, օգտվելով թագավորի բացակայությունից, միացյալ ուժերով, Ներսէի Կամսարականի գլխավորությամբ, հիմնահատակ կործանում են քաղաքը և սրի քաշում բնակչությանը: Արշակավանի ավերումը, ինչ խոսք, մեծ հարված էր հայոց թագավորի հեղինակությանը:

Սյունյաց Անդովկ իշխանի դուստր Փառանձեմը ամուսնացել էր Արշակ II-ի եղբորորդի Գնելի հետ: Սակայն շուտով Գնելը սպանվում է իր եղբայր Տիրիթի բանսարկությամբ: Թագավորի միջամտությամբ սպանվում է նաև Տիրիթը: Փառանձեմը դառնում է Արշակ II-ի կինը՝ Հայոց թագուհի: Այս հանգամանքը ևս թուլացնում է թագավորի դիրքերը:

Առանձին իշխաններ՝ Վահան Մամիկոնյանը և Մերուժան Արծրունին, դիմելով դավաճանական քայլի, անցնում են Շապուհ II-ի կողմը: Լարված էին նաև թագավորի և եկեղեցու հարաբերությունները:

Հենց այս խառնակ ժամանակ՝ 359 թ., Շապուհ II-ը որոշեց վերջնականապես նվաճել Հայաստանը և դարձնել իր տերության մարզերից մեկը: Սակայն հայոց զորքը, սպարապետ Վասակ Մամիկոնյանի հրամանատարությամբ, կարողանում է հաղթանակներ տանել թշնամու դեմ: Դրանից հետո Շապուհը, տեսնելով, որ միայն զենքի ուժով չի կարողանում հասնել իր նպատակին, դիմում է խորամանկության: Նա Տիգրոն է հրավիրում Արշակին և Վասակին՝ իբր վիճելի հարցերը կարգավորելու և հաշտություն կնքելու: Վասակը գլխատվում և մորթազերծ է արվում, իսկ Արշակը նետվում է Անհուշ բերդը, ուր և շուտով մահանում է:

Արշակի և Վասակի վախճանից հետո Հայաստանի համար ստեղծվում է ծանր կացություն: Պարսկական զորքերը, հայ առանձին դավաճան նախարարների օժանդակությամբ, ներխուժում են Հայաստան, կողոպտում ու ավերում երկիրը: Այդ ծանր պահին պետության

դեկն իր ձեռքն է վերցնում Փառանձեմ թագուհին, որն Արշակի կինն էր դարձել Օլիմպիայի մահից հետո: Թագուհուն օգնում է Վասակի որդին՝ Մուշեղ Մամիկոնյանը: Պարսիկներին հերոսական ոլոմադրություն է ցույց տալիս Արտագերս ամրոցը: Երկարատև՝ 14-ամսյա պաշարումից հետո, ի վերջո, թշնամին գրավում է ամրոցը և անմարդկային խոշտանգումներից հետո սպանում Հայոց թագուհուն:

## 6. Հայասպանը Պապի գահակալության դարիներին: Արշակունյաց թագավորության անկումը

### Պատ Արշակունու գահակալությունը: Զիրավի ճակատամարտը

Պարսիկ Շապուհ արքան, նենգաբար ձերբակալելով և սպանելով հայոց թագավոր Արշակ II-ին ու սպարապետ Վասակ Մամիկոնյանին, նոր արշավանքներ կազմակերպեց Հայաստանի դեմ և մեծ ավերածություններ ու ահավոր աղետներ պատճառեց Երկրին: Հայ ժողովուրդը, այլևս չտանելով օտարի ասպատակություններն ու ստորացումները, կրկին ոտքի ելավ իր ազատության և անկախության համար: Այդ համաժողովրդական պայքարը գլխավորեցին Հռոմից Հայաստան վերադարձած թագաժառանգ Պապը և Վասակ Մամիկոնյանի որդի սպարապետ Մուշեղը: Հռոմի Վաղես կայսեր օգնությամբ Պապը հաստատվում է հայոց գահին (370-374 թթ.): 371 թ. Շապուհը, չիանրդուրժելով Հռոմի կողմից Պապին հայոց թագավոր կարգելը, մի նոր արշավանք է ձեռնարկում դեպի Հայաստան: Նույն թվականին հայ-հռոմեական միացյալ զորքերը Զիրավի դաշտում, Նպատ լեռան մոտ տեղի ունեցած ճակատամարտում պարտության մատնեցին և Հայաստանից վտարեցին պարսիկ զորքերին: Այս կրիվների ժամանակ բռնվեցին և իրենց արժանի պատիժն ստացան նաև դավաճան հայ նախարարները:

### Պատի ներթին և արտաքին քաղաքականությունը

Զիրավի ճակատամարտում տարած հաղթանակն էլ ավելի ամրապնդեց Պապ թագավորի դիրքերը: Նա, չնայած իր երիտասարդ տարիքին, սկսեց վարել ակտիվ ու եռանդուն արտաքին ու ներքին քաղաքականություն ձգտելով խաղաղ ու բարիդրացիական հարաբերություններ հաստատել ինչպես

Հռոմի, այնպես էլ Սասանյան Պարսկաստանի հետ: Պապը ջանում էր ամրապնդել հայկական պետության իհմքերը: Այդ նպատակով նա հզորացրեց բանակը զինվորների թիվը հասցնելով 90 հազարի, սահմանափակեց Եկեղեցական հողատիրությունը, հարկերը, հոգևորականների արտոնությունները, փակել տվեց կուսանոցների մեծ մասը և այլն: Պապի այս ձեռնարկումները, բնականաբար, առաջ էին բերում հոգևորականության դժգոհությունը: Եվ պատահական չէ, որ հայ քրիստոնյա պատմիչները, միտումնավոր, բացասական գծեր են վերագրել Պապին: Իրականում նա եղել է հավասարակշռված, գործունյա և ինքնատիպ քաղաքական գործիչ:

Պապը վերագրավեց և թագավորությանը միացրեց Հայաստանից անջատված ծայրագավառները: Նա զբաղվեց ավերված քաղաքների վերականգնման ու շինարարական աշխատանքներով: Արտաքին քաղաքականության բնագավառում Պապի նպատակն էր բարելավել հարաբերությունները նաև Պարսկաստանի հետ, մի հանգամանք, որը դուր չէր գալիս հռոմեաներ Ներսես I կաթողիկոսին և սպարապետ Մուշեղ Մամիկոնյանին: Միաժամանակ, նա աշխատում էր Հայաստանից դուրս հանել հռոմեական կայազորները, որոնք հաճախակի միջամտում էին երկրի ներքին գործերին:

Պապը համարձակ քայլ կատարեց հայ Եկեղեցին հունադավան Եկեղեցու կախվածությունից դուրս բերելու ուղղությամբ: 372 թ., երբ մահացավ Ներսես Մեծը, որին, ի դեպ, ոմանք կարծում են, թե իբր թունավորել է թագավորը, նորընտիր կաթողիկոսը այլևս չուղարկվեց Կեսարիա, այլ ձեռնադրվեց տեղում:

Պապ թագավորի ինքնուրույն և հայկական պետականության իհմքերի ամրապնդմանը միտված քաղաքականությունը թշնամաբար ընդունեց Հռոմը: Իւզ երկրի ներսում Պապի նկատմամբ թշնամաբար են տրամադրվում թէ Եկեղեցականները և թէ նախարարների գգալի մասը: Եվ 374 թ., Հռոմի կայսեր հանձնարարությամբ, խնջույքի ժամանակ դավադրաբար սպանվում է հայոց թագավորը: Պապի սպանությունից հետո Մեծ Հայքի թագավորությունը սկսում է թուլանալ և անկում ապրել:

**Հայաստանի առաջին  
բաժանումը: Արշակունյաց  
թագավորության անկումը**

Պապից հետո հռոմեացիները հայոց գահին նստեցրին նրա ազգական, հռոմեաներ Վարագդատին (374-378 թթ.), որը Հռոմում աչքի էր ընկել որպես օլիմպիական խաղերի հաղթող: Բայց, լինելով քաղաքականապես ան-

հեռատես ու միամիտ մարդ, շուտով վտարվում է Հայաստանից: Դրանից հետո Հայաստանում թագավոր է ճանաչվում Պապի փոքրահասակ որդի Արշակ III-ը (378-386 թթ.), որի խնամակալն է դառնում սպանված Մուշեղ Մամիկոնյանի եղբայր Մանվել Մամիկոնյանը:

387 թ. Հռոմի կայսրը և Պարսկաստանի թագավորը համաձայնության են գալիս և Հայաստանը բաժանում իրենց միջև: Սա Հայաստանի առաջին բաժանումն էր: Այդ բաժանումով Հայաստանի մեծագույն մասն անցավ Պարսկաստանին, ուր վասարական կախմանք միառժամանակ (40 տարի) շարունակեց գոյատել Արշակունյաց թագավորությունը: Հայաստանի հենց այս հատվածում, V դարի սկզբին՝ Վռամշապուհ թագավորի օրոք (388-414 թթ.), տեղի ունեցավ մեծագույն նշանակություն ունեցող մի իրադարձություն՝ հայ ժողովողի հանճարեղ զավակ Մեսրոպ Մաշտոցը ստեղծեց հայկական գրերը, որը անկախ պետականության կորուտի պայմաններում դարձավ հզոր գենք՝ հայ ազգի, լեզվի ու մշակույթի պահպանման ու զարգացման համար:

387 թ. բաժանումով Հայաստանի արևմտյան մի քանի գավառներ անցնում են Հռոմի գերիշխանության տակ: Հռոմին ենթակա մասում շուտով՝ 391 թ. վերացվում է Հայոց թագավորությունը և այն դառնում է կայսրության մի երկրամաս (պրովինցիա): Իսկ 428 թ. պարսիկները գահընկեց են անում հայ Արշակունյաների արքայատոհմի վերջին թագավոր Արտաշեսին (Արտաշիր) (422-428 թթ.) և Հայաստանը դարձնում իրենց տերության մարզերից մեկը: Այժմ արդեն երկիրը կառավարվում էր ոչ թե թագավորի կողմից, այլ մարզպանի, որին նշանակում էր պարսից արքայից արքան: Հայոց մարզպանը եղել է ազգությամբ հայ կամ պարսիկ: Սկսվում է հայոց պատմության, այսպես կոչված, մարզպանության շրջանը:

Այդ նույն ժամանակ Պարսկաստանի ենթակայության տակ էին գտնվում նաև Վրաստանը և Աղվանքը (ներկայիս Աղրբեջանի տարածքը): Այս երկրներում էլ մտցվեց մարզպանական կառավարում: V դարում քաղաքական, տնտեսական և վարչական նկատառումներով Սասանյանները Մեծ Հայքի առանձին ծայրամասային նահանգները միացրեցին հարևան երկրների մարզպանություններին: Այսպես, Գուգարքի նահանգի մեծ մասը միացվեց Վրաստանին, Արցախը և Ուտիքը՝ Աղվանքին, Փայտակարանը՝ Ատրպատականին և այլն: Նման կամայական վարչատարածքային փոփոխություններն էլ հետագայում

անդրկովկասյան ժողովուրդների միջև սահմանավեճերի նախահիմք դարձան:

Այսպիսով, կորսվեց հայկական հերթական արքայատոհմը: Դայ ժողովուրդը երկար ժամանակով՝ մինչև IX դար, կորցնում է իր պետական անկախությունը: Անկասլած, հայկական թագավորության անկումն ուներ իր ներքին և արտաքին պատճառները: Այդուհանդեռձ, հետագա դարերում հայոց պետականության շատ հատկանիշներ պահպանվեցին:

## ԲԱԺԻՆ ԵՐԿՐՈՐԴ

### ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐ (V-XVIII ԴԴ.)

Վ դարը համարվում է սահմանագիծ «հին» և «միջին» դարերի միջև: Նախ, համաշխարհային պատմության մասշտաբով, Վ դարի երկրորդ կեսին կործանվեցին համաշխարհային քաղաքակրթության խոշորագույն կենտրոնն ու կրողը հանդիսացող Յոռմն ու Արևմտյան հռոմեական կայսրությունը:

Վ դարը Յայաստանի ու հայ ժողովրդի համար դարաշրջանների անցման սահմանագիծ է այն տեսակետից, որ այս դարի առաջին կեսին հայ ժողովուրդը կորցնում է իր անկախ պետականությունը և տևականորեն (չորս և կես դար) ընդհատվում է հայոց արքայական դինաստիաների պատմությունը: Դրանից հետո, Փեոդալական հարաբերությունների հետագա զարգացման արդյունքով, խորանում է նախարարական-Փեոդալական մասնատվածությունը, ինչը դասականորեն արտահայտվել է աշխարհի շատ երկրներում:

Միաժամանակ, Վ դարը նշանավորվեց հայ քրիստոնյա ժողովրդի ազգային ոգին ու էռթյունն այնքան հատկանշող ազատագրական շարժումների սկզբնավորումով: Եվ վերջապես, նշված դարը հայտնի է որպես հայ մատենագրության «ոսկեդար»:

## Գլուխ չորրորդ

# ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՉԱՐԾ V-VI ՌԱՐԵՐՈՒՄ

## 1. Ազատագրական պայքարը 450-451 թվ.։ Ավարայրի ճակարտամարդը

**Պարսից արքունիքի վարած** 428 թ., Արշակունիների թագավորության վերացումից և Արևելյան Հայաստանը Պարսկաստանի գերիշխանության տակ ընկնելուց հետո, այնուամենայնիվ, պահպանվում էր Երկրի ներքին ինքնուրույնությունը։ Հազարապետության պաշտոնը գտնվում էր Ամառունիների, սպարապետությանը՝ Մամիկոնյանների, դատավարությունը՝ կաթողիկոսի ձեռքին և այլն։

Քանի դեռ Սևսանյաններին սպառնում էին արևմուտքից՝ Բյուզանդիան, իսկ հյուսիսից՝ քուշանները և հոները, նրանք մի տեսակ հանդուրժող էին հայերի նկատմամբ։ Սակայն, երբ Հազկերտ II-ի (438-457 թթ.) օրոք չեզոքացվում են այդ սպառնալիքները, սկսվում են հալածանքներն ու բռնությունները հայերի նկատմամբ։ Հազկերտ արքան խնդիր է դնում վերացնել հայերի ներքին ինքնուրույնությունը, կրոնափոխ անել պարտադրելով պարսից կրոնը՝ զրադաշտականությունը, և աստիճանաբար հայերին ձուլել պարսիկներին։ Այդ քաղաքական ուղեգիծը վարում էր նաև դրացի Վրաստանի և Աղվանից աշխարհի նկատմամբ։

Այդ նպատակի իրականացման համար 447 թ. արտակարգ լիազորություններով Հայաստան է գալիս Դենշապուհ անունով մի պաշտոնյա։ Խորամանկ այս կառավարիչը նախ զանազան մեքենա-

յություններով պառակտում և իրար դեմ է հանում իայ նախարարներին, իսկ հետո էլ անցկացնում է «աշխարհագիր» (մարդահամար)՝ հարկային բեռը էլ ավելի ծանրացնելու համար: Այդ քաղաքականությունը առաջ է բերում խոր դժգոհություն հասարակական լայն խավերի շրջանում: Կնշանակի Յայաստանում բորբոքվող շարժումն իր հիմքում ուներ ոչ միայն կրոնափոխության ու ձուլման, այլ նաև ազգաբնակչության սոցիալ-տնտեսական կեղեցնան ուժեղացման գործոններ: Յարկեր դրվեցին նաև հոգևորականության վրա, իսկ իայ նախարարները գրկվեցին իրենց ժառանգական իրավունքներից ու արտոնություններից: Մի խոսքով, հասարակական բոլոր խավերի մեջ առաջացավ համընդհանուր դժգոհություն:

449 թ. պարսից արքունիքի հատուկ իրովարտակով հայերին առաջարկվում էր իրաժարվել քրիստոնեությունից և ընդունել զրադաշտականություն: Նույնատիա իրովարտակներ էին ուղարկվում նաև կրաստան և Աղվանք:

Դայ նախարարները քաղաքական պայքարի հարցերում միասնական չէ. ն: Երանց մի մսաը, սպարապետ Վարդան Սամիկոնյանի գլխավորությանը, կողմնակից էր ազստամբության և Բյուզանդիայի օգնությամբ հայոց պետականության վերականգնմանը: Մյուս թերը, որը գլխավորում էր մշորգապան Վասակ Սյունին, կողմ էր զգույշ ու լոյալ քաղաքականության՝ ձգտելով ձեռնպահ մնալ անհավասար գոտեմարտից:

## **Աղյուսամբության սկիզբը և ընթացքը**

Դայ նախարարները մերժում են դավանափոխության առաջարկը: Զայրացած Յազկերտը մայրաքաղաք Տիգրոն է կանչում անվանի իայ նախարարներին: Պարսկաստան մեկնած նախարարները 450 թ. գարնանը ներկայանում են Յազկերտին: Վերջինս հանդիմանում է նրանց և առաջարկում հավատափոխություն: Նախարարները այդ թվում սպարապետ Վարդան Սամիկոնյանը և մարզպան Վասակ Սյունին, ստիպված դիմում են կեղծ ուրացության և վերադառնում հայրենիք 700 մոգերի իետ միասին: Ապահովության համար Յազկերտը պատանդ է պահում Վասակ Սյունու երկու որդիներին: Դայ նախարարները և մոգերը հասնում են Բագրևանդի Անգղկոչված ավանը: Սակայն ժողովուրդը, չհանդուրժելով դավանափոխությունը, Ղևոնդ Երեցի գլխավորությամբ ջարդում և Յայաստանից դուրս է քշում մոգերին: Անգղի դեպքերով, փաստորեն, սկսվում է

ապստամբությունը: Ռազմական դաշինք է կնքվում երեք բախտակից ժողովուրդների՝ հայերի, աղվանների և վրացիների միջև: Միաժամանակ, պատգամավորություն է ուղարկվում Բյուզանդիա օգնություն ստանալու հույսով: Սակայն կայսրը մերժում է հայերի խնդրանքը: Ավելին, նա պարսիկներին գաղտնի տեղեկացնում է հայերի՝ ապստամբության պատրաստվելու մասին: Հայերին մնում էր ապավիճել իրենց սեփական ուժերին: Պարսկական գերիշխանության դեմ ապստամբում են նաև վրացիները և աղվանները:

Հայերը նախ օգնության են հասնում առաջինը ապստամբած աղվաններին: 450 թ. ամռանը սպարապետ Վարդան Մամիկոնյանի զորաբանակը թշնամուն հանդիպում է Խաղիսաղ կոչվող բնակավայրի մոտ (ներկայիս Ղազախը) և շահում է այդ ճակատամարտը: Դրանից հետո հայկական զորախումբը, զարգացնելով հաջողությունը, հասնում է մինչև ճորա պահակ (ներկայիս՝ Ղերբենդ) և փոխոգնության դաշն կնքում հոների հետ ընդդեմ պարսիկների: Մինչ Վարդան Մամիկոնյանը գրաղված էր Աղվանքում, սուրհանդակը լուր է բերում Վասակ Սյունու որդեգրած նոր քաղաքականության մասին: Մարզպանը փոխում է իր վերաբերմունքը ապստամբության նկատմամբ և սկսում վարել երկդիմի քաղաքականություն: Նրա վերաբերմունքը փոխվեց այն բանից հետո, երբ Բյուզանդիան իրաժարվեց օգնել Հայաստանին: Ստանալով այս անհանգստացնող լուրը՝ Վարդանը անմիջապես վերադառնում է Հայաստան: Ապստամբության ընթացքը կասեցնել այլևս անհնար էր:

**Ավարայրի  
Ճակատամարտը** 450-451 թթ. ձմռանը նախապատրաստվում էր Վճռական գոտեմարտ: Գարունը բացվելուն պես պարսկական բանակը, Մուշկան Նիսալավուրտի հրամանատարությամբ, Հեր և Զարեվանդ գավառներով մտավ Արտազ գավառ և բանակեց Տղմուտ գետի աջ ափին՝ Ավարայրի դաշտում: Հայկական 66 հազարանոց բանակը այնքան էլ լավ չէր զինված: Սակայն ոտքի էին ելել բոլոր խավերը, այդ թվում հոգևորականները: Ապստամբության նշանաբանն էր. «Մահ ոչ իմացեալ մահ է, մահ իմացեալ՝ անմահություն»: ճակատամարտը տեղի ունեցավ 451 թ. մայիսի 26-ին: ճակատամարտին ականատես ու մասնակից հոգևորական-պատմիչ Եղիշեն գեղարվեստական բացառիկ վարպետությամբ նկարագրել է այն: Հակառակորդը, բացի մեծարիվ բանակից, կովի մեջ էր մտցրել նաև վարժեցրած փղերի: Մարտը տևեց

մինչև երեկո: Յերոսի մահով ընկապ հայոց զորքերի հրամանատար, սպարապետ Վարդան Մամիկոնյանը: Երկու կողմերն էլ ծանր կորուստներ կրեցին: ճակատամարտից հետո հայերը նահանջեցին և շարունակեցին իրենց պայքարը պարտիզանական կրիվների ձևով:

Ծանր ճակատամարտի և սկսված պարտիզանական կրիվների պատճառով պարսկական արքունիքը, հարկադրված, բանակը հետ է կանչում Յայաստանից և հայերի նկատմանը սկսում է վարել ավելի մեղմ, սիրաշահելու քաղաքականություն: Յազկերտը ստիպված հետ է կանգնում հայերին կրոնափոխ անելու մտադրությունից, չափավորում է հարկերն ու տուրքերը, նշանակում է նոր մարզպան և այլն:

«Վարդանանց» կոչվող այս պատերազմը հայ ազատագրական պայքարի պատմության փայլուն էջերից է: Յայ ժողովուրդը մինչև օրս մեծ ակնածանքով է հիշում Վարդան Մամիկոնյանի և նրա զինակիցների հայրենասիրական սխրանքը:

## 2. Ազատագրական կրիվները Տայաստանում 481-484 լեթ.

### Ազատագրական դայլարի սկիզբը և ընթացքը

Ավարայրի ճակատամարտից հետո պարսկական կողմերի վարած մեղմ քաղաքականությունը երկար չտևեց: Շուտով՝ Պերոզ արքայի օրոք, վերսկսվեց բռնությունների և հավատափոխության քաղաքականությունը: Նորից հայ ժողովրդի գլխին կախվեց ձուլման վտանգը: Եվ 481 թ., Ավարայրի ճակատամարտից ուղիղ 30 տարի անց, մարզպանական Յայաստանում բռնկվեց մի նոր ապստամբություն: Այս անգամ առաջինը ապստամբեց Վրաստանը Վախթանգ Գորգասալ թագավորի գլխավորությամբ: Ստեղծվեց հայ-վրացական դաշինք՝ միասնական պայքարով ազատագրվելու պարսիկների գերիշխանությունից:

Յայաստանում ապստամբությունը գլխավորեց Վարդան Մամիկոնյանի եղբորորդին՝ Վահան Մամիկոնյանը: Պարսիկ պաշտոնյաները դուրս քշվեցին Յայաստանից: Երկրի սպարապետ նշանակվեց Վահան Մամիկոնյանը, իսկ մարզպան՝ Սահակ Բագրատունին: Ապստամբության կենտրոն դարձավ մայրաքաղաք Դվինը: Այս անգամ էլ Բյուզանդիան չօգնեց հայերին: Յայ իշխանների մեծ մասը (Մամիկոնյաններ, Բագրատունիններ, Կամսարականներ, Արծրունիններ, Գնունի-

ներ, Ռշտունիներ, Մանդակունիներ և այլք) հարում է ապստամբությանը, իսկ մի քանիսն էլ, ունենալով պարսկական կողմնորոշում, ցուցաբերում են դավաճանական վարքագիծ: Վերջիններիս թվում էին Գաղղիշո Խորխոռունին, Գղիհոն Սյունին և ուրիշներ: Այս ապստամբության մասին մեզ առատ տեղեկություններ է տալիս այդ ժամանակների պատմիչ Ղազար Փարպեցին իր «Պատմություն հայոց» աշխատության մեջ:

481 թ. հայկական գինված ուժերը փայլուն հաղթանակ են տանում Մասիսի ստորոտում՝ Ակորի գյուղի մոտ տեղի ունեցած ճակատամարտում: Դաջորդ տարի՝ 482 թ., հայերը մի նոր հաղթանակ են տանում Ավարայրից ոչ հեռու, Արտազ գավառի Ներսեհապատ գյուղի մոտ: Հայկական զորաբանակը, Կահան Մամիկոնյանի ընդհանուր հրամանատարությամբ, մեծ քաջագործություններով հաղթում է պարսկական մեծարիկ զորքերին ու իհախուսահ մատնում:

Ներսեհապատի ճակատամարտից շատ չսնցած, Վրաստանի Վախթանգ թագավորը օգնություն է խնդրում հայերից: Վահան Մ'սմիկոնյանը, կատարելով իր դաշնալցային պարտավորությունը, հայոց բանակի գլուխն անցած շարօվում է Վրաստան: 482 թ. ամռանը հայվրացական զորքերը կուր գետի ափին ճարմանայի դաշտում, ճակատամարտ են տալիս պարսկական բանակին: Սա հայերի երրորդ մեծ ճակատամարտն էր: Սակայն այս ճակատամարտում հայ-վրացական միացյալ ուժերը ծանր պարտություն կրեցին: Դովում զոհվեց մարզպան Սահակ Բագրատունին:

ճակատամարտից հետո Վահան Մամիկոնյանը վերադառնում է Հայաստան և իր փոքրաթիվ ուժերով սկսում պարուիզանական կրիվները: Նա մեծ աջակցություն է ստանուն Ժողովրդի կողմից: Սպարապետ Վահան Մամիկոնյանը թշնամու աչքին դառնում է առաւապելական հերոս: Ազատագրական պայքարը շարունակվում է մինչև 484 թ. ամռանը: Շուտով իրադրությունը փոխվում է:

**Նվարսակի հաւտության** 484 թ. ամռանը պարսիկները պարտություն կրեցին միջինասիական քոչվոր ցեղերի (հեփթաղների) դեմ կրիվներում: Սպանվեց պարսից Պերոզ թագավորը:

Մի կողմից ծանր պարտությունը, մյուս կողմից՝ Վահան Մամիկոնյանի գլխավորած պարտիզանական կրիվները հարկադրեցին պարսկական արքունիքին կրկին վարել մեղմ քաղաքականություն Հայաս-

տանի նկատմամբ: Այդ նպատակով Հեր գավառի Նվարսակ գյուղում (հայ-պարսկական սահմանագլխին) կնքվեց հաշտության պայմանագիր (484 թ.): Համաձայն պայմանագրի, Պարսկաստանը հրաժարվում էր կրոնափոխության ծրագրից: Պարսից արքունիքը այլևս չպետք է միջամտեր հայ նախարարների ներքին գործերին: Հայաստանը պարտավորվում էր հայոց այրուձին դնել պարսից արքայի տրամադրության տակ:

485 թ. Վահան Մամիկոնյանը մեկնում է Տիգրոն, որտեղ պարսից նոր արքա Վաղարշը նրան ընդունում է մեծ պատիվներով: Մայրաքաղաք Տիգրոնում մեկ անգամ ևս վավերացվում է Նվարսակի հաշտության պայմանագիրը, իսկ Վաղարշի հատուկ հրովարտակով Վահան Մամիկոնյանին տրվում են Հայոց սպարապետի ու տանուտերի պաշտոններ: Հայաստանը, փաստորեն, դառնում է կիսանկախ «տանուտիրական երկիր», իսկ Դվինը՝ նրա մայրաքաղաքը: Հայերի համակրանքը շահելու նպատակով՝ շուտով սպարապետ Վահան Մամիկոնյանը նշանակվում է նաև Հայաստանի մարզպան (կառավարիչ):

Տևական պայքարից հետո կրկին վերականգնվում է նախարարների ու հոգևորականության արտոնյալ վիճակը, քրիստոնեությունը ճանաչվում որպես Հայաստանի պետական կրոն:

Այսպիսով, 481-484 թթ. ազատագրական կրիվներն ունեցան հաղթական ավարտ: Համար պայքարի գնով Հայաստանը պահպանեց իր ներքին քաղաքական ինքնուրույնությունը: Շնորհիվ V դարի ազատագրական շարժումների՝ ձախողվեցին Հայաստանը Պարսկաստանին կցելու և հայ ժողովրդին կրոնափոխելով ձուլելու պարսկական արքունիքի փորձերը:

### **3. Հայաստանը VI դարում: Հայաստանի երկրորդ բաժանումը**

#### **Բյուզանդիայի**

#### **բաղաքանությունը**

#### **Արևմտյան Հայաստանում**

Հայաստանի առաջին բաժանումից

(387 թ.) և անկախ պետականության վերացումից հետո թե Պարսկաստանը և

թե Բյուզանդիան (Արևելյան հողմեական կայսրությունը) ուզում էին վերջ տալ հայ նախարարների ներքին ինքնուրույնությանը: Երկու տերություններն էլ վարում էին ձուլման քաղաքականություն: Եթե Պարսկաստանը այդ քաղաքականությու-

նը իրականացնում էր բացահայտ, ապա Բյուզանդիան դա կատարում էր քողարկված ձևով: Վերջինիս՝ ձուլման ու հայաթափման քաղաքականությունը ցայտուն դրսերվեց Յուստինիանոս I կայսեր օրոք (527-565), որն իրականացրեց մի շարք վերափոխություններ:

Նա որոշեց իր գերիշխանության տակ գտնվող Արևմտյան Յայաստանում մտցնել բյուզանդական օրենքներ ու իրավական նորմեր, քայլայել ու փոշիացնել հայ նախարարական իշխանությունները: Նոր օրենքով նախարարական ընտանիքներում այդուհետ տղամարդկանց հետ համահավասար ժառանգական իրավունք էին ստանում նաև կանայք: Սա խարիսլում էր հայ նախարարական տների ամբողջականությունը, միասնությունը և հզորությունը: Վատթարանում է նաև գյուղացիության դրությունը:

Բացի այդ, Յուստինիանոս I-ը երկրում կատարեց վարչական փոփոխություններ: Բյուզանդիայի տիրապետության տակ գտնվող հայկական հողերը (նահանգները) բաժանվեցին չորս մասի և ստացան 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ Յայք անվանումները: Դրանց կառավարիչներ նշանակվեցին բյուզանդական պաշտոնյաներ: Ռազմական տեսակետից Արևմտյան Յայաստանի այդ չորս մասերը մտնում էին մի մագիստրոսության մեջ, որի կենտրոնը համարվում էր Թեոդոսուպոլիս (Կարին) քաղաքը: Յուստինիանոսի ռազմավարչական ռեֆորմը ևս նպատակ էր հետապնդում թուլացնել հայերի ռազմական ինքնուրույնությունը:

Յուստինիանոսի վարչատնտեսական ու ռազմական վերափոխություններն այնքան մեծ դժգոհություն առաջացրին հայերի մեջ, որ հայ իշխանները նույնիսկ մտադրվեցին սպանել կայսրին: Սակայն մի հույն պալատականի մատնությամբ այդ դավադրությունը ձախողվեց:

**Քաղկեդոնի** 451 թ. փոքրասիական Քաղկեդոն քաղաքում իրավիրժողովը վեց համաքրիստոնեական տիեզերական ժողով: Ժողովում կրոնադավանաբանական վեճ ծագեց Քրիստոսի բնության (եռւթյան) հարցում: Ժողովականների մեծամասնությունը, բյուզանդական արքունիքի և Եկեղեցու թելադրանքով, Քրիստոսի մեջ ճանաչում են երկու բնություն՝ ասսիվածային ու մարդկային: Յետագայում այս տեսակետի կողմնակիցները կոչվեցին երկարնակներ («դիոֆիզիտներ») կամ քաղկեդոնականներ: Իսկ ժողովի մասնակիցների փոքրամասնությունը, ընդունելով Քրիստո-

սի միայն աստվածային բնույթը, կոչվեց միաբնակներ («մոնոֆիգիտներ») կամ հակաքաղկեդոնականներ:

Բյուզանդական կայսրության համար պաշտոնական դավանանք է ճանաչվում Երկարնակությունը՝ քաղկեդոնականությունը՝ որպես «ուղղափառ», ճշմարիտ ուղղություն, իսկ հակաքաղկեդոնականությունը՝ հերձված:

Թեև հայերը, 450-451 թթ. հայտնի ապստամբական իրավիճակի պատճառով, չկարողացան մասնակցել քաղկեդոնի տիեզերակալն ժողովին, սակայն կայսրության արևելյան մյուս ժողովուրդներ ասորիների, դպտիների նման հարեցին միաբնակների (հակաքաղկեդոնական) չափավոր թեկին:

Միաբնակների և Երկարնակների միջև մղվող կրոնադավանքանական այս-վեճի տակ, անշուշտ, թաքնված էր քաղաքական պայքար, մի կողմից՝ Բյուզանդիայի, իսկ մյուս կողմից՝ Պարսկաստանի միջև, որովհետև Երկուսն էլ ձգտում էին Արևելքի Երկրներին ու ժողովուրդներին իրենց ազդեցության ու գերիշխանության տակ առնել, իսկ Եկեղեցին, կրոնը կարևոր միջոց էին այդ ճանապարհին: Պետք է ասել, որ կրոնադավանքանական այդ պայքարում Պարսկաստանը, Ելնելով իր շահերից, բնականաբար, հովանավորում էր հակաքաղկեդոնականներին (նեստորականությունը): Միաժամանակ, անսքող դիմակայություն կար նաև, մի կողմից կայսրության արևելյան հպատակ ժողովուրդների, իսկ մյուս կողմից Բյուզանդական արքունիքի ու պաշտոնական Եկեղեցու միջև:

Այդ պայքարի արդյունքով՝ 554 թ. Դվինի Եկեղեցական ժողովով հայ Եկեղեցին վերջնականապես իր կապերը խզեց Բյուզանդական քաղկեդոնական Եկեղեցուց: Ժողովը մերժեց նաև հակաքաղկեդոնականությունը՝ որպես նեստորականություն: Յայկական առաքելական, լուսավորչական Եկեղեցին գնալով ավելի ու ավելի էր ստանում ազգային դիմագիծ, կապվում ժողովրդի, հայ կյանքի ու ազգային խնդիրների հետ: Սկսած VI դարից՝ հայոց Եկեղեցին դառնում է անկախ և ինքնուրույն թե՛ քաղկեդոնականությունից և թե՛ հակաքաղկեդոնականությունից:

**571-572 թթ.** VI դարում վիճակը բարվոք չէր նաև Յայապատճամբությունը տանի պարսկական մասում Արևելյան Յայաստանում: VI դ. կեսերից մարզպանության պաշտոնը կրկին անցավ

պարսիկների ձեռքը: Յայաստանում անցկացվեց նոր «աշխարհագիր» և ծանրացվեցին հարկերը: Կրկին ասպարեզ նետվեցին կրոնական հալածանքները (կրոնափոխությունը), իայ իշխանների իրավունքների ոտնահարումը: Այս ամենի պատճառով 571 թ. պարսից տիրապետության դեմ սկսվեց մի նոր ապստամբություն: Ապստամբությունը գլխավորեց սպարապետ Վարդան Մամիկոնյանը, որը հայտնի է Կարմիր Վարդան մականունով: Ստեղծվում է 20-իազարանոց բանակ: Ապստամբները հարձակվում են Դվինում տեղակայված պարսկական կայազորի վրա, ջախջախում այն և սպանում պարսից Սուրեն մարզպանին: Ապստամբության դրոշ են պարզում նաև վրացիները և աղվանները:

Այս ապստամբության ժամանակ Բյուզանդիան, իր նվաճողական շահերից ելնելով, հովանավորում է հայերի և անդրկովկասյան մյուս ժողովուրդների ելույթները: Կայսրը հաստատապես խոստանում է օգնել հայերին՝ հայկական առանձին շրջաններ Բյուզանդիայի գերիշխանությանը ենթարկելու պայմանով: Միաժամանակ, կայսրը ձգտում էր հայերին ենթարկել հունադավան (քաղկեդոնական) եկեղեցուն: Դրա հիման վրա կրկին բռնկվեց պարսկա-բյուզանդական պատերազմը, որը փոփոխական հաջողություններով շարունակվեց 20 տարի: Ռազմական գործողությունները ընթանում էին Յայաստանի տարածքում, և դրանց հետևանքով ամենից ավելի տուժողը հայերն էին:

## **Յայաստանի Երկրորդ բաժանումը**

Երկար կրիվներից ու բանակցություններից հետո երկու տերությունները համաձայնության եկան և 591 թ. կնքված հաշտությամբ Յայաստանը երկրորդ անգամ բաժանվեց Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև: Ըստ նոր բաժանման, Բյուզանդիային անցավ Յայաստանի մեծ մասը, այդ թվում Տայքը, Տուրուբերանը, Աղձնիքը և Այրարատ նահանգի մեծ մասը: Դրա հետևանքով ավելի խորացավ Յայաստանի քաղաքական մասնատվածությունը:

Այս ժամանակաշրջանի վերաբերյալ հայտնի է բյուզանդական Մոնիկ կայսեր (582-602 թթ.) նամակը՝ ուղղված պարսից Խոսրով II թագավորին, որը մեջ է բերել Սեբեոս պատմիչը: VII դարում կրկին շարունակվեցին պարսկա-բյուզանդական հակամարտությունները և չդադարող պատերազմները, մինչև որ տարածաշրջանում պատմական ասպարեզ մտավ մի նոր ախոյան՝ Արաբական խալիֆայությունը:

## Գլուխ հինգերորդ

# ՀԱՅԱՍՏԱՆԸ ՎՐԱԲԱԿԱՆ ԽԱԼԻՖԱՅՈՒԹՅԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱԿ (VII - IX ԴՊ.)

## 1. Արաբական արշավանքները Հայաստան VII դարում: Հայաստանի նվաճումը

**Արաբական  
արշավանքները** VII դարի 30-ական թվականներին Արաբական թերակղզում կազմավորվեց Արաբական խալիֆայությունը: Արաբական պետության հիմնադիրը Եղավ Մուհամմեդը, որը միաժամանակ համարվում է նոր կրոնի՝ մահմեդականության կամ իսլամի հիմնադիրը: Մահմեդական Սուրբ գրքի՝ Ղուրանի գաղափարների տարածման քողի տակ սկսվեցին արաբական նվաճումները: Արաբները, կործանելով Սասանյան պետությունը և պարտության մատնելով Բյուզանդիային, իրենց համար ճանապարհ հարթեցին դեպի Հայաստան:

640 թ. արաբները առաջին անգամ հարավից ներխուժեցին Հայաստան՝ իրենց ճանապարհին կողոպտելով գյուղերն ու ավանները: 641 թ. նրանք գրավեցին Դվին քաղաքը, շատերին անգրորեն կոտորեցին և մեծ թվով բնակիչների գերի տարան: 640-650-ական թթ. արաբները մի քանի անգամ կրկնեցին իրենց արշավանքները: Հայաստանը փաստորեն մնաց անպաշտպան՝ իրեն հովանավոր համարող Բյուզանդիայի կողմից:

**Արաբական  
տիրապետության  
հաստատումը  
Հայաստանում**

652 թ. հայոց իշխան ու սպարապետ Թեոդորոս Ռշտունին հարկադրված կնքում է հաշտության պայմանագիր արաբների հետ: Պայմանագրի համաձայն, Հայաստանը ճանաչում էր խալիֆայության գերիշխանությունը և տալու էր որոշ հար-

կեր: Մյուս կողմից՝ պահպանվելու էր Հայաստանի ներքին ինքնուրույնությունը: Հայաստանը իրավունք ուներ պահելու 15 հազարանց այրուձի: Թ. Ռշտունին նշանակվում է Հայաստանի և ամբողջ Հարավային Կովկասի կառավարիչ: Սակայն հայ-արաբական այս պայմանագիրը իր ուժը երկար չպահպանեց: Հետագայում ևս, ժամանակ առ ժամանակ, Հայաստանը ենթարկվեց արաբների նորանոր ասպատակությունների: Այնուամենայնիվ, մինչև VII դարի վերջը արաբների հարձակումները Հայաստանի վրա կրում էին հետախուզական և կողոպտչական բնույթ: Հայոց երկիրը տակավին պահպանում էր իր ներքին ինքնուրույնությունը:

**Հայ-արաբական Արաբները Հայաստանը նվաճեցին և վերջնականութայմանագիրը** րեն խալիֆայությանը միացրին VII դարի վերջերին՝ 696-699 թթ. ընթացքում: Նրանք գրավեցին և իրենց ենթարկեցին նաև Վրաստանը և Աղվանից աշխարհը: Գրավված այս երեք երկրների Հայաստանի, Վրաստանի և Աղվանքի միավորումով ստեղծվեց մի նոր վարչական միավոր «Արմինիա» կամ «Էրմենիա» անունով: Արմինիայի վարչական կենտրոնը սկզբում Դվինն էր, իսկ հետո դարձավ Պարտավ քաղաքը՝ Աղվանքում: Երկիրը կառավարում էր խալիֆի նշանակած արաբ Էմիրը (ամիրան), որին հայերը կոչում էին ոստիկան: Սրանք ունեին նույն իրավունքները, ինչպիսիք մարզպանները՝ պարսիկների օրոք: Բայց արաբական տիրապետության ընթացքում, գրեթե անփոփոխ, հայերի ձեռքում մնացին հայոց իշխանի և սպարապետի պաշտոնները:

Հայաստանը նվաճելուց և խալիֆայությանը կցելուց հետո, շուրջ երկու դար, հայ ժողովուրդն ընկավ արաբական լծի տակ: Վատթարացավ հայերի քաղաքական և սոցիալ-տնտեսական դրությունը: Հայաստանի բնականոն զարգացումը խիստ դանդաղեց, տնտեսական կյանքը անկում ապրեց: Արաբները սկսեցին հետապնդել և ոչնչացնել հայ նախարարներին: Սահմանափակվեցին եկեղեցու ու հոգևորականության իրավունքները: Ծանրացվեցին հարկերը: Օրինակ, արական սեռի քրիստոնյա բնակչությունից սկսեցին գանձել, այսպես կոչված, գլխահարլ; (ջիզի): Նվաճման իրավունքով Հայաստանի հողը, ջուրը և ընդերքը օրենքով հայտարարվեցին Աստծո ու Մուհամմեդի փոխանորդ Խալիֆի գերագույն սեփականությունը, որն էլ, իր հայեցողությամբ, հողատիրման տարբեր ձևերով դրանք տալիս էր իր մերձավորներին, պաշտոնյաներին, զինվորականներին, հոգևորակա-

նուրբյանը և այլ հողօգտագործողների: Ինչ վերաբերում է հայ ավատատեր նախարարներին, ապա նրանց այն մասը, որն ընդունեց հպատակություն, կարողացավ արաբական իշխանություններից համապատասխան վավերաթղթեր ձեռք բերել և գործնականում պահպանել հողատիրման իրավունքը, պայմանով, որ խալիֆաթին պետք է վճարեր «խարաջ» (հողահարկ): Իսկ հայ նախարարական տների մյուս մասը, որ ցուցաբերեց զմբուտ ոգի ու դիմադրություն, Ենթարկվեց ֆիզիկական ոչնչացման:

Ըստ իր տնտեսական կարողության՝ խարաջ էր վճարում նաև հայ գյուղացին շինականը: Քրիստոնյա բնակչությունը Ենթարկվում էր նվաստացումների, բռնի կրոնափոխության: Շուտով Արաբիայից զանգվածաբար Հայաստան սկսեցին վերաբնակեցնել արար և այլ մահմեդական տարրերի: Արար ցեղերի բնակեցմամբ փոխվում է Հայաստանի ազգագրական կազմը (ժողովրդագրական վիճակը): Սկսում են առաջանալ արաբական մեծ ու փոքր էնիրություններ և այլն: Այս ամենի հետևանքով շուտով սկսվում են հայերի ապստամբական ելույթները արաբական տիրապետության դեմ:

## 2. Հայ ժողովրդի ազատագրական պայքարը արաբական տիրապետության դեմ VIII դարում

**Ազատագրական տայֆարի տաճառները** Արաբական տիրապետությունը ծանր հարված հասցրեց Հայաստանի քաղաքական, տնտեսական ու մշակութային կյանքին: Հայաստանի հողը, ջուրը, ընդերքը հայտարարվեցին խալիֆայության սեփականություն: Նախարարները գրկվեցին իրենց ժառանգական իրավունքներից ու արտօնություններից: Արաբները նպատակ դրեցին ոչնչացնել հայ նախարարներին ու նրանց զորական ուժը: Երկիրը լցվեց արար վերաբնակիչներով: Ժողովրդի վրա դրվեցին ծանր հարկեր, որոնք սաստկացան հատկապես 725 թ. Հերթի աշխարհագրից հետո: Սկսվեցին կրոնական հալածանքները:

Այս ամենի հետևանքը եղավ 703 թ. ապստամբությունը, որի գլուխ կանգնեց հայոց սպարապետ Սնբատ Բագրատունին: Շակատամարտը տեղի ունեցավ Մասիս լեռան ստորոտում գտնվող Վարդանակերտ գյուղի մոտ Ակոռիից ոչ հեռու: Հայկական 2000-անոց հեծյալ ջոկատը փայլուն հաղթանակ տարավ արաբական 5000-անոց զորա-

բանակի նկատմամբ: Ապստամբությունը տարածվեց Հայաստանի մյուս գավառներում: Հայերը նույնպիսի հաղթանակներ տոնեցին Ռշտունիք գավառում՝ Արծրունի և Վանանդում՝ Կամսարական նախարարական տների ղեկավարությամբ: Սակայն արաբները պատժիչ նոր զորացուկատներ բերեցին և ճնշեցին ապստամբությունը:

Արաբները Վարդանակերտի պարտության վրեժը լուծում են երկու տարի անց (705 թ.), երբ խաբեությամբ իրենց մոտ են կանչում հայ նախարարների ու զորականների՝ շուրջ 800 մարդ, լցնում են Նախճավանի և մոտակա Խորան գյուղի եկեղեցիները և բոլորին ողջ-ողջ այրում: Այդ նախճիրը չկոտրեց հայերի մարտական ոգին:

**748-750 թթ. և**

**774-775 թթ.**

**ապստամբությունները**

VIII դարի 40-ական թվականներին գահակալական արյունահեղ կրիվներ տեղի ունեցան խալիֆայության ներսում: Հակամարտում էին Օմայան և Աբասյան տոհմերը: Պայքարն ավարտվեց 750 թ. Օմայան խալիֆ Մրվանի սպանությամբ և Աբասյան հարստության հաստատումով (750-1258 թթ.): Հայերը, օգտվելով այդ խառնակ իրավիճակից, փորձեցին ապստամբել ու թոթափել արաբական լուծը:

Արաբների դեմ առաջին ապստամբական ելույթներից մոտ քառասուն տարի անց՝ 748-750 թթ. կրկին բռնկվեց ապստամբություն, որը դարձյալ գլխավորում էին հայ երկու նշանավոր նախարարական տները՝ Մամիկոնյանները և Բագրատունիները: Սակայն արաբների դեմ պայքարի հարցում ունենալով տարբեր մոտեցումներ ու գործելակերպ՝ ապստամբների շարքերում տեղի է ունենում պառակտում, և, ի վերջո, այն ևս մատնվում է անհաջողության: 762 թ. ապստամբական ելույթներ են արձանագրվել Վասպուրականում:

774-775 թթ. տեղի ունեցավ արաբական խալիֆայության դեմ ուղղված ամենամեծ ապստամբությունը: Ապստամբության նախաձեռնողը դարձյալ Մամիկոնյան նախարարական տունն էր: Այն ղեկավարում էին Արտավազդ և Մուշեղ Մամիկոնյանները: Ապստամբությունը սկսվեց այն բանից հետո, երբ Արտավազդ Մամիկոնյանը մի ջոկատով Գյումրի գյուղում անսպասելիորեն հարձակվեց արաբ հարկահանների վրա և խլեց հավաքված հարկը: Դրանից հետո կազմվեցին աշխարհազորային գնդեր: Ազատագրական պայ-

քարը գնալով ավելի մեծ ծավալ ստացավ։ Շարժման ճանաչված ղեկավար դարձավ Մուշեղ Մամիկոնյանը։ Նա փոքրաթիվ ուժերով հնարամտությամբ մի շարք փայլուն հաղթանակներ տարավ թշնամու նկատմամբ, որը մեծ ոգևորություն առաջացրեց ժողովրդի մեջ։ Մուշեղ Մամիկոնյանի հետ ապստամբության գլուխ են կանգնում նաև Սմբատ և Սահակ Բագրատունիները, Յամազասպ Արծրունին և ուրիշներ։

Ապստամբները, ազատագրելով Երկրի գգալի մասը, պաշարեցին ռազմական հենակետ հանդիսացող Կարին քաղաքը և Վանալի ափին գտնվող Արճեց բերդավանը։ 775 թ. գարնանը խալիֆը 30 հազարանոց զորք է ուղարկում ապստամբությունը ճնշելու։ Նույն թվականին Արճեցի և ապա Արածանի գետի վերին հոսանքի շրջանում գտնվող Արճն գյուղի մոտ տեղի ունեցած վճռական ճակատամարտում ապստամբները պարտություն կրեցին թշնամու գերակշիռ ուժերից։ Վերջին ճակատամարտում գոհված 3 հազար հայ ռազմիկների թվում էր նաև ապստամբության ղեկավար Մուշեղ Մամիկոնյանը։ VIII դարի այս և նախորդ ապստամբությունների մասին մեզ հարուստ տեղեկություններ է հաղորդում Ժամանակակից պատմիչ Ղերինդը։

774-775 թթ. ապստամբությունը հայ ժողովրդի ազատագրական պայքառի նշանակալի դրվագներից մեկն է։ Այս ապստամբությունը ոգերրեց ու վստահություն ներշնչեց հայ ժողովրդին, որ կարելի է վնրականգնել կորսված հայոց թագավորությունը։

Ծույտով պատմության թատերաբեմից հեռանում են Մամիկոնյանների, Կանսարականների, Ամատունիների և նախարարական այլ ուժն տոհմեր։ Այս շրջանում հայ նախարարական տններից ամենակենսունակը գտնվեց Բագրատունյաց իշխանական տոհմը, որը, վարելով զգուշավոր ու ճկուն քաղաքականություն, կարողացավ ձեռք բերել և նորանոր կալվածքներ, և Յայոց գլխավոր իշխանի պաշտոնը, իսկ ավելի ուշ՝ IX դարում, վերականգնել հայոց ինքնավարությունը և ապա՝ անկախ պետականությունը։

### **3. 850-855 թթ. ապստամբությունը արաբական փիրապետության դեմ**

**Խալիֆայության  
քաղաքականությունը** VIII-IX դարերում խալիֆայությունը վարում էր տանը արաբներով բնակեցնելու քաղաքականություն: Արդեն նախորդ ապստամբությունների փորձով խալիֆը համոզվել էր, որ միայն իշխանների ուժերը ջլատելու միջոցով էր հնարավոր հայ ժողովրդին պահել հնագանդության մեջ: Դրա հետևանքով շատ նախարարական տներ վերացան կամ գաղթեցին Բյուզանդիա:

Հայ իշխանական տների վերացմանը զուգընթաց՝ խալիֆը Հայաստանը բնակեցնում էր արաբական տարրերով, որպեսզի տեղում իր համար ստեղծի վստահելի սոցիալական հենարան: Այդ ճանապարհով հայկական հողերի վրա ձևավորվում էին մահմեդական էմիրություններ (ամիրայություններ)՝ Սանազերտում, Բերկրիում, Բաղեշում և ուրիշ վայրերում:

Այդ նույն ժամանակներում հայ նախարարական առանձին տներ կարողացան ոչ միայն պահպանել իրենց գոյությունը, այլև հզորանալ: Այդպիսի իշխանական տներից էին Բագրատունիները, Արծրունիները, Սյունիները, Արցախի իշխանները: VIII դարի վերջերից առանձնապես ազդեցիկ դիրքի են հասնում Բագրատունիները՝ Աշոտ Բագրատունու (Մասկերի) գլխավորությամբ: Սրանց ձեռքն անցավ ոչ միայն Մամիկոնյանների ու Կամսարականների կալվածքների գգալի մասը, այլև՝ Հայոց իշխանի ու սպարապետի պաշտոնները: Շուտով Բագրատունիների գերադասությունը ճանաչեցին Հայաստանի մյուս իշխանները: Հայաստանը թեև շարունակում էր հարկեր վճարել խալիֆայությանը, բայց, փաստորեն, ապրում էր ներքին ինքնուրույն կյանքով: Հարկերը հայոց իշխանն էր հավաքում և ուղարկում խալիֆաք:

**Խալիֆաթի  
քուլացումը:** IX դարի առաջին կեսին գգալիորեն թուլացավ Արաբական խալիֆաթը: Խալիֆաթի թուլացման պատճառներից մեկն այն էր, որ ավատական հարաբերությունների հետագա խորացման հետևանքով գնալով ուժեւաժումը դացան տերության ծայրագավառների և այլ շրջանների էմիրների ու հողատեր այլ իշխանավորների կենտրոնախույս

ձգտումները կենտրոնական իշխանության նկատմամբ: Պետք է ասել, որ սա համընդիանուր բնապատմական երևույթ է, որը դասականորեն արտահայտվել է միջնադարյան աշխարհի շատ ու շատ երկրներում՝ Ֆրանսիայում, Գերմանիայում, Ռուսաստանում և այլուր: Ինչպես կտեսնենք, այս նույն գործընթացները, մի փոքր ուշ, տեղի են ունեցել նաև Բագրատունյաց Հայաստանում:

Խալիֆաթի թուլացման գործում նշանակալի դեր խաղաց նաև IX դարի սկզբներին (808-809 թթ.) ծագած և պատմության մեջ հայտնի Խուրրամյան կամ Խուրրամիոյան (պարսկերեն՝ լուսավոր, փայլուն) շարժումը: Այս շարժումը, իր հայտնի դեկավար Բաբեկի անունով, կոչվում է նաև Բաբեկյան շարժում: Շարժումն ուներ թե՛ աղանդավորական, թե՛ սոցիալ-ազատագրական և թե՛, մինչև իսկ, ավազակային բովանդակություն: Նշենք, որ Բաբեկը մեծ ավերածություններ գործեց Սյունիքի գավառում՝ կոտորելով 15 հազար մարդ: Այս շարժումը, որ ընդգրկեց Աղվանքը, Ատրպատականը, Հայաստանի արևելյան շրջանները, տևեց շուրջ երեք տասնամյակ և ճնշվեց շատ մեծ դժվարությամբ՝ 837 թ.: Բաբեկը ձերբակալվեց, տարվեց Բաղդադ և մահապատժի ենթարկվեց քառահատման միջոցով: Խուրրամյան շարժումը ծանր հարված հասցրեց Արաբական խալիֆաթի միասնությանը: Դրա հետևանքով արագացավ խալիֆաթի քաղաքական մասնատումը: Այդ նպաստավոր հանգամանքից օգտվեցին նաև հայերը:

**Յուսուֆի և Բուղայի Արդեն IX դարի կեսերին Արաբական խալիֆավանքները** Արդեն IX դարի կեսերին Արաբական խալիֆաթի մասնատմամբ և թուլացմամբ արաբների տիրապետությունը նկատելիորեն թուլացավ նաև Հայաստանում: Խսկ երբ արաբները Մութավաքիլ խալիֆի օրոք (847-861 թթ.) փորձեցին ամրապնդել իրենց իշխանությունը Հայաստանում, 850-855 թթ. նրանց դեմ բռնկվեց մի նոր ապստամբություն: Այն ընդգրկեց համարյա ամբողջ Երկիրը՝ Սասուն-Տարոնից մինչև Արցախ ու Վասպուրական: Ապստամբությունը ճնշելու համար 851 թ. Մութավաքիլ խալիֆը գործով Հայաստան ուղարկեց ոստիկան Յուսուֆին: Վերջինս, գալով Հայաստան, սկսում է սանձարձակորեն կողոպտել ու ավերել Երկիրը, գերիներ ու պատանդներ վերցնել: Յուսուֆի տմարդի գործողությունները ոտքի են հանում Սասունի հայ քաջարի լեռնականներին՝ Խութեցի Հովհանի գլխավորությամբ: Ապստամբները անսպասելիորեն հարձակվում են Մուշ քաղաքում ձմեռող արաբական բանակի վրա և գլխովին ջախջախում: Խութեցի մար-

Միկները սպանում են նաև Յուսուֆին, որը փրկվելու համար թաքնվել էր եկեղեցու գմբեթի տակ: Պատմական այս իրադարձություններն իրենց արտացոլումն են գտել հայկական ժողովրդական էպոսի «Սասունցի Դավիթ» ոյուցազներգության մեջ: Ոգեշնչված խութեցիների ու սասունցիների համարձակ գործողություններից՝ ժողովուրդն ամենուրեք երկրից վտարում է օտար նվաճողներին:

Զայրացած խալիֆը 852 թ. գարնանը ապստամբների դեմ ուղարկեց Բուղա ամունով զորավարին, որն իր պատժից զորաբանակով դարձյալ մեծ արյունահեղություններ կատարեց: Սակայն նրան չհաջողվեց լիովին կոտրել հայերի դիմադրությունը: Բուղա Շարաբը պարտություններ կրեց Արցախում և Վասպուրականում: Արաբների ձեռնարկած արշավանքները, ի վերջո, ձախողվեցին, և 855 թ. հայոց իշխան նշանակվեց Աշոտ Մսակերի թոռ Աշոտ Բագրատունին:

850-855 թթ. ասստամբության շնորհիվ Հայաստանը կոկին վերականգնեց իր ներքին խնդնակարությունը և հող նախապատրաստեց օտարի լուծը թոթափելու ու Հայաստանի անկախությունը վերականգնելու համար: Այն րրականացավ մի փոքր ուշ՝ 885 թ., երբ երկրում հայստանովեց Բագրատունիների թագավորությունը:

#### 4. Հայկական մշակույթը IV - IX դարերում

*«Լամ է կույր աչքով, քան կույր՝ մտքով»:*

**Հայոց գրերի գյուտը:** Վաղ միջնադարյան Հայաստանի պատմամշակութային մեծագույն նվաճումը հայոց գրերի գյուտն է: Սեփական գրերի ստեղծումով նպաստավոր պայնաններ ստեղծվեցին ազգային մշակույթի, գրականության, գիտության զարգացման համար: Ավելին՝ գրերի գյուտը ազգապահան վիրխարի նշանակություն ունեցավ հայոց անկախ պետականության կորուսի և օտար նվաճուների մշտական ձուլողական սպառնալիքների այլամաններում:

Հայոց այբուբենը ստեղծել է հայ ժողովրդի հանճարեղ գավակ Մեսրոպ Մաշտոցը (361-440) V դարի սկզբին: Մինչ այդ հայերը, դարեր շարունակ խոսելով հայերեն, գրել են ուրիշ լեզուներով՝ հունարեն, արամեերեն, պարսկերեն, ասորերեն: Բացի այդ, օգտագործվել են նաև հայերեն գաղափարագիր նախագրեր՝ մեհենագրեր, որոնք սակայն չեն պահպանվել:

Մ. Մաշտոցը ծնվել է Տարոն գավառի Դացեկաց գյուղում։ Ստանալով իր ժամանակի համար ամենաբարձր կրթություն՝ նա թողնում է զինվորական ծառայությունը և դառնում հոգևորական։ Մ. Մաշտոցը շատ շուտ համոզվեց, որ ժողովրդին լուսավորելու և քրիստոնեության գաղափարները տարածելու, պետական գործերը վարելու, մայրենիով ժամասացությունը կատարելու համար անհրաժեշտ է ունենալ մայրենի գիր ու գրականություն։ Եվ հայոց կաթողիկոս Սահակ Պարթևի աջակցությամբ ու Վոամշապուհ թագավորի հովանավորությամբ 405-406 թթ. Մ. Մաշտոցը Ասորիքում ստեղծեց հայոց այբուբենը՝ 36 տառերով։ Կաղարշապատում Մ. Մաշտոցին դիմավորեցին ցնծությամբ։ Գրերի ստեղծմանը հաջորդեց լուսավորչական մեծ շարժում։ Երկրով մեկ բացվեցին մայրենի լեզվով ազգային դպրոցներ, և առաջին ուսուցիչը եղավ ինքը՝ Մ. Մաշտոցը։

Սկսվեց օտար լեզվով գրականության թարգմանությունը։ Վ դարուն առաջիններից մեկը թարգմանվեցին Աստվածաշունչը, ինչպես նաև Արիստոտելի, Պլատոնի, Զենոնի, Պորֆիյուրի և ուրիշ խոշոր մտածողների երկերը։ Այդ թարգմանությունները և այլ բնագիր ձեռագրեր պահպում են Մ. Մաշտոցի անունը կրող հին ձեռագրերի գրապահոցում։ Մատենադարանում։ Սրանով հայ ժողովուրդը հաղորդակից դարձավ հին աշխարհի գիտությանը և գրականությանը։

Հայոց գրերի գյուտի շնորհիվ ձևավորվեց սեփական հայ գրականությունը և պատմագրությունը։ Հայ ինքնուրույն գրականության սկզբնավորողները եղան Մ. Մաշտոցը և Ս. Պարթևը։ Մ. Մաշտոցի աշակերտ ու կենսագիր Կորյունը վկայում է, որ հայերեն գրերն ստեղծելուց հետո իր ուսուցիչը մեծահոգաբար նշանագրեր ստեղծեց նաև հարեւան վրացիների ու աղվանների համար։ Հանճարեղ գիտնական ու գյուտարար լինելուց բացի, Մաշտոցը օժտված էր նաև մարդկային բարոյական շատ բարձր հատկանիշներով։ Ահա թե ինչպես է բնութագրել երանելի Մեսրոպին պատմահայր Մ. Խորենացին. «Նա հրեշտակի տեսք ուներ, բեղնավոր միտք, պայծառ էր խոսքով, գործով՝ ժումկալ, մարմնով փառահեղ, սովորություններով՝ անման, խորհրդով՝ մեծ, հավատով՝ ուղիղ, հուսով՝ համբերող, սիրով՝ անկեղծ, ուսուցանելիս՝ անձանձիր»։

Այսպիսով, գրերի գյուտը անանց նշանակություն ունեցավ հայ ժողովրդի համար։ Յետագա դարերում, քաղաքական անկախության կորստի և օտար բազմաթիվ նվաճողների ասպատակությունների պայմաններում, հայոց գրերը, հայ առաքելական եկեղեցու հետ միասին,

հանդիսացան երկու գորեղ կովաններ իայ ժողովրդի ազգային ինքնության ու գոյապահպանության գործում: Ավելին, ազգային գիրը իիմք հանդիսացավ հայկական հոգևոր մշակույթի զարգացման համար:

Մ. Մաշտոցի գործը իսկական սխրանք էր: Յիրավի, իայ ժողովրդի մի քանի հազարամյա պատմության ընթացքում հնարիավոր չէ առանձնացնել մեկին, որն այնքան մեծ ծառայություն մատուցած լինի իր ժողովրդին, որքան Մեսրոպ Մաշտոցը: Եվ պատահական չէ, որ իայ ժողովուրդն ու եկեղեցին Մաշտոցի մահից հետո նրան սրբացրել են: Յայ մեծագույն երախտավոր Մ. Մաշտոցի անունով է կոչվում քաղաքամայր Երևանի ամենագլխավոր պողոտան և վարչական շրջաններից մեկը:

**Պատմագրությունը** Վ դարում սկզբնավորվեց և բուռն ծաղկման հասավ իայ պատմագրությունը: Յանդես եկան իայ պատմիչներ՝ Ագաթանգեղոսը, Փավստոս Բուզանդը, Ղազար Փարպեցին, որոնք շարադրել են III-V դարերի հայոց պատմությունը: 450-451 թթ. Կարդանանց պատերազմի մասին է գրել Եղիշե պատմիչը: Մ. Մաշտոցի կյանքին ու գործին է նվիրված Կորյուն վարդապետի «Վարք Մաշտոցի» երկը:

Սակայն V դարի և ընդհանրապես միջնադարյան իայ պատմագրության ամենանշանավոր դեմքը, անկասկած, Մովսես Խորենացին է իր գլուխգործոց «Յայոց պատմություն» կոթողական աշխատությամբ: Մ. Խորենացին, բազմապիսի աղբյուրագիտական նյութերի հիման վրա, քննական մոտեցումով, հարուստ ու հյութեղ լեզվով շարադրել է հայոց պատմությունը՝ հնագույն ժամանակներից մինչև Արշակունիների թագավորության անկումը (428 թ.): Միջնադարում «Յայոց պատմությունը» ծառայել է որպես դասագիրք: Ամենայն իրավամբ Խորենացուն անվանել են Պատմահայր, Քերթողահայր:

Յայաստանի՝ արաբական տիրապետության շրջանի վերաբերյալ հարուստ պատմագիտական նյութ են տալիս Սեբեոս (VII դար) և Ղևոնդ (VIII դար) պատմիչները: Իսկ Մովսես Կաղանկատվացին (VII դար) գրել է «Աղվանից աշխարհի պատմությունը»: Յայ պատմագիտական երկերը բացառիկ արժեք ունեն ոչ միայն իայ, այլև հարևան ժողովուրդների պատմության ուսումնասիրության համար:

Նշված ժամանակաշրջանում Երևան են գալիս առաջին բանաստեղծները՝ Կոմիտաս կաթողիկոսը և Դավթակ Քերթողը (VII դար): VII դարի բանաստեղծությունների մեջ հատկապես առանձնանում է Դավ-

թակ քերթողի «Ողբը», որը համարվում է մեզ հասած աշխարհիկ բովանդակության առաջին չափածո պոեմը: «Ողբը» նվիրված է Աղվանքի Զևանշիր իշխանին՝ նրա դավադիր սպանության առիթով: Այն գրված է ակրոստիքոսով, այսինքն բաղկացած է 36 տներից, որոնց սկզբնատարերը հաջորդաբար ներկայացնում են հայոց այբուբենը՝ Ա-ից ֆ:

### **Փիլիսոփայությունը, ճշգրիտ գիտությունները և իրավունքը**

Գրերի գյուտից հետո սկսում են առաջադիմել նաև փիլիսոփայությունն ու ճշգրիտ կամ բնական գիտությունները: Վաղ միջնադարի հայ փիլիսոփայական մտքի առաջին և ամենանշանավոր դեմքերից են Եզնիկ Կողբացին (V դար) և Դավիթ Անհաղթը (VI դար): Վերջինս «Անհաղթ» անունը ստացել է ժամանակի հույն փիլիսոփաների հետ մրցելիս հաղթող ճանաչվելու համար: Դավիթ Անհաղթով փաստորեն ձևավորվեց հայ փիլիսոփայական դպրոցը՝ որպես ինքնուրույն և ամբողջական բնագավառ:

Դայ բնափիլիսոփայական միտքը նոր որակի հասցրեց խոշոր մաթեմատիկոս, տիեզերագետ, աշխարհագրագետ Անանիա Շիրակացին (VII դար): Շիրակացին իրավամբ համարվում է Դայաստանի ճշգրիտ գիտությունների հիմնադիրը: Նա է հեղինակը «Աշխարհացոյցի», թվաբանության առաջին դասագրքի և այլ աշխատությունների: «Աշխարհացոյցում» առաջին անգամ ամբողջականորեն ներկայացված է Մեծ Դայքի քարտեզն իր 15 աշխարհներով (նահանգներով): Շիրակացին պաշտպանել է երկրի գնդաձևության և երկրակենտրոնության գաղափարները, կազմել է օրացույց և այլն: Բնագետ գիտնականը հայկական տոմարում կատարեց մի շարք ճշտումներ ու բարեփոխումներ: Ի դեպ, Շիրակացու ընդունած երկրակենտրոն համակարգը տարբերվում է մինչ այդ հայտնի Պտղոմեոսյան համակարգից և իր ժամանակի համար խոշոր ու ուշագրավ նվաճում էր:

Միջնադարյան Դայաստանում լայն տարածում են ունեցել եկեղեցու կողմից կանոնակարգվող հոգևոր և աշխարհիկ բնույթի օրենքները: Դրանք ամփոփվել են հատուկ ժողովածուներում, որոնք կոչվել են «Կանոնագիրք հայոց»: VIII դարում այդպիսի կանոնագիրք է կազմել Հովհան Օձնեցի կաթողիկոսը, որը, փաստորեն, հայ ժողովորդի համար ծառայել է որպես օրենսգիրք:

## **Ճարտարադեսությունը և արվեստը**

IV-IX դարերում նշանակալի զարգացում ապ-  
րեց նաև շինարարական-ճարտարապետա-  
կան արվեստը, որը մեծ չափով կապված էր

հատկապես քրիստոնեական կրոնի հետ: Դա արտահայտվեց հատ-  
կապես Եկեղեցաշինության մեջ: Զևսվորվեց հայ ազգային ինքնա-  
տիա ճարտարապետությունը: ճարտարապետության «բազիլիկ» ո-  
ճին (Երկարուկ քառանկյունի, սյունաշար կառույցներին) փոխարի-  
նեց գմբեթավոր, խաչաձև հատակագծով շենքը: Եկեղեցաշինության  
մեջ նոր երևույթ էր գմբեթի հանդես գալը: Կենտրոնագմբեթ կառույց-  
ներն ավելի երկրաշարժադիմացկուն էին: Յայաստանում գործածվող  
իիմնական շինանյութը քարն էր՝ իր բազմերանգ տարատեսակնե-  
րով: Շինարարության ժամանակ, կառույցներին ամրություն տալու  
համար, օգտագործվում էին մետաղական կապեր ու գամեր, կրաշա-  
ղախ, կապար, ծու և այլն:

Եկեղեցաշինության վաղ կառույցներից է Էջմիածնի Մայր տաճա-  
ռը, որը իիմնադրվել է IV դարի սկզբին: Յետագա դարերում այն մի  
քանի անգամ վերակառուցվել է: Յայկական ճարտարապետության  
գլուխգործոցներից են Յոհվանիմեի Եկեղեցին՝ Էջմիածնում (VII դ.) և  
Զվարթնոցի Վեհաշուք տաճարը՝ Էջմիածնի մոտ (VII դար):

Զվարթնոցը համաշխարհային ճարտարվեստի անկրկնելի կոթող  
է: Տաճարը կառուցվել է Ներսես III կաթողիկոսի ժամանակ՝ մոտավո-  
րապես 643 թվականին: Այն արտաքինից ներկայացնում է Եռահարկ,  
աստիճանաբար նեղացող կենտրոնագմբեթ շինություն՝ 45 մետր բարձ-  
րությամբ: Տաճարը կառուցվել է բազմերանգ սրբատաշ տուֆից և  
ունեցել է հինգ մուտք: Սյուների ճակատները զարդարված են եղել  
գեղանկար բարձրաքանդակներով, որոնք պատկերել են թևատարած  
արծիվ, խաղողի որթատունկ, նոնազարդ ճյուղեր: Յուշարձանի հա-  
րավային մասում գտնվել է արևային ժամացույց: Կամարադեղներից  
մեկի վրա գրված է «Յովիան»: Ենթադրվում է, որ դա կառուցող ճար-  
տարապետի անունն է: Կոթողի գոտիակապ կլոր և կամարագարդ  
լուսամուտները առատորեն լուսավորել են օղակածև սյունազարդ  
դահլիճը: Զվարթնոցն ունեցել է շուրջ 300 տարվա կյանք և կործան-  
վել է X դարում ուժեղ Երկրաշարժերից: Նրա հմայքն այնքան մեծ է  
եղել, որ հաջորդ XI դառում, Գագիկ Բագրատունի արքան մայրա-  
քաղաք Անիում կառուցել է տվել նույն տաճարի ճիշտ նմանակը:  
Առանձնապես հիացնում են Երկրաշարժից ավերված Զվարթնոցի սյու-  
ների խոյակների վրա քանդակված թևատարած արծիվների և խաղո-

ոի ողկույզների բարձրարվեստ քանդակները, որոնք եզակի երևոյթ են հայկական մշակույթում: Քանդակագործության, որմնանկարչության և խճանկարներով զարդապատկերների ենք հանդիպում այլ եկեղեցիներում ու ճարտարապետական հուշարձաններում: Մինչև օրս կանգուն երերույթի, Աշտարակի, Քասախի, Տեկորի, Արուճի և այլ եկեղեցիների պատերին կան կրոնական բովանդակությամբ զանազան պատկերներ, կենդանիներ և բույսեր պատկերող քանդակներ ու որմնանկարներ:

Այսպիսով, IV-IX դարերում հայկական մշակույթի մեծագույն նվաճումը, անկասկած, հայ գրերի գյուտն է: Դրա շնորհիվ նշանակալի զարգացում ապրեցին հայկական ինքնատիպ, ազգային մշակույթի շատ ճյուղեր: Միաժամանակ, վերը ասվածներից կարելի է հետևեցնել, որ եթե V դարը համարվում է հայ մատենագրության «ոսկեդարը», ապա VII դարը իրավամբ կարելի է անվանել հայոց ճարտարապետության «ոսկեդարը», որի գլուխգործոցն է Զվարթնոցը:

## Գլուխ վեցերորդ

# ՀԱՅԱՍՏԱՆԸ ԲԱԳՐԱՏՈՒՅՑԱՑ ԹԱԳՎՈՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՈԶԱՆՈՒՄ IX-XI ԴԱՐԵՐՈՒՄ

## 1. Հայաստանի անկախության վերականգնումը: Բագրատունիների թագավորության հասպափումը

**Հայկական  
Թետականության  
վերականգնումը: Առողջ 1** IX դարի կեսերին հայկական պետականության վերականգնման համար ստեղծվել է կեզ արտաքին ու ներքին նպաստավոր պայմաններ: Այդ շրջանում Արաբական խալիֆաթը խիստ բուլացել էր և անկում էր ապրում: Դրա փոխարեն հզորացել էին Վասպուրականի Արծրունյաց, Սյունյաց ու հատկապես Բագրատունյաց իշխանական տները: Դայ ժողովրդի համար կրկին կենսական հարց է դառնում հայոց անկախ պետականության վերականգնումը: Դայ ժողովրդի դարավոր ազատագրական պայքարը տվեց իր ցանկալի պտուղները:

Արաբական խալիֆայությունը համոզվելով, որ բռնությամբ ինարավոր չէ հայ ժողովրդին հնազանդեցնել, ստիպված 855 թ. Բուղային իր բանակով հետ կանչեց Հայաստանից, և երկրի սպարապետ ու կառավարիչ նշանակվեց Աշոտ Բագրատունին: 862 թ. Աշոտ Բագրատունուն շնորհվեց նաև իշխանաց իշխանի տիտղոսը: Այդ նշանակում է, որ խալիֆը երկրի կառավարումը հանձնում է հայերին: Աշոտին հանձնվեց նաև հարկահանության իրավունքը: Արաբ հարկահանները այլևս Հայաստան չեին մտնում: Արաբական իշխանությունը Հայաստանում դարձել էր ձևական:

Իշխանաց իշխան Աշոտ Բագրատունին իր գերիշխանությունը տարածեց Արծրունի, Սյունի, Արցախի, Ուտիքի և մյուս նշանավոր հայ իշխանների վրա: Նրա գերադասությունը ճանաչեցին նաև վրաց և աղվանից իշխանները, ինչպես նաև Մանազկերտի, Դվինի, Բերկրիի և այլ ամիրայությունները: Յայոց 40 հազարամոց բանակի սպարապետ նշանակվեց իշխանաց իշխանի եղբայր Արասը:

Աշոտ Բագրատունին բարեկամական կապեր հաստատեց Բյուզանդիայի հետ, մանավանդ, որ այնտեղ թագավորում էր ծագումով հայ (հայազգի) Բարսեղ (Վասիլ) I-ը: Նա հմտորեն օգտագործեց արաբա-բյուզանդական հակամարտությունները Յայաստանի անկախության վերականգնման ճանապարհին: Իր հերթին, Բյուզանդիան ամեն կերպ աջակցում էր խալիֆայության կենտրոնախույս ուժերին:

Անկախ պետականության վերականգնումը դարձավ օրակարգի հարց: Յայոց կաթողիկոսի և հայ իշխանների նախաձեռնությամբ ժողով է գումարվում, ուր որոշվում է իշխանաց իշխան Աշոտին ճանաչել թագավոր և հարց հարուցել արաբական խալիֆաթի առաջ հաստատելու և օրինականացնելու նրա թագավորությունը: Արաբական խալիֆը ավելի քան 10 տարի ձգձգեց հայերի պահանջի կատարումը, բայց, ի վերջո, 885 թ. Աշոտին ուղարկեց արքայական թագ ու հանդերձանք ճանաչելով նրան հայոց թագավոր: Շուտով Յայաստանի անկախությունը ճանաչում է նաև Բյուզանդիան: Այդ նշանակում է, որ Յայաստանի անկախությունը միջազգային ճանաչում էր ստացել:

Յայաստանում հիմք դրվեց Բագրատունյաց հարստությանը (885-1045): Աքոռանիստ Բագրատն քաղաքում (Շիրակ) Աշոտ I Մեծը (885-890) հանդիսավոր օծվեց հայոց թագավոր: Ըստ պատմակայր Մ. Խորենացու, Բագրատունիները, ունենալով իրեական ծագում, ժամանակի ընթացքում հայացել էին: Յայտնի է նաև, որ հայ Բագրատունիների տոհմից էր սերում վրաց Բագրատունյաց արքայատոհմը (IX-XIX դդ.):

Այսպիսով, շուրջ 450-ամյա ընդմիջումից հետո, հայ ժողովրդի մղած դարավոր ազատագրական պայքարի շնորհիվ, վերականգնվեց հայկական անկախ պետականությունը: Դա պատմական խոշոր նշանակություն ունեցող երևույթ էր հայ ժողովրդի կյանքում, որը մեծապես նպաստեց Յայաստանի տնտեսական, քաղաքական և մշակութային կյանքի հետագա զարգացմանը:

Աշոտ I-ը օժտված էր հմուտ պետական գործչի, դիվանագետի և

գորավարի ունակություններով: Նա վերականգնեց Արշակունիների ժամանակ գոյություն ունեցող գործակալությունների համակարգը, ամրապնդեց երկրի պաշտպանությունը, բարիդրացիական հարաբերություններ հաստատեց հարևան երկրների հետ, Հայաստանի հյուսիսային շրջանները մաքրեց կովկասյան լեռնականներից:

Աշոտ I-ին հաջողվեց միավորել հայկական հողերի մեծագույն մասը և հիմնել միասնական թագավորություն: Հայոց թագավորության մեջ միավորվեցին ոչ միայն Վասպուրականի, Գուգարքի, Սյունիքի, Արցախի հայկական իշխանությունները, այլ նաև Հայաստանի հարավում առաջացած արաբական ամիրայությունները: Երկրի ներսում հաստատվեց կարգուկանոն: Ժամանակակից պատմագիր Յովհաննես Դրասխանակերտցին բարձր գնահատական է տվել Աշոտ I-ի ծավալած հայրենաշեն գործունեությանը:

## 2. Սմբատ I-ի և Աշոտ II-ի պայքարը Հայաստանի անկախության ամրապնդման համար

**Սմբատ I-ի ներփակում և արտաքին քաղաքականությունը** Աշոտ I-ի մահից հետո գահ բարձրացավ նրա որդի Սմբատ I-ը (890-914 թթ.), որն իր հոր նման խոշոր պետական գործիչ էր: Նա շարունակեց հոր վարած ներքին ու արտաքին խաղաղասիրական քաղաքականությունը: Սմբատ I-ի օրոք հայկական պետականության սահմաններն ավելի ընդարձակվեցին: Գրեթե ամբողջ Մեծ Հայքը, չհաշված բյուզանդական կայսրության մեջ մտնող Հայաստանի արևմտյան մի քանի շրջաններ, մտավ Բագրատունյաց միասնական թագավորության մեջ: Բարեկամական հարաբերություններ հաստատվեցին Բյուզանդական կայսրության, Վրաստանի և Աղվանքի հետ:

Հայաստանի հարաբերությունները համեմատաբար վատ էին Արաբական խալիֆաթի ու սրա կամակատար Ատրպատականի ամիրայության հետ: Նրանց դուր չէր գալիս Հայաստանի հզորացումը և պատեհ առիթը բաց չէին թողնում հարձակվելու և քաղաքականապես մասնատելու երկիրը: Դրան հասնելու համար նրանք օգտագործում էին հայ իշխանական տների կենտրոնախույս ծգտումները:

Ինչ խոսք, ավատատիրական հարաբերությունների հետագա խո-

րացումը, առանձին հայ Փեոդալ իշխանների տնտեսական, քաղաքական ու ռազմական հետագա հզորացումը, բնականաբար, առաջ էին բերում կենտրոնական թագավորությունից անջատվելու և ինքնուրույն թագավորության վերածվելու կենտրոնախույս ձգտումներ:

890-ական թվականներից սկսվեցին ընդհարումները Հայաստանի և Ատրպատականի Սաջյան ամիրայության միջև: 894 թ. Ատրպատականի էմիր Ավշինը ներխուժեց Հայաստան, գրավեց Նախճավանը և ապա՝ ուժեղ երկրաշարժից նոր ավերված Դվինը: Վճռական ճակատամարտը տեղի ունեցավ Արագածոտն գավառի Դողս գյուղի մոտ (Վաղարշապատից ոչ հեռու): Թեև այստեղ հայերը հաղթեցին, սակայն պայքարի արդյունքով չկարողացան արաբներին դուրս քշել Հայաստանից: Դրանից հետո էլ Ատրպատականի ամիրայությունը շարունակեց ռազմաքաղաքական միջամտությունը Հայաստանի ներքին գործերին՝ պահանջելով ճանաչել իր գերակայությունը և վճարել հարկ:

Արդեն X դարի սկզբին Ատրպատականի նոր էմիր Յուսուֆը փոխեց Հայաստանի դեմ պայքարի գործելակերպը: Նա ուղղակի դիմեց հայ իշխանական տների միջև երկպառակություններ իրակրելու մեթոդին: Իսկ հայ իշխանական տների միջև երկպառակությունների համար պատճառներ և առիթներ մշտապես առկա էին: Այս ճանապարհով Յուսուֆին հաջողվեց պառակտում առաջացնել հայ իշխանական տների միջև և քաղաքականապես մասնատել երկիրը: Հայաստանի միացյալ թագավորության առաջին մասնատողները եղան Վասպուրականի Արծրունյաց իշխանները: 908 թ. Գագիկ Արծրունի իշխանը Յուսուֆի օգնությամբ Վասպուրականը անջատեց Բագրատունիների միասնական թագավորությունից և հռչակեց առանձին թագավորություն: Այնուհետև, 909 թ. Յուսուֆը և Գագիկ Արծրունին միացյալ զորքերով հարձակվեցին Սմբատ թագավորի բանակի վրա: Սկսվեց Հայաստանի համար կրիվների ու ավերածությունների մի ծանր ժամանակաշրջան: Սմբատ արքայի բանակը պարտության մատնվեց: Սմբատը անձնատուր եղավ և 914 թ. մահապատժի ենթարկվեց: Նրան գլխատեցին և մարմինը խաչեցին Դվին քաղաքի դարպասներից մեկի առջև: Յետագայում Արծրունի իշխանները գիտակցեցին իրենց հանցանքը հայրենիքի հանդեպ, զղացին և արյունով քավեցին այն:

**Առու Ա-ը և արաբների վերջնական վտարումը** Այդ դեպքերից հետո Հայաստանը կրկին կանգնեց պետական ինքնուրույնությունը կորցմելու վտանգի առաջ: Զափազանց ժանր էր Երկրի վիճակը: Այդ օրիհասական պահին հայ ժողովուրդը ոտքի ելավ իր հայրենիքն ու պետականությունը պաշտպանելու համար: Նա հասկացավ, որ փրկությունը միասնության մեջ է: Այդ պայքարը կազմակերպեց ու գլխավորեց թագաժառանգ Աշոտը Աշոտ Ա-ը (Երկար) (914-928 թթ.):

Աշոտ Երկարը Սևանա լճի ափին և հայոց գորավար Գևորգ Մարգարականին գեղի ամրոցի մոտ (Խոսրովի անտառում) կարողացան պարտության մատնել և Երկրից վերջնականապես վտարել արաբներին: Այս դեպքերը գեղարվեստորեն նկարագրված են Մուրացանի «Գևորգ Մարգարականի» պատմավեպում:

Հաղթական կրիվներից հետո Հայաստանը ձեռք բերեց լիակատար անկախություն: 922 թ. Բաղդադի խալիֆը Աշոտ Ա-ին ճանաչեց «շահնշահ»: Աշոտ Ա-ը իր ցուցաբերած վճռականության և քաջագործությունների համար ստացավ «Երկար» մականունը: Ազատագրական կրիվների ժամանակ ստացած վերքերից հետագայում 928 թ., Աշոտ Երկարը մահացավ:

Այսպիսով, հայ ժողովրդի պայքարը ավարտվեց հայերի հաղթանակով: Պահպանվեց ու ամրապնդվեց Երկրի անկախությունը:

### 3. Բագրագունյաց լթագավորության վերելքը (X դարի 30-ական լթթ.-XI դարի սկիզբ)

**Հայաստանը Աբասի և Առու Ա-ի օրուն** Աշոտ Երկարի օրոք, արաբների դեմ տարած հաղթանակից և Հայաստանի անկախության վերականգնումից հետո, Հայաստանը թևակոխեց տևական խաղաղության և բարգավաճման ժամանակաշրջան:

Աշոտի նահից հնտո գահ բարձրացավ նրա Եղբայր, Կարսի կառավարիչ Աբասը (928-953 թթ.): Նա Բագրատունիների մայրաքաղաք Դարձրեց Կարսը, որը կարծ ժամանակամիջոցում կառուցապատվեց ու դարձավ ճանաչված քաղաք: Այստեղ տեղափոխվեց նաև կաթողիկոսական աթոռը:

Հ դարի Երկրորդ կեսին պետականության կենտրոնացման ու ամրապնդման ուղղությամբ վճռական քայլերի դիմեց Աշոտ III-ը (Աշոտ Ողորմած) (953-977 թթ.): Նա հզորացրեց բանակը, ամրապնդեց Երկրի անվտանգությունը և ծավալեց շինարարական լայն գործունեություն:

Աշոտ III-ի օրոք տեղի ունեցած ամենակարևոր իրադարձությունը նոր համահայկական մայրաքաղաքի հիմնումն էր: 961 թ. նա արքունիքը Կարսից տեղափոխեց Անի քաղաքը և այն հռչակեց Յայաստանի մայրաքաղաք: Կարծ ժամանակամիջոցում ընդարձակվեց ու կառուցապատվեց նոր մայրաքաղաքը և դարձավ հռչակավոր քաղաք ոչ միայն Յայաստանում, այլև ամբողջ Առաջավոր Ասիայում: Աշոտ III-ը միջոցներ չեր խնայում եկեղեցիներ, դպրոցներ, հիվանդանոցներ ու պատսպարաններ կառուցելու համար: Եռանդուն կառուցող էր նաև Խոսրովանույշ թագուհին: Նրա նախաձեռնությամբ Լոռիում հիմնվեցին Սանահինի և Յաղպատի նշանավոր վանքերը:

Յայաստանի շինարարական, տնտեսական ու մշակութային վերելքը շարունակվեց Աշոտ III-ի հաջորդ Սմբատ II-ի օրոք (977-990): Չնայած Յայաստանի առանձին մասնատումներին, զգացվում էր Արշակունիների ժամանակվա՝ համահայկական միասնական թագավորությունը վերականգնելու միտումը:

## **Թագավորության հզորացումը Գագիկ I-ի օրոք**

Բագրատունյաց Յայաստանն իր քաղաքական և տնտեսական հզորության գագաթնակետին հասավ Գագիկ I-ի օրոք (990-1020): Գագիկ I-ը վերակառուցեց Երկրի ռազմական ուժերը: Զորքի թիվը հասցվեց 100 հազարի: Բանակի ղեկավարությունը հանձնվեց տաղանդավոր զորավար Վահրամ Պահլավունուն: Նա խստությամբ ճնշում էր անհնազանդ իշխաններին:

Յայաստանին սպառնացող արտաքին վտանգի դեպքում հայկական մանր թագավորությունները անմիջապես համախմբվում էին Անիի Բագրատունիների թագավորության շուրջ՝ ճանաչելով նրա ավագությունը: Գագիկ I-ի գահակալության երեսնամյա շրջանում, փաստորեն, հայկական բոլոր տարածքները միավորվել էին Բագրատունիների կենտրոնական թագավորության ենթակայության ներքո ստեղծելով թագավորությունների դաշնություն:

Գագիկ արքայի օրոք ավելի բարգավաճեց Յայաստանը: Ծաղկում էր հատկապես Անի մայրաքաղաքը. կառուցվեցին Անիի Կաթո-

ղիկե մեծաշուք Եկեղեցին՝ հայտնի ճարտարապետ Տրդատի նախագծով, և այլ տաճարներ ու պալատներ:

Այսպիսով, X դարի երկրորդ կեսին և XI դարի սկզբին Բագրատունյաց Հայաստանը ապրեց հզորացման, տնտեսական և մշակութային վերելքի ժամանակաշրջան: Սակայն ավատական հարաբերությունների հետագա զարգացումը հանգեցրեց երկրի քաղաքական մասնատման:

#### **4. Բագրագունյաց թագավորության մասնագումը և անկումը**

**Թագավորության Տրուհումը** Հայաստանի քաղաքական մասնատումը, որը սկսվել էր 908 թվականին Կասպուրականի անջատումով, շարունակվեց ամբողջ X դարի ընթացքում: Դրան նպաստում էին ինչպես ներսից առանձին հայ իշխանական տների կենտրոնախույս (անջատողական) ձգտումները, այնպես էլ դրսից՝ Արաբական խալիֆայության և հատկապես Բյուզանդական կայսրության պառակտիչ և նվաճողական քաղաքականությունը: Չնայած Բագրատունյաց գահակալների թափած ջանքերին, վերջին հաշվով, չհաջողվեց ստեղծել տևական ու կայուն կենտրոնացված պետություն: Երկիրը տրոհվեց մի քանի մանր ենթակա թագավորությունների, որոնցից ամենազորեղը Կասպուրականի Արծրունյաց թագավորությունն էր (908-1021): 963 թ. առաջացավ Կարսի կամ Վանանդի թագավորությունը, 978 թ. Գուգարքի (Լոռու) կամ Կյուրիկյան թագավորությունը, իսկ 987 թ. Սյունիքի կամ Կապանի թագավորությունը:

**Բյուզանդիայի նվաճողական Հայաստանի մասնատվածությունը բաղաբար բացասաբար էր անդրադառնում երկ-**

**Հայաստանի նկատմամբ** րի ռազմաքաղաքական հզորության վրա: 1020 թ., Գագիկ I-ի մահից հետո, պառակտումն ավելի խորացավ: Այդ հանգամանքից օգտվեց հզոր Բյուզանդական կայսրությունը: Հայաստանը կանգնեց բյուզանդական ներխուժման ահեղ սպառնալիքի առջև:

1000 թ., Դավիթ Կյուրոպաղատի կտակով, բյուզանդական Վասիլ

II կայսրը զավթեց Տայքը: Ավելի վաղ կայսրությանն էր միացվել Տարոնի իշխանությունը (966 թ.): Շուտով Բյուզանդիայի զոհը դարձավ Վասպուրականը: Հայ առանձին թագավորներ, տարբեր հանգամանքների թելադրանքով, դիմում էին, փաստորեն, հայրենիքի վաճառքին: Վասիլ II կայսեր ճնշմամբ Վասպուրականի Սենեքերիմ թագավորը 1021 թ. երկիրը կտակեց Բյուզանդիային՝ դրա փոխարեն ստանալով Սեբաստիա քաղաքն իր շրջակայքով: Արծրունիների նման քայլի գլխավոր դրդապատճառն այն էր, որ XI դարասկզբից արդեն սկսվել էին արաբական բանակներում ծառայող վարձկան սելջուկ-թուրքերի հաճախացող հարձակումները Վասպուրականի վրա՝ Պարսկաստանի և Ատրպատականի կողմերից: Եվ ահա այդ ճանապարհով 1021 թ. ծաղկուն ու բարգավաճ Վասպուրականը կցվեց կայսրությանը: Դրանից հետո Արծրունիների թագավորությունը դադարեց գոյություն ունենալուց:

Ներթը հասավ Անիի Բագրատունյաց թագավորությանը, որը Գագիկ I-ի մահից հետո բաժանվել էր իր երկու որդիների՝ Յովհաննես-Սմբատի (1021-1041 թթ.) և Աշոտի միջև՝ առաջ բերելով երկիշխանություն: Ընդ որում, Անի մայրաքաղաքը Շիրակ գավառով հանձնվեց Յովհաննես-Սմբատին, իսկ թագավորության ծայրագավառները՝ Աշոտին (Աշոտ IV-ին) (1022-1041 թթ.): Բայց, շատ չանցած, բյուզանդական կայսրը պահանջեց իրեն հանձնել Անիի թագավորությունը: Թուլակամ ու մորթապաշտ Յովհաննես-Սմբատը, կաթողիկոս Պետրոս Գետադարձի ճնշման տակ, Անին կտակում է Բյուզանդիային:

Անիի թագավորությունը Բյուզանդիային կտակելու խնդրում հայ հասարակայնության մեջ առաջացավ եղուր խմբավորում: Դրանցից մեկը, սպարապետ Վահրամ Պահլավունու գլխավորությամբ, դեմ էր «կտակի» կատարմանը, իսկ մյուսը, որն ավելի փոքրաթիվ էր և գլխավորում էին թագավորի խնամակալ իշխան Վեստ Սարգիսը և կաթողիկոս Պետրոս Գետադարձը, ուներ բյուզանդական կողմնորոշում:

**Բագրատունյաց թագավորության տունի կտակելու մահացան անդրում** 1041 թ., երբ իրար հետևից մահացան Բագրատագավորության տունի երկու թագավորները՝ Գագիկ I-ի երկու որդիները՝ Աշոտը և Յովհաննես-Սմբատը, բյուզանդական կայսրը գործ ուղարկեց, համաձայն Յովհաննես-Սմբատի կտակի, Անիին տիրանալու: Սակայն անեցիները, մեծ հայրենասեր, սպարապետ Վահրամ Պահլավունու գլխավորությամբ, հերոսաբար պաշտպանեցին մայրաքաղաքը: 1042 թ. թա-

գավոր է հոչակվում Աշոտի 16-ամյա որդի Գագիկ II-ը (1042-1045): Կայսերական զորքերը մի քանի անգամ ևս գրոհեցին, սակայն, ամեն անգամ հանդիպելով հայերի համառ դիմադրությանը, Անիի պարիսպների տակ ջախջախվեցին և նահանջեցին: Դրանից հետո Բյուզանդիայի Կոնստանդին Մոնոմախ կայսրը դիմում է նենգ միջոցի: Նա հաշտություն կնքելու պատրվակով Գագիկ II-ին հրি�սվիրում է Կ. Պոլիս, կալանավորում և այլևս թույլ չի տալիս հայրենիք վերադառնալ: Քաղաքում իրենց քայլայիշ գործունեությունն են ծավալում բյուզանդամետ Վեստ Սարգիսը և Պետրոս Գետադարձ կաթողիկոսը: Ի վերջո, քաղաքի պաշտպանները հուսահատվեցին, և 1045 թ. բյուզանդական զորքը տիրեց Անիին:

Այսպիսով, 1045 թ. անկում ապրեց Բագրատունյաց համահայկական թագավորությունը, և Հայաստանի մեծագույն մասը միացվեց Բյուզանդական կայսրությանը: Ինչ վերաբերում է Կարսի, Գուգարքի և Սյունիքի թագավորություններին, ապա սրանք, միառժամանակ իրենց ինքնուրույնությունը պահպանելուց հետո, նույնպես կուլ գնացին օտար նվաճողներին:

Բյուզանդիայի վարած անհեռատես քաղաքականության հետևանքով կազմալուծվեցին հայ զինական ուժերը, իրենց հայրենիքից բռնագաղթեցվեցին հայ տարրերը, այդ թվում իշխանական ընտանիքներ, մի հանգամանք, որը հեշտ ճանապարհ բացեց սելջուկ-թուրքերի հետագա արշավանքների համար:

## 5. Հայաստանի սոցիալ-քննիչների կյանքը և պետական կարգը IX-XI դարերում

**Գյուղատնտեսությունը** Հայաստանի անկախ պետականության վերականգնումը նպաստեց երկրի տնտեսական կյանքի առաջընթացին: Ավատատիրական հարաբերությունները հետագա խորացում ապրեցին: Զևավորվեցին հայ աշխարհիկ և հոգևոր ավատատեր Խողատերերի բավական զորեղ սոցիալական շերտեր, որոնք ժառանգման, նվիրատվության, օպերատուրայի և այլ ճանապարհներով տեր դարան մեծ թվով գյուղերի ու կալվածքների, իսկ դրանցում հաստատված գյուղացիներն ընկան կախման մեջ: Խոշոր կալվածատեր էր Շահ Եկեղեցին: Օրինակ, XI դարում, Պետրոս Գետադարձ հայրապետի օրոք, կաթողիկոսարանն ուներ 500 գյուղ:

Նշված ժամանակաշրջանում մեծ չափով առաջադիմեց Հայաստանի գյուղատնտեսությունը: Երկրի տնտեսության հիմնական ճյուղերն էին երկրագործությունը և անասնապահությունը:

Հնուց ի վեր Հայկական լեռնաշխարհը համարվել է երկրագործական զարգացած երկիր: Հողագործության համար առանձնապես նպաստավոր էին Արարատյան դաշտը, Տարոնի, Բագրևանդի, Կարինի և Բասենի արգավանդ դաշտերը, Վանանդի և Շիրակի գավառները, Վանա լճի ավազանը: Բագրատունիների օրոք զգալիորեն առաջադիմեց երկրագործական տեխնիկան: Այդ շրջանում սկսեցին լայն տարածում ստանալ երկաթե խոփով գութանը, իողի՝ գոմաղբով պարարտացումը: Անցկացվեցին նոր ջրանցքներ, ընդարձակվեցին մշակելի ցանքատարածությունները: Սկսեց արմատավորվել հողամշակության եռադաշտային համակարգը: Սա հողամշակության մի այնպիսի եղանակ էր, երբ վարելահողը բաժանվում էր երեք հատվածի՝ մեկը թողնվում էր ցել (առանց ցանքի), երկրորդում կատարվում էր աշնանացան, իսկ երրորդում՝ գարնանացան, և ամեն տարի հաջորդաբար ցանքաշրջանառությունը փոփոխվում էր:

Հացամշակության և խաղողագործության ավանդական կուլտուրաներից զատ, զարգացում ապրեցին նաև պտղաբուծությունը, բանջարաբուծությունը, շերամապահությունը և այլն:

Հայաստանի գյուղատնտեսության մյուս կարևոր ճյուղը անասնապահությունն էր: Հայոց լեռների ալպիական մարգագետինները միշտ էլ նպաստավոր պայմաններ են ստեղծել անասնապահության զարգացման հանար: Առանձնապես ընդարձակ արոտավայրեր կային Բյուրակնի (Բինգյոլ) լեռներում, Արագածի լանջերին, Սյունիքում, Սևանի ավագանում, Սասունում և այլուր:

Պահվում էին մեծ քանակությամբ խոշոր և ճանր եղջերավոր անասուններ: Ժամանակակից պատմիչը վկայում է, որ Բագրատունի թագավորների օրոք երկրում կային տավարի հսկայական նախիրներ, ոչխարի հոտեր և ձիերի երամակներ: Անասունը, ըստ տեսակի, տնտեսության մեջ օգտագործվում էր և որպես սննդամթերք (միս, կաթ և այլն), և որպես արհեստագործական հումք (բուրդ, կաշի և այլն), և որպես բանող ուժ ու փոխադրամիջոց:

## Արհեստները և առևտուրը

IX-XI դարերում զարգացում ապրեցին նաև արհեստագործությունն ու առևտուրը: Մի կողմից երկրագործական ու անասնապահական հումքը (բուրդ, կաշի և այլն),

կաթ, բամբակ, վուշի թել, մետաքս, կաշի, մորթի և այլն), իսկ մյուս կողմից Հայաստանի ընդերքի հարուստ օգտակար հանածոները (պղինձ, երկաթ, կապար, ոսկի, արծաթ, քար, կավ և այլն) նպաստում էին արհեստագործական շատ ճյուղերի զարգացմանը: Այս շրջանում արհեստագործությունն այնքան առաջադիմեց, որ անջատվեց գյուղատնտեսությունից և, կենտրոնանալով քաղաքներում, դարձավ մարդկանց ինքնուրույն ու մասնագիտացված զբաղմունք:

Հայաստանում հաշվվում էին մի քանի տասնյակի հասնող արհեստներ, որոնցից առանձնապես տարածված էին մետաղագործությունը, դարբնությունը, զինագործությունը, պղնձագործությունը, քարագործությունը, կաշեգործությունը, մանածագործությունը, փայտագործությունը, կավագործությունը, ներկերի արտադրությունը, գորգագործությունը, ոսկերչությունը և այլն:

Տարբեր քաղաքներ ու բնակավայրեր մասնագիտանում էին առանձին արհեստատեսակների մեջ: Մետաղամշակման կենտրոններ էին Աճին, Դվինը, Վանը և այլն: Գործվածքների ու գորգերի արտադրության կենտրոններ էին Դվինը, Կարինը, Երզնկան: Բրուտագործությամբ հայտնի էին Դվինը, Աճին և այլն: Կատարելագործվում է արհեստագործական տեխնիկան: Հանդես են գալիս միևնույն արհեստով զբաղվողների եղբայրություններ (համքարություններ):

Գյուղատնտեսության և արհեստագործության վերելքը, բնականաբար, նպաստում էր արտաքին և ներքին առևտության ծավալմանը: Իր հերթին, արհեստների և առևտության աշխուժացումը նպաստում էր միջնադարյան քաղաքների և քաղաքային կյանքի զարգացմանը: Քաղաքային և գյուղական բնակչության միջև տեղի էր ունենում աշխույժ ապրանքափոխանակություն: Երկրի ներսում կային մեծ թվով շոջիկ առևտության մասնագիտություններ, մանրավաճառներ: Զարգացած էր քարավանային առևտուրը:

Հայաստանում արտադրված ապրանքները հանվում էին նաև արտաքին շուկա: Երկիրը կարևոր դեր էր կատարում նաև միջազգային (տարանցիկ) առևտուրում: Հայաստանով էին անցնում Արևելքը և Արևմուտքը, Հյուսիսը և Հարավը իրար հետ կապող առևտության մայրուղիները: Հայաստանի միջով անցնող միջազգային առևտությունները: Հայաստանի միջով անցնող միջազգային առևտությունները: Հայաստանի մայրուղին ձգվում էր Իրանից, Արաքս գետի հովտով, դեպի Նախճավան, Դվին, Աճին, Կարս, այնուհետև Կարին (այժմ՝ Երզնկա), Արծն, Երզնկա քաղաքներով դեպի Տրապիզոն և ծով:

**Քաղաքները** Այս ամենի հետևանքով Խ-ԽI դարերում Հայաստա-

նում բուռն զարգացում ապրեցին քաղաքները: X դարում Հայաստանում կար մոտ 40 մեծ ու փոքր քաղաք: Հայաստանի ամենանշանավոր ու բարգավաճ քաղաքներն էին Աճին, Դվինը, Նախանցավանը, Կարսը, Արծնը, Վանը, Բերկրին, Մանազկերտը, Կարինը և այլն: X-XI դդ. Հայաստանի ամենախոշոր քաղաքը Անին էր: Նրա բնակչության թիվը հասնում էր 100 հազարի: Քարավանային առևտուի և արհեստագործության խոշոր կենտրոն էր Դվինը, որի բնակչության թիվը հասնում էր 50 հազարի: 893 թ. Դվինը Ենթարկվեց ավերիչ Երկրաշարժի: Շատ քաղաքներ բարեկարգ էին, ունեին միջնաբերդ, կանոնավոր փողոցներ, հրապարակներ, շուկա, հյուրանոցներ, իջևանատներ, ջրմուղ, բաղնիք և այլն: Քաղաքային բնակչությունը կազմված էր հիմնականում արհեստավորներից ու առևտրականներից: Քաղաքները կարևոր դեր էին կատարում Երկրի ոչ միայն տնտեսական, այլև հասարակական-քաղաքական և մշակութային կյանքում:

**Պետական կարգը** Փոփոխություններ ու տեղաշարժեր կատարվեցին Բագրատունյաց Հայաստանի սոցիալ-քաղաքական կյանքում: Այդ տեղաշարժերը հիմնականում պայմանավորված էին ավատական հարաբերությունների հետագա խորացմամբ:

Պետության գլուխ կանգնած էր թագավորը, որը կոչվում էր «արքայից արքա» (շահնշահ): Անիուն նստած Բագրատունի թագավորին էին ենթարկվում նաև Հայաստանի մյուս թագավորությունները և իշխանությունները:

Թագավորը պետությունը կառավարում էր գործակալությունների միջոցով: Գործակալություններից կարևոր էին հատկապես իշխանաց իշխանի, հայոց սպարապետի և մարզպանի պաշտոնները: Իշխանաց իշխանի պաշտոնը, որը նման էր նախկինում հազարապետության պաշտոնին, վարում էին առքայի հարազատները, իսկ X դարի Երկրորդ կեսից՝ Պահլավունի իշխանական տունը: Իշխանաց իշխանը կարգավորում էր ավատատերերի միջև ծագած վեճերը: Նրան էին Ենթարկվում պետական բոլոր պաշտոնյաները: Հայոց սպարապետը համարվում էր Երկրի բոլոր ռազմական ուժերի հրամանատարը: Այս պաշտոնը դարձյալ վարում էր Պահլավունիների իշխանական տունը: Մարզպանության գործակալությունը վարում էր Երկրի արտաքին հարաբերությունները: Այն X դարի սկզբին գլխավորում էին Արծրու-

Աիները: Գլխավոր դատավորի իրավունքը դարձյալ պատկանում էր Հայոց կաթողիկոսին: Արքունի կալվածքները կառավարում էր հոգաբարձուն: Նա միաժամանակ թագավորի խորհրդատուն էր: Բագրատունիները մեծ նշանակություն էին տալիս բանակին, որի թիվը հասնուն էր 80-100 հազարի: Բանակը կազմված էր հեծելազորից և հետևակից:

Դասային կազմի տեսակետից հասարակությունը բաժանված էր վերին՝ իշխանների, բարձր հոգևորականության, մանր ազնվականության խավերի: Սրանք համարվում էին արտոնյալ և հարկեր չեն մուծում: Իշխանական տոհմի ամենաազդեցիկ իշխանը կոչվում էր «գահերեց»: Հասարակության մյուս սոցիալական շերտը կազմուն էին ստորին՝ աշխատավորական խավերը, որոնք բաղկացած էին շինականներից (գյուղացիներ), արհեստավորներից, մանր առևտրականներից և այլն:

Հայաստանում գյուղացիությունը հիմնականում ընդգրկված էր գյուղական համայնքներում, իսկ արհեստավորները՝ համքարություններում: Հասարակության ստորին շերտերը ենթարկվում էին շահագործման: Նրանք վճարում էին հարկեր և տուրքեր, կատարում զանազան պարտավորություններ: Գլխավոր հարկերն էին հողահարկը, անասնահարկը: Եկեղեցուն վճարվում էր տասանորդ և այլն:

## Գլուխ յոթերորդ

# ԱՌԱՋԱՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ VII-XI ԴԱՐԵՐՈՒՄ

## 1. Պավլիկյան շարժումը Հայաստանում VII-IX դարերում

**Շարժման սկզբնավորումը** Միջին դարերում հայ ժողովրդի ազատագրական պայքարը օտարերկրյա տիրապետության և տնտեսական կեղեքողների դեմ դրսեորվել է նաև հակակրոնական՝ աղանդավորական պայքարի ձևով: Աղանդավոր էին անվանում այն մարդկանց, ովքեր շեղվում էին եկեղեցու պաշտոնապես ընդունված դավանանքից:

Յայ հասարակական կյանքում հայտնի են մի շարք աղանդավորական շարժումներ՝ անապատականների, բորբորիտների, մծղնեական և այլն: Բայց եղածներից ամենահուժկուն ու ամենատևականը Պավլիկյան կոչվող շարժումն էր: Այն առաջացել է VII դարի կեսերին Յայաստանի բյուզանդական նասում Արևմտյան Յայաստանում, և իր անվանումը (Պավլիկյան) ստացել Պողոս Առաքյալի անունից: Շարժման կարևոր օջախներից էր Մանանաղի գավառը: Պավլիկյանները հիմնում էին իրենց համայնքները, ուր հավաքվում էին դժգոհ և աղքատ մարդիկ: Շարժման նշանավոր ղեկավարներից էին Կոստանդինը, Գենեսիոսը, Կարբեասը, Խրիստիփոր և ուրիշներ: Սրանք ունեին իրենց գինված ջոկատները:

**Գաղափարախոսությունը** Պավլիկյանները կարծում էին, որ աշխարհում իշխում են երկու բարի և չար աստվածներ, ընդ որում, հավատում էին, որ բարի աստվածը երկնքում է,

իսկ չարը սատանան, երկոի վրա: Չար աստվածն է բոլոր անարդարություններն ու չարիքները նյութողը, իսկ դրանք իրագործողներն են հարուստները, եկեղեցին, հոգևորականությունը: Ուստի պետք է պայքարել դրանց դեմ և վերահաստատել բարի աստծո արդարությունը և հավասարությունը: Նրանք բոլոր մարդկանց հավասար էին համարում Աստծո առաջ: Պավլիկյանները ժխտում էին եկեղեցու և հոգևորականության դերը՝ դրանք որակելով որպես ժողովրդի հարստահարման և հարստության կուտակման մի ձև: Նրանք մերժում էին եկեղեցական շատ ծեսեր՝ մկրտությունը, հաղորդությունը, պատարագը և այլն:

Պավլիկյանները հայ եկեղեցականների նման ընդունում էին Քրիստոսի միայն աստվածային հատկությունը (բնույթը), այսինքն միաբնակ (մոնոֆոզիտ) էին, չեն ընդունում, որ Քրիստոսը ծնվել է Մարդիամ Աստվածածնից, այսինքն՝ ժխտում էին նրա մարդեղությունը: Այստեղից էլ նրանք մերժում էին խաչի երկրպագությունը, եկեղեցական այլ ծեսեր: Դրանով նրանք դեմ էին գնում հատկապես բյուզանդական քաղկեդոնական եկեղեցուն: Այդ նշանակում էր, որ պավլիկյանները պայքարում էին բյուզանդական տիրապետության դեմ, և կրոնական այդ շարժումը ստանում է ժողովրդապատագրական բնույթ: Իր հերթին, Արաբական խալիֆաթը փորձեց այդ շարժումը ծառայեցնել իր շահերին:

**Շարժման վերելքը և առաջնորդության ստացավ VII հայության մեջ** Պավլիկյան շարժումը լայն տարածում ստացավ VII հայության մեջ: Այն ընդգրկեց նաև Արևելյան Հայաստանը: Հայաստանում դրա դեմ պայքարը գլխավորեց հայոց կաթողիկոս Հովհան Օծնեցին, որը 719 թ. Դվինում հրավիրված եկեղեցական ժողովում պավլիկյան աղանդավորների դեմ պայքարի խիստ կանոններ ընդունել տվեց: Ըստ այդ կանոնների, արգելվում էր պավլիկյաններին օթևան տալ, խոսել և ճանապարհ գնալ նրանց հետ, քանզի նրանք համարվում էին սատանայի որդիներ: Միաժամանակ, նա գոեց առանձին աշխատություն՝ ուղղված պավլիկյանների ուսմունքի ու գործունեության դեմ:

Պավլիկյան շարժումը լայն տարածում ստացավ Բյուզանդական կայսրության արևելյան նահանգներում: Հալածանքներից փախչելով՝ պավլիկյանները տեղափոխվում ու հաստատվում են նաև Արևելյան Հայաստանում: Հայերից բացի, այդ շարժմանը մասնակցեցին մեծ թվով հույներ, ասորիներ, հրեաներ, սլավոններ և այլն: Հարկ է

նկատել, որ քաղաքական նկատառումներով արաբական իշխանությունները պավլիկյաններին չեն հալածում: Քանի որ գոյություն ուներ արաբա-բյուզանդական մշտական հակամարտություն, արաբները ձգտում էին պավլիկյանների ուժերն օգտագործել Բյուզանդիայի դեմ մղվող պայքարում:

Պավլիկյանների կենտրոնն էր Եփրատ գետի միջին հոսանքում հիմնված Տնրիկ անունով ռազմական բնակավայրը: Պավլիկյան աղանդավորները իրենց զինյալ ջոկատներով շուրջ երկու դար լարված վիճակում պահեցին Բյուզանդական կայսրությունը: Պավլիկյաններին հալածելու գործում իր դաժանությամբ աչքի ընկավ հատկապես կայսրուիկ Թեոդորան: Շարժումը վերջնականապես ճնշվեց մակեդոնա-հայկական արքայատոհմի (դինաստիայի) հիմնադիր Բարսեղ (Վասիլ) I (867-886) կայսեր օրոք:

872 թ. բյուզանդական մեծարիկ կանոնավոր գործերը պարտության մատնեցին պավլիկյաններին՝ գրավեցին նրանց նայրաքաղաք Տևրիկը և հիմնահատակ կործանեցին: Պավլիկյանների մնացորդներին բռնագաղթեցրին Բալկաններ (Թրակիա), որտեղից հետագայում նրանք իրենց գաղափարները սկսեցին՝ տարածել Եվրոպական երկրներում:

Պավլիկյան ազատագրական շարժումը խոր հետք է թողել Հայաստանում: Հետագայում՝ IX-XI դարերում, դրա ազդեցությամբ Հայաստանում առաջացավ Թոնդրակյան շարժումը:

## 2. Թոնդրակյան շարժումը Հայաստանում IX-XI դարերում

**Շարժման  
սկզբնավորումը և  
գաղափարախոսությունը**

Դեռ չեր մարել Պավլիկյան շարժումը, երբ IX դարի երկրորդ կեսին Հայաստանում առաջացավ աղանդավորական մի նոր շարժում, որն իր գլխավոր կենտրոնի՝ Վանա լճից հյուսիս գտնվող Թոնդրակ գյուղի անունով կոչվեց «Թոնդրակյան», իսկ շարժման մասնակիցները՝ «թոնդրակեցիներ»:

Թոնդրակյան շարժման առաջնորդն ու գաղափարախոսն էր Սմբատ Զարեհավանցին: Այս շարժումը շատ ընդհանրություններ ու նմանություններ ուներ Պավլիկյան շարժման հետ: Սրանք, պավլիկ-

յանների նման, տարբեր վայրերում հիմնել էին առանձին համայնքներ և գաղտնի ու բացահայտ տարածում էին իրենց գաղափարները:

Թոնդրակեցիները նույնպես ժխտում էին հոգու անմահությունն ու հանդերձյալ կյանքը, մերժում էին նաև եկեղեցու և հոգևորականության անհրաժեշտությունը: Այստեղից էլ՝ նրանք ավելորդ էին համարում եկեղեցական բոլոր ծիսակատարությունները, սկսած մկրտությունից և վերջացրած պատարագով: Թոնդրակյան աղանդը պնդում էր, որ մարդկանց և Աստծո միջև միջնորդներ պետք չեն, որ եկեղեցու սպասավորները պարզապես ժողովրդի հարստահարողներ են: Թոնդրակյանները քարոզում էին իրավահավասարություն և իրենց համայնքները կազմակերպում էին հավասարության և արդարության սկզբունքներով:

Աղանդավորական այս մտքերը շուտով լայն տարածում են գտնում և շատ համակիրներ ձեռք բերում: Այստեղից հասկանալի է դառնում, թե իայ եկեղեցին ու հոգևորականությունը ինչու էին այդքան թշնամաբար վերաբերվում այդ գաղափարները տարածողներին:

## **Շարժման ծավալումը և աճկումը**

X-XI դարերում Թոնդրակյան շարժումը ընդգրկեց Հայաստանի հարավային և հարավ-արևմտյան շատ գավառներ՝ Ապահովիքը, Մանանաղը, Դարանաղը, Հարքը, Խնուսը և այլն:

Այդ նույն ժամանակներում (X դար) Հայաստանի առանձին նահանգներում՝ Այրարատում և Սյունիքում, տեղի ունեցան գյուղացիական ընդվզումներ, որոնք ուղղված էին ավատատիրական հողատիրության դեմ: 915 թ. գյուղացիները հարձակվեցին խոշոր հողային տիրույթներ ունեցող Տաթևի վանքի վրա և մեծ ավերածություններ կատարեցին:

Թոնդրակյան շարժումը մեծ անհանգստություն առաջ բերեց իայ հոգևոր և աշխարհիկ տերերի շրջաններում: Շարժմանը հարեցին նույնիսկ առանձին հոգևորականներ: Սկսվեցին դաժան հալածանքներն ու հետապնդումները թոնդրակյան աղանդավորների նկատմամբ: Թոնդրակեցիների ճակատին դրոշնում (խարանում) էին աղվեսի պատկեր, որպեսզի նրանց տեսնողները հալածեն ու քշեն:

XI դարի կեսերին՝ Բագրատունյաց թագավորության անկումից հետո, անհանգստացած շարժման հետագա ծավալումից, գործին միջամտում է Բյուզանդական կայսրությունը: Կարճ ժամանակամիջոցում բյուզանդական գորքը, իայազգի նշանավոր հրամանատար ու

պետական գործիչ, իշխան Գրիգոր Մագիստրոս Պահլավունու գլխավորությամբ դաժանորեն ճնշեց շարժումը: Հիմնահատակ ավերվեցին ու իրկիզմական բնակավայրերը, այդ թվում՝ նրանց գլխավոր կենտրոն Թոնդրակ գյուղը: Աղանդավորների մի մասը ոչնչացվեց, իսկ մյուս մասն արտաքսվեց հայրենիքից:

Այսպիսով, վերջ տրվեց միջնադարյան Հայաստանի վերջին հզոր աղանդավորական շարժմանը: Աղանդավորական շարժումը հայոց պատմության ուշագրավ երևույթներից է և զգալի դեր է կատարել Երկրի հասարակական-քաղաքական ու հոգեւոր կյանքում:

Անկախ իր կրոնական գունավորումից և սոցիալական բովանդակությունից, շուրջ երկու դար տևած աղանդավորական այս շարժումը պառակտում առաջ բերեց հասարակության մեջ և թուլացրեց Բագրատունյաց թագավորության հիմքերը:

## Գլուխ ութերորդ

# ՀԱՅԱՍՏԱՆԸ ՍԵԼՋՈՒԿ-ԹՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՄՈՆՈԼՍԵՐԻ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՃՇՁԱՆՈՒՄ (XI-XV ԴԱՐԵՐ)

## 1. Հայաստանը սելջուկ-թուրքերի արշավանքների և փիրապետության շրջանում (XI-XIII դարեր)

**Սելջուկյան  
արշավանքները  
և Հայաստանի  
նվաճումը**

Բագրատունյաց թագավորության անկումից հետո Հայաստանի տարածքների մեծ մասն անցավ Բյուզանդական կայսրությանը: Սակայն բյուզանդական տիրապետությունը Հայաստանում երկար չտևեց՝ ընդամենը 20 տարի:

XI դ. առաջին կեսին սելջուկ-թուրքական քոչվոր ցեղերը (այդպես են կոչվել իրենց ցեղապետ Սելջուկի անունով), Միջին Ասիայում միավորվելով՝ ստեղծում են սելջուկների մեծ պետություն: Սելջուկները շուտով գրավում են Պարսկաստանը և արշավում Հայաստանի վրա: Անիի Բագրատունյաց թագավորության անկումից (1045 թ.) երեք տարի չեղ անցել, երբ 1047 և 1048 թվականներին սելջուկ-թուրքերը ներխուժեցին Հայաստան, ամենուրեք սփուրցին մահ ու ավերածություն և մեծ ավարով ու գերիներով վերադարձան Պարսկաստան: Սելջուկներն իրենց ավերիչ արշավանքները շարունակեցին նաև հետագայում՝ 1054 և 1064 թվականներին: Հայ պատմիչ Արիստակես Լաստիվերտցին մոայլ գույներով է նկարագրում թուրքերի ասպատակությունները և ավերածությունները: Այդ ընթացքում հիմնահատակ կործան-

Վում է վաճառաշահ Արծն քաղաքը: Դասկանաւի է, որ հայկական մանր թագավորությունները (Սյունիքի, Լոռու և Կարսի) չեն կարող լուրջ դիմադրություն ցույց տալ թշնամուն: Ուստի իրենց կիսանկախ գոյությունը քարշ տալու համար նրանք հպատակություն են հայտնում սելջուկյան սուլթանին: Շուտով՝ 1065 թ., վերանում է նաև Կարսի թագավորությունը:

Պետք է ասել, որ սելջուկ-թուրքերի առաջին արշավանքների ժամանակ բյուզանդական բանակը փաստորեն անգործության էր մատնված: Նա խուսափում էր վճռական գործողություններից: Ի վերջո՝ 1071 թ. Մանազկերտ քաղաքի մոտ տեղի ունեցավ վճռական ճակատամարտ՝ սելջուկների և բյուզանդացիների միջև: Այս բախտորոշ ճակատամարտում վճռվելու էր Հայաստանի և հայ ժողովրդի հետագա ճակատագիրը: Սակայն այս վճռական մարտն ավարտվեց բյուզանդական բանակի լիակատար պարտությամբ. գերի ընկավ նույնիսկ Դիոգենես կայսրը: Դրանից հետո ամբողջ Հայաստանը մտավ սելջուկյան հսկայածավալ պետության մեջ:

Սելջուկ-թուրքերի արշավանքներն ու տիրապետությունը ծանր հետևանքներ ունեցան Հայաստանի համար: Ավերվեցին ու կողոպտվեցին շատ քաղաքներ ու բնակավայրեր՝ Անի, Արծն, Դվին, Կարս և այլն: Տուժեց տնտեսությունը, Հայաստանի արգավանդ դաշտավայրերը վերածվեցին թուրք վաչկատուն ցեղերի արոտավայրերի, ժողովրդի վրա դրվեցին ծանր հարկեր ու տուրքեր: Ստեղծված քաղաքական և տնտեսական անկայուն պայմանները հարկադրեցին հայության մի մասին լքել հայրենի երկիրը և գաղթել դեպի Բյուզանդիա, Կիլիկիա, Վրաստան և այլուր: Սելջուկների այս մեծ տերությունն իր հզորության ու ծարկման գագաթնակետին հասավ սուլթան Սելիք շահ I-ի (1072-1092 թթ.) օրոք:

**Հայ-Վրացական սելջուկների աշխարհակալ տերությունը ստեղծվել գինակցությունը** էր գենքի ուժով, ուստի շուտով՝ XI դարի վերջերին,

Սելիք շահի մահից հետո, այն տրոհվեց մի շարք մեծ ու փոքր իշխանությունների՝ ամիրայությունների (էմիրությունների): Այդպիսի օտար ամիրայություններ առաջացան նաև Հայաստանում՝ Դվինում, Կարինում, Անիում, Գանձակում, Խլաթում և այլուր, որոնք մեծ պատուիաս դարձան հայ ժողովրդի գլխին: Սելջուկյան այս էմիրություններն էլ կռւլ տվեցին և վերացրին հայկական վերջին երկու թագավորությունները՝ Լոռվանը XII դարի առաջին կեսին, իսկ

Սյունիքինը նույն դարի երկրորդ կեսին: Թուրք-մուսուլման ամիրայությունների վարած կործանարար քաղաքականությունը հայ ժողովրդին հարկադրում էր ոտքի ելնել սելջուկ զավթչների դեմ:

Սելջուկ թուրքական ամիրայությունների դեմ արդյունավետ պայքարելու համար հայերը համագործակցեցին վրացիների հետ: XII դարում Վրաստանը հզորացավ և գլխավորեց Անդրկովկասի ժողովուրդների ազատագրական պայքարը: Շատ հայեր գաղթեցին Վրաստան և համալրեցին վրացական բանակը: Ստեղծվեց հայ-վրացական միացյալ բանակ: Այդ բանակում աչքի ընկան հայ իշխան ու զորավար Սարգիս Զաքարյանը և նրա որդիները՝ Զաքարե և Իվան Զաքարյանները: Նրանք բարձր դիրքի ու պաշտոնների հասան վրաց արքունիքում: Յայկական հողերի ազատագրումը մեծ թափ ստացավ հատկապես վրաց թամար թագուհու (1184-1213 թթ.) օրոք: Յայվրացական միացյալ զորքերը հայ իշխաններ Զաքարե ամիրսպասալարի (զորքերի գլխավոր հրամանատարի) և Իվանն աթարեկի (թագաժառանգի խնամակալի) գլխավորությամբ սելջուկ թուրքերի տիրապետությունից ազատագրեցին գրեթե ամբողջ հյուսիսարևելյան Յայաստանը՝ Գուգարքը, Շիրակը, Անին, Կարսը, Արարատյան դաշտը, Դվինը, Սյունիքը, Արցախը: Ազատագրված տարածքներում ստեղծվեց հայկական ինքնավար իշխանություն՝ Զաքարյանների գլխավորությամբ:

Զաքարյան եղբայրները փորձեցին ազատագրել նաև Յարավային Յայաստանը, սակայն 1207 թ. Խլաթ քաղաքի մոտ նրանք անհաջողություն կրեցին և դադարեցրին հետագա առաջխաղացումը:

Այսպիսով, հայ-վրացական սերտ գինակցությամբ հյուսիսարևելյան Յայաստանը ազատագրվեց սելջուկյան լծից, և ստեղծվեց Զաքարյանների իշխանությունը (իշխանապետություն): Այդ նույն ժամանակ հայկական մի քանի մասը իշխանություններ կային Վասպուրականում, Մոկսում, Սասունում և այլուր:

**Զաքարյանների** Զաքարյաններն ինքնիշխան էին. ունեին սեփական իշխանությունը գորք, դրոշ և գինանշան: Բայց իրավական ու բարոյական տեսակետից ընդունվում էր վրաց Բագրատունի թագավորների գերադասությունը:

Զաքարյանների հովանավորությամբ հանդես եկան հայ նոր իշխանական տներ՝ Պռոշյանները կամ Խաղբակյանները՝ Վայոց ձո-

րում, Օրբելյանները՝ Սյունիքում, Զալայանները՝ Արցախում, Վաչուտյանները՝ Արագածոտն գավառում: Զաքարյանների օրոք Հայաստանն ապրեց տնտեսական ու մշակութային վերելք: Երկրում ծավալվեց լայն շինարարական գործունեություն, կառուցվեցին բազմաթիվ նշանավոր եկեղեցիներ, բարգավաճեցին քաղաքները, ընդլայնվեց առևտուրը: XIII դարի սկզբներին Հայաստանը վերելք էր ապրում, և Զաքարյանների հշխանությունն ուներ թագավորության վերածելու գորեք բոլոր նախադրյալները: Սակայն նույն դարի 30-ական թվականներից սկսված մոնղոլական ավերիչ արշավանքները կասեցրին այդ բնականոն գործընթացը:

## **2. Հայաստանը մոնղոլների փիրապետության շրջանում: Թուրքմենական ցեղերը Հայաստանում (XIII-XV դդ.)**

<b>Մոնղոլական ժիրաղետության հաստատումը Հայաստանում</b>	Զաքարյանների հշխանությունը թագավորության վերածելու հնարավորությունը անիրական դարձավ մոնղոլների (հայտնի են նաև թաթար անվանումով) ավերիչ արշավանքների հետևանքով:
--	--

XIII դարի սկզբներին Կենտրոնական Ասիայում Սիրիոի և Չինաստանի միջև ընկած տափաստաններում քոչվորական կյանք վարող մոնղոլական ցեղերը միավորվեցին և ստեղծեցին զորեղ պետություն: Այդ պետության գլուխ կանգնեց Չինգիզ խանը, որը շուտով սկսեց արշավանքները դեպի Միջին Ասիա, Ռուսաստան, Իրան և Արևմուտք:

Մոնղոլների առաջին հետախուզական բնույթի արշավանքը դեպի Անդրկովկաս տեղի ունեցավ 1220 թ., իսկ գլխավոր արշավանքը՝ 1236 թ.: Մոնղոլական 30 հազարանոց բանակը, Զարմաղանի գլխավորությամբ, քոչվոր ցեղերի ընտանիքներով և անասուններով, ներխուժեց Հայոց երկիր: Թուլացած Հայաստանն ու Վրաստանը չկարողացան լուրջ դիմադրություն ցույց տալ մոնղոլ զորապետի հորդաներին: 1236-1245 թթ. ընթացքում մոնղոլները նվաճեցին ամբողջ Հայաստանը: Այդ նվաճումների ընթացքում անգրորեն հրի ու սրի մատնվեց գրեթե ամեն ինչ: Պատմիչները ահ ու սարսափով են հիշում մոնղոլների վայրագությունները:

**Հայաստանի  
Տնտեսական ու  
Քաղաքական  
Կացությունը**

Մոնղոլական տիրապետությունը աղետաբեր եղավ Հայաստանի համար: Մոխրակույտի վերածվեցին ծաղկած քաղաքներն ու բնակավայրերը: Երկոր արգավանդ դաշտերը և պտղառատ այգիները վերածվեցին թափառաշրջիկ, քոչվոր անասնապահ ցեղերի արոտավայրերի: XIII դարի կեսերին Հայաստանում անցկացվեց ընդհանուր աշխարհագիր, որի հետևանքով ավելի ծանրացվեցին հարկերն ու տուրքերը: Տասը տարեկանից բարձր հայերը հարկի տակ դրվեցին, բացի կանանցից և հոգևորականներից: Բնակչությունից գանձվում էին տասնյակ տեսակի հարկեր՝ հողահարկ, գլխահարկ, զինվորական հարկ, անասնահարկ և այլն: Հարկերը գանձվում էին դրամով կամ բնամթերքով:

Գավառներում տեղակայվել էին մոնղոլական զորակայաններ: Մոնղոլների տիրապետությունը կործանարար հետևանքներ ունեցավ Հայաստանի տնտեսական և քաղաքական կյանքում: Ստեղծված պայմաններում բնակչության մի մասը հարկադրված դիմում էր արտագղթի դեպի Դրիմ, Աստրախան, Լեհաստան, Ուկրաինա և այլ երկրներ՝ հիմնելով հայկական գաղթօջախներ: Հայաստանի երբեմնի մարդաշատ ու հարուստ քաղաքներ Դվինը, Անին, Կարսը, Կարինը, Մանազկերտը անկում ապրեցին: Կանգ առավ Զաքարյանների շրջանի տնտեսական և մշակութային վերելքը:

Մոնղոլական դաժան տիրապետությունը գանգվածային դժգոհություն առաջ բերեց Հայաստանում և Վրաստանում: XIII դարի կեսերին հայ և վրաց իշխանները քանից ապստամբեցին, սակայն անհաջող: Հայ իշխանական տները զգալի հարված ստացան: Դրանց մի մասը թուլացավ և առհասարակ հեռացավ պատմության թատերաբեմից:

**Լանկ Թեմուրի  
արքավանները**

Մոնղոլ-թաթարների միահեծան իշխանությունը հայոց աշխարհի վրա տևեց ավելի քան մեկ դար: XIV դարի կեսերին մոնղոլական ընդարձակ պետությունը թուլացավ և մասնատվեց առանձին մեծ ու փոքր իշխանությունների:

Նույն դարի վերջերին միջինասիական զորապետ Լանկ Թեմուրը (Կաղ Թեմուր), նպատակ դնելով վերականգնել երբեմնի մոնղոլական տերությունը, Միջին Ասիայում ստեղծեց ընդարձակ մի պետություն՝ Սամարղանդ մայրաքաղաքով: 1386 թ. մոնղոլական ծագում ունեցող

այս բռնակալը Միջին Ասիայից, Իրանի վրայով, ներխուժեց Հայաստան՝ ամենուրեք սփոելով աննախաղեպ ավեր, կողոպուտ ու կոտորած: Ժամանակագիրներից մեկը պատմում է, որ արշավանքներից մեկի ժամանակ, երբ գրավվում էր Վան քաղաքը, նրա բերդից այնքան մարդ են նետում ցած, ու մահացածների կույտերը այնքան են բարձրանում, որ վերջին ընկածները էլ չեն մեռնում: Լանկ Թեմուրի ասպատակությունները շարունակվեցին մինչև XV դարի սկիզբը (1403 թ.), մինչև այդ արյունարբու բռնակալի մահը:

**Թուրքենական ցեղերը** Լանկ Թեմուրի ավերիչ արշավանքներից հետո գլուխ բարձրացրին դեռ XIII դարից Հայաստան ներթափանցած թուրքմենական Կարա կոյունլու և Ակ կոյունլու ցեղերը, որոնք այդպես էին անվանվում իրենց պահած ոչխարի գույնին (սև և սպիտակ) համապատասխան: Եվ ամբողջ 100 տարի (XV դարը) Հայաստանը մնաց թուրքմենական այդ երկու քոչվոր ցեղերի տիրապետության տակ ու դարձավ կովախնձոր նրանց մինչև: Այս ցեղերի տիրապետության շրջանը նույնպես համարվում է հայ ժողովրդի պատմության ամենամռայլ շրջաններից մեկը:

Սոցիալ-հոգեբանական առումով չափազանց ճնշող ու նվաստացնող էր այն պարագան, երբ քաղաքակրթության տեսակետից հետամնաց քոչվոր ցեղերը, ուժի միջոցով, նվաճում ու ավերում էին Հայաստան երկիրը, իսկ մշակութային հարուստ ավանդներ ունեցող հայությանը կողոպտում, սպանում, բռնաբարում, գցում ստորացուցիչ կախման մեջ: Այնուամենալիք, 1502 թ. վերջ տրվեց այս ցեղերի տիրապետությանը:

**Երևանը՝ Արարացյան երկրի վարչական կենտրոն.**

**հայոց եկեղեցու հոգևոր կենտրոնները**

Պետք է նշել, որ XV դարում Հայաստանի ու հայ ժողովրդի կյանքում տեղի են ունեցել նաև մի քանի դրական երևույթներ: Նախ այն բանից հետո,

երբ Դվինն ու Անին արդեն վաղուց կործանվել էին, Երևան քաղաքը սկսում է վերելք ապրել և XV դարի 40-ական թվականներից դառնում է Արևելյան Հայաստանի վարչական կենտրոնը:

Այդ նույն ժամանակներում էլ (1441 թ.) հայոց կաթողիկոսական աթոռը Կիլիկիայից փոխադրվեց Էջմիածին: Դրա պատճառն այն էր,

որ Կիլիկիայի հայոց թագավորությունն արդեն կործանվել էր, իսկ տեղի հայությունն էլ՝ մեծ չափերով արտագաղթել: Մինչդեռ Էջմիածինը գտնվում էր Յայաստանի սրտում և համեմատաբար ապահով քաղաքական ու տնտեսական պայմաններում:

Այսպիսով, շուրջ հազարամյա ընդմիջումից հետո Էջմիածինը կրկին դառնում է հայոց կաթողիկոսության նստավայրը և է մինչև օրս: Այս երկու կարևոր իրադարձությունները՝ Երևանի վարչական կենտրոն դառնալը և կաթողիկոսության վերահաստատումը Էջմիածնում, մեծապես բարձրացրին Արարատյան աշխարհի դերը, որն էլ հետագայում դարձավ հայ ժողովրդի ազգահավաքնան ու քաղաքական համախմբման կարևոր կենտրոն:

XV դարում հայ Եկեղեցու կյանքում տեղի ունեցած մյուս կարևոր իրադարձությունը 1461 թ. Կ. Պոլսում հայոց պատրիարքության հիմնադրումն էր, որը պետք է տնօրիներ օսմանյան թուրքիայի տիրապետության տակ գտնվող հայության հոգենոր կյանքը: Իսկ ավելի վաղ XIV դարի վերջերից, գործում էր Գանձասարի կաթողիկոսությունը (Արցախի և Ուտիքի հայության համար), որը, սակայն, ենթարկվում էր Էջմիածնի Ամենայն Յայոց կաթողիկոսությանը: XV դարում Կիլիկիայի Սիս քաղաքում վերականգնվեց մի նոր կաթողիկոսություն, որը նույնպես ուներ տեղական նշանակություն:

## Գլուխ իններորդ

# ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ (XI-XIV ՌԱՐԵՐ)

## 1. Ռուբինյան իշխանության առաջացումը և թագավորության հռչակումը: Լևոն II

**Հայերը** Անիի Բագրատունյաց թագավորության անկումից կես  
**Կիլիկիայում** դար չանցած 1080 թվականից, հայ ժողովուրող նոր  
պետականություն կերտեց պատմական Հայաստանից  
դուրս՝ Կիլիկիայում:

Կիլիկիան գտնվում է Փոքր Ասիայի հարավ-արևելքում՝ Միջերկ-  
րական ծովի ափին, Հայկական լեռնաշխարհի հարևանությամբ: Երկ-  
րամասը քաղկացած է Լեռնային և Դաշտային մասերից:

Հայերը Կիլիկիայում բնակություն հաստատեցին դեռ մ.թ.ա. I դա-  
րում, Տիգրան II-ի օրոք, երբ նրա զգալի մասը նվաճվեց հայոց զոր-  
քերի կողմից: Հայերի թիվը այնտեղ մեծացավ բյուզանդական քա-  
ղաքականության և հատկապես սելջուկ-թուրքերի ավերիչ արշավանք-  
ների հետևանքով: Արդեն XI դարի վերջերին հայերը կազմում էին  
երկրամասի ազգաբնակչության մեծամասնությունը: Այնտեղ բնա-  
կություն էին հաստատել նաև առանձին հայ իշխաններ, որոնք, օգտ-  
վելով նպաստավոր իրադրությունից (հատկապես Բյուզանդիայի թու-  
լացումից), լեռնային մասում ստեղծում են հայկական իշխանություն-  
ներ:

**Ռուբինյան իշխանության  
առաջացումը**

Այդ իշխաններից էր Անիի վերջին թագա-  
վոր Գագիկ II-ի թիկնապահ ու ազգա-  
կան Ռուբենը: Նա, իր շուրջը համախմ-  
բելով հայերին, ապստամբեց Բյուզանդիայի դեմ և 1080 թ. հիմնեց մի

իշխանություն, որը պատմության մեջ հայնի է Ռուբենյան իշխանություն անունով:

Կիլիկիայի տարբեր մասերում առաջացան հայկական այլ իշխանություններ և Փիլարտոսի, Գող Վասիլի, Լամբրոնի և այլն: Սակայն դրանցից ամենակենսունակը Ռուբենյանն էր:

Ռուբեն I-ը և նրա հաջորդները՝ Կոստանդին I-ը, Լևոն I-ը, Թորոս II-ը, Մլեհը և ուիշներ, կարողանում են ընդարձակել իշխանության սահմանները՝ լեռնային մասից հասնելով մինչև Միջերկրական ծովի ափերը: XII դարի սկզբներին հայոց բանակը բյուզանդացիներին դուրս քշեց Սիս և Աղանա քաղաքներից: Թորոս իշխանը հաջող մարտեր էր մղում սելջուկ-թուրքերի դեմ:

Բյուզանդական կայսրերը բազմաթիվ անգամներ փորձեցին իրենց ենթարկել Ռուբենյան իշխանությունը, անգամ կարճատև վերագրավեցին Կիլիկիան, սակայն հնագանդեցնել այդպես էլ չկարողացան:

Կիլիկիային տիրելու ձգտում ունեին նաև հարևան մահմեդական ամիրայությունները և Եվրոպացի խաչակիրները՝ մասնավորապես հարևան Անտիոքի ռքսությունը:

**Թագավորության** XII դարի վերջին հայոց պետականությունը Կիլիկիայում:

**Լևոն II** կիայում ավելի ամրապնդվեց: Ռուբենյան իշխանները, հաջողությամբ օգտագործելով Բյուզանդիայի թուլացումը, սելջուկ թուրքերի և Արևելք թափանցած խաչակիրների միջև առկա հակասությունները, իոդ են նախապատրաստում թագավորության հոչակման համար: Կիլիկիայում հայկական պետականության զորեղացմանը մեծ չափով նպաստեցին Եվրոպական մի շարք պետությունների՝ դեւու Արևելք կազմակերպած խաչակրաց արշավանքները: Յայերի ավելի քան հարյուրամյա համառ պայքարը անկախության համար պսակվում է հաղթանակով: Կիլիկիայի հայությունը լիովին թոքափում է Բյուզանդիայի գերիշխանությունը: 1198 թ. հունվարի 6-ին, Սուլթ ծննդյան օրը, Տարսոն քաղաքում ականավոր քաղաքական գործիչ և զորավար Լևոն II-ը հոչակվում է Կիլիկիայի հայոց թագավոր (1198-1219 թթ.)՝ իիմք դնելով Ռուբենյան թագավորությանը (դիմաստիային): Թագավորության մայրաքաղաք դարձավ Սիսը: Կիլիկիա փոխադրվեց հայոց կաթողիկոսարանը:

Լևոն II-ի օրոք Կիլիկիայի հայկական պետությունը հասավ իր հզորության գագաթնակետին: Երկրի կառավարման համակարգում

մտցվեցին Եվորպական առաջավոր օրենքներ: Բարձրացավ պետության միջազգային հեղինակությունը, ընդլայնվեցին երկրի սահմանները, բարգավաճեցին երկրի տնտեսությունն ու մշակույթը: Աշխույժ առևտրատնտեսական կապեր հաստատվեցին միջերկրածովային երկրների հատկապես Վենետիկի և Ջենովայի հետ: Լայն գործածության մեջ էին Լևոն արքայի հատած ոսկյա և արծաթյա դրամները: Լևոն II-ը իր հաջորդներին ժառանգություն թողեց հզոր ու բարգավաճ մի թագավորություն:

### **Պետական կարգը և տնտեսությունը**

XIII դարում Կիլիկիայի թագավորությունը դարձավ Միջերկրածովյան զորեղ երկրներից մեկը: Կիլիկյան Հայաստանը ավատատիրական պետություն էր, որը կառավարվում էր գործակալությունների միջոցով: Թագավորության գործակալությունները նման էին Արշակունյաց և Բագրատունյաց պետությունների գործակալություններին: Սակայն կային առանձին պաշտոններ, որոնք փոխ էին առնված Բյուզանդիայից և խաչակրաց պետություններից:

Կարևոր գործակալություններից էին՝ պայլությունը (թագավորի խնամակալ), սպարապետությունը (գունդստաբլ), արքունական քարտուղարությունը (դիվանագետ), մաքսապետությունը (հարկեր և տուրքեր հավաքող գերատեսչություն): Տակավին գործում էին նաև իշխանաց իշխանի, թագադիր իշխանի և այլ պաշտոններ:

Պետությունն ուներ հզոր բանակ, որի թիվը հասնում էր 60 հազարի: Բանակի միջուկը կազմում էր հեծելազորը: Զիավորները իրենց հանդերձանքով ու սպառազինությամբ հիշեցնում էին միջնադարյան ասպետներին:

Երկրում բարձր զարգացման էր հասել գյուղատնտեսությունը, որին նպաստում էին մերձարևադարձային մեղմ կլիման ու բարեբեր գետահովիտները: Կիլիկիայի դաշտային մասում մշակվում էին հացահատիկ, խաղող, բամբակ, նարինջ, կիտրոն, ձիթապտուղ և այլն, իսկ լեռնային շրջաններում զարգանում էր անասնապահությունը:

Կիլիկիայի հայտնի քաղաքներն էին Սիսը, Տարսոնը, Այասը, Աղանան, Մամեստրիան, Անարգարան և այլն, որոնցում զարգանում էին արհեստներն ու առևտուրը: Կիլիկիայով էին անցնում ծովային ու ցամաքային ճանապարհները, որոնցով հայ վաճառականները սերտ առևտրական կապեր էին հաստատել Արևելքի և Արևմուտքի շատ

Երկրների հետ Իրան, Արաբիա, Ֆրանսիա, Իտալիա, Իսպանիա, Ղրիմ և այլն: Միջազգային առևտրին գուգահեռ, հայերը հաղորդակից էին լինում Արևմուտքի առաջավոր բարքերին և մշակույթին:

## 2. Կիլիկիայի հայկական թագավորությունը XIII-XIV դարերում

**Հեթումյան դինաստիայի  
(արքայատոհմի)  
հաստատումը** 1219 թ. մահացավ Լևոն II թագավորը: Քանի որ նա արու զավակ չուներ, գահն անցավ նրա դուստր թագաժառանգ Զաքելին: Նայ ավագանին (պալատականները) սկզբում Զաքելին ամուսնացրին Անտիոքի դքսի որդի Ֆիլիպի հետ պայմանով, որ վերջինս պետք է հավատարին լիներ հայկական օրենքներին, հավատին ու սովորություններին: Սակայն Ֆիլիպը ոտնահարեց այդ պայմանները, որի համար գահազրկվեց: Դրանից հետո հայ ավագանին Զաքելին ամուսնացրեց թագավորության խնամակալ Կոստանդին Գունդստաբլի (սպարապետի) որդի Հեթումի հետ, և 1226 թ. Կիլիկիայում հաստատվեց Հեթումյանների դինաստիան, որը գոյատևեց մինչև 1342 թ.: Հեթում I թագավորի եղբայր Սմբատը նշանակվեց սպարապետ (գունդստաբլ), ամրապնդվեցին պետության հիմքերը:

Հեթում I-ի (1226-1270 թթ.) թագավորության ժամանակ էր, որ սկսվեցին մոնղոլների արշավանքները դեպի Մերձավոր Արևելք և Փոքր Ասիա: Կիլիկան և կանգնեց մոնղոլական ներխուժման ու սպառնալիքի առջև: Բայց Հեթում արքան, ցուցաբերելով ճկուն ու հեռատես քաղաքականություն, չհակառակ մոնղոլներին: Հեթում I-ին իրավամբ կարելի է համարել հայ իրաւուս քաղաքական գործիչներից մեկը: Նա, կտրել-անցնելով մի քանի հազար կիլոմետր, հասավ մոնղոլների մայրաքաղաք Կարակորում (Բայկալ լճի մոտ) և 1254 թ. Մանգու խանի հետ կնքեց բարեկամության ու համագործակցության հայ-մոնղոլական դաշինք: Այդ դաշնագրով Կիլիկիան պահպանեց իր ինքնուրույնությունը և գերծ մնաց մոնղոլների ավերածություններից: Ավելին, Հեթումը կարողացավ ընդարձակել իր թագավորության սահմանները դեպի հարավ և արևելք: Դրա փոխարեն հայկական բանակը պետք է օգներ մոնղոլներին: 1258 թ. մոնղոլական գորքերը գրավեցին Բաղդադը, և դրանով վերջ տրվեց Արաբական խալիֆայությանը:

Այս շրջանում արդեն խաչակիրները թուլացան, և այլևս հնարավոր չեր նրանցից մեծ օգնություն ակնկալել: Իսկ հայ-մոնղոլական դաշինքը շարունակվեց մինչև XIII դարի վերջերը, այսինքն՝ մինչև այն ժամանակ, երբ մոնղոլները ընդունեցին մահմեդականություն և այժմ արդեն սկսեցին բարեկամանալ հարևան մահմեդական իշխանությունների հետ:

Կիլիկիայի թագավորության հարևանությամբ գոյություն ունեին թշնամի մահմեդական Իկոնիայի և Եգիպտոսի Այության սուլթանությունները, որոնք հաճախակի հրոսակային արշավանքներ էին կատարում Կիլիկիայի վրա: Դրանցից լառանձնապես վտանգավոր էր Եգիպտոսի մամլուկյան սուլթանությունը, որը կործանելով միջերկրածովյան ափերին հաստատված լատինական իշխանությունները սպառնում էր նաև Կիլիկիային:

**Ներին ճգնաժամը.** Երբ հայ-մոնղոլական դաշինքը խախտվեց, և այլևս չեր կարելի հույսեր կապել մոնղոլների օգնության հետ, իսկ մամլուկների ներխուժումները դարձան հաճախակի, հայերը, նոր դաշնակից ձեռք բերելու նպատակով, կողմնորոշվեցին դեպի Արևմուտք Ֆրանսիա, Իտալիա, Հռոմի պապ և այլն: XIV դարի սկզբներին հայերն Արևմուտքից օգնություն ստանալու հույսով ենթարկվեցին կաթոլիկ Եկեղեցուն: Թագավորն ու կաթողիկոսը վարում էին լատինամետ քաղաքակություն, իսկ ժողովրդի մեծամասնությունը գտնում էր, որ պետք է ապավինել սեփական ուժերին և չսրել հարաբերությունները հարևան մահմեդական պետությունների հետ: Առաջացան Հռոմի կաթոլիկ Եկեղեցու հետ միավորվելու (ունիա կազմելու) կողմնակիցների՝ ունիթորների, և միավորմանը դեմ հակառնիթորների տարամերժ խմբավորումները: Քաղաքական տարբեր կողմնորոշման հետևանքով խորացավ ներքին պառակտումը և ճգնաժամը:

Այդ ճգնաժամի պայմաններում 1342 թ. անժառանգ մահացավ Հեթումյան դինաստիայի վերջին թագավոր Լևոն V-ը, և հաստատվեց կիսաֆրանսիական և կիսահայկական ծագում ունեցող Լուսինյան դինաստիան:

Այսպիսով, Կիլիկիայի հայկական պետությունն ունեցել է երեք թագավորական դինաստիա (արքայատոհմ). Ռուբինյան 1198-1226 թթ., Հեթումյան 1226-1342 թթ. և Լուսինյան՝ 1342թ.: Վերջիններիս օրոք ավելի ուժեղացավ Կիլիկիայի քաղաքական կախումը Արևմուտքի

Երկրներից ու կաթոլիկ եկեղեցուց: Լուսինյաններն ավելի խորացրին լատինամետ քաղաքականությունը:

1343 թ. թագավոր օծվեց Կիպրոսի թագավորական տան ներկայացուցիչ Գվիդոն Լուսինյանը՝ Կոստանդին III անունով: Սակայն վերջինիս ավելի ընդգծված լատինամետ քաղաքականությունը առաջ բերեց դժգոհության նոր ալիք և պատճառ դարձավ իր սպանության (1345 թ.): Դրանից հետո Լուսինյան արքայատոհմն ընդմիջվեց, և թագավորական գահն անցավ ծագումով հայ Նզրեցի Բաղդին մարածախտի որդի Կոստանդին IV-ին (1345-1363 թթ.), իսկ հետո էլ նրա հորեղբօրորդի Կոստանդին V-ին (1363-1373 թթ.): Սրանց օրոք փորձ արվեց վերականգնել թագավորության միասնությունը և զսպել լատինամետ ունիթորական տարրերին: Բայց այդ ջանքերը երկար ժամանակ դրական արդյունք չտվեցին: 1373 թ., այս անգամ արդեն արևմտամետ ուժերը, դավադրաբար սպանեցին Կոստանդին V-ին, և Կիպրոսից մայրաքաղաք Սիս բերվեց ու թագավոր կարգվեց դարձյալ Լուսինյան թագավորական տոհմի ներկայացուցիչ Լևոն VI-ը (1374-1375 թթ.), որն էլ դարձավ Կիլիկիայի վերջին թագավորը:

**Թագավորության Կիլիկիայի քաղաքական կողմնորոշումը դեպի Արևմուտքի Երկրներ՝ Ֆրանսիա, Հռոմի պապ և այլն,**

թշնամանքով ընդունեցին Եգիպտական սուլթանությունը և մյուս հարևան մահմեդական իշխանությունները: XIV դարի կեսերից Եգիպտոսի սուլթանությունը սկսեց նորանոր արշավանքներ կազմակերպել Կիլիկիայի վրա, գրավել ու ավերել նրա հարուստ քաղաքներն ու բնակավայրերը, ծովափնյա նավահանգիստները: 1375 թ. Եգիպտական մամլուկները, Երկարատև շրջապատումից ու համառ մարտերից հետո, գրավում են Սիս մայրաքաղաքը: Կիլիկիայի հայոց վերջին թագավոր Լևոն VI-ի գահազրկմամբ վերջ է տրվում թագավորությանը: Արևմուտքից այդպես էլ ոչ մի իրական օգնություն չստանալով: Կիլիկիայի տարածքը միացվում է Եգիպտոսի սուլթանությանը, իսկ 1487 թ. նվաճվում օսմանյան թուրքիայի կողմից:

Այսպիսով, 1375 թ. կործանվեց միջնադարյան Հայաստանի վերջին Կիլիկիայի հայոց թագավորությունը, որը հայերի երկրորդ հայրենիքն էր և հայ մշակույթի խոշորագույն օջախներից մեկը: Կիլիկիայի հայոց պետությունը կարևոր դեր խաղաց Արևելքի և Արևմուտքի երկրների միջև կապերի սերտացման գործում: Կիլիկիայի հայկա-

կան պետության պատմությունը կազմում է իայ ժողովրդի պատմության անբաժանելի և ուշագրսով մասը: Այսուհանդեմ, Կիլիկիայի հայկական թագավորության վերացումից հետո սկսվում է հայոց քաղաքական պատմության տևական (շուրջ 5-դարյա) մի ծանր, պետականագուրկ ժամանակաշրջան:

## Գլուխ տասներորդ

### ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ Խ-ԽՎ ԴԱՐԵՐՈՒՄ

**Կրթօջախները** Օտար լճի բրթափումը և հայեական պետականության (Բագրատունյաց, Զաքարյան, Ռուբինյան) վերականգնումը նպաստեց մշակույթի ու հոգևոր կյասքի զարգացմանը:

Աննախընթաց վերելք ապրեց կրթական գործը: Այդ ժամանակ Հայաստանում գործում էր ավելի քան 80 դպրոց: Սով լրաբար դպրոցները բազվում էին լվանքերին կից և նրկու և արգի էին՝ տարրական և բարձրագույն տիպի (վարդապետարաններ): Վարդապետարաններում կամ համալսարաններում դասավանդում էին մաքնատիկա, օրականություն, պատմություն, սաստիկածաբանություն, փիլիսոփայություն, ճարտասանություն, բժշկություն, երաժշտություն և այլն: Հայտնի էին Հաղպատի, Սանահինի, Անիի, Գլածորի, Տաթևի, Գեղարդի, Նարեկի, Սսի և այլ ճիշճառարյան համալսարանները: Դրանցից ամենանշանավորը 1280 թ. Վայոց ձորում հիմնված Գլածորի Լամալսարանն էր, որը դարձավ գիտության և մշակույթի խոշոր կենտրոն:

**Գիտությունը** Կրթական համակարգի վերելքը նպաստեց գիտությունների պատմագիտության, փիլիսոփայության, իդալագիտության, բժշկագիտության և այլ բնագավառների զարգացմանը: Հայ պատմիչներն իրենց երկերում շարադրում էին ոչ միայն հայոց, այլև հարևան երկրների պատմությունը: X դարի հայ պատմագրության խոշոր դեմքերից է Հովհաննես Դրասխանակերտցին: Արծրունիների իշխանական տոհմի պատմությունը գոել է Թովմա Արծրունին (X դար), իսկ Սյունյաց նահանգինը՝ Ստեփանոս Օրբելյանը (XIII դար): XI դարի ամենախոշոր պատմագիրն է Արիստակես Լաստիվերտցին, որն

իր «Պատմության» մեջ համգամանորեն կանգ է առել սելջուկների արշավանքների ու հայ ժողովրդի կրած տառապանքների վրա: Կիլիկյան Հայաստանի պատմությունը գրել է Սմբատ Գումբատարը (XIII դար), մոնղոլների արշավանքների ժամանակաշրջանի վերաբերյալ արքյուրագիտական հարուստ նյութ են տալիս XIII դարի պատմիչ Կիրակոս Գանձակեցին և ուրիշներ:

Միջնադարյան Հայաստանում հանդես են գալիս նաև Ժամանակագիր-տարեգիրներ, որոնցից առավել հայտնի են Մատթեոս Ուռիայեցին և Սամվել Անեցին (XII դար): Առանձին հայ պատմագիրներ հաջող փորձեր են կատարում հայոց պատմությունը ներկայացնելու նաև հարևան Երկրների ու ժողովուրդների պատմության հետ կապակցված դրանով իսկ ստեղծելով «տիեզերական» պատմություններ: Այսպիսի ուղղության ներկայացուցիչներից էին Ստեփանոս Տարոնեցին (Ասողիկը) և Վարդան Արևելցին (XIII դար):

Մեծ թուիչք ապրեց նաև հայ փիլիսոփայական միտքը: Ժամանակաշրջանի խոշոր փիլիսոփա էր Թոնդրակյան շարժման ճնշող, զորավար, քաղաքական գործիչ, բազմակողմանի կրթված գիտնական Գրիգոր Մագիստրոս Պահլավունին (XI դար): Գ. Պահլավունուն կարելի է հիսմարել միջազգային չափանիշներով գիտնական մագիստրոսի աստիճան ստացած հայ առաջին գիտնականը: Նա թարգմանում և մեկնաբանում էր հին հունական փիլիսոփաների աշխատությունները: Գրիգոր Մագիստրոսը միաժամանակ բժիշկ էր, մաթեմատիկոս, լեզվաբան ու բանաստեղծ: Նա է առաջին անգամ հայերեն թարգմանել Եվկլիդեսի «Երկրաչափությունը»:

Հանրագիտարանային գիսելիքների տեր էր նաև ականավոր փիլիսոփա, բնագետ ու տոմարագետ Յովհաննես Իմաստասերը (Սարկավագը) (XI-XII դդ.): Նա հարստացրեց Ժայկական տոմարը, 1084 թ. մտցրեց նահանջ տարւա գաղափարը և անշարժ օրացույցը: Նոր տարվա սկիզբը համարվեց օգոստոսի 11-ը: Միջնադարում հայոց տոմարի առաջին տարին (մեկ թվականը) համարվել է 552 թվականը: Հայկական տոմարը իր գոյությունը պահպանեց մինչև XVIII դարի վերջը: Կիլիկիայի անվանի փիլիսոփաներից էր Վահրամ Շաբունին: Նա ապրել է XIII դարում, գրել է փիլիսոփայական տրակտատներ, որոնցում պաշտպանել է նոմինալիզմի ուղղությունը:

Հայ միջնադարյան համալսարաններում դասավանդվող կարևոր ու հետաքրքիր առարկաներից մեկը փիլիսոփայությունն էր: Այն դա-

սավանդում էին բազմահմուտ հայ գիտնակիսներ՝ Եսայի Նչեցին, Ներսես Մշեցին, Ներսես Լամբրոնացին, Հովհան Որոտնեցին, Գրիգոր Տաթևացին և ուրիշներ: Վերջիններիս աշխատությունները հայ փիլիսոփայական մտքի պատճության նշանակալի երևույթներից են: Միջնադարյան համալսարաններին կից, փաստորեն, ձևավորվել էր հայ արհեստավարժ իմաստասիրական դպրոց:

Աննախընթաց զարգացում ապրեց հայ լրավագիտությունը: Միջնադարյան Հայաստանի խռովրագույն օրենսգիրը Մխիթար Գոշն էր (XII դար): Նրա կազմած նշանավոր «Դատաստանագրքի» օրինակով Կիլիկիայի համար առանձին օրենքների ժողովածու կազմեց Սմբատ Գունդստաբը (XIII դար): Հիշյալ դատաստանագրքերը աշխարհիկ բնույթի իրավանորմեր էին, որոնք լայնորեն գործադրվել են հայ իրականության մեջ:

Բարձր զարգացման հասավ նաև բժշկագիտությունը, որի ամենահռչակավոր ներկայացուցիչը Մխիթար Յերացը էր (XII-XIII դարեր): Մեզ է հասել ականավոր բժշկագետի «Ձերմանց մխիթարություն» աշխատությունը:

### **Ժողովրդական բանահյուսությունը և գրականությունը**

Զարկ է ստանում ժողովրդական բանահյուսությունը, որի գլուխգործոցն է «Սասունցի Դավիթ» եպրաբ: Սա հայրենասիրության, հումանիզմի ու ազատատենչության հիմանալի կորող է: Ժողովրդական բանահյուսության դրսնորում էին նաև առակները, որոնք ըստ ամենայնի հիսվաքել ու գրի են առել Ներսես Շնորհալին, Մխիթար Գոշը և Վարդան Այգենկցին:

X-XIV դարերում նոր աստիճանի բարձրացավ գեղարվեստական գրականությունը: Հայ գրականության առաջին խոշոր դեմքը և աշխարհիկ բանաստեղծության հիմնադիրը Գրիգոր Նարեկացին է (X դար): Նրա գործերից առավել աչքի են ընկերում «Տաղերը» և «Մատյան ողբերգության» խորագույք պոեմը, որոնք հայ և համաշխարհային գրականության անկրկնելի նմուշներ են: Հայ քնարերգության խոշորագույն ներկայացուցիչներից է կաթողիկոս Ներսես Շնորհալին (XII դար): Նրա երկերի գլուխգործոցը «Ողբ Եղեսիո» պոեմն է:

Միջնադարյան նշանավոր բանասաւեղծներից է Ֆրիկը (XIII-XIV դդ.): Նա հայ առաջին բանաստեղծներից է, որ իր ստեղծագործություններում բարձրացրել է հասարակ ժողովրդի բողոքի ձայնը սոցիալական անարդարությունների դեմ: Միջին հայերենով գրված իր քառ-

յակներում նա պատկերել է նաև հայրենիքի ծանր վիճակը օտարների լի տակ և ժողովրդի ցասումը նրանց դեմ:

Միջնադարյան տաղանդավոր բանաստեղծներից էին նաև Յովհաննես Երզնկացին, Կոստանդին Երզնկացին, Յովհաննես Թլկուրանցին և ուրիշներ:

## **Ճարտարադետությունը և արվեստը**

Յայ միջնադարյան արվեստում առաջնակարգ տեղ է գրավում ճարտարապետությունը, որը կրկին բուռն վերելք ապրեց Բագրատունիների և Զաքարյանների օրոք: ճարտարապետական արվեստի զարգացման գլխավոր կենտրոնն էր Անի մայրաքաղաքը, ուր գործում էր նշանավոր (բազմահմուտ) Տրդատ ճարտարապետը, իսկ Վասպուրականում՝ Մանվելը: Վերջինս Աղթամար կղզում կառուցեց Սուրբ Խաչ հոչակավոր Եկեղեցին, այլ տաճարներ ու պալատներ, որոնք իրենց հիանալի քանդակներով ու որմնանկարներով ճարտարապետության գլուխգործոցներ են: Յայ ճարտարապետները ոճական նորամուծություններ կատարեցին, որոնք հետագայում ազդեցություն գործեցին ոռմանական և գոթական ոճերի վրա:

Մեծ զարկ ստացավ ինչպես վանական համալիրների, այնպես էլ քաղաքացիական շինարարությունը: Կառուցվեցին Սևանի, Յաղպատի, Սանահինի, Յաղարծինի, Գոշավանքի, Գնդեվանքի, Օհանավանքի, Գեղարդի, Տաթևի, Կեչառիսի, Յառիցի և տասնյակ այլ Եկեղեցական համալիրներ:

Նշված ժամանակաշրջանում Յայաստանի առևտրական բանուկ ճանապարհների վրա կառուցվել են քարավանատներ, հյուրատներ և կամուրջներ: Ներկայումս Յայաստանով ճանապարհորդելիս հաճախակի կարելի է հանդիպել ժամանակին շատ բարձր ճաշակով կառուցված քարավանատների ու հյուրատների ավերակների: Բագրատունյաց և Զաքարյան ժամանակների կամրջաշինության գլուխգործոցն է Ներքին Զրափի կամուրջը՝ Ախուրյան գետի վրա (Երկարությունը՝ 125 մ, բարձրությունը՝ 30 մ): Մինչև մեր օրերը պահպանվել է Սանահինի հայտնի կամուրջը՝ կառուցված 1192 թ. և այլն:

Ճարտարապետության հենքի վրա զարգացան ողմնանկարչությունը և քանդակագործությունը: Փայտի փորագրման արվեստի գլուխգործոց է Մուշի ս. Առաքելոց վանքի փայտե դուռը (XII դար): Քանդակագործության մեջ բոլորովին նոր ուղղություն էր խաչքարային արվեստը: Յատկապես առանձնանում են Պողոսի և Մոմիկի կերտած

խաչքարերը Գոշավանքում և Նորավանքում: Կիրառական արվեստի աչքի ընկնող ճյուղերից էր խեցեգործությունը:

Արվեստի ծաղկում ապրած ճյուղերից էր մանրանկարչությունը՝ ձեռագիր մատյանների պատկերազարդման արվեստը: Մանրանկարչությունը զարգացման բարձր մակարդակի հասավ Կիլիկյան Հայաստանում: Հայ մանրանկարչության խոշորագույն ներկայացուցիչներն են Թորոս Ռոսլինը և Սարգիս Պիծակը:

Զարգացման ավելի բարձր մակարդակի հասավ Երաժշտությունը: Առաջադիմեց նաև հոգևոր Երաժշտությունը՝ շարականները, որոնք նոտագրվում էին խազերի ձևով:

Այսպիսով, X-XIV դդ. հայ ժողովուրդը նշանակալի նվաճումներ ունեցավ հոգևոր և նյութական մշակույթի բնագավառներում, որոնք անուրանալի ներդրում եղան համաշխարհային մշակույթի գանձարանում: Այդ նույն դարերում Հայաստանի ու Կիլիկիայի սոցիալ-տնտեսական ու հոգևոր կյանքում առաջացան մի շարք նոր երևույթներ, որոնք իրենց բնույթով ու բովանդակությամբ հիշեցնում են XIV-XVI դարերում Եվրոպայում տեղի ունեցած Վերածնունդը (Ունեսանսը):

## Գլուխ տասնմեկերորդ

# ՀԱՅԱՍՏԱՆԸ XV-XVIII ԴԱՐԵՐՈՒՄ

### 1. Թուրք-պարսկական պարերազմները XVI-XVII դարերում և Հայաստանի բաժանումները

**Թուրք-իրանական  
դաշտերազմները և  
Հայաստանի  
բաժանումը**

XV դարի վերջին և XVI դարի սկզբներին Մերձավոր Արևելքում քաղաքական ասպարեզ իջան երկու բռնակալ տերություններ՝ Օսմանյան Թուրքիան և Սեֆյան Իրանը (Պարսկաստանը): Հայաստանը, ընկած լինելով այդ պետությունների միջև, XVI դարի սկզբներից նրանց համար դարձավ կովածնձոր ու պատերազմների թատերաբեմ:

Դեռ 1299 թ. Փոքր Ասիայում թուրքական քոչվոր ցեղերից մեկի առաջն լրդ Օսմանը (կամ Օթմանը) հիմք էր դրել օսմանյան պետությանը: 1453 թ. Թուրքական զորքերը Մուհամեդ II սուլթանի գլխավորությանը գրավեցին Կ. Պոլիսը. Վերջ տվեցին Բյուզանդիայի գոյությանը և նվաճրւմների ճանապարհով հիմք դրեցին մի մեծ կայսրության:

1502 թ. Շահ Իսմայիլը Իրանում Սեֆյան պետության հիմքը դրեց (իրանական Սեֆյան տոհմի անունից): XVI դարի սկզբին Իրանը և Թուրքիան դարձան սահմանակից իրենց սահմանը դարձնելով Եփրատ գետը:

1512 թվականից սկսվեցին թուրք-իրանական պատերազմները, որոնք ընդհատումներով ու փոփոխակի հաջողություններով տևեցին մեկ դարից ավելի հայ ժողովրդին բերելով մեծ արհավիրքներ: 1555 թ. մայիսին Ամասիայում կողմերի միջև հաշտություն կնքվեց, որի

համաձայն առաջին անգամ Հայաստանը բաժանվեց Թուրքիայի և Իրանի միջև՝ սահմանագիծ դարձնելով Հայկական պար լեռնաշղթան։ Օսմանցիներին անցավ Արևմտյան Հայաստանը, իսկ Արևելյան Հայաստանը մնաց Իրանի տիրապետության տակ։ Սակայն կնքված հաշտությունը երկար չպահպանվեց։ Շատ չանցած նորից սկսվեցին պատերազմները, որոնց հետևանքով Թուրքիան գրավեց ամբողջ Անդրկովկասը։

### **Շահ Աբասը և հայերի բռնագաղթը**

Իրանը հզորացավ Շահ Աբաս I-ի (1587-1628) օրոք։ 1603 թ. նա հարձակվեց Թուրքիայի վրա, գրավեց Զուղան, Նախիջևանը, Երևանը և արշավեց դեպի Արևմտյան Հայաստանի գավառները։ Սակայն մեկ տարի անց՝ 1604 թ., թուրքերի հարձակումներից հետո, Շահ Աբասը Արաքսի հոսանքով նահանջեց և իր ճանապարհին բռնությամբ տեղահան արեց հարյուր հազարավոր հայերի, քշեց ու բնակեցրեց Իրանում։ Շահ Աբասը հույս ուներ հայ երկրագործներին ու արհեստավորներին վերաբնակեցնելով՝ զարկ տալ Իրանի տնտեսական կյանքին։ Հայերի գաղթեցման հետևանքով Սպահան մայրաքաղաքի մոտ հիմնվեց Նոր Զուղա գաղթավայրը։ Երկրի հայաբափումը թուլացրեց նրա պաշտպանությունը։ Պատերազմի ու բռնագաղթերի հետևանքով ամայացած ու հայազրկված գավառներ սկսեցին ներթափանցել քրդեր, թուրք-թաթարներ, կարափափախներ և այլ մահմեդական տարրեր։ Դրա հետևանքով Հայաստանի ազգաբնակչության էթնիկական կազմը զգալիորեն փոխվեց։

### **Հայաստանի նոր բաժանումը**

Թուրք-իրանական պատերազմները շարունակվեցին մինչև XVII դարի 30-ական թվականների վերջը։ 1639 թ., Դիարբեքիրում կնքված հաշտության պայմանագրի համաձայն, Հայաստանը երկրորդ անգամ բաժանվեց Թուրքիայի և Իրանի միջև։ Հայաստանի արևելյան մասը մնաց Իրանին, իսկ արևմտյանն անցավ Թուրքիայի տիրապետության տակ։ Սահմանագիծը Ախուրյան և Արաքս գետերով, Մեծ ու Փոքր Մասիսներով, Վասպուրականով անցնում էր դեպի Միջագետք։ Այս բաժանումն անփոփոխ մնաց մինչև XIX դարի առաջին քառորդը։

## **Հայաստանի վարչական բաժանումներն ու սոցիալ-տնտեսական վիճակը**

Իրանին և Թուրքիային անցած մասերում կատարվեցին վարչատարածքային բաժանումներ: Արևելյան Հայաստանը բաժանվեց խանությունների Երևանի, Նախիջևանի, Գանձակի և այլն: Գլխավոր խանությունը Երևանին էր, որը կոչվում էր նաև սարդարություն: Խանությունները բաժանվում էին ավելի փոքր վարչական միավորների, որոնք կոչվում էին մահալ: Երևանի խանությունը բաժանված էր 15 մահալի:

Արցախի և Սյունիքի նահանգներում տակավին պահպանվում էին մի շարք իշխանական տներ, որոնք կոչվում էին մելիքություններ: Հետագայում (XVIII դար) դրանցից առանձնապես հանրահայտ դարձան «Խամսայի» (արաբերեն՝ հինգ) մելիքությունները՝ Խաչենի, Վարանդայի, Զրաբերդի, Դիզակի, Գյուլիստանի, ինչպես նաև Սյունիքի մի շարք մասն իշխանություններ (մելիքություններ): Մրանք հայկական նախկին պետականության վերջին բեկորներն էին և հետագայում դարձան հայ ազատագրական պայքարի զարթոնքի օջախներ:

Թուրքիային անցած Արևմտյան Հայաստանը վարչատարածքային տեսակետից բաժանված էր վիլայեթների (էյալեթ): Հայտնի էին Երզրումի, Վանի, Կարսի, Բաղեշի (Բիթլիսի), Սեբաստիայի (Սվագի), Դիարբեքիրի վիլայեթները: Վիլայեթներն իրենց հերթին բաժանվում էին ավելի փոքր վարչատարածքային միավորների՝ սանջակների (լիվաների, գավառների), սանջակները՝ կազաների (գավառակների), իսկ կազաներն էլ՝ նահիեների (գյուղախմբերի):

Արևմտյան Հայաստանի որոշ շրջաններ, առանձնապես Զեյթունը, Սասունը, Շատախը, պահպանում էին ներքին ինքնուրույնությունը: Հիշյալ շրջանները ևս հետագայում մեծ դեր խաղացին հայ ժողովրդի մղած ազատագրական պայքարում:

Թուրք-իրանական երկարատև պատերազմները, որոնք ընթանուած էին իիմնականում Հայաստանի տարածքում, մեծ վնասներ պատճառեցին երկրի սոցիալ-տնտեսական կացությանը: Հայ ժողովրուրը, ընկնելով շահական իրանի և սուլթանական Թուրքիայի լծի տակ, հավասարապես ենթարկվում էր թե՝ տնտեսական հարստահարման և թե՝ քաղաքական ու կրոնական իրավագրկության ու հալածանքների:

Գյուղացիներից գանձվում էին բազմատեսակ հարկեր ու տուրքեր, այդ թվում՝ քրիստոնյա լինելու համար՝ գլխահարկ (ջիզի): Մեծ պատուհաս էր դարձել մանկահավաքությունը ենիշերական հեծելագն-

ոերի համար: Հայ ազգաբնակչության մի մասը հարկադրված դիմում է արտագաղթի: Ստեղծված ծանր պայմանները ստիպեցին հայ ազատատենչ ժողովրդին ուղիներ փնտրել ազատագրվելու համար:

## 2. Հայաստանի ազատագրության հարցը և Խրայել Օրին (XV դար և XVIII դարի սկիզբ)

### Ազատագրական շարժման առաջին ժայլերը

Հայ ժողովուրդը, կորցնելով իր անկախ պետականությունը և ընկնելով Թուրքիայի ու Իրանի լծի տակ, դարեր շարունակ ուղիներ էր փնտրում ազատագրվելու դրանց տիրապետությունից: Հայաստանի մասնատվածությունը, անկասկած, բարդացնում էր հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը:

Դեռ XV դարում, երբ Հայաստանը տակավին գտնվում էր թուրքմենական ցեղերի գերիշխանության տակ, հայ հոգևոր առաջնորդները և առանձին իշխանություններ՝ Աղթամարի, Փոքր Հայքի, Խուրի, Սասունի և այլն, անում են ազատագրական շարժման առաջին քայլերը: Այդ պայքարը հիմնականում ուղղված էր օրավուր հզորացող Օսմանյան Թուրքիայի վտանգի դեմ: 1453 թ. Կ. Պոլսի գրավումից հետո, Թուրքիան սկսեց սպառնալ նաև Արևմուտքի Երկրներին: Եվ ահա, Արևելքի ու Արևմուտքի քրիստոնյա, և անգամ ոչ քրիստոնյա, Երկրները փորձեր են կատարում միասնական ժակատ կազմել թուրքական վտանգի դեմ, սակայն՝ ապարդյուն. հակառակ ավելի է ծավալում իր նվաճումները և XVI դարից սկսում գրավել ու յուրացնել նաև Հայաստանի հողերը:

### Հայերի դիմումները Եվրոպա

Հայերը, տեսնելով, որ սեփական ուժերով չեն կարող թոթափել օտարի լուծը, հարկադրված դիմում են Եվրոպական պետությունների, մինչև իսկ Հռոմի պապի օգնությանը: Ազատագրական գաղափարների տարածման գործում կարևոր դեր խաղացին հայկական գաղթավայրերը, որտեղ տպագրվում էր հայրենասիրական-ազատագրական բովանդակությանը գրականություն և տարածվում հայրենիքում:

Ի սկզբանե հայ ազնատագրական շարժման դեկը ստանձնեց հայոց Եկեղեցին՝ կաթողիկոսների գլխավորությամբ: 1547 թ. Էջմիածնում

Ստեփանոս Սալմաստեցի կաթողիկոսը հրավիրում է հայ ժողովոդի ազատագրությանը նվիրված գաղտնի ժողով։ Կաթողիկոսը հատուկ նամակով ճանապարհվում է Եվրոպա, բայց նրա բանակցությունները Հռոմի պապի, Վենետիկի, Գերմանիայի, Լեհաստանի պետությունների հետ ավարտվում են անարդյունք։ Նրան անգամ օգնության բանավոր խոստում չեն տալիս։ Փորձը կրկնվում է XVI դարի 60-ականների սկզբին (1562 թ.)՝ Միջայել Սեբաստացի կաթողիկոսի նախաձեռնությամբ, սակայն՝ դարձյալ ապարդյուն։ Այսպիսով, 300-ամյա լուրդյունից հետո, XVI դարի կեսերին, սկզբնավորվում է հայ ժողովրդի ազատագրական պայքարը և անում իր առաջին քայլերը։

XVII դարի 60-ական թվականներին, Հայաստանը թուրքական լծից ազատագրելու հույսով, մի հայ առևտրական՝ Բաղիշեցի Մահտեսի Մուրադը, մեկնում է Ֆրանսիա և օգնություն խնդրում Լյուդովիկոս XIV թագավորից։ Սակայն Ֆրանսիայից էլ ոչ մի օգնություն չի ստացվում։ Հայ հոգևոր և աշխարհիկ գործիչների դիմումները կաթոլիկ Արևմուտքին շարունակվում են նաև հետագա տասնամյակներին։ Հայերը պատրաստ էին անգամ ազատագրվելու դեպքում ընդունելու կաթոլիկություն։

<b>Եջմիածնի ժողովը:</b> <b>Խորայել Օրու գործունեությունը Եվրոպայում և Ռուսաստանում</b>	1677 թ. Եջմիածնում նորից գումարվում է գաղտնի ժողով՝ 6 հոգևոր և 6 աշխարհիկ գործիչների մասնակցությամբ։ Այստեղ որոշվում է դարձյալ պատվիրակություն ուղարկել Եվրոպա օգնություն խնդրելու։ Պատվիրակությունը, Հակոբ Զուլայեցի կաթողիկոսի գլխավորությամբ, անցնում է Վրաստան և ապա Կ. Պոլիս Եվրոպա մեկնելու նպատակով։ Սակայն ճանապարհին, 1680 թ., կաթողիկոսը մահանում է, իսկ պատվիրակության անդամները վերադառնում են։ Եվրոպա է անցնում միայն հայ ազատագրական շարժման նվիրյալ Խորայել Օրին, որի կյանքը լի է արկածալի պատմություններով։ Նա լինում է Իտալիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում, ամեն ջանք գործադրում հայ ժողովոդի ազատագրության համար։ Օրին դիմում է նաև գերմանական իշխաններից մեկին՝ Պֆալցի կյուրֆյուրստ Յովիան Վիլհելմին՝ Հայաստանի ազատագրության խնդրով։ Երկար համոզումից հետո Յովիան Վիլհելմը հուսադրում է, որ կօգնի, սակայն պայմանով, որ այդ մասին լինի հայերի գրավոր դիմումը։ Հայերի գրավոր համաձայնությունը ստանալու համար Օրին վերադառնում է Հայաստան,
---	---

և 1699 թ. Սյունիքի Անգեղակոր ավանում, իայ մելիքների մասնակցությամբ, գումարվում է գաղտնի ժողով: Որոշվում է ազատագրվելու խնդրանքով դիմել Եվրոպական պետություններին: Օրին, ժողովականներից ստանալով համապատասխան դիմում-փաստաթղթեր ու լայն լիազորություններ, կրկին մեկնում է Գերմանիա, իսկ հետո՝ Ավստրիա: Սակայն Պֆալցի մեծ իշխանը և ավստրիական կայսրը գործնականում հրաժարվում են հայերին որևէ օգնություն ցույց տալ:

Եվրոպական թագավորները Օրուն հասկացրին, որ հայերին իրական օգնություն կարող է ցույց տալ Ռուսաստանը, քանզի Վերջինիս նվաճողական պլանները համընկնում էին հայերի ազատագրական ձգտումներին: Եվ Խարայել Օրին, Արևմուտքից հույսը կտրած, իր հայացքը հառեց դեպի հյուսիս՝ Ռուսաստան:

1701 թ. Օրին ժամանեց Մոսկվա, բանակցություններ վարեց Պետրոս I-ի, նրա բարձրաստիճան պաշտոնյաների հետ, նրանց ծանոթացրեց Յայաստանի ազատագրման իր ծրագրերին, որոնք ռուսական արքունիքում հավանության արժանացան: Պետրոս Մեծը խոստացավ հայերին օգնել Շվեդիայի հետ պատերազմն ավարտելուց հետո:

Դեպի Անդրկովկաս ռուսական գորքերի ապագա արշավանքը նախապատրաստելու, տեղում ռուսական գորքերի արշավանքի ուղիները ճշտելու, ազգաբնակչության քաղաքական տրամադրություններն ուսումնասիրելու նպատակով Պարսկաստան ուղարկվեց ռուսական դեսպանություն: Օրին, ստանալով գնդապետի կոչում, նշանակվեց դեսպանության դեկավար: 1707 թ. նա Աստրախանով և Շամախիով մեկնեց Պարսկաստան (նայրաքաղաք Սպահան), կատարեց նախապատրաստական-դիվանագիտական զգալի աշխատանք, սակայն վերադարձին, 1711 թ., Աստրախանում հանկարծամահ եղավ:

Այսպիսով, XV-XVII դարերում հայ ժողովողի՝ Եվրոպական պետությունների օգնությամբ ազատագրման փորձերը անցան ապարդյուն: XVIII դարի շեմին Յայաստանի ազատագրման հարցում տեղի ունեցավ շրջադարձ դեպի Ռուսաստան, և հայերի մեջ աստիճանաբար ձևավորվեց ռուսական քաղաքական կողմնորոշումը:

### 3. Ազարագրական պայքարը Արցախում (1722-1730 թվ.)

«Ամեն գեղ բերք ա...»

Իվան Կարապետ

#### Ռուսական զորքերի Կաստիական առևավանքը և հայ-Վրացական համագործակցությունը

XVIII դարի սկզբներից ուժեղացան ազատագրական շարժումները Հայաստանում ու Վրաստանում: Հայ ազատագրական շարժման օջախներ դարձան Արցախը և Սյունիքը: Այդ շարժմանը մեծ լիցք հաղորդեց այն, որ Պետրոս I-ը, 1721 թ. հաղթականորեն ավարտելով պատերազմը Շվեդիայի հետ, հաջորդ տարի՝ 1722 թ., Անդրկովկասը նվաճելու նպատակով, կազմակերպեց Կասպիական արշավանքը: Մինչ այդ ռուսական հզորացող պետությունը, լուծելով իր համար կենսական նշանակություն ունեցող մի շարք տարածքային-քաղաքական հիմնահարցեր, սկսեց գործուն հետաքրքրություն ու շահագրգուվածություն ցուցաբերել Անդրկովկասի և Պարսկաստանի հանդեպ: 1715 թ. Անդրկովկաս Եկավ ռուսական մի դեսպանություն Ա. Վոլինսկու գլխավորությամբ: Դեսպանությանը հանձնարարված էր ուսումնասիրել Պարսկաստան տանող ճանապարհները, Անդրկովկասի ժողովուրդների ու հատկապես հայերի վերաբերմունքը դեպի ռուսները, որպեսզի նախապատրաստվեր ռուսական ապագա Կասպիական արշավանքը: Ռուսական զորքերը Կասպից ծովով մտան Դերբենդ ու Բաքու: Հայերն ու վրացիները ոգևորությամբ ընդունեցին ռուսների մուտքը:

Արցախի ազատագրական շարժման ղեկավար, Գանձասարի կաթողիկոս Եսայի Հասան-Զալայանը և վրաց թագավոր Վախթանգ VI-ը հայ-Վրացական համատեղ պայքարի ծրագիր մշակեցին: Նրանք որոշեցին մեկտեղել ուժերը և շարժվել դեպի Շամախի՝ ռուսական բանակին ընդառաջ: 1722 թ. սեպտեմբերին Գանձակի Չոլակ կոչվող վայրում հայ-Վրացական զինված ուժերը (30 հազարանոց վրացական և 10 հազարանոց հայկական զորամասեր) հուզիչ պայմաններում հանդիպում են՝ ռուսական զորքերին միանալու համար: Բայց քաղաքական ու նյութատեխնիկական մի շարք աննպաստ հանգամանքների պատճառով Պետրոս I-ը ընդհատում է արշավանքը և վերադառնում Մոսկվա: Վախթանգ թագավորը և Եսայի կաթողիկոսը

այդ տիսուր լուրջ ստանալով՝ վերադարձան իրենց բնակավայրերը և այս պայմաններում ապստամբեցին պարսկական տիրապետության դեմ:

**Շայկական  
զորամիավորումների  
(սղնախների)  
ստեղծումը Արցախում**

Արցախում ստեղծվեցին ռազմական ամրացված ճամբարներ՝ սղնախներ: Մոավ լեռան մոտ հիմնվեց Մեծ սղնախը՝ 10 հազար, իսկ Շուշի քաղաքի մոտ (Շոշ-Քարագլուխ) Փոքր սղնախը՝ 2 հազար զինվորներով: Հետագայում սրանց հրամանատար նշանակվեց Ավան Յուզբաշին (հարյուրապետը): Շարժման ոգեշնչողն ու կազմակերպիչն էր կաթողիկոս Եսայի Հասան-Զալալյանը: Ազատագրական պայքարին գործուն մասնակցություն ունեցան Արցախի մելիքությունները: 1722 թ. աշնանը, սկսված ապստամբության հետևանքով, ամբողջ Արցախն ազատագրվում է: Այդ նույն ժամանակ ապստամբում է նաև Սյունիքը՝ Դավիթ Բեկի գլխավորությամբ, և Զանգեզուրից դուրս վոնդում պարսկական խաներին ու բեկերին:

**Երևանի  
տաօտպանությունը**

Արցախն ու Սյունիքը հազիվ էին թոթափել պարսկական գերիշխանությունը, երբ ստիպված եղան մարտնչել մի նոր, ավելի հզոր թշնամու Օսմանյան թուրքիայի դեմ: 1723 թ. թուրքական զորքերը գրավեցին Վրաստանը և Գանձակի վրայով շարժվեցին Արցախ: Բայց հայկական զորքերը կանգնեցրին թուրքերի առաջխաղացումը:

1724 թ. գարնանը թուրքական մի այլ զորաբանակ մտավ՝ Արարատյան դաշտ և արշավեց Երևանի վրա՝ նպատակ ունենալով այն գրավելուց հետո Արաքսի հոսանքով (Նախիջևանով) շարժվել Սյունիք ու Արցախ հայերի ապստամբությունը խեղդելու համար: Թուրքական 30 հազարանոց բանակին չհաջողվեց անմիջապես գրավել քաղաքը: Շուրջ երեք ամիս տևեց Երևանի հերոսական պաշտպանությունը: Քաղաքի բնակիչները, որոնց մեջ հիշվում են նաև Կոնդ թաղամասի հայ բոշաները, համառ դիմադրություն ցույց տվեցին: Ի վերջո, մեծ զոհերի գնով, թշնամուն հաջողվում է Զորագյուղով մտնել քաղաք և գրավել այն: Երևանի պաշտպանությունը հայ ժողովրդի պատմության հերոսական էջերից է:

## **Արցախի հերոսամարտերը**

Երևանի գրավումից հետո թուրքերը, ստանալով Ռուսաստանի համաձայնությունը, հարձակվում են Սյունիքի և Արցախի վրա: Ծանր վիճակ է ստեղծվում հայկական երկու ինքնավար իշխանությունների համար: Օգնության ոչ մի հույս չկար: Յայերը նամակ նամակի հետևից՝ օգնության խնդրանքով, դիմում են ռուսական ցարին, բայց ապարդյուն:

1725 թ. թուրքական ավելի քան 5 հազարանոց մի զորամաս մտնում է Արցախի Վարանդայի շրջան, սակայն հայերը խորամանկությամբ ու հնարամտությամբ բոլորին կոտորում են: Անհաջողության է մատնվում նաև թուրքերի հաջորդ արշավանքը: Արցախցիների հերոսամարտը շարունակվեց մինչև 1730 թվականը: Այդ ընթացքում թուրք զավթիչները չհամարձակվեցին ոտք դնել Արցախ: Ի վերջո, դրսից օգնություն չստանալով, ապստամբները հուսահատվեցին: Սյունիքի հետ միասին կազմալուծվեց նաև արցախյան պայքարը: Սղնախների հրամանատար Ավան Յուզբաշին, օգնություն ստանալու հույսով, մեկնեց ռուսական զորքերի մոտ և այլևս չվերադարձավ: 1728 թ. մահացավ շարժման ոգեշնչողը՝ Եսայի Յասան-Զալայանը: Ապստամբներն անտեղյակ էին, որ դեռ 1724 թ. ամռանը Ռուսաստանը և Թուրքիան կնքել էին գաղտնի պայմանագիր, որի համաձայն Թուրքիան ճանաչում էր մերձկասպյան տարածքների անցումը Ռուսաստանին, իսկ հայկական տարածքները, այդ թվում՝ նաև Արցախը և Սյունիքը, Անդրկովկասյան մյուս երկրամասերի հետ միասին, թողնվում էին Թուրքիայի տնօրինության տակ: Այստեղից հետևում էր, որ Ռուսաստանը չէր կարող օգնության գալ ապստամբ արցախահայությանը: Դրանից հետո, խուսափելով հետագա արյունահեղությունից, ապստամբությունը մարում է: Այդուհանդերձ, 1722-1730 թթ. Արցախի հերոսական պայքարը հայ ժողովողի ազատագրական շարժման պատմության ուշագրավ ու ուսանելի էջերից է:

Ապստամբության պարտությունից հետո, ռուսական իշխանությունների հրավերով, արցախահայության առանձին խմբեր արտագաղթեցին Յյուսիսային Կովկաս՝ ռուսական տիրապետության տակ:

## 4. Ազադագրական պայքարը Սյունիքում: Դավիթ-Բեկ: Մխիթար սպարապետ (1722-1730)

**Ազատագրական դայլարի սկիզբ:** Ռուսական զորքերի Կասպիական արշավանքը ոգևորեց նաև Սյունիքի հայությանը: Եվ Արցախի օրինակով, 1722 թ. աշնանը, ապստամբեց նաև Սյունիքը: Սակայն Սյունիքի ազատագրական պայքարն ուներ իր դժվարությունները: Նախ՝ այստեղ զգալի քանակ էին կազմում մահմեդական տարրերը: Բացի այդ, Սյունիքը չուներ ապստամբության հմուտ դեկավար: Այդ պատճառով, տեղի մելիքների խնդրանքով, վրաց Վախթանգ թագավորը Կապան է ուղարկում վրաց բանակում ծառայող հմուտ զորավար Դավիթ-Բեկին:

1722 թ. աշնանը նա գալիս է Կապան ու անցնում ապստամբության գլուխ: Դավիթն իր հետ բերել էր շուրջ 30 քաջակորով ռազմիկներ, այդ թվում՝ Մխիթարին, Ավթանդիլին, Բայանդուրին և ուրիշների: Սյունիքում գործող բոլոր մարտական խմբերը (Թորոս իշխանի, Պապի, Փարսպանի, Տեր Ավետիսի և այլոց) մտան Դավիթ-Բեկի ընդհանուր հրամանատարության տակ: Ստեղծվեց մի մեծ զորաբանակ: Մեկ տարի տևած հաղթական կրիվներից հետո դուրս վոնդվեցին Սյունիքում հաստատված խաներն ու բեկերը և տեղում ստեղծվեց Կապանի հայկական իշխանություն՝ Դավիթ-Բեկ գլխավորությամբ: Պարսկական շահը հարկադրված ճանաչեց Դավիթ-Բեկի իշխանությունը: Դավիթ-Բեկին իրավունք տրվեց կտրել սեփական դրամ: 1724 թ. քաջակորով զորական Մխիթարը նշանակվեց սպարապետ: Հայ ազատամարտիկները կառուցեցին և ամրացրին մի շարք ռազմավարական նշանակության բերդեր՝ Զևայի, Որոտանի, Տաթևի, Խնձորեսկի և այլն: Հատկապես աչքի էր ընկնում Հալիձորի անառիկ բերդը: Այդ ամրություններում ստեղծվեցին բերդապահ կայազորներ, որոնք հսկում էին տարածաշրջանի անվտանգությունը:

Պարսկական նվաճողներին հաջողությամբ հետ մղելուց և իրենց անկախությունը ամրագրելուց հետո Սյունիքն ու Արցախը դարձյալ պետք է դիմագրավեին օսմանյան զորքերին:

**Պայլարի ընթացքը** Երևանի գրավումից հետո Արևելյան Հայաստան մտած թուրքական բանակը 1726 թ. հարձակվեց Կապանի հայկական իշխանության վրա: Դավիթ-Բեկն ստիպված ամրացավ իր նոր կառուցած Հալիձորի բերդում: 1727 թ. պաշարվեց

Հալիծորը: Դավիթ-Բեկը և Մխիթար սաարապետը հակագրոհի դիմելով փայլուն հաղթանակ տարան թուրքերի դեմ: Նրանք համառ մարտեր մղելով թուրքերին դուրս քշեցին Կապանից ու Մեղրից:

**Մխիթար սղարադես** 1728 թ. հայ ազատագրական պայքարը մեծ կորուստ ունեցավ: Մահացավ Դավիթ-Բեկը: Նրա մահից հետո Սյունիքի ազատագրական պայքարի ղեկը ստանձնեց Մխիթար սպարապետը: Նա մի շարք հաղթանակներ տարավ, սակայն հայերի շարքերում գնալով խորանում էին անհամաձայնությունն ու պառակտումը: Թուրքերը, համալրում ստանալով, սկսում են ընդհանուր հարձակում: 1729 թ. թշնամին գրավում է Հալիծորը: Դրությունը գնալով ծանրանում էր: 1730 թ. Խնձորեսկի մոտ դավադրաբար սպանվում է Մխիթար սպարապետը: Դրանից հետո կազմալուծվում է ազատագրական պայքարը:

Արդեն 1730-ական թվականներին պարսից Խան-Չահը թուրքերին դուրս քշեց Հայաստանից ու Անդրկովկասից և հայ ժողովրդի հանդեպ վարեց բարյացակամ քաղաքականություն: Մասնավորապես, Ամենայն Հայոց կաթողիկոսությանը և հայ մելիքական տներին շնորհեց նոր կալվածքներ ու արտոնություններ:

Այսպիսով, 1722-30 թթ. ազատագրական պատերազմը պարտություն կրեց: Արցախի և Սյունիքի ապստամբությունների պարտության հիմնական պատճառն այն էր, որ դրանք չստացան համահայկական չափեր և սահմանափակվեցին միայն տեղային ընդգրկումներով: Անգամ Արցախն ու Սյունիքը իրենց պայքարում գործում էին առանձին-առանձին: Ակնկալվող օգնությունը չստացվեց Ռուսաստանից:

## 5. Հայ ազատագրական պայքարի նոր վերելքը XVIII դարի երկրորդ կեսին: Հովսեփ Էմին

**Ազատագրական շարժման նոր վերելքը** XVIII դարի երկրորդ կեսին հայ ազատագրական պայքարը նոր վերելք ապրեց: Այս շրջանում հայ ազատագրական շարժմանը գործուն մասնակցություն ունեցան հայկական գաղթօջախները: Ինչպես հայտնի է, հայ ժողովրդի պատմության հատկանշական կողմերից մեկը աշխարհի տարբեր երկրներում գաղթավայրեր հիմնելն էր,

որը հետևանք էր արտաքին ու ներքին մի շարք աննպաստ գործոնների: Հայկական գաղթավայրեր կային Թուրքիայում, Պարսկաստանում, Հնդկաստանում, Ռուսաստանում, Ուկրաինայում, Լեհաստանում, Բուլղարիայում, Ռումինիայում, Իտալիայում և այլ երկրներում: Հայ ազատագրական շարժման գործում առանձնապես աչքի ընկան հնդկահայ և ռուսահայ գաղթավայրերը:

**Հնդկահայ** XVIII դարից Հնդկաստանի մի շարք քաղաքներում՝ Մադգաղութը բասում, Կալկաթայում, Բոմբեյում և այլուր, հիմնվել էին հայաշատ գաղթավայրեր: Հնդկաստանի հայ առևտրարդյունաբերողները, չդիմանալով անգլիացիների մրցակցությանը, սկսում են մտածել հայրենիքը ազատագրելու և սեփական ազգային շուկա ստեղծելու մասին: Այս ճանապարհով Հնդկաստանում ձևավորվում է հայրենիքի ազատագրության գաղափարախոսությունը: Ռուսաստանում ապրող հայերի մեջ ազատագրական գաղափարախոսությունը նույնպես գերազանցապես կապված էր այն բանի հետ, որ ռուսական պետությունը ավելի մեծ հետաքրքրություն էր հանդես բերում Անդրկովկասի ու Վրևելքի հանդեպ: Հայ գործիչները փորձում էին օգտվել այդ հանգամանքից և ազատագրել Հայաստանը Ռուսաստանի օգնությամբ: Հարկ է նշել, որ հայ ազատագրական շարժման նպատակը ոչ թե Ռուսաստանին միանալն էր, այլ նրա օգնությամբ ու հովանավորությամբ անկախ պետականության վերականգնումը:

**Հովսեփ Էմինի գործունեությունը Արևոտյան Եվրոպայում** Հնդկահայ գաղութում հայ ազատագրական շարժման առաջին մունետիկը եղավ Հովսեփ Էմինը (1726-1809 թթ.): Երիտասարդ հասակում նա շփում է Եվրոպացիների հետ, տարվում ազատագրական գաղափարներով և, ռազմական գիտելիքներ ձեռք բերելու համար, 1751 թ. նավով Հնդկաստանից անցնում է Անգլիա: Էմինը սովորում է Լոնդոնի Վուլվիչի գինվորական ակադեմիայում և, միաժամանակ, կապեր հաստատում Անգլիայի հասարակական-քաղաքական դեկանար շրջանակների հետ՝ Հայաստանի ազատագրման նպատակով: Սակայն ապարդյուն ջանքերը նրան նոր կողմնորոշման էին մղելու:

## **Եմինը Ռուսաստանում և Անդրկովկասում**

Յովսեփի Եմինը, Իսրայել Օրու պես, հանգում է այն հետևողան, որ Հայաստանի ազատագրությունը հնարավոր է միայն Ռուսաստանի միջոցով: Այդ նպատակով նա լինում է Հայաստանում, Վրաստանում, (Հերակլ II թագավորի մոտ) և Ռուսաստանում (կանցլեր Մ. Ի. Վորոնցովի մոտ), բանակցություններ վարում, նրանց ծանոթացնում հայ ժողովրդի ազատագրման իր ծրագրին, որի էությունը հետևյալն էր. իիմնել հայ-Վրացական ամրակուր բանակ, լուսավորել ժողովրդին ազատագրական գաղափարներով, ապստամբել Թուրքիայի և Պարսկաստանի դեմ, Ռուսաստանի աջակցությամբ ազատագրել հայկական ու վրացական բոլոր հողերն ու ստեղծել հայ-Վրացական միացյալ թագավորություն՝ Հերակլ II-ի գլխավորությամբ:

Իր ծրագրերն իրագործելու համար Եմինը քարոզչական լայն աշխատանքներ ծավալեց թե՝ բուն Հայաստանում և թե՝ նրա սահմաններից դուրս: Նա զինյալ ջոկատներ հավաքագրելու փորձեր կատարեց: Մոսկվայում Եմինը կապեր հաստատեց հայ երկու նշանավոր իշխանական տների՝ Լազարյանների և Արդությանների, Ղարաբաղում հայ մելիքների հետ: Բայց աջակցություն չստանալով 1770 թ. նա վերջնականապես վերադառնում է Հնդկաստան:

Այսպիսով, Յովսեփի Եմինի (Իսրայել Օրու նման) Հայաստանի ազատագրմանը հետամտող ավելի քան քսանամյա ջանքերը շոշափելի արդյունք չտվեցին: Դրա իիմնական պատճառն այն էր, որ XVIII դարում հայ ժողովուրդը տակավին պատրաստ չէր ազատագրական պայքարի, իսկ Ռուսաստանը իր ռազմավարական պլաններում դեռևս օրակարգի հարց չէր դարձրել Անդրկովկասի նվաճումը:

## **6. Մադրասի Խմբակը և Հայաստանի ազարագրության ծրագրերը XVIII դարի երկրորդ կեսին**

**Մադրասի խմբակը** XVIII դարի երկրորդ կեսին հայ ազատագրական շարժման օջախներ դարձան հնդկահայ և ռուսահայ գաղթավայրերը: XVIII դարի 70-ական թվականներին Հնդկաստանի Մադրաս քաղաքում իիմնվել ու գործում էր հայրենասիրական խմբակ: Խմբակի ղեկավարներն էին մեծահարուստ Շահամիր Շահամիրյանը. Սովորես Բաղրամյանը և ուրիշներ: Նրանք հայ ժողովրդի

ազատագրության խնդիրը կապում էին, ինչպես ժողովրդի ապստամբական պայքարի, այնպես էլ Ռուսաստանի ու Վրաստանի գինված օգնության հետ: Սակայն խմբակի գործունեության գլխավոր ուղին ազատագրական գաղափարների գրավոր պրոպագանդն էր: Այդ նպատակով 1771 թ. Մադրասում հիմնվեց հայկական տպարան, և հաջորդ տարիներին այդ տպարանում հրատարակվեցին «Նոր տետրակ», որ կոչի յորդորակ» և «Որոգայթ փառաց» ոգեշուչ հայրենասիրական գրքերն ու տարածվեցին հայության շրջանում: Մադրասի խմբակը կապերի մեջ էր Հայաստանի ու Վրաստանի հետ: Այս աշխատություններում նրանք այն միտքն էին զարգացնում, որ ազատագրվելու համար հայ ժողովուրդը նաև պետք է լուսավորվի, նրա մեջ արթնանա ազատագրության ոգին: Դրան հասնելու համար պետք էր բացել դպրոցներ, լուսավորել մարդկանց, սովորեցնել ռազմական գործը, միջոցներ հավաքել և նախապատրաստվել զինված ապստամբության: Ինչպես տեսնուն ենք, վերոհիշյալ Երկրում Հայաստանի ազատագրումը իիմնականում համարվում էր հայերի գործը: Բայց դրա հետ մեկտեղ կարևոր նշանակություն էր տրվում նաև Ռուսաստանի ու Վրաստանի օգնությանը: «Որոգայթ փառաց» գրքում Մադրասի խմբակի անդամները առաջ էին քաշում ազատագրված Հայաստանում, Արևոտքի Երկրների օդինակով, հանրապետական-պառլամենտական և դրամատիրական կարգեր հաստատելու գաղափարը: Հայաստանի խորհրդարանը անվանվում էր «Հայոց տուն»: Մեծ տեղ էր տրվում մշակույթի զարգացմանը և այլն: Այսպիսով, «Նոր տետրակ», որ կոչի յորդորակ» և «Որոգայթ փառաց» քաղաքական-հրապարակախոսական աշխատությունները XVIII դարի հայ առաջադեմ քաղաքական մտքի նշանակալի ստեղծագործություններ են:

### **Հայաստանի ազատագրման ռուսահայ և հնդկահայ ծրագրերը**

XVIII դարի 80-90-ական թթ. Ռուսաստանն ավելի մեծ շահագրգություն է ցուցաբերում Անդրկովկասի հանդեպ, նույնիսկ ռազմարշավի գործնական

քայլեր է ձեռնարկում: Այս ամենը մեծ ոգևորություն է առաջացնում առանձնապես Ռուսաստանի հայ գաղթօջախներում Մոսկվայում, Պետերբուրգում, Աստրախանում, Ղզլարում, Նոր Նախիջևանում: Այստեղի հայ գաղթավայրերում լայն թափ են ստանում ազատագրական շարժման գաղափարները: Մշակվում են Հայաստանի ազատագրության ծրագրեր:

XVIII դարի 80-ական թվականներին կազմվում են Հայաստանի ազատագրության երկու հիմնական ծրագրեր: Դրանցից մեկը կազմել է Հովսեսի արքեպիսկոպոս Արղության-Երկայնաբազուկը Ռուսաստանում («Հյուսիսային ծրագիր»), իսկ մյուսը՝ Հնդկաստանում, Մադրասի խմբակի ղեկավար Շահամիր Շահամիրյանը («Հարավային ծրագիր»): Ավելի վաղ՝ 1769 թ., Հայաստանի ազատագրության համանման ծրագիր էր կազմել վաճառական Մովսես Սարաֆյանը:

Արղությանի առաջարկած նախագծով Հայաստանը ազատագրվելու էր Ռուսաստանի օգնությամբ և ստեղծվելու էր հայկական թագավորություն ռուսական հովանու ներքո: Այնտեղ պահպանվելու էին ավատական կարգերը:

Շահամիրյանի մշակած նախագծով Հայաստանի ազատագրությունը դարձյալ կապվում էր Ռուսաստանի օգնության հետ: Սակայն, ի տարբերություն «Հյուսիսային ծրագրի», «Հարավային ծրագրով» ազատագրված Հայաստանը պետք է հռչակվեր հանրապետություն՝ իր պառլամենտով (Հայոց տուն) և նախարարներով:

Բայց այս ծրագրերը այդպես էլ ուշադրության չարժանացան ռուսական իշխանությունների կողմից, չիրագործվեցին կյանքում և մնացին սոսկ որպես պատմական վավերագրեր: Ռուսաստանը Անդրկովկասում և Արևելքում իր քաղաքականությունը վարելիս առաջնորդվում էր սեփական ծավալապաշտական նպատակներով: Հայ ազատագրական շարժման գործիչները ի վերջո հարկադրված էին համակերպվել այն մտքին, որ Ռուսաստանի նպատակը ոչ թե Անդրկովկասի ազատագրությունն է, այլ իր գերիշխանության հաստատումը տարածաշրջանում:

## 7. Հայկական մշակույթը XV-XVIII դարերում

**Դրույթ** XV-XVIII դարերում թուրքմենական ցեղերի տիրակալությունը և թուրք-իրանական երկարատև պատերազմներն ու ավերածությունները խոչընդոտում էին հայկական մշակույթի բնականոն զարգացմանը:

Նախորդ դարերին հռչակ ձեռք բերած բարձրագույն դպրոցները (համալսարանները) աստիճանաբար դադարեցին գործելուց: Շատ դպրոցներ մարեցին: Սակայն բուն Հայաստանում խամրող կրթամշակութային կյանքը զարթոնք էր ապրելու հայկական գաղթավայրերում:

XVII-XVIII դարերում Վենետիկում, Նոր Զուղայում, Մադրասում, Կալկաթայում, Կ. Պոլսում, Զմյուռնիայում, Լվովում, Վիեննայում և այլուր հիմնվեցին բազմաթիվ կրթամշակութային կենտրոններ: 1717 թ. Իտալիայի Վենետիկ քաղաքի սուրբ Ղազար կղզում Մխիթար Սեբաստացին հիմնում է Մխիթարյան միաբանությունը, որին կից բացվում է նաև հայկական դպրոց: Յետագայում Մխիթարյանները միաբանություն և դպրոց են բացում նաև Վիեննայում: Մխիթարյան միաբանությունները և նրանց հիմնած կրթամշակութային հաստատությունները նշանակալի ավանդ ներդրեցին հատկապես հայագիտության և հայկական տպագրության զարգացման գործում: Միայն XVIII դարում Վենետիկի Մխիթարյանները իրատարակեցին շուրջ 100 անուն գիրք: Վենետիկի և Վիեննայի Մխիթարյան միաբանությունները, որոնք գործում են մինչև օրս, վիթխարի դեր խաղացին հայ հոգևոր և մշակութային կյանքում:

**Հայկական տպագրությունը** XVI դարում սկզբնավորվում է հայկական տպագրությունը: 1512 թ. Վենետիկում, Յակոբ Մեղապարտի ջանքերով, լուս տեսան հայերեն առաջին տպագիր գրքերը «Ուրբաթագիրքը», «Պատարագատետրը», «Աղոթագիրքը», «Պարզատումարը», «Տաղարանը»: Յետագայում հայերեն տպարաններ են հիմնվում Կ. Պոլսում, Լվովում, Վիեննայում, Ամստերդամում, Նոր Զուղայում, Մադրասում և, վերջապես, 1771 թ. առաջին անգամ բուն Յայաստանում (Էջմիածնում): Տպագրությունը հայ մշակութային կյանքի զարգացման նշանակալի երևույթներից է, որի շնորհիվ հեշտացվեց կրթական գործը, զարգացավ գիտությունը և, որ շատ կարևոր է, կորստից փրկվեցին հայ ձեռագիր շատ գանձեր, որոնք դարձան հասարակության լայն շրջանների սեփականություն:

XVIII դարի վերջին, դարձյալ հայերենիքից հեռու, սկիզբ դրվեց հայ պարբերական մամուլին: 1794 թ. Մադրաս քաղաքում լուս տեսավ հայերեն առաջին ամսագիրը «Ազդարարը», որի խմբագիրն էր Յարութուն քահանա Շմավոնյանը:

**Գիտությունը** XV-XVIII դարերում, չնայած անբարենպաստ պայմաններին, կանգ չառավ գիտական միտքը: Առանձնապես առաջադիմեցին պատմագրությունը, իրավագիտությունը, բժշկագիտությունը: XV-XVII դարերում հայ պատմագրությանը բնորոշ էին ոչ այնքան ընդարձակ երկերը, որոնք ներկայացնում էին հուշագրություն-

ներ, ժամանակագրություններ, օրագրություններ, ուղեգրություններ: Այդպիսի հեղինակներից էին Գրիգոր Դարանաղջին, Սիմեոն Լեհացին, Զաքարիա Ագուլեցին և ուրիշները: XV դարի պատմագիտական ամենաարժեքավոր երկը, թերևս, Թովմա Մեծոփեցու «Հանկ Թամուրի և նրա հաջորդների պատմությունը» աշխատությունն է: XVIII դարի աչքի ընկնող պատմագիրներից են Առաքել Դավիթեցին, Զաքարիա Քանաքեռցին և Երեմիա Չելեպի Քյոմյուրզյանը: Վերջինս գործել է Կ. Պոլսում և հիմնականում անդրադարձել Օսմանյան Թուրքիայի պատմությանը: XVIII դարի հայ ազատագրական շարժումների պատմության ուսումնասիրության համար մեծ արժեք է ներկայացնում նաև Եսայի Հասան-Զալալյանի «Պատմություն Աղվանիցը»: Թուրք-իրանական պատերազմների մասին է գրել Աբրահամ Երևանցին և այլն: Նշված ժամանակաշրջանի հայ պատմագիտական մտքի ամենախոշոր դեմքը Մխիթարյան միաբան Սիքայել Զամշյանն է (XVIII դար)՝ իր եռահատոր «Պատմություն հայոց» կոթողական աշխատությամբ: Նա, պատմահայր Մովսես Խորենացու նման, շարադրել է Հայաստանի ամբողջական պատմությունը հասցնելով մինչև իր օրերը՝ XVIII դարի վերջը: Զամշյանը հսկայական ազդեցություն ունեցավ հայ պատմագիտական մտքի զարգացման գործում:

XVIII դարի հայ իրավագիտական մտքի կոթող է Մադրասի խմբակի լույս ընծայած «Որոգայթ փառաց» գիրքը, որը պետք է դառնար ազատագրված Հայաստանի օրենսդիրը: Միջնադարյան հայ բժշկագիտության երկրորդ խոշոր ներկայացուցիչը Մխիթար Շերացուց հետո Ամիրդովլաթ Ամասիացին էր (XV դար): Նա գրել է «Օգուտ բժշկության» մեծարժեք աշխատությունը: Հատկապես ուշագրավ են նրա դեղագիտական ուսումնասիրությունները: Ի հայտ են գալիս հայ ալքիմիկոսներ:

**Գրականությունը** Միջնադարում տարածվում ու զարգանում է նաև **և արվեստը** ժողովրդական ու գուսանական քնարերգությունը:

Իրենց գեղարվեստական բարձր արժանիքներով առանձնանում են հայրենները, երկտող տներով երգերը (ոտանավորները): Մեզ են հասել սիրո, պանդխտության, բարոյակրատական և այլ բովանդակության մոտ 500 հայրեններ: Դրանց հեղինակներն անհայտ են, և այդ երգերը բավական երկար ժամանակ սխալմամբ վերագրվել են XVI դարի գուսան-քնարերգու Նահապետ Քուչակին:

XVII դարի հայ գրականության ամենաակնառու ներկայացուցիչ-

Աերից է բանաստեղծ, Երաժիշտ ու նկարիչ Նաղաշ Յովնաթանը, որը թիֆլիսում արվեստագետ գերդաստանի սկզբնավորողն էր: Իսկ XVIII դարում հայ գեղարվեստական գրականության թագն ու պսակը կազմեց Սայաթ-Նովան, որը միաժամանակ հայ գուսանական Երաժշտության ամենախոշոր ներկայացուցիչն է:

Յայաստանի տնտեսական ու քաղաքական ծանր վիճակը բացասաբար անդրադարձավ առանձնապես արվեստի՝ շինարարության, ճարտարապետության, կերպարվեստի և այլ ճյուղերի վրա: Այնուամենայնիվ, շարունակվեցին խաչքարային արվեստը, մանրանկարչությունը: Խաչքարային արվեստի կենդանի վկաներ են Յին Զուղայի, Նորադուզի և այլ գերեզմանոցների հազարավոր խաչքարերը: Առաջընթաց ապրեց կիրառական արվեստը, հատկապես գորգագործությունը: Առանձնապես մեծ համբավ ունեին վիշապների պատկերներով հայկական գորգերը՝ «վիշապագորգերը»: XVII դարի արվեստի ուշագրավ գործ է նորջուղայեցիների՝ ցար Ալեքսեյ Միհայլովիչին նվիրած «Աղամանոյա գահը», որն այժմ էլ զարդարում է Մոսկվայի Կրեմլի զինապալատը: Նոր Զուղայի հայ նկարիչ-արվեստագետներից էր Բոգդան Սալբանովը (XVII դար), որը մեծ ծառայություններ մատուցեց ոուսական արվեստի զարգացմանը:

Այդ շրջանում հայ արվեստի ամենանշանավոր երևոյթը նկարչությունն էր, որը կապված էր գերազանցապես Յովնաթանյանների տաղանդավոր տոհմի (Նաղաշ, Յակոբ, Աղաֆոն, Յարություն Յովնաթանյանների) բեղմնավոր գործունեության հետ:

Յայ ճարտարապետական արվեստի լավագույն ավանդները շարունակվեցին գաղթօջախներում ու հատկապես Կ. Պոլսում: Վերջինիս վեհաշուք տաճարների ու պալատների կառուցման գործում անուրանալի է հայ ճարտարապետ-շինարարների ներդրումը: Առանձնապես հանրաճանաչ են ճարտարապետ Սինանը (XVI դար) և Պալյանների նշանավոր գերդաստանը:

## ԲԱԺԻՆ ԵՐՐՈՐԴ

# ՆՈՐ ԵՎ ՆՈՐԱԳՈՒՅՆ ԾՐՁԱՆ

Յայ ժողովրդի պատմության նոր շրջանն ընդունված է համարել XIX դարի սկիզբը և ոչ ամենայն պատահականորեն:

Յայ և Անդրկովկասի մյուս ժողովրդների ճակատագրում ուղենցային իրադարձություն էր տարածաշրջանի միացումը Ռուսաստանին, որն էլ պայմանավորեց նոր տեղաշարժեր ու փոփոխություններ հայ ժողովրդի քաղաքական, տնտեսական ու հոգևոր կյանքում:

Ի տարբերություն արևմտաեվրոպական երկրների, որտեղ նոր կապիտալիստական տնտեսական ու քաղաքական հարաբերությունների հաղթանակների ժամանակաշրջանը համարվում է XVII-XVIII դարերը, բուն Յայաստանի համար Արևմտաթքի առաջադիմական գործընթացները էական ազդեցություն չունեցան: Ողջ XVIII դարի ընթացքում Յայաստանը շարունակում էր մնալ որպես ավատատիրական, հետամնաց երկիր, այն էլ՝ օտար նվաճողների (Պարսկաստանի և Թուրքիայի) տիրապետության տակ: Իսկ այն, ինչը տնտեսական, գաղափարական տեղաշարժերի, ազատագրական ծրագրերի ձևով դրսնորվում էր հայկական գաղթօջախներում, նախադրյալներ ու պարարտ հող չունենալով բուն հայրենիքում Յայաստանում, մնում էր ընդամենը ցանկալի գաղափար:

Արդեն Ռուսաստանին միացումից հետո Արևելյան Յայաստանի հասարակական-տնտեսական, քաղաքական ու մշակութային կյանքում սկսվում են որակական տեղաշարժեր ու փոփոխություններ, որոնք նույն դարի երկրորդ կեսից դառնում են անշրջելի:

Դնի կողքին գարգանում են ապրանքակապիտալիստական հարաբերությունները, արմատավորվում է աշխարհաբար գրավոր լե-

գուն, հարստանում ու բազմաշերտ է դառնում իայ հասարակական միտքը, ձևավորվում է իայ ազատագրական գաղափարաբանությունը և այլն:

Այդ նույն ժամանակաշրջանում (սկսած XIX դարի 30-ական թթ.) սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական ու մշակութային որոշ տեղաշարժեր ու փոփոխություններ են նկատվում նաև Արևմտյան Հայաստանում: Սյս ամենը նկատի ունենալով էլ իայ ժողովրդի պատմության նոր շրջանը սկսում ենք XIX դարից:

## Գլուխ տասներկուերորդ

# ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻԱՅՈՒՄ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ (XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԵՐԵՍՆԱՍՅԱԿ)

## 1. Իրադրությունը Հայաստանում XIX դարի սկզբին

**Հայ ժողովրդի  
վիճակը XIX դարի  
սկզբին**

XIX դարի սկզբին Հայաստանը շարունակում էր բաժանված մնալ երկու մասի: Հայաստանի արևելյան մասը զավթել էր շահական Պարսկաստանը, իսկ արևմտյանը՝ սուլթանական Թուրքիան: Երկու հատվածներում էլ հայության վիճակը ծանր էր: Նրանք ենթարկվում էին ոչ միայն սոցիալ-տնտեսական հարստահարման, այլև ազգային ու կրոնական հալածանքների ու բռնությունների: Իրականացվում էր հայերի բռնի կրոնափոխման քաղաքականություն: Թուրքիայում և Պարսկաստանում հայերը համարվում էին «գյավուր» (անհավատ), «ռայա» (իրավագուրկ հպատակ): Հայ գյուղացին վճարում էր մի քանի տասնյակ տեսակի հարկեր, կատարուն կոռ ու բեգար: Առանձնապես ծանր էին տասանորդը (աշարը), մալշահարկը, հողահարկը, գլխահարկը (ջիզիեն), զինվորական հարկը (բեղելի ասկերիեն) և այլն: Ժողովրդի գլխին մշտապես կախված էր ֆիզիկական բնաջնջման ու ձուլման սպառնալիքը: Այդ իսկ պատճառով թուրք-իրանական բռնակալ լծի թոթափումը հայ ժողովրդի համար դարձավ առաջնահերթ ու կենսական նշանակություն ունեցող հարց:

Հայերը, տեսնելով, որ սեփական համեստ ուժերով չեն կարող ազատագրվել, իրենց հույսը մեծապես կապեցին Ռուսաստանի օգ-

նույթյան հետ: Իսկ XIX դարի սկզբներից Ռուսաստանը, հետանուտ լինելով իր ծավալապաշտական պլաններին, վճռական քայլեր ձեռնարկեց Անդրկովկասն ու Հայաստանը նվաճելու ուղղությամբ: Հատկանշական է, որ Ռուսաստանի նվաճողական ձգտումները օբյեկտիվորեն համընկան հայ ժողովրդի ազատագրական ակնկալություններին:

Հայ ժողովուրդը, նրա մտավորականության լավագույն ներկայացուցիչները, սկսած XVII-XVIII դարերից և նույնիսկ վաղ ժամանակներից, Հայաստանի ազատագրության ուղիներ էին որոնում: Հայերը իրենց հույսը սկզբում կապեցին արևմտաեվրոպական պետությունների, անգամ Յոռմի պապի օգնության հետ, սակայն շուտով, հիասթափվելով այդ երկրների կառավարողների սին խոստումներից, իրենց բախտը, հավատը, հետևապես և հայ ժողովրդի ազատության գործը կապեցին հյուսիսի մեջ հարևանի՝ Ռուսաստանի ու ռուս ժողովրդի օգնության հետ:

Ռուսաստանը ձգտում էր օգտագործել հայերի և վրացիների ազատագրական պայքարը՝ իր նվաճողական նպատակների համար: Այս հիմքի վրա խիստ սրվեցին ռուս-պարսկական հարաբերությունները, որն ի վերջո հանգեցրեց պատերազմի:

**1804-1813 թթ.** 1801 թ. հունվարի 18-ին Պավել I-ի հրովարտառուս-դարսկական

**և 1806-1812 թթ.** կով Արևելյան Վրաստանը (Քարթի-Կախեթին) պաշտոնապես կցվեց Ռուսական կայսրությանը: Դրանից հետո Ռուսաստանը երկու հաղթական պատերազմ մղեց. մեկը՝ 1804-1813 թթ. Պարսկաստանի, իսկ մյուսը՝ 1806-1812 թթ. Թուրքիայի դեմ: Այս և հետագա պատերազմների հրահրման գործում, անշուշտ, սադրիչ դեր խաղացին Անգլիան և Ֆրանսիան, որոնք, անհանգստանալով Մերձավոր Արևելքում Ռուսաստանի ազդեցության ուժեղացումից, աջակցում էին Պարսկաստանին ու Թուրքիային, իրահրում վերջիններիս Ռուսաստանի դեմ: Անգլիան և Ֆրանսիան ձգտում էին ամեն կերպ կասեցնել Ռուսաստանի առաջխաղացումը դեպի Անդրկովկաս և Մերձավոր Արևելք, Վախենալով, որ դա հետագայում կարող էր վտանգավոր լինել իրենց գաղութների համար: Եվ կարելի է ասել, որ այս հանգամանքն է եղել մի կողմից՝ Անգլիայի ու Ֆրանսիայի, իսկ մյուս կողմից՝ Ռուսաստանի միջև Մերձավոր Արևելքում մշտապես բորբոքվող հակամարտությունների գլխավոր առանցքը:

1804-1813 թթ. ռուս-իրանական պատերազմի ընթացքում ռուսական զորքերը երկու անգամ՝ 1804 թ. Պ. Ցիցիանովի և 1808 թ. զորավար Գուդովիչի հրամանատարությամբ, փորձեցին գոավել Երևանի անառիկ բերդը, սակայն երկու դեպքում էլ՝ անհաջող: Այնուամենայնիվ, ձգձգվող այս պատերազմում Ռուսաստանը նվաճեց արևելահայ մի շարք շրջաններ: Եվ 1813 թ. հոկտեմբերին Արցախի Գյուլիստան բնակավայրում կնքվեց ռուս-իրանական հաշտության պայմանագիրը: Այդ պայմանագրի համաձայն, Ռուսաստանին անցան Արևելյան Անդրկովկասի (Ներկայիս Ադրբեյջանի) մեծագույն մասը, ինչպես նաև հայկական Լոռու, Շիրակի, Ղազախի, Շամշադինի, Արցախի և Զանգեզուրի շրջանները: Գյուլիստանի պայմանագիրը որոշակի նախադրյալներ ստեղծեց Արևելյան Հայաստանի նաև մյուս գավառների նվաճման համար:

1806-1812 թթ. ռուս-թուրքական պատերազմը, որը մղվում էր Երկու ռազմաճակատով Կովկասյան ու Բալականյան, դարձյալ ավարտվեց Ռուսաստանի հաղթանակով: Սակայն 1812 թ. Բուխարեստում, հայագիտ դիվանագետ Մանուկ բեյի բնակարանում կնքված հաշտության պայմանագիրը որևէ տարածքային փոփոխություն չմտցրեց Արևմտյան Հայաստանում:

Այսպիսով, XIX դարի սկզբին արևելահայ մի շարք շրջաններ նվաճվում են Իրանից ու միացվում Ռուսական կայսրությանը, իսկ Արևելյան Հայաստանի մնացած մասը՝ Երևանի ու Նախիջևանի խանությունները և ամբողջ Արևմտյան Հայաստանը, տակավին գտնվում էին համապատասխանաբար Իրանի և Թուրքիայի գերիշխանության ներքո:

## 2. 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմը և Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին

**Պատերազմի սկիզբը և ընթացքը** 1826 թ. ամռանը, Անգլիայի դրդմամբ, սկսվեց ռուս-պարսկական երկրորդ և մինչև օրս այդ կողմերի միջև մղված վերջին պատերազմը: Իրանը չէր հաշտվում Գյուլիստանի պայմանագրով Ռուսաստանին անցած Անդրկովկասյան տարածքների կորստի հետ: Ռուսաստանն էլ, իր հերթին, ցանկանում էր զարգացնել հաջողությունը և իր դիրքերն ավելի ամրապնդել Կովկասում ու Մերձավոր Արևելքում:

Պարսկական 60 հազարանոց բանակը Աբաս Միրզայի գլխավո-

րությամբ ներխուժեց Արցախ և շրջապատեց Շուշիի բերդը։ Չնայած 1825 թ. Ալեքսանդր I-ի մահվան ու դեկաբրիստների հայտնի ելույթի հետևանքով Ռուսաստանի ռազմաքաղաքական իրավիճակն այնքան էլ կայուն չէր, այնուամենայնիվ, դա չէր խանգարում, որպեսզի Անդրկովկասում տեղակայված ռուսական փոքրաթիվ կայազորները կարողանան դիմակայել թշնամու գերակշիռ ուժերին։ Ուժեղ դիմադրություն ցույց տրվեց Շուշիում, Շամխորում, Գյումրիում, Ղարաքիլսայում։ Շուշիի հերոսական պաշտպանությունը տևեց 47 օր։ 1826 թ. սեպտեմբերին հայազգի զորավար Վ. Մադաբովը Շամխորի մոտ պարտության մատնեց պարսկական մի զորամասի։

## **Հայերի մասնակցությունը դատերազմին**

Պարսկական տիրապետությունը թոքագիրը ձգտում է համակված հայերը ակտիվ մասնակցություն ունեցան ռազմական գործողություններին։ Հայերի համակրանքը ռուսների կողմն էր։ Պատերազմի ընթացքում նրանք համակողմանի նյութական, տեխնիկական, մարդկային ու քաղոյական օգնություն ու աջակցություն ցույց տվեցին ռուսական գենդի հաղթանակին։ Հայ հոգևոր և քաղաքական գործիչ, արքեպիսկոպոս Ներսես Աշտարակեցու նախաձեռնությամբ Թիֆլիսում և այլ վայրերում կազմակերպվեցին հայկական կամավորական ջոկատներ, որոնցում ընդգրկված հայ մարտիկների թիվը հասավ երկու հազարի։

Այդ ջոկատներն ունեին իրենց զինադրոշը և հայազգի հրամանատարները։ Նրանք պետք է մասնակցեին Արևելյան Հայաստանի ազատագրմանը։ Հայ կամավորները առանձնապես աչքի ընկան երևանի գրավման ժամանակ։ Ռուսական զորքերի գլխավոր հրամանատարն էր Կովկասի կառավարչապետ, զորավար Ա. Երմոլովը։ Սակայն բարձրագույն իշխանությունները, նրան կասկածելով դեկաբրիստների հետ ունեցած հնարավոր կապերի մեջ, հետ են կանչում Կովկասից և գլխավոր հրամանատար նշանակում զորավար Իվան Պասկևիչին։

**Երևանի գրավումը** 1827 թ. գարնանը ռուսական զորքերը, զորավար Իվան Պասկևիչի հրամանատարությամբ, շարժվեցին դեպի Երևանի և Նախիջևանի խանությունները։ Մինչ Երևանի գրավումը, 1827 թ. օգոստոսի 17-ին, Աշտարակի շրջանի Օշական գյուղի մոտ տեղի ունեցավ արյունահեղ ճակատամարտ։ Ռուսական 3 հազարամոց ջոկատը զորավար Կրասովսկու հրամանատարությամբ կա-

րողացավ դժվարին հաղթանակ տանել: Օշականի ճակատամարտը, փաստորեն, Երևանի գրավման նախերգանքն էր: Սեպտեմբերի 25-ից պաշարվեց Երևանը, և մեկ շաբաթ տևած շրջափակումից ու համար մարտերից հետո՝ 1827 թ. հոկտեմբերի 1-ին, գրավվեց անառիկ համարվող ամրոցը: Երևանի գրավման ժամանակ առավել աչքի ընկան աքսորյալ դեկաբրիստներ Մ. Պուշչինը, Ե. Լազինովը, Ա. Գանգերլովը, Վ. Կոլխովսկին և ուրիշներ: Ամրոցի գրավման դեպքերը գեղարվեստական բարձր վարպետությամբ է նկարագրել դեպքերին ականատես ու մասնակից, իայ մեծանուն գրող ու լուսավորիչ Խ. Աբովյանն իր «Վերք Հայաստանի» վեպում:

**Թուրքմենչայի հաւտության դայմանագիրը** Երևանի գրավումը գործնականում կանխորոշեց պատերազմի ելքը՝ հօգուտ Ռուսաստանի: Շուտով ռուսական գորամասերը անցնում են Արաքս գետը, գրավում թափրիզ քաղաքը և շարժվում դեպի Թեհրան: Չահը ստիպված հաշտություն է խնդրում: Եվ 1828 թ. փետրվարի 10-ին թափրիզից Թեհրան տանող ճանապարհի վրա գտնվող Թուրքմենչայ գյուղում կնքվում է հաշտության պայմանագիր: Այդ պայմանագրով Ռուսաստանի տիրապետության տակ է անցնում Արևելյան Հայաստանն ամբողջությամբ Երևանի և Նախիջևանի խանությունները: Ռուս-պարսկական պետական սահմանագիծը դարձավ հիմնականում Արաքս գետի հունը:

Այդպիսով, Թուրքմենչայի պայմանագիրը ամբողջացրեց Գյուլիստանի դաշնագիրը և դրանով իսկ ամբողջ Արևելյան Հայաստանը միացվեց Ռուսական կայսրությանը: Բայց արևելահայ տարածքները (գավառները) չամբողջացվեցին մեկ վարչատարածքային միավորի մեջ, որն էլ հետագայում (ընդհուպ մինչև մեր օրերը) պետք է տեղի դար անդրկովկասյան ժողովուրդների միջև հողային-սահմանային վեճերի ու ազգամիջյան կոնֆլիկտների:

**Պարսկահայերի ներգաղթը** Թուրքմենչայի հաշտության պայմանագրի կարևոր կետերից մեկն էլ այն էր, որ թույլատրվեց Պարսկաստանի տիրապետության տակ գտնվող հայերին անարգել ներգաղթել Արևելյան Հայաստան՝ ռուսական տիրապետության տակ: Իրոք, պատերազմի ավարտից հետո պարսկահայերի մեծ մասը, վախենալով վրեժինդրությունից, ցանկություն հայտնեց գաղթել Ռուսաստանին նոր միացված հայրենի տարածքներ: 1828-

1829 թթ. ընթացքում, այդ մեծ գաղթի հետևանքով, շուրջ 45 հազար պարսկահայեր (8,3 հազար ընտանիք) հաստատվեցին Արևելյան Հայաստանի հայաքափ Եղած շրջաններում: Յայերի տեսակարար կշիռը բուն հայրենիքում սկսեց մեծանալ: Ներգաղթի կազմակերպման գործում մեծ դեր խաղացին ուս գրող ու դիվանագետ Ա. Գրիբոյեդովը, ինչպես նաև Ն. Աշտարակեցին, գնդապետ Ղ. Լազարյանը և ուրիշներ: Որպես արտոնություն՝ գաղթականները վեց տարով ազատվում էին հարկեր վճարելուց: Պարսկահայերի ներգաղթը պետք է դիտել որպես ցանկալի գրեսույթ նաև Ռուսաստանի համար: Հանձին այդ գաղթականների, Ռուսաստանը ձեռք բերեց մի խաղաղ ու աշխատասեր ժողովուրդ, որի վրա հենվելով՝ նա պետք է զարգացներ իր արևելյան քաղաքականությունը:

**Միացման  
նույնականությունը** Ինչ խոսք, Արևելյան Հայաստանի գրավումը և միակցումը Ռուսական կայսրությանը օբյեկտիվորեն ունեցավ առաջադիմական նշանակություն թե քաղաքական, թե տնտեսական և թե մշակութային տեսակետից: Արևելյան Հայաստանը դարձավ հայահիւսվաքման և հետագայում՝ հայոց պետականության կայացման օջախ:

Անտարակույս, Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին նշանակալի իրադարձություն եղավ հայ ժողովրդի պատմական ճակատագրում.

ա) ապահովեց ժողովրդի կյանքի ու գույքի անվտանգության կայուն երաշխիքներ, որոնք բացակայում էին թե Իրանում և թե Թուրքիայում,

բ) նպաստեց Հայաստանում արտադրողական ուժների զարգացմանը: Ռուսաստանը գտնվում էր տնտեսական զարգացման ավելի բարձր աստիճանի վրա. որն իր բարերար ազդեցությունը պետք է թողներ նաև նրա կազմի մեջ մտնող Արևելյան Հայաստանի վրա: Մի քանի տասնամյակ անց Հայաստանում ևս սկսում են զարգանալ ապրանքա-շուկայական (կապիտալիստական) հարաբերությունները, իիմնում են մանուֆակտուրաներ, ֆաբրիկա-գործարաններ, կառուցվում է երկաթուղի, բարեկարգվում՝ հաղորդակցության մյուս միջոցները: Նոր հարաբերությունների արմատավորումը լայն հնարավորություններ էր ստեղծում հայ ժողովրդի համար՝ զարգացնելու իր ստեղծագործական ուժերը: Միացումը նպաստեց Արևելյան Հայաստանի տնտեսական զարգացմանը,

գ) միացման ակտը կարևոր նշանակություն ունեցավ նաև հայկական մշակույթի զարգացման համար: Ռուսական հարուստ մշակույթն իր բարերար ազդեցությունն ունեցավ հայ բազմադարյան մշակութային ավանդների զարգացման գործում: Հայ ժողովուրդը հաղորդակից դարձավ ռուս առաջադեմ հասարակական-քաղաքական մտքին, երկրում կատարվող տարբեր գործընթացներին: Տասնյակ ու հարյուրավոր հայ օժտված երիտասարդներ սովորում էին Ռուսաստանի կրթական, գիտական ու մշակութային հաստատություններում:

Սակայն ծշմարտությունը պահանջում է ասել, որ Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին ազատություն ու անկախություն չբերեց հայ ժողովուրդին, ինչին նա ձգտում էր դարեր շարունակ: Չնայած դեպի ռռասները հայերի մեծ համակրանքին և պատերազմների ժամանակ Ռուսաստանի կողմում ակտիվ մասնակցությանը, Արևելյան Հայաստանը հայ գործիչների կողմից ակնկալվող ինքնավարություն անգամ չստացավ և շատ շուտով վերածվեց կայսրության մի սովորական գաղութային ծայրագավառի: Այսուհանդերձ, ռուսական գերիշխանությունը, իր նեգատիվ կողմերով հանդերձ, նախորդ նվաճողների համեմատ ավելի տանելի էր: Այնպես որ, Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացման հարցում հավասարապես անընդունելի պետք է համարել հայ պատմագրության մեջ հանդիպող «միացումը բացարձակ բարիք կամ չարիք» ծայրահեղ գնահատականները:

### 3. 1828-1829 թվականների պատերազմը

**Ռազմական  
գործողությունները**  
**Կովկասյան**  
**ռազմաճակատում**

Պարսկաստանի հետ պատերազմը հաղթականորեն ավարտելուց հետո՝ 1828 թ. ապրիլին, Ռուսաստանը պատերազմ սկսեց Թուրքիայի դեմ նպատակ ունենալով նվաճել նոր տարածքներ: Ռազմական գործողություններն ընթանում էին Երկու ռազմաճակատով՝ Բալկանյան և Կովկասյան: Ռուսական բանակը, գորավար Պասկեիչի հրամանատարությամբ, անցնում է Ախուրյան գետը և շարժվում դեպի Կարս:

1828 թ. հուլիսի 23-ին Պասկեիչի գորաբանակը հումկու գրոհով վերցնում է Կարսի ամրոցը: Կարսի գրավումն ունեցավ ռազմավարական նշանակություն: Ապա ռուսական գորքերը գրավեցին Ախալքալաքը, Ախալցխան, Արդահանը, Օլթին, Բայազետը: Վերջինիս գրա-

Վումից հետո՝ 1829 թ. ամռանը, Վանի կուսակալը 15 հազ. գործով հարձակվում ու պաշարում է թերդը: Բայազետի ամրոցի ռուսական փոքրաքանակ կայազորը, տեղի հայերի աջակցությամբ, համարորեն պաշտպանվում է ու հետ մղում թշնամուն:

1829 թ. հունիսի 27-ին ռուսական գործերը գրավեցին վարչական և ռազմական նշանավոր կենտրոն Կարինը (Էրզրում): Հիշեցնենք, որ Երզրումի գրավման օրերին՝ Թիֆլիս-Ալեքսանդրապոլ-Կարս ուղղությամբ գործող բանակ եկավ ռուս հանճարեղ բանաստեղծ Ա. Ս. Պուշկինը: Նա հանդիպեց իր ընկերներին ու ծանոթներին, մի քանի օր մնաց Երզրումում: Մեծ բանաստեղծի՝ դեպի Կովկաս ու Արևմտյան Հայաստան կատարած ճանապարհորդության հուշերն ու տպավորությունները նոթագրված են նրա «ճանապարհորդություն դեպի Երզրում» հայտնի երկում: Ռազմավարական տեսակետից Կարինը համարվում էր Արևմտյան Հայաստանի նվաճման բանալին, և նրա գրավումը գործնականում կանխորոշեց պատերազմի ելքը Կովկասյան ռազմաճակատում:

Հայերն ակտիվ մասնակցություն ունեցան ինչպես ռուս-պարսկական, այնպես էլ ռուս-թուրքական պատերազմներին և համակողմանի օգնություն ցույց տվեցին ռուսական գործերին: Միայն Բայազետում կազմավորվել էր 500 մարդուց բաղկացած կամավորական ջոկատ: Այստեղ էլ հայ կամավորներն աչքի ընկան արիությամբ ու տոկունությամբ:

**Աղրիանուղուսի Ռուս-թուրքական պատերազմը ինչպես Բալկանյան, հաւսության այնպես էլ Կովկասյան ռազմաճակատում ավարտայմանագիրը վում է Ռուսաստանի հաղթանակով:**

1829 թ. սեպտեմբերի 2-ին Աղրիանապուլսում (Կ. Պոլսից ոչ հեռու) կնքվում է հաշտության պայմանագիր: Այդ պայմանագրով Ռուսաստանը տիրում է Սև ծովի Կովկասյան ափերին, ինչպես նաև Ախալքալաքի ու Ախալցխայի գավառներին: Աղրիանապուլսի պայմանագիրը, Բուխարեստի պայմանագրի նման, էական տարածքային փոփոխություն չմտցրեց Արևմտյան Հայաստանում:

Չնայած Ռուսաստանը պատերազմի ժամանակ զգալի տարածք-ներ գրավեց Արևմտյան Հայաստանում (Կարսը, Բայազետը, Ալաշկերտը, Արդահանը, Երզրումը, Խնուսը, Բաբերդը և այլն), սակայն եվրոպական տերությունների՝ Անգլիայի, Ֆրանսիայի, Ավստրիայի ճնշման տակ դրանք հարկադրված վերադարձրեց Թուրքիային: Այդ

տերությունները չեին ցանկանում, որ Ռուսաստանն իր դիրքերն ամրացնի Բալկաններում ու Մերձավոր Արևելքում: Այսպիսով, Արևմտյան Հայաստանը կրկին մնաց թուրքական գերիշխանության տակ:

**Արևմտահայերի գաղթը** 1829 թ. Աղրիանապոլսի պայմանագիրը, Թուրքմենսայի դաշնագրի նման, իրավունք էր տալիս հայերին արտագաղթել Արևմտյան Հայաստանից և հաստատվել Ռուսաստանի տիրապետության տակ: Դրա հետևանքով 1829-1830 թթ. ընթացքում Կարսից, Կարինից, Բայազետից և այլ շրջաններից ավելի քան 75 հազար հայեր (12,3 հազ. ընտանիք) գաղթում ու բնակություն են հաստատում Ռուսաստանին նոր միացված Ախալքալաքի ու Ախալցխայի գավառներում, ինչպես նաև Շիրակում, Սևանա լճի ավագանում և այլուր:

Այսպիսով, այդ երկու (պարսկահայերի և արևմտահայերի) մեծ ներգաղթերի ( $45+75=120$  հազ.) հետևանքով ժողովրդագրական լուրջ փոփոխություն կատարվեց Արևելյան Հայաստանում՝ հօգուտ հայերի: Եթե մինչև միացումը Արևելյան Հայաստանում հայերը կազմում էին ընդամենը 57 հազար մարդ կամ 23,3 տոկոս, ապա Ռուսաստանին միանալուց կարծ ժամանակ անց, 1829-1831 թթ., ռուս հետազոտող Իվան Շոպենի հաղորդած տվյալներով, կազմեցին 142 հազար մարդ կամ առկա բնակչության կեսից ավելին 58,8 տոկոսը: Հայերի ներգաղթը նպաստեց Արևելյան Հայաստանի քաղաքական և տնտեսական առաջընթացին: Սակայն չպետք է անտեսել այն հանգամանքը, որ արևմտահայերի այդ և հետագա մեծ ու փոքր գաղթերի հետևանքով նոսրանում ու ամայանում էր Արևմտյան Հայաստանը հայությունից, որն էլ հետագայում բացասաբար անդրադարձավ նրա համախումբ ինքնապաշտպանության, ազատագրման ու, վերջին հաշվով, Հայկական հարցի լուծման վրա:

## Գլուխ տասներեքերորդ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԽIX ԴԱՐԻ 30-70-ԱԿԱՆ ԹԹ.

#### 1. Արևելյան Հայաստանը Ռուսաստանի կազմում (ԽIX դարի 30-60-ական թվականներ)

**Հայկական մարզը** 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի ժամանակ հայերը, մեծ հույսեր կապելով ռուսական զորքերի հաղթանակների հետ, ծրագրեր էին կազմում ապագա ազատագրված Հայաստանի կարգավիճակի վերաբերյալ: 1827 թ. վերջերին ռուսահայ մի խումբ գործիչներ՝ Խ. Լազարյանը, Ա. Խուդաբաշյանը և Կ. Արդության-Երկայնաբազուկը, նախագիծ են կազմում Ռուսաստանի հովանու տակ ինքնավար Հայաստան ստեղծելու վերաբերյալ: Այդ նախագծի համաձայն, Արևելյան Հայաստանը պետք է ունենար ինքնավարություն, իր օրենքները, զինանիշը և ազգային դրոշը: Պետական պաշտոնյաները պետք է լինեն հայեր: Երկրի պաշտպանության համար պետք է ստեղծվեր հայկական գվարդիա և այլն: Նման նախագծերը հայոց անկախ պետականությունը վերականգնելու նպատակ էին հետապնդում:

Սակայն ցարական ինքնակալությունը, առաջնորդվելով իր կայսերապետական քաղաքականությամբ, մերժեց Հայաստանին ինքնավարություն տալու նախագիծը և 1828 թ. Թուրքմենչայի պայմանագրով Ռուսաստանին անցած Երևանի և Նախիջևանի նախկին խանություններից ու Օրդութաղի օկրուգից, սկսած մարտ ամսից, կազմեց վարչական մի միավոր, որը կոչվեց «Հայկական մարզ» և մտցվեց կայսրության կազմի մեջ: Երկրամասում աստիճանաբար արմատավորվեցին ռուսական օրենքներ ու վարչաձևեր:

1830-40-ական թվականներին Կովկասում ու Հայաստանում կատարվեցին մի շարք կառավարչական փոփոխություններ: 1840 թ. Վերացվեց Հայկական մարզը և մտցվեց նոր կազմված Վրացա-իմերեթական նահանգի, իսկ Ղարաբաղը և Զանգեզուրը՝ Կասպիական մարզի մեջ:

1844 թթ. իիմնվեց Կովկասի փոխարքայությունը: Առաջին փոխարքա նշանակվեց Մ. Վորոնցովը: Իսկ 1849 թ. հունիսին կազմվեց Երևանի նահանգը, որի մեջ մտան Երևանի, Ալեքսանդրապոլի, Նախիջևանի, Նոր Բայազետի և Օրդուբադի գավառները: Հետագայում գավառների թիվն ավելացավ:

**Յարիզմի գաղութային Զնայած Արևելյան Հայաստանի միացումը Խաղաքականությունը** Ռուսաստանին շատ կողմերով ունեցավ առաջադիմական նշանակություն, սակայն այն

ազատություն չբերեց հայ ժողովրդին և չէր էլ կարող բերել: Ասենք՝ ինչպես կարող էր ռուսական տիրապետությունը ազատություն բերել հայ ժողովրդին, եթե ժողովուրդների բանտ համարվող այդ տերությունում, ինքը՝ ռուս ժողովուրդը, չուներ սոցիալ-քաղաքական ազատություններ: Բնականաբար, Արևելյան Հայաստանը վերածվեց Ռուսական կայսրության մի հետամնաց ծայրագավառի, իսկ հայ ժողովուրդը ենթարկվեց ազգային-գաղութային ճնշումների: Արևելյան Հայաստան ներգաղթած արևմտահայերի ու պարսկահայերի որոշ մասը, չհարմարվելով նոր պայմաններին ու վարչակարգին, ստիպված վերադարձավ իր նախկին բնակության վայրերը: Միացումից հետո Հայաստանը Ռուսաստանի համար դարձավ թե՛ ռազմավարական հենակետ և թե՛ տնտեսական առումով հումքի աղբյուր: Բավական է մատնանշել, որ միացումից անմիջապես հետո Հայաստանից դեպի Ռուսաստան էր արտահանվում տարեկան 100 հազար փութ բամբակ:

Յարիզմի գաղութային քաղաքականությունը Հայաստանում դրսևորվել է հետևյալ իիմնական ուղղություններով:

1. Նախ ցարական կառավարությունը, ռազմաքաղաքական նկատառումներով, Անդրկովկասում ու Հայաստանում բնակեցրեց մեծ թվով ռուս վերաբնակների՝ իիմնականում աղանդավորների (մոլոկան, դուխորոր և այլն)՝ նրանց հատկացնելով տարածաշրջանի լավորակ հոերը՝ հողաբաշխման ամենաբարձր նորմերով:

2. 1836 թ. մարտի 11-ին ընդունված եկեղեցական Կանոնադ-

րությամբ (ոլոյշենք) փաստորեն սահմանափակվեցին հայ Եկեղեցու իրավունքները, իսկ ավելի ուշ՝ 1903 թ. կառավարությունը հարգունիս բռնագրավեց հայ Եկեղեցու կալվածքները և գույքը:

Դայաստանյաց Առաքելական Եկեղեցին, որ դարեր շարունակ, Դայաստանի անկախության ու պետականության կորստի պայմաններում Եղել է հայությանը հոգևոր թելերով իրար շաղկապող, նրա ազատագրական պայքարը կազմակերպող ու գլխավորող, դրսաշխարհի Երկրների ու պետությունների հետ բանակցող ու հայ ժողովրդի շահերն ու իրավունքները պաշտպանող միակ զորեղ հաստատությունը, այժմ, ցարական հիշյալ օրենքով, գործելու էր պարտադրված նեղ շրջանակներում՝ սահմանափակվելով գուտ կրոնական, հոգևոր հարցերով: 1836 թ. Կանոնադրությամբ, նորաստեղծ Բարձրագույն հոգևոր ատյանի՝ Սինոդի միջոցով վերահսկվելու էր հայոց հայրեպետի, մյուս բարձրաստիճան հոգևորականության գործունեությունը, որոնք այլևս իրավունք չունեին զբաղվելու քաղաքականությամբ ու խառնվելու առհասարակ պետությանը վերաբերող գործերին: Օրինակ, Սինոդի դատախազը իրավասու էր հսկելու հիշյալ ատյանի վարչական և դատաստանական գործողությունները: Միաժամանակ, հոգևոր կառավարման տեսակետից ռուսահայ համայնքը բաժանվեց 6 հոգևոր թեմերի (վիճակների): Երևանի, Արցախի, Շամախու, Թիֆլիսի, Նոր Նախիջևան-Բեսարաբիայի և Աստրախանի:

3. Ցարական կառավարությունը, հետամուտ իր սոցիալ-դասակարգային շահերին, 1846, 1847 և 1851 թթ. ընդունած մի շարք հոդային օրենքներով ճանաչեց նախկին մահմեդական խաների, բեկերի, աղալարների, ինչպես նաև հայ մելիքների ժառանգական կալվածատիրական իրավունքները, իսկ հայ գյուղացիությունը գործնականում ընկավ նրանցից կիսաճորտային կախման մեջ:

4. Եվ վերջապես՝ ցարիզմի գաղութային քաղաքակությունը Արևելյան Դայաստանում ու Այսրկովկասում արտահայտվել է նրա կողմից իրականացրած վարչատարածքային բաժանումներով: Կառավարությունը Երկրամասում վարչական բաժանումներ կատարելիս հաշվի չէր առնում տեղաբնակների ազգային առանձնահատկությունները, նրանց պատմա-էթնիկական տեղաբաշխումը: Ընդհակառակը, հաճախ նահանգներ, մարզեր, գավառներ և այլ վարչական միավորներ ձևավորելիս հետևում էր, որպեսզի որևէ ազգաբնակչություն (ժողովուրդ) այնտեղ մեծամասնություն չկազմի: Նման վարչական բաժանման արտահայտություն էր Լոռու ու Ախալքալաքի մտցվելը Թիֆլիսի

նահանգի մեջ, իսկ Զանգեզուրի, Արցախի և Ղազախի մտցվելը Ելիզավետպոլի նորահիմն նահանգի մեջ: Այս հանգամանքն էլ հետագայում հիմք հանդիսացավ, որ անկախացած Վրաստանի ու Աղբեջանի իշխանությունները դրանք համարեին իրենց տարածքները և ամեն կերպ աշխատեին պահել իրենց նորանկախ պետությունների կազմում:

Խոսելով ցարիզմի գաղութային քաղաքականության մասին, ավելորդ չէ նշել նաև, որ գաղութի բոլոր պաշտոններում սովորաբար նշանակվում էին ռուսներ ու օտարերկրացիներ, բացառությամբ, թերևս, գյուղապետի (տանուտեր): Երկրամասում գործավարությունը տարվում էր բացառապես ռուսերեն, իսկ պաշտոնական գրություններում և այլ փաստաթղթերում քաղաքացիների ազգանուները գրվում էին «ով» վերջավորությամբ:

Այսպիսով, Արևելյան Հայաստանը, մտնելով Ռուսաստանի կազմի մեջ, վերածվեց իսկայածավալ կայսրության մի սովորական գաղութային երկրամասի:

## 2. Արևմույան Հայաստանը XIX դարի 30-60-ական թվեր.

**Սոցիալ-տնտեսական** 1828-1829 թթ. ռուս-թուրքական պատերազմը **հարաբերությունները** եական փոփոխություն չմտցրեց Արևմտյան Հայաստանի սոցիալ-տնտեսական ու քաղաքական կյանքում: Այն շարունակում էր մնալ սուլթանական թուրքիայի ռազմավատական դաժան վարչակարգի տակ: Արևմտահայությունը ենթարկվում էր թուրք իշխանությունների, քուրդ բեկերի ու աղաների հարստահարություններին ու բռնություններին: Երկրում բացակայում էր կյանքի ու գույքի ապահովությունը: Բնակչությունից գանձվում էին մի քանի տասնյակ տեսակի ուղղակի և անուղղակի հարկեր, որոնց հավաքումը սովորաբար ուղեկցվում էր մեծ չարաշահումներով ու կամայականություններով: Գլխավոր հարկը աշարն էր (տասնորդը), երբ գանձվում էր բերքի 1/10-րդ, երբեմն՝ ավելի մասը: Ծանր ու անպատճաբեր էր գլխահարկը (ջիզիեն), իբրև մահմեդական հանրային իրավունքի սանկցիա ընդդեմ քրիստոնյաների, որը հարկում էր քրիստոնյա չափահաս տղամարդուց, որպես գլխագին և այլն:

Չնայած Թուրքիայում և ընդհանրապես Արևելքի մահմեդական երկրներում, Դուլանի դրույթների համաձայն, իրավապես ճորտություն գոյություն չուներ, սակայն Արևմտյան Հայաստանի մի շարք վայրերում հայ գյուղացիությունը գտնվում էր կիսակախյալ, փաստորեն, ստրկական վիճակում ավատատեր աղաներից ու բեկերից: Այդպիսի համակարգը կոչվում էր «մարաքայություն» և «խաֆիրություն»: Թուրք և քուրդ բեյերն ու աղաները հարկ եղած դեպքում անարգել զավթում էին հայ եկեղեցիների ու վանքերի կալվածքները համարելով դրանք մահլու (անժառանգ, անմշակ):

XIX դարի 30-50-ական թվականներին Օսմանյան Թուրքիայում բարեփոխումների որոշ փորձեր արվեցին, որոնք հայտնի են «թանգիմաթ» անունով:

Կայսրությունը պահպանելու և մեծ պետությունների ագրեսիվ քաղաքանությունը Թուրքիայի հանդեպ մեղմելու նպատակով թուրք խոշոր պետական գործիչ Մուստաֆա Ռեշիդ փաշայի ջանքերով հոչակվեցին Օսմանյան կայսրության բոլոր իպատակների քաղաքացիական իրավահավասարության, անձի և գույքի անվտանգության երաշխիքներ, հարկերի ու տուրքերի գանձնման կարգավորում, կապալային համակարգի (իլթիզամ) վերացում, դատական, հողային, զինվորական, կառավարչական բարեփոխումներ և այլն: Թանգիմաթի հրովարտակը հրապարակվեց երկու անգամ 1839 թ. և 1856 թ.:

Սակայն Թուրքիայի «եվրոպականացմանը» միտված բարենորոգչական այդ քայլերը, թուրքական իրականության պայմաններում, վիճակված չեն հետևողականորեն կենսագործվելու: Թանգիմաթի շատ դրույթներ ու խոստումներ այդպես էլ մնացին չիրագործված: Առավել ևս դրանք չկենսագործվեցին կայսրության ծայրամասերում, այդ թվում Արևմտյան Հայաստանում: Այլ խոսքով, թանգիմաթի օրենքները հիմնականում մնացին թղթի վրա, հետևապես և էական բարելավում չնեցրին արևմտահայերի սոցիալ-տնտեսական և իրավական կյանքում: Թանգիմաթից հետո էլ Թուրքիան շարունակում էր մնալ որպես ռազմաավատատիրական բռնապետություն:

**Պոլսահայ գաղութը** XIX դարի կեսին հայ ազգաբնակչության թիվը Թուրքիայում անցնում էր երեք միլիոնից: Բուն Արևմտյան Հայաստանում ազգաբնակչությունն ապրում էր ծայրաստիճան հետամնաց կյանքով: Վիճակը համեմատաբար բարվոք ու աշխույժ էր Կ. Պոլսի և Զմյուռնիայի հայ գաղթօջախներում: Կ. Պոլսի

հայ գաղութը դարձավ արևմտահայերի հասարակական-քաղաքական և մշակութային ամենախոշոր կենտրոնը: Այնտեղ ապրում էին սոցիալական տարբեր խավերի պատկանող ավելի քան 250 հազար հայեր, այդ թվում՝ սուլթանական արքունիքում բարձր դիրքի ու պաշտոնի հասած ամիրաներ, մեծաքսակ սեղանավորներ (սարաֆ, բանկիր), բազմահմուտ արհեստավորներ ու բազմահազար թշվար հայ պանդուխտներ: Հայերը նշանակալի դեր էին խաղում ոչ միայն Արևմտյան Հայաստանի, այլև ընդհանրապես ամբողջ Թուրքիայի սոցիալ-տնտեսական կյանքում:

Կ. Պոլիսը համարվում էր արևմտահայ մտավոր կյանքի ու մշակույթի կենտրոնը, որտեղ լույս էին տեսնում բազմաթիվ գրքեր, տասնյակ պարբերականներ: Պոլսում էր գտնվում արևմտահայ հոգևոր կենտրոնը՝ պատրիարքարանը, մեծաքանակ եկեղեցիներ, գործում էին թատրոններ, կրթամշակութային բազմաթիվ օջախներ և այլն: Պոլսահայ գաղութը դարձել էր հայ հասարակական-քաղաքական մտքի ու շարժման աչքի ընկնող կենտրոն:

**Դրիմի տառերագմը և հայերը** XIX դարի 50-ական թթ. սրբեցին հակասությունները մի կողմից Ռուսաստանի, իսկ մյուս կողմից՝ Անգլիայի, Ֆրանսիայի միջև, որոնք ձգտում էին իրենց ազդեցությունը տարածել Մերձավոր Արևելքում: Վերջիններիս հրահրումով Թուրքիան պատերազմ սկսեց Ռուսաստանի դեմ (1853 թ.): Շուտով (1854 թ.), ընդդեմ Ռուսաստանի, պատերազմի մեջ մտան նաև Անգլիան ու Ֆրանսիան: Ռազմական գործողություններն ընթանում էին միաժամանակ Բալկաններում, Կովկասում և Ղրիմում:

Չնայած ռուսական գորամասերը հայազգի զորավար Վ. Բեհբուրովի հրամանատարությամբ ու հայ կամավորների ակտիվ մասնակցությամբ հաղթանակներ տարան Կովկասյան ռազմաճակատում՝ Բաշկադրլար գյուղի մոտ (1853 թ.) և Քյուրուկդարայում (1854 թ.), այնուհետև գրավեցին Կարսը (1855 թ.), բայց գլխավորը Ղրիմի ռազմաճակատն էր, որտեղ ռուսական զորքերը անգլո-ֆրանսիական ուժեղ խմբավորման կողմից պարտություն կրեցին: 1856 թ. Փարիզում կնքված հաշտության պայմանագրով Թուրքիային վերադարձվեցին Կարսը և մյուս շրջանները, իսկ Արևմտյան Հայաստանը վերստին մնաց սուլթանական բռնապետության լծի տակ: Այդուհանդեռձ, Ղրիմի պատերազմով ասպարեզ նետվեցին Օսմանյան կայսրության և նրանում ապրող քրիստոնյա ժողովուրդների հետագա ճակատագրի

խնդիրները, խնդիրներ, որոնք դիվանագիտական պատմության մեջ հայտնի են Արևելյան հարց անունով:

**Արևմտահայերի ազգային սահմանադրությունը** XIX դարի 50-60-ական թվականները բեսահմանադրությունը կումնային եղան թե՛ արևելահայ և թե՛ արևմտահայ հասարակական-քաղաքական կյանքում: Եթե արևելահայ հասարակական-քաղաքական մտքի կենտրոնը Թիֆլիսն էր, ապա արևմտահայը՝ Կ. Պոլիսը:

XIX դարի 50-ական թթ. Եվլոպական կրթություն ստացած և առաջադեմ գաղափարներով տոգորված արևմտահայ մի խումբ ժողովրդավար մտավորականներ Ն. Ռուսինյանը, Գ. Օտյանը, Ս. Վիչենյանը (Սերվիչեն), Ն. Պայսյանը, Գր. Աղաթոնը, Տ. Աղաթոնը և ուրիշներ, մշակում են արևմտահայերի ազգային կյանքին, պատրիարքարանին, հասարակական ու կրոնական գործերին վերաբերող մի կանոնադրություն, որը կոչում են «Ազգային սահմանադրություն»: 1860 թ. մայիսի 24-ին բուռն հանդիսությամբ Կ. Պոլսի հայ ազգային ընդհանուր ժողովը և Պատրիարքը հաստատում են Սահմանադրությունը, իսկ երեք տարի անց (1863 թ. մարտին), գրաքննության ենթարկելուց և էական խմբագրումներից հետո, այն վավերացնում է նաև թուրքական կառավարությունը՝ Բարձր Դուռը:

«Ազգային սահմանադրությունը» անունով էր սահմանադրություն, որը չի կարելի նույնացնել սահմանադրություն հասկացության ներկա չափանիշների ու ըմբռնումների հետ: Այն ընդամենը արևմտահայ համայնքի ներքին կյանքը, ազգային, կրոնական, կրթամշակութային և այլ գործերը կանոնակարգող մի փաստաթուղթ էր: Բայց և այնպես, իր ժամանակի ու պայմանների համար սա նշանակալի առաջընթաց քայլ էր, հայ քաղաքական մտքի ուշագրավ թոհջը:

Սահմանադրության կարևոր տեսական հիմնադրույթներից մեկը հօչակում էր ամբողջ ազգի և նրա յուրաքանչյուր անդամի միասնության ու ամբողջականության, փոխադարձ կապի ու պատասխանատվության գաղափարը: Սահմանադրությունը սահմանափակում էր պատրիարքարանի և մեծահարուստ վերնախավի հայ ազգային գործերը տնօրինելու մենաշնորհ իրավունքը և սրանց կողքին, հանձին ընտրովի Ազգային ժողովի, լսելի էր դարձնում նաև ժողովրդի ձայնը:

Սահմանվում էր, որ Ազգային գործերով գլխավոր նարմինը հանդիսանալու էր երեսփոխանական (պատգամավորական) Ազգային ընդհանուր ժողովը: Այն բաղկացած էր լինելու 140 երեսփոխաններից,

որոնցից 80-ը ընտրվելու էին Կ. Պոլսի թաղերից, 40-ը՝ գավառներից, իսկ 20-ը պետք է լինեին Եկեղեցականներ՝ ընտրված հոգևորականների կողմից: Ազգային ժողովը նախագահելու էր պատրիարքը: Սա մի տեսակ օրենսդիր մարմնի դեր էր խաղալու արևմտահայ համայնքի համար: Յիմնվելու էին կրթական, տնտեսական, դատաստանական, վաճքերի ու թաղային խորհուրդներ, ինչպես նաև ազգային գավառական վարչություններ և այլն:

Արդարև, կարելի է վստահ ասել, որ արևմտահայերի Ազգային սահմանադրությունը շոշափելի հետք թողեց հայ հասարակական-քաղաքական մտքի և ազատագրական գաղափարաբանության ձևավորման գործում: Հատկանշական է, որ սահմանադրական շարժման ընդհանուր մթնոլորտում հասունացավ 1862 թ. Զեյթունի ապստամբությունը:

### 3. 1862 թ. Զեյթունի ապստամբությունը

#### Ապստամբության դատառները և ընթացքը

Զեյթունը գտնվում է Լեռնային Կիլիկիայում, Մարաշ քաղաքից հյուսիս, Տավրոսի լեռներում: Դարեր ի վեր հայերն ապրել են այս գավառում համայնական կյանքով, զբաղվել են երկրագործությամբ, անասնապահությամբ ու արհեստներով, ունեցել են իրենց տոհմիկ իշխանները: Զեյթունի կենտրոնում և շրջակա մի քանի հայկական գյուղերում ապրում էին ավելի քան 30 հազար հայեր, որոնք տեղանքի լեռնոտ դիրքի, աշխարհագրական այլ նպաստավոր պայմանների շնորհիվ վաղուց ի վեր պահպանել էին ներքին ինքնուրույնությունն ու կիսանկախ վիճակը և միայն տարեկան որոշ քանակությամբ հարկ էին վճարում սուլթանական պետությանը: Հասկանալի է, որ թուրքական կառավարությունը չէր կարող հաշտվել նման վիճակի հետ և վճռում է վերջ տալ զեյթունցիների կիսանկախ կյանքին ու լիովին հպատակեցնել տերությանը:

Առիթ դարձնելով հարկերի վճարման ուշացումը, ինչպես նաև հայերի ու թուրքերի միջև ծագած հողային վեճերը, 1862 թ. ամռանը Մարաշի Ազիզ փաշան 10 հազար զինվորներով հարձակվեց լեռնագավառի վրա: Անվեհեր զեյթունցիք մեծ ու փոքր, դիմում են ինքնապաշտպանության և հետ մղում թշնամու գերակշիռ ուժերի թուրք գրոհները: Քաջարի զեյթունցիները ինքնաշեն գենքերով, ապավինած իրենց անմատչելի լեռներին, ոչ միայն կարողանում են հաջողությամբ պաշտպանվել, այլև դիմում են հակագրոհների, ծուղակներ սարքում,

թշնամուն կենդանի ուժի գգալի կորուստներ պատճառում: Թուրքական կանոնավոր զորքերին այդպես էլ չի հաջողվում ընկճել գեյքունցիների դիմադրությունը:

Ի վերջո, գործին միջամտում են Կ. Պոլսի հայոց պատրիարքը և ֆրանսիական դեսպանը, ու փոխադարձ զիջումներով հաշտություն է կնքվում: Թուրքական կառավարությունը հրաժարվում է Զեյթունի վրա նոր արշավանք կազմակերպելուց, իսկ զեյթունցիները պարտավորվում են վճարել հարկերը: Շուտով զեյթունցիները կորցնում են իրենց կիսանկախ կարգավիճակն ու պահպանում միայն ներքին սահմանափակ իրավունքներ՝ համայնական ու եկեղեցական գործերը վարելու համար: Բայց դրանից հետո էլ զեյթունցի լեռնականների ըմբոստ ոգին չմեռավ: Դետագայում էլ նրանք հերոսական նորանոր էջեր գրեցին հայ ազատագրական պայքարի տարեգրության մեջ:

**Աղստամբության նօանակությունը** Մեծ է եղել Զեյթունի հերոսամարտի դերը հայ ազատագրական պայքարի պատմության մեջ: Նոր դարաշրջանում սա գործնականում առաջին համարձակ քայլն էր, երբ մի բուռ հայ քաջորդիներ մարտահրավեր նետեցին թուրքական իշխանություններին՝ իրենց իրավունքների ու արժանապատվության պաշտպանության համար: Զեյթունը դարձավ հայ ազատագրական շարժման նոր զարթոնքի սկիզբն ու խորհրդանիշը: Այն նոր լիցք հաղորդեց հայ ազգային ինքնագիտակցության ածին և հայ հասարակական-քաղաքական մտքի առաջընթացին: Զեյթունի հերոսամարտը վարակիչ ազդեցություն ունեցավ հայ ազատամարտի մյուս օջախների՝ Սասունի, Տարոնի, Վասպուրականի, Կարինի վրա: Դայ գրողների համար Զեյթունը դարձավ ստեղծագործական ոգեշնչման աղբյուր և հայ ազատագրական գաղափարաբանության ձևավորման գորավոր կովան:

Մյուս կողմից՝ Զեյթունի ապստամբությամբ սկզբնավորված արևմտահայ ազգային-ազատագրական շարժումը պայմանավորված էր ոչ միայն ներքին, այլև արտաքին գործոններով: Արևմտահայ ազատագրական շարժման առանձնահատկություններից էր, որ այն մեծ չափով խթանում էր դրսի ու հատկապես ռուսահայ մտավորականությունը: Տվյալներ կան այն մասին, որ 1862 թ. Զեյթունի ապաստամբությունը նախապատրաստել է Կ. Պոլսում Մ. Նալբանդյանի հիմնած մի գաղտնի ազատագրական կազմակերպություն:

Ավելի ուշ արևմտահայ ազատագրական շարժումը դառնում է հայ ազգային քաղաքական կուսակցությունների նվիրական գործը:

#### **4. Հայկական մշակույթը XIX դարի առաջին կեսին**

**Հայ մշակույթի օջախները:** Հայ ժողովուրդը դարեր շարունակ գրկված լինելով անկախ պետականությունից և լինելով օտար պե-

**Դեղոցը** տությունների գերիշխանության տակ, բավարար պայմաններ չի ունեցել զարգացնելու ազգային մշակույթն իր հայրենիքում: Այդ իսկ պատճառով հայկական մշակույթը մեծ մասամբ զարգանում էր Հայաստանից դուրս՝ հայկական գաղթավայրերում:

Եթե արևելահայերի մշակութային կյանքի գլխավոր կենտրոնը Թիֆլիսն էր, ապա արևմտահայերինը՝ Կ. Պոլիսը: Բացի Թիֆլիսից ու Կ. Պոլսից, հայկական մշակույթի աչքի ընկնող օջախներից էին Մոսկվան, Պետերբուրգը, Աստրախանը, Նոր Նախիջևանը, Զնյուրնիան, Վենետիկը, Նոր Ջուղան, Կալկաթան, Մադրասը և այլն, ուր գործում էին տպարաններ, իրատարակչություններ, կուլտուր-կրթական հաստատություններ: Քաղաքակրթված երկրներում հայ մշակութային իիմնարկները կրուն էին այդ երկրների մշակույթի բարերար ազդեցությունը:

XIX դարի առաջին կեսին Հայաստանից դուրս գտնվող հայաբնակ վայրերում իիմնվում են մի շարք հայտնի դպրոցներ. 1810 թ. Աստրախանում բացվում է Աղաբարյան դպրոցը, 1815 թ. Մոսկվայում Լազարյան ճեմարանը, 1824 թ. Թիֆլիսում Ներսիսյան դպրոցը, 1836 թ. Վենետիկում Ռաֆայելյան վարժարանը, 1838 թ. Կ. Պոլսում Սկյուտարի ճեմարանը: Նոր դպրոցներ են բացվում նաև Հայաստանում 1837 թ. Երևանի, 1838 թ. Շուշու թեմական դպրոցները և այլն: Հայաստանում բարձրագույն դպրոց չկար: Ուսումնատենչ երիտասարդությունը բարձրագույն կրթություն էր ստանում ռուսական և արևմտանվողական համալսարաններում:

**Գիտությունը և գրականությունը** XIX դարի առաջին կեսին որոշ առաջընթաց է կագրականությունը տարվում գիտության (պատմության, լեզվաբանության, մանկավարժության, բնագիտության, բժշկության և այլն) բնագավառում: Լույս են տեսնում մի շարք պատ-

մագիտական, լեզվագիտական և այլ բնագավառների արժեքավոր ուսումնասիրություններ: Այս ժամանակաշրջանում առավել նշանակելի են Ղ. Ինձիճյանի պատմա-աշխարհագրական բնույթի աշխատությունները և Մխիթարյան միաբան Յ. Ավգերյանի հայկագյան լեզվին նվիրված բառարանը:

Այս շրջանում էլ ձևավորվեց հայ նոր, աշխարհաբար գրականությունը, որի հիմնադիրը Եղավ մեծ դեմոկրատ-լուսավորիչ Խաչատուր Աբովյանը (1809-1848 թթ.): Նա XIX դարի առաջին կեսի հայ գրականության ամենախոշոր դեմքն է: Աբովյանը մեծ հայրենասեր էր, տաղանդավոր վիճասան ու մանկավարժ: Նրա գրական ստեղծագործության գլուխգործոցն է «Վերջ Հայաստանի» պատմավեպը:

Հայ կլասիցիզմի խոշորագույն ներկայացուցիչներից է Արսեն Բագրատունին, որի հայ անցյալի ակունքներին նվիրված և հայոց դասական լեզվի բազմաբարդ բառային համակարգով շարադրված «Հայկ Դյուցազն» վիպերգը գեղարվեստական մեծ արժեք է ներկայացնում: Այն կարելի է համարել մի յուրօրինակ հայկական իլիական:

XIX դարի առաջին կեսի հայ գրականության ականավոր դեմքերից են Հարություն Ալամդարյանը և Մեսրոպ Թաղիաղյանը, որոնք նույնպես զգալի ավանդ ունեցան հայ գրականության աշխարհականացման գործում:

**Մամուլը և XIX դարի առաջին կեսին հայ մշակութային կյանքի բնուարվեստը** Իրշ դրսենորումներից էր հայկական պարբերական մամուլը: Հրատարակվում էին շուրջ 40 անուն հայերեն թերթեր ու ամսագրեր, բոլորն էլ Հայաստանից դուրս: Դրանցից առանձնապես նշանավոր էին «Բազմավեպը» և «Դիտակ Բյուզանդեոնը» (Վենետիկում), «Արշալույս Արարատյանը» և «Հայրենասերը» (Զմյունիայում), «Էրագիրը» (Կ. Պոլսում), «Ազգասերը» և «Ազգասնը Արարատյանը» (Կալկաթայում), «Արարատը» (Թիֆլիսում) և այլն: Պարբերական մամուլը զարկ տվնց հրապարակախոսությանը, հասարակական-քաղաքական մտքի զարգացմանը:

Նկարչության բնագավառում շարունակում էր գործել Հովնաթանյանների հայտնի գերդաստանը: Դիմանկարչության անզուգական վարպետ էր Հակոբ Հովնաթանյանը:

Դարի առաջին կեսին մեզանում դեռևս չկար պրոֆեսիոնալ (արհեստավարժ) թատրոն, սակայն առանձին էնտուզիաստ թատերասերների ջանքերով կազմակերպվում էին ներկայացումներ: Օրինակ,

1827 թ. Երևանում, Սարդարի պալատում, հեղինակի Ա. Գրիբոյե-  
դովի ներկայությամբ բեմադրվեց «Խելքից պատուհաս» պիեսը:

## 5. Նայ հասարակական-քաղաքական հոսանքները 1850-1860-ական թվականները

**Նախադրյալները** XIX դարի 50-60-ական թվականները հայ ժողովութիւնի սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական կյանքի բեկման տարիների են: Յին ավատական կարգերն ու հարաբերությունները աստիճանաբար տեղի են տալիս նոր ապրանքակապիտալիստական հարաբերություններին:

Այդ նույն ժամանակաշրջանում աշխարհում կատարվեցին մի շարք նշանակալի պատմաքաղաքական իրադարձություններ, որոնք խոր հետք թողեցին հայ հասարակական-քաղաքական մտքի անդաստանում: Դրանցից էին 1861 թ. ճորտատիրական իրավունքի վերացումը Ռուսաստանում, բալկանյան ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումները, 1863 թ. լեհական ապստամբությունը, 1861-1865 թթ. քաղաքացիական պատերազմը ԱՄՆ-ում, Իտալիայի, այնուհետև Գերմանիայի միավորումը և այլն:

Նայ հասարակական միտքը հաղորդակից դարձավ նաև ժամանակաշրջանի պատմափիլիսոփայիսկան ու սոցիոլոգիական ուսմունքներին: Յրատապ դարձան ազգային վերածնորի, լեզվի ու կրոնի, իին ու նոր արժնքների վերագնահատման խնդիրները: Բարդացավ սոցիալ-քաղաքական կյանքը, բազմաշերտ դարձավ հասարակական միտքը:

1850-1860-ական թվականներին հայ իրականության մեջ ձևավորվեցին հասարակական երեք հիմնական հոսանքներ՝ պահպանողական, լիբերալ (ազատամիտ) և հեղափոխական (արմատական): Նասարակական հոսանքների նման բաժանումը խիստ պայմանական է: Այս երեք հոսանքներից յուրաքանչյուրն ունեցել է իր դրական ու բացասական կողմները:

**Պահպանողական հոսանք** Պահպանողական հոսանքը հանդես էր գալիս տնտեսական և հասարակական-քաղաքական կյանքի հին կացութաձևերի պաշտպանության դիրքերից: Պահպանողական ուղղությունն ավելի գգույշ ու կրավո-

րական վերաբերմունք ուներ ազգային-ազատագրական շարժումների նկատմամբ: Այդ հոսանքի գաղափարախոսները իիմնականում եղել են հոգևորականներ՝ արևելահայ իրականության մեջ որա պարագլուխն էր Գաբրիել Այվազովսկին (աշխարհահռչակ ծովանկարիչ Յ. Այվազովսկու ավագ եղբայրը), ինչպես նաև Մսեր Մսերյանցը, իսկ արևմտահայ իրականության մեջ Հովհաննես Զամուռճյանը (Տերոյենց) և ուրիշներ: Դրվատելին այն է, որ պահպանողականների մոտ, չնայած աստվածաբանական վարդապետությունների կարևորմանը, բավական ուժեղ էր ազգապահպանության միտումը: Նրանք դեմ էին ազգային-քաղաքական խնդիրներում չկշռադատված վայրիվերումներին: Պահպանողականները թեև չեին ջատագովում նորի, առաջավորի հախուրն, արհեստական արմատավորումը, սակայն նրանք ճիշտ էին, գտնելով, որ ազգի գոյության հիմքը լեզուն է, եկեղեցին և ազգային սովորույթները, որոնց քարոզչություն էլ կազմում էր կրոնապահպանողական այս հոսանքի գործունեության նպատակը:

Հետագայում՝ 70-80-ական թթ., պահպանողական հոսանքի գաղափարների ամենահետևողական արտահայտողները եղան «Մեղու Յայաստանի», «Նոր դար», «Արձագանք» և «Փորձ» պարբերականները, որոնք գնալով ավելի ու ավելի էին ստանում ազգային դիմագիծ: Սրանք, ըստ եռթյան, չեին մերժում տնտեսական զարգացման կապիտալիստական ուղին, այլ կողմնակից էին դանդաղ, աստիճանական, ազգային արժեքների ու ավանդույթների պահպանության պայմաններում՝ կապիտալիզմի զարգացմանը: Պահպանողականների տնտեսական ռոմանտիզմը Ռուսաստանի ազդեցությամբ արևելահայ իրականության մեջ սնունդ տվեց «նարոդնիկական» գաղափարների դրսնորմանը: Կովկասահայ ազգային պահպանողականները անխնա քննադատում էին ցարական կառավարության հակահայկական, ձուլողական քաղաքականությունը:

**Լիբերալ հոսանք** XIX դարի 2-րդ կեսից հայ իրականության մեջ, բուրժուական հարաբերությունների զարգացմանը զուգընթաց, ձևավորվեց լիբերալ կամ ազատամիտ հոսանքը: Այս հոսանքի ամենաականավոր գաղափարախոսներն էին Ստեփանոս Նազարյանը, Նահապետ Ռուսինյանը, Գրիգոր Օտյանը և ուրիշներ: Ազատամիտները լուսավորության ու գիտության ջատագովներ էին: Ազատամիտները, որպես ժողովրդավարներ, հանդես էին գալիս գոյություն ունեցող ավատական, կրոնապետական կարգերի ու հարաբերություն-

Աերի ռեֆորմների ճանապարհով բարեշրջման և քաղաքացիական հասարակության հաստատման օգտին: Սրանց վերջնանպատակն էր հասնել ժողովրդավար Յայաստանի, ազգային ազատագրության և պետական անկախության վերականգնման: Ավելի ուշ՝ 70-ական թվականներից, ազատական գաղափարների հետագա շարունակողը և զարգացնողը եղան Գր. Արծրունու «Մշակը» և Մ. Մամուրյանի «Արևելյան մամուլը»:

**Հեղափոխական** Ի տարբերություն լիբերալների, որոնք նորն ու առաջադիմը ուզում էին արմատավորել առանց արյունահեղության, բարեփոխումների միջոցով, հեղափոխական կամ արմատական հոսանքը հանդես էր գալիս գոյություն ունեցող ազգային անարդարություններն ու շահագործողական կարգերը, վերջին հաշվով, «կացնի» միջոցով վերացնելու օգտին: Այս հոսանքի ամենակարկառուն դեմքը Միքայել Նալբանդյանն էր, որը մեծ չափով գաղափարապես ներազդվել էր ոուս վտարանդի հեղափոխական մտածողներ Մ. Բակունինից, Ա. Գերցենից, Ն. Օգարյովից:

Դժվար չէ նկատել, որ հեղափոխական հոսանքը հայ իրականության մեջ ավելի շատ օտարամուտ էր և կապված էր բացառապես Մ. Նալբանդյանի անձի հետ: Մ. Նալբանդյանի տեսակետներն արևմտահայ իրականության մեջ մասամբ պաշտպանում ու պրոպագանում էր Յարություն Սվաճյանը: Մ. Նալբանդյանը հայ ժողովրդի ազգային ու սոցիալական ազատագրությունը կապում էր համառուսական հեղափոխական շարժման հետ: Բայց, ցավոք, ինչպես ցույց տվեցին պատմական հետագա դեպքերը, նրա բարի ցանկությունները չիրականացան: Իր հեղափոխական գործունեության համար 1862 թ. ամռանը Մ. Նալբանդյանը ձերբակալվեց ու բանտարկվեց Պետրոպավլովյան ամրոցում: Այնտեղ նա իիվանդացավ թոքախտով, որի հետևանքով էլ 1866 թ. կնքեց իր մահկանացուն:

Նալբանդյանի իրապարակախոսական և գրական ազատաշունչ երկերը լոգորված էին արմատական գաղափարներով, որոնք հետագայում նկատելի հետք թողեցին երիտասարդ մտավորականության շրջանում: Յրապարակախոսը, գրողը, գործիչը ունեցավ իր հետևորդները: Նա խոր հետք թողեց հայ հասարակական մտքի պատմության մեջ: Նրա արմատական, մարտաշունչ գաղափարները մի կողմից ծառայեցին արևմտահայության ազգային-ազատագրության գործին,

մյուս կողմից՝ հասարակ ժողովորի սոցիալ-տնտեսական ազատագրության խնդիրներին:

Այսպիսով, XIX դարի 50-60-ական թվականներին հասարակական այս երեք հոսանքները ժամանակաշրջանի հայ հասարակական-քաղաքական մտքի դրսերումներ էին, որոնք հարստացրին հայ հասարակական-քաղաքական կյանքը և նպաստեցին դրա հետագա զարգացմանը: Այդ հոսանքները դարձան սոցիալ-գաղափարական այն հենքը, որի հիման վրա հետագայում ձևավորվեցին հայ քաղաքական կուսակցությունները:

## 6. 1870 թ. գյուղացիական ռեֆորմը և կապիտալիզմի զարգացումը հետուարմյան Հայաստանում

**1870 թ. հոդային** 1861 թ. փետրվարի 19-ին, ցարական հատուկ օրենքով, Ռուսաստանում վերացվեց ճորտատիրական իրավունքը: Դրանից հետո Ռուսաստա-

նը թևակոխում է կապիտալիզմի հաստատուն զարգացման դարաշրջանը: Սակայն այդ զարգացումը կաշկանդվում էր ճորտատիրական մնացուկների և առաջին հերթին՝ ինքնակալական համակարգի պահպանումով:

Արևելյան Հայաստանում, Ռուսական կայսրության այդ հետամնաց ագրարային ծայրագավառում, գյուղացիական ռեֆորմը գործադրվեց բավական ուշացումով՝ 1870 թ. մայիսի 14-ի օրենքով: Այդ օրենքով կալվածատերերին իրավունք վերապահվեց իրենց ձեռքում պահել հողերի մեկ երրորդ, այն էլ՝ լավորակ մասը: Թեև Հայաստանում ճորտատիրություն չկար, այնուամենայնիվ, կալվածատիրական (մոլոքադարական) գյուղացիներին իրավունք տրվեց հետգննան ճանապարհով ձեռք բերել 5 դեսյատին հողաբաժին՝ 15 տարին լրացած, արական սեռի ամեն մի շնչին: Կալվածատիրական գյուղացին նյութապես ի վիճակի չեր իր հասանելիք հողակտորը հետ գնել, իսկ պետությունն էլ վարկով չեր օգնում: Այդ իսկ պատճառով Արևելյան Հայաստանում գործնականում հողերի հետգննան տեղի չունեցավ: Ռեֆորմից հետո, մինչև 1912 թ. դեկտեմբերի 20-ի օրենքը, կալվածատիրական գյուղացիները շարունակեցին մնալ իրենց նախկին տերերից ժամանակավոր պարտապան ու կախյալ վիճակում: Միայն այս վերջին օրենքի հիման վրա, սկսած 1913 թ. հունվարի մեկից, կալվածատիրական գյուղացիների այդ կարգախնբերը դասվեցին սեփա-

կանատեր գյուղացիների ու շինականների կարգը:

Արևելյան Հայաստանի (Երևանի նահանգ, Կարսի մարզ, Լոռի, Ղազախ, Զանգեզուր, Արցախ և այլն) գյուղացիության գերակշիռ մեծամասնությունը՝ 72 տոկոսը, պետական գյուղացիներ էին, որոնք անմիջական իրավատնտեսական կախման մեջ էին հողի գերագույն սեփականատիրոջից՝ պետությունից: 1870 թ. մայիսի 14-ի օրենքը չտարածվեց պետական գյուղացիների վրա: Ռեֆորմը չտարածվեց նաև վաճառապատկան գյուղացիների վրա: Այնուամենայնիվ, 1870 թ. գյուղացիական ռեֆորմը, չնայած իր թերություններին ու կիսատ-պրատությանը, որոշ չափով նպաստեց երկրամասի սոցիալ-տնտեսական առաջընթացին: Հայ շինականը, ճնշող մեծամասնությանը, չկարողացավ դառնալ իր օգտագործման տակ գտնվող հողակտորի սեփականատերը, քանզի այն հակասում էր ցարիզմի մեծապետական ագային-հողային քաղաքականությանը:

XIX դարի երկրորդ կեսին, վելիկոռուսական նահանգների օրինակով, Անդրկովկասում ու Արևելյան Հայաստանում էլ անցկացվեցին վարչական, քաղաքային, դատական և այլ առաջադիմական բարեփոխումներ, որոնք դարձյալ մնացին կիսակատար: Ի տարբերություն վելիկոռուսական նահանգների, Արևելյան Հայաստանում ու Անդրկովկասում գենստվո (տեղական ինքնակառավարում) չմտցվեց: Դրա պատճառն այն էր, որ ռուսական իշխանությունները գտնում էին, որ ազգային ծայրամասերը, իբրև, դեռ չեն հասունացել տեղական ինքնակառավարման համար:

**Աղբանքա-  
կաղիտալիստական  
հարաբերությունների  
զարգացումը** Բայց և այնպես, 1860-1870-ական թվականներին վերևից անցկացված բուրժուական բնույթի բարեփոխումները, ավել կամ պակաս չափով նպաստեցին ամբողջ կայսրությունում ապրանքակապիտալիստական հարաբերությունների զարգացմանը:

Դետուֆորմյան շրջանում Արևելյան Հայաստանը, ամբողջ Անդրկովկասի հետ միասին, ներքաշվեց համառուսական ու համաշխարհային ապրանքաշրջանառության ոլորտը՝ վերածվելով ռուսական արդյունաբերության հումքային կցորդի: Միաժամանակ նկատվում է ապրանքային տնտեսության աշխուժացում: Գյուղատնտեսության բնագավառում առանձնապես զարգացում ապրեցին հացամշակությունը, խաղողագործությունը, բամբակագործությունը, մետաքսա-

գործությունը, ծխախոտագործությունը, կաթնային տնտեսությունը և այլն: Առաջադիմում են գյուղատնտեսական տեխնիկան և ցանքաշրջանառությունը:

Ապրանքաշուկայական հարաբերությունների զարգացումը Արևելյան Հայաստանում ու Անդրկովկասում նոր թափ ստացավ 1880-1890-ական թվականներին: Զարգացան Ալավերդու և Զանգեզուրի պղնձաձուլական, Երևանի գինու-կոնյակի, ծխախոտի, Կողբի, Կաղզվանի և Նախիջևանի աղի արտադրությունները: Հանդես են գալիս առաջին մոնոպոլիաները, ձևավորվում են արդյունաբերողների (բուրժուազիա) և գործավորների (բանվորների) դասակարգերը: Հայ բուրժուազիայի և պրոլետարիատի ձևավորման առանձնահատկություններից մեկն այն էր, որ, Հայաստանի տնտեսական հետամնացության պայմաններում, դրանք հիմնականում կենտրոնանում էին Անդրկովկասի խոշոր արդյունաբերական կենտրոններում՝ Բաքվում, Թիֆլիսում, Բաքումում և այլուր:

Երկրի տնտեսական զարգացմանը մեծ չափով նպաստեց Երկաթուղային շինարարությունը: 1899 թ. շահագործնան հանձնվեցին Թիֆլիս-Ալեքսանդրապոլ-Կարս, իսկ XX դարասկզբին՝ Ալեքսանդրապոլ-Երևան-Զուլֆա գծերը: Դրանով Արևելյան Հայաստանը տնտեսապես ավելի ամուր կապվեց համառուսական շուկայի հետ:

Այսպիսով, XIX դարի երկրորդ կեսին, Երկրամասում անցկացված մի շարք բարեփոխումների հետևանքով, Հայաստանը ևս թևակոխեց ապրանքակապիտալիստական հարաբերությունների զարգացման փուլը:

## Գլուխ տասնչորսերորդ

# ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԵՐԸ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ (XIX ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ՔԱՌՈՌԴ)

## 1. 1877-1878 թվ. ռուս-թուրքական պատերազմը և Հայկական հարցը

**Ռազմական գործողությունները** 1877 թ. ապրիլին սկսվեց հերթական պատերազմը Ռուսաստանի և Թուրքիայի միջև թվով չորրորդ XIX դարում: Ռուսաստանը, հետամուտ լինազմաճակատում նելով իր նվաճողական պլաններին և պատրվակ բռնելով Օսմանյան Թուրքիայի լծի տակ հեծող քրիստոնյաներին (բուլղարներին, սերբերին, հայերին և այլն) օգնության ձեռք մեկնելը, նպատակ ուներ տիրանալ նեղուցներին՝ Կ. Պոլսի հետ միասին, Արևմտյան Հայաստանին, ինչպես նաև Վերականգնել Ղրիմի պատերազմով սասանված իր ռազմադիվանագիտական միջազգային հեղինակությունը:

Ռազմական գործողություններն ընթանում էին դարձյալ երկու ճակատով՝ Բայկանյան և Կովկասյան: Կովկասյան ռազմաճակատում ռուսական գործող զորքերի հրամանատարն էր հայազգի գեներալ-ադյուտանտ Մ. Լորիս-Մելիքովը: Պատերազմական գործողություններն ընթանում էին մի քանի ուղղություններով, որոնցից գլխավորը Ալեքսանդրապոլ-Կարս-Էրզրում (Կարին) գիծն էր:

Այս պատերազմին էլ, շատ ավելի մեծ ակտիվությամբ, իրենց

համակողմանի մասնակցությունը բերեցին հայերը: Յայերը, հանձին Ռուսաստանի, տեսնում էին իրենց ազատարարին: Բացի հազարավոր հայ շարքային կամավորներից, ռուսական զորամասերում, որպես հրամանատարներ, գործում էին հայազգի զորավարներ Մ. Լորիս-Մելիքովը, Ա. Տեր-Ղուկասովը, Յ. Լազարեվ, Բ. Շելկովնիկովը, Յ. Ալխազովը և ուրիշներ: Օրինակ, Երևանյան ջոկատը, Արշակ Տեր-Ղուկասովի հրամանատարությամբ, գրավեց Բայազետը և Ալաշկերտը, իսկ 1877 թ. նոյեմբերի 6-ին ռուսական զորաշարասյուները, Յովհաննես Լազարեկի հրամանատարությամբ, գիշերային գրոհով գրավեցին Յայաստանի պատվարը համարվող Կարսի հոչակավոր ամրոցը: Կարսի գրավման համար Լորիս-Մելիքովն արժանացավ կոմսի կոչման:

Ռազմական գործողությունների ժամանակ 20 հազարի չափ արևմտահայեր (ալաշկերտցիներ), խույս տալով թուրք-քրդական զինված ջոկատների հաշվեհարդարից, Ա. Տեր-Ղուկասովի հոգատար աջակցությամբ, բարեհաջող ներգաղթեցին Արևելյան Յայաստան:

1878 թ. փետրվարին ռուսական զորքերը նտան Երզրում: Բալկանյան ռազմաճակատում նույնպես հաջողությունը ուղեկցեց ռուսական զորքին: Թուրքական կառավարությունը հարկադրված հաշտություն խնդրեց:

### **Յայկական հարցը Սան Ստեֆանոյի դայմանագրում և Բեռլինի կոնգրեսում**

1878 թ. փետրվարին Ռուսաստանի և Թուրքիայի միջև Սան Ստեֆանոյում (Կ. Պոլսի մոտ) կնքվեց հաշտության պայմանագիր: Այդ պայմանագրի համաձայն, Արևմտյան Յայաստանի տարածքներից անվերապահորեն Ռուսաստանին միացվեց Կարսի մարզը՝ շուրջ 20 հազ. քառ. կմ մակերեսով: Յայկական բարեբեր այս երկրամասը ավելի քան 40 տարի մնաց Ռուսաստանի կազմում: Այն դարձավ Արևելյան Յայաստանի օրգանական մասը և միայն 1920 թ. բռնազավթվեց քենալական Թուրքիայի կողմից:

Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագրի 16-րդ հոդվածով Թուրքիան պարտավորվում էր Ռուսաստանի հսկողությամբ Արևմտյան Յայաստանում անհապաղ բարենորոգումներ անցկացնել և պաշտպանել հայերի անվտանգությունը քրդերի ու չերքեզների ոտնձգություններից: Պայմանագրի այս կետը թեպետ ազատություն չէր խստանում Արևմտյան Յայաստանին, սակայն, եթե այն գործադրվեր, ինչ խոսք, զգալի չափով կբարելավվեր արևմտահայերի վիճակը և կարող էր հետագայում նույնիսկ Յայաստանի ապագա ինքնավարության իիմքեր ստեղծել:

Սակայն գերտերությունները և, առաջին հերթին, Անգլիան ու Ավստրո-Հունգարիան, չցանկանալով Ռուսաստանի դիրքերի ամրապնդումը Սերծավոր Արևելքում ու Բալկաններում, պահանջեցին հրավիրել միջազգային դիվանագիտական ժողով՝ վերաձևելու համար Սան Ստեփանոյի պայմանագիրը: 1878 թ. ամռանը Բեռլինում հրավիրվեց միջազգային կոնֆերես (վեհաժողով):

Դայերը, իրենց արդարացի դատը պաշտպանելու և մեծ տերությունների աջակցությունը ստանալու հույսով, Եվրոպա ուղարկեցին մի պատվիրակություն մեծ հայրենասեր, քաղաքական ու հոգևոր գործիչ Մկրտիչ Խրիմյանի գլխավորությամբ: Դայերը Բեռլին ներկայացրին հայկական խնդրի լուծման երկու ծրագիր: Դրանցից մեկը պատրիարք Ն. Վարժապետյանի կազմած Արևմտյան Դայաստանի ինքնավարության, իսկ մյուսը՝ եգիպտահայ նշանավոր քաղաքական գործիչ Նուբար Փաշայի ներկայացրած ավելի չափավոր՝ Թուրքիայի հովանու տակ արևմտահայերի բարենորոգումների ծրագրերն էին: Բայց վեհաժողովում ուշադրություն չդարձվեց դրանցից և ոչ մեկին: Ավելին, հայ պատվիրակներին թույլ չտվեցին մտնել նույնիսկ կոնֆերեսի շենքը:

Բեռլինի կոնֆերեսում արևմտահայերին վերաբերող Սան Ստեփանոյի պայմանագրի 16-րդ հոդվածը վերափոխվեց 61-րդի: Այս հոդվածում նույնպես խոսվում էր թուրքահայ գավառներում բարենորոգումներ անցկացնելու և հայերի անվտանգությունը պաշտպանելու մասին, սակայն իրական երաշխիք չէր ապահովվում դրանց կենսագործման համար: Արևմտյան Դայաստանում ռեֆորմների վերահսկման իրավունքը վերցվեց Ռուսաստանից և տրվեց Եվրոպական վեց մեծ տերություններին՝ Անգլիային, Ֆրանսիային, Գերմանիային, Ռուսաստանին, Ավստրո-Հունգարիային և Իտալիային: Կոնֆերեսը պահանջեց, որպեսզի Ռուսաստանն իր զորքերը անհապաղ դուրս բերի Արևմտյան Դայաստանի գրավված տարածքներից, մի հանգամանք, որը խիստ վտանգավոր վիճակ ստեղծեց արևմտահայության համար: Դայերի մի մասը հարկադրված դիմեց արտագաղթի:

Դայոց պատվիրակությունը, դառը հիասթափությամբ և լուրջ քաղաքական դասեր առած, վերադարձավ հայրենիք՝ հանգելով «Երկարե շերեփի» գաղափարին: Այս գաղափարի իմաստն այն էր, որ պետք է ապավինել սեփական ուժերին և ազատագրական պայքարի միջոցով հասնել բաղձալի հաղթանակին:

Սան Ստեֆանոյի պայմանագրով և ապա Բեռլինի կոնգրեսով Արևմտյան Հայաստանի բարենորոգումների խնդիրը դարձավ միջազգային դիվանագիտության քննարկման առարկա, այստեղից էլ արևմտահայության կյանքի բարենորոգման ու պատագրության խնդիրը միջազգային դիվանագիտության մեջ մտավ «Հայկական հարց» անունով: Օսմանյան կառավարությունը ևս հարկադրված ընդունեց հայերի ու հայկական խնդրի գոյության փաստը Թուրքիայում: Սակայն հետագայում, մեծ տերությունների միջև հակասությունների խորացման պատճառով, ոչ միայն դրականապես չլուծվեց Հայկական հարցը, այլև Թուրքիան, հմտորեն օգտվելով այդ հակասություններից ու պատրվակ բռնելով հայերի ազատաբաղ ձգտումները, սկսեց Հայկական հարցը լուծել թուրքական մեթոդով՝ հայերի մեծ ու փոքր ջարդեր կազմակերպելու և, ի վերջո, Արևմտյան Հայաստանը հայաբափ անելու միջոցով: Հայկական հարցի միջազգայնացման առնչությամբ Ասգլիայի հետագա վարչապետ Լլոյդ Չորջը զղջումով խոստովանել է, որ եթե չլիներ մեր (Արևմուտքի) չարաբաստիկ միջամտությունը, ապա հայերի մեծամասնությունը արդեն Սան Ստեֆանոյի պայմանագրով անցած կլիներ ռուսական հովանու տակ:

## 2. Հայ պատրական խմբակներն ու կազմակերպությունները 1870-1880-ական թվականներում

**Ազատագրական շարժման վերելքը** XIX դարի երկրորդ կեսին արևմտահայերի դրությունը ավելի ծանրացավ: Քաղաքական հալածանքներն ու հետապնդումները մեծ չափեր ընդունեցին հատկապես սուլթան Աբդուլ Համիդ II-ի օրոք (1876-1909 թթ.), որը պատմության մեջ հայտնի է «զուլումի» (դաժանությունների, բռնությունների) ժամանակաշրջան:

Միաժամանակ, 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո աննախընթաց վերելք ապրեցին հայ ժողովրդի ազգային պատրական շարժումները: Հայերը, ոգեսորված ռուսական զորքերի հաղթանակներից և բալկանյան ճնշված ու պետականազուրկ ժողովուրդների հաղթական պատրագական պայքարից, ամեն կերպ ձգտում էին Արևմտյան Հայաստանը դուրս բերել օսմանյան Թուրքիայի դժնդակ լծից:

Այդ շրջանում անդուլ քարոզչական գործունեություն ծավալեցին մի շարք հայ գրողներ, հրապարակախոսներ, քաղաքական ու հո-

գեոր գործիչներ: Զարթոնք ապրեց ազգային ինքնագիտակցությունը: 70-80-ական թվականներին գործնականում ձևավորվեց հայ ազատագրական շարժման գաղափարախոսությունը, որի հիմնադիրները դարձան Ղ. Ալիշանը, Մ. Խրիմյանը, Ռաֆֆին, Ռ. Պատկանյանը, Գր. Արծրունին, Ծերենցը (Յովսեփ Շիշմանյան), Ե. Տեմիրջիպաշյանը, Մ. Փորթուգալյանը և ուրիշներ:

Դայ ազգային-ազատագրական գաղափարախոսության հիմքում ընկած էր առավել դժողակ պայմաններում գտնվող արևմտահայության ազատագրման գերխնդիրը: Ընդսմին, այդ գաղափարաբանները (Ռաֆֆին, Պատկանյանը, Խրիմյանը և ուրիշներ) հանգում էին զինված պայքարի ռազմավարության գաղափարներին: Այդ գաղափարախոսությանը հայ ժողովուրդը ներկայացվում էր որպես մի անքակտելի ամբողջություն՝ մի ազգ, մի հայրենիք և այլն:

### **Ազատագրական-հայրենասիրական խմբակներն ու կազմակերպությունները**

Պատմաքաղաքական և գաղափարական այսպիսի նպաստավոր մթնոլորտում ձևավորվեցին առաջին քաղաքական խմբակներն ու կազմակերպությունները: Այդպիսիք ստեղծվեցին թե արևելահայերի և թե արևմտահայերի շրջանում:

Ազատագրական-հայրենասիրական առաջին խմբակը ստեղծվել է 1869 թ. Ալեքսանդրապոլում (Գյումրի) «Բարենպատակ ընկերություն» անունով: Ավելի քան 40 անդամից բաղկացած գաղտնի այս խմբակի հիմնադիրն ու ղեկավարն էր ուսուցիչ Արսեն Կրիտյանը: 1874 թ. մի այլ խմբակ ստեղծվեց Ղարաքիլիսայում (Վանաձոր), որը կոչվում էր «Հայրենիքի սիրո կոնտորա»:

1872 թ. Վանում հիմնվեց «Միություն ի փրկություն» գաղտնի կազմակերպությունը: 70—ական թթ. վերջերին, դարձյալ Վան քաղաքում, հիմնվեց «Սև խաչ» մարտական կազմակերպությունը:

1881 թ. Կարինում ձևավորվեց «Պաշտպան հայրենյաց» գաղտնի կազմակերպությունը Խաչատուր Կերեքցյանի, Կարապետ Նշկյանի և մյուսների գլխավորությամբ: Մեկ տարի անց՝ 1882 թ., այս անգամ արդեն Մոսկվայում, մի խումբ հայ ուսանողներ հիմնեցին «Հայրենասերների միություն» խմբակը: Այս խմբակը լույս ընծայեց «Ազատության ավետաբեր» թերթը: Խմբակը կրում էր ռուս նարողնիկության գաղափարական ազդեցությունը:

80-ական թվականներին քաղաքական-հայրենասիրական խմբակ-

Աեր հիմնվեցին նաև Երևանում՝ «Հայասեր-ազգական», Թիֆլիսում (Գր. Արծրունու կողմից «Մշակ» թերթին կից), Շուշիում՝ «Ուժ», արտասահմանում և այլուր:

**Նեանակությունը** Այսպիսով, XIX դարի 70-80-ական թթ. հայ իրականության մեջ հանդես եկան մի շարք քաղաքական խմբակներ ու կազմակերպություններ, որոնք հետապնդում էին Հայաստանը օտարի լծից ազատագրելու վեհ նպատակ: Դրանք կատարեցին թե՛ քարոզչական մեծ աշխատանք և թե՛ գործնական նախապատրաստական քայլեր հայրենիքի ազատագրման ուղղությամբ: Վերը նշված խմբակներից ու կազմակերպություններից ամենանշանավորն ու ազդեցիկը, թերևս, «Պաշտպան հայրենյաց» բազմանդամ կազմակերպությունն էր: Նա սերտ կապեր էր հաստատել Վանի «Սև խաչ» կազմակերպության հետ, իիմնել էր գաղտնի զինագործական արհեստանոց, հա;թայթում էր ըենք և այլն:

Սակայն հիշյալ ազատագրական խմբակների ու կազմակերպությունների գործունեությունը, որպես կանոն, երկար չէր տևում, քանզի դրանք հայտնաբերվում էին թե՛ ռուսական և թե՛ թուրքական իշխանությունների կողմից և իսկույն ջախջախվում: Հայ ազգային-ազատագրական պայքարը նոր որակ է ստանում XIX դարի 80-ական թվականների երկրորդ կեսից, երբ արդեն ձևավորվում են հայ ազգային քաղաքական կուսակցությունները:

### 3. Հայ ազգային քաղաքական կուսակցությունների ձևավորումը

**Նախադրյալները** XIX դարի վերջին քառորդին հայ ժողովուրդը թևակոխեց ազգային ինքնագիտակցության ու ինքնաճանաչման որակապես նոր վերելքի շոջան: Հայ հասարակական-քաղաքական միտքն իր ուշադրությունը սկսուել էր գերազանցապես Արևմտյան Հայաստանի «ավետյաց երկրի» վրա, քանզի արևմտահայության կացությունը թուրքական բիրտ վարչակարգի, քրդական բռնությունների ու անիրավությունների պայմաններում շատ ավելի ծանր էր ու հղի կործանարար հետևանքներով:

Չնայած հայ ժողովրդի սոցիալական ոչ միտարրությանը, այդուհանդերձ, նրա ճնշող մեծամասնության համար առաջնայինը եղել է ոչ այնքան սոցիալ-դասակարգային, որքան ազգային-քաղաքական

ազատագրության խնդիրը և առաջին հերթին՝ արևմտահայ արյունակից եղբայրների ու քույրերի ազատագրության գործը։ Այդ շրջանում հայ հասարակության սոցիալական գրեթե բոլոր խմբերը սոցիալ-հոգեբանորեն համակված էին գերազանցապես արևմտահայ դատով, որը մի տեսակ երկրորդ պլան էր մղում սոցիալ-դասակարգային պայքարը։ Եվ, առհասարակ, չպետք է գերազնահատել սոցիալ-դասակարգային գործոնի նշանակությունը հայ ժողովրդի բազմադարյա պատմության մեջ։ Ակնհայտ է, որ դարեր շարունակ պետականությունն ու քաղաքական անկախությունը կորցրած ժողովրդի համար հիմնահարցը եղել է ազգային գոյանարտը, ինքնապաշտպանությունը, իր հայրենի տարածքի վրա ազգային պետականության ու քաղաքական անկախության վերականգնումը։

Հենց արևմտահայության ազատագրության գորավոր հիմքի վրա էլ ձևավորվեցին հայ ազգային երեք կուսակցությունները՝ Արմենականը, Յնչակյանը և ՅՅ Դաշնակցությունը։ Անշուշտ, ազգային կուսակցությունների առաջացման համար, ազատագրական շարժման գերիննդրի կողքին, եղել են նաև սոցիալ-տնտեսական նախադրյալներ, սակայն դրանք ունեցել են ոչ առաջնային նշանակություն։

**Արմենականեր** 1885 թ. Արևմտյան Յայաստանի Վան քաղաքում հիմնվեց Արմենական կուսակցությունը՝ Մկրտիչ Ավետիսյանի (Թերլեմեզյանի) նախաձեռնությամբ։ Արմենականների հիմնադիրները գաղափարապես ներազդվել էին իրենց նախկին ուսուցիչ Մկրտիչ Փորթուգալյանի և նրա հիմնած «Արմենիա» թերթի հայացքներից։ Ֆրանսիայի Մարսել քաղաքում լույս տեսնող այդ թերթի անունով էլ վերոհիշյալ կուսակցությունը կոչվեց «Արմենական»։ Մ. Փորթուգալյանը դարձավ այս կուսակցության գաղափարական կնքահայրը։

Արմենականները ունեցել են իրենց ծրագիրը, որը կրնապիրացիայի (գաղտնապահության) նախակով չի տպագրվել։

Արմենական կուսակցությունն իր առջև նապատակ էր դրել ժողովրդին լուսավորել, կազմակերպել, համախմբել, զինակրթել, այնուհետև՝ դրամ հավաքելու և ինքնապաշտպանության միջոցով նախապատրաստվել և, արտաքին ու ներքին նպաստավոր պահը օգտագործելով, ապստամբել ու ազատագրել Յայաստանը։ Նրանք կարևորություն չեն տալիս այն բանին, թե ազատագրված Յայաստանում հասարակական-քաղաքական ինչպիսի կարգեր կհաստատվեն։

Նրանք դա համարում էին ապագայի խնդիր: Բայց Արմենական կուսակցությունը չդարձավ համազգային, ամրակուր կազմակերպություն: Նրա գործունեությունը սահմանափակվեց իհմնականում Վան-Վասպուրականով, մասամբ էլ՝ Թավրիզով, Թիֆլիսով ու Կ. Պոլսով: 1896 թ. Վանի հերոսամարտի ողբերգական դեպքերից հետո Արմենական կազմակերպությունը մեծ կորուստներ կրեց ու խիստ թուլացավ:

**Հնչակյաններ** 1887 թ. Շվեյցարիայի ժնև քաղաքում կովկասահայ մի խումբ ուսանողներ, Ավետիս Նազարբեկյանի նախաձեռնությամբ, իհմնում են Հնչակյան կուսակցությունը: Կուսակցության օրգանը դարձավ համանուն «Հնչակ» թերթը:

Հնչակյան կուսակցությունն իր առջև դրել էր մոտակա և հեռավոր նպատակ: Հնչակյանների մոտակա գլխավոր նպատակն էր Արևմտյան Հայաստանի ազատագրումը, իսկ հեռավորը՝ սոցիալիստական կարգերի հաղթանակը: Ընդ որում, նրանք խնդիր էին դրել ապստամբական պայքարի միջոցով ազատագրել Երեք Հայաստանները (Թուրքահայաստանը, Ռուսահայաստանը և Իրանահայաստանը) և դրանց միավորումով ստեղծել «Մեծ Հայաստան»:

Հնչակյան կուսակցության իհմնադիրները, ուսանելով Եվրոպայում և հաղորդակից լինելով սոցիալիզմի գաղափարներին, ուզում էին ազատագրված Հայաստանում հաստատել մարքսիստական-սոցիալիստական կարգեր: Հնչակյաններն իրենց համարում էին մարքսիստ, սոցիալիստներ: Կազմակերպական տեսակետից հնչակյան կուսակցությունն ուներ կենտրոնացված կառուցվածք:

XIX դարի 90-ական թվականների կեսերին այս կուսակցությունն իր ներսում առաջացած գաղափարական երկվության (ազգային և դասակարգային) պատճառով 1896 թ. օգոստոսին Լոնդոնի համագումարում պառակտվեց: Առաջացավ երկու կուսակցություն Վերակազմյալ հնչակյան, որը ապավինեց գուտ ազգային-ազատագրական պայքարի գաղափարին, և Յին հնչակյան, որը շարունակեց գուգակցել ազգային և դասակարգային պայքարները:

**Հ.Հ. Դաշնակցություն** 1890 թ. Թիֆլիսում իհմնվեց Յայ Յեղափոխականների (հեղափոխական) Դաշնակցությունը (ՀՅԴ): Նրա իհմնադիրներն էին Քրիստոֆոր Միքայելյանը, Սիմոն Զավարյանը, Ստեփան Զորյանը (Ռուստոմ) և ուրիշներ: Դաշնակցություն կուսակցությունը նույնպես իր առջև նպատակ էր դրել պայքարի բոլոր ձևերի գուգակցման միջոցով հասնել «Թուրքահա-

յաստանի քաղաքական և տնտեսական ազատության»: Կուսակցության պաշտոնաթերթն էր «Դրոշակը»:

Ի տարբերություն հնչակյանների՝ դաշնակցությունն ուներ ապակենտրոն կազմակերպական կառուցվածք: Կուսակցության կարգախոսն էր «Ազատություն կամ մահ»: Ժամանակի ընթացքում ՀՀԴ դրսերեց մեծ կենսունակություն և դարձավ հայ ժողովրդի՝ իրավամբ ամենազորեղ ու ամենամասսայական քաղաքական ուժը՝ իր ուսերի վրա կրելով հայ քաղաքական դատի ողջ ծանրությունը:

Ինչպես տեսնում ենք, Հայաստանի ազատագրման նպատակի խնդրում երեք կուսակցություններն էլ միասնական էին, սակայն դրան հասնելու ձևերի ու միջոցների հարցում՝ տարակարծիք: Եթե Արմենականները ապավիճում էին ինքնապաշտպանության գործելակերպին, ՀՀ Դաշնակցությունը՝ մասնակի ապստամբությանը, ապա հնչակյանները, իբրև պայքարի միջոց, ընտրել էին ընդհանուր ապստամբությունը: Երեք կուսակցություններն էլ ավել կամ պակաս չափով ջանում էին իրենց գործելակերպով խոշոր տերությունների ուշադրությունը բներել Հայկական հարցի վրա:

**Նշանակությունը** Այսպիսով, հայ ազգային կուսակցությունները ծնունդ առան հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժման գաղափարախոսության հենքի վրա, և դրանցից յուրաքանչյուրը, իրեն բնորոշ մարտավարությամբ, սկսեց ղեկավարել և ուղղություն տալ հայ ազատամարտին: Կուսակցությունների երևան գալը երևույթ էր հայ իրականության մեջ: Հատկանշական է, որ մինչև կուսակցությունների ձևավորումը, հայ հասարակական-քաղաքական կյանքում առանձնապես նշանակալի է եղել հայ առաքելական եկեղեցու դերը՝ Ամենայն հայոց հայրապետի գլխավորությամբ: Սակայն կուսակցությունների առաջացումից հետո հայ քաղաքական կյանքի ղեկը, ազատագրական պայքարի կազմակերպչի ու առաջնորդողի առաքելությունը դրվեցին ազգային կուսակցությունների ուսերին: Դրանից հետո, ժամանակի հրամայականով, եկեղեցին մի տեսակ օտարվեց քաղաքականությունից, բայց պահպանեց իր գլխավոր ֆունկցիան՝ ժողովրդի հոգեւոր ու բարոյական առաջնորդի դերը:

Հայ ազգային կուսակցությունների երևան գալով հայ քաղաքական մտքի և ազատագրական շարժման որակապես նոր փուլի սկիզբ դրվեց: Նրանք սկսեցին կազմակերպել ու ղեկավարել հայ ժողովրդի ազատագրական պայքարը հանուն ազատության, անկախության և

ժողովրդավարության: Ազգային կուսակցությունների գործունեության ամենաբնորոշ կողմը դարձավ ազգային-քաղաքական ուղղվածությունը: Իսկ այդ գործունեության սոցիալ-տնտեսական կողմին տրվեց ածանցյալ նշանակություն: Այդպիսով, սկիզբ առավ հայկական հեղափոխությունը, որն ուներ ոչ այնքան սոցիալ-դասակարգային, որքան ազգային-ազատագրական ուղղվածություն:

#### **4. Նայ ազգային-ազատագրական շարժումները և հայկական կովորածները XIX դարի 90-ական թվականներում**

**Սուլթանական**

**կառավարության**

**քաղաքականությունը**

XIX դարի 90-ական թվականներին, երբ ասպարեզ էր նետվել Յայկական հարցը, քաղաքական ասպարեզ էին իջել հայ ազգային կուսակցությունները, և արևմտահայությունը ինք-

նաբերաբար դիմում էր իր անձի, գույքի ու պատվի պաշտպանության, սուլթանական կառավարությունն ավելի էր սաստկացնում հալածանքներն ու բռնությունները հայերի նկատմամբ: «Կարմիր» սուլթան Աբդուլ Յամիդ II-ի օրոք հայերի բնաջնջումը դարձավ պետական քաղաքականություն:

Յայերին մեծ անհամատություն սկսեցին պատճառել քրդական ավարառու իրոսակներից քաղկացած, այսպես կոչված, «համիդիե» հեծյալ գնդերը, որոնք հայկական գյուղերում ու ավաններում, փաստորեն, կատարում էին պատժիչ ոստիկանի դեր: Թուրքական իշխանությունները հայերի դեմ սովորաբար օգտագործում էին քրդական ավարառու ցեղախմբերի: Դրացի քրդական շատ աշիրեթներ գործիք դարձան թուրքական կառավարության ձեռքին՝ հայերին հնագանդության մեջ պահելու և նրանց ազատատենչ ձգտումները խեղդելու համար: Նայ քաղաքական շրջանակները (Դերսիմի քերի, Մալխաս, Յրայր, Չառլ, Ռուբեն և ուրիշներ) մեծ ճիգեր գործադրեցին դրացի քրդերի հետ միասնական ճակատ կազմելու ու համագործակցելու ուղղությամբ: Բայց հայ-քրդական զինակցության համար թափած ջանքերը արդյունք չտվեցին: Շոշափելի չեղավ նաև հայ-ասորիների և այլ ճնշված ժողովուրդների համագործակցությունը: Անտարակույս, արևմտահայերի ազատագրական շարժման հաջողությունը զգալի չափով կախված էր նրանից, թե ինչ չափով հնարիավոր կլիներ դաշինք հաստատել թուրքիայում հեծող մյուս ճնշված ժողովուրդների հետ և նրանց մասնակից դարձնել օսմանյան բռնակալությունից ա-

զատագրվելու պայքարին: Այդ բանը տեղի չունեցավ: Արևմտահայ ազատագրական պայքարը ընթացավ հիմնականում մեկուսացած:

**Ֆիդայական ռարժումը** 90-ական թթ. հայ ժողովրդի ազատագրական պայքարը ղեկավարում և դրան ուղղություն էին տալիս հայ ազգային երեք կուսակցությունները՝ Արմենակաները, Յնչակյանները և Հ.Յ. Դաշնակցությունը: Դրանք հայդուկային զինական խմբեր ու գենք էին փոխադրում Արևմտյան Յայաստան «երկիր», զինում էին ժողովրդին, կազմակերպում ցույցեր, ահաբեկումներ, մեծ ու փոքր ինքնապաշտպանական մարտեր և այլ հանդուգն գործողություններ:

1890 թ. հուլիսին հնչակյանները Կ. Պոլսում կազմակերպեցին Գում Գափուի ցույցը որպես բողոքի արտահայտություն էրզրումի հայոց առաջնորդարանում ոստիկանների կատարած խուզարկությունների դեմ: Սակայն խաղաղ այս ցույցը ենթարկվեց ոստիկանների գնդակոծությանը և ցրվեց:

1890 թ. սեպտեմբերին Դաշնակցության նախաձերնությամբ կազմակերպվեց հայ ուսանող, ազատամարտիկ Սարգս Կուկունյանի արշավանքը: 125 հոգուց բաղկացած մարտական խումբը փորձ արեց Անդրկովկասից ռուս-թուրքական սահմանով մտնել Արևմտյան Յայաստան, որպեսզի տեղում ոգևորի ու ոտքի հանի արևմտահայ եղբայրներին: Սակայն ռուս-թուրքական սահմանագլխին Կուկունյանի արշավանքը անհաջողության մատնվեց: Նրանք, մի քանի զոհեր տալով, հանձնվեցին ռուս սահմանապահներին: Ազատամարտիկներից շատերը ձերբակալվեցին ռուսական իշխանությունների կողմից և որպես քրեական հանցագործներ՝ դատվեցին ու տարբեր ժամկետներով աքսորվեցին Սիբիր և Սախալին:

Պետք է ասել, որ այդ շրջանում հայ ազգային-ազատագրական շարժումների նկատմամբ բացասական վերաբերմունք ուներ նաև Ռուսաստանը: Ցարական կառավարությունը հայերին մեղադրում էր անջատողականության (սեպարատիզմի), հեղափոխականության, խառնակչության մեջ և, համագործակցելով թուրքական իշխանությունների հետ, արգելում ու խստորեն պատժում էր դեպի «երկիր» անցնող զինակիր մարտական խմբերին:

Այս շրջանում հայ ժողովրդի ազատագրական պայքարի բնորոշ կողմերից դարձան հայդուկային կամ ֆիդայական շարժումները: Յանդես Եկան հայ ազատամարտի ճանաչված դեմքեր՝ Յունոն (Յարություն

աղա), Կոռբերցի Արաբոն, Աղբյուր Սերոբը (Վարդանյան), Յրայրը (Արմենակ Ղազարյան), Մեծ Մուրադը (Յամբարձում Պոյաճյան), Անդրանիկը (Օգանյան), Գևորգ Չառւշը (Աղամյան), Փարամազը (Մաթևոս Սարգսյան), Քեռին (Արշակ Գավաֆյան), Թաթուլը (Արամ Արամյան), Վազգենը (Տիգրան Տերոյան), Գայլ Վահանը (Դրախտ), Նիկոլ Շումանը և շատ ուրիշներ:

Ֆիդայիզմը ազգային ու ժողովրդական վրիժառության, պարտիզանական պայքարի ձև էր: Այս շարժումը սկզբնավորվեց 80-ական թվականներին (Բալկանյան ժողովրդների ազատագրական պայքարի օրինակով) և լայն տարածում ստացավ 90-ական թվականներին ու XX դարի սկզբին:

Ֆիդայու համար կարևոր արժեքներ էին՝ նամուսը (պատիվը), արդարամտությունը, անձնազնոհությունը հանուն հայ ժողովրդի ազատագրության: Ֆիդայու համոզումն էր՝ պատվով մեռնելը շատ ավելի արժեք ունի, քան իբրև ստրուկ ապրելը: Յայդուկները սովորաբար ժողովրդի ծոցից ելած հասարակ մարդիկ էին, որոնք տարբեր առիթներով ենթարկվել էին ազգային ու սոցիալական կեղեքիչներ՝ բռնություններին և շահատակություններին: Նրանց պայքարը, ազգային ազատագրական ձգտումներից զատ, ուներ նաև սոցիալ-դասակարգային բովանդակություն: Նրանցից շատերը, ունենալով նաև անձնական դրամա, բողնում էին տուն ու տեղ, քաշվում լեռները կամ անտառները, կազմում խմբեր ու պայքարում ժողովրդի ազատության համար, բոլոր տիպի անարդարությունների դեմ: Յայդուկային պայքարի տարածված վայրեր էին Տարոնը, Սասունը, Վասպուրականը, Բարձր Յայքը և այլն: Յայդուկային շարժումը կազմակերպված բնույթ ստացավ հայ ազգային կուսակցությունների գործունեության շնորհիվ: Յայդուկախմբերը գինվում, հանդերձավորվում և գործնական դեկավարություն էին ստանում հատկապես Դաշնակցության կողմից:

90-ական թթ. Ֆիդայական պայքարի ամենաերևելի դեմքը, անկասկած, Աղբյուր Սերոբն էր, որն իր խմբով մեծ քաջագործություններ կատարեց և, ի վերջո, 1899 թ. աշնանը մատնությամբ սպանվեց: Մատնությունների հետևանքով նահատակվեցին նաև Վազգենը, Գուրգենը և ուրիշներ:

## **1894 թ. Սասունի աղստամբությունը**

Քաղաքական կուսակցությունների գործունեության ամենաակնառու երևույթն ապստամբական ելույթների կազմակերպումն էր: 1894 թ. ամռանը հայ ազատագրական պայքարի միջնաբերդը համարվող Սասունում Հնչակյան կուսակցությունը կազմակերպեց ապստամբական ելույթ: Սասունի այս ոչ այնքան լավ նախապատրաստված հերոսամարտը Միհրան Տամատյանի ձերբակալությունից հետո գլխավորեց Մեծ Մուրադը: Ապստամբության աչքի ընկնող ղեկավարներից էին նաև Շրայրը, Գ. Չառւշը և այլք: Բայց քանի որ դիմակայող ուժերը խիստ անհավասար էին, ուստի արյան մեջ խեղդվեց սասունցիների ելույթը: Թուրք-քրդական միացալ ուժերը մտան Սասուն և հազարավոր մարդկանց սրի քաշեցին, այդ թվում կանանց, ծերերի ու երեխաների, ավերվեցին ու կողոպտվեցին տասնյակ գյուղեր: Ապստամբության ղեկավարներից Մուրադը և Գ. Չառւշը բանտ նետվեցին:

## **Բարենորոգումների Մայիսյան ծրագիրը**

Սասունի արյունալի ղեպերի առիթով գործին միջամտեցին եվրոպական տերությունների Կ. Պոլսի ղեսպանները: 1894 թ. նոյեմբերին կազմվեց հատուկ հանձնաժողով՝ Սասունի ղեպերն ուսումնասիրելու համար: Հանձնաժողովը հանգեց այն եզրակացության, որ Սասունի անմեղ բնակչության հանդեպ կատարվել է եղեռնագործություն: Այդ նյութերի հիման վրա երեք մեծ տերությունների Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի Կ. Պոլսի ղեսպանները մայիսին Բ. Չռանը ներկայացրին Արևմտյան Հայաստանին վերաբերող բարենորոգումների ըրագիր (դրա համար էլ այդ ծրագիրը կոչվեց Մայիսյան): Չրանով իսկ կրկին բարձրացվեց Հայկական հարցը: 1895 թ. մայիսյան ռեֆորմների նախագծով Թուրքիան պարտավորվում էր Արևմտյան Հայաստանում, Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածի ոգով, անցկացնել բարենորոգումներ: Սասնավորապես նախատեսվում էր թուրքահայ վեց նահանգներում (Բիթլիսի, Վանի, Էրզրումի, Սվագի, Դիարբեքիրի, Խարբերդի) անցկացնել վարչական, դատական, ֆինանսական բնույթի բարենորոգումներ, կանխել ամեն տեսակի կամայականությունները և արևմտահայ ժողովորդին երաշխավորել կյանքի ու գույքի ապահովություն:

## **Բարը Ալիի**

Ոեֆորմների նախագիծը ստանալուց հետո սուլթանական կառավարությունը, որն արդեն լավ էր հասկացել մեծ տերությունների շահադիտական նպատակները,

իրապարակ է հանում իր առարկությունները, որոնք հետևյալն էին. ոչ միայն Թուրքիայի հայաբնակ շրջաններում, այլև Երկրի բոլոր մասերում է զգացվում բարենորոգումների կարիքը, ուստի և Արևմտահայաստանում բարենորոգումներ կանցկացվեն, երբ Բ. Դուռը այդպիսիք իրագործելու հնարավորություն կունենա առհասարակ: Արևմտահայաստանի բարենորոգումների հարցը, այսպիսով, թաղվում էր ընդհանուր բարենորոգումների վերացական խոստումների մեջ, որոնք կատարելու համար Բ. Դուռը չուներ ոչ ցանկություն և ոչ էլ հնարավորություն: Այսպիսով, բարենորոգումների ծրագիրը տերությունների թողտվությամբ, փաստորեն, մեժվեց: Տեսնելով, որ սուլթանը ձգձգում է Մայիսյան բարենորոգումների նախագծի հաստատումն ու գործադրումը, 1895 թ. սեպտեմբերին հնչակյանները Կ. Պոլսում բազմահազարամոց ցույց կազմակերպեցին, որը պատմության մեջ հայտնի է Բարը Ալիի (կառավարության նստավայր) ցույց անունով: Կազմակերպիչները նպատակ ունեին խաղաղ ցույցի միջոցով մեծ տերությունների ուշադրությունը հրավիրել Հայկական հարցի վրա և ճնշում գործադրել սուլթանական կառավարության վրա՝ բարենորոգումներն ընդունել տալու ու գործադրելու համար: Բարը Ալիի խաղաղ ցույցը գնդակոծվեց ու ցրվեց Գում Գափուի ցույցից առավել դաժանորեն: Շուտով սկսվեցին հայերի կոտորածները ամբողջ մայրաքաղաքում: Ի վերջո, 1895 թ. հոկտեմբերին, թեև Անգլիայի և Ֆրանսիայի ճնշմամբ Աբդուլ Համիդ II-ը հաստատեց Մայիսյան բարենորոգումների ծրագիրը, բայց այն չիրագործվեց:

## **«Բանկ Օստոնան» գործողությունը**

Ավելի ուշ՝ 1896 թ. օգոստոսին, հայերը ևս մի փորձ կատարեցին թուրքական կառավարության վրա ճնշում գործադրելու և մեծ տերությունների ուշադրությունը Հայկական հարցի լուծման ուղղությամբ գրավելու համար: Դաշնակցական զինված մարտիկների մի խումբ, Բարեկեն Սյունու առաջնորդությամբ, իրականացնում է «Բանկ Օտտոնան» գործողությունը: Այն հետապնդում էր մինիայն քաղաքական նպատակներ: Հայերը, մի քանի զոհեր տալով (այդ թվում նաև Բ. Սյունուն), գրավում են Կ. Պոլսի միջազգայնացված այդ խոշորագույն բանկը, պատանդ վերցնում աշխատակիցներին և պահանջում

անհապաղ կենսագործել խոստացված հայկական բարենորոգումների ծրագիրը, սպառնալով՝ հակառակ դեպքում պայթեցնել բանկի շենքը իրենց հետ միասին: Միջադեպի խաղաղ հարթման նպատակով գործին միջամտում է Կ. Պոլսի ռուսական դեսպանությունը: Դեսպան Նելիդովի երաշխավորությամբ թույլատրվեց հայ մարտիկներին անվճանաս դուրս գալ բանկի շենքից, փոխադրվել ֆրանսիական շոգենավու հեռանալ Մարսել: Հայ ազատամարտի այս ուշագրավ դրվագն էլ անպտուղ ավարտ ունեցավ: Պետք է նշել, որ ահաբեկչական գործողությունները ավելի էին գրգռում թուրք իշխանավորների ու կրոնամոլ զանգվածների հայատյաց տրամադրությունները:

**Հայկական  
կոտորածները և  
մեծ տերությունների  
դիրքորոշումները**

**Հայկական  
հարցում**

Սուլթանական կառավարությունը, օգտվելով գերտերությունների (Անգլիայի, Գերմանիայի, Ռուսաստանի, Ֆրանսիայի, Ավստրո-Հունգարիայի) հակասություններից, ոչ միայն բարենորոգումներ չանցկացրեց, այլ դրա փոխարեն 1895-1896 թթ. ամբողջ կայսրությունում կազմակերպեց հայերի զանգվածային կոտորածներ, որոնց զոհ գնաց շուրջ 300 հազար հայ: Բացի այդ, 100 հազարից ավելի հայեր արտագաղթեցին և մոտ 100 հազարի չափ էլ բռնությամբ մահմեղականացվեցին:

90-ական թվականներին և XX դարի սկզբին ուժեղացավ նաև ցարիզմի ոչ հայանպատ քաղաքականությունը: Եթե Օսմանյան թուրքիան հայերի նկատմամբ իրականացնում էր զուլումի և ջարդարարության քաղաքականություն, ապա ցարական Ռուսաստանը՝ հայերի հալածման և ձուլման քաղաքականություն: Այս շրջանում Ռուսաստանը Հայկական հարցի նկատմամբ գրավեց երկուինի դիրք: Դեպի հարավի տաք «ծովերը» ձգտող Ռուսաստանի շահերի տեսակետից ամենակին էլ ձեռնտու չեր ինքնավար Հայաստանի գոյությունը, հանգամանք, որը կարող էր հետագայում խոչընդոտ հանդիսանալ Մերձավոր Արևելքում Ռուսաստանի նվաճողական քաղաքականության ճանապարհին: Նախորդ պատմաշրջանի փորձով Ռուսաստանն այլևս չեր ցանկանում «Փոքր Ասիայում ևս մի նոր «Բուլղարիա» կամ «Մերքիա» ստեղծել: Դարավերջին ռուսական կառավարությունը թուլացրեց հետաքրքրությունը մերձավորարևելյան խնդիրների նկատմամբ և իր նվաճողական քաղաքականության ծանրության կենտրոնը տեղափոխեց Հեռավոր Արևելք:

Ավել կամ պակաս չափերով երկողին ու շահախնդիր պետք է համարել նաև Արևմուտքի տերությունների քաղաքականությունը Հայկական հարցում: Եվ առհասարակ, մեծ տերությունների դիրքը Հայկական հարցում գնահատելիս պետք է ընդգծել, որ նրանցից յուրաքանչյուրն իր շահերի տեսանկյունից շահարկել է Հայկական հարցը, այն օգտագործել որպես մանրադրամ՝ իր նվաճողական նպատակների համար, որպես Թուրքիայի վրա քաղաքական ճնշման միջոց: Հայկական կոտորածները ինարավոր եղան նաև Գերմանիայի թողտվության քաղաքականության հետևանքով: Դարավերջին հզորացող կայզերական Գերմանիան, որը նպատակ ուներ տնտեսապես ննդթափանցել Առաջավոր Ասիա, իրեն հայտարարեց մուսուլմանական աշխարհի ու մասնավորապես Թուրքիայի բարեկամ:

Այս ժամանակներում ասպարեզ իջած հայ ազգային քաղաքական կուսակցությունները չկարողացան օգտվել մերձավորարևելյան խնդրում շահագոգիո պետությունների միջն առկա հակասություններից և պայքարի այլ ձևերի գործադրմամբ հասնել տաճկահայ խնդրի հանգուցալուծնան: Ո՞չ Արմենականներին, ո՞չ Հնչակյաններին և ո՞չ էլ Դաշնակցությանն այդպես էլ չհաջողվեց իրագործել իրենց առջև ծառացած և նպատակով նույն ռազմավարական խնդիրը: Արդյունքում, ոչ միայն դրականորեն չլուծվեց Հայկական հարցը, դեռ ավելին, այն աղետաբեր եղավ Արևմտահայատանի ու արևմտահայության համար:

<b>Արևմտահայերի ինքնառաջատանական մարտերը</b>	1895-1896 թթ. թուրքական արյունահեղ կոտորածների ժամանակ հայկական առանձին շրջաններ ինքնաբերաբար դիմեցին ինքնապաշտպանության: Դրանցից առանձնապես նշանավոր են 1895-96 թթ. Զեյթունի ապստամբությունը և 1896 թ. Վանի հերոսամարտը:
--	---

Զեյթունի հայերը, այլևս չոխմանալով սուլթանական վարչակարգի տնտեսական կեղեցումներին ու քաղաքական բռնություններին, Հնչակյան կուսակցության նախաձեռնությամբ դիմում են զինված ապստամբության: Ապստամբությունն սկսվեց 1895 թ. հուլիսին (Կարապետ Թուրսարգսյան) և Նազարեթ Զառւշը: Հայ մարտիկներին հաջողվում է գրավել գայմագամի (գավառապետի) գրասննիակը և թուրքական զորանոցը: Ծովից և ցամաքից թուրքական մեծաքանակ ուժեր են շարժվում Զեյթունի վրա: Զեյթունը դաշնում է անառիկ ամոռոց: Թշնամու

ուժերը, բախվելով նրա «Ժայռերին», ջախջախվում ու հետ են շպրտվում: Չախողվում են Զեյթունը գրավելու թուրքերի բոլոր փող-ձերը: Յայ լեռնականները, նկատի ունենալով Սասունի 1894 թ. ապստամբության ու դրան հետևած կոտորածների դառը փորձը, հաստատ վճռել էին պայքարել մինչև վերջ: Նրանք կարողանում են մի քանի ամիս շարունակ հերոսաբար պաշտպանվել: Բայց, ի վերջո, 1896 թ. սկզբներին, եվրոպական մեծ տերությունների Կ. Պոլսի դեսպանների ու հայոց պատրիարքարանի միջնորդությամբ, հաշտեցվում են հակամարտող կողմերը: Ապստամբ գեյթունցիների և սուլթանական կառավարության միջև կայացվում է փոխգիշումային հաշտություն: Արդյունքում այս խոշորագույն ինքնապաշտպանության շնորհիվ գեյթունցիները կարողացան խուսափել համիլյան կոտորածներից:

Յամենատաբար տիսուր վախճան ունեցավ 1896 թ. հունիսին Վանի ինքնապաշտպանությունը, որը հաջողությամբ պաշտպանվող շուրջ 1000 վանեցի մարտիկներ արմենական գործիչ Մկրտիչ Ավետիսյանի ղեկավարությամբ փորձեցին անցնել Իրանի սահմանը: ճանապարհին, հավանաբար թուրք իշխանությունների գիտությամբ, ավագակային հարձակման ենթարկվեցին քրդական Մազրիկ կոչվող ցեղի (աշիրեթի) կողմից և գրեթե գլխովին կոտորվեցին: Սակայն մեկ տարի անց, 1897 թ. տասնունը, այդ ցեղից վրեժը լուծելու նպատակով, ՀՀԴ նախաձեռնությամբ կազմակերպվում է Խանասորի հայտնի արշավանքը, և արյունուշտ աշիրեթը պատժվում է:

Այսպիսով, XIX դարի 90-ական թվականներին աննախընթաց վերելք ապրեցին հայ ժողովրդի ինքնարուխ ազգային-ազատագրական շարժումները օսմանյան բռնապետության դեմ, որոնց, սակայն, արյունարբու սուլթանական կառավարությունը պատասխանեց հայերի զանգվածային կոտորածներով: Յայկական հարցի լուծման երկրորդ փորձը դարձյալ անհաջողություն կրեց:

## 5. Տայկական մշակույթը XIX դարի Երկրորդ կեսին

**Դպրոցը** XIX դարի Երկրորդ կեսը իրավամբ կարելի է համարել հայկական մշակույթի ամենաբուռն ծաղկման ժամանակաշրջաններից մեկը: Մշակրւթային նշանակալի առաջընթաց նկատվեց

թե՝ արևելահայ և թե՝ արևնտահայ կյանքում, որը պայմանավորված էր նոր ժամանակներում Հայաստանում և ամբողջ աշխարհում տեղի ունեցող արմատական տեղաշարժերով:

Հայ ժողովրդի ու նրա մշակույթի զարգացման հիմքը եղել ու մնում է դպրոցը: XIX դարի երկրորդ կեսին, հայ նոր գրականության ու արդի հայերենի արմատավորմամբ, նոր բովանդակություն ստացավ դպրոցը: Հայաստանն ու հայաշատ գաղթօջախները պատվում են աշխարհիկ ու հոգևոր բնույթի դպրոցների լայն ցանցով: 1874 թ. բացվում է Եջմիածնի Գևորգյան ճեմարանը, որը դառնում է կրթական խոշոր հաստատություն: Բարձրակարգ դպրոցներ են բացվում Կ. Պոլսում, Վանում, Կարինում, Երևանում, Շուշիում, Կարսում, Նոր Նախիջևանում, Թեոդոսիայում և այլուր: Հիմնվում են նաև մի շարք իգական դպրոցներ: Ասպարեզ են գալիս աչքի ընկնող մանկավարժներ՝ Պ. Շանշյանը, Ա. Բահաթրյանը, Ս. Մանդինյանը, Ղ. Աղայանը, Մ. Մամուրյանը, Ռ. Պերպերյանը և ուրիշներ, որոնք անգնահատելի դեր են կատարում նոր աշխարհիկ դպրոցական ծրագրերի և դասագործերի ստեղծման, մատադ սերնդի կրթության ու դաստիարակության գործում: Չնայած ցարական ու սովորական կառավարությունների հայ ժողովրդի ու նրա դպրոցների նկատմամբ վարած հալածական քաղաքականությանը, այնուամենայնիվ, հայերը համարվում էին տարածաշրջանի ամենաուսյալ ու գրագետ ժողովուրդներից մեկը:

**Պարբերական  
մամուլը** Դարի երկրորդ կեսին բոււն վերելք է ապրում հարուստ ավանդույթներ ունեցող հայ պարբերական մամուլը: Մամուլի ու հրապարակախոսության զարգացումը պայմանավորված էր հայ սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական կյանքում տեղի ունեցող խոր փոփոխություններով ու տեղաշարժերով: Լույս էին տեսնում մի քանի հարյուր անուն (340) պարբերականներ (թերթեր ու ամսագրեր): Դրանցից, իրենց խաղած դերով ու կշռով, հատկապես առանձնանում էին «Հյուսիսափայլը», «Մասիսը», «Արևելյան մամուլը», «Արարատը», «Մեղուն», «Մեղու Հայաստանին», «Մշակը», «Նոր դարը», «Փորձը», «Արձագանքը», «Մուրճը», «Հանրես ամսօրյան», «Արմենիան», «Հնչակը», «Դրոշակը» և այլն: Այդ շրջանում հայ հրապարակախոսության ամենաճանաչված դեմքերն էին Մ. Նալբանդյանը, Կ. Ութումյանը, Յ. Սվաճյանը, Գր. Արծրունին, Պ. Սիմոնյանը, Մ. Մամուրյանը, Յ. Պարոնյանը, Սպ. Սպանդարյանը, Ա. Ջովհաննիսյանը, Մ. Փորթուգալյանը, Ա. Արփիարյանը, Ա. Արասիսանյանը և ուրիշներ:

**Գիտությունը** Հայ մշակույթի ամենախոցելի տեղերից մեկը, անշուշտ, եղել է գիտությունը և հատկապես բնագիտությունը, որի զարգացման համար պետականագույրկ և իր գոյատնաման համար մաքառդ հայ ժողովուրդը նպաստավոր պայմաններ չի ունեցել: Նշված ժամանակաշրջանում մեծ չափով առաջադիմում են հասարակական գիտությունները՝ պատմագիտությունը, փիլիսոփայությունը, տնտեսագիտությունը և այլն: Առանձնապես նշանակալի նվաճումներ են ձեռք բերվում հայագիտության բնագավառում: Լույս են տեսնում նշանավոր հայագետ-արևելագետներ Ստ. Նազարյանի, Ք. Պատկանյանի, Մ. Ենինի, Մ. Օրմանյանի, Ա. Գարագաշյանի, Ա. Այտընյանի, Ստ. Պալասանյանի, Ղ. Ալիշանի, Ա. Երիցյանի, Գ. Սրվանձտյանցի և շատ ուրիշների արժեքավոր աշխատությունները: Հայ փիլիսոփայական և տնտեսագիտական մտքի զարգացման մեջ կարևոր ներդրում ունեցան Մ. Մանուրյանը, Գ. Կոստանդյանը, Ե. Տեմիրճյանը, Ա. Արասիսանյանը և ուրիշներ:

Բնական գիտությունների ասպարեզում ակնառու դեմք էր Եվլոպայում ճանաչում ստացած հայտնի երկրաբան-քիմիկոս Անդրեաս Արծրունին՝ իրապարակախոս Գր. Արծրունու եղբայրը: Դարի երկրորդ կեսի ճանաչված բնագետ էր նաև բուսաբան-դարվինիստ Ն. Տաղավարյանը: Դարավերջին համառուսական մասշտաբով մեծ ճանաչման արժանացավ բժիշկ-համաճարակաբան Մարգար Առուստամյանը:

**Գրականությունը** XIX դարի երկրորդ կեսը կարելի է բնութագրել որպես գեղարվեստական գրականության ծաղկման ժամանակաշրջան: Հրապարակ եկավ ականավոր գրողների մի ստվար խումբ, որը մի նոր, ավելի բարձր աստիճանի հասցրեց հայ բազմաժանր գրականությունը: Այդպիսի մեծատաղանդ գրողների շարքին են դասվում ազատության մեծ երգիչներ Միքայել Նալբանդյանը և Մկրտիչ Պեշիկթաշյանը, հայրենասեր բանաստեղծներ Սմբատ Շահազիզը և Ռաֆայել Պատկանյանը, մեծ քնարերգուներ Պետրոս Դուրյանը և Հովհաննես Հովհաննիսյանը, խոշորագույն պատմավիպասաններ Րաֆֆին ու Շերենցը, դասական արձակագիրներ Պերճ Պողյանն ու Ղազարոս Աղայանը, դրամատուրգներ Գաբրիել Սունդուկյանը, Հակոբ Պարոնյանը և ուրիշներ: Դարավերջին ասպարեզ իշան հայ գրականության երկու մեծերը Հովհաննես Թումանյանը և Ավետիք Իսահակյանը:

**Արվեստ** XIX դարի երկորրդ կեսին զարգանում է նաև արվեստը թատրոնը, Ըկարչությունը, երաժշտությունը, ճարտարապետությունը և այլն: Ի տարբերություն դարի առաջին կեսի, երկրորդ կեսին արդեն ձևավորվում է հայ պրոֆեսիոնալ թատրոնը: Հայ թատերական կյանքի աչքի ընկնող կենտրոններն էին Թիֆլիսը և Կ. Պոլիսը: Այս շրջանում հայ բեմարվեստի ամենափայլուն դեմքը, անկասկած, Պետրոս Ադամյանն էր, որը համաշխարհային ճանաչում լլտացավ շեքսպիրյան հերոսների բարձրարվեստ կատարումներով: Թատրոնի ստեղծագործական վերելքը կապված էր նաև հայ բեմարվեստի մյուս երևելու՝ Գ. Զմշկյանի անվան հետ:

Նկարչական արվեստի ամենափայլուն ներկայացուցիչներից էին Վարդես Սուրենյանցը, Գևորգ Բաշինջաղյանը, աշխարհահռչակ ծովանկարիչ Յովիաննես Այվազովսկին, իսկ երաժշտության բնագավառում՝ Տիգրան Չուխաջյանը, Քր. Կարա-Մուրզան և Մակար Եկմալյանը: Տիգրան Չուխաջյանը դարձավ հայ երաժշտական թատրոնի (օպերայի) հիմնադիրը: Նրան ժամանակակիցները իրավացիորեն անվանել են «Հայկական Վերդի»:

Այսպիսով, XIX դարի երկրորդ կեսին հայկական նշակույթը հասավ զարգացման որակական մի նոր աստիճանի և իր արժանի տեղը գրավեց համաշխարհային մշակույթի պատմության մեջ:

## Գլուխ տասնինգերորդ

# ՀԱՅԱՍՏԱՆ ՀԱՅԻ ՍԿԶԲՆԵՐԻՆ (1900-1914 թթ.)

### 1. Հայաստանը ՀՀ դարի սկզբին

**Արևելահայ** ՀՀ դարի սկզբին Հայաստանը տակավին շարունակում էր մնալ Երկատված: Եթե Ուստական կայսրության կազմում գտնվող Արևելյան Հայաստանում առկա էին քիչ թե շատ տանելի պայմաններ, ապա օսմանյան Թուրքիայի դժնդակ լծի տակ գտնվող Արևմտյան Հայաստանում գնալով անտանելի էր դառնում արևմտահայերի գոյավիճակը:

**Կյանքը**

Այս շրջանում Անդրկովկասի ու Արևելյան Հայաստանի քաղաքական կյանքը նշանավորվեց խոշոր իրադարձություններով: Մի կողմից՝ ապրանքակապիտալիստական հարաբերությունների հետագա զարգացման, իսկ մյուս կողմից՝ տնտեսական ու քաղաքական կյանքում իր դարն ապրած ավատական հարաբերությունների շատ գծերի պահպանման պայմաններում ավելի սրվեցին սոցիալ-դասակարգային հակամարտությունները լայն հասարակաշերտերի շրջանում: Տեղի ունեցան բանվորական ու գյուղացիական շարժումներ: Ուժեղացավ ազգային շրջանների պայքարը ցարիզմի ազգային-գաղութային քաղաքականության դեմ: Ավելի ակտիվ հասարակական-քաղաքական գործունեություն սկսեցին ծավալել ազգային և սոցիալ-դեմոկրատական կուսակցություններն ու կազմակերպությունները: Ուստաստանի օրինակով հայ իրականության մեջ էլ հանդես եկան սոցիալ-դեմոկրատական, մարքսիստական գաղափարների հայ հետևորդներ: Անդրկովկասում ևս առաջացան սոցիալ-դեմոկրատական,

մարքսիստական խմբակներ ու կազմակերպություններ: Արևելյան Հայաստանի տարածքում առաջին մարքսիստական խմբակը հիմնվել է դեռ 1899 թ. Զալալօղիում (Ստեփանավան)՝ Ստ. Շահումյանի կողմից:

1903 թ. Գ. Պետրանովի, Վ. Լենինի, Լ. Մարտովի, Լ. Տրոցկու և մյուսների ջանքերով տեղի ունեցավ ռուսական սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության (ՌՍԴԲԿ) վերջնական ձևավորումը՝ իր ծրագրով և կանոնադրությամբ: Սակայն ռուսական սոցիալ-դեմոկրատական շարժման մեջ ի սկզբանե առաջացավ երկու ուղղություն՝ ռեֆորմիստական-մենշևիկյան և արմատական (հեղափոխական)-բոլշևիկյան, որոնք էլ այդ նույն թվականի աշնանից կազմակերպորեն տարանջատվեցին իրարից:

Ռեֆորմիստական ուղղությունը, որը սկիզբ էր առել Արևմտյան Եվրոպայում և տարածում գտել նաև Ռուսաստանում «Էկոնոմիզմի» ձևով, կողմնակից էր գոյություն ունեցող կապիտալիստական կարգերի՝ ռեֆորմների ճանապարհով, թույլատրելի տնտեսական-դասակարգային պայքարի մեթոդներով բարեփոխմանը, կատարելագործմանը և պատմական տևական ժամանակի ընթացքում, աստիճանաբար սոցիալիզմի հաղթանակին: Սրա ամենակարևոր գաղափարախոսն էր գերմանացի սոցիալ-դեմոկրատ Էդ. Բեռնշտայնը:

Սոցիալ-դեմոկրատական բանվորական շարժման մյուս ուղղությունը, որի ամենամոլեռանդ ջատագովն էր Վ. Ի. Լենինը, հանդես էր գալիս բռնի, ապստամբական պայքարի և, այսպես կոչված, պրոլետարիատի դիկտատուրայի հաստատման միջոցով կապիտալիզմի խորտակման ու անդասակարգ կոմունիստական հասարակարգ կառուցելու՝ նարոդնիկներից ոչ պակաս ուտոպիական ծրագրերով:

Ինչեւ, դարասկզբին արևալահայ իրականության մեջ եղել են այդ երկու ուղղություններին էլ հետևորդ անհատներ և սոցիալ-դեմոկրատական կազմակերպություններ: Ի դեպ, այդ նույն ժամանակ (1903 թ.) ձևավորվեց նաև սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպությունը («Սպեցիֆիկներ»), որը գործում էր գուտ կովկասահայ բանվորության շրջանում և ստացել էր «հայ բունդականներ» (իրեաների նույնատիպ կազմակերպության անունով) անվանումը:

Սակայն պետք է նկատել, որ սոցիալ-դեմոկրատիայի այդ երկու թերերն էլ բավականաչափ նշանակություն չեն տալիս ազգային հարցին: Սրանց համար առաջնայինը հասարակության ընկերային, տնտեսական խնդիրներն էին, իսկ ազգայինը ածանցում ու կապում էին

առաջինների լուծման հետ: Նույն կերպ էին վարվում ու գործում հայ մարքսիստները (Բ. Կնունյանցը, Ստ. Շահումյանը, Ս. Սպանդարյանը, Ա. Զուրաբյանը, Ա. Մելիքյանը, Ս. Կասյանը, Ալ. Մյասնիկյանը և ուրիշներ) և մյուս «գույնի» սոցիալիստները, որն էլ ջլատում ու թուլացնում էր հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը:

Մինչդեռ հայ հասարակական-քաղաքական մտքի կիզակետում կանգնած էին ազգային հիմնահարցն ու, առաջին հերթին, արևմտահայության ազատագրության խնդիրը: Այս խնդիրները մեծ զոհություններով իրենց ուսերի վրա էին կրում հայ ազգային-քաղաքական կուսակցությունները՝ «Հնչակյանները»՝ իրենց երկու հատվածներով, «Դաշնակցությունը», մասամբ նաև՝ խիստ թուլացած «Արմենականները»: Պետք է նշել, որ հայ ազգային կուսակցություններն իրենց նպատակադրումներով հիմնականում ընդհանրական էին, տարբերությունը միայն նպատակին հասնելու միջոցների և ձևերի մեջ էր: Այս վերջին հանգամանքն էլ խանգարում էր համագործակցության ընդհանուր ծրագրի և միասնական ղեկավարության ստեղծմանը:

Դարասկզբին, դեպքերի բնորումով, հայ ազգային կուսակցություններն սկսեցին ավելի ու ավելի ճեծ ուշադրություն դարձնել նաև Կովկասի ու կովկասահայության հիմնահարցերին: Մասնավորապես ՀՀ Դաշնակցությունը, որը մինչ այդ ամբողջ ուշադրությունը բներել էր տաճկահայության խնդիրներին, շուտով, ցարիզմի վարած հայահալած քաղաքականության հետևանքով, սկսում է իր ջանքերն ուղղել նաև կովկասահայության շահերի պաշտպանությանը:

**Յարիզմի հայահալած 1903 թ. հունիսի 12-ի նույնությունը:** Սկսած XIX դարի վերջերից, ցարիզմը և բաղաբականությունը: ուժեղացրեց հայահալած քաղաքակա-  
ական դպրոցները, սահմանափակվում էր բարեգործական ու հրատարակչական ընկերությունների գործունեությունը, ինտապնդվում ու հալածվում էին հայ մտավորականները, արևմտահայության ազատագրման համար մարտնչող ազատամարտիկները, անցկացվում էր խիստ գրաքննություն և այլն: Բացի այդ, դարավերջից Անդրկովկաս ներգաղթած արևմտահայ տարագիրները տեղում հողակտոր և գրանցում չեին ստանում և, որպես ժամանակավոր բնակվողներ, տասնյակ հազարներով կիսաքաղց ու անտերունչ թափառում էին տարածաշրջանի քաղաքներում ու գյուղերում:

Պրոֆեսոր Ա. Դամբարյանի հաշվումներով դարասկզբին Անդրկովկասում կային ազգությամբ հայ ավելի քան 200 հազար ժամանակավոր բնակվողներ, որոնց գերակշիռ մասը արևմտահայ պանդուխտներ էին:

Անդրկովկասում և Արևելյան Հայաստանում շարունակում էր չլուծված մնալ ազրարային-գյուղացիական հարցը: Չնայած 1900-1903 թթ. ընթացքում ցարական կառավարությունը անդրկովկասյան նահանգներում հողային ու հարկային հարաբերությունների կարգավորմանն ուղղված մի քանի օրենքներ ընդունեց, բայց դրանք չբարելավեցին գյուղացիության վիճակը: Մասնավորապես, 1900 թ. մայիսի 1-ի բարձրագույն իրամանագրով, «հողաշինարարության» անվան տակ, ավելի էր ամրակայվում հողի պետական սեփականությունը: Մինչդեռ Արևելյան Հայաստանի գյուղացիության ճնշող մեծամասնությունը կազմող պետական շինականները (ոսուլյահ) ձգտում էին իրենց օգտագործման տակ գտնվող հողը դարձնել մասնավոր սեփականություն, մի հանգամանք, որ գյուղում ազատ տնտեսական հարաբերությունների զարգացման կարևորագույն նախապայմաններից է: Սակայն ցարական կառավարությունը ոչ միայն չէր պատրաստվում այդպիսի զիջման դիմել, այլև, հետամուտ իր գաղութացման քաղաքականությանը, շարունակում էր ռուս վերաբնակիչների նոր խմբաքանակներ ուղարկել Անդրկովկաս ու Արևելյան Հայաստան:

Դարագլխին ցարական ինքնակալության հայահալած քաղաքականության ամենացայտուն դրսենորումը եղավ Նիկոլայ II-ի կողմից հաստատված 1903 թ. հունիսի 12-ի օրենքը՝ հայ եկեղեցու կալվածքների ու գույքի հարքունիս բռնագրավման մասին: Այս օրենքի ընդունման դրդապատճառն այն էր, որ կովկասյան իշխանությունները ինքնակալին ու կառավարությանը համոզել էին, թե իբր, հայոց եկեղեցին ունի անբավ հարստություններ, որոնք հայերը ի սպաս են դնում հեղափոխական, ազատագրական, անջատողական (սեպարատիստական) նպատակներին: Այստեղից էլ այդ շարժումների դեմն առնելու համար անհրաժեշտ համարվեց զրկել հայոց եկեղեցին իր եկամուտի աղբյուրներից: Բռնագրավման ենթակա ունեցվածքի ընդհանուր արժեքը կազմում էր մոտ 100 մլն ռուբլի, որից տարեկան ստացվում էր շուրջ 300 հազար ռուբլու եկամուտ: Կառավարության այդ ապօրինի քայլը հարված էր ոչ միայն հայ եկեղեցուն, այլև հայկական դպրոցներին ու մշակույթին, քանզի եկեղեցու կալվածքների եկամուտով էին պահպում ծխախան-եկեղեցական ու թեմական դպրոցները:

Ցարական օրենքը բողոքի ու վրդովմունքի մեծ ալիք առաջացրեց ամբողջ հայության մեջ. Երբ Կովկասի իշխանությունները, կառավարչապետ, հայտնի հայատյաց Գ. Գոլիցինի գլխավորությամբ, փորձեցին գործադրել այդ օրենքը, հայ ժողովուրդը, Հ.Հ. Դաշնակցություն և Յնչակյան կուսակցությունների ղեկավարությամբ, պայքարի ելավ իր իրավունքների պաշտպանության համար: Անդրկովկասի հայաշատ քաղաքներում՝ Ալեքսանդրապոլում, Կարսում, Երևանում, Էջմիածնում, Թիֆլիսում, Գանձակում, Շուշիում, Բաքվում, Իգդիրում, Բաբումում և այլուր տեղի ունեցան հակացարական միտինգներ ու ցույցեր: Տեղ-տեղ ժողովրդական այդ ելույթները վերաճեցին արյունահեղ ընդհարումների: Ինքնակալության այդ թալանչիական օրենքի դեմ իր բողոքի ձայնը բարձրացրեց անգամ ՌՍԴԲ կուսակցությունը: Այդ օրերին նրա պաշտոնաթերթ «Հսկրան» տպագրեց «Նոր կողոպուտ» վերտառությամբ հոդվածը:

Դայ ազգային Յնչակյան և Դաշնակցություն կուսակցությունները, հավատարիմ իրենց մարտավարությանը, ձեռնարկեցին նաև մի շարք ահաբեկչական գործողություններ: 1903 թ. հոկտեմբերին ինչակյան ահաբեկիչները, հայտնի գործիչ Փարամազի նախաձեռնությամբ, Թիֆլիսի մոտակայքում մահափորձ կատարեցին իշխան Գ. Գոլիցինի վրա, սակայն՝ անհաջող: Դրանից հետո Գոլիցինը պաշտոնաթող եղավ և հեռացավ Կովկասից: Արդեն 1905 թ. Կովկասում վերականգնվում է փոխարքայությունը, և փոխարքա է նշանակվում կոմս Ի. Վորոնցով-Դաշկովը, որը սկսում է հայերի նկատմամբ վարել լոյալ քաղաքականություն: Եվ միայն այն բանից հետո, երբ արդեն սկսվել էր ռուսական առաջին հեղափոխությունը, ինքնակալը հարկադրված տեղի տվեց և 1905 թ. օգոստոսի 1-ի հրամանագրով չեղյալ համարեց 1903 թ. հունիսի 12-ի օրենքը: Այսպիսով, համառ պայքարի միջոցով հայ ժողովուրդը կարողացավ պաշտպանել իր ազգային իրավունքները:

**Արևմտահայերի վիճակը** Այդ նույն ժամանակ շատ ավելի ծանր, դժոխային պայմաններում էր գտնվում արևմտահայ հատվածը:

XX դարի սկզբին օսմանյան թուրքիան շարունակում էր մնալ որպես ամենահետամնաց ռազմաֆեոդալական երկրներից մեկը: Առավել հետամնաց էր կայսության մասը կազմող Արևմտյան Հայաստանը՝ իր վեց-յոթ վիլայեթներով (նահանգներով): Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ առանձին դեպքերում Արևմտյան Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքում արձանագրվել են

նույնիսկ դեգրադացիայի երևույթներ: Բայց, ընդհանուր առմամբ, այստեղ էլ սկսեցին նշմարվել ազատ տնտեսական հարաբերությունների աշխուժացման՝ պատմականորեն օբյեկտիվ ու անխուսափելի գործընթացներ: Արևմտահայ առևտրարդյունաբերական բուրժուազիան դարձյալ հիմնականում կենտրոնացած էր Կ. Պոլսում և Զմյուռնիայում: Սակայն, թուրքական պետության «աջակցությամբ», գնալով նա ավելի ու ավելի էր նեղվում և դուրս մղվում թուրքական նորաթուխ բուրժուազիայի կողմից:

Սուլթանական բռնապետությունը առանձնապես կործանարար ազդեցություն էր գործում արևմտահայ գյուղացիության վրա: Դայ գյուղացին ենթարկվում էր թե՝ սոցիալ-տնտեսական և թե՝ ազգային-կրոնական անլուր ճնշումների ու բռնության: Զանգվածային էր դարձել գյուղացիության հողագորկումը: Ստեղծված անելանելի պայմանները թելադրում էին արևմտահայության մի մասին ոդիմել հարկադրական արտագաղթի, որոշ մասին կրոնափոխ լինել, ել չենք խոսում համիդյան մեծ ու փոքր ջարդերի մասին: Այս ամենի հետևանքով XIX դարի վերջին և XX դարի սկզբին հայերի թիվն իրենց բուն հայրենիքում՝ Արևմտյան Հայաստանում, գնալով նվազում էր:

Դամեմատություն անցկացնելով Ռուսաստանի և Թուրքիայի կողմից հայ ժողովրդի հանդեպ վարած քաղաքականության միջև, կարելի է հետևեցնել, որ, եթե Ռուսաստանը իրականացնում էր հալածական, ռուսացման քաղաքականություն, ապա Թուրքիային ավելի բնորոշ էր ազգային և կրոնական անհանդուրժողականության վրա հիմնված ջարդարարական քաղաքականությունը:

## 1901 թ. Առաջելոց վաճանի կոիվը

Դարագլխին սուլթանական ռեժիմի դեմ հայ ժողովրդի ազատագրական պայքարը հիմնականում շարունակում էր դրսեորվել հայդուկային-պարտիզանական կրիվների ձևով: 1899 թ. հայ ազատամարտի ամենահմայիչ դեմքերից մեկի՝ Աղբյուր Սերոբի եղերական սպանությունից հետո Տարոն-Սասունի (Դուրան-Բարձրավանդակի) հայդուկների դեկավար է ճանաչվում Անդրանիկը: Տեղում ինքնապաշտպանության գործի հմուտ դեկավարներից էին նաև Գ. Զառւշը, Յրայրը: Վերջինիս առաջադրած մարտավարությունն ավելի չափավոր էր և ոչ աղմկալի:

Անդրանիկը, նախ պատժում է Սերոբին դավադրաբար սպանած քուրդ ավագակապետ Բշարե Խալիլին, այնուհետև 1901 թ. նոյեմբեր ամսին, իր մի քանի տասնյակ հայդուկներով Սասունի լեռներից իջ-

նում է Մշո դաշտը և խիզախ մարտեր մղում Մուշի Առաքելոց վանքի շրջակայքում: Նայ ազատամարտիկները, ամրանալով վանքում, շուրջ մեկ ամիս հմտորեն պաշտպանվում են, իսկ հետո, մի ծյունածածկ գիշեր, քողարկվելով սպիտակ սավաններով, ճեղքում են թշնամական օղակը ու աննկատ հեռանում վանքից: Այս միջադեպերը լայն արձագանք են գտնում ու կրկին բարձրացնում ժողովրդի մարտական ոգին:

**1904 թ. Սասունի ապստամբությունը** Նայ դյուցազնամարտի միջնաբերդերից էր Սասունը, որտեղ և ծավալվեցին գլխավոր իրադարձությունները: Դարասկզբի արևմտահայ ազատագրական ոգորումների բարձրակետը եղավ 1904 թ. Սասունի ապստամբությունը:

Ամեն ինչ սկսվեց այն բանից, երբ 1902 թ. թուրքական կառավարությունն սկսեց Սասունում գորանոցներ կառուցել, որը և հանդիպեց բնակչության դիմադրությանը: Թուրքական իշխանությունները, անհանգստացած հայերի հանդուգն դիմադրությունից, որը, փաստորեն, ընդունել էր ազգային-ազատագրական պատերազմի ձև, սկսեցին լուրջ նախապատրաստվել պատժիչ ռազմական գործողությունների: Արդեն 1904 թ. հունվարից Սասունը պաշարված էր: Մարտական գործողություններն սկսվեցին մարտի վերջերից: Ապստամբության հենակետեր դարձան Գելիեգուզան, Շենիկ, Իշխնձոր, Տալվորիկ և այլ բնակավայրեր:

Այս ապստամբությունն էլ, ինչպես 1894-ինը, հայ քաղաքական կուսակցությունների կողմից լավ նախապատրաստված չլինելու պատճառով, ի սկզբանե կրեց ինքնապաշտպանական բնույթ ու պարտվեց: Նակամարտող ուժերը խիստ անհվասար էին: Ինքնին հասկանալի է, որ մոտ երկու հարյուրյակի հասնող ազատամարտիկներ և մի քանի խունք սասունցի քաջ գյուղացիներ որքան էլ ապավինեին լեռներին, այնուամենայնիվ, չեն կարող երկար դիմակայել թուրքական բազմահազարանոց կանոնավոր գործին ու քրոգական բաշիբոգուկներին: Չհաջողվեց բավարար օգնություն ստանալ Անդրկովկասից: Թեժ կոհվներից մեկի ժամանակ գոհվեց հայոց ազատամարտի քաղցրախոս Երգիչը՝ Յրայրը (Արմենակ Ղազարյանը): Այդուհանդերձ, հայ մարտիկները կարողացան մի քանի ամիս դիմագրավել թշնամուն: Ստեղծված պայմաններում Սասունի պաշտպան հայդուկները, հաշվի առնելով շրջակա 45 գյուղերի ավելի քան 20 հազար խաղաղ

բնակիչների վրա կախված մահացու վտանգը, ինչպես նաև զենքի և զինամթերքի պակասը, հարկադրված, մարտեր մղելով՝ նահանջում են դեպի Վան, որտեղից Անդրանիկը իր խմբով անցնում է Անդրկովկաս, այնտեղից էլ՝ արտասահման Բուլղարիա, իսկ մյուս՝ աչքի ընկնող հայորեակապետ Գևորգ Չառշը իր մարտիկներով որոշում է վերադառնալ Սասուն: Սասունի ապստամբության պարտությունից հետո էլ Չառշը շարունակում է պատժիչ, վրիժառուական գործողությունները թուրք և քուրդ իշխանավորների ու հարստահարիչների դեմ և, ի վերջո, 1907 թ. մայիսի 26-ին գոհվում է Սուլուխի հայտնի կովում: Դրանից հետո հայ ազատագրական պայքարի թափը թուլանում է, և արդեն նոր փոփոխված իրադրության մեջ հայ ժողովրդի գլխավոր կուսակցությունը՝ Դաշնակցությունը, փոխում է իր մարտավարությունը:

1905 թ. հուլիսին մահափորձ կազմակերպվեց արյունարքու Աբդուլ Համիդ II-ի վրա, սակայն պատահական դիպվածով Կարմիր սուլթանը կենդանի մնաց: Մահափորձի նախապատրաստական փուլում գոհվեց Շ. Շ. Դաշնակցության հիմնադիրներից մեկը՝ Քր. Միքայելյանը: Այդուհանդեռձ, արյունակզակ սուլթանի անսահմանափակ իշխանությանը մնում էին հաշված տարիներ:

## 2. Արևելահայ Տայասպանը Տամառուսասպանյան առաջին հեղափոխության և դրան հաջորդող կարիներին (1905-1912 թթ.)

**Հեղափոխության սկիզբը:** XX դարի սկզբին Ռուսաստանի և նրա բաղկացուցիչ մասը կազմող Արևելյան Տայաստանի հասարակական-քաղաքական կյանքը նշանավորվեց խոշոր իրադարձություններով: Ամենից առաջ 1905-1907 թթ., տեղի ունեցավ համառուսաստանյան առաջին հեղափոխությունը: Այն ուներ ժողովրդավարական բովանդակություն և իր սուր ծայրով ուղղված էր ինքնակալական համակարգի դեմ: Հեղափոխության հիմնախնդիրներն էին ցարիզմի տապալումը, դեմոկրատական հանրապետության հաստատումը, ագրարային և ազգային հարցերի լուծումը:

Հեղափոխությունն սկսվեց 1905 թ. հունվարի 9-ին (22)՝ Պետերբուրգում տեղի ունեցած արյունոտ իրադարձություններով, երբ ցարի

հրամանով գնդակոծվեց ժողովրդի խաղաղ ցույցը: Դա ալեկոծեց ամբողջ Երկիրը: Ծայր առան զանգվածային գործադրության շարժումներ, որոնք մեծ չափեր ընդունեցին ամռան և աշնան ամիսներին: Ինքնակալության դեմ պայքարի մեջ ներքաշվեցին ինչպես ռուսական սոցիալ-դեմոկրատական կուսակցությունն իր երկու թևերով (մենշևիկներ ու բոլշևիկներ), այնպես էլ ազատամիտ (լիբերալ) ու ազգային կուսակցություններն ու կազմակերպությունները:

Յեղափոխական շարժումների մեջ ներգրավվեցին նաև հայ ազգային Յնչակյան և Դաշնակցություն կուսակցությունները: Վերջինս 1905 թ. նոյնիսկ մշակեց Կովկասում ազգային և սոցիալ-դասակարգային պայքարի գործունեության հատուկ պլան «Կովկասյան նախագիծ»: Այդ նախագծով Դաշնակցությունն իր առջև խնդիր դրեց, արևմտահայերի ազգային-ազատագրական պայքարից բացի, մասնակցություն ունենալ ռուսաստանյան հեղափոխական շարժումներին:

Յեղափոխության ալիքը հասավ նաև Անդրկովկաս ու Յայաստան: Արևելյան Յայաստանում տեղի ունեցան ժողովրդական ելույթներ՝ գյուղացիական հուզումներ, բանվորական գործադրություններ, ազգային բնույթի շարժումներ: Յեղափոխության տարիներին բանվորական գործադրություններ եղան Ալավերդու և Կապանի պղնձահանքերում, Երկաթուղային բանվորության շրջանում, Երևանի և Ալեքսանդրապոլի առանձին արհեստանոցներում և այլն: Սակայն, ընդհանուր առմամբ, հեղափոխական ելույթները բույլ են արտահայտվել: Դա բացատրվում էր նրանով, որ, մի կողմից՝ բանվորությունը Յայաստանում շատ փոքրաթիվ էր (մոտ 10 հազար մարդ), մյուս կողմից՝ հեղափոխության վերելքի շրջանում հայ ժողովրդի ուշադրությունը հարկադրաբար թևերվեց հայ-թաթարական (ադրբեջանական) արյունոտ ընդհարումների վրա:

**Հայ-թաթարական կուսակցություններ** Ինչպես հայտնի է, 1905-1906 թթ. ընթացքում Անդրադարձանական կովկասի մի շարք քաղաքներում ու շրջաններում Բաքվում, Շուշիում, Զանգեզուրում, Երևանում, Նախիջևանում, Ելիզավետպուր (Գանձակ), Թիֆլիսում և այլուր տեղի ունեցան արյունալի ընդհարումներ հայերի ու ադրբեջանցիների միջև, որոնց հետևանքով Երկուստեք սպանվեցին հազարավոր մարդիկ, կրակի ճարակ դարձան ամբողջական թաղամասեր, կողոպտվեցին հսկայական միջոցներ և այլն: Այդ արյունոտ ընդհարումներից ավելի շատ տուժեցին հայերը, որովհետև

նախարիարձակ կողմը հակառակորդն էր, և ընդհարման օջախը սկիզբ էր առնում Բաքվից: Այդ նախաձեռնողները ադրբեջանական ազգայնական ու կրոնական մոլեռանդ գանգվածներն էին: Հայ-թաթարական կոնֆլիկտը, բացի ազգային և կրոնական անհանդուրժողականությունից, իր հիմքում ուներ նաև տնտեսական ու քաղաքական պատճառներ: Բանն այն էր, որ ադրբեջանական նորաքույս բուրժուազիան սկսել էր նեղվել ձեռներեց ու տնտեսապես հզոր Բաքվի ու Անդրկովկասի հայ առևտրարդյունաբերական կապիտալից: Թաթար բուրժուա-ազգայնական տարրերը, նոր-նոր գալով ազգային ինքնագիտակցության, ուզում էին հայերին դուրս մղել Ադրբեջանից և Անդրկովկասի մյուս քաղաքներից:

Հայ-ադրբեջանական ջարդերի հրահրման գործում ոչ պակաս դեր խաղացին ցարական կենտրոնական և տեղական իշխանությունների ներկայացուցիչները: Դրանցից մեկը Բաքվի նահանգապետ իշխան Նակաշիձեն էր, որը և շուտով սպանվում է Դրաստամատ Կանայանի (Դրո) կողմից: Իշխանությունների բռնած քացահայտ սադրիչ դիրքը և հանցավոր անտարբերությունը թողտվության ու անպատճելիության ասպարեզ էին բացում ազերի ելուզակների համար: Եվ այս իմաստով 1905-1906 թթ. արյունալի դեպքերը շատ մեծ նմանություն ու ընդհանրություն ունեն մեր ժամանակների Սումգայիթի, Կիրովաբադի, Բաքվի ոճրագործությունների հետ: Սկզբում անակնկալի եկած հայերը, դաշնակցական և հնչակյան տեղական կազմակերպությունների նախաձեռնությամբ, ստեղծեցին ինքնապաշտպանական խմբեր ու արժանի հակահարված տվեցին հակառակորդին: Ինքնապաշտպանական մարտերում աչքի ընկան Նիկոլ Դումանը, Վարդանը, Համազասպը, Դրոն, Փարամազը, Քեռին, Սեբաստացի Մուրադը, Արմեն Գարոն, Սևարեցի Սաքոն և շատ ուրիշներ:

**Շեղափոխության անկումը** 1905 թ. ընթացքում հեղափոխությունը Ռուսաստանում անընդհատ վերելք էր ապրում: Այն իր բարձրակետին հասավ 1905 թ. երկրորդ կեսին հոկտեմբեր-դեկտեմբերի ամիսներին: Այդ ընթացքում Ռուսաստանում տեղի ունեցավ հոկտեմբերյան համընդհանուր քաղաքական գործադուլը, նոյեմբերին՝ ամենախոշոր քանվորական գործադուլը Հայաստանում՝ Ալավերդու պղնձահանքերում, իսկ դեկտեմբերին՝ Մոսկվայի գինված ապստամբությունը, որի պարտությունից հետո հեղափոխությունն աստիճանաբար սկսեց անկում ապրել:

1905 թ. հեղափոխության վերելքը հարկադրեց ինքնակալին զիջումների դիմել. հոկտեմբերի 17-ին հրապարակվեց Նիկոլայ II-ի մանիֆեստը՝ դեմոկրատական այլ ազատություններից զատ, հրավիրել օրենսդիր Պետական դումա (խորհրդարան), որով Ռուսաստանը նկատելի քայլ էր կատարում Սահմանադրական միապետության վերածվելու ուղղությամբ: Մինչև հեղափոխության պարտությունը հրավիրվեց երկու Պետական դումա, առաջինը՝ 1906 թ. ապրիլից, իսկ երկրորդը՝ 1907 թ. փետրվարից: Դրանցում պատգամավորական տեղեր գրավեցին նաև մի քանի հայեր: Պետական դումաների քննարկումների գլխավոր հարցը ագրարային-գյուղացիական խնդիրն էր:

Ռուսական հեղափոխության հետևանքներից մեկն էլ այն եղավ որ 1906 թ. նոյեմբերի 9-ին, վարչապետ Պ. Ստոլիպինի հրապարակած օրենքով, երկրում իրականացվելու էին առաջադիմական ագրարային բարեփոխումներ: Յամածայն այդ օրենքի, քայլայվելու էին տնտեսության առաջընթացին խոչընդոտող գյուղական համայնքները, և դրանց հիման վրա ստեղծվելու էին մենատնտես գյուղացիական ֆերմերային (խուտորային և օտրութային) տնտեսություններ, կատարվելու էին բնակչության վերաբնակեցումներ և այլն: Բայց այս օրենքը ձգձգվում և չէր կիրառվում ազգային ծայրամասերում, այդ թվում Յայաստանում:

Ավելի ուշ Արևելյան Յայաստանուս ստոլիպինյան ագրարային քաղաքականության միջոցառում հանդիսացավ 1912 թ. դեկտեմբերի 20-ի օրենքը, որով հնարավորություն տրվեց կավաճատիրական և վանքապատկան գյուղացիներին, սկսած 1913 թ. հունվարի 1-ից, պետության օժանդակությամբ հետ գնել իրենց հողերը և դառնալ սեփականատեր: Դրա կենսագործման համար Երևանի նահանգի «Ժամանակավոր պարտավորյալ» գյուղացիները 28-56 տևրվա շնթացքում տոկոսներով պետությանը պետք է վճարեին 15,9 մլն ռուբլի ոսկով: Իսկ այդ նույն ժամանակ Կարսի մարզի պետական գյուղացիները նման գործողության համար արքունիքին պետք է վճարեին 7.524440 ռուբլի: Դրանից զատ, գյուղացիներից պետք է գանձվեր հողային հարկ ընդհանուր իմունքներով: Բայց երկու դեպքում էլ կիսաստոլիպինյան այս օրենքները մինչև ինքնակալության տապալումը փաստորեն չիրագործվեցին:

1907 թ. սկզբներից արդեն ակնհայտ էր ռուսական հեղափոխության պարտությունը: Ինքնակալության դեմ պայքարող չափավոր ու արմատական ուժերի անմիաբանության հետևանքով 1907 թ. ամռանը

հեղափոխությունը գործնականում մարեց. հաջորդեցին միապետական հետադեմ ուժերի հալածանքներն ու հետապնդումները:

**Հետադիմության երբ 1907 թ. հունիսի 3-ին ռուսական կառավարությունը, առանց Պետական դումայի գիտության ու տրված լիազորությունների, օրենք հրապարակեց**  
**հալածանքները** II Պետական դուման ցրելու և III-ը հրավիրելու մասին, դրանով իսկ գործնականում վերջ տրվեց հեղափոխությանը և Ռուսաստանի ու Արևելյան Հայաստանի պատմության մեջ սկսվեց մի ժամանակաշրջան (1907-1910 թթ.), որն ընդունված էր անվանել ստոլիպինյան ռեակցիայի շրջան: Սակայն այս ժամանակահատվածի գնահատման հարցում հարկավոր է տարբերակել, որ, եթե քաղաքական-գաղափարական առումով երկրում իրոք հաստատվում է ռեակցիա, ուժեղանում են բռնաճնշումները, ապա տնտեսության ասպարեզում, շնորհիվ Ստոլիպինի ագրարային առաջադիմական բարեփոխումների, սկսում են ավելի արագորեն զարգանալ սեփականատիրական, ապրանքակապիտալիստական հարաբերությունները. բացվում է կապիտալիզմի զարգացման երկրորդ փականը (առաջինը 1861 թ. բարեփոխումն էր): Եվ պատահական չէր, որ շուտով՝ 1909 թ.-ից, երկրում սկսում է տնտեսական ընդհանուր վերելք:

Հեղափոխության պարտության և հետադիմության հարձակումների պայմաններում սոցիալ-դեմոկրատական և ազգային տիպի կուսակցությունների շարքերում տեղի ունեցան գաղափարական վայրիվերումներ ու կազմակերպական պառակտումներ:

Այդպիսի գաղափարական ծգնաժամի ու պառակտման վտանգ առաջացավ նաև դարասկզբի հայ ազգային ամենահեղինակավոր կուսակցության՝ Դաշնակցության մեջ: Կուսակցության ներսում գոյացավ երկու ծայրահեղական թեքում (հոսանք). «աջ» հանձին դրա ռեկավար, հայդուկապետ Միհրանի (Գարդիել Քեշիշյան), որը գտնում էր, թե կուսակցությունը պետք է լիովին հրաժարվի «Կովկասյան նախագծից» ու սոցիալիստական գաղափարներից և ամբողջովին նվիրվի թուրքահայ դատին<sup>1</sup>, իսկ մյուսը՝ «ձախ», հանձին, այսպես կոչված, «երիտասարդ դաշնակցականների», որի գաղափարական դե-

<sup>1</sup> «Միհրանական» կոչվող շարժումը դադարեց Յ. Յ. Դաշնակցության ներսում մի շարք ահաբեկչական գործողություններից հետո, որի զոհերից մեկն էլ դարձավ հենց ինքը՝ Միհրանը:

կավարն էր Արսեն Ամիրյանը, իսկ կազմակերպականը՝ Լևոն Աթարեկյանը: Նրանք գտնում էին, որ արևելահայ և արևմտահայ խնդիրները պետք է անջատել իրարից, այսինքն՝ ռուսահայ դաշնակցականները պետք է զբաղվեն զուտ համառուսական, սոցիալիստական, դասակարգային պայքարի խնդիրներով, իսկ արևմտահայը՝ տաճկահայ դատով: Դրա համար էլ այս «ձախ» հոսանքին հարողները կոչվեցին նաև «անջատականներ»: 1907 թ. հունիսին «Երիտասարդ դաշնակցականների» խումբը, Լ. Աթարեկյանի գլխավորությամբ հեռանալով Դաշնակցությունից, հարեց ռուսական էսէռների կուսակցությանը:

Ռեակցիայի շրջանում գաղափարական տարընթացություններ ու պառակտումներ առաջացան նաև ՌՍԴԲԿ-ի, Յնչակյանների և այլ կուսակցությունների շարքերում:

Նշված ժամանակաշրջանում ուժեղացան հալածանքները նաև հայ ժողովրդի դեմ: Իշխանությունները անողոք դատաստան էին տեսնում հեղափոխության ընթացքում «աչքի ընկածների» հետ, կազմում էին «ակտիվիստների», այսպես կոչված, «սև» ցուցակները, հետապնդում, բանտարկում ու աքսորում նրանց: Կառավարությունն առանձնակի դաժանությամբ հաշվեհարդար էր տեսնում հայ ազգային կուսակցությունների հետ: Դա բացատրվում էր ռուսական իշխանությունների մտավախությամբ, թե օսմանյան թուրքիայի դեմ ուղղված հայ ժողովրդի ազատագրական պայքարը կարող էր ուղղվել նաև Ռուսաստանի դեմ:

Այդ ժամանակ կառավարության նշանառության թիրախ դարձավ հատկապես Յ. Յ. Դաշնակցություն կուսակցությունը: Ի դեպ, Ռուսաստանի ներքին գործերի ժամանական վարչության տվյալներով, 1907 թ. Դաշնակցության շարքերում հաշվվում էր 165 հազար անդամ: 1907-1912 թթ. ընթացքում, իհմնականում կեղծ փաստերի և շինծու զրպարտանքների հիման վրա, կազմվեց 40 հազար էջից բաղկացած մի ստվարածավալ դատական գործ, ու անցկացվեց մի դատավարություն, որը հայտնի է «Յ.Յ. Դաշնակցության գործ» անվամբ: Դատաքննչական գործը վարում էր Նովչերկասկի նահանգային դատարանի՝ հատուկ գործերի գծով քննիչ Լիժինը: Մեղադրանք ներկայացվեց 159 մարդու, գերազանցապես՝ դաշնակցության ղեկավար գործիչներին: «Դաշնակցության գործը» մեծ աղմուկ հանեց և լայն արձագանք ու հնչողություն ստացավ: Մեղադրյալներին սպառնում էր ծանր պատիժ: Սակայն դատավարության ժամանակ բացահայտված լիժինյան կեղծիքները, դատապաշտպաններ Կերենսկու, Պերեվերզկի,

Մակլակովի և ուրիշների անաչառ մոտեցումը և ամենակարևորը պատերազմի նախապատրաստվող Ռուսաստանի արտաքին քաղաքականության մեջ տեղի ունեցած հայանպաստ փոփոխությունները դրականապես անդրադարձան դատավճռի արդյունքների վրա: Շատերն ազատ արձակվեցին, իսկ մյուս մասն էլ ավելի մեղմ պատժաժամկետներով բանտարկվեց ու աքսորվեց:

Արդեն 10-ական թթ. սկզբին աշխարհամարտի նախապատրաստվող ռուսական կառավարությունը, կրկին հետամուտ իր նվաճողական լուսականության, սկսում է ոչ միայն սիրաշահել հայերին, այլև 1912 թ. վերջերից ստանձնում է Հայկական հարցի հովանավորությունը:

### 3. Արևմույան Հայաստանը 1908-1914 թթ.

**Երիտրուրերի 1905-1907 թթ. ռուսաստանյան առաջին հեղափոխական հեղաշրջումը** խությունը որոշ արձագանք գտավ Արևելքի երկրներում և այդ թվում Թուրքիայում: Ավելի ուժեղացավ ընդդիմությունը սուլթանական բռնապետության դեմ:

**1908 թ.** Արդուլիամիլյան վարչակարգից դժգոհ էին ոչ միայն ճնշված ու իրավագուրկ ազգային փոքրանասնությունները, այլ նաև թուրք հասարակական-քաղաքական առանձին շրջաններ ու, առաջին հերթին, երիտասարդ թուրքերի «Միություն և առաջադիմություն» (Իթթիհատ վե թերաքքը) կուսակցությունը, որը սկզբնավորվել է 1889 թ. հայտնի գաղափարախոս Ահմեդ Ռիզա բեյի գլխավորությամբ: Երիտրուրքերը փորձեցին սուլթանիզմի դեմ ուղղված այդ լայն ընդդիմությունը օգտագործել քաղաքական իշխանությունը զավթելու համար: Հենց այս կուսակցությունն էլ նախապատրաստեց և իրականացրեց 1908 թ. պետական հեղաշրջումը:

Նախ, 1907 թ. դեկտեմբերի վերջերին, երիտրուրքերի կուսակցության նախաձեռնությամբ, Փարիզում կայացավ Օսմանյան կայսրության թուրք և ոչ թուրք ընդդիմադիր կուսակցությունների ու կազմակերպությունների կոնֆրենցիա: Հայ քաղաքական կուսակցություններից այդ համագումարին մասնակցեց Յ.Յ. Դաշնակցությունը և «Արմենիա» թերթի խմբագրությունը: Լապատակ դրվեց տապալել համիլյան վարչակարգը և երկրում մտցնել սահմանադրություն: Հեղաշրջումը կատարվեց ծրագրված ժամկետից (1909 թ.) շուտ: 1908 թ. հուլիսին, դեպքերի բերումով (Մակեդոնիայի հարցի սրման կապակցությամբ), տեղի ունեցավ առաջադիմական համարվող այս հեղաշրջումը:

ջումը: Շարժման կենտրոնը դարձավ Սալոնիկը, իսկ շարժիչ ուժը թուրքական բանակը: Հուլիսի 23-ին Երիտասարդ թուրք սպաներ Ահմեդ Նիյազին և Էնվեր բեյը, զորքի գլուխն անցած, շարժվեցին մայրաքաղաք Կ. Պոլսի վրա՝ պահանջելով սուլթանից վերականգնել Միդհատ փաշայի 1876 թ. չգործադրված սահմանադրությունը: Խորամանկ սուլթանը դիմեց զիջումների և հաջորդ օրը՝ հուլիսի 24-ին, հրապարակեց հրամանագիր՝ միդհատյան սահմանադրության վերականգնման մասին: Երկիրը հռչակվեց սահմանադրական միապետություն, իրավիրվեց մեջլիս (խորհրդարան), որտեղ հայերը ստացան 10 տեղ, հռչակվեցին դեմոկրատական առանձին ազատություններ: Հայտարարվեց «հյուրիեթ» (ազատություն): Հայ ֆիդայիները իջան լեռներից: Երկրում մտցվեց զորակոչի պարտականություն անկախ ազգային ու կրոնական պատկանելությունից: Այդ նշանակում էր, որ հայ Երիտասարդներն էլ սկսեցին ծառայել թուրքական բանակում: Խոստացվեցին ագրարային բարեփոխումներ և այլն:

Հայ քաղաքական կուսակցությունները, դուրս գալով ընդհատակից, ծավալեցին եռանդուն գործունեություն: 1908 թ. հոկտեմբերին հիմնվեց «Հայ սահմանադրական ռամկավար» կուսակցությունը: Այդ կուսակցությունն առաջացավ Արմենականների և վերակազմյալ հնչակյանների գաղափարակցական շաղախից: Սա ազգային, չափավոր, լեգալ կուսակցություն էր, որը նպատակ ուներ գործել սահմանադրության շրջանակներում: Հայ սահմանադիր ռամկավարները չեն ընդունում ոչ հեղափոխությունը և ոչ էլ սոցիալիզմի վարդապետությունը:

**Կիլիկիահայության կոռուածները** Երիտթուրքերի հայտարարած ազատությունը որոշ հույսեր ներշնչեց նաև հայերին, եղան հայթուրք համագործակցության փորձեր, սակայն երկար չտևեց այդ ոգևորությունը: Սկզբուն Երիտթուրքական առաջնորդները գիտակցաբար թաքցնում էին իրենց շովինիստ, ազգայնամոլ էությունը ներկայացնելով իրենց որպես Օսմանյան կայսրության մեջ ապրող ճնշված ժողովուրդներին ինքնավարություն տալու կողմնակիցներ:

Երիտթուրքերը, անցնելով իշխանության գլուխ, շատ շուտով իրաժարվեցին իրենց իսկ հայտարարած «արդարություն, հավասարություն և եղբայրություն» հանրահայտ կարգախոսներից, որ հռչակել էին իշխանության գրավումից անմիջապես հետո կայսրության այլազգի

հպատակների համակրանքը շահելու նպատակով: Գործնական քաղաքականության մեջ այդ կարգախոսներն այդպես էլ մնացին մեռած տառ: Դա ի հայտ եկավ երիտթուրքերի կողմից իշխանության գրավման դեռ մեկ տարին չլրացած: Կյանքը ցույց տվեց, որ հայերի նկատմամբ շարունակվում էր ավանդական ջարդարական քաղաքականությունը:

1909 թ. մարտի վերջերին (31-ին) շնորհազրկված Յամիդ II-ը և իր համախոհները հեղաշրջման փորձ կատարեցին՝ իին բռնավարչակարգը վերահաստատելու նպատակով: Բայց երիտթուրքերը, Մակեդոնիայից զորք բերելով, վերագրավեցին Կ. Պոլիսը, իսկ Կարմիր սուլթանը վերջնականապես գահընկեց արվեց: Նրան փոխարինեց կամազուրկ Մեհմեդ V-ը: Կառավարող գլխավոր կուսակցությունը կրկին դարձավ «Միություն և առաջադիմություն»: Յենց այս շրջանում էլ 1909 թ. ապրիլին, Կիլիկիայի Աղանա քաղաքում և հարակից հայկական այլ բնակավայրերում, իշխանությունների թողտվությամբ, տեղի ունեցավ 30 հազար հայերի կոտորած: Աղանայի դեպքերով երիտթուրքերը ցույց տվեցին իրենց իսկական դեմքը: Կիլիկիահայության եռեղնագործությունն ահազանգ էր այն մասին, որ երիտթուրքերը որդեգործ են հայերի բնաջնջման արդուլիամիոյան քաղաքականությունը: Աղանայի կոտորածից հետո Յ.Յ. դաշնակցականները սառեցին իթթիհատականներից, իսկ 1911 թ. իրենց կապերը լիովին խզեցին նրանցից:

### **Երիտթուրքերի գաղափարախոսության և բաղաբականության հետադիմական եռթյունը**

Երիտթուրքերն իրենց կառավարման տարիներին վարում էին նախորդ վարչակարգից գրեթե ոչնչով չտարբերվող հայահալած քաղաքականություն: Դա առանձնապես ցայտուն դրսենորվեց ազգային և հողային քաղաքականության մեջ: Նրանք չկատարեցին իրենց խոստումներից և ոչ մեկը: Արևմտյան Յայաստանին չտրվեց սահմանադրությամբ հռչակված վարչական ապակենտրոն ինքնավարության կարգավիճակը: Ավելին, ազգային հարցում սկսեց գործադրվել կայսրության այլագգիների օսմանացման ու ձուլման քաղաքականություն:

Սկզբում երիտթուրքական կառավարությունն առաջնորդվում էր «օսմանիզմի» դոկտրինայով, որի իմաստը կայսրության ոչ թուրք ժողովուրդների բռնի ասիմիլացումն էր օսմանցի թուրք ազգի հետ: Իսկ

ավելի ուշ 10-ական թվականների սկզբներից, նախապատրաստվելով պատերազմի, երիտրուքերը ասպարեզ նետեցին պանթյուքիզմի ծայրահեղ հետադիմական, մարդատաց գաղափարախոսությունը: Դրանով կոչ էր արվում թուրքալեզու ժողովուրդներին միավորվել թուրք օսմանների հեգեմոնիայի ներքո և իրով ու սրով նվաճել Բայկալ լճից մինչև Բալկաններ ձգվող անծայրածիր տարածքները, ստեղծել «Մեծ Թուրան» կոչվող հսկայածավալ պետություն:

Դժվար չէ նկատել, որ այս ծրագիրը ամենից առաջ սպառնում էր պետականազուրկ, երկատված Հայաստանին ու հայ ժողովորդի բուն իսկ գոյությանը: Հարկ է հիշեցնել, որ պանթյուքիզմի գաղափարախոսությունը, որոշակի նպաստավոր հանգամանքների դեպքում, պոտենցիալ ու իրական վտանգ կարող է ներկայացնել նաև մեր ժամանակներում:

**Բալկանյան  
պատերազմը և  
Հայկական հարցի  
վերաբացումը  
(1912-1914 թթ.)**

XX դարի 10-ական թվականների սկզբին Թուրքիայի ռազմաքաղաքական վիճակն ավելի բարդացավ: 1911-1912 թթ. տեղի ունեցավ իտալա-թուրքական պատերազմը: Դրա հետևանքով Թուրքիան ընդմիշտ կորցրեց Տրիպոլիտանիան և Կիրենական (Աֆրիկայում): Դրան հաջորդեց Բալկանյան պատերազմը, որը, փաստորեն, դարձավ առաջին համաշխարհային պատերազմի նախերգանքը:

1912-1913 թթ. տեղի ունեցան Բալկանյան երկու պատերազմները: Առաջինում Թուրքիան ծանր պարտություն կրեց իր հարեւան և նախկինում իրեն ենթակա Բալկանյան երկրներից (Բուլղարիա, Չունաստան, Սերբիա, Չեռնոգորիա և այլն): Այս պատերազմում բուլղարական զորքերի շարքում կռվում էր նաև հայկական վաշտը Նժդեհի և Անդրանիկի գլխավորությամբ: Հայ քաղաքական շրջանները, օգտվելով պատերազմի ընձեռած նպաստավոր իրավիճակից, կրկին բարձրացրեցին Հայկական հարցը: Այս անգամ Հայկական հարցի գլխավոր հովանավորի դերում հանդես եկավ Ռուսաստանը: Սերծավոր Արևելքում նվաճողական ձգտումներ ունեցող Ռուսաստանը հայերի համակրանքը շահելու համար ոչ միայն դադարեցրեց մինչ այդ ծավալած հալածանքները հայերի նկատմամբ, այլև, ընդառաջ գնալով հայոց կաթողիկոս Գևորգ V-ի խնդրանքին, վերաբացեց Հայկական հարցը միջազգային դիվանագիտական ատյաններում:

Ստեղծված քաղաքական նպաստավոր պայմաններում, 1912 թ.

վերջերին, կաբողիկոսը կազմեց Հայ ազգային պատվիրակություն՝ եգիպտահայ մեծահարուստ, հասարակական-քաղաքական գործիչ Պողոս Նուբար փաշայի նախագահությամբ, որը պետք է Եվրոպական մեծ տերությունների դիվանագիտական շրջաններին ներկայացներ հայկական բարենորոգումների խնդիրը, ինչպես նաև, հասարակական կարծիք մշակելով, նպաստեր Հայկական հարցի լուծմանը։ Այսպիսով, 1912 թ. վերջերից Արևմտյան Հայաստանում Բեռլինի կոնգրեսի 61-րդ հոդվածի ոգով, բարենորոգումներ մտցնելու խնդիրը կրկին դարձավ միջազգային դիվանագիտության քննարկումների առարկա։

### **Հայկական բարենորոգումների նախագծերը**

Ինանալով, որ Ռուսաստանը վերաբացում է Հայկական հարցը, թուրքական կառավարությունը, այն կանխելու նպատակով, 1912 թ. դեկտեմբերին հապճեպորեն հրապարակ հանեց հայկական վիլայեթներում բարենորոգումներ մտցնելու իր նախագիծը։ Համաձայն այդ նախագծի, հայկական վիլայեթներից չորսում կառավարության կողմից նշանակվելու էին գլխավոր վերատեսուչներ՝ օսմանահպատակներից, ինչպես նաև հանձնաժողովներ՝ երեք մահմեդական, երեք քրիստոնյա կազմով, և էլի կիսակատար մի քանի այլ առաջարկներ։

Թուրքական կառավարությունը, դժգոհելով մեծ տերությունների իր ներքին գործերին միջամտելուց, Արևմտահայաստանի բարենորոգումների գաղափարի դեմ վերստին հրապարակ նետեց իր ավանդական առարկությունը, հայտարարելով, որ իբր արդեն վճռել է բարենորոգումներ անցկացնել ամբողջ պետության համար, այդ թվում հայկական վիլայեթներում։

Նման հրավիճակում, 1913 թ. ապրիլին արևմտահայ քաղաքական շրջանները կազմեցին բարենորոգումների մի ընդհանուր նախագիծ, որը հայտնի է «Պատրիարքարանի» նախագիծ անունով և ներկայացրին Կ. Պոլսի ռուսական դեսպանությանը։ Համաձան այդ նախագծի, հայկական վեց վիլայեթներից կազմվում էր մի վարչական միավոր, որի կառավարման համար Եվրոպական մեծ տերությունների կողմից նշանակվում էր կոմիսար։ Այդ միավորի վարչական բաժանումը պետք է կատարվեր ըստ բնակչության ազգային կազմի։ Հայերից բռնագրավված հողերը պետք է վերադարձվեին։ Համիլյան գնդերը միաձուլվելու էին բանակին, իսկ մահմեդական մոհաջիրների (վերաբնակիչների) բնակեցումը հայկական հողերի վրա արգելվում

էր: Ըստ նախագծի, հայկական բարենորոգումների իրականացման վերահսկողությունը դրվում էր մեծ տերությունների վրա: Իսկ Ռուսաստանը պետք է հետևեր դրանց իրագործմանը:

Իրենց հերթին, Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի Կ. Պոլսի դեսպանությունները մշակեցին հայկական բարենորոգումների մի նոր նախագիծ: Բարենորոգումների խնդրում հատկապես մեծ ակտիվություն դրսելու Ռուսաստանը, իսկ Անգլիան և Ֆրանսիան, որպես Անտանտի (Համաձայնության) նախակից երկրներ, հիմնականում համեռաշխատեցին Ռուսաստանի նախաձեռնությանը<sup>1</sup>:

Դրան հակառակ, հայկական բարենորոգումներին սառնությամբ ու մեծ վերապահումներով վերաբերվեցին Եօյակ դաշինքի երկրներն ու հատկապես Գերմանիան: Թուրքական բանակը վերակառուցելու նպատակով 1913 թ. դեկտեմբերին Կ. Պոլսի ժամանեց գերմանական զինվորական միսիան՝ Լիման ֆոն Սանդերսի գլխավորությամբ: Ինչ խոսք, երկու կողմից էլ մեծ տերություններին հետաքրքրողը ոչ թե հայերի շահերի պաշտպանությունն էր, այլ իրենց նվաճողական ձգտումները՝ հայկական խաղաքարտը շահարկելով՝ հնարավորին չափ շատ օգուտներ կորցելը: Հատկանշական է, որ այս անգամ էլ տերությունները նախապատրաստվուն էին լուծել Հայկական հարցը՝ առանց հայերի մասնակցության: 1913 թ. ամռանը Կ. Պոլսի ռուսական դեսպանատանը մշակվեց հայկական բարենորոգումների նախագիծը, որը հայտնի է որպես «ռուսական» կամ «Մանդելշտամի» նախագիծ: Ռուսական դեսպանատան աշխատակից Անդրեյ Մանդելշտամի ներկայացրած բարենորոգումների տարբերակով նախատեսվում էր արևմտահայ վեց վիլայեթներից կազմել մեկ նահանգ՝ «պրովինցիա», որը կառավարելու էր թուրքահապատակ քրիստոնյա կամ

<sup>1</sup> Դեռ XIX դարի վերջերից Գերմանիայի հզորացումը և մրցակցությունը Անգլիայի ու Ֆրանսիայի հետ՝ աշխարհի վերաբաժանման համար, հիմք հանդիսացան վերջիններիս՝ Ռուսաստանի հետ մերձեցմանը: Գերմանիայի հավակնությունները Մերձավոր Արևելքում, ինչ խոսք, մեղմացրին Անգլիայի և Ռուսաստանի դարավոր հակասությունները: 1907 թ. օգոստոսի 31-ին, Ֆրանսիայի միջնորդությամբ, կնքվեց անգլո-ռուսական համաձայնագիր, որով Պարսկաստանը, Աֆղանստանը և Տիբեթը, փաստորեն, բաժանվեցին ազդեցության ոլորտների: Ռանով իսկ Անգլիան ապահովագրեց իր հարավ-սահական գաղութները, նաև ավարապես՝ Յնդկաստանը՝ ռուսական վտանգից: 1907 թ. անգլո-ռուսական համաձայնագրով գործնականում ավարտվեց Եօյակ (Անգլիա, Ֆրանսիա, Ռուսաստան) համաձայնության՝ Անտանտի ձևավորումը: Մյուս կողմից՝ արդեն ձևավորվել էր Եօյակ դաշինքը (Գերմանիա, Ավստրո-Հունգարիա և Իտալիա):

Եվրոպացի գեներալ-նահանգապետ: Գեներալ-նահանգապետը իրականացնելու էր գործադիր իշխանությունը: Որպես օրենսդիր մարմին նահանգում կողք կողքի պետք է գործեին քրիստոնյա և մահմեդական համայնքների ներկայացուցչություններ: Նահանգը վարչապես բաժանվելու էր գավառների, շրջանների և գյուղախմբերի: Վերացվելու էին «համիդիե» գնդերը: Պաշտոնական թուրքերենի կողքին թուրլատրվում էր օգտագործել նաև հայերեն և քրդերեն լեզուները: Նախատեսվում էր իրականացնել կուլտուր-լուսավորական բնույթի մի շարք բարեփոխություններ և այլն: Բայց այս անգամ էլ Արևմտյան Հայաստանի բարենորոգումների խնդիրը հանդիպեց «Եռյակ միության» ու հատկապես Գերմանիայի արգելքներին:

1913 թ. սկզբներից, կարճատև (6 ամիս) ընդմիջումից հետո, Թուրքիայում կրկին իշխանության գլուխ անցած երիտթուրքերը, Եվրոպական դիվանագետների կազմած նախագծերը ի չիք դարձնելու նպատակով նույն տարվա ամռանը ներկայացրին ամբողջ կայսրության մեջ ընդհանուր բարենորոգումներ մտցնելու վերաբերյալ իրենց նախագիծը: Համաձայն այս հերթական նախագծի, հայկական վիլայեթները բաժանվելու էին երկու սեկտորների (հատվածների), առանց սահմանագծումների: Յուրաքանչյուր սեկտորի կառավարիչը էր նշանակվելու Եվրոպացի վերատեսուչ՝ թուրք օգնականով: Հիշյալ կառավարիչները պետք է նշանակվեին թուրքական կառավարության կողմից՝ սուլթանի հաստատումով:

## 1914 թ. հունվարի 26-ի համաձայնագիրը

Կ. Պոլսում մեծ տերությունների դեսպանուս-թուրքական համաձայնագիր

Կ. Պոլսում մեծ տերությունների դեսպանուս-թուրքական առան բարենորոգումների ռուսական և թուրքական նախագծերը:  
Դրանցից և ոչ մեկում Հայկական հարցի արմատական լուծման պահանջներ չեն դրված: Այդ նախագծերի երկար քննարկումներից ու սակարկություններից հետո կազմվեց փոխգիծումային մի տարբերակ: Հիմք ունենալով այդ տարբերակը, 1914 թ. հունվարի 26-ին Կ. Պոլսում Ռուսաստանի և Թուրքիայի միջև կնքվեց համաձայնագիր՝ Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ անցկացնելու վերաբերյալ: Ըստ այդ համաձայնագրի, Արևմտյան Հայաստանը բաժանվում էր երկու վարչական հատվածի (սեկտորի կամ նահանգի). մեկն ընդգրկում էր Վանի, Բիթլիսի, Խարբերդի և Դիարբեքիրի, իսկ մյուսը՝ Էրզրումի, Տրապիզոնի և Սպազի վիլայեթները: Այդ սեկտորների կառավարիչներ (նահանգապետեր կամ կոմիսար-

ներ) էին նշանակվում ազգությամբ Եվրոպացի և դավանանքով քրիստոնյա նահանգապետեր՝ 10 տարի ժամականով։ Նահանգապետերի թեկնածությունը առաջադրելու էին Եվրոպացիները, իսկ հաստատելու էր սուլթանը։ Սեկտորների կենտրոնները դարձան Էրզրում և Վան քաղաքները։ Ռուս-թուրքական այս համաձայնագիրը հայերին տալիս էր ոչ թե ինքնավարություն, այլ ընդամենը՝ որոշ բարենորոգումներ։ Չնայած համաձայնագրի չափավոր բնույթին, այնուամենայնիվ, դրա իրագործումով կստեղծվեին արևմտահայության կյանքի և գույքի ապահովության երաշխիքներ, զգալիորեն կթերևանար նրա տնտեսական ու քաղաքական կացությունը։

Հայկական այդ երկու սեկտորների վերատեսուչներ (կոմիսարներ) հաստատվեցին հոլանդացի դիվանագետ Վեստենենկը և նորվեգացի գնդապետ Յոֆը։ Բայց մինչ սրանք կանցնեին իրենց պարտականությունների կատարմանը, պայթեց առաջին աշխարհամարտը, և հերթական անգամ ծախողվեց Հայկական հարցի լուծումը։ Իսկ իթթիատի պարագլուխները (Թալեաթ, Էնվեր, Զեմալ կազմով), որոնք 1913 թ. հունվարից փաստորեն ստեղծել էին Եռիշխանություն, օրակարգից հանեցին հայկական բարենորոգումների հարցն ու անցան իրենց արդեն ծրագրած հայակուլ պանթյուրքական պլանների իրականացմանը։

## Գլուխ տասնվեցերորդ

# ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՉՈՅԱԿՈՏԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1914-1917 թթ.)

## 1. Ուազմական գործողությունները կովկասյան ռազմաճակապում և հայերը (1914-1917 թթ.)

**Պատերազմի տաճառները և սկիզբը** 1914 թ. հուլիսի 19-ին (ն. տ. օգոստոսի 1-ին) սկսվեց Առաջին համաշխարհային պատերազմը: Մինչ այդ արդեն ձևավորվել էին հակամարտ երկու խոշոր ռազմաքաղաքական խմբավորումները՝ Եռյակ համաձայնությունը՝ Անտանտը (Անգլիա, Ֆրանսիա, Ռուսաստան կազմով), և Եռյակ միությունը (Գերմանիա, Ավստրո-Հունգարիա, Իտալիա կազմով): Շուտով վերջինիս հարեցին Թուրքիան և Բուլղարիան: Բայց 1915 թ. Իտալիան հեռացավ այս խմբավորումից: Դրանից հետո այն կոչվեց Քառյակ միություն (դաշինք): Օսմանյան Թուրքիան, հանդես գալով կայզերական Գերմանիայի կողմում, 1914 թ. օգոստոսի 2-ին նրա հետ կնքել էր գաղտնի ռազմական դաշինք: Պատերազմական հրդեհը սկզբում ծագեց խոշոր տերությունների միջև և շուտով իր շրջապտույտի մեջ առնելով աշխարհի 38 երկիր՝ ընդունեց համաշխարհային բնույթ:

Սկսված պատերազմում երկու խմբավորումներն էլ հետապնդում էին նվաճողական նպատակներ: Հատկապես ագրեսիվ էր տրամադրված գերմանական խմբավորումը: Ռուսաստանը նպատակ ուներ տիրել նեղուցներին, Կ. Պոլսին, ինչպես նաև՝ Արևմտյան Հայաստանին և այլն: Իր հերթին, Թուրքիան, առաջնորդվելով պատերազմի նախօրյակին առաջ քաշված պանթյուրքիզմի գաղափարախոսությամբ, նպա-

տակ էր դոել գրավել Կովկասը, այնուհետև շարժվել դեպի Միջին Ասիա՝ մինչև Անդրբայկալ, և հիմնել թուրքալեզու ժողովուրդներից բաղկացած, այսպես կոչված, «Մեծ Թուրանի» պետություն։ Հասկանալի է, որ այդ ճանապարհին պետք է վերացվեր «հայկական սեպը»։ Ինչպես տեսնում ենք, պանթյուրքիզմի դոկտրինան մեծ չափով ուղղված էր Ռուսաստանի դեմ։

Համաշխարհային պատերազմի գործուն ճակատներից էր Կովկասյան ռազմաճակատը։ Այստեղ 1914 թ. հոկտեմբերի 29-ին սկսվեցին ռազմական գործողությունները Ռուսաստանի և Թուրքիայի միջև։ Այդ գործողություններն ընթանում էին հիմնականում Հայաստանի տարածքում։ Ռազմական գործողությունները ծավալվում էին մի քանի ուղղություններով, որոնցից գլխավորը Սարիղամիշ-Երզրում ռազմավարական գիծն էր։

**Հայկական ռազմավորական շարժումը** Ծանր ու վտանգավոր կացություն ստեղծվեց հակամավորական յության համար։ Իսկ հայության երկու հատվածները հայտնվել էին երկու հակադիր ռազմական խմբավորումների պատկանող պետությունների (Ռուսաստանի և Թուրքիայի) կազմում։ Ստեղծվել էր մի իրավիճակ, երբ արևելահայերը և արևմտահայերը, իրենց կամքից անկախ, փաստորեն պետք է կռվեին իրար դեմ։

Հայ ժողովրդի քաղաքական դեկավարությունը, Յ.Յ. Դաշնակցության գլխավորությամբ, թեև մինչև պատերազմի սկսվելը մշակել էր չեզոքության և որևէ խմբավորմանը չհարելու քաղաքական ճիշտութեագիծ, աակայն պատերազմն սկսելուն պես հնարավոր չեղավ պահպանել այն։ Հայ ժողովրդն իր մեծամասնությամբ, ընդառաջ գնալով Կովկասի փոխարքա Ի. Վորոնցով-Դաշկովի հորդորներին և հայանպաստ խոստումներին, նախընտրեց ռուսական (Անտանտի) կողմնորոշում։ Բացի այն, որ պատերազմի ընթացքում իր քաղաքացիական պարտքը կատարելով, ռուսական բանակ զորակոչվեց մոտ 250 հազար հայ զինվոր, սկսեցին կազմակերպվել նաև կամավորական ջոկատներ, գերազանցապես արևմտահայ մարտիկներից։ Ստեղծվեցին մոտ 8-10 հազար մարդուց բաղկացած 7 կամավորական խմբեր (գնդեր)։ 1914 թ. կազմակերպվեց 4, իսկ 1915 թ. մայիսին՝ ևս 3 խումբ։ Այդ խմբերի հրամանատարներն էին Անդրանիկը, Դրոն, Համազապը (Սրբանձտյան), Քեռին, Վարդանը (Մեհրաբյան), Յ. Զանփոլառյանը (Գ. Ավշարյանը) և Յ. Արդությանը։ Տեղանքին քաջ ծանոթ հայ

կամավորները ռուսական բանակում, փաստորեն, կատարում էին առաջապահի դեր և կովում էին քաջաբար: Նրանք հատկապես աչքի ընկան Սարիղամիշի, Դիլմանի, Բերկրի-Կալայի, Դատվանի, Վանի, Ռևանդուզի, Բիթլիսի, Մուշի, Խնուսի, Երզրումի և այլ ճակատամարտերում: Սակայն հետագայում 1916 թ. կեսին, երբ արևմտահայ նահանգներն արդեն գրավված էին, ու այլևս չեր զգացում հայ կամավորների օգնության անհրաժեշտությունը, քաղաքական նկատառումներով դրանք կազմացրվեցին ռուսական բանակի ստորաբաժանումներում: Կամավորական խմբերի փոխարեն ստեղծվեցին վեց կանոնավոր հրաձգային գումարտակներ՝ ընդամենը 5 հազար մարդ:

Այդ նույն թվականին Մերձավոր Արևելքի արաբական երկրներում գտնվող հայ տարագիրներից ստեղծվեց մոտ 6000 զինվորներից կազմված Արևելյան կամ Հայկական լեգեոնը, որը «դաշնակիցների» գործերի շարքերում հարավից կովեց Թուրքիայի դեմ:

Հայ կամավորական շարժման կազմակերպիչները՝ Դաշնակցություն կուսակցությունը, Հայ Ազգային բյուրոն, կովելով ռուսական զորքերի շարքերում, հույսեր էին փայփայում շուտափույթ օգնության հասնել արևմտահայերին և երկու-երեք ամսում գրավել ու ազատագրել ամբողջ Արևմտյան Հայաստանը: Բայց, ցավոք, պատերազմը ձգձգվեց և ողբերգական հետևանք ունեցավ արևմտահայության համար:

## **Ռազմական գործողությունները**

Կովկասյան ռազմաճակատը ձգվում էր Սև ծովից մինչև Ուրմիա լիճը՝ 750 կմ երկարությամբ: 1914 թ. դեկտեմբեր-1915 թ. հունվար ամիսների ընթացքում տեղի ունեցավ Սարիղամիշի (Կարսի մարզում) ճակատամարտը, որը պատմության մեջ հայտնի է «Սարիղամիշի ռազմական գործողություն» անունով: Զմեռվա խիստ ցրտերի պայմաններում ռուսական բանակը փայլուն հաղթանակ տարավ, որի շնորհիվ կանխվեց հակառակորդի ներխուժումը Անդրկովկաս: Սարիղամիշի գործողության ժամանակ գրեթե լիովին ջախջախվեց թուրքական 3-րդ բանակը, որի հրամանատարն էր ռազմական նախարար Էնվերը: Դրանից հետո ռազմական գործողությունները տեղափոխվեցին բուն Արևմտյան Հայաստանի տարածքը: Այս հաղթանակը վճռական նշանակություն ունեցավ ռազմական գործողությունների հետագա ընթացքի վրա:

1915 թ. մայիսին ռուսական զորքերը մտան Վան: Սակայն 1915 թ. կեսերին Կովկասյան բանակի հրամանատարությունը զորքերի նա-

հանջի կասկածելի իրաման տվեց, որի հետևանքով արևմտահայությունը հայտնվեց թուրք-օրդական մահացու սպառնալիքի առաջ: Այնուհետև 1916 թ. փետրվարին ռուսական զորքերը գրավեցին Բիթլիսը, Կարինը (Երգրում), ապրիլին՝ Տրապիզոնը, օգոստոսին՝ Երզնկան, Կովկասյան ռազմաճակատում վերջնական հաղթանակի գործում առանձնապես մեծ նշանակություն ունեցավ 1916 թ. սկզբներին տեղի ունեցած Երգրումի ճակատամարտը և արդյունքում՝ այդ ռազմավարական նշանակություն ունեցող կենտրոնի գրավումը:

Այսպիսով, 1915-1916 թթ. ընթացքում, որոշ մարտավարական ձգձգումներից հետո, ամբողջ Արևմտյան Հայաստանը նվաճվեց շուրջ կես միլիոնանոց ռուսական բանակի կողմից և այդ վիճակը պահպանվեց մինչև 1917 թ. վերջերը: Այդ նույն թվականին Ռուսաստանում տեղի ունեցան ճակատագրական իրադարձություններ:

## 2. Հայոց Մեծ Եղեռնը

**Հայերի բնաջնջման երիտրական ծրագիրը** 1915 թ. հայ ժողովուրդն ապրեց իր բազմադարյա պատմության ամենաողբերգական էջերից մեկը: Երիտրութական կուսակցության ու կառավարության պարագլուխները՝ Թալեաթը, Էնվերը, Զեմալը, Նազըմը, Բեհահեղին Շաքիրը, Ազմին և ուրիշներ, օգտվելով պատերազմական խառնակ իրավիճակից ու հայերին մեղադրելով անհավատարմության ու դավաճանության մեջ, կազմակերպեցին ու իրագործեցին Հայոց մեծ եղեռնը՝ արևմտահայության զանգվածային կոտորածները: Եղեռնը կամ ցեղասպանությունը միջազգային իրավունքի տեսանկյունից համարվում է մարդկության դեմ ուղղված ծանրագույն հանցագործություն, հանցագործություն, որը չունի վաղեմության ժամկետ:

Մինչ պատերազմի սկսվելը Երիտրութերն արդեն «որոճում» ու նախապատարստում էին իրենց գաղտնի դիվային ծրագրերը՝ արևմտահայության բնաջնջումով Հայկական հարցին մեկընդմիշտ վերջ տալ, հայագրկել երկիրը և յուրացնել այն:

Թուրքերը, Կովկասյան ռազմաճակատում կրած իրենց անհաջողությունների մեջքը բարդելով հայերի վրա, 1915 թ. ապրիլից կառավարության պաշտոնական գաղտնի իրահանգներով սկսեցին իրագործել հայ բնակչության զանգվածային տեղահանումը, ճակատամերձ նահանգներից ու առավել դաժան ձևերով՝ մաս-մաս ոչնչացումը:

## **Արևմտահայության գանգվածային տեղահանությունը և կոտորածները**

Ծրագրված ոճիրը իրագործվեց Երեք փուլով: Երիտրութական կառավարությունն իր առաջին հարվածն ուղղեց հայ մտավորականության, իսկ Երկրորդը՝ զինվորականության դեմ, որպեսզի նրանց գիշատումով հեշտացնի ժողովրդական զանգվածների ոչնչացման գործը: 1915 թ. ապրիլի 24-ին Կ. Պոլսում և Զմյուռնիայում ձերբակալվեցին ավելի քան 600 հայ մտավորականներ, որոնք աքսորվեցին Փոքր Ասիայի խորքերը և տարբեր պատրվակներով գազանաբար հոշոտվեցին: Նրանց մեջ էին Գրիգոր Զոհրապը, Դանիել Վարուժանը, Սիամանթոն, Ռուբեն Սևակը, Ռուբեն Զարդարյանը, Ն. Տաղավարյանը, Երուխանը և շատ ու շատ ուրիշ տաղանդավոր հասարակական-քաղաքական, գիտական ու մշակութային գործիչներ: Ծանր ցնցումներ ապրեց և խելագարվեց հայ մեծանուն երգահան Կոմիտասը: Համանման ճակատագրի արժանացավ հայ մտավորականությունը Թուրքիայի մնացած մասերում:

Միաժամանակ, զինաթափվեց և տարբեր եղանակներով ոչնչացվեց թուրքական բանակ զորակոչված հայ երիտասարդությունը՝ կռվող ուժը: ճանապարհների վրա աշխատեցնելու պատրվակով հայ ռազմունակ հատվածը մեկուսացվեց և խիստ գաղտնիության պայմաններում ոչնչացվեց: Երրորդ հարվածն ուղղվեց խաղաղ բնակչության դեմ: Ամենամեծ մասշտաբներ ընդունեցին բուն Արևմտյան Հայաստանի հայ խաղաղ բնակչության (կանայք, ծերեր, երեխաններ) զանգվածային տեղահանությունն ու բնաշնջումը: Այս ամենն արվում էր «ռազմական նկատառումներով» թուրքական բանակի թիկունքը անվստահելի տարրերից մաքրելու պատրվակով: Հայության մեծ մասը, դիմադրություն ցույց տալու համար, կոտորվեց տեղում, մյուս մասը ոչնչացավ աքսորի՝ դեպի արաբական անապատները քշվելու ճանապարհին՝ բռնություններից, սովոր, ծարավից ու համաճարակից, և միայն մի փոքր հատված կարողացավ մի կերպ փրկվել ու հանգրվան գտնել հայկական գաղթօջախներում: 300 հազարի չափ էլ գաղթական արևմտահայեր ապաստան գտան Անդրկովկասում:

Ընդհանուր հաշվով, Հայոց մեծ եղեննին զոհ գնաց մոտ 1,5 մլն մարդ, իսկ մոտ 800 հազար հայ էլ դարձավ գաղթական: Էլ չենք խոսում նյութական, ինգևոր-մշակութային վիթխարի կորուստների մասին: Եվ այդ ամենը իրագործվեց խաղաղ ազգաբնակչության նկատմամբ, սուս այն բանի համար, որ նրանք հայ էին:

**ՄԵԾ ՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ** Սա, հիրավի, աննախընթաց մի ոճրագործություն էր, որ կազմակերպեցին և, մեծ տերությունների թողտվությամբ ու մեղսակցությամբ, իրագործեցին երիտթուրքական ջարդարարները: Հետևանքը եղավ այն, որ հայ ժողովուրդը, ոչ մի մեղք չունենալով պատերազմի սանձազերծման գործում և իր կամքից անկախ ներքաշվելով պատերազմի հորձանուտը, դարձավ դրա անմեղ զոհերից մեկը: Նա կորցրեց իր թվաքանակի զգալի մասը, իսկ Արևմտյան Հայաստանը՝ հայ ժողովողի բնօրրանը, գործնականում՝ դատարկվեց հայությունից: Հարկ է նշել, որ պատերազմի պայմաններում հայ ազգային կուսակցությունները թույլ տվեցին լուրջ ռազմավարական ու մարտավարական բնույթի սխալներ ու վրիպումներ:

Այսպիսով, Հայոց Մեծ Եղեռնի գլխավոր հանցագործ ու պատախանատու երիտթուրքական կառավարությունը Հայկական հարցը «լուծեց» թուրքական տարբերակով: Եվ պատահական չէ, որ երիտթուրքական պարագլուխներից մեկը ինքնագոհությամբ հայտարարեց, թե այն, ինչ Աբդուլ Համիդ II-ին չհաջողվեց կենսագործել Երևան տարիների ընթացքում, իրենք իրագործեցին մի քանի ամսում: Հայոց Եղեռնի պատախանատուներից է նաև օսմանյան Թուրքիայի դաշնակից կայզերական Գերմանիան: Այդ ոճրագործության մեջ մեղսակցության իրենց մասն ունեն գրեթե բոլոր մեծ տերությունները, որոնք կամք չդրսենուեցին ժամանակին բռնելու Թուրքիայի հանցավոր ձեռքն ու կանխելու Եղեռնագործությունը: Եվ այս իմաստով տեղին է ասկած, որ Արևմտյան Հայաստանը համարվում է «Եվրոպայի զոհը»:

Թուրքիայի պարտությունից և աշխարհամարտի ավարտից հետո (1919 թ.) պատերազմի ու Եղեռնագործությունների կազմակերպման մեղադրանքով երիտթուրք ոճրագործ պարագլուխների նկատմամբ Կ. Պոլսում հրապարակային դատ անցկացվեց: Ռազմական դատարանը հեռակա կարգով նրանց դատապարտեց մահապատժի: Ավելի ուշ՝ 20-ական թվականների սկզբներին, հայ ժողովողի քաջորդիներ Ս. Թեհլերյանը, Ա. Երկանյանը, Ա. Շիրակյանը, Ստ. Շաղիկյանը, Ա. Անտոնյանը և ուրիշներ հանդուգն ահաբեկչությամբ վրեժ լուծեցին Հայոց Մեծ Եղեռնի կազմակերպիչներից: Մինչև օրս հայ ժողովուրդը սրբությամբ է պահպանում Մեծ Եղեռնի անմեղ զոհերի հիշատակը և պայքարում է իր ոտնահարված ազգային-քաղաքական իրավունքների պաշտպանության ու վերականգնման համար: Հայոց ցեղաս-

պանության միջազգային ճանաչումն ունի բարոյական, իրավաքաղաքական մեծ նշանակություն: Ներկայիս Թուրքիայի կառավարության կողմից ճանաչման դեպքում նա պարտավոր է փոխհատուցում տալ հայ ժողովրդին:

### 3. Արևմտահայերի ինքնապաշտպանական մարդերը 1915 թվականին

**Վաճի հերոսամարտը** Երիտթուրքական ղեկավարությունը ծրագրել և իրագործում էր արևմտահայերի տեղահանությունն ու զանգվածային ջարդերը: Բայց դա չէր նշանակում, թե ամբողջ հայությունը, գլուխը կախ, լուռումունջ պետք է ընդուներ իր մահը:

Առանձին կղզիացած շրջաններ, «ազատություն կամ մահ» կարգախոսով, դիմեցին հերոսական ինքնապաշտպանության: Դրանցից ամենանշանավորը և ամենաարդյունավետը, թերևս, Վանի հերոսամարտն էր: 1915 թ. ապրիլին տեղի ունեցած Վանի գոյամարտը ղեկավարեցին Արամ Մանուկյանը և Արմենակ Եկարյանը: Ինքնապաշտպանության կենտրոնը Վան քաղաքն էր ու հատկապես նրա Այգեստան հայկական թաղամասը: Ինքնապաշտպանության հարուստ ավանդույթներ ունեցող վան-վասպուրականցինները կարողացան շուրջ մեկ ամիս քաջաբար պաշտպանվել կուսակալ Զևեթ փաշայի գլխավորած թուրք-քրդական տասնյակ հազարանոց զորքերից, մինչև որ ռուսական զորամասները և Վարդանի ու Խեցոյի գլխավորած հայ կամավորական ջոկատները 1915 թ. մայիսի սկզբներին օգնության հասան վանեցիններին: Այս ինքնապաշտպանության արդյունքը եղավ այն, որ 120 հազար վան-վասպուրականցիններ փրկվեցին թուրքական կոտորածներից և հետագայում, ռուսական զորքերի կասկածելի ու միտունավոր նահանջների հետևանքով, հարկադրված գաղթեցին Արևելյան Հայաստան:

**Շայերի ինքնառաւությանական մարտերը** Ի տարբերություն Վանի, անհաջող ելք ունեցավ Մուշի և Սասունի (Դուրան-Բարձրավանդակի) ինքնապաշտպանությունը: Այստեղ գոյամարտը ղեկավարում էին Ռուբեն Տեր-Մինասյանը և Վահան Փափազյանը (Կոմս): Թեև մշեցինները և սասունցինները 6-7 ամիս (1915 թ. գարնան և ամռան ամիսներին)

դիմադրեցին, սակայն, մի կողմից՝ ինքնապաշտպանության միջոցների սպառվելու, մյուս կողմից՝ ռուսական զորքերի ժամանակին օգնության չհասնելու պատճառով պարտություն կրեցին: Մուշի և Սասունի ինքնապաշտպանությունը խեղդվեց արյան մեջ և վերածվեց տեղի հայության սպանոյի: Փրկվեցին Սասունի քաջարի ժողովրդի միայն բեկորները:

Դայերի ինքնապաշտպանական կրիվները անհաջողության մատնվեցին նաև հայ ազգային հերոս Անդրանիկի ծննդավայր Շապին-Գարահիսարում (1915 թ. հունիս, ղեկավար՝ Դուկաս Տևեքյան) և Ուրֆայում (սեպտեմբեր, ղեկավար՝ Մկրտիչ Յոթնեղբայրյան): Երկու դեպքում էլ մի քանի հարյուր կովողներով շուրջ մեկ ամիս տևած գոյամարտը, թուրք-մահմեդական օղակնան պայմաններում, դատապարտված էր պարտության:

Դամեմատարար բարեհաջող ավարտ ունեցավ Մուսա լեռան ոյուցազնամարտը (ղեկավարներ՝ Եսայի Յաղության, Տիգրան Անդրեասյան և այլք): Միջերկրական ծովի ափին գտնվող ավելի քան 4000 սուետիահայեր, չենթարկվելով թուրքական բռնագաղթին, բարձրացան մոտակա Մուսա լեռը և 40 օր ու գիշեր հերոսաբար պաշտպանվեցին, մինչև որ, հայերի խնդրանքով, ծովից ֆրանսիական «Գիշեն» և ապա «Ժաննա դ'Արկ» շոգենավերը օգնության հասան և շրջապատվածներին բարեհաջող փոխադրեցին Եգիպտոս: Այս հարոսապատումին է նվիրված հրեա լրագրող Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան 40 օրը» խորագրով վեպը:

Այսպիսով, 1915 թ. արևմտահայության գոյամարտը, իր հաղթանակներով ու պարտություններով հանդերձ, թուրքական բռնապետության դեմ հայ ժողովրդի մղած ազատագրական պայքարի օրգանական շարունակությունն է: Սխալվում են բոլոր նրանք, ովքեր հայերի կոտորածների պատճառները փորձում են տեսնել կամավորական շարժման և առանձին ինքնապաշտպանական կրիվների մեջ: Այնինչ, փաստերը ցույց են տալիս, որ Օսմանյան կառավարությունը վաղուց էր ծրագրել հայերի բնաջնջումը, իսկ կամավորական շարժումն ու ինքնապաշտպանական կրիվները ընդամենը հարմար առիթ էին իրենց հայակուլ ծրագրերը իրականացնելու համար:

## **Գլուխ տասնյոթերորդ**

# **ՌՈՒՍԱԿԱՆ ԿԱՅՍԵՐՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀՈԶԱԿՈՒՄԸ (1917 թ. ՓԵՏՐՎԱՐ-1918 թ. ՄԱՅԻՍ)**

## **1. Հայաստանը 1917 թ. փետրվարյան հեղափոխության և հոկտեմբերյան հեղաշրջման ժամանակաշրջանում**

**Իրադրությունը Անդրկովկասում 1917 թ. փետրվարի 27-ին Ռուսասու Հայաստանում Փետրվարյան հեղափոխությունից հետո:  
ՕՉԱԿՈՄ-ի հիմնումը**

1917 թ. փետրվարի 27-ին Ռուսասու Հայաստանում տեղի ունեցավ մեծ հեղափոխություն, որի հետևանքով տապալվեց ցարական ինքնակալությունը, և երկրում ստեղծվեց ժամանակավոր կառավարություն՝ իշխան Գ. Լվովի նախագահությամբ։ Փետրվարյան հեղափոխությամբ քաղաքական իրադրությունը հիմնովին փոխվեց նաև Անդրկովկասում։ Մարտի սկզբներին վերացվեց Կովկասի փոխարքայությունը, և հիմնվեց ժամանակավոր կառավարության տեղական գործադիր իշխանության մարմին՝ Անդրկովկասայան հատուկ կոմիտե (ՕՉԱԿՈՄ)։ ՕՉԱԿՈՄ-ի կազմի մեջ մտան IV Պետական դումայի 5 անդամներ, կադետներ Վ. Խառլամովը՝ ռուս (նախագահ), Մ. Պապաջանյանը՝ հայ, մուսավաթական Մ. Զաֆարովը (ազերի), մենչեւկ Ա. Զիսենկելին (վրացի) և վրաց սոցիալ-ֆեդերալիստ Կ. Աբաշիձեն (վրացի)։ Ժամանակավոր կառավարության կովկասայան տեղական գործադիր իշխանության այս մարմինը գործեց մինչև 1917 թ. նոյեմբերի կեսերը։ Բացի ՕՉԱԿՈՄ-ից, Անդրկովկասում ստեղծվեցին իշխանության այլ դասակարգային և ազգային բովանդակությամբ մարմիններ՝ խորհուրդներ։

Փետրվարյան հեղափոխությունը Ռուսաստանը դարձրեց աշխարհի ամենաազատ ու ամենաժողովրդավարական երկրներից մեկը: Երկիրը պատվեց բանվորների, գինվորների և գյուղացիների պատգամավորական խորհուրդների լայն ցանցով: Այդ դասակարգային ներկայացուցչական մարմինները՝ խորհուրդները, սկզբնական ժամանակաշրջանում ներկայացնում էին իրական մեծ ուժ, որոնցում մեծամասնություն էին կազմում սոցիալ-դեմոկրատ մենշևիկները և էսենները (սոցիալիստ հեղափոխականներ): Իսկ տեղական ինքնակառավարման մարմիններում՝ զեմստվոններում, մեծամասնություն ունեին կաղետները (սահմանադիր դեմոկրատները): Ազգային շրջանների տեղական խորհուրդներում և ինքնակառավարման մարմիններում մեծամասնություն ստացան ազգային կուսակցությունները:

Մեծ զարթոնք ապրեց ազգային կյանքը: Առաջնային ու իրատապնչանակություն ստացավ ազգային հաղորդը: Քաղաքական գործունեության լայն ասպարեզ իջան հայ քաղաքական կուսակցությունները, որոնց անվիճելի առաջատարը Յ.Յ. Դաշնակցությունն էր: 1917 թ. ապրիլին Թիֆլիսում ստեղծվեց հայ ազգային մի նոր քաղաքական կուսակցություն՝ «Հայ ժողովրդական կուսակցությունը»: Անդրկովկասում գործող կուսակցությունները, բացառությամբ բոլշևիկների, պաշտպանեցին ժամանակավոր կառավարությանը:

Ռուսական գործերի կողմից գրավված Արևմտյան Հայաստանում մտցվեց ժամանակավոր կառավարությանն անմիջականորեն ենթակա հատուկ վարչաձև՝ գորավար Պ. Ավերյանովի գլխավորությամբ: Նրան օգնական նշանակվեց Յ. Զավրիյանը: Սկսվեց արևմտահայ գաղթականության ներհոսքը Մայր հայրենիք: Հույսեր էին փայփայվում, որ դրականապես կլուծվի Տաճկահայատանի խնդիրը:

Հայ քաղաքական կուսակցությունները հիմնականում պաշտպանում էին ժամանակավոր կառավարության արտաքին ու ներքին քաղաքականությունը: Հայերն արտահայտվում էին ռուսական համապետականության օգտին այն ակնկալությամբ, որպեսզի նրա օգնությամբ կարողանան լուծել հայաթափ եղած Թուրքահայատանի հարցը և Անդրկովկասում անցկացնել վարչական արդարացի վերաբաժանում: Հայկական կողմը, ՀՀԴ նախաձեռնությամբ, առաջարկում էր, ըստ ազգագրական հատկանիշի, Անդրկովկասը բաժանել երեք վարչատարածքային միավորների՝ հայկական, Վրացական և թաթարական: Միաժամանակ, հայ ազգային կուսակցություններն արտահայտվում էին Անդրկովկասի ու Հայաստանի լայն ինքնավարության օգտին:

**Հայոց Ազգային Փետրվարյան հեղափոխությունից հետո քաջ-խորհրդի ստեղծումը** մազգ Անդրկովկասում ազգային գործոնի դերի մեջացումը հիմք հանդիսացավ ազգային քա-ղաքական մարմինների՝ խորհուրդների ստեղծման համար: Սկզբում 1917 թ. ապրիլին, նման ազգային խորհուրդ հիմնեցին ադրբեջանցի-ները, այնուհետև՝ վրացիները, իսկ ավելի ուշ՝ հայերը: Նախ՝ 1917 թ. մայիսին, Երևանում գումարված արևմտահայերի առաջին համագու-մարում, հիմնվեց Արևմտահայ ազգային խորհուրդը՝ Վահան Փափագ-յանի (Կոմս) նախագահությամբ, որը պետք է զբաղվեր գուտ Արևմտ-յան Հայաստանի ու արևմտահայ գաղթականության խնդիրներով: Իսկ 1917 թ. սեպտեմբերի վերջին և հոկտեմբերի սկզբներին, Թիֆլի-սում կայացած Արևելահայերի ազգային համագումարում, քազմա-կուսակցական հիմքի վրա, ստեղծվեց 15 հոգուց բաղկացած Արևելա-հայ (Կենտրոնական) կամ Հայոց Ազգային խորհուրդ: Խորհրդի նա-խագահ ընտրվեց Ա. Ահարոնյանը: Հայոց Ազգային խորհուրդը, որ-պես արևելահայության լիազոր ներկայացուցիչ, ստացավ գործադիր իշխանության իրավասություններ և մինչև Հայաստանի անկախության հոչակումը, փաստորեն, հայ ժողովրդի գերագույն իշխանությունն էր: Բացի Թիֆլիսում ստեղծված Հայոց Կենտրոնական Ազգային խորհր-դից, տեղերում նույնպես կազմվեցին ազգային խորհուրդներ՝ որպես տեղական իշխանություն: 1917 թ. վերջերին Ա. Մանուկյանը հիմնեց Երևանի Ազգային խորհուրդը: Հայ ազգային խորհուրդ ստեղծվեց Բաքվում, որը գլխավորեց Ա. Գյուլխանդամյանը: Ազգային խորհուրդ-ներ ստեղծվեցին Արցախում, Սյունիքում, Ախալքալաքում և այլուր: Սրանք, փաստորեն, ազգային իշխանության ծև էին: Այսպիսով, Օ-ՉԱԿՈՄ-ի և դասակարգային հիմքով ստեղծված խորհուրդների կող-քին հիմնվեցին ազգային խորհուրդներ՝ իբրև ազգային իշխանության ձևեր:

**Շոկտեմբերյան հեղաւորումը և Անդրկովկասը** Մինչ Անդրկովկասում տեղի էին ունե-նում ազգային-քաղաքական ուժերի վերախմբավորում ու կոնսոլիդացիա, բուն Ռուսաստանում քաղաքական իրադարձությունները զարգացան գլխապտույտ արագությամբ և ունեցան անսպասելի ավարտ: Մինչև 1917 թ. ամռան վերջը խորհուրդներում մեծամասնություն չներկա-յացնող բելշահկները, Վ. Ի. Լենինի գլխավորությամբ, օգտագործելով ժողովրդական զանգվածներին հուզող հաշտության, հողի, հացի, ա-

զատությունների մասին քարոզական կարգախոսները, շոշափելի ազդեցություն նվաճեցին ու, օգտվելով ժամանակավոր կառավարության բույլ տված սխալներից ու հապաղումներից, 1917 թ. հոկտեմբերի 25-ին (Ա.Տ. նոյեմբերի 7-ին) մայրաքաղաք Պետրոգրադում գինված հեղաշրջում կատարեցին ու իշխանությունը վերցրին իրենց ձեռքը:

Անդրկովկասի քաղաքական ազդեցիկ ուժերը հիմնականում բացասաբար ընդունեցին Յոկտեմբերյան հեղաշրջումը: Եվ 1917 թ. նոյեմբերի 15-ին երկրամասի ամենահեղինակավոր երեք կուսակցությունները՝ վրաց մենշևիկները, հայ դաշնակցականները և ազերի մուսավաթականները հեղինակագրկված ու անգործության մատնված ՕՇԱԿՈՄ-ի փոխարեն ստեղծեցին Անդրկովկասյան կոմիսարիատը՝ մենշևիկ Ե. Գեգեչկորու գլխավորությամբ: Գլխավորապես երեք ժողովուրդների՝ (հայեր, վրացիներ և ազերիներ) ազգային ներկայացուցիչներից կազմված այս կառավարությունը ստեղծվեց Թիֆլիսում գտնվող Անտանտի (Անգլիայի, Ֆրանսիայի), ինչպես նաև ԱՄՆ-ի ռազմադիվանագիտական ներկայացուցիչների գործուն մասնակցությամբ:

Տարածաշրջանում Յոկտեմբերյան հեղաշրջումը պաշտպանեցին, թերևս, միայն տեղի բոլշևիկյան կազմակերպությունները: 1917 թ. դեկտեմբերի կեսերին, խորհրդային կառավարության ղեկավար Վ. Ի. Լենինի հանձնարարականով, ականավոր բոլշևիկ Ստ. Շահումյանը նշանակվեց Կովկասյան գործերի արտակարգ կոմիսար: Յետամուտ Յոկտեմբերյան հաղթարշավին՝ բոլշևիկները այստեղ ևս վերցրին Կովկասի խորհրդայնացման կուրս, որը, սակայն, հաջողվեց իրականացնել միայն պրոլետարական Բաքվում:

Այն բանից հետո, երբ 1918 թ. հունվարի 6-ին խորհրդային կառավարությունը ցրեց ժողովրդավարական ճանապարհով ընտրված համառուսաստանյան Սահմանադիր ժողովը, հիմնականում դրա անդրկովկասյան հատկածի պատգամավորների թվի, կուսակցական համամասնության սկզբունքով, եռապատկման միջոցով՝ կազմվեց Անդրկովկասյան սեյմը (խորհրդարանը): 1918 թ. փետրվարի 10-ին բացված սեյմի 125 պատգամավորներից 32-ը մենշևիկ էին, 30-ը՝ մուսավաթական և 27-ը՝ դաշնակցական, մնացածը՝ այլ կուսակցություններից ու ազգային ներկայացուցիչներից: Սեյմի նախագահ ընտրվեց վրաց մենշևիկ Ն. Զիսեհձեն: Սեյմը կազմեց նոր կառավարություն՝ վրաց մենշևիկ Ակակի Զիսենկելու գլխավորությամբ, որը վարում էր Ռուսաստանից անջատ քաղաքականություն: Սակայն թե Անդրկով-

կասի կառավարության և թե՛ Սեյմի ներսում գոյություն ունեին ազգային-քաղաքական խոր հակասություններ ու տարամերժ դիրքորոշումներ, որոնք, 1918 թ. հունվարի վերջերից սկսված թուրքական ներխուժման պայմաններում, անկենսունակ էին դարձնում երեք ազգային տարածքային միավորներից բաղկացած Անդրկովկասյան, փաստորեն՝ անկախ, դաշնակցային հանրապետության գոյությունը:

Յոկտեմբերյան հեղաշրջմամբ իշխանության հասած բոլշևիկները հոչակեցին հաշտության և հողի մասին դեկրետներ: Շուտով նրանք սկսեցին հաշտության անջատ բանակցություններ Քառյակ միության Գերմանիայի ու նրա դաշնակիցների հետ: Նույնը պարտադրվեց Անդրկովկասի կոմիսարիատին՝ Թուրքիայի հետ: 1917 թ. դեկտեմբերի 5-ին, Երզնկայում, կողմների միջև ստորագրվեց զինադադար, որի հիմքում դրվեցին դեկտեմբերի 2-ին Բրեստ-Լիտովսկում կնքված խորհրդագերմանական զինադադարի պայմանները: Խորհրդային կառավարությունը թույլ տվեց թուրք ռազմագերիներին վերադառնալ հայրենիք:

**«Թուրքահայաստանի մասին» դեկրետը** Նոր փոփոխված իրադրության պայմաններում հայ քաղաքական որոշ շրջանակներ հույսեր կապեցին խորհրդային Ռուսաստանի օգնության հետ: 1917 թ. դեկտեմբերի 29-ին խորհրդային կառավարությունը, հայ քաղաքական գործիչներ Ստ. Շահումյանի, Վ. Տերյանի, Ռոստոմի, Հ. Զավրիյանի և ուրիշների ջանքերով, ընդունեց «Թուրքահայաստանի մասին» դեկրետը: Ըստ այդ դեկրետի, ճանաչվում էր Ռուսաստանի կողմից գրավյալ Թուրքահայաստանի (Արևմտյան Հայաստանի) ազատ ինքնորոշման իրավունքը: Ռուսական զորքը պետք է դուրս բերվեր Տաճկահայաստանից և դրա փոխարեն կազմվեր հայկական ազգային միլիցիա՝ տեղում կարգուկանոն ապահովելու համար: Բացի այդ, նախատասկում էր իրականացնել հայ գաղթականության վերադարձը դեպի հայրենիք և այլն:

Պետք է ասել, որ դեկրետի պայմաններից ապահովվեց, թերևս, միայն ռուսական զորքերի վաղաժամ հեռացումը, որը, մինչ դեկրետի իրապարակումը, արդեն տարերայնորեն սկսվել էր: Ինչպես հայտնի է, ռուսական ռազմածակատների զինվորականները (զորամասերը), տեղեկանալով հաշտության և հողի մասին դեկրետներին, սկսեցին զանգվածաբար ու տարերայնորեն լքել իրենց դիրքերը և, հրացանը նետելով, շտապեցին տուն, որպեսզի օր առաջ ստանան «կալվածատերերի հողից ու բուրժուաների գույքից» բոլշևիկների խոս-

տացած բաժինը: 1917 թ. վերջերից սկսեց քայլայվել ու մերկանալ Տրապիզոնից մինչև Ուրմիա լիճը ձգվող 750 կմ երկարությամբ Կովկասյան ռազմաճակատը: Իսկ ուա նշանակում էր, որ հայ ժողովուրդը կրկին կանգնում էր թուրքական ներխուժման՝ մահաբեր սպառնալիքի առջև:

Այդպիսով, կատարվեց այն, ինչին անհամբեր սպասում էին թուրքերը: Ռուսական զորքերի վաղաժամ հեռանալուն հաջորդեց թուրքերի լայնամասշտաբ հարձակումը և Թուրքահայաստանի վերանվաճումը: Դրանով իսկ Արևմտյան Հայաստանի ինքնորոշման իրավունքը մնաց օդից կախված հայտարարություն: Այդ դեկրետը կրեց սոսկ քարոզչական բնույթ և, բավարար երաշխիքներ չապահովելով, այդպես էլ չկենսագործվեց: Ավելին, ռուսական զորքերի վաղաժամ դուրսբերումը Արևմտյան Հայաստանից կործանարար եղավ հայերի համար: Իսկ մի երկու ամիս անց, 1918 թ. մարտի 3-ին կնքված Բրեստ-Լիտովսկի հայտնի հաշտության պայմանագրով, նույն խորհրդային կառավարությունը, հիասթափեցնելով հայ ժողովորդին, Գերմանիայի ճնշմամբ Թուրքիային վերադարձրեց ոչ միայն Արևմտյան Հայաստանը, այլև արևելահայ այլ տարածքներ՝ Կարսը, Արդսիանը, որոնք Ռուսաստանին էին միացվել 40 տարի առաջ՝ Սան Ստեֆանոյի ու Բեռլինի դաշնագրերով:

Այսպիսով, Փետրվարյան հեղափոխությունը հույսեր ներշնչեց հայ ժողովորդին իրեն վերագտնելու և արդարացի ու ժողովորդավարական ճանապարհով իր ազգային իիմնախնդիրները լուծելու, սակայն Յոկտեմբերյան հեղաշրջումը կտրուկ փոխեց դեպքերի բարեհաջող ընթացքը, և Հայաստանն ու կովկասահայությունը հայտնվեցին թուրքական մահաբեր ներխուժման սպառնալիքի առաջ:

## 2. Թուրքական զորքերի ներխուժումը Հայաստան 1918 թ.: Մայիսյան հերոսամարտերը

### Թուրքական զորքերի ներխուժումը Հայաստան

1918 թ. հունվարի վերջերին թուրք նվաճողները, խախտելով Երզնկայի գինադադարը և պատրվակ բռնելով, թե ռուս ների կողմից գրավված շրջաններում իբր հայերը գործադրում են «բռնություններ» մահմեդական բնակչության նկատմամբ, անցան հարձակման: Նրանք կարծ ժամանակամիջոցում (երկու-երեք ամսում) վերագրավեցին, փաստորեն, ամբողջ Արևմտյան Հայաստանը (Երզն-

կան, Բաբերդը, Մուշը, Խնուսը, Մանազկերտը, Վանը, Էրգումը և այլն) և գարնանը շարժվեցին դեպի Արևելյան Հայաստան ու Անդրկովկաս: Թուրքերի այդ ռազմական հաջողությունը բացատրվում էր նրանով, որ, ինչպես արդեն գիտենք, Կովկասյան ռազմաճակատը քայլայված էր, իսկ թուրքական դիվիզիաներին դիմակայող միակ ուժը, թերևս, 1917 թ. աշնանը նոր կազմավորված հայկական առանձին բանակային կորպուսն էր՝ զորավար Թովմաս Նազարելյանի ընդհանուր հրամանատարությամբ: Կորպուսի կոմիսար նշանակվեց Դրոն, իսկ զորամիավորումների (դիվիզիաների) հրամանատարներ՝ զորավարներ Ս. Արեցյանը, Մ. Սիլիկյանը, զորավարի կոչում ստացած Անդրանիկը, հեծյալ բրիգադի հրամանատար Ն. Ղորղանյանը: Բայց չհաջողվեց կասեցնել թշնամու առաջխաղացումը: Մի նոր ողբերգություն ապրեցին արևմտահայության բեկորները: Թուրքական հարձակման և ձմեռվա դաժան ցրտերի պայմաններում տեղի ունեցավ արևմտահայության նոր գաղթ: Արևմտյան Հայաստանը՝ Երզնկայից մինչև Վան, հայաթափվեց:

### **Տրաղիզոնի բանակցությունները**

Թուրքերի հետագա առաջխաղացումը դեպի Անդրկովկաս կանխելու և գոնե 1914 թ. նախապատերազմյան սահմանները պահպանելու նպատակով՝ Անդրկովկասյան իշխանությունները 1918 թ. մարտ ամսին Թուրքիայի հետ հաշտության բանակցություններ վարեցին Տրապիզոնում: Բայց մինչև բանակցությունները կսկսվեին, հայտնի դարձավ 1918 թ. մարտի 3-ին կնքված Բրեստ-Լիտովսկի չարաբաստիկ հաշտության պայմանագիրը, որով, ինչպես արդեն նշվեց, Խորհրդային Ռուսաստանը Թուրքիային էր վերադարձնում ոչ միայն Արևմտյան Հայաստանը, այլև Արևելյան Հայաստանի մասը կազմող Կարսի մարզը, ընդհուպ մինչև Ախուրյան գետը: Այս կողոպտչական դաշնագիրն էլ հաղթաթուղթ դարձավ Թուրքիայի ձեռքին իր զավթողական պլանները Արևելյան Հայաստանում շարունակելու և արևելահայ հատվածին ևս արևմտահայի ճակատագրին արժանացնելու համար: Թուրքիան ձգտում էր Անդրկովկասը անկախ հայտարարել, որպեսզի ինարավորություն ստանար, առանց դրսի միջամտության, ճակատ առ ճակատ լուծելու իր ռազմավարական խնդիրները երկրամասում: Եվ նա հասավ այդ նպատակին: Թուրքական պատվիրակությունը, գոտեանդված իր զորքերի ռազմական հաջողություններով, պահանջ դրեց, որպեսզի անվերապահ Թուրքիային վերադարձվեն Կարսը,

Կաղզվանը, Արդահանը, Բաթումը: Նման պայմաններում Տրապիզոնի հաշտության խորհրդաժողովը մտավ փակուղի, և ապրիլի սկզբներին ընդհատվեցին բանակցությունները: Պետք է ասել, որ իր հերթին Բրեստ-Լիտովսկի ստորացուցիչ պայմանագիրը այն գործոններից մեկն էր, որ ինքնաբերաբար Անդրկովկասին մղեց քաղաքական անկախության:

Մինչև ատամները զինված թուրքական զորքերը ներխուժեցին Անդրկովկաս: Մարտի վերջերին ընկավ Սարիղամիշը, ապրիլի կեսերին, Անդրկովկասյան կառավարության դավաճանության հետևանքով, գրեթե առանց դիմադրության թուրքերին հանձնվեց լավ ամրացված Կարսը: Վիճակն ամենակին էլ չփրկեց պաշտոնապես Անդրկովկասի որպես անկախ դեմոկրատական դաշնակցային (ֆեդերատիվ) հանրապետության հօչակումը (ԱԴԴ) (1918 թ. ապրիլի 9): Ապրիլի 30-ին Թուրքիան ճանաչեց Անդրկովկասի անկախությունը և Բաթումում նոր բանակցություններ սկսելու առաջարկ արեց:

Թեև նայիսի սկզբներից Բաթումում վերսկսվեցին թուրք-անդրկովկասյան հաշտության բանակցությունները, սակայն ուազմական հաջողություններով արթեցած թուրքերն ամենակին մտադրություն չունեին բավարարվել Բրեստի դաշնագրի պայմաններով: Նրանք կողոպտչական նոր պահանջներ ներկայացրին, որի հետևանքով բանակցությունները կրկին մտան փակուղի:

**Սայիսյան  
հերոսամարտերը**      Օգտվելով հանգամանքից, թուրքական զորքերը մայիսի 15-ին գրավեցին Ալեքսանդրապոլը (Գյումրին) և առաջ շարժվեցին երկու հիմնական ուղղություններով: Յայկական ազգային զորամասերը անկարող էին երկարատև դիմադրություն ցույց տալ զավթիչներին: Յայ ժողովրդի վրա նորից կախվեց Ֆիզիկական բնաշնչման վտանգը: Թուրքական զորքերի մի խմբավորում շարժվեց հարավ՝ դեպի Արարատյան դաշտ Երևանը գրավելու, իսկ մյուս մասը՝ դեպի Յամանլու (Սպիտակ)-Մեծ Ղարաքիլիսա (Վանաձոր)-Դիլիջան-Ղազախ, ուազմավարական ուղղություն վերցնելով դեպի Թիֆլիս ու Բաքու:

Արարատյան դաշտ ներխուժած թուրք զավթիչները մայիսի 21-ին գրավեցին Սարդարապատ գյուղն ու կայարանը: Յայ ժողովրդը ազգային-ազատագրական պատերազմի ելավ, ուր վճռվելու էր նրա լինել-չլինելու հարցը: Մայիսի 22-ին սկսվեց Սարդարապատի պատմական հերոսամարտը: Այդ օրիսական պահին իր հայրենիքի և

Երևանի պաշտպանության համար ոտքի ելավ Երևանի և շրջակա գյուղերի ողջ հայ բնակչությունը: Արարատյան ռազմաճակատի հրամանատարն էր գոր. Մ. Սիլիկյանը, Սարդարապատի գորամիավորմանը՝ գնդապետ Դանիելբեկ Փիրումյանը, իսկ ինքնապաշտպանության ոգին՝ Երևանի դիկտատոր Արամ Մանուկյանը: Ա. Մանուկյանի աննկուն կամքի և հմուտ կազմակերպչական ջանքերի (ժողովրդի ոգևորում, զորքի համալրում, զինամթերք, սնումն, ջուր և այլն) շնորհիվ կյանքի ու մահվան ճակատամարտ տրվեց: Մի քանի օր տևած համառ ու ծանր մարտերից հետո թուրքական շուրջ 15 հազարանոց զորքը ջախջախվեց և նահանջեց դեպի Գյումրի:

Մայիսի 22-ին թուրքական մի դիվիզիա, գրավելով Համամլուն, ուղղվեց դեպի Բաշ Ապարան՝ փորձելով Երևանի վրա գրոհել հյուսիսից և դուրս գալ Սարդարապատի մոտ՝ հայկական զորամասի թիկունքը: Բաշ Ապարանում գործող հայկական զորամասը, զորավար Դրոյի հմուտ ղեկավարությամբ, մայիսի 23-27-ի ընթացքում կարողացավ հետ շպրտել թուրքերի բոլոր գրոհները և մայիսի 28-ին, մի խիզախ հակագրոհով փախուստի մատնեց թշնամուն: Այդ կրիվներուն հայերին օգնում էր Զահանգիր աղայի քողական աշխարհագորային ջոկատը:

Մայիսի 24-28-ը ահեղ մարտեր տեղի ունեցան Ղարաքիլիսայի ուղղությամբ: Չնայած ոսոխը մեծ կորուստների գնով վերջիվերջո Ղարաքիլիսան գրավեց և շարժվեց առաջ, սակայն այստեղ նույնպես հայերը ցույց տվեցին կորովի դիմադրություն: Ղարաքիլիսայի կրիվներուն աչքի ընկան գնդապետներ Ա. Բեյ-Մամիկոնյանը, Ն. Ղորդանյանը և այլք:

Այսպիսով, Սարդարապատի, Բաշ Ապարանի և Ղարաքիլիսայի մայիսյան հերոսամարտերուն հայ ժողովուրդը գերմարդկային ճիգերով կարողացավ թշնամուն արժանի հակահարված տալ և վիժեցնել Արևելյան Հայաստանը զավթելու ու տեղի հայությանը ոչնչացնելու երիտթուրքական ծրագրերը: Ավելին, հայ ժողովուրդը ոչ միայն պաշտպանեց իր ֆիզիկական գոյությունը, այլև ստիպեց հակառակորդին հաշվի նստել իր հետ և ճանաչել իր անկախ ապրելու իրավունքը: Մայիսյան հերոսական շաբաթը նշանավոր դարձավ ոչ միայն իր հաղթական ճակատամարտերով, այլև Հայաստանի անկախության հոչակումով:

### **3. Հայոց անկախ պետականության վերականգնումը: Բալթումի հաշվության պայմանագիրը**

**Անդրկովկասյան  
դաշնության  
բայցայումը** 1918 թ. գարնանը սուր հակասություններ էին առաջացել իրեն անկախ հրչակած Անդրկովկասյան դեմոկրատական դաշնակցային հանրապետության (ԱԴԴ) թե՛ կառավարության և թե՛ խորհրդարանի (սեյմի) ներսում: Դիմնականում վրացի, հայ և ադրբեջանցի ազգերի ներկայացուցիչներից բաղկացած Անդրկովկասյան դաշնության իշխանության մարմիններում առկա էին ազգային-տարածքային սուր վեճեր, քաղաքական իրարամերժ կողմնորոշումներ, միջկուսակցական հակամարտություններ և այլն: Նրանց միջև չկար միասնություն պատերազմի և խաղաղության հարցում: Պատկերավոր ասած, 1918 թ. գարնանը Երկրամասում ստեղծվել էր կոփլովյան հայտնի առակի այն պատկերը, երբ երեք ազգային միավորներից յուրաքանչյուրը «անդրկովկասյան սայլը» միաժամանակ քաշում էր երեք տարբեր ուղղությամբ: Այդ անհամաձայնությունների ու ազգային շահերի հակասությունների հետևանքով էր, որ Անդրկովկասը չկարողացավ քիչ թե՛ շատ ծանրակշիռ դիմադրություն ցույց տալ թուրքական ներխուժմանը:

Ստեղծված պայմաններում վրացիները մերձեցան Թուրքիայի դաշնակից Գերմանիային և ստացան նրա հովանավորությունը: Ադրբեջանցիները բացահայտ համակրում էին Թուրքիային և ամեն կերպ օժանդակում վերջինիս դեպի Անդրկովկաս առաջխաղացմանը: Ավելին, ադրբեջանցիները հանձին Թուրքիայի տեսնում էին իրենց բնական դաշնակցին ու ազատարարին: Մեն-մենակ ու անպաշտպան էին մնում միայն հայերը:

Դասկանալի էր, որ նման պայմաններում շատ դժվար էր դիմակայել թշնամու առաջխաղացմանը: Արդյունք չէին տալիս նաև Բաթումում ընթացող հաշտության բանակցությունները:

1918 թ. մայիսին ճգնաժամային իրավիճակ ստեղծվեց սեյմում: Սրված տարածայնությունների պատճառով Անդրկովկասյան դաշնության փլուզումը դարձավ անխուսափելի: Մնում էր, որ Անդրկովկասի երեք տիրապետող վրացի, հայ, ադրբեջանցի ժողովուրդներից յուրաքանչյուրը ինքը տնօրիներ իր ճակատագիրը:

**Հայաստանի հանրապետության հռչակումը** 1918 թ. մայիսի 26-ին լուծարվեց Անդրկովկասյան սեյանկախության մը: Ստանալով Գերմանիայի հավաստիացումները՝ նույն օրը վրաց Ազգային խորհուրդը Վրաստանը հայտարարեց անկախությունը: Մեկ օր հետո՝ մայիսի 27-ին, հիմնվեց ու անկախ հայտարարվեց «Արևելակովկասյան մուսուլմանական հանրապետությունը» (ԱԿՄՅ), որին հենց այդ ժամանակ թուրքերն առաջին անգամ կոչեցին «Աղրբեջան»: Այդ նոր պետության կենտրոնը ժամանակավորապես դարձավ Գյանջան (Գանձակը), մինչև որ թուրք-մուսավաթական զինյալ ուժերը կխորտակեին Ստ. Շահումյանի գլխավորած Բաքվի կոմունան, և մայրաքաղաքը կտեղափոխվեր Բաքու: Իսկ մայիսի 28-ին հայոց Ազգային խորհուրդը իրեն հայտարարեց հայկական գավառների միակ և գերագույն իշխանություն, այսինքն՝ հռչակվեց Հայաստանի անկախությունը: Ի պատիվ այդ ակտի, մայիսի 28-ը համարվում է Հայաստանի անկախության օրը: Հունիսի սկզբներին կազմվեց Հայաստանի անդրանիկ կառավարությունը, որը շուտով թիֆլիսից տեղափոխվեց Երևան:

Այդպիսով, երեք օրվա ընթացքում, Անդրկովկասի դաշնակցային հանրապետության փլատակների վրա հիմնվեցին երեք անկախ պետություններ՝ Վրաստանի, Աղրբեջանի և Հայաստանի հանրապետությունները:

**Բաթումի հաւատության դայմանագիրը** Այդ երեք անկախ պետականության հռչակումից հետո թուրքիան Բաթումում շարունակեց բանակցությունները՝ յուրաքանչյուրի հետ առանձին: Նորանկախ Հայաստանի պատվիրակությունը Ալ. Խատիսյանի գլխավորությամբ մայիսի վերջին մեկնեց Բաթում, և անմիջապես վերսկսվեցին հաշտության բանակցությունները: Եվ 1918 թ. հունիսի 4-ին, առաջինը Հայաստանի և Թուրքիայի միջև, կնքվեց հաշտության պայմանագիր (Բաթումի)՝ Հայաստանի համար շատ ծանր պայմաններով:

Համաձայն Բաթումի պայմանագրի, Հայաստանի Հանրապետության տարածքը կազմում էր ընդամենը 12 հազ. քառ. կմ, մոտ մեկ մլն բնակչությամբ: Թուրքիան Արևելյան Հայաստանից խլում էր 28 հազ. քառ. կմ տարածք՝ Կարսի մարզը, Սուրմալուն, Ալեքսանդրապոլի, Էջմիածնի, Երևանի և Շարուր-Դարալագյազի գավառների զգալի մասը: Հայաստանի Հանրապետությանը մնում էր Սևանա լճի ավագանը և Արարատյան դաշտի մի մասը: Բացի այդ, Թուրքիան

իրավունք ստացավ Հայաստանի Երկաթուղիներն օգտագործել իր զորքերը և բեռները փոխադրելու համար և այլն: Անշուշտ, իր շատ կետերով և ամբողջությամբ՝ դաշնագիրը նվաստացուցիչ էր հայ ժողովրդի ու խիստ անբարենպաստ և անպատվաբեր նրա նորաստեղծ պետականության համար:

Մյուս կողմից, ճակատագրի հեգնանքով, սա անկախ Հայաստանի առաջին միջազգային փաստաթուղթն էր, որով Թուրքիան առաջինը պաշտոնապես ճանաչեց Հայաստանի անկախությունը: Բաթումի պայմանագիրը իր ուժը պահպանեց մինչև համաշխարհային պատերազմի ավարտը՝ 1918 թ. նոյեմբեր:

Այսպիսով, հայ ժողովրդի բազմադարյան պատմության ծանրագույն ժամանակաշրջաններից մեկում, դեպքերի ու իրադարձությունների օրինաչափ ընթացքով, Հայաստանի մի փոքր հատվածում ծնվեց Հայաստանի առաջին Հանրապետությունը: Շուրջ վեցդարյա ընդմիջումից հետո կրկին վերականգնվեց Հայոց անկախ պետականությունը, որի համար հայ ժողովուրդը պարտական էր առաջին հերթին Սարդարապատի, Բաշ Ապարանի և Ղարաքիլիսայի հերոսամարտերին: 1918 թ. Հայաստանի հանրապետության ծնունդը, փաստորեն, հայ ժողովրդի՝ XIX դարի երկրորդ կեսի և XX դարի սկզբի ազատագրական շարժումների տրամաբանական հետևանքն էր, հայ ազատամարտի բյուրավոր զոհերի անձեռակերտ հուշարձանը:

#### **4. Հայկական մշակույթը XX դարի սկզբներին (1900-1917 թվ.)**

XX դարի սկզբներին հայ ժողովրդի կյանքում տեղի ունեցած հերոսական և ողբերգական իրադարձությունները (ազատագրական պայքարը, Մեծ եղեռնը, հեղափոխությունները և այլն) իրենց կնիքը թողեցին հայկական մշակույթի զարգացման ընթացքի վրա: Ամենից առաջ դրանք դրսևորվեցին պարբերական մանուլում, գրականության և արվեստի մեջ: Հայ ժողովուրդը, տանու տալով քաղաքականության մեջ, ազատագրական պայքարում ու կրելով ծանր կորուստներ, այնուամենայնիվ, կարողացավ իր մեջ ուժ գտնել պահպանելու և զարգացնելու գոյության մյուս կռվանը՝ հոգևոր աշխարհը, «հոգևոր Հայաստանը»: Դարասկզբի հայ հոգևոր կյանքի նշանակալի իրադարձություններ էին Հայոց գրերի գյուտի 1500 և հայ գրքի տպագրության 400-ամյակների համազգային տոնակատարությունները (1912 թ.):

**Մամուլը** Նոր շրջանում հայ մշակույթի ամենահարուստ ու զարգացած բնագավառներից էր պարբերական մամուլը: Դարի առաջին երկու տասնամյակներում իրատարակվել են շուրջ 1000 անուն հայերեն թերթեր և հանդեսներ: Շարունակում կամ սկսում էին լույս տեսնել լայն ճանաչում գտած այնպիսի պարբերականներ, ինչպիսիք էին «Մասիսը», «Մշակը», «Մուլճը», «Արևելյան մամուլը», «Բյուզանդիոնը», «Ժամանակը», «Արմենիան», «Հնչակը», «Դրոշակը», «Անահիտը», «Ազգագրական հանդեսը», «Հորիզոնը», «Ազատամարտը», «Հովհաննեսը», «Հանդես ամսօրյան», «Լուման», «Արարատը» և այլն:

**Դպրոցը** Չնայած դարասկզբին ցարական Ռուսաստանի և օսմանյան Թուրքիայի շարունակվող հալածական քաղաքականությանը, այնուամենայնիվ, քանակապես և որակապես առաջադիմում էր հայ դպրոցը: Հայկական դպրոցների գերակշիռ մասը Եկեղեցական-ծխական էր, ուր սովորողները ստանում էին գրածանաչություն և տարրական գիտելիքներ: Դարասկզբին միայն Արևելյան Հայաստանում հաշվվում էր շուրջ 500 այդպիսի դպրոց: Զգալի թիվ էին կազմում նաև պետական դպրոցները, որոնցում, սակայն, ուսուցումը տարվում էր հիմնականում ռուսերեն լեզվով: Միայն Երևանի նահանգում և Կարսի մարզում կար շուրջ 400 պետական տարրական դպրոց: Այդ նույն ժամանակ Արևմտյան Հայաստանում գործում էր 1083 դպրոց՝ 110 հազար աշակերտներով: Համեմատաբար քիչ էր միջնակարգ դպրոցների թիվը, իսկ հայոց անկախ պետականության բացակայության պայմաններում չկար ոչ մի բուհ: Ընդհանուր առմամբ ցածր էր ազգաբնակչության գրագիտության մակարդակը: Հայոց Մեծ եղեռնի հետևանքով գործնականում կործանվեցին արևմտահայ դպրոցներն ու մշակույթի օջախները:

**Գիտությունը** XX դարի սկզբներին հայ գիտական միտքը թևակոխում է իր զարգացման նոր փուլը: Առաջընթաց է նկատվում գիտության տարբեր ճյուղերում՝ քիմիայի, ֆիզիկայի, բժշկության ասպարեզներում: Նշված շրջանում ճանաչում ստացած քիմիկոս էր Զակոն (Հակոբ) Զամյանը: Ի պատիվ նրա իտալական Բոլոնիա քաղաքի քիմիական ինստիտուտը կոչվել է Զ. Զամյանի անունով: Դարի առաջին երեսնամյակին հայ ռադիոտեխնիկական մտքի երախտավոր դարձավ Հովհաննես Ադամյանը: Նա գունավոր հեռուստատեսության և 24 այլ մեծարժեք գյուտերի հեղինակն է:

Բայց ամենից ավելի զարգացում ապրեց հայագիտությունը: Ասպարեզ իջավ հայ ժողովրդի պատմությունը, լեզուն, գրականությունը և արվեստը ուսումնասիրող գիտնականների մի նոր սերունդ, որը որակական նոր մակարդակի բարձրացրեց արևելագիտությունը՝ ընդհանրապես, և հայագիտությունը՝ մասնավորապես: Ամենաակնառու գիտնականներից էին հայ գրականության բնագավառում՝ Մանուկ Աբեղյանը, լեզվաբանության՝ Յրաչյա Աճառյանը, բազմավաստակ պատմաբաններ Լեոն (Առաքել Բաբախանյան), Նիկողայոս Աղոնցը և Յակոբ Մանանդյանը, ինագետ-կովկասագետներ Նիկողայոս Մառն ու Յովսեփ Օրբելին, ազգագրագետ Երվանդ Լալայանը և շատ ուրիշներ:

**Գրականությունը** XX դարասկիզբը իրավամբ կարելի է համարել հայ գրականության, մասնավորապես պոեզիայի զարգացման բարձրակետը: Ասպարեզում էին հայ պոեզիայի երեք մեծ գագարները՝ Յ. Թումանյանը, Ավ. Իսահակյանը և Վ. Տերյանը: Յ. Թումանյանը հայ ազգային ոգու ամենաստույգ արտահայտիչն է և իրավամբ՝ հայ ամենաժողովորդական բանաստեղծը: Նրա ստեղծագործություններն իրենց պարզությամբ ու խորությամբ, մատչելիությամբ ու իմաստնությամբ մեր անբաժան ուղեկիցն են վաղ մանկությունից մինչև խոր ծերություն:

Յայ քնարերգությունը որակական նոր աստիճանի հասցրին Վ. Տերյանը և Ավ. Իսահակյանը՝ մեկն իր ստեղծագործությունների նրբության ու երաժշտականության, մյուսը՝ զգացմունքայնության, խոհական-փիլիսոփայական ուժով:

Դարագլխին շարունակում էին ստեղծագործել հայ մյուս դասականները՝ Շիրվանզարեն, Մուրացանը, Նար-Դոսը, Յ. Յովհաննիսյանը, Պ. Պռոշյանը, Վ. Փափազյանը, Գ. Զոհրապը, Շ. Վարուժանը, Լ. Շանթը, Ա. Ահարոնյանը, Վ. Թեքեյանը, Ե. Օտյանը, Մ. Մեծարենցը, Սիամանթոն և ուրիշներ:

**Արվեստը** Նշանակալի վերելք ապրեց նաև արվեստը՝ երաժշտությունը, նկարչությունը, բատրոնը, ճարտարապետությունը:

Յայ ազգային երաժշտության հիմնադիրն է հանճարեղ Երգահան Կոմիտասը (Սողոմոն Սողոմոնյանը): Նա մեծ ավանդ ունի նաև հայ հոգևոր երաժշտության ասպարեզում: Յայ ազգային երաժշտության ոսկե ֆոնդը բարձրարժեք ստեղծագործություններով հարստացրին

մեծանուն երգահաններ Ալեքսանդր Սպենդիարյանը, Ռոմանոս Մելիքյանը, Արմեն Տիգրանյանը և ուրիշներ: Ալ. Սպենդիարյանը իմբք դրեց հայկական սիմֆոնիկ և գործիքային երաժշտության:

Նշված ժամանակաշրջանում հայ կերպարվեստի ասպարեզ մուտք գործեցին Ստեփանոս Աղաջանյանը, Փանոս Թերլեմեզյանը, Եղիշե Թադևոսյանը և, իհարկե, գույների անզուգական վարպետ, համաշխարհային հռչակ ստացած Մարտիրոս Սարյանը:

Դայ գեղարվեստական գրականության վերելքը մեծ չափով պայմանավորում էր նաև թատրոնի զարգացումը: Թատրոնի խաղացանկը համալրվում էր հայ և օտար դրամատուրգների գործերով: Դարասկզբին հայ դերասանական արվեստի ամենաճանաչված դեմքերն էին Սիրանուշը, Շովկիաննես Աբելյանը, Շովկիաննես Զարիֆյանը, Արուս Ոսկանյանը, Վահրամ Փափազյանը: Վերջինիս ստեղծագործական քանթարը շոայլորեն շարունակեց դրսնորվել նաև հետագա տասնամյակներին:

XX դարում շարունակվեցին հայ բազմադարյան հարուստ ճարտարապետաշինարարական ավանդույթները: Եվ այդ ավանդույթների ամենամեծ մարմնավորողները եղան Թորոս Թորամանյանը և ակադեմիկոս Ալեքսանդր Թամանյանը: Կ. Պոլսում շարունակում էր ստեղծագործել հայ ճարտարապետների նշանավոր Պալյան գերդաստանը:

Այսպիսով, XX դարի երկու տասնամյակները նույնպես արգասապոր եղան հայկական մշակույթի համար: Թեև այս շրջանում հայ ժողովուրդը ապրեց ազգային-քաղաքական խորը ցնցումներ, սակայն նրա մշակութային կյանքը չխաթարվեց: Այն հարստացավ նորանոր ու ինքնատիպ ստեղծագործություններով:

## Գլուխ տասնութերորդ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ (1918-1920 թթ.)

## 1. Հայաստանի Հանրապետության կազմավորումը

**Պետական կառուցվածքը** 1918 թ. հունիսի 4-ին, Բաքումի հաշտության պայմանագրի կնքումից հետո, Թիֆլիսում կազմվեց նորահոչակ Հայաստանի Հանրապետության առաջին կառավարությունը, որը հուլիսի երկրորդ կեսին, Հայոց Ազգային խորհրդի հետ մասին, փոխադրվեց Երևան ու անմիջապես անցավ գործի: Կառավարության մեջ մտան Հովհաննես Քաջազնունին (Վարչապետ), Ալեքսանդր Խատիսյանը (արտ. գործ. նախարար), Արամ Մանուկյանը (ներքին գործ. նախարար), Խաչատուր Կարճիկյանը (ֆինանսների նախարար), Հովհաննես Հախվերդյանը (գինվորական նախարար) և մի փոքր ավելի ուշ՝ Գրիգոր Պետրոսյանը (արդարադատության նախարար): Մինչև այդ արդեն պետական կառուցվածքներ ստեղծելու, կարգուկանոն հաստատալու ուղղությամբ հսկայական կազմակերպչական աշխատանք էր կատարել Երևանի դիկտատոր Արամ Մանուկյանը (Սարգիս Հովհաննիսյան), որին, իրավամբ, համարում են հայոց պետականության հիմնադիրը:

Ծայրահեղ դժվարին պայմաններում էր կազմավորվում Հայաստանի Հանրապետությունը: Անհրաժեշտ էր ստեղծել պետական համակարգ, Երկիրը դուրս բերել քառսից ու անիշխանությունից, գաղթականությանը սնունդ ու բնակարան տալ, կարգավորել պարենավորումը և ֆինանսները, ստեղծել բանակ, հանդարտեցնել ազգամիջյան ներքին խռովությունները, լուծել սահմանային վեճերը, մի խոսքով՝ ստեղծել կազմակերպված պետություն:

Պետական կառուցվածքի տեսակետից Յայաստանի Յանրապետությունը համարվում էր պառլամենտական դեմոկրատական (ռամկավար) հանրապետություն, որտեղ բարձրագույն օրենսդիր իշխանությունը ժողովրդավարական ժամապարհով հիմնված խորհրդարանն էր, իսկ բարձրագույն գործադիր իշխանությունը՝ կառավարությունը։ Նախատեսվում էր, Յայկական հարցի վերջնական լուծումից ու Յայաստանի երկու հատվածների միավորումից հետո, իրավիրել Սահմանադիր ժողով, ընդունել Սահմանադրություն ու մտցնել նախագահական համակարգ և այլն։

Յանրապետության գոյության 2,5 տարվա ընթացքում կազմվել է երկու գումարման խորհրդարան՝ առաջինը գործել է 1918 թ. օգոստոսի 1-ից մինչև 1919 թ. հունիսի 5-ը, բազմակուսակցական հիմքի վրա, առանց ընտրությունների, ընդամենը 46 պատգամավորով, իսկ երկրորդը՝ 1919 թ. օգոստոսի 1-ից մինչև 1920 թ. դեկտեմբերի 2-ը, համամասնական ընտրությունների միջոցով, 80 պատգամավորով, որից 72-ը՝ դաշնակցական։ Այդ նույն ընթացքում գործել են չորս կառավարություն (կարինետ), որոնց վարչապետներ են եղել հաջորդաբար Յովհաննես Քաջազնունին, Ալեքսանդր Խատիսյանը, Յամագասպ Օհանջանյանը և Սիմոն Վրացյանը, բոլորն էլ Դաշնակցություն կուսակցության անդամ։ Աստիճանաբար ձևավորվեց նաև երրորդ՝ դատական իշխանությունը, որն իր մեջ ներառում էր ժողովրդավարական տարրեր։

Պետության բարձրագույն երկու (օրենսդիր և գործադիր) մարմիններում էլ քաղաքական հիմնական դեկավար ուժը եղել է Յ.Յ. Դաշնակցություն կուսակցությունը։ Բացի ՀՀԴ-ից, Յայաստանում ազատորեն գործում էին այլ կուսակցություններ՝ Յայ ժողովրդական, Յայ ռամկավար, սոցիալ-դեմոկրատ մենշևիկներ ու բոլշևիկներ, սոցիալիստ-հեղափոխականներ՝ Էսէններ, «սպեցիֆիկներ» և այլն։ Խորհրդարանում կային կուսակցական խմբակցություններ, գոյություն ուներ ընդդիմություն, ազատ մամուլ, թույլատրվում էր այլախոհություն և այլն։ Յանրապետությունում գործող բոլոր կուսակցությունները, բացի բոլշևիկներից, այսպես թե այնպես, կանգնեցին հանրապետության անվտանգության և հայոց պետականության պաշտպանության դիրքերում։ Սակայն եղած կուսակցություններից միայն ՀՀԴ-ն էր, որը հիմնականում իր ուսերի վրա կրեց հայոց անկախ պետականության քաղաքական ողջ պատասխանատվությունը։

Կառավարության ու խորհրդարանի մշտական հոգատարության

առարկան բանակն էր, որի հիմնական միջուկը կազմեցին նախկին կամավորական ջոկատների մարտիկները և զորավար Թովմաս Նազարբեկյանի գլխավորած հայկական առանձին բանակային կորպուսի զինված ուժերը: Հայաստանն ուներ մարտական բանակ, որի շարքերում, աշխարհազորային ուժերի հետ միասին, կար շուրջ 40 հազար մարդ, այդ թվում՝ երկու տասնյակից ավելի գեներալներ, 60 գնդապետներ և 2000-ից ավելի սպաներ: Հայկական բանակում ծառայում էին նաև մի քանի հարյուր ռուս սպաներ, այդ թվում՝ մի շարք զորավարներ:

1919 թ. կեսերին Հայաստանն արդեն կազմակերպված պետություն էր: Ժամանակավորապես Եռագույնը (Կարմիր, կապույտ, նարնջի գույներով) հոչակվեց որպես ազգային-պետական դրոշ, 1920 թ. հուլիսին, նույնպես ժամանակավորապես, հաստատվեց ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանի կազմած և նկարիչ Յակոբ Կոջոյանի գծած ՀՀ պետական զինանշանը (գերբը), ընդունվեց պետական հիմնը (օրիներգը), սահմանվեցին պետական ու ազգային կրոնական տոները, հայերենը ճանաչվեց որպես պետական լեզու և այլն:

**Հանրապետության Դիվանագիտական ներկայացուցչություն և կառաւտափին և պեր հաստատվեցին հարեւան ու հեռավոր մի քանրին դրությունը** նի տասնյակ պետությունների հետ: 1920 թ. հունվարի 19-ին Փարիզի խաղաղության համաժողովի Գերագույն խորհուրդը դեֆակտո (փաստացի) ճանաչեց Հայաստանի Հանրապետությունը: Կառավարությունը արտաքին քաղաքականության հարցերում ջանում էր ըստ կարելվույն բարիդրացիական հարաբերություններ հաստատել հարեւան պետությունների հետ և առկա տարածքային-սահմանային վեճերը հարթել խաղաղ միջոցներով: Սակայն տարածքային լուրջ խնդիրներ կային Անդրկովկասի երեք հանրապետությունների միջև: 1918 թ. դեկտեմբերին Լոռի-Փամբակի սահմանային վեճի պատճառով երկշաբաթյա ռազմական բախում տեղի ունեցավ Հայաստանի և Վրաստանի միջև: Դրա հետևանքով Լոռին ճանաչվեց չեզոք գոտի մինչև հարցի վերջնական լուծումը: Ավելի սուր ու շարունակական բնույթ կրեցին տարածքային սահմանային վեճերը Աղրբեջանի հետ: Վերջինս ձգտում էր նվաճել Արցախը, Զանգեզուրը, Նախիջևանը, Շարուրը և այլն: Այս խնդրում Աղրբեջանին օժանդակում էին Թուրքիան, իսկ 1920 թ. գարնանից՝ նաև Խորհրդային Ռուսաստանը:

Աստիճանաբար ընդարձակվեցին հանրապետության պետական սահմանները: 1918 թ. նոյեմբերին, երբ ավարտվեց աշխարհամարտը, և Թուրքիան պարտվեց ու հեռացավ Անդրկովկասից, Հայաստանի Հանրապետության իրավական իշխանության սահմաններն արդեն ձգվում էին Արցախից մինչև Օլթիի ածխահանքերը՝ կազմելով շուրջ 70 հազ. քառ. կմ տարածք: Բայց մի շաբթ շրջաններում Հայաստանի իշխանությունը անվանական էր: Արդեն 1920 թ. մայիսից վարչական տեսակետից ՀՀ բաժանված էր չորս նահանգների (Արարատյան, Շիրակի, Վանանդի (Կարսի) և Սյունյաց) և մեկ տասնյակից ավելի գավառների: Հանրապետությունում կար ավելի քան տասը քաղաք: Երևանն ուներ ավելի քան 60 հազ. բնակչություն: Հանրապետության բնակչության թիվը հասավ շուրջ երկու միլիոնի, որի 85 տոկոսը կազմում էր գյուղացիությունը:

Մշակվեց ու գործողության մեջ դրվեց տեղական ինքնակառավարման (զեմստվոնների) մասին օրենքը: Հիմնվեցին շրջանային դատարաններ, Դատաստանական պալատ և Սենատ: Վերջինս խաղում էր վճռաբեկ դատարանի դեր:

Բայցևայնպես, չափազանց ծանր էր հանրապետության ներքին դրությունը՝ երկարատև պատերազմ, ավելի քան 300 հազար գաղթականություն, տնտեսական քայլայվածություն, ավերածություն, սով, համաճարակ, թուրք-թաթարական տարրերի շարունակական խռովություններ և այլն: Միայն 1918-1919 թթ. ձմռանը սովից ու հիվանդություններից Հայաստանում մահացավ մոտ 180 հազար մարդ, այդ թվում հայ մեծագույն գործիչներից մեկը՝ Արամ Մանուկյանը:

Կառավարությունն իր սուլ միջոցներից օգնություն էր ցույց տալիս բնավեր գաղթականությանը, ջանում նրան ներգրավել աշխատանքի մեջ: Այդ ծանր ժամանակներում Հայաստանին պարենային մեծ օգնություն ցույց տվեց հատկապես ԱՄՆ-ը: 1919 թ. կեսին Բաթումից Հայաստան հասցվեց 1,3 մլն փութ (569 վագոն) ալյուր, 257 հազար փութ ցորեն և այլն: Ամերիկյան հացը, իրոք, մեղմացրեց սովը: Ամերիկյան նպաստամատույց կոմիտեն իր վրա վերցրեց հանրապետության 15 հազ. որբերի խնամքը և այլն: Երախտապարտ հայ ժողովուրդը երբեք չի մոռանա ամերիկյան մարդասիրական օգնությունը:

Հանրապետության ներքին կյանքի ամենացավոտ հարցերից էին ավելի քան կես միլիոն մահմեդական տարրերի, գերազանցապես թաթարների, շարունակական խռովությունները, որոնք հրահրվում և ուղղորդվում էին Թուրքիայի ու Ադրբեյջանի կողմից՝ Հայաստանի ան-

կախությունը խորտակելու և համաթուրքական կարգախոսներով միմյանց միջև անմիջական սահմանային ու հոգեւոր կապ հաստատելու նպատակով: Հակահայկական ու հակապետական շարժման օջախներ էին համարվում Բեռյուք-Վեդին, Չանգիբասարը, Նախիջևանը, Սուլըմալուն, Արդահանը և այլն: Թուրք գինվորական մասնագետների կողմից կազմակերպվող ու վարժեցվող մահմեդականների խռովարարական ելույթները հիմնականում կասեցվում էին հանրապետության գինված ուժերի կողմից:

### **Տնտեսությունը**

Հանրապետության տնտեսությունը թույլ էր գարգացած: Այլ կերպ չէր կարող լինել մետրոպոլիայի ագրարային կցորդը համարվող մի երկրում, որը նոր էր դուրս եկել պատերազմից: Չնայած հանրապետության ներքին ու արտաքին արտակարգ ծանր դրությանը, այնուամենայնիվ, նկատելի տեղաշարժեր ու դրական փոփոխություններ կատարվեցին տնտեսական ու մշակութային կյանքում: Հայաստանն իր համեմատական կայունացումն ստացավ Խատիսյանի վարչապետության շրջանում՝ 1919 թ. երկրորդ կեսին և 1920 թ. առաջին կեսին:

Հայաստանը գյուղատնտեսական երկիր էր, ուստի շատ կարևոր էր հողային բարեփոխությունների անցկացումը: Սակայն կառավարությունը հապաղեց այս խնդրում: Դրա փոխարեն նկատելի տեղաշարժեր կատարվեցին անասնապահության բնագավառում: Կարնատնտեսության զարգացած շրջաններից էր Կարսի նահանգը:

Տնտեսական քաղաքականության բնագավառում կառավարությունը հարկադրված եղավ մի շարք արտակարգ միջոցառումներ գործադրել: Կենսականորեն անհրաժեշտ մի շարք մթերքների ու ապրանքների ձեռքբերման նպատակով կատարվեցին առանձին բռնագրավումներ, իսկ բամբակի, ցորենի, խաղողի, աղի, խմիչքների, գետնախնձորի և այլ մթերքների վաճառքը հայտարարվեց պետական մենաշնորհ (մոնոպոլիա): Բռնագրավումների ու մենաշնորհի այս քաղաքականությունը ինչ-որ տեղ հիշեցնում էր բոլշևիկների «ռազմական կոմունիզմի» քաղաքականությունը, քաղաքականություն, որը խոչընդոտում էր մարդկանց անձնական շահագրգուվածությանը և, ընդհանրապես, տնտեսության զարգացմանը:

Այնուամենայնիվ, ՀՀ կարճատև գոյության ընթացքում շոշափելի քայլեր կատարվեցին սոցիալ-տնտեսական կյանքի տարբեր բնագավառներում: Հանրապետությունում կառուցվեցին ու վերանորոգվեցին

մի շարք ջրանցքներ, կազմվեցին էլեկտրակայանների կառուցման նախագծեր: 1919 թ. աշնանը Հայաստանի խորհրդարանը հաստատեց ռուս ինժեներ Ս. Զավալիշինի կազմած ռոռզման, մելիորատիվ աշխատանքների նախագիծը: 1919 թ. կառուցվեց Երևանի ռադիոկայանը, իիմնվեց Հայաստանի հեռագրական գործակալությունը (ՀՀԳ): Բացվեցին գործարաններ և արհեստանոցներ՝ օճառի, կաշվի, կոնյակի, հախճապակու, ծխախոտի և այլն: 1919 թ. վերջերին Հայաստանում գործում էին ծխախոտի 5 ֆաբրիկա: Արդեն 1920 թ. գարնանը Հայաստանի Հանրապետությունում հաշվվում էին շուրջ 70 գործարաններ: Հիմնվեց Հայկոռպը: Հայաստանում կային 280 կոռպերատիվներ՝ 112 հազար անդամներով: Պետականացվեց Շուլստովի կոնյակի գործարանը և այլն: 1919 թ. Հայաստանի սահմաններում ստացվել էր 1,7 մլն աստիճան խաղողի սպիրտ:

Երևանում, Ալեքսանդրապոլում և մյուս քաղաքներում կային մի քանի տասնյակի հասնող ջուլիականոցներ և այլ մանածագործական արհեստանոցներ: Սարիղամիշում և Դիլիջանում հիմնվեցին սղոցարաններ, գործում էին Կոռբի և Կաղզվանի աղահանքերը: Գործի գցվեցին Ալավերդու և Զանգեզուրի պղնձահանքերը: Բազմաթիվ նախագծեր մշակվեցին տնտեսական, ճարտարագիտական տարբեր բնագավառների վերաբերյալ: Հայաստանի ընդերքը ուսումնասիրելու համար հատկացվեց 1 մլն ռուբլի: Մտցվեց 8-ժամյա աշխատանքային օր, հիմնվեցին արհեստական միություններ:

Շրջանառության մեջ դրվեց հայկական դրամանիշը, որը տպագրվեց Լոնդոնում: Կազմակերպվեց մաքսային գործը, սկսեց աշխուժանալ առևտուրը: Բայց հանրապետության տնտեսության աքիլեսյան գարշապարը մնում էին ֆինանսները: Հարկա-վարկային և տնտեսական ոչ հստակ քաղաքականության հետևանքով տեղի էր ունենում դրամի կուրսի շարունակական անկում: Պետքութեից կատարվող ծախսերը սովորաբար գերազանցում էին եկամուտները, այսինքն պետքութեից բալանսը եղել է դեֆիցիտային:

Կարգի բերվեցին հաղորդակցության ուղիները: Երկաթուղու երկարությունը 7 վերստից հասավ 418-ի: Սևանա լճում հիմնվեց նավատորմ: Հայաստանի խճուղիների ընդհանուր երկարությունը հասնում էր 2 հազ. վերստի: Գործի դրվեց ու ընդլայնվեց փոստ-հեռագրային ծառայությունը: Ինչ վերաբերում էր հեռախոսային ցանցին, ապա այն դեռևս թույլ էր զարգացած: 1920 թ. մայիսին ավելի քան 60 հազար բնակչություն ունեցող Երևանում կար 250 հեռախոսային աբոնենտ:

## **Կրթամշակութային կյանք**

Դայոց պետականության վերականգնումով ՀՀ-ում իրական ու հարազատ միջավայր ստեղծվեց հայ քաղաքական ու կրթամշակութային կյանքի գոյատևման ու զարգացման համար: Դայ մտավոր ուժերը Թիֆլիսից, Բաքվից, Մոսկվայից, Կ.Պոլսից և այլ քաղաքներից տեղափոխվեցին հայրենիք: Դրանից հետո Երևանը դարձավ հայ հոգևոր և մշակութային կյանքի կենտրոն:

Դանրապետությունում լույս էին տեսնում շուրջ երեք տասնյակի հասնող պարբերականներ, գործում էին բազմաթիվ հրատարակչություններ ու տպարաններ: 1920 թ. հանրապետությունում կար 7 տպարան, որից 5-ը՝ Երևանում:

Առաջընթաց ապրեց կրթական գործը: Դպրոցական համակարգը երկաստիճան էր՝ տարրական և միջնակարգ: Եթե 1918/19 ուստարում Դայաստանն ուներ ընդամենը 133 տարրական դպրոց՝ 383 ուսուցիչներով և 11136 աշակերտով, ապա 1919/20 ուստարում՝ 456 տարրական դպրոց, 1047 ուսուցիչ և 41188 աշակերտ: Գործում էր 20 միջնակարգ ուսումնական հաստատություն՝ 283 ուսուցչով և 5162 սովորողով: Ամբողջ Դայաստանը բաժանված էր 11 ուսումնական օկրուգների:

Կրթական և ընդհանուրապես ազգային-մշակութային կյանքի նշանակալի իրադարձություն եղավ կառավարության՝ 1919 թ. մայիսի 16-ի որոշումը՝ համալսարան հիմնադրելու մասին: Եվ 1920 թ. հունվարի 31-ին, առաջին անգամ Դայաստանի հողի վրա, բացվեց բարձրագույն կրթարան (ժամանակակից չափանիշներով՝ հայկական առաջին համալսարանը (Ալեքսանդրապոլում), որը հաջորդ ուստարում փոխադրվեց Երևան: Բացման օրը համալսարանն ուներ 8 դասախոս և 200 ուսանող: Եկավ «տգիտության շղթան» փշրելու ժամանակը:

Ծրագրվում էր 1920 թ. աշնանը Երևանում բացել կոնսերվատորիա, բժշկական, գյուղատնտեսական բաժիններ, Ալեքսանդրապոլում՝ գեղարվեստի ուսումնարան, Կարսում՝ ռազմական գիմնազիա և այլն: Կառավարությունը ձեռք բերեց 100 հազար ռուբլու նկարներ՝ պատկերասրահ հիմնելու համար: Ուշադրություն էր դարձվում ժողովրդական թատրոններին, երաժշտությանը, հնագույն արժեքների պահպանմանը, պատանիների ֆիզիկական դաստիարակությանը: Սկիզբ դրվեց սկաուտական շարժմանը և այլն:

Դարձ է նշել, որ մշակութային, լուսավորական-կրթական գործում առանձնապես զգալի են նախարար Նիկոլ Աղբայանի ծառայություն-

Աերը: Յենց նրա նախաձեռնությամբ էլ 1919 թ. սեպտեմբերին Երևանում սկսեց գործել Յայ գրական ընկերությունը: Յայաստանի Յանրապետությունում գրողները հովանավորվում և նպաստ էին ստանում պետությունից: Յեղինակների երկերի հրատարակության համար հատկացվեց 3,2 մլն ռուբլի, նույնքան գումար էլ՝ գիտական և գեղարվեստական գրականության թարգմանությունների համար:

Դրական փոփոխություններ կատարվեցին բնակչության բժշկական սպասարկման և սանհիտարահիգիենիկ բնագավառներում: 1918 թ., թուրքական արշավանքներից հետո, Յայաստանում հաշվում էր ընդամենը 9 հիվանդանոց՝ 300 մահճակալով: Թուրքերի հեռանալուց հետո վիճակը նկատելիորեն բարելավվեց: Արդեն 1919 թ. կեսերին բացվեցին 30 հիվանդանոց՝ 1600 մահճակալով, 5 բժշկական ու 15 բուժակային կետեր: Յիմնվում է կենտրոնական դեղատնային պահեստ: Պլանավորվել էր անցկացնել կոյուղի՝ Երևան, Ալեքսանդրապոլ, Կարս, Նոր Բայազետ, Էջմիածին և այլ քաղաքներում, բոլոր բնակավայրերը մատակարարել խմելու ջրով, չորացնել հիվանդաբեր ճահիճները, բացել մսուր-մանկապարտեզներ, առողջարաններ և այլն:

Ինչպես տեսնում ենք, ՀՀ ներքին, տնտեսական և մշակութային կյանքում փոփոխություններն ակնքախ էին, որոնք ինքնին վկայում էին, որ արդեն առկա էր ինքնուրույն ձևավորված պետականություն՝ բնորոշ բոլոր անկապտելի հատկանիշներով:

## 2. Յայկական հարցը Փարիզի կոնֆերանսում: Սկրի պայմանագիրը

**Յայկական  
ղատվիրակությունների  
գործունեությունը  
Փարիզում**

ՀՀ արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունը եղել է Յայկական հարցի լուծումը, այսինքն՝ արևմտահայ նահանգների միացումը Յայաստանի Յանրապետությանը և այդպիսով Ազատ, Անկախ, Միացյալ Յայաստանի ստեղծումը: Այդ ռազմավարական քաղաքական կուրսի արտահայտությունն էր այն, որ Յայաստանի կառավարությունը, առանց խորհրդարանի գիտության, 1919 թ. մայիսի 28-ին (անկախության տարեդարձի օրը) պաշտոնական հայտարարություն արեց Յայաստանի երկու հատվածների միացման ու Միացյալ և Անկախ Յայաստանի հռչակման մասին:

Ինչպես հայտնի է, 1918 թ. հոկտեմբերի 30-ին Սուլոռոսի (Հավահանգիստ Եգեյան ծովում) զինադադարով թուրքիան անձնատուր եղավ և պարտավորվեց իր զորքերը դուրս բերել նաև Անդրկովկասից ու Արևելյան Հայաստանից: Իմանալով, որ հաշտություն կնքելու նպատակով շուտով՝ 1919 թ. հունվարին, Փարիզում բացվելու է խաղաղության խորհրդաժողով, որոշվեց, որպես հաղթանակած Անտանտի «փոքր դաշնակից», Հայաստանից պատվիրակություն ուղարկել եվրոպա՝ ներկայացնելու համար հայկական պահանջները: Կազմվեց կառավարական պատվիրակություն՝ Ա. Ահարոնյան (նախագահ), Մ. Պապաջանյան և Յ. Օհանջանյան (անդամներ) կազմով (վերջինս գտնվում էր Բեռլինում և նրանց պետք է միանար Փարիզում): Պատվիրակության խնդիրն էր՝ իրենց առաջարկություններով, խնդրանքներով, ծանոթություններով, հանրային նպաստավոր կարծիք ստեղծելու միջոցով հաղթած տերությունների ուշադրությունը հրավիրել Հայկական հարցի վրա և ամեն կերպ նպաստել դրա արդարացի լուծմանը: Այնտեղ պաշտպանվելու էր Միացյալ և Անկախ Հայաստանի գաղափարը: Ընդ որում՝ պահանջվելու էր նվազագույնը՝ արևմտահայ չորս վիլայեթ (առանց ոչ հայաբնակ ծայրագավառների)՝ ծովային ելքով, իսկ առավելագույնը՝ վեցից-յոթ վիլայեթ՝ դարձյալ ծովային ելքով:

Հայաստանի կառավարությունը Փարիզ մեկնող պատվիրակությանը հրահանգ էր տվել նաև՝ նախապատվություն տալ ոչ այնքան տարածքային մեծությանը, որքան ծովային ազատ ելքին: Մի խոսքով՝ սահմանվեց պատվիրակության լիազորությունների շրջանակը:

1919 թ. հունվարի 18-ին Փարիզում բացվեց Խաղաղության վեհաժողովը: Հայաստանի պատվիրակությունը Փարիզ հասավ ուշացումով՝ փետրվարի սկզբին:

Ավելի վաղ, 1912 թ., հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ի հանձնարարությամբ Փարիզում գործում էր Եգիպտահայ մեծահարուստ Պողոս Նուբար փաշայի գլխավորած արևմտահայ ազգային պատվիրակությունը: Ի դեպ, ազգային պատվիրակությունը ավելի մեծ՝ ծովից ծով, Կիլիկիայի հետ միասին, Հայաստան ստեղծելու պահանջ էր դնում: Հայկական այս երկու պատվիրակությունները պետք է համագործակցեին: Սակայն հենց սկզբից սառնություն և հասկամարտություն առաջացավ նրանց միջև, որն էլ, անկասկած, բացասաբար անդրադարձավ Հայոց դատի դրական լուծման ընթացքի վրա:

**Հայաստանի մանդատի խորհրդատողության մեջ տերություններից Հայաստանի մանդատի շատ կարևոր էր ունենալ որևէ հովանավոր (մանդատատեր) երկրի աջակցությունը։ Նկատի ունենալով, որ Փարիզի խորհրդատողություն մեծ տերություններից Հայաստանի նկատմամբ ավելի բարյացակամ էր և մեծ հետաքրքրություն էր հանդես բերում ԱՄՆ-ը, Հայաստանի պատվիրակությունները ցանկություն հայտնեցին Միացյալ, Անկախ և Ազատ Հայաստանի հովանավորությունը (մանդատը) հանձնել ԱՄՆ-ին կամ էլ նոր կազմվելիք Ազգերի լիգային։ Մասնավորապես ԱՄՆ պրեզիդենտ Վուդրո Վիլսոնը շատ էր հետաքրքրություն Հայաստանով, և հույս կար, որ ԱՄՆ-ը կստանձնի Հայաստանի մանդատը։**

Փարիզի խորհրդատողությունը և նորաստեղծ Ազգերի լիգան որոշում են Հայաստանի մանդատը հանձնել ԱՄԱ-ին։ 1919 թ. հուլիսին Հայաստանի գերագույն կոմիսար է նշանակվում ամերիկացի գնդապետ Ուիլյամ Շասկելը։ Հայաստան է ժամանում ամերիկյան առաքելությունը՝ զորավար Ջեյմս Շարբորդի գլխավորությամբ՝ մանդատն ստանձնելու հարցում ուսումնասիրելու Հայաստանի հնարավորությունները։ Տերությունների նախնական համաձայնությամբ Թուրքիան պետք է մասնատվեր երեք մասի՝ Հայաստանի, Թուրքիայի և Կ. Պոլսի՝ որևէ մի պետության խնամակալության ներքո։ Ինչպես տեսնում ենք, բանակցությունների սկիզբը խոստումնալից էր, և Հայկական հարցի լուծումը վեհաժողովում կարծես որևէ կասկած չէր հարուցում։ Միայն հարցն այն էր, թե քանի նահանգ, որքան տարածք պետք է միացվեր Հայաստանին։ 1919 թ. փետրվարին հայկական պատվիրակությունները հավանություն տվեցին հայկական պահանջների հուշագրին, որով դաշնակից տերություններից պահանջվում էր ծովից ծով Հայաստան։ Համաձայն այս հուշագրի, հայերը պահանջում էին՝ բացի ՀՀ տարածքից, արևմտահայ յոթ վիլայեթները և Կիլիկիայի չորս սանջակները, մի խոսքով՝ մի լայնատարած պետություն։ Սև ծովից մինչև Միջերկրական։ Ընդումին, Կիլիկիան կարող էր միացվել մեծ Հայաստանին կամ կարող էր լինել ինքնավար։ Փարիզի կոնֆերանսի Տասի խորհուրդը, որը համաժողովի գերագույն մարմինն էր, ընդունում էր հուշագիրը՝ Միացյալ Հայաստանի քարտեզով։ Սակայն երկար քաշքուկից հետո, 1920 թ. հունիսին, ԱՄՆ-ի սենատը ձայների մեծամասնությամբ մերժում է ընդունել Հայաստանի մանդատը։ Այն իրաժարվում են ընդունել նաև մյուս երկրները՝ Անգլիան, Ֆրանսիան, Իտալիան և այլն։ «Երականությունը ցույց տվեց սակայն, - գրում էր ՀՀ

առաջին վարչապետ Յ. Քաջազնունին,- թե որքան ցնորամիտ էին մեր հույսերը: Շատ դժոներ բախեցինք, շատ շեմքեր մաշեցինք, բայց Արևուտքից չեկավ «մանդատատերը»՝ մեր երկիրը փրկելու, մեր նորածին պետությանը թև տալու»:

**Սերի Պայմանագիրը** Համաշխարհային պատերազմում պարտված Թուրքայի հետ կնքվելիք հաշտության պայմանագրի նախապատրաստական քայլը Եղավ Սան-Ռեմոյի կոնֆերանսը (1920 թ. ապրիլ), ուր մշակվեց ապագա պայմանագրի նախագիծը, որից հետո, 1920 թ. օգոստոսի 10-ին ստորագրվեց Սերի պայմանագիրը: Այդ պայմանագիրը Հայաստանի կողմից ուսկյա գրչով ստորագրել է Ա. Ահարոնյանը: Վերջինս այդ օրը համարել է իր կյանքի ամենաերջանիկ օրը: Պայմանագրի 88-րդից մինչև 93-րդ հոդվածները վերաբերում էին Հայաստանին: Օսմանյան Թուրքիան պարտավորվում էր ճանաչել Միացյալ Հայաստանը:

Սերի պայմանագրով ստեղծվելու էր Միացյալ և Անկախ Հայաստան, որի մեջ ներառվելու էին Արևմտյան Հայաստանից՝ Էրզրումի, Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի նահանգները ոչ ամբողջությամբ՝ ընդամենը 90 հազ. քառ. կմ, ելքով դեպի Սև ծով, որոնք Արևելյան Հայաստանի (Հայաստանի Հանրապետության) առկա 70 հազ. քառ. կմ հետ միասին կազմելու էին ավելի քան 160 հազ. քառ. կմ ընդհանուր տարածք ունեցող մի պետություն: Ընդ որում, Թուրքիայի և Հայաստանի պետական սահմանները որոշելու էր ԱՄՆ պրեզիդենտը: Սակայն 1920 թ. նոյեմբերին Վ. Վիլսոնի գծած Միացյալ, Անկախ Հայաստանի քարտեզը, որպես պատմական փաստաթուղթ, այդպես էլ մնաց թղթի վրա և չկենսագործվեց: Հայաստանին վերադարձվող այդ նահանգները գտնվում էին քեմալական Թուրքիայի իշխանության տակ և այդպես էլ չգտնվեց այն պետությունը, որը պետք է վերցներ այդ հողերը և տար հայերին, իսկ վերջիններս էլ անզոր էին սեփական ուժերով լուծել այդ խնդիրը: Թուրքիայում դրության տերը քեմալականներն էին, որոնք ոչ միայն չճանաչեցին Կ. Պոլսի օսմանյան կառավարության կողմից կնքված Սերի պայմանագիրը և ոչ միայն չդատարկեցին հայկական վիլայեթները, այլև, ինչպես կտեսնենք քիչ հետո, գործակցելով բոլշևիկների հետ՝ արշավեցին դեպի Արևելյան Հայաստան:

**Կիլիկիահայության նոր աղետը** Քենալական Թուրքիան, ստանալով բոլշևիկյան

Ռայաստանի ռազմաքաղաքական աջակցությունը, սկսեց ավելի ու ավելի համարձակ խոսել Մեծ տերությունների հետ: Իսկ 1920 թ. աշնանը, երբ Հայաստանը չկարողացավ սեփական ուժերով պաշտպանել իրեն և խորհրդայնացվեց, Արևուտքի տերությունները կորցրեցին հետաքրքրությունը Հայաստանի ու Հայկական հարցի նկատմամբ և սկսեցին «սիրային խաղերը» թուրք ազգայնականների՝ քենալականների հետ: Իր հերթին, քենալական Թուրքիան ևս սկսեց մերձենալ նրանց հետ: Արդյունքում՝ մեծ տերությունները իրաժարվեցին Հայոց դատի պաշտպանությունից: Առաջինը հայ ժողովորի շահերը ոտնահարեց և Թուրքիայի հետ մերձեցավ Ֆրանսիան, որը մինչ այդ ստանձնել էր Կիլիկիայի հովանավորությունը և այդ թվում՝ 150 հազարանոց կիլիկիահայության ինքնավարության պաշտպանությունը: Սակայն շուտով, թուրք-ֆրանսիական համաձայնությամբ, ֆրանսիական զինված ուժերը լքում են Կիլիկիան՝ տեղի հարյուր հազարավոր հայությանը թողնելով թուրքական բանդաների ճիրաններում: Այդ ընթացքում մի շարք քաղաքներում (Հաճըն, Մարաշ, Այնթապ, Աղանա և այլն) ծայր առան ջարդերը, և կենդանի մնացած հայությունը կրկին բռնագաղթվեց Կիլիկիայից: Այդպիսով, կիլիկիահայությունը դարձավ Ֆրանսիայի քաղաքական խարդավանքների զոհը: Տեղին է հիշեցնել, որ երբ Ֆրանսիային օգնություն էր հարկավոր, կազմվեց հիմնականում հայերից բաղկացած «Արևելյան լեգեոնը» (1916 թ.), իսկ այժմ Ֆրանսիան զլացավ իր գործնական օգնությունը ցույց տալ հայերին: 1921 թ. հոկտեմբերի 20-ին Ֆրանսիայի և Թուրքիայի միջև ստորագրվեց պայանագիր, որով Կիլիկիան հանձնվեց Թուրքիային: Կիլիկիայի հայերը, դիմելով արտագաղթի, փրկություն գտան արաբական երկրներում, Կիպրոսում, Եվրոպայում, Ամերիկայում և այլուր:

Հանրագումարի բերելով ՀՀ վարած արտաքին քաղաքականությունը 1918-1920 թթ., գալիս ենք այն եզրակացության, որ այդ քաղաքականությունը ունեցել է առավելապես արևմտյան կողմնորոշում: Քաղաքական այդ կողմնորոշումը հայերին տվեց Սևրի պայմանագրով ստորագրված Միացյալ, Անկախ, Ազատ Հայաստան, որը, սակայն, փոփոխված իրադրության հետևանքով, մնաց թղթի վրա, չվավերացվեց ոչ մի պետության կողմից և չիրականացավ կյանքում: Այդուհանդերձ, Սևրի դաշնագիրը եղել ու մնում է համայն հայության ամենանվիրական իղձերից մեկը, որով միջազգայնորեն հայ ժողովր

դին տրվել է իրավունք՝ իր պատմական հայրենիքում կերտելու Ազատ, Անկախ և Միացյալ Հայաստան:

Ինչ վերաբերում է Ռուսաստանին, ապա այդ ժամանակ գոյություն ուներ մի քանի Ռուսաստան՝ բոլշևիկյան, դենիկինյան, կոլչակյան և այլն, որոնք գրաղված էին քաղաքացիական պատերազմով, և մինչև 1920 թ. կեսերը դժվար էր կռահել, թե որանցից որը կհաղթի, և թե ինչպես պետք է դիրքորոշվել: Քանի որ Հայաստանի կառավարության համար անընդունելի էր Ռուսաստանի կենտրոնում իշխանության գլուխ կանգնած բոլշևիկների հասարակական-քաղաքական ռեժիմը, ուստի Հայաստանը ավելի սերտ շփումների մեջ էր Դենիկինի, Կոլչակի, Վրանգելիի կառավարությունների հետ, որտեղ ուներ նաև դիվանագիտական ներկայացուցչություններ, ստանում էր որոշ քանակի հացահատիկ, զենք ու զինամթերք: Արդեն 1920 թ. գարնանը վիճակը կտրուկ փոխվում է: Կարմիր բանակի հաղթական մուտքը Շյուսային Կովկաս և Բաքու հարկադրեց Հայաստանի իշխանություններին բանակցություններ սկսել Մոսկվայի հետ՝ կարգավորելու փոխհարաբերությունները միմյանց միջև, և ստորագրել բարեկամության դաշնագիր: Չենց այդ առաքելությամբ էլ 1920 թ. մայիսին Մոսկվա մեկնեց Լ. Շանթի գլխավորած պատվիրակությունը: Այդ բանակցությունները նույնպես գործնականում դրական արդյունք չտվեցին, քանզի առկա էր արդեն բուրք-բոլշևիկյան զինակցությունը:

Այսպիսով, մեծ տերությունները, ինչպես հայ ժողովրդի պատմության նախընթաց փուլում, այնպես էլ 1918-1920 թթ., հայ ժողովրդին Հայկական հարցը արդարացի լուծելու խոստումներ տվեցին, սակայն վճռական պահին լքեցին նրան: Այս ամենը պարտադրում է մեզ՝ համապատասխան դասեր առնել: Հայ ժողովրդի պատմական փորձը հանգեցնում է այն միանշանակ հետևության, որ հիմնականում սեփական ուժերին ապավինելն է ազգի գոյատևման ու զարգացման ճշմարիտ երաշխիքը:

Ի վերջո, պետք է մեկընդիշտ ըմբռնել այն հաստատուն ճշմարտությունը, որ յուրաքանչյուր պետություն կամ ազգ նախ և առաջ հետամուտ պետք է լինի իր սեփական, ազգային պետական շահերի պաշտպանությանը: Անմտություն կլինի կարծել, թե որևէ պետություն անշահախնդիր կպաշտպանի մեկ այլ պետության կամ ժողովրդի շահերը: Այդ համադրույթից ելնելով պետք է ասել, որ գերտերություններից և ոչ մեկը, իր շահերից ելնելով, ոչ մի ջանք չգործադրեց՝ պաշտպանելու հենց իրենց մեղքով մեծ ողբերգություն ապրած հայ

ժողովրդին: Ընդհակառակը նրանք իերթով բարեկամացան օրավոր ուժեղացող ու ամրապնդվող քեմալական թուրքիայի հետ՝ հանուն իրենց մեծապետական շահերի:

### 3. 1920 թ. Մայիսյան ապարամբությունը Հայաստանում

**Նախադատրաս-** Հայաստանի Հանրապետությունը ժողովրդավարա-  
**տությունը** կան պետություն էր, ուր ազատորեն գործում էին

մի շարք քաղաքական կուսակցություններ և հա-  
սարակական կազմակերպություններ՝ ՀՀԴ, Հայ ժողովրդական, Սո-  
ցիալ-դեմոկրատական (մենշևիկներ և բոլշևիկներ), սոցիալիստ-հեղա-  
փոխական (էսեններ), արհեստակցական, մարզական, աշակերտա-  
կան միություններ և այլն: Հայաստանում գրանցված գրեթե բոլոր  
քաղաքական կուսակցությունները և կազմակերպությունները, բա-  
ցառությամբ բոլշևիկների, այսպես թե այնպես, պաշտպանեցին հայ-  
կական պետականությունը: Թերևս միայն բոլշևիկ-համայնավարներն  
էին, որ ի սկզբանե թշնամական դիրք գրավեցին Հայաստանի ան-  
կախ հանրապետության նկատմամբ և գաղտնի ու բացահայտ վա-  
րում էին հակապետական գործունեություն: Սկզբում նրանք Հայաս-  
տանում աննշան թիվ էին կազմում և գրեթե ազդեցություն չունեին  
զանգվածների շրջանում: Այստեղ նրանք չունեին բավարար սոցիա-  
լական հենարան, քանզի Հայաստանում չկար բանվոր դասակարգ՝  
բառիս իսկական իմաստով: Բայց 1919 թ. սեպտեմբերին, երբ Երևա-  
նում հրավիրված բոլշևիկների խորհրդակցությունում ստեղծվեց կենտ-  
րոնական մարմին՝ Հայաստանի կոմիտե (Արմենկոմ), Վրաստանի և  
Աղրբեջանի իշխանությունների կողմից հետապնդվող զգալի թվով հայ  
բոլշևիկներ ապաստանեցին Հայաստանում և սկսեցին ակտիվ հա-  
կապետական քարոզչական գործունեություն ծավալել՝ գոյություն ու-  
նեցող կարգերը տապալելու և խորհրդային իշխանություն հաստա-  
տելու համար: Չնայած այս ամենին այլ կուսակցությունների ներկա-  
յացուցիչների նման շատ բոլշևիկներ ևս պաշտոններ էին զբաղեց-  
նում պետական իշխանության համակարգի տարբեր օդակներում:

Հայաստանի խորհրդայնացման համար իրական վտանգ ստեղծ-  
վեց այն բանից հետո, երբ խորհրդային Ռուսաստանի 11-րդ Կարմիր  
բանակը, քաղաքացիական կոիվներում պարտության մատնելով Ղե-  
նիկինի կամավորական բանակին, 1920 թ. գարնանը մտավ Յյուսի-

սային կովկաս, իսկ ապրիլի 28-ին, թուրքերի աջակցությամբ, առանց որևէ կրակոցի, հայտնվեց Բաքվում և Աղրբեջանը հայտարարեց խորհրդային: Աղրբեջանի խորհրդայնացման հաջորդ իսկ օրը Աղրբեջանի հեղկոմը, Կարմիր բանակի աջակցությամբ, վերջնագիր ներկայացրեց Հայաստանի կառավարությանը՝ Ղարաբաղը և Զանգեզուրը հայկական զորքերից մաքրելու սպառնալով հակառակ դեպքում պատերազմ հայտարարել Հայաստանին: Այդ նույն ժամանակ Հայաստանի ներսում վերսկսվեցին թաթարական խռովությունները: Հայաստանի անկախությանը դավող մութ ուժերը աջակցություն էին ստանում դրսից:

### **Ապստամբության սկիզբը և ընթացքը**

Աղրբեջանի «կարմրացումը» և Կարմիր բանակի՝ Հայաստանի սահմանների մոտ հայտնվելը ավելի ոգևորեց և ակտիվացրեց դրսի ու ներսի հայ բոլշևիկներին, որոնք էլ 1920 թ. մայիսին երկշաբաթյա գինված ելույթներ սկսեցին Հայաստանի օրինական իշխանությունների դեմ այն տապալելու և երկրում խորհրդային կարգեր հաստատելու մտադրությամբ: Ամեն ինչ սկսվեց 1920 թ. մայիսմելյան ցույցերից, որոնց քաղաքական կարգախոսները կրում էին հակակառավարական բնույթ:

Ապստամբության օջախները դարձան Ալեքսանդրապոլը, Կարսը, Սարիղամիջը, Նոր Բայազետը, Ղազախ-Դիլիջանը և այլն: Ապստամբության կենտրոնը դարձավ Ալեքսանդրապոլը: Մայիսի 7-ին տեղում հրավիրվեց բոլշևիկյան կազմակերպությունների ներկայացուցիչների խորհրդակցություն, որտեղ ստեղծվեց Հայաստանի ռազմահեղափոխական կոմիտե (ՀՌՀԿ): Հիմնական ընդվարող զանգվածը գինվորականությունն էր: Իշխանություններին չենթարկվեց «Վարդան Զորավար» գրահագնացքը, որի հրամանատարն էր կապիտան Սարգիս Մուսայելյանը: Վերջինս էլ նշանակվեց ապստամբ ուժերի հրամանատար: Ասպտամբության բախտախնդիր դեկապարներից էր Ավիս Նուրիջանյանը, որը տարված էր ծայրահեղ ծախ կոմունիստական հայացքներով ու գործելակերպով:

Բոլշևիկների Հայաստանի կոմիտեն (Արմենկոմը), որն իր գործողություններում ավելի հավասարակշիռ էր, գտնում էր, որ ապստամբությունը պետք է սկսել Աղրբեջանին սահմանակից Ղազախից, որպեսզի կարողանան անմիջապես ստանալ Կարմիր բանակի օգնությունը, իսկ Ալեքսանդրապոլի բոլշևիկյան կոմիտեն ցանկանում էր

այն սկսել Ալեքսանդրապոլից: Ի վերջո, որոշվեց ապստամբությունը միաժամանակ սկսել Ալեքսանդրապոլից և Ղազախից և շարժվել Երևան:

Ապստամբությունն սկսվեց մայիսի 10-ին Ալեքսանդրապոլից: Ռազմահեղափոխական կոմիտեն տեղում հռչակեց խորհրդային իշխանություն: Ապստամբներին հաջողվեց մի քանի օր՝ մայիսի 10-ից 14-ը, իրենց ձեռքում պահել հանրապետության երկրորդ քաղաքը:

Դայաստանի կառավարությունը սկզբում շփոթության մեջ էր: Մինչ այդ, ուժեղացող խժոժությունների ու հասունացող քաղաքական ճգնաժամի պայմաններում, մայիսի 5-ին խորհրդարանի արտակարգ նիստում Ալ Խատիսյանի կառավարությանը փոխարինեց նոր՝ Յ. Օհանջանյանի գլխավորած Դաշնակցության Բյուրո-կառավարությունը: Այսինքն, կառավարությունը կուսակցականացնելով՝ ՀՀ Դաշնակցության Բյուրոն իր ողջ կազմով (յոթ անդամներով) մտավ կառավարության մեջ, որպեսզի, կուսակցական կառույցները ևս օգտագործելով, զսպեր հակակառավարական ուժերին: Խորհրդարանն ուղարկվեց հարկադիր արձակուրդի: Դայտարարվեց Դաշնակցության անդամների մորիլիզացիա, ձեռնարկվեցին խիստ միջոցառումներ՝ ընդհուպ մինչև մահապատիժ, իիմնվեցին արտակարգ դատարաններ և այլն: Փաստորեն, հաստատվեց Դաշնակցության դիկտատուրա: Դայաստանի քաղաքական մյուս կուսակցությունների համակրանքը հիմնականում օրինական իշխանությունների կողմն էր: Դայ ժողովրդական կուսակցությունը, նույնիսկ իր անդամներից հավաքագրված, զինված խմբեր էր դրել կառավարության տրամադրության տակ:

## **Ապստամբության վախճանը և հետևանքները**

Կառավարությունը դիմեց հանրապետության քաղաքացիներին՝ համախմբվելու և պաշտպանելու կարգն ու օրինականությունը: Դրանից հետո հանրապետության իշխանություններն անցան վճռական գործողությունների: Այդ ընթացքում ներքին գործերի և ռազմական նախարարն էր Ռ. Տեր-Մինասյանը:

Մայիսի 14-ին խմբապետ Սեպուհի (Արշակ Ներսիսյան) գլխավորությամբ արևմտահայ զինված ուժերի ջանքերով, գրեթե առանց կրակոցի, հնազանդվեց ապստամբությունն Ալեքսանդրապոլում: Դաջողություն չունեցավ ելույթը նաև Կարսի կայազորում, որովհետև այն աջակցություն չգտավ բնակչության կողմից, բացառությամբ մոլոկանական մի երկու գյուղի: Շուտով մարեցին նաև ապստամբության

մյուս օջախները, որոնք, լավ նախապատրաստված ու կազմակերպված չլինելու պատճառով, փաստորեն գործում էին իրարից անջատ, ոչ միաժամանակ, տարերայնորեն, առանց միասնական ղեկավար կենտրոնի: Օրինակ, ապստամբությունը Սարիղամիշում սկսվեց այն ժամանակ, երբ այն ճնշվել էր Ալեքսանդրապոլում և Կարսում: Դամենատաբար տեսական եղավ դիմակայությունը Ղազախ-Շամշադինում, որի գյուղացիության մի մասին ապստամբները կարողացել էին գրավել իրենց կողմը, ինչպես նաև Ադրբեյջանի կողմից «օգնության» էին հասել կարմիրբանակայինի հանդերձանքով թուրքեր: Բայց շուտով այստեղ նույնպես վերահաստատվում է իշխանությունը:

Արդյունքում՝ ապստամբությունը ճնշվեց, մի քանի բոլշևիկ ղեկավարներ սպանվեցին կամ արտակարգ դատարանի վճիռներով մահապատժի ենթարկվեցին: Դրանց թվում էին Ստ. Ալավերդյանը, Բ. Ղարիբջանյանը, Ս. Մուսայելյանը, Ե. Սևանը, Ա. Մելքոնյանը, Ղ. Ղուկասյանը, Յ. Սարուխանյանը, Բ. Բատիկյանը և ուրիշներ, իսկ մոտ 250 մարդ բանտարկվեց:

Ապստամբության ճնշումից հետո արգելվեց բոլշևիկյան (կազմակերպությունների) գործունեությունը Դայաստանում: Դրանց ղեկավարների մի մասին հաջողվեց փախչել, ոմանք էլ անցան ընդիհատակ: Այդ ժամանակ էլ 1920 թ. հունիսին, ՌԿ(Բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի որոշումով և ՌԿ(Բ)Կ ԿԿ-ի կազմբյուրոյի հաստատումով Բաքվում կազմակերպչորեն ստեղծվեց Դայաստանի կոմունիստական կուսակցությունը (ՀԿԿ): Չնայած Մայիսյան ապստամբությունը ճնշվեց, սակայն, ինչ խոսք, որոշ չափով խարիսլեց դաշնակցական կառավարության դիրքերն ու, մասնավորապես, հայկական բանակի մարտունակությունը:

Մայիսյան ապստամբության պարտության հիմնական պատճառն այն էր, որ նա տեղում չուներ բավարար սոցիալական հենարան ու աջակցություն: Ապստամբության ղեկավարները հույսը դրել էին դրսի կարմիր բանակի օգնության վրա, սակայն Խորհրդային կառավարությունն այն ժամանակ (1920 թ. գարնանը) դեռևս օրակարգ չէր մտցուել Դայաստանի խորհրդայնացումը: Նա ավելի կարևորություն էր տալիս Լեհաստանի, Անտանտի դեմ պայքարին և Արևելքում մուսուլմանական պրոլետական հեղափոխության (համաշխարհային հեղափոխության) կարգախոսներով՝ քեմալական Թուրքիայի հետ մերձեցմանն ու գործակցությանը:

## 4. Արցախը և Զանգեզուրը 1918-1921 թթ.

«Հաղթում է ուժեղը և ոչ արդարը»

Գ. ՆԺԴԵՅ

### Ադրբեջանի հավակնությունները Արցախի և Սյունիքի նկատմամբ

1918 թ. մայիսի վերջերին անկախ հոչակված Անդրկովկասյան երեք նորակազմ հանրապետությունների համար ամենացավոտ խնդիրներից մեկը, անկասկած, տարածքային-սահմանային վեճերն էին: Առանձնապես սուր հակասություններ ծագեցին Հայաստանի և Ադրբեջանի միջև Արցախի և Սյունիքի (Զանգեզուրի) հարցերում: Ադրբեջանը հավակնություններ ուներ հայկական այդ և էլի ուրիշ տարածքների նկատմամբ, որոնց ազգաբնակչության ճնշող մեծամասնությունը կազմում էին հայերը: Արցախ-Սյունիքի ավելի քան 300 հազար հայությունը միանշանակ չճանաչեց Ադրբեջանի գերիշխանությունը և պայքարի ելավ իր ազգային տարածաքային իրավունքների պաշտպանության և մայր հայրենիքին միանալու համար: Իհարկե, թեժացող կոնֆլիկտի սկզբնական փուլում (1918 թ. երկրորդ կես) Հայաստանի Հանրապետությունը, որքան էլ ծանր վիճակում էր գտնվում, այդուհանդերձ, Արցախի և Սյունիքի հարցում հապաղեց վճռական գործողություններով դրանք Հայաստանի անբաժանելի մասը դարձնել: Այդ անվճռականությունից էլ փորձեց օգտվել հակառակորդ կողմը՝ Ադրբեջանը: Միաժամանակ, Արցախի և Սյունիքի հարցում Հայաստանի կառավարությունն առաջնորդվում էր արտաքին քաղաքականության այն ակնկալիքով, որ Փարիզի խաղաղության կոնֆերանսը արդարությամբ կլուծի նաև հայ-ադրբեջանական այդ կնճիռը, ուստի և ձեռնպահ էր մնում ուժային մեթոդներից: Մինչդեռ Ադրբեջանը ոչ միայն ձեռնպահ չէր, այլ ծրագրել էր ամեն գնով Ղաղաբաղը և Զանգեզուրը, հայաթափ ու հայացինց անելու միջոցով, գրավել ու ենթարկել իրեն:

### Անգլիացիների երկորիմի բաղաբանությունը

Արցախ-Սյունիքի խնդրի դրական լուծման գործում իր բացասական դերը խաղաց նաև Անդրկովկասում գտնվող անգլիական զորքերի հրամանատարության երկորիմի քաղաքականությունը: Ու. Թոմսոնը, Դ. Շատելվորդը և մյուսները ամեն կերպ ձգտում էին աջակցել հարուստ ու նավթառատ Ադրբեջանին, վերջի-

նիս իշխանությունը, թեկուզ ժամանակավորապես, Արցախի վրա տարածելու համար: Անգլիան Հայաստանի նկատմամբ իր անբարյացակամ վերաբերմունքը պատճառաբանում էր հայերի, իբր, անուղղելի ռուսասիրությամբ և այլ հանգամանքներով: Անգլիացիների միջամտությամբ էր, որ 1918 թ. նոյեմբերին կասեցվեց զորավար Անդրանիկի զորախմբի առաջխաղացունը դեպի Շուշի ու Արցախ: Նրանց գիտությամբ ու հովանավորությամբ էր, որ 1919 թ. հունվարի կեսերին Արցախ-Զանգեզուրի նահանգապետ է նշանակվում հայտնի հայատյաց, մասնագիտությամբ բժիշկ, իսկ կոչումով՝ դահիճ Խոսրով բեկ Սուլթանովը, սակայն վերջինիս այդպես էլ չի հաջողվում Լեռնային Արցախը Ենթարկել Ադրբեյչանին: Արցախցիները չճանաչեցին Սուլթանովի իշխանությունը: Անգլիացիների ջանքերն անցան ապարդյուն:

### **Տարածաշրջանի հայության դայլարը**

Ինչ վերաբերում է Զանգեզուրին, ապա այն, սկսած 1918 թ. երկրորդ կեսից, փաստորեն անկախ էր՝ շնորհիվ Անդրանիկի: Վերջինս, Բաթումի դաշնագրից որոշ ժամանակ անց, հանգամանքների բերումով իր կամավորական զորամասով ամրացել էր Զանգեզուրում: 1919 թ. գարնանամուտին, Անդրանիկի հեռանալուց հետո, տարածաշրջանի նահանգապետ է նշանակվում ՀՀ ներկայացուցիչ Արսեն Շահմազյանը, որին հետո փոխարինում է Ս. Մելիք-Յոլզյանը: Զանգեզուրի առանձնահատկություններից մեկն այն էր, որ ի տարբերություն Արցախի, ուր 90 տոկոսից ավելին հայեր էին, այստեղ բնակչությունը էթնիկապես ավելի խառն էր:

Երկրամասում կացությունն ավելի է ծանրանում, երբ 1919 թ. ամռանը Ադրբեյչանին հաջողվում է իր ուժերով և զգեստափոխսկած թուրք սպաների ու էմիսարների օժանդակությամբ ժամանակավորապես գրավել Շարուր-Նախիջևանը և, փաստորեն, օղակնան մեջ առնել Զանգեզուրը: Վերջինիս պաշտպանությունը ստանում է ռազմավարական նշանակություն, քանզի այն Հայաստանը և Արցախը կապող միակ օղակն էր: Ուստի, կորցնել Զանգեզուրը նշանակում էր կորցնել նաև Արցախը: Թուրք-բաթարական զորքերը բազմիցս փորձեցին զավթել Սյունիքը, սակայն ամեն անգամ հանդիպելով տեղացի քաջարի հայ բնակչության հակահարվածներին՝ մեծ կորուստներով նահանջեցին:

Արցախ-Սյունիք կոիվների այդ եռուն շրջանում՝ 1919 թ. օգոստոսին, ՀՀԴ Բյուրոյի որոշմամբ, Սյունիք է ուղարկվում փոխգնդապետ

Գարեգին Նժդեհը (Գարեգին Տեր-Հարությունյանը), որը շուրջ երկու տարի գլխավորում է Լեռնահայաստանի աննկուն ժողովրդի հերոսական ինքնապաշտպանական մարտերը:

1920 թ. ապրիլի վերջերին (28-ին), Ադրբեջանի խորհրդայնացումից հետո, ադրբեջանա-թուրքամետ քաղաքականություն է սկսում վարել բոլշևիկյան Ռուսաստանը: Առանց որևէ դիմադրության խորհրդային հայտարարելով Ադրբեջանը՝ մուսավաթականները հեռահար նպատակ ունեին Կարմիր բանակի օգնությամբ գրավել և Ադրբեջանին միացնել հայկական տարածքները՝ Արցախը, Զանգեզուրը, Շարուր-Նախիջևանը և այլն, դրանով իսկ «լուծել իրենց ազգային խնդիրները»: Եվ իրոք, չուշացավ այդ օգնությունը: Ադրբեջանի հեղկոմի և 11-րդ բանակի հրամանատարության մի քանի նոտա-վերջնագրերից հետո, փաստորեն, պատերազմ սկսվեց Հայաստանի դեմ (երբ L. Շանթի գլխավորած հայոց խաղաղարար պատվիրակությունը դեռ Սոսկվայից չեր վերադարձել): 1920 թ. հուլիսին Կարմիր բանակի գորամասերը, գույնը փոխած մուսավաթական խաժամուժի հետ միասին, անցան հարձակման Արցախը, Զանգեզուրն ու Նախիջևանը գրավելու և Թուրքիայի հետ անմիջական սահմանային կապ ստեղծելու նպատակով: Արցախը և Զանգեզուրը անհավասար պայքարի ելան պաշտպանելու իրենց անկախությունը թուրք-թաթար-բոլշևիկ գինակցության ոտնձգությունից: Արցախում փաստական իշխանությունը, սկսած 1918 թ. կեսերից, գտնվում էր տեղի հայ Ազգային խորհրդի ձեռքում: Վերջինս, 1918 թ. մայիսից մինչև 1920 թ. մայիսը, իր հրավիրած տասը համագումարներում և դրանից հետո էլ մինչև ՌԿ(Բ)Կ Կենտկոմի Կովկասյան Երկրային կոմիտեի բյուրոյի (Կովբյուրոյի) 1921 թ. հուլիսի 5-ի տիրահոչակ որոշումը, չի ընդունել և չի ճանաչել Ադրբեջանի իշխանությունը: Արցախցիների ազատագրական պայքարին թուրք-ադրբեջանական միացյալ գինյալ ուժերը պատասխանում են հայերի զանգվածային կոտորածներով: Օրինակ, 1920 թ. մարտի 23-ին մուսավաթական կառավարությունը կազմակերպում է Շուշիի հայության կոտորածը, որի հետևանքով զոհվում են հազարավոր հայեր: Շուշիի հայկական թաղամասը թալանվում ու հրկիզվում է:

## **Արցախի խորհրդայնացումը և բռնահանումը Ադրբեջանին**

Երբ ռուս խորհրդային զորքերը մտան Արցախ, հայկական գորամասը, Դրոյի հրամանատարությամբ, հետ քաշվեց Զանգեզուր: Արցախը ևս խորհրդայնացվեց: Առանձին վայ-

Դերում շարունակվեցին ապստամբական ելույթները:

Մեկ տարի անց, կուսակցական և խորհրդային մարմիններում ձգձգվող ու իրարամերժ վճիռներից հետո, ի վերջո, 1921 թ. հուլիսի 5-ին ՌԿ(Բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոն, ի. Ստալինի կոպիտ միջամտությամբ, ընդունեց ապօրինի որոշում՝ Լեռնային Ղարաբաղը (Արցախը), որպես ինքնավար մարզ, Աղրբեջանի կազմում թողնելու վերաբերյալ՝ պատճառաբանելով, որ այն տնտեսապես կապված է Աղրբեջանի հետ: Այս կամայական որոշումն իր ընդունման պահից ապօրինի էր այն պարզ պատճառով, որ իրավական տեսակետից կուսակցական մարմինը իրավասու չէր ննանօրինակ վարչատարածքային փոփոխություններ կատարել՝ առանց հաշվի առնելու մարզի բնակչության բացարձակ մեծամասնության ցանկությունը: Տարօրինակ է, որ նույն Կովկասյան բյուրոն նախորդ օրվա (հուլիսի 4-ի) իր նիստում, ձայների մեծամասնությամբ, ընդունել էր որոշում՝ հօգուտ Հայաստանի: Ինչևէ, վճիռը կայացվել էր, և խորհրդային Հայաստանի ղեկավարների ու հայ բնակչության բողոքները մնացին անհետևանք: Այդ չարաբաստիկ որոշումից հետո, 1923 թ. վարչականորեն կազմվեց Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը: Միտումնավոր անցկացվեց վարչատարածքային այնպիսի սահմանագիծ, որպեսզի մարզն անմիջական սահմանային շփում չունենա Հայաստանի հետ և, այդպիսով, լիովին կտրվի մայր հայրենիքից: Այս ամենը կամայականություն էր և արցախյահայության ազգային շահերի ուժնահարման կոպիտ դրսեւորում:

Արցախյան խնդրի նման անարդարացի լուծումն էլ եղավ այն թանձրանյութը, որն աստիճանաբար կուտակվելով՝ պոթեկաց 1988 թ. սկիզբ դնելով արցախյան համաժողովրդական շարժման:

### **Լեռնահայաստանի (Զանգեզուրի)**

**միացումը**

**Խորհրդային**

**Հայաստանին:**

**Գարեգին Նժդեհ**

Բոլորովին այլ ընթացք ստացան դեպքերն ու իրադարձությունները Զանգեզուրում: 1920 թ. ամռանը, Արցախի խորհրդայնացումից հետո, Զանգեզուրում հայ ժողովրդի հերոսական պայքարը թուրք-թաթար-բոլշևիկյան, ագրեսիայի դեմ, բացի Զանգեզուրի Հայոց ազգային խորհրդից, ինչպես արդեն ասվեց, գլխավորում էր տաղանդավոր զորավար, քաղաքական գործիչ և գաղափարախոս Գարեգին Նժդեհը: Նա նշանակվել էր Կապար-Գողթի (Կապան, Գենվազ և Գողթան) շրջանի ժողովրդական ուժերի հրամանատար: Հուլիսի

սկզբներին Կարմիր բանակը գրավում է Գորիսը, Սիսիանը, Կապանը և պատրաստվում շարժվել դեպի Գենվազ (Արևիկ) և Մեղրի (Գողթան) միանալու համար Օրդուբադ-Նախիջևանի թուրքական ուժերին, իսկ Դրոյի գլխավորած հայկական զորամասը, խուսափելով բոլշևիկների հետ հետագա առճակատումից, օգոստոսի սկզբներին Զանգեզուր-Սիսիանից նահանջում է Դարալագյազ: Միայն Գ. Նժեհը, մի քանի շաբաթ անհավասար մարտեր մղելով Կապանի համար, իր փոքրաթիվ ուժերով բարձրանում է Խուստուփ լեռը՝ շարունակելու համար հերոսական պայքարը օտար նվաճողների դեմ:

Դայ-բոլշևիկյան կոհիվներին վերջ տալու և ավելորդ բարդություններից խուսափելու նպատակով, 1920 թ. օգոստոսի 10-ին (ճիշտ Սևրի պայմանագրի ստորագրման օրը) Թիֆլիսում Դայաստանի և Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչների միջև կայացվեց ժամանակավոր համաձայնագիր, ըստ որի Դարաբաղը, Զանգեզուր և Նախիջևանը ժամանակավորապես պիտի մնային խորհրդային ուժերի ձեռքում, մինչև որ նպաստավոր պայմաններ կստեղծվեին այդ վիճելի տարածքների հարցը Դայաստանի և Աղրբեջանի միջև խաղաղ ճանապարհով լուծելու համար: Սակայն ՀՀ ղեկավարության կնքած այդ անպատվաբեր համաձայնագիրը չի ճանաչում Զանգեզուրի ժողովուրդը՝ իր սիրելի հրամանատար Նժեհի գլխավորությամբ: 1920 թ. սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին Գ. Նժեհը և նրա սիսիանցի քաջ զինակից, կապիտան Պողոս Տեր-Դավթյանը, ժողովրդի աջակցությամբ տանելով մի շարք փայլուն հաղթանակներ, լիովին ազատագրում են Կապանը, Սիսիանը և Գորիսը: 1920 թ. ղեկտեմբերի 25-ին Տաթևի համազանգեզուրյան համագումարում հոչակվում է Սյունիքի ինքնավարությունը, մինչև որ նպաստավոր պայմանները հնարավորություն կտային միանալու մայր Դայաստանին: Նժեհը կարգվում է ինքնավար Սյունիքի սպարապետ: 1921 թ. ապրիլի 27-ին Տաթևի վանքում գումարվում է համազանգեզուրյան երկրորդ համագումարը, ուր ինքնավար Սյունիքը հոչակվում է անկախ և կոչվում Լեռնահայաստան: Լեռնահայաստանի վարչապետ է ընտրվում սպարապետ Նժեհը: Այնուհետև սկսվում են բանակցություններ Զանգեզուրություն Խորհրդային Դայաստանին միավորելու վերաբերյալ: Եվ միայն այն բանից հետո, եթե կայուն երաշխիքներ են տրվում Զանգեզուրը Դայաստանին միավորելու համար, 1921 թ. հուլիսի կեսերին Նժեհը, իրեն բավարարված համարելով, փոքր զորախմբով անցնում է արտասահման (Իրան)՝ իր հետ տանելով անկախ Դայաստանի դրոշը:

Այդպիսով, Զանգեզուրը միացավ Հայաստանին և դարձավ նրա անկապտելի մասը: 1918-1921 թթ. Լեռնահայաստանի հերոսամարտի հաղթական փորձը լավագույն հաստատումն է այն գաղափարի, որ իոդը, ազատությունը և անկախությունը չեն ստանում, այլ նվաճում են: Եթե չիներ Գ. Նժեհի գլխավորած տևական ու համառ պայքարը, ապա, ամենայն հավանականությամբ, Զանգեզուրը ևս կարժանանար Նախիջևանի և Արցախի ճակատագրին:

## 5. 1920 թ. թուրք-հայկական պատերազմը: Հայաստանի Հանրապետության անկումը: Հայաստանի Խորհրդայնացումը

«Այն ազգը, որը չի դաւադանում իրեն և իր տարածքները թենամուց, դատաղարտված է մասական կորուսների ու, վերջին հաւաք, ոչնչացման»:

### Թուրք-բոլշևիկյան գործակցության հակահայկական ուղղվածությունը

Հայաստանի դեմ:

Ինչպես հայտնի է, 1918 թվականից քաղաքացիական պատերազմների մեջ ներքաշված խորհրդային Ռուսաստանը, փաստորեն, պայքարում էր Անտանտի պետությունների դեմ, որոնք օգնում ու օժանդակում էին խորհրդային իշխանության դեմ մարտնչող Կոլչակի, Դենիկինի, Յուդենիչի, Վրանգելիի և մյուս հակահեղափոխական, սպիտակգվարդիական համարվող կամավորական բանակներին:

Այդ նույն ժամանակ, Թուրքիայի միասնության և տարածքային ամբողջականության պահպանման համար բուրժուազդայնական շարժում սկսվեց Անտոլիայում (Թուրքիայի արևելյան նահանգներում) զորավար Մուստաֆա Քեմալի գլխավորությամբ, որը դարձյալ ուղղված էր Անտանտի երկրների դեմ, որովհետև վերջիններս Փարիզի խաղաղության խորհրդաժողովում խնդիր էին դրել պարտված Թուրքիան մասնատել առանձին փոքր պետությունների: Քեմալական կոչվող այդ շարժումն իր մյուս սուր ծայրով ուղղված էր նաև Թուրքիայի կազմում գտնվող ազգային փոքրամասնությունների, այդ թվում հայ

ժողովրդի ազատագրական նկրտումների դեմ: Այդ են հաստատում քեմալական շարժումն սկզբնավորող 1919 թ. հուլիսին Երզրումի և սեպտեմբերին Սվագի համաթուրքական կոնգրեսները, որոնց արդյունքում 1920 թ. հունվարին ընդունվեց «Ազգային ուխտ» կոչվող փաստաթուղթը: Այստեղ զարգացվում էր այն գաղափարը, որ անձեռնմխելի է Թուրքիայի տարածքային ամբողջականությունը, և որ ոչ մի տարածքային գիծում չի արվի հայերին:

Ինչպես տեսնում ենք, Անտանտի, այսպես կոչված, իմպերիալիստական երկրների դեմ պայքարում բոլշևիկյան Ռուսաստանի և քեմալական Թուրքիայի շահերը համընկնում էին: Իսկ Ռուսաստանի և Թուրքիայի միջև ընկած Անտանտի «փոքր դաշնակից» Հայաստանը, որը ձգտում էր Արևմուտքի օգնությամբ լուծել իր ազգային-տարածքային իիմնախնդիրները, որակվեց որպես «միջազգային իմպերիալիզմի գործակալ»:

Միաժամանակ, Խորհրդային Ռուսաստանը, առաջնորդվելով համաշխարհային հեղափոխության կոմինտերնական անիրական կարգախոսներով, հույս ուներ «հեղափոխության արտահանման» միջոցով Արևելքի մուսուլմանական երկրները սրբազն պատերազմի հանել ընդդեմ Անտանտի ու, վերջին հաշվով, հասնել համաշխարհային կոմունիզմի հաղթանակի: Այս խնդրի իրականացման գործում առանցքային դեր էր տրվում Թուրքիային, որն իրեն հայտարարել էր իմպերիալիզմի դեմ պայքարող ուժ և դարձել Ռուսաստանի «բնական դաշնակիցը»: Իսկ Ռուսաստան-Թուրքիա անմիջական կապի գլխավոր խոչընդոտը «հայկական սեպան» էր, որը պետք է վերացվեր ցանկացած միջոցներով: Ընդսմին, Խորհրդա-թուրքական դաշինքի միջնորդ շարժափոխը դարձավ Ադրբեյջանը:

Դեռ 1919 թ. նոյեմբերին Բաքվում մշակվել էր պլան, որով թուրքական զորքը պիտի անցներ Հայաստանի վրայով՝ Դենիկինին թիկունքից հարվածելու համար:

Խորհրդային կառավարությունը, Վ. Ի. Լենինի գլխավորությամբ, առաջինը ճանաչեց 1920 թ. ապրիլի վերջերին Անկարայում բացված Թուրքիայի Ազգային Մեծ ժողովի կառավարությունը՝ Մուստաֆա Քեմալ փաշայի գլխավորությամբ, և պատրաստակամություն հայտնեց բարեկամական, դիվանագիտական հարաբերություններ հաստատել Թուրքիայի հետ:

Երբ 1920 թ. գարնանը Կարմիր բանակը հաղթականորեն մուտք գործեց Հյուսիսային Կովկաս և Ադրբեյջան, Հայաստանի կառավա-

րությունը պատվիրակություն ուղարկեց Մոսկվա (Լ. Շանթի գլխավորությամբ՝ բանակցությունների միջոցով կարգավորելու Հայաստանի և Խորհրդային Ռուսաստանի փոխհարաբերությունները ու կնքելու բարեկամության դաշնագիր: 1920 թ. ամռանը Մոսկվայում ընթացող հայ-ռուսական բանակցությունները գործնական արդյունք չտվեցին: Դրա պատճառն այն էր, որ մի կողմից արդեն առկա էին թուրք-բոլշևիկյան մերձեցումն ու համագործակցությունը (այդ նույն օրերին Մոսկվայում զուգահեռաբար ընթանում էին Խորհրդա-թուրքական բանակցությունները), իսկ մյուս կողմից, որ հայկական պատվիրակությունը հետևողականություն հանդես չբերեց Արևմուտքից հրաժարվելու և Խորհրդային Ռուսաստանի հետ անկեղծ հարաբերությունները սերտացնելու ուղղությամբ:

Լ. Շանթի դիվանագիտական գործունեության մեջ նկատվում էր քաղաքական երկվություն. մի կողմից՝ ձգտում կար, իրոք, Ռուսաստանի հետ կնքել բարեկամության դաշնագիր, իսկ մյուս կողմից՝ հույսեր էր կապվում Արևմուտքի «դաշնակիցների» հետ, ինչը սնուցվում էր Միացյալ Հայաստանի սերյան գայթակղությունից: Մինչդեռ Ռուսաստանը Հայաստանից պահանջում էր կա՞մ... կա՞մ. այսինքն՝ կա՞մ Արևմուտք, կա՞մ Ռուսաստան: Նկատենք նաև, որ Արևմուտքի տերությունները անբավականությամբ ընդունեցին հայ-ռուսական բանակցությունները:

Արդարև, ՀՀ քաղաքական շրջանակները ճիշտ չգնահատեցին 1920 թ. կեսերին արդեն փոփոխված քաղաքական իրադրությունը և ուժերի հարաբերակցությունը: Իներցիայի ուժով դեռևս շարունակվում էր արևմտյան կողմնորոշումը, մինչդեռ արդեն տարածաշրջանում վճռական գործոններ էին դարձել Խորհրդային Ռուսաստանը և քեմալական Թուրքիան, որոնց հետ կարելի էր ճակատ առ ճակատ բանակցություններ վարել և Հայկական հարցի հնարավոր փոխզիջումային լուծում գտնել: Ակնհայտ էր դարձել, որ 1920 թ. Ռուսաստանը և Թուրքիան 1919 թվականի երկրները չեն և հաղթահարում էին ռազմաքաղաքական ու դիվանագիտական խոր ճգնաժամն ու մեկուսացումը:

Այս ամենը պետք է համարել Հայաստանի կառավարության քաղաքական, դիվանագիտական լուրջ սխալը, որն էլ ճակատագրական եղավ նրա անկախության և տարածքային խնդիրների վճռման հարցում: Երբ Հայաստանի իշխանությունները «խելքի եկան», արդեն ուշ էր:

1920 թ. Մոսկվայի հայ-ռուսական բանակցությունները, որևէ գործնական արդյունք չտալով, ընդհատվեցին Երևանում շարունակվելու նպատակով: Իսկ ռուս-թուրքական Մոսկվայի բանակցությունները տվեցին իրենց արդյունքները: Դրանցից մեկն այն էր, որ օգոստոսի 24-ին մշակվեց խորհրդա-թուրքական բարեկամության գաղտնի դաշնագրի նախագիծ, որն իր սուր ծայրով ուղղված էր Հայաստանի և հայ ժողովրդի կենսական շահերի դեմ: Ռուս-թուրքական չկայացած պայմանագրին հակակշիռ, օգոստոսի 24-ին նախաստորագրված ռուս-թուրքական «սրտագին և անկեղծ բարեկամության» պայմանագրի նախագիծը, ճանաչելով թուրքական «Ազգային ուխտը», գործնականում կանխորոշում էր Արևմտյան Հայաստանի և Կարսի մարզի անցումը Թուրքիային: Թուրք-բոլշևիկ դաշինքը նպատակ ուներ հակագդել և ի չիք դարձնել Սկրի պայմանագիրը: Թուրքիային դաշնակից բոլշևիկները ցանաքով և ժովով Բաքու-Նախիջևան և Նովոռոսիյսկ-Տրապիզոն գծերով անընդհատ մատակարարում էին զենք, ռազմամթերք, դրամ, ցույց տալիս ռազմադիվանագիտական աջակցություն: 1920 թ. Ռուսաստանը Թուրքիա ուղարկեց 200 կգ ռուկի (ծովածո): Այդ օգնությունը ավելի մեծ չափերով շարունակվեց նաև 1921 թ.: Ռուսաստան ստացավ ֆինանսական և ռազմական (անհատույց) օգնություն՝ 10 մլն ռուբլի ռուկով և այլն: Սակայն միամտություն կլինի կարծել, թե քեմալականները Ռուսաստանի անկեղծ բարեկամներն էին: Այդ «բարեկամությունը» ժամանակավոր էր ու արհեստական կեղծ ու շինծու, որն ասպարեզ էր նետվել որոշակի քաղաքական և դիվանագիտական շահերով: Այն, որ քեմալականները «հեղափոխություն» ու «կոմինիզմ» էին խաղում, երևաց շատ շուտով: 1921 թ. հունվարին, Լառավարության որոշմամբ, արգելվեց Թուրքիայի նորաստեղծ կոնունյատական կուսակցությունը (ԹԿԿ), իսկ նրա ղեկավար Մուստաֆա Սուլթանին դաժանորեն սպանվեց:

Բոլշևիկ-քեմալական գործակցության ուժեղացման տեսակետից մեծ դեր խաղաց III Կոմինտերնի կազմակերպած Արևելքի ժողովուրդների առաջին համագումարը Բաքվում (1-8-ը սեպտեմբերի 1920 թ.): Լոմինտերնը առաջնորդներ Վ. Լենինը, Լ. Տրոցկին, Գ. Զինովևը և մյուսները մնան հույսեր էին կապում Արևելքի ժողովուրդներին համաշխարհային սին հեղափոխության մեջ ներքաշելու հետ: Յույսեր էին փայփայում, համաշխարհային հեղափոխության կարգախոսով, Անգլիայի արևելյան գաղութներում (Ասիա-Աֆրիկայում) մուսուլմանական ապստամբություններ բարձրացնել ընդդեմ Անգլիայի և Անտանտի

մյուս երկրների: Այդ պայքարում հեղափոխական շարժման միջնաբերդի դերը, իբր, պետք է ստանձներ Թուրքիան: Եվ պատահական չէր, որ այդ խառնաժողովում ամենապատվավոր տեղերում նստած էին Հայոց Մեծ եղեռնի մի քանի կազմակերպիչներ, այդ թվում՝ հայ ժողովորդի դահիճ Էնվեր փաշան: Համագումարում քննարկվեց պատերազմի հարցը՝ «միջազգային իմպերիալիզմի գործակալ», «համաշխարհային հեղափոխության խոչընդոտ» դաշնակցական Հայաստանի դեմ, և ազդարարվեց կանաչ լույս՝ թուրքական հարιծակման համար: Արդեն սեպտեմբերի 17-ին նույն Բաքվում կազմվեց Հայաստանի վրա հարձակման ու խորհրդայնացման ծրագիրը, որում հիմնական դերը խաղալու էր քեմալական Թուրքիան: Թուրքական հարձակման պայմաններում ռուսական կարմիր բանակը իբրև «ազատարար», մտնելու էր Հայաստան և հայ ժողովորդին Ֆիզիկական բնաջնջումից «փրկելու» պատրվակով խորհրդայնացնելու էր թուրքական բռնազավթումից զերծ հատվածը: Եվ չանցած մի քանի օր՝ Թուրքիան սկսեց ռազմական գործողությունները Հայաստանի դեմ:

### **Թուրք-հայկական դատերազմը**

Թուրքիան պատրաստվում էր գենքի ուժով վերացնել «հայկական սեպը»: Պատրվակ բռնելով 1920 թ. հունիսին Օլթիի ածխահանքերի գրավումը հայկական գորքերի կողմից, սեպտեմբերի 23-ին, առանց պատերազմ հայտարելու, թուրքական 30-հազարանոց բանակը (որոշ տվյալներով՝ 18 հազար) անցավ ընդհանուր հարձակման: Վճռական գործողությունները սկսվեցին սեպտեմբերի 28-ից, երբ հաջորդ երկու օրերին՝ 29-30-ին ոսոխը գոավեց Սարիղամիշն ու Մերդենեկը: Հայկական 40-հազարանոց բանակը չկարողացավ լուրջ դիւադրություն ցույց տալ: Դրա պատճառը ոչ միայն հակառակորդի հզորությունն էր, այլև հայկական բանակի անկազմակերպվածությունը, անվճռականությունը, բարոյալքությունը և դասալքությունը: Հայոց շանակի մարտունակության անկման գործում որոշակի ոեր խաղաց նաև բոլշևիկների կազմալուծիչ, քայլայիչ գործունեությունը՝ քեմալական «ընկերներին» օգնելու նպատակով: Այստեղ էր, որ երևացին մայիսյան խոռվության հետևանքները: Իհարկե, չի կարելի հայկական բանակում եղած բոլոր դասալքությունները և կազմալուծիչ գործողությունները վերագրել բոլշևիկներին, քանզի նախորդ տարիներին էլ այդ արատը եղել է սովորական երևույթ, և այդ խնդրին բացմիցս են անդրադարձել խորհրդարանը ու կառավարությունը:

Չնայած հանրապետությունում մտցվեց ռազմական դրություն, դասալքության համար սահմանվեց մահապատիժ, հայտարարվեց 20-35 տարեկան տղամարդկանց զորահավաք, արտակարգ լիազորություններով ռազմաճակատ ու գավառներ մեկնեցին շատ նախարարներ, խորհրդարանի պատգամավորներ, սակայն դրությունը փրկել չհաջողվեց:

Եական արդյունք չտվեցին նաև դիվանագիտական քայլերը: Հայաստանը միակ շոշափելի օգնությունը ստացավ, թերևս, Անգլիայից մեկ միլիոն ֆունտ ստերլինգ (ոսկով) գումարի չափով գենք, զինամթերք ու հանդերձանք: Հայաստանին չկարողացավ օգնել նաև Հունաստանը, որը պետք է ռազմական գործողություններ վարեր Փոքր Ասիայում արևմուտքից և դրանով թուլացներ լարվածությունը հայթուրքական ճակատում: Ինչ վերաբերում էր Վրաստանին, ապա նա պահպանեց չեզոքություն:

Հայ ժողովրդի համար ճակատագրական այդ օրերին խորհրդային Ռուսաստանի համակրանքը իր դաշնակից թուրքիայի կողմն էր: Ավելին, հայկական զինված ուժերի մի մասը ստիպված էր գամված մնալ Ղազախի, Բասարգեչարի, Դարալագյազի և Շարուրի շրջաններում՝ պաշտպանելու սահմանները բոլշևիկների հաճախացող հարձակումներից: Փաստորեն, Հայաստանի Հանրապետությունը ստիպված էր պատերազմել երկու ճակատով՝ թե՛ թուրքերի, թե՛ Կարմիր բանակի դեմ:

1920 թ. հոկտեմբերի 30-ին, առանց լուրջ դիմադրության, ընկավ քաղաք-ամրոց Կարսը, ուր և սրի քաշվեցին մոտ 6000 հայեր, և գերի ընկան մոտ 3000 զինվոր: Կարսի անկումը, փաստորեն, կանխորոշեց պատերազմի ելքը: Շուտով, նոյեմբերի սկզբներին, հանձնվեց նաև Ալեքսանդրապոլը: Հանրահայտ փաստ է, որ Ալեքսանդրապոլին մոտեցող թուրքական «ազատարար» զորքերին կարմիր դրոշներով և հեղափոխական լոգունգներով է դիմավորել տեղի բոլշևիկյան կոմիտեն: «Զկրակե՞ս, հայ աշխատավոր զինվոր,- կարդում ենք նրա կոչերից մեկում, - եղբայրական թուրք բանակի վրա: Նա քեզ բերում է ոչ թե ստրկություն, այլ ազատություն: Նա գալիս է օգնելու քեզ քո սրբազն պայքարի մեջ»:

Նման դիրքորոշման դավաճանական և հակաազգային բնույթն այնքան ակնհայտ էր, որ այն բացահայտվեց ու դատապարտվեց իենց բոլշևիկյան կուսակցության դեկավար մարմինների ու ներկայացուցիչների կողմից: Այսպես, 1920 թ. դեկտեմբերի 6-ին, Հայաստա-

նի հեղկոմի նախագահ Կասյանը և խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչ Լեգրանը Մդիվանուն ուղղված հեռագրով պահանջում են. «Կուսակցական կարգապահության ուժով գգուշացրեք Ալեքսանդրապոլի հեղկոմին...: Բացատրեք նրանց այն խայտառակ դերը, որ կատարում են թուրքական իրանատարության ցուցումներով»: Մեկ օր անց, մի այլ հեռագրում, Լեգրանը նշում է. «Ներկա դեպքում Ալեքսանդրապոլի հեղկոմը, անկասկած, զրկված է լիիրավ իշխանությունից, ուստի և հարմար ծածկոց է դառել, որի հետևում թուրքերը կատարում են իրենց գործը»:

Ի վերջո, երբ Կարաբեքիրի գլխավորությամբ Ալեքսանդրապոլ ներխուժած թուրքական իրոսակախմբերը ցույց տվեցին իրենց գայլային դեմքը և սկսեցին գիշերները գնդակահարել «դաշնակցականների լծից ազատագրված» իրենց «սիրելի» խորհրդային իշխանության ներկայացուցիչներին, Դայաստանի ռազմահեղափոխական կոմիտեն 1921 թ. հունվարի 25-ի նիստում, քննարկելով Ալեքսանդրապոլից ժամանած հանձնաժողովի գեկուցումը, որոշում է ընդունում Ալեքսանդրապոլի հեղկոմի լուծարման մասին:

Այսպիսի անփառունակ վախճան ունեցավ «հեղափոխական թուրքերին» ապավինած Ալեքսանդրապոլի հեղկոմի գործունեությունը, որը մեր ժողովրդից խլեց մարդկային կյանքեր և նյութական ու բարոյական արժեքներ:

## **Զաղաբական ճգնաժամի հասունացումը**

Կարսի և Ալեքսանդրապոլի անկումից հետո զանգվածային բնույթ կրեց ռազմաճակատի կազմալուծումը: Դայաստանի պարտությունը դարձավ ակնհայտ իրողություն: Դայ ժողովրդի գլխին կրկին կախվեց մահացու վտանգ: Առաջացած քաղաքական ճգնաժամի պայմաններում, 1920 թ. նոյեմբերի 23-ին իրաժարական տվեց Յ. Օհանջանյանի բյուրո-կառավարությունը, և կազմվեց Ս. Վրացյանի ծախ կողակիցին կառավարությունը, որն էլ անմիջապես սկսեց հաշտության բանակցությունները թուրքերի հետ: Ալեքսանդրապոլում նստած թուրքական զորքերի իրամանատար Քյազին Կարաբեքիր փաշան Ալ. Խատիսյանի գլխավորած հայկական պատվիրակությանը թելադրեց հաշտության պայմանները, իսկ նոյեմբերի 30-ին Դայաստանին ներկայացրեց վերջնագիր:

1920 թ. հուլիսից Մոսկվայում ընդհատված խորհրդա-հայկական բանակցությունները վերսկսվեցին Երևանում միայն հոկտեմբերի կե-

սից (14-ից), այսինքն այն ժամանակ, երբ արդեն սկսվել էր թուրք-հայկական պատերազմը, և հայ ժողովրդի գլխին կախվել էր մահացու վտանգ: Այս անգամ էլ ՌԽՖՍՀ լիազոր ներկայացուցիչ Բ. Լեգրանի և Հայաստանի կառավարության միջև բանակցությունները, ըստ էության, օգտակար ոչինչ չտվեցին: Բ. Լեգրանի միջնորդական երկումի դիվանագիտական խաղերը, ժամանակ շահելու նպատակով, գործնականում դիվանագիտական հող նախապատրաստեցին Հայաստանը կանգնեցնելու խորհրդայնացման անխուսափելի փաստի առջև:

Մինչ հայոց հողի վրա կատարվում էին օրիհասական այդ իրադարձությունները, նոյեմբերի 4-ին «կարմիր» Բաքվում, Ի. Ստալինի գլխավորությամբ, վճռվում էր Հայաստանի ճակատագիրը: ՈԿ(Բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոն, քննելով Հայաստանում ստեղծված կացությունը, որոշում է խորհրդայնացնել Հայաստանը: Խորհրդային կառավարությունը, օգտագործելով հայ ժողովրդի գլխին կախված, թուրքական մահաբեր սպառնալիքը, իր ներկայացուցիչ Բ. Լեգրանի միջոցով վերջնագրի ձևով, պահանջեց Հայաստանի խորհրդայնացում: Մինչ այդ արդյուն 11-րդ Կարմիր բանակի զորամասերին իրահանգված էր մտնել Հայաստան և խորհրդայնացնել այն: Նոյեմբերի վերջերին Բաքվից ժամանած մի խումբ հայ բոլշևիկներ ու կարմիրբանակայիններ, Հայաստանի հեղկոմի նախագահ Սարգս Կայանի գլխավորությամբ, նոյեմբերի 29-ին Ղազախով մտնում են Իջևան և հայտարարում Հայաստանի խորհրդայնացման մասին: Դեկտեմբերի 4-ին Երևան է հասնում Կարմիր բանակի զորամասը, իսկ դեկտեմբերի 6-ին Հայինկումը:

**Ալեքսանդրադոլի հաւտության դայմանագիրը** 1920 թ. դեկտեմբերի 2-ին Հայաստանի՝ հոգեվարք ապրող կառավարությունը, հանձին ԱԼ. Խատիսյանի, հաշվի առնելով արևելահայության գլխին կախված իսպառ բնաջնջման սպառնալիքը, հարկադրված ընդունեց թուրքական դաժան վերջնագրի պայմանները և ստորագրեց Ալեքսանդրապոլի (Գյումրիի) հաշտության պայմանագիրը: Այս խայտառակ փայտաթղուվ Հայաստանը իրաժարվում էր Սկրի դաշնագրից: Փաստորեն, Թուրքիային էին անցնում Կարսի մարզը և Սուրմալուի գավառը: Նախիջևանի մարզը ևս ժամանակավորապես անցնում էր Թուրքիայի հովանավորության տակ, որպեսզի մի քանի ամիս անց (Մոսկվայի պայմսնագրով) հանձն-

վեր Աղբբեջանին: Հայաստանին թույլատրվում էր ունենալ միայն խիստ սահմանափակ քանակությամբ զինված ուժեր (1500 զինվոր, 8 հրանոթ և 20 գնդացիր) և այլն: Սակայն այս պայմանագիրը իր ստորագրման պահից իսկ չուներ իրավական (օրինական) ուժ, որովհետև մինչ այդ արդեն ՀՀ կառավարությունը կամավոր իրաժարական էր տվել և իշխանությունն անցել էր բոլշևիկներին: Այդ թալանչիական պայմանագիրն իր շատ հոդվածներով նման էր Բաթումի դաշնագրին:

### **Երևանի համաձայնագիրը**

Նույն օրը, դեկտեմբերի 2-ին, Ալեքսանդրապոլի պայմանագրի ստորագրումից մի քանի ժամ առաջ, Երևանում համաձայնագիր ստորագրվեց Հայաստանի կառավարության ներկայացուցիչ Դրոյի և Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչ Լեգրանի միջև, որով Հայաստանը հայտարարվում էր խորհրդային սոցիալիստական, և խաղաղ ճանապարհով բովանդակ իշխանությունն անցնում էր Հայաստանի հեղկոմի ձեռքը: Այդ նշանակում է, որ Հայաստանի խորհրդայնացումը կատարվել է դեկտեմբերի 2-ին և ոչ թե նոյեմբերի 29-ին: Ութ կետից բաղկացած այդ համաձայնագրով, Խորհրդային Հայաստանը, իբր, պետք է պահպաներ իր անկախությունը, իշխանությունը պետք է լիներ կոալիցիոն (5 բոլշևիկ և 2 ձախ դաշնակցական), չեն թույլատրվում հալածանքներ ու հետապնդումներ նախկին իշխանությունների ներկայացուցիչների ու սպաների հանդեպ և այլն: Սակայն իրականում բոլշևիկները չհարգեցին այդ համաձայնագրի և ոչ մի կետը: Հայաստանի խորհրդայնացումը կատարվեց թուրքական մահաբեր ներխուժման սպառնալիքի միջոցով:

Այսպիսով, խորհրդա-թուրքական կոմբինացված ու ներդաշնակված արտաքին ռազմադիվանագիտական հարվածների տակ վլուգվեց Հայաստանի Հանրապետությունը, թեև այդ գործում որոշակի դեր րւեցան նաև նեղին աննպաստ գործոնները և Հայաստանի կառավարության թույլ տված վրիպումները, ծվատվեցին նրա տարածքները հարևան երկրների ու հանրապետությունների միջև: Հայաստանը պարկավեց ընդամենը 30 հազ. քառ. կմ տարածքում, այն էլ մասամբ սպարապետ Գ. Նժեհի հերոսական ջանքերի շնորհիվ: Այսպես առաջացավ խորհրդային Հայաստանը:

Խոսելով Հայաստանի խորհրդայնացման մասին՝ պետք է հատուկ ընդգծել այն հանգամանքը, որ Կարմիր բանակի մուտքը և Հայաստանի խորհրդայնացումը կատարվել է խաղաղ ճանապարհով, առանց որևէ դիմադրության ու կրակոցի: Հայ ժողովուրդն ինքնապաշտպանական բնագդով ընդունեց բոլշևիկներին ու խորհրդային կարգերը: Եվ դա ոչ այն բանի համար, որ նա ծանոթ էր խորհրդային վարչակարգի էռլեյանը կամ ամբողջությամբ կիսում էր բոլշևիկյան գաղափարախոսությունն ու քաղաքականությունը, այլ սոսկ ելնելով այն իրողությունից, որ դրանք ծագել էին Ռուսաստանում, և կարևոր այն էր, որ ռուսներ էին մուտք գործում Հայաստան: Արևելահայությունը, իր ճնշող մեծամասնությամբ, բոլշևիկ անվան տակ պարզապես հասկանում էր Ռուսաստան և ռուս ժողովուրդ: Պետք է պատկերացնել կյանքի և մահվան երկընտրանքի առջև կանգնած ժողովորդի սոցիալ-հոգեբանական վիճակը: Այդ իսկ պատճառով էլ 1920 թ. բոլշևիզմի թափանցումը Հայաստան ժողովորդի կողմից ոչ մի եական արգելքի չհանդիպեց, քանզի բոլշևիկյան Ռուսաստան և քեմալական Թուրքիա ընտրության հարցում ժողովուրդը անվարան, իր ներքին բնագդով, կողմնորոշվեց դեպի Ռուսաստանը: Այլ հարց է, թե Հայաստանի խորհրդայնացումից հետո ինչպես ընդունվեց բոլշևիզմի քաղաքականությունը, եթե ժողովուրդը պետք է զգար ու ճանաչեր դրա բուն էռլեյունը:

Գլուխ տասնիններորդ

## ԽՈՌՉՈՎԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ (1920-1939 թթ.)

### 1. 1921 թ. փեղրվարյան ապստամբությունը Հայաստանում

**Ապստամբության տաճառները** 1920 թ. դեկտեմբերի 2-ի Երևանի համաձայնագրի հիման վրա, Հայաստանի խաղաղ խորհրդայնացումից հետո, իշխանության գլուխ անցավ Հայաստանի ռազմահեղափոխական կոմիտեն (ՀՈՇԿ)՝ Սարգիս Կասյանի նախագահությամբ: Դեկտեմբերի 7-ին կազմվեց Հայաստանի կառավարություն (Ժողովրդական կոմիսարիատ): Իրականում Հայաստանի կառավարությունը նույն ինքը՝ Հայաստանի հեղկոմն էր, որն ուներ ոչ միայն գործադիր, այլև՝ օրենսդիր մարմնի իրավասություններ: Տեղերում ևս հիմնվեցին հեղկոմներ: Հայի հեղկոմ-կառավարության կազմը ներկայացնում էր հետևյալ պատկերը.

Գյուղատնտեսության ժողկոմ՝ հեղկոմի նախագահ Ս. Կասյան  
Ներքին գործերի և արտաքին առևտության ժողկոմ՝ Ի. Ղովլաթյան  
Արտաքին գործերի և պարենավորման ժողկոմ՝ Ա. Բեկզադյան  
Ռազմական գործերի ժողկոմ՝ Ա. Նուրիջանյան  
Աշխատանքի և սոցիալական ապահովության ժողկոմ՝ Յ. Կոստանյան  
Արդարադատության ժողկոմ՝ Ս. Բաղդատյան  
Շանրային կրթության ժողկոմ՝ Ա. Շովիաննիսյան  
Ֆինանսների ժամանակավոր ժողկոմ՝ Ա. Երգնկյան  
ճանապարհային հաղորդակցության և փոստ-հեռագրի ժողկոմ՝  
Ռ. Ոսկանյան:

Այդպիսով, կազմվեց կառավարություն, որի մեջ չէր ընդգրկված և ոչ մի ձախ դաշնակցական: Դեկտեմբերի սկզբներին Հայաստանի հեղկոմը, որպես կառավարություն հաստատվելով Երևանում և իր տեղական մասնաճյուղերը տարածելով հանրապետության բոլոր շրջաններում ու գյուղերում, կարծ ժամանակամիջոցում ուժնահարեց դեկտեմբերի 2-ի համաձայնագրի գրեթե բոլոր պայմանները. սկսեց անխնա հալածանքները, հետապնդումներն ու բռնությունները ոչ հեղափոխական որակվող ազգաբնակչության հանդեպ: Փակվեցին նախկին բոլոր թերթերը, սահմանափակվեցին մարդկանց ազատությունները:

Նոր իշխանության հասողատումով Հայաստանում ևս վերացվեցին նախկին իշխանության պետականական և կառավարչական կառույցները (կառավարությունը, խորհրդարանը, դատարանները, դիվանագիտական ներկայացուցչությունները, նահանգապետությունները, քաղաքային և տեղական ինքնակառավարման մարմինները, գավառային կոմիսարների համակարգը և այլն), և դրանց փոխարեն ստեղծվեցին նորերը՝ պրոլետարիատի դիկտատուրայի և խորհրդային համակարգի ոգուն ու էռթյանը համապատասխան իշխանության մարմիններ:

Ուստատանի օրինակով դեկտեմբերի 6-ին հակահեղափոխության, շահամոլության և սաբոտաժի դեմ պայքարելու նպատակով Հայաստանում ևս ստեղծվեց Արտակարգ հանձնաժողով, այսիպես կոչված «Զեկա»: Քանի որ Հայաստանը խորհրդայնացվել էր անարյուն, ուստի, մի շարք բոլշևիկ ծայրահեղականների կարծիքով (Ա. Նուրիջանյան, Ի. Ղովլաթյան, Յ. Կոստանյան, Գ. Ալիխանյան, Գ. Աթարբեկյան և ուրիշներ), բանվորների և գյուղացիների դասակարգային գիտակցությունը բարձրացնելու համար, հարկավոր էր արյուն թափել: Հայաստանում սկսվեցին խուզարկությունները, հալածանքները, ձերբակալությունները և կարմիր տեռորը: Անհանդուրժողականություն ցուցաբերվեց այլախոհության հանդեպ: Փաստորեն, օրենքից դուրս հայտարարվեցին Յ.Յ. Դաշնակցությունը և մյուս ազգային կուսակցությունները, Հայկական նախկին բանակը լուծարվեց և նույն սպաներ ու զորավարներ, թերև հազնված, խստաշունչ ծմեռվա պայմաններում, դուրս քշվեցին Հայաստանից և աքսորվեցին Ուստատանի խորքերը Ոյազան և այլուր: Նախկին հայ սպաների և հայդուկների որոշ մասը նետվեց Երևանի բանտը և փետրվարի կեսերին խոշտանգվեց ու կացնահարվեց չեկիստների կողմից: Դրանց մեջ էին

Դամագասպ Մրվանձտյանը, Խմբապետ Մակեդոնը, Արտուշ Խանը, գնդապետ Նիկոլայ Ղորղանյանը և ուրիշներ: Բանտարկվեցին ՀՀԴ և մյուս ոչ պրոլետարական կուսակցությունների աշքի ընկնող քաղաքական գործիչներ՝ Յ. Օհանջանյանը, Յ. Քաջազնունին, Ռ. Դարբինյանը, Ավ. Սահակյանը, Ն. Աղբայանը, Լ. Շանթը, Բ. Իշխանյանը և շատ ուրիշներ: Բանտերն ու «Չեկայի» մեկուսարանները ծայրեծայր լցված էին բանտարկյալներով:

Միայն Երևանի կենտրոնական բանտում նրանց թիվը, նախատեսված 300-ի փոխարեն, հասնում էր 900-ի:

Նորաստեղծ խորհրդային իշխանության բռնաճնշումների քաղաքականությունն արտահայտվեց նաև տնտեսության ոլորտում: Դայաստանի խորհրդայնացման առաջին իսկ օրից, Ռուսաստանի ննանակությամբ, այստեղ էլ մտցվեց «ռազմական կոմունիզմի» քաղաքականությունը, որի հետևանքով զանգվածաբար բռնագրավվեցին առանց այդ էլ աղքատ ու կիսաքաղց հայ գյուղացու, արհեստավորի և մյուս աշխատավորական շերտերի գոյության վերջին կենսամիջոցները: Դարկերի հավաքման այդ կարգը կոչվեց պարենմասնատրում՝ դարձյալ Ռուսաստանի օրինակով: Բռնագրավումներն ուղեկցվում էին ռազմահեղափոխական ժամանակաշրջանին բնորոշ խուզարկություններով, ձերբակալություններով, ընդհուպ՝ մինչև գնդակահղություն:

Արգելվեցին ազատ առևտուրը, ապրանքադրամական հարաբերությունները, պետականացվեցին բոլոր տիպի ձեռնարկությունները, սահմանվեցին շատ ապրանքների ու մթերքների պետական մենաշնորհ, արտադրության և բաշխման բնագավառներում հավասարական (կոմունիստական) սկզբունքներ, մտցվեցին պարտադիր աշխատանքային պարհակ (հարկադիր աշխատանք) և այլն:

Դարկ է նշել, որ ռազմակոմունիստական քաղաքականությունը պայմանավորված էր ոչ միայն և ոչ այնքան երկրում պարենայիննյութական ռեսուրսների պակասով (բանակին ու քաղաքային բնակչությանը կերակրելու համար), այլ հիմնականում այն բանով, որ դա պարզապես տնտեսական քաղաքականության ուղեգիծ էր՝ մեկ հարվածով խորտակել կապիտալիստական-շահագործողական տնտեսակարգը և «կարմիրգվարդիական գորիի» միջոցով երկրում շուտափույթ հաստատել սոցիալիզմ ու կոմունիզմ:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, խորհրդային իշխանության բռնությունների ու հալածանքների քաղաքականությունը գործադրվել է հասարակական-տնտեսական կյանքի գորեք բոլոր ոլորտնե-

րում: Այդ ամենը առաջ բերեց ժողովրդական զանգվածների խոր դժգոհություն ու հիասթափություն խորհրդային իշխանությունից:

**Երևանի պատագումը** խորհրդային իշխանության երկամսյա տիրապետությունը բավական եղավ բոլշևիկյան վարչակարգը ճանաչելու համար: 1921 թ. փետրվարի կեսերին ժողովրդի համբերության բաժակը լցվեց, և կուտակված համընդհանուր դժգոհությունը վերածեց համաժողովրդական տարերային ապստամբության: Ապստամբության շարժիչ ուժը Արարատյան դաշտի բնակչությունն էր:

Փետրվարի 18-ին ժողովրդի գինված պայքարի շնորհիվ տապալվեց խորհրդային իշխանությունը Հայաստանի մեծագույն մասում: Ազատագրվեց Երևանը: Հայաստանի հեղկոմի անդամները և նրանց մի խումբ հավատարիմներ երկու զրահագնացքով Երևանից հեռացան դեպի Ղամարլու (Արտաշատ), Շարուր-Նախիջևան՝ այնտեղից օգնություն ստանալու նպատակով: Երևանում իշխանության գլուխ անցավ նորաստեղծ «Հայրենիքի փրկության կոմիտեն»՝ ՀՀ վերջին վարչապետ Սիմոն Վրացյանի գլխավորությամբ: Կազմվեց նոր կառավարություն, կարգի բերվեցին գինված ուժերը, Հայաստանի արտաքին և ներքին դրության կայունացման քայլեր ձեռնարկվեցին:

Սակայն ապստամբած ժողովրդի իշխանությանը վիճակված չէր երկար գոյատել: Հայաստանի դեմ մի քանի ուղղությամբ ռազմաճակատներ բացվեցին: Կրկին Մոսկվայի միջամտությամբ Կարմիր բանակի լրացուցիչ ուժեր կենտրոնացվեցին Հայաստանի սահմանների ուղղությամբ:

Նշենք, որ Հայաստանի հյուսիսարևելյան մի շարք շրջաններում (Սպիտակ, Ղարաքիլիսա, Դիլիջան, Շամշադին) պահպանվեց խորհրդային վարչակարգը, իսկ Ալեքսանդրապոլի գավառը դեռևս գտնվում էր բուրքների ժամանակավոր օկուպացիայի տակ:

Ապստամբների վիճակը հատկապես անհուսալի դարձավ, երբ 1921 թ. փետրվարի 25-ին խորհրդայնացվեց նաև Վրաստանը: Ի դեպ, Վրաստանի խորհրդայնացման նախապատրաստական փուլում Լոռու գավառը (նախկին «չեզոք գոտին») միացվեց Հայաստանին:

**Ապստամբության դարտությունը և դասերը**

1921 թ. փետրվար-մարտ ամիսների ընթացքում մի շարք ուղղություններով տեղի ունեցան համառ մարտեր: Այդ օրերին, քաղաքացիական, եղ-

բայրասպան կոնֆլիկտը կանխելու նպատակով, Թիֆլիսից Երևան ժամանեց ու միջնորդական ջանքեր գործադրեց Ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանը: Ինքնապաշտպանական կոհվներում առանձնապես աչքի ընկան Կուռոն (Սուրեն Թարխանյան), խնբապետ Սմբատը, Կ. Սասունին, Գառնեցի Մարտիրոսը, Խնկոն, Մուշեղը, Յապոնը (Հովհաննես Պարոնյան) և շատ ուրիշներ: Մարտի 25-ին սկսվեց կարմիր զորամասերի վճռական հարձակումը Երևանի վրա: Համառ մարտերից հետո, ի վերջո, ապստամբ ժողովորդի գինված ջոկատները տեղի տվեցին Կարմիր բանակի զորամասերի գերակշիռ ճնշմանը: Ապրիլի 2-ին ընկավ Երևանը, և գործնականում ճնշվեց ապստամբությունը: Հատկանշական է, որ ապստամբությունը ճնշելու գործում, բացի 11-րդ Կարմիր բանակի զորամասերից, մասնակցություն ունեցան նաև Նախիջևանի մուսուլմանական «Կարմիր տաբոր» կոչվող պարտիզանական և Բաքվից ժամանած բանվորական ջոկատները:

Երևանի անկումից հետո տասը հազարից ավելի հայեր, չտանելով բոլշևիկյան վարչակարգի բռնությունները, արտագաղթեցին երկրից: Հայաստանում վերահաստատվեց խորհրդային վարչակարգը: Բոլշևիկների ու կարմիրբանակայինների գործադրած բռնություններին ու դաժանություններին համապատասխան, առանձին դեպքերում ծայրահեղ քայլերի դիմեցին նաև ապստամբները, ինչը նույնպես չի կարելի արդարացնել: Նույն կերպ, բարոյական և քաղաքական առումներով, նվաստացուցիչ էր բոլշևիկների դեմ մղվող պայքարում քեմալական Թուրքիայից «օգնություն» հայցելու Ս. Վրացյանի «դիվանագիտական» քայլը:

Այսպիսով, ընդամենը 45 օր տևեց ապստամբած Հայաստանի գոյությունը: Ինչպես Հայաստանի Առաջին հանրապետությունը, այնպես էլ փետրվարյան համաժողովրդական այս ապստամբությունը պարտվեցին գլխավորապես արտաքին ուժերի միջամտության հետևանքով:

1921 թ. փետրվարյան ապստամբությունից խորհրդային իշխանությունը որոշ դասեր քաղեց: Նա սկսեց վարել համեմատաբար մեղմ քաղաքականություն: Վերացվեց հեղկոմը՝ բռնի իշխանության այդ ձևը, և փոխարենը հիմնվեց Հայաստանի նոր կառավարություն՝ ժողովրդական կոմիսարների խորհուրդ՝ (ժողովրդիստի) Ալեքսանդր Մյասնիկյանի նախագահությամբ: Ամբողջ Երևանով մեկ վերացվեց իրեն սպառած ու վարկաբեկած ռազմակոմունիստական անհեռանկար քաղա-

քականությունը և անցում կատարվեց ՆԷՊ-ին՝ նոր տնտեսական քաղաքականությանը: Պարենմասնատրումը փոխարինվեց պարենհարկով, թույլատրվեց առևտուի ազատություն, տնտիաշվարկ, սեփականության ձևերի բազմազանություն և այլն:

## 2. 1921 թ. մարտի 16-ի՝ Մոսկվայի և հոկտեմբերի 13-ի՝ Կարսի պայմանագրերը

### Ոռւս-թուրքական կոնֆերանսի իրավիրումը

Այն օրերին, երբ Հայաստանում տեղի ունեցավ ապստամբություն, և իշխանությունն անցավ «Հայրենիքի փոկության կոմիտեի» ձեռքը, Մոսկվայում իրավիրվեց ռուս-թուրքական կոնֆերանս բարեկամության դաշնագիր կնքելու համար: Քանի որ այդ բանակցություններում շոշափվելու էին նաև Հայաստանի համար կենսական նշանակություն ունեցող տարածքային-սահմանային հարցեր՝ Մոսկվա մեկնեց նաև Հայաստանի պատվիրակությունը՝ արտգործնախարար Ալ. Բեկզադյանի գլխավորությամբ: Սակայն, Թուրքիայի պահանջով, Հայաստանի պատվիրակությանը չթույլատրվեց մասնակցել կոնֆերանսին:

### Մոսկվայի պայմանագրիը

Բանակցությունների արդյունքով 1921 թ. մարտի 16-ին Մոսկվայում կնքվեց ռուս-թուրքական «Բարեկամության և եղբայրության մասին» պայմանագիր: Այդ պայմանագրով Թուրքիային հանձնվեցին Կարսի մարզը և Սուրմալուի գավառը: Վերջինս, ինչպես հայտնի է, երբեք չէր եղել օսմանյան Թուրքիայի կազմում: Զավեշտալին այն էր, որ Սուրմալուն անցնում էր Թուրքիային պայմանով, որ Բաթումն էլ Թուրքիան հանձներ Վրաստանին. ստացվում էր, որ Վրաստանի տարածքային ինդիրները լուծվում էին հայկական հողերի հաշվին: Հայաստանի և Թուրքիայի պետական սահմանն անցնելու էր Ախուրյան և Արաքս գետերի հունով, ինչը գոյություն ունի մինչև օրս:

Դւշնագրի 3-րդ հոդվածով Նախիջևանը հայտարարվեց Ադրեանին Ենթակա ինքնավար տարածք, պայմանով, որ այն չզիջվի մի երրորդ պետության, այսինքն՝ Հայութանին: Թուրքիայի պահանջով և Ռուսաստանի համաձայնությամբ Հայաստանի ծոցում ստեղծված Նախիջևանի ինքնավար միավորը պետք է դառնար այն հենակետը,

որով Թուրքիան կապվելու էր Ադրբեյջանի և ցեղակից այլ երկրների հետ: Առաջ գնալով՝ ասենք, որ խորհրդային իշխանության տարիներին Նախիջևանը գրեթե լիովին հայաբավի արվեց: Ինչպես արդեն գիտենք, բոլշևիկյան Ռուսաստանի հաջորդ քայլը Եղավ 1921 թ. հուլիսին Լեռնային Ղարաբաղի բռնակցումը Ադրբեյջանին:

**Կարսի պայմանագիրը** Մոսկվայի պայմանագրի տառացի կրկնությունը և վերահաստումը Եղավ 1921 թ. հոկտեմբերի 13-ի Կարսի պայմանագիրը, որն այս անգամ կնքվեց Թուրքիայի և Անդրկովկասյան երեք «անկախ» հանրապետությունների միջև՝ Խորհրդային Ռուսաստանի խնամակալությամբ: Ինչպես հայտնի է, Մոսկվայի պայմանագրի 15-րդ հոդվածով Խորհրդային Ռուսաստանը պարտավորվում էր համապատասխան քայլերի ոիմել, որպեսզի Անդրկովկասի երեք «անկախ» հանրապետությունները ճանաչեն Մոսկվայի պայմանագիրը, որը և տեղի ունեցավ սահմանամերձ Կարս քաղաքում: Այստեղ Հայաստանի ներկայացուցիչն էր Ասքանազ Մոավյանը:

Այսպիսով, Մոսկվայի և Կարսի պայմանագրերը վավերացրին ու օրինականացրին հայկական հողերի անցումը Թուրքիային և Ադրբեյջանին: Խորհրդային կառավարությունը, անտեսելով հայ ժողովրդի օրինական շահերը և ոտնահարելով նրա իրավունքները, թուրքիային և Ադրբեյջանին հանձնեց Արևելահայաստանի զգալի տարածքներ, ու դրանից հատո Հայաստանը ներպարփակվեց ընդամենը 29,8 հազ. քառ. կմ տարածքի վրա:

Հատկանշական է, որ թուրքական պատվիրակությունը կտրականապես մերժեց Խորհրդային Հայաստանի պատվիրակության համեստ խնդրանքը՝ հայերին վերադարձնելու, թեկուզ վարձակալությամբ (կոնցեսիա), Կողբի արշակունյացները (Հայաստանն այդ ժամանակ աղի մեծ սղություն ուներ) և Անիի տարածքը՝ հնագիտական պեղումների նպատակով: Թուրքական պատվիրակությունը պատճառաբանեց, որ ինքը լիազորված չէ Անևարսուի կողմից՝ Մոսկվայի պայմանագրի հոդվածների շրջանակներից դուրս որևէ գիծում կատարելու:

Մոսկվայի և Կարսի պայմանագրերը կնքվել են միջազգային իրավունքի ու նորմերի կոպիտ խախտումներով: Բանն այն է, որ Խորհրդային Հայաստանը, թեև անվանապես անկախ հանրապետություն էր, սակայն մի դեպքում նրա պատվիրակությանը չթույլատրվեց մասնակցել Մոսկվայի բանակցություններին, իսկ մյուս դեպքում Կարսի

կոնֆերանսում, Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչ Յակով Գանեցկու ճնշման տակ ստորագրվեց Վերոհիշյալ պայմանագիրը: Ուստի երկու պայմանագրերն էլ անարդարացի են ու ապօրինի: Բայց պետք է ասել նաև, որ եթե Հայաստանի պատվիրակությանը թույլատրվեր մասնակցել Մոսկվայի կոնֆերանսին, միևնույն է, այդ մասնակցությունը գործնական նշանակություն չէր ունենա այնպես, ինչպես չունեցավ Կարսի պայմանագիրը կնքելիս, որովհետև կոմունիստական կուսակցությունը և խորհրդային կառավարությունն արդեն կանխապես որոշել էին իրենց ռազմավարական ուղեգիծը՝ հայկական տարածքների հաշվին սիրաշահել «Արևելքի հեղափոխության միջնաբերդ Թուրքիային»: Մոսկվայի և Կարսի պայմանագրերով խորհրդային կառավարությունը կրկին իր հավատարմությունը արտահայտեց ուղիղ երեք տարի առաջ կնքված Բրեստ-Լիտովսկի պայմանագրի՝ Հայաստանին առնչվող պայմաններին: Խորհրդային Ռուսաստանն այն ժամանակ այդպես էր «լուծում» Հայկական հարցը:

### **3. Անդրֆեդերացիայի հիմնումը և ԽՄԴՄ-ի կազմավորումը**

#### **Խորհրդային Հայաստանի սահմանադրությունը**

1921 թ. Երկրորդ կեսին (Զանգեզուրի միացումից հետո) Խորհրդային Հայաստանն ուներ 29,8 հազ. քառ. կմ տարածք, որը վարչականորեն բաժանված էր 9 գավառի և 39 շրջանի: 1921 թ. դեկտեմբերին լիովին վերացվեցին հեղկոմները: Յեղկոմների վերացումից հետո խորհրդային իշխանության քաղաքական համակարգի հիմք հայտարարվեցին դասակարգային հիմունքով «ընտրված» բանվորագյուղացիական բազմաստիճան խորհուրդները: Բայց իրականում պետական իշխանության միահեծան տերն ու տնօրենը այլախոհություն չհանդուրժող կոմունիստական կուսակցությունն էր: Առանց նրա գիտության բացառվում էր Երկրում սոցիալ-տնտեսական կամ քաղաքական բնույթի որևէ քայլի ձեռնարկում: Կոմունիստական կուսակցության ազգային ջոկատները կուսակցության կենտրոնական մարմնի որոշումների ու իրահանգների անվերապահ տեղայնացնողներն ու կենսագործողներն էին: Նման առաքելություն էր իրականացնում նաև ՌԿ(Բ)Կ-ի (հետագայում ԽՄԿԿ-ի) «մարտական» ջոկատներից մեկը՝ Հայաստանի կոմկուսը:

1922 թ. հունվար-փետրվարին տեղի ունեցավ Հայաստանի խորհրդական կառավագայության և պատմական սահմանադրությունը: Սակայն շատ կողմերով այն ուներ ձևական բնույթ և, ըստ էության, կրկնօրինակում էր խորհրդային Ռուսաստանի 1918 թ. սահմանադրությունը:

**ԽՄՀՄ կազմավորումը** Համաշխարհային հեղափոխության և համաշխարհային կոմունիստական տիրապետության հասնելու խնդրում անհաջողության մատնվելով՝ խորհրդային պետության առաջնորդները 1922 թ. վերջին գործնականում վերականգնեցին ռուսական նախկին կայսրությունը՝ խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միություն (ԽՄՀՄ) անվանումով: Նախկինում հոչակված ազգերի ինքնորոշման իրավունքից վերադարձ կատարվեց ռուսական կայսերապետական քաղաքականության:

ԽՄՀՄ-ի կազմավորման գործընթացը սկսվեց Անդրկովկասից: 1922 թ. գարնանը (մարտի 12-ին) Անդրկովկասի երեք հանրապետությունների՝ Հայաստանի, Վրաստանի և Աղրբեջանի միավորումով ստեղծվեց Անդրկովկասյան դաշնությունը՝ Անդրֆեդերացիան, որը գոյատևեց մինչև 1936 թ.:

Խորհրդային համակարգում Անդրֆեդերացիայի ստեղծումը տնտեսական տեսակետից թերևս օգտակար էր ու արդարացված՝ տնտեսապես քայլայված ու ամայացած երեք երկրամասերից, հատկապես Հայաստանում, արտադրողական ուժերի զարգացման համար:

1922 թ. դեկտեմբերի 30-ին Մոսկվայում գումարվեց Խորհուրդների համամիութենական և համագումարը՝ Ռուսաստանի Դաշնության, Ռուսականայի, Բելոռուսի և Անդրկովկասի ներկայացուցիչների մասնակցությամբ: Այս չորս պետական կազմավորումների միավորման մասին ընդունած հոչակագրով և ստորագրված պայմանագրով ստեղծվեց ԽՄՀՄ-ը: Իր կազմավորման պահին ԽՄՀՄ-ը բաղկացած էր 4 հանրապետություններից: Դետագայում սրանց թիվը մեծացավ՝ հասնելով 15-ի: 1936 թ. դեկտեմբերի 5-ին ԽՄՀՄ նոր սահմանադրության ընդունումով լուծարվեց Անդրֆեդերացիան, և նրա փոխարեն Հայաստանը, Վրաստանը և Աղրբեջանը դարձան ԽՄՀՄ կազմի մեջ մտնող հանրապետություններ: ԽՄՀՄ-ը ունիտար (միաձույլ), կենտրոնացված, բազմազգ (հարյուրից ավելի ազգերից ու ազգություններից բաղկացած) ամբողջատիրական կայսրություն էր, որը գոյատևեց շուրջ 70 տարի և ինքնալուծարվեց 1991 թ. դեկտեմբերին:

Այսպիսով, ռուսական ցարական կայսերական ինքնակալական համակարգին որպես ժառանգորդ փոխարինելու եկավ բոլշևիկյան կայսերամետ ամբողջատիրությունը: Հայաստանն այժմ հարձավ խորհրդային բոլշևիկյան տնտեսական ու քաղաքական համակարգի անքածանելի մասնիկը և իր վրա կրեց այդ հասարակարգին բնորոշ երևոյթների դրոշը: Թեև խորհրդային Հայաստանն էլ ունեցավ իր սահմանադրությունը, դրոշը, գերբը, օրիներգը, կառավարությունը, ազգային դիվիզիան և պետականություն խորհրդանշող այլ հատկանիշներ, սակայն դրանք իրականում կրում էին սոսկ խորհրդանշական, պատրանքային բնույթ: Նա գործնականում չուներ քիչ թե շատ ինքնիշխանություն ոչ միայն ռազմաքաղաքական ու դիվանագիտական բնագավառներում, այլ նույնիսկ երկրի ներքին սոցիալ-տնտեսական ու մշակութային հարցերում: Հայաստանում գործում էին խորհրդային Ռուսաստանի օրենքները: Այսպես որ, Հայաստանի խորհրդային ժամանակաշրջանը (1920-1991 թթ.) երկրորդ հանրապետություն անվանելը խիստ պայմանական է:

Այսպիսով, Անդրֆեդերացիայի ստեղծումով և ԽՍՀՄ կազմավորումով Հայաստանը կորցրեց իր ունեցած թեկուզ ձևական անկախությունը: Նա իր անկախությունը կարողացավ վերականգնել միայն 1991 թ.:

#### 4. Հայաստանի պնդեսության վերականգնումը (1921-1928 թթ.)

**Անցումը ՆԵՊ-ին** 1921 թ. Հայաստանում Փետրվարյան ապստամբության ճնշումը համընկավ ամբողջ Ռուսաստանով մեկ «ռազմական կոմունիզմի» քաղաքականությունից նոր տնտեսական քաղաքականության (ՆԵՊ-ի) անցման հետ:

Ինչպես հայտնի է, խորհրդային պետության մենիշխան կառավարող բոլշևիկյան կուսակցության առաջնորդները (Վ. Լենին, Լ. Տրոցկի, Ն. Բուխարին, Գ. Զինովև, Լ. Կամենև, Ի. Ստալին և ուրիշներ) կարծում էին, որ սոցիալիզմի կառուցումը կարճատև ակտ է և, հիմնվելով այդ գաղափարի վրա, նրանք 1918-1920 թթ. փորձեցին «մտցնել» սոցիալիզմ ու կոմունիզմ, այսինքն վերացնել մասնավոր սեփականության վրա հիմնված վարձու աշխատանքը, ապրանքաշշուկայական հարաբերությունները և միանգամից անցում կատարել կունունիստական հավասարարական արտադրության և բաշխման: Սակայն

մարդկանց անձնական շահագրգուվածությունը մերժնելու այս քաղաքականությունը շատ շուտով կրախի մատնվեց, և երկիրը հայտնվեց տնտեսական ու քաղաքական խոր ճգնաժամի մեջ:

1921 թ. գարնանը (ապրիլից) ռազմական կոմունիզմից անցում կատարվեց նոր տնտեսական քաղաքականության: Հիշենք, որ պարենմասնատրման ժամանակ բռնագրավումների ձևով բնակչությունից վերցվում էր նրա եկամուտի և ունեցվածքի ոչ միայն ավելցուկը, այլև անհրաժեշտ մասը: ՆԵՊ-ի քաղաքականությամբ պարենմասնատրումը փոխարինվեց պարենհարկով: Վերջինիս կիրառման դեպքում բնակչության վրա նախապես դրվում էր սահմանափակ հարկ: Այդ հարկի գանձումից հետո բնակչությունն իր եկամուտի ավելցուկը ազատորեն կարող էր տնօրինել կամ վաճառել շուկայում: ՆԵՊ-ի պայմաններում բույլատրվում էր առևտրի ազատություն, աշխուժացան շուկայական հարաբերությունները, արմատավորվեցին տնտիաշվարկը, վարձակալական համակարգը, տեղի ունեցավ դրամի կուրսի կայունացում և այլն: ՆԵՊ-ի քաղաքականությունը, ընդհանրապես, և դրա բաղկացուցիչ մասը կազմող պարենհարկը, մասնավորապես, խթանեցին մարդկանց աշխատանքային շահագրգուվածությունը և, ամբողջությամբ վերցրած, նպաստեցին տնտեսության աշխուժացմանն ու վերականգնմանը:

**Տնտեսական վիճակը** Մինչև ՆԵՊ-ին անցումը Հայաստանի տնտեսական ու քաղաքական վիճակը շարունակում էր մնալ չափազանց ծանր: Հանրապետության տնտեսությունն ավերված ու փլուզված էր բառիս բուն իմաստով: Պարենային սուր ճգնաժամն ուղեկցվում էր տարափոխիկ հիվանդություններով: Երկրամասը լցված էր անտուն, անհաց ու գործազուրկ տասնյակ հազարավոր գաղթականներով ու որբերով:

Խորհրդային Ռուսաստանի օրինակով վերացվեց մասնավոր սեփականությունը, և արտադրության բոլոր հիմնական միջոցները՝ հողը, գործարանները, բանկերը, հանքային հարստությունները, հիմնարկ-ձեռնարկությունները, մշակութային-կոթական օջախները և այլն համարվեցին պետական սեփականություն: Միայն 1920 թ. դեկտեմբերի 28-ին Հայաստանի հեղկոմի հոդի մասին ընդունած դեկրետով պետականացվեց շուրջ 1,5 մլն հա գյուղատնտեսական հողատարածք: Հանրապետությունում անցկացվեց հողաշինարարություն, և, մինչ կոռպերացիայի ճանապարհով անցում կկատարվեր համատա-

րած կոլեկտիվացման, հողը ժամանակավորապես տրվեց շուրջ 180 հազար գյուղացիական տնտեսությունների անհատական օգտագործման:

ՆԵՊ-ի տարիներին, ինչպես ամբողջ Խորհրդային Միությունում, այնպես էլ նրա քաղկացուցիչ մասը կազմող Հայաստանում տեղի ունեցավ տնտեսական և քաղաքական կյանքի որոշ կայունացում: Այսպես թե այնպես, հիմնականում վերականգնվեցին գյուղատնտեսությունը, արդյունաբերությունը, տրանսպորտը և այլն: Տնտեսության վերականգնմանը զուգընթաց ծայր առավ նաև նոր արդյունաբերական ձեռնարկությունների շինարարությունը:

**Օգնություն Տնտեսության վերականգնման շրջանում Հայաստանացածանին** նը խորհրդային հանրապետություններից և, առաջին հերթին, Ռուսաստանի Դաշնությունից ստացավ նկատելի տնտեսական, ֆինանսական և նյութատեխնիկական օգնություն ու աջակցություն: Այսպես, օրինակ, 1922 թ. Ալեքսանդրապոլ (Գյումրի) ուղարկվեցին Իվանովոյի տեքստիլ ֆաբրիկայից ապամոնտաժված կիսահնամաշ մանող մեքենաներ, գործող հաստոցներ և այլ սարքավորումներ, որոնց հիմքի վրա հետագայում կառուցվեց Գյումրիի տեքստիլ ֆաբրիկան (կոմբինատը): 1926 թ. Շիրակի ավերիչ երկրաշարժի հետևանքով գավառը վերածվեց ավերակույտի, և 80 հազար մարդ մնաց անտուն ու անօգնական:

Հայաստանն անշահախնդիր օգնություն ստացավ սփյուռքահայությունից: Այս օգնությունը իրականացվում էր 1921 թ. սեպտեմբերին Երևանում հիմնված Հայաստանի օգնության կոմիտեի (ՀՕԿ) միջոցով: ՀՕԿ-ի վարչության նախագահ ընտրվեց մեծանուն բանաստեղծ Հովհաննես Թումանյանը: ՀՕԿ-ն ուներ իր մասնաճյուղերը ներքին և արտաքին սփյուռքում, բոլոր հայաշատ գաղթօջախներում: Նա մի տեսակ կապող օղակ էր սփյուռքի և Հայաստանի միջև: Սակայն խորհրդային իշխանությունները, ՀՕԿ-ի միջոցով համակողմանի օգնություն ստանալուց զատ, ձգտում էին այն վերածել դրսում հակադաշնակցական քարոզչության և կոմունիստական գաղափարների տարածման մարմնի:

**Տնտեսության վերականգնման գործունեությունները** 20-ական թվականների երկորրդ կեսին (1928 թ.) խորհրդային Հայաստանի տնտեսությունը հիմնարդյունները կոմունիստական ցուցանիշներով հասավ նախապատերազմյան

1913 թ. մակարդակին: Իսկ անասունների գլխաքանակը հասավ ռեկորդային ցուցանիշի: Կառուցվեցին ու վերանորոգվեցին մի շարք ջրանցքներ, այդ թվում՝ Շիրակի ջրանցքը, ընդարձակվեցին ցանքատարածությունները: Զերնարկվեց առաջին հիդրոէլեկտրակայանների կառուցումը: Յետ էր մնում լեռնամետալուրգիան: Յայաստանը տակավին շարունակում էր մնալ որպես գերազանցապես գյուղատնտեսական երկիր:

### **Հասարակական-քաղաքական կյանքը**

Այնուամենայնիվ, եթե տնտեսության վերականգնման ուղղությամբ նկատվում էր որոշ տեղաշարժ, ապա քաղաքական կյանքում, պրոլետարիատի դիկտատուրայի անվան տակ, գնալով ամրապնդվում էր կոմունիստական վարչակարգը: Յայաստանում հաստատվեց ՀԿԿ մենիշխանությունը: ՀԿԿ-ն, լինելով ՌԿ(բ)Կ հայաստանյան հատվածը, իր գործունեության մեջ ինքնուրույն չէր: Որպես ՌԿ(բ)Կ կամակատար՝ նա կրկնօրինակում և տեղայնացնում էր Կենտրոնի որոշումներն ու ցուցումները:

Կոմունիստական կուսակցության մենատիրությունը դրսևորվում էր նրանով, որ կուսակցական մարմինները իրականացնում էին ոչ միայն քաղաքական դեկավարություն, այլ վերևից ներքև, փաստորեն, փոխարինում էին իշխանության մարմիններին՝ խորհուրդներին: Նրանց էր ենթարկված տնտեսական, վարչադրավական, հասարակական և այլ մարմինների ու կազմակերպությունների ողջ գործունեությունը: Կնշանակի՝ կուսակցական և պետական-տնտեսական մարմինների աշխատանքը գործնականում նույնացված էր: Այլ խոսքով՝ պետական իշխանությունը ամբողջովին կուսակցականացված էր: Իսկ քանի որ երկրում այլ կուսակցություններ ու գաղափարախոսություն հանդուրժելի չին, այլախոհություն ու ընդդիմություն չէր թույլատրվում, մինչև իսկ արգելվում ու հետապնդվում էր տարակարծությունը իր իսկ՝ կոմկուսի շարքերում, այստեղից էլ պարզ է դառնում, թե ինչպիսին պետք է լիներ հասարակական-քաղաքական կյանքը խորհրդային Յայաստանում կոմունիստական կուսակցության ամբողջատիրության (տոտալիտարիզմի) պայմաններում: Իսկ տոտալիտարիզմի հիմքերը մեզանում դրվեցին 20-ական թվականների սկզբից:

Յանրապետությունում նույնպես հետապնդվում էր այլախոհությունը: Չեկայի նկուղները լցված էին հարյուրավոր քաղբանտարկյալներով: 1921 թ. դեկտեմբերին քաղաքական դատ կազմակերպվաց հայ

իրականության ամենաազդեցիկ կուսակցության ՀՀԴ-ի դեմ: Իսկ 1923 թ. նոյեմբերին, դարձյալ իրապարակային դատախաղերի ուղեկցությամբ, լուծարվեց Դաշնակցությունը Հայաստանի և Խորհրդային Միության սահմաններում: Դրանից հետո այդ կուսակցությունը հարկադրված դիմեց վտարանդիության և իր գործունեությունը սահմանափակեց գաղթաշխարհի շրջանակներում: Լուծարվեցին և Հայաստանի ու ԽՍՀՄ սահմաններից վտարվեցին նաև հայ ազգային և ոչ ազգային մյուս կուսակցությունները: Դրանց անդամների մի մասը անհատական կարգով մտավ կոմունիստական կուսակցության շարքերը, որոնք, սակայն, ավելի ուշ՝ 30-ական թվականներին, ենթարկվեցին բռնությունների:

Այս շրջանում անլուր հալածանքների ու բռնությունների ենթարկվեց հատկապես հայ առաքելական եկեղեցին հոգևորականությունը. բռնագրավվեցին եկեղեցու կալվածքները և գույքը, ավերվեցին ու հողին հավասարեցվեցին բազմաթիվ եկեղեցիներ, պատմամշակութային կոթողներ և այլ կառույցներ:

Ամեն ինչ սկսվեց Հայաստանի Յեղկոմի 1920 թ. դեկտեմբերի 17-ի դեկրետից, երբ Խորհրդային Ռուսաստանի օրինակով այստեղ էլ եկեղեցին անջատվեց պետությունից, իսկ դպրոցը՝ եկեղեցուց: Հայ եկեղեցին զոկվեց տասնյակ դարերի ընթացքում ունեցած իրավունքներից ու առանձնաշնորհներից (ամուսնության, ամուսնալուծության, ծննդի վավերացման ու գրանցման, հուղարկավորության և այլ հարցերում): Եկեղեցին դադարեց իրավական անձ (սուբյեկտ) լինելուց: Պետականացվեցին էջմիածնի վանքի շենքերի և ունեցվածքի մի մասը, այդ թվում՝ ճեմարանի շենքը, ս. Էջմիածնի, ս. Յոհվանիմեի, ս. Գյայանեի և ս. Զվարթնոցի շենքերը, էջմիածնի մատենադարանը, թանգարանը, վանքի էլեկտրակայանը, տպարանը, էջմիածնապատկան կալվածքները, շուրջ 1,5 մլն ռուբլի դրամ, նյութական այլ արժեքներ: Զանգվածաբար փակվում էին վանքերն ու եկեղեցիները, հալածվում նրա սպասավորները: 1923-24 թթ. ընթացքում միայն Խորհրդային Վրաստանում, վարչական կարգով, փակվեց հայկական 56, իսկ Խորհրդային Հայաստանում՝ 20 եկեղեցի: Դրան հաջորդեցին եկեղեցիների քանդումը և ավերումը: 1930 թ. պայթեցվեց Նորքի՝ Սիմոն Ծերունի եկեղեցին: Այն օրերին, երբ Մոսկվայում քանդվում էր Կազմանյան տաճարը, ավերվեց Երևանի կենտրոնում գտնվող Պողոս-Պետրոս եկեղեցին (1931 թ.), իսկ 1936 թ. նաև Կաթողիկե եկեղեցին: Եկեղեցաքանդությունը շարունակվեց նաև հետագա տարիներին: 1938

թ. օգոստոսին Հայկոմկուսի ԿԿ-ը, հաճոյանալով Մոսկվային, որոշում ընդունեց լուժարել հայոց կաթողիկոսությունը, իբրև հետադիմության օջախ: Սակայն մոտեցող աշխարհամարտի պատճառով այդ նենգ մտադրությունը չիրագործվեց:

Հետապնդվում էին ազգային մշակույթը և նրա տաղանդավոր գործիչները: Աստիճանաբար ձևավորվում էր կառավարման ամբողջատիրական, վարչականացնելու համակարգը:

## 5. Խորհրդային Հայասփանի գնդեսությունը նախապատրազմյան դարիներին (1929-1939 թթ.)

### Հանրապետության ինդուստրացումը

ՆԵՊ-ը երկրում առաջ բերեց սոցիալ-տնտեսական կյանքի որոշ աշխատացում, բայց դա տևական չեղավ: 1929 թ. գործնականում կասեցվեց ՆԵՊ-ը, ջախջախավեց «օպորտունիստական» (հաշտվողական) որակված ընդդիմությունը, և կրկին ասպարեզ նետվեց ռազմա-կոմունիստական ամբողջ ճակատով սոցիալիզմի հարձակման քաղաքականությունը, իրականացնելով՝ 1) արյունաբերության տոտալ սոցիալիստական ինդուստրացումը, 2) գյուղատնտեսության բռնի կոլեկտիվացումը և 3), այսպես կոչված, մշակութային հեղափոխությունը:

Բոլշևիկյան կուսակցության առաջնորդները փորձում էին կառուցել մի հասարակարգ, որի մասին իրենք էլ հստակ պատկերացում չունեին: Ընդսմին, սոցիալիզմ էր կառուցվելու մի երկրում, որտեղ կապիտալիզմը դույզն-իսկ չէր զարգացած: Նրանց կարծիքով, կառուցել սոցիալիզմ նշանակում էր վերջ տալ մասնավոր սեփականությանն ու ազատ շուկայական հարաբերություններին և, արտադրության միջոցների պետականացման ու մեքենայացման հիման վրա, ինդուստրացնել երկիրը, վերացնել անհատական գյուղացիական տնտեսությունը, կոլեկտիվացնել գյուղատնտեսությունը և, մարքս-լենինյան, կոմունիստական գաղափարների սերմանման միջոցով, ձևավորել նոր մարդ, նոր տիպի մշակույթ, այսինքն՝ իրագործել մշակութային հեղափոխություն: Հարկ է մատնանշել, որ Վ. Ի. Լենինի մահվանից հետո բոլշևիկ ազագնորդներից սոցիալիզմի կառուցման «լենինյան» կոչվող այս կուրսը ամենից ավելի հետևողականորեն պաշտպանեց և իրականացրեց ի. Ստալինը:

Ինչպես ասվեց, այս քաղաքականությունը ԽՍՀՄ-ում համընդիանուր գործողության մեջ դրվեց 1929 թ., և այդ թվականը համարվեց «մեծ բեկման տարի»: Կազմվեցին և գործողության մեջ դրվեցին տնտեսության զարգացման հնգամյա պլանները: Ինդուստրացման, կոլեկտիվացման և մշակութային հեղափոխության գործընթացները մեծ դժվարություններով, բռնություններով և զոհողություններով իրականացվեցին նաև Հայաստանում:

20-ական թվականների երկրորդ կեսին և 30-ական թվականներին մեզանում դրվեցին ժամանակակից ինդուստրիայի հիմքերը: Արտադրության հիմնական միջոցների պետական սեփականության պայմաններում, ժողովրդի մեծ ջանքերի ու զոհողությունների գնով, կառուցվեցին ու շահագործման հաճանվեցին մի շարք ՀԵԿ-եր, գործարաններ, ֆաբրիկաներ, երկաթուղիներ, սննդի ձեռնարկություններ ու օբյեկտներ, արտադրաշինարարական այլ կառույցներ ու համալիրներ:

Հայաստանում երկու հնգամյակների ընթացքում (1928-1937 թթ.) գործարկվեցին մեծ ու փոքր 44 արդյունաբերական ձեռնարկություններ: Արդեն 1937 թ. արդյունաբերության համախառն արտադրանքը 1913 թ. մակարդակը գերազանցեց ավելի քան 12 անգամ: Արդյունքում՝ Հայաստանն էլ դարձավ ինդուստրիալ-գյուղատնտեսական հանրապետություն: Աճեց կոմունիստական կուսակցության գլխավոր սոցիալական հենարանի՝ բանվոր դասակարգի թիվը: Սակայն միակողմանի կերպով զարկ տրվեց հիմնականում քիմիական ու լեռնահանքային արդյունաբերությանը, այն դեպքում, եթե հանրապետությունը չուներ բավարար քանակի էներգիայի, մասամբ էլ հումքի պաշարներ: «Ամեծ քիմիայի» զարգացումը հետագայում բարդացրեց Հայաստանի բնապահպանության (էկոլոգիական) իրավիճակը: Այդ ժամանակներից բնապահպանական լուրջ խնդիր դարձավ նաև, Հրազդան գետի վրա ՀԵԿ-երի կասկադ կառուցելու հետևանով, Սևանա լճի մակարդակի իջնցումը և այլն:

## Հանրադետության ինդուստրացումը

Սոցիալիզմի շինարարության կարևոր բաղկացուցիչ մասն էր գյուղատնտեսության կոլեկտիվացումը: Սկսած 1929 թ. վերջերից, կուսակցության հրահանգով, ինչպես ամբողջ խորհրդային երկրում, այնպես էլ Հայաստանում սկսվեց գյուղատնտեսության համատարած կոլեկտիվացումը:

Կոլեկտիվացման կամ գյուղի սոցիալիստական վերակառուցման

Էռլիքունն այն էր, որ նէպական երկրի անհատ գյուղացիական տնտեսություններն իրենց արտադրության միջոցներով միավորվում էին, այսպես կոչված, գյուղատնտեսական արտելներում և, ըստ գյուղերի և գյուղախմբերի, ստեղծում կոլտնտեսություններ: Առանձին դեպքերում նախկին կալվածատերերի հողերի վրա հիմնվում էին նաև պետական տնտեսություններ՝ խորհտնտեսություններ (սովխոզներ): Ի տարբերություն անհատական տնտեսությունների՝ այստեղ արդեն մասնավոր, անձնական սեփականությանը փոխարինելու էր գալիս կոլեկտիվ սեփականությունը, իսկ անհատական (մենատնտեսական) աշխատանքին՝ խմբակային (կոլեկտիվ) աշխատանքը, դրանց ուղեկից՝ կոլեկտիվ վարձատրությունն ու բաշխումը:

Բայց այս ամենը, ինչպես և սպասվում էր, մեծամասամբ կատարվեց գյուղացու կամքին հակառակ, հարկադրանքի ճանապարհով, որի հետևանքով տեղի ունեցավ անասունների զանգվածային մորթ (միայն Հայաստանում մի քանի տարվա ընթացքում անասունների գլխաքանակը կրճատվեց 30-ից 50 տոկոսով), աշխատավոր մարդու մեջ վերացան նյութական շահագրգուվածությունը և անձնական նախաձեռնությունը:

Ընդ որում, կոլեկտիվացման ժամանակ գյուղացիության համեմատաբար ունենոր շերտին (որը կազմում էր ընդամենը 3-4 տոկոս), «կուլակի» կամ շահագրգուդի անվան տակ, սկսեցին ունեցրկել, վտարել գյուղից կամ էլ աքսորել Հայաստանից: Միայն 1930 թ. կուլակության դեմ պայքարի պատրվակով ունեցրկվեցին և Հայաստանից աքսորվեցին հազարից ավելի գյուղացիական ընտանիքներ: Առանձին վայրերում գյուղացիները ցույց տվեցին դիմադրություն, եղան ընդհարումներ, վնասարարություններ ու սպանություններ:

Հայաստանը, որպես Խորհրդային Միության ազգային մի ծայրամաս, համատարած կոլեկտիվացումը կատարեց ավելի ուշ՝ հիմնականում Երկրորդ հնգամյակի (1933-1937 թթ.) ընթացքում:

Այսպիսով, գյուղատնտեսության բնոնի կոլեկտիվացումն ունեցավ ծանր հետևանքներ: Այն, փաստորեն, առաջ բերեց գյուղատնտեսության անկում: Դրանից հետո տասնամյակներ շարունակ խորհրդային գյուղը չկարողացավ ազգաբնակչությանը ապահովել գյուղատնտեսական անհրաժեշտ հումքով ու պարենամբերքով:

## **ՄԵԱԿՈՒԹՅԱՅԻՆ ԻԵՂԱՎԻՌԻՑՈՒԹՅՈՒՆԸ**

Հակասական բնույթ կրեց նաև, այսպես կոչված, մշակութային հեղափոխությունը: Մի կողմից՝ տեղի էր ունենում կրթության, գիտության առաջընթաց, համատարած անգրագիտության վերացում, իսկ մյուս կողմից, հանուն «նոր մարդու ձևավորման» և նոր կարգերի ու մշակույթի արմատավորման, հետապնդվում էին ազատ մտածողությունը, այլախոհությունը, առողջ քննադատությունը և՝ «ժողովրդի թշնամի», «տրոցկիստ», «նացիոնալիստ», «բուրժուական գաղափարախոս», «օտարերկրյա գործակալ» ու այլ պիտակավորումներով, հազարավոր անմեղ մարդիկ, այդ թվում՝ տաղանդավոր մտավորականներ, գրողներ, հասարակական-քաղաքական գործիչներ, զորահրամանատարներ, հոգևորականներ, մշակույթի գործիչներ, շարքային մարդիկ բանտարկվում էին, քշվում համակենտրոնացման ճամբարներ ու անխնաոչնչացվում:

Այս մեթոդներով 20-ական թվականների վերջերից մինչև 30-ական թվականների կեսերը՝ երկու հնգամյակների ընթացքում, հիմնականում «կառուցվեց» մի այնպիսի հասարակարգ, որն իրավացիորեն անվանվում է «զորանոցային» սոցիալիզմ: Այդպիսով, ՆԷՊ-ի տարիներին առաջադրված «ով՛ ում» հարցը լուծվեց հօգուտ սոցիալիզմի: 1936 թ. դեկտեմբերի 5-ին ընդունվեց ԽՍՀՄ նոր սահմանադրություն՝ «հաղթանակած սոցիալիզմի սահմանադրությունը»: Այս սահմանադրության համաձայն՝ Անդրֆեդերացիան լուծարվեց, և Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը դիտվեց որպես ԽՍՀՄ-ի մեջ մտնող ինքնուրույն սուբյեկտ: Սոցիալիզմի հիմքերի կառուցումից հետո խնդիր դրվեց կառուցել կոմունիստական հասարակարգ, սակայն վերահաս պատերազմը հետաձգեց կուսակցության կանխագծումները:

Թեև «սոցիալիստական» կոչվող հասարակարգում աշխատավոր ժողովրդի անձնագոհ ու հարկադիր աշխատանքի շնորհիվ երկրում տնտեսական ու կրթական առաջընթաց նկատվեց, սակայն մարդը իրավաքաղաքական ազատություն չստացավ: Նա մնաց հարստահարված ու իրավազուրկ: Սոցիազիզմի կառուցումով իրականում չվերացվեց մարդու շահագործումը: Այն քողարկված իրականացվում էր պետական-կուսակցական վարչաբյուրոկրատական ապարատի կողմից:

Արտադրության միջոցների մասնավոր սեփականության վերացումից և դրանց պետականացումից ու համայնացումից հետո այդ սե-

փականության անվանական տեր հայտարարվեց ժողովուրդը, իսկ փաստական տերը դարձավ պետական-կուսակցական վարչաբյուրուկուրատական ապարատը: Այս ամենի հետևանքը եղավ այն, որ հիմնական արտադրողը օտարվեց արտադրությունից և հողից:

**Զանգվածային բռնությունները** Սոցիալիզմի կառուցմանը համընթաց, դասակարգային պայքարի սրման վերաբերյալ ստալինյան

կեղծ կարգախոսով, սկսվեց մարդկանց նկատմամբ քաղաքական բռնությունների, հալածանքների, առանց դատ ու դատաստանի բանտարկությունների, աքսորի, զանգվածային սպանությունների մի անվերջանալի շղթա, որն իր բարձրակետին հասավ 1937 թվականին: Այդ բռնությունների հետևանքով 30-ական թթ. Հայաստանում ֆիզիկապես ոչնչացվեցին շուրջ մեկուկես տասնյակ հազար անմեղ մարդիկ: Միայն 1937-1938 թթ. գնդակահարվել է 6250 մարդ:

Փոխադարձ անվատահության, վախի, գրպարտանքի, քծնանքի ու կարիերիզմի հասարակական-քաղաքական մթնոլորտում բռնությունների զոհ էին դառնում նաև բոլշևիկյան կուսակցության և խորհրդային երկրի ղեկավար գործիչներ: Օրինակ, «ազգայնականությանը տուրք տալու» և այլ քսու մեղադրանքներով 1936 թ. ամռանը L. Բերիայի զոհը դարձավ Հայաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Աղասի Խանջյանը: 1937 թ. օգոստոսին, հարցաքննության ժամանակ, ինքնասպանություն գործեց (իսկ ավելի ճիշտ՝ այդ քայլին դրդեցին) Հայաստանի կառավարության նախկին նախագահ Սահակ Տեր-Գաբրիելյանը և այդպես շատ ուրիշներ:

Պետանվտանգության մարմինները չխնայեցին նույնիսկ Ամենայն Հայոց կաթողիկոս Խորեն 1-ին Մուրադբեկյանին, որը խեղդամահ արվեց 1938 թ. ապրիլին:

Բազմահազար անմեղ մարդկային զոհերը սոցիալիզմի շինարարության լենին-ստալինյան կուրսի անմիջական արդյունքն էին: Ամենին էլ պատահական չէր, որ բռնությունների իրագործման բարձրակետը ժամանակային առումով համընկավ սոցիալիզմի հաղթանակի հետ, քանզի վերջինս ենթադրում էր շուտափույթ ազատում իր գաղափարին խորթ ու անհավատարիմ տարրերից: Արդյունքում փաստորեն գլխատվեց հասարակության ծաղիկը, մտավորականության լավագույն մասը, ինչն իրեն զգացնել տվեց նաև հետագա տասնամյակներին: Հասարակության սոցիալական խմբերից ու խավերից ա-

մենից ավելի տուժեց և սոցիալ-բարոյական նվաստացման ենթարկվեց հենց մտավորականությունը: Միանգամայն սխալ ու միտումնավոր է այդ բռնությունների մեղքը բարդել միայն ի. Ստալինի վրա: Դրա մեղավորը այն քաղաքական համակարգն էր, որը ձևավորվեց 20-30-ական թվականներին, և որի արտահայտությունը դարձավ տվյալ ժամանակահատվածում գործող կուսակցական-պետական մեքենան:

Խորհրդային սոցիալիզմի փորձը ցույց է տալիս, որ ոչ մի հասարակարգ, այդ թվում՝ սոցիալիստականը, ինչպիսի գաղափարատեսական հիմնավորման ու սոցիալական մոդելավորման էլ ենթարկվի, միևնույն է, հնարավոր չէ պլանավորել և կառուցել «վերևից». հասարակությունը զարգանում է իր ներքին, օբյեկտիվ, բարդ ու հակասական օրենքներով և տրամաբանությամբ, որպես մարդկային քաղաքակրթության զարգացման բնականոն գործընթաց:

## 6. Խորհրդային Հայաստանի մշակույթը 1920-1930-ական թվականներին

**Անգրագիտության վերացումը** Ինչպես գիտենք, սոցիալիզմի շինարարության կարևոր բաղադրիչներից է մշակութային հեղափոխությունը: Եթե ինդուստրացումը և կոլեկտիվացումը վերաբերում էին տնտեսության բնագավառներին, ապա մշակութային հեղափոխությունը՝ հոգևոր ոլորտին: Գիտենք նաև, որ մշակութային շինարարությամբ խնդիր էր դրվում մարդկանց դաստիարակել մարքս-լենինյան աշխարհայացքի և կոմունիստական գաղափարայնության ոգով, և որ սոցիալիստական հասարակարգում ձևավորվող մշակույթը արմատապես պետք է տարբերվեր նախորդ հասարակարգերում ստեղծված մշակութային արժեքներից:

Նոր գաղափարների սերտման և սոցիալիզմն ու կոմունիզմը գիտակցաբար կառուցելու համար պահանջվում էր ամենից առաջ մարդկանց համատարած գրագիտություն, այսինքն՝ անգրագիտության վերացում:

Հասկանալի է, որ դարեր շարունակ պետականագույր և իր գոյության պահպանման համար մաքառող հայ ժողովրդի մեջ անգրագիտությունը տարածված երևույթ էր: Բայց և այնպես, հայ ազգաբնակչությունն իր գրագիտության մակարդակով երբեք չի գիշել հարևան ժողովրդներին:

Խորհրդային Հայաստանում ձեռնարկված դրական ակնառու երևույթներից մեկը, անկասկած, պետք է համարել կարծ ժամանակամիջոցում անգրագիտության վերացումը և կուլտուր-կրթական գործի դրվածքի բարելավումը: Արդեն երկրորդ աշխարհամարտի նախօրյակին անգրագիտությունը Հայաստանում իիմնականում հաղթահարված էր (գրագետ էր բնակչության շուրջ 84 տոկոսը):

### **Բարձրագույն Կրթությունը և Գիտությունը**

Հայաստանի խորհրդայնացումից հետո, 1921 թ. հունվարին, վերաբացվեց Երևանի (Ժողովրդական) համալսարանը, որը համարվում է Հայաստանի առաջին հանրապետության համալսարանի իրավահաջորդը: Նրա ռեկտորը նշանակվեց ականավոր պատմաբան Հակոբ Մանանդյանը: Հետագա տարիներին համալսարանում կազմակերպվեցին նորանոր ֆակուլտետներ: Այդ ֆակուլտետների բազայի հիման վրա էլ ստեղծվեցին համապատասխան ճյուղային ինստիտուտներ՝ անասնաբուժական-անասնաբուժական, պոլիտեխնիկական, բժշկական, մանկավարժական և այլն: Մեծացավ ուսանողության և բուհական շրջանավարտների թիվը: Հայաստանի բուհերը համալրվեցին ներսից ու դրսից եկած բարձրորակ կադրերով և համապատասխան գիտական ու նյութատեխնիկական բազայով: 30-ական թվականների վերջերին Հայաստանում գործում էր 9 բուհ՝ ավելի քան տասը հազար ուսանողով:

Ընդլայնվեց նաև արհեստագործական ուսումնարանների ու տեխնիկումների ցանցը: Բանվորության և կոլտնտեսային գյուղացիության կողմին Հայաստանում ձևավորվեց մտավորականության խավը:

Այս ամենի հիման վրա առաջընթաց ապրեց գիտությունը: 20-30-ական թվականներին գիտական միտքը Հայաստանում դարձյալ կապված էր հիմնականում բուհերի ու մասնավորապես Երևանի համալսարանի գործունեության հետ: 20-ական թվականների վերջերից, Երկրի ինդուստրացմանը զուգընթաց, բնական ու տեխնիկական գիտությունների զարգացման մեծ պահանջ զգացվեց: 1933 թ. հիմնվեց Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտը (ԵրՊի-ն), որը կարծ ժամանակամիջոցում դարձավ հանրապետության ճարտարագիտական մտքի կենտրոնը և ճարտարագետ կադրերի պատրաստման գլխավոր դարբնոցը:

Ժողովրդական տնտեսության առաջընթացի ճանապարհին հույժ անհրաժեշտ էին հիմնարար ու կիրառական գիտությունների զար-

գացումը, դրանցում ձեռք բերած գործնական արդյունքների ներդրումը: Բայց գիտահետազոտական աշխատանքների առանձնահատկություններն ու դժվարությունները թելադրում էին դրանց գործունեության կողրդինացում ու գիտական կազմակերպում: 1925 թ. ստեղծվեց Հայաստանի գիտության և արվեստի ինստիտուտը: Այդ հաստատության վրա դրվեցին հանրապետությունում բնական, տեխնիկական և հասարակական գիտությունների կազմակերպման ու զարգացման խնդիրները: 1935 թ. Երևանում հիմնվեց ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի (ԳԱ) հայկական մասնաճյուղը (Արմֆանը), որի հիմքի վրա հետագայում 1943 թ., կազմակերպվեց Հայաստանի գիտությունների ակադեմիան: Նյութական պայմաններ ստեղծվեցին թե բնական և թե՛ հասարակական գիտությունների զարգացման համար: Հայագիտության բնագավառում առանձնապես արգասավոր ձեռքբերումներ ունեցան Լեոն, Յ. Մանանյանը, Յ. Աճառյանը, Մ. Աբեղյանը, Գ. Ղափանցյանը, Ա. Տերտերյանը, Յ. Օրբելին և ուրիշներ: Վերջինս դարձավ Հայաստանի նորաստեղծ ԳԱ առաջին պրեզիդենտը: Սակայն մարքս-լենինյան գաղափարական կաղապարները և խորհրդային վարչաբյուրոկրատական համակարգը տակավին խնդրություն էին գիտության ազատ զարգացմանը: Սրան շուտով գումարվեցին նաև քաղաքական բռնություններն ու հալածանքները գիտության և մշակույթի գործիչների նկատմամբ:

**Գրականությունը** Մշակութային «շինարարության» ճանապարհին ամենից ավելի մեծ չափով տուժեց գրականությունը: Գրականությանը պարտադրվեց, այսպես կոչված, սոցիալիստական ռեալիզմի կեղծ գրական ուղղությունը:

Այնուհանդերձ, 30-ական թվականներին, գրական, քաղաքական-գաղափարական սուր բանավեճերի ու պայքարի պայմաններում, շարունակում էին ստեղծագործել ազգյահն-հայրենասիրական ուղղության ներկայացուցիչները: Ազգյահն-հայրենասիրական գաղափարախոսությանը նոր լիցք հաղորդեցին Զարենցի «Գիրք ճանապարհի» պոեմների և բանաստեղծությունների ժողովածուն, Մահարու «Մանկություն» և «Պատանեկություն», Թոթովենցի «Կյանքը իին հռովմեական ճանապարհի վրա», Բակունցի «Կյորես» և «Ծիրանի փողը», Արմենի «Շեղնար աղբյուր» վիպակները և պատմվածքները:

20-30-ական թթ. հայ գրականության խոշորագույն դեմքը, անկասկած, Ե. Զարենցն է: Նա քննադատորեն ու բանաստեղծական խոսքի

բացառիկ ձիրքով վերագնահատեց ու փիլիսոփայորեն վերահմաստավորեց հայ ժողովրդի՝ պատմության քառուղիներով անցած դարավոր երթի ու մաքառումների անսպառ ուժը և թուլությունները: Չարենցն իր բնատուր տաղանդի ուժով նոր շունչ ու ոգի հաղորդելով հայ գրական կյանքին՝ դարձավ նորարար: Նա ընդլայնեց գեղարվեստական մտածողության դաշտն ու համակարգը, թարմացրեց գրականության լեզուն, ստեղծեց գեղարվեստական նոր չարենցյան տիպի պատկերներ, հարստացրեց տաղաչափությունը և ժամրային տեսականին: Փաստորեն, Ե. Չարենցով է սկսվում հայ գրականության նորագույն շրջանը: Սակայն Չարենցին և նրան համախոհ տաղանդավոր շատ այլ գրողների՝ Ա. Բակունց, Զ. Եսայան, Մ. Արմեն, Վ. Թոթովենց, Վ. Ալազան, Գ. Մահարի, Լեռ Կամսար և ուրիշներ, վիճակված չեր երկար ստեղծագործել: 1937 թվականի սանձարձակ բռնությունների շրջանում հայ գրողներից ու մտավորականներից շատերը դարձան դրանց զոհը: Փաստորեն, փականքի տակ դրվեցին ազգայնական որակված Ռաֆֆու և Պատկանյանի ստեղծագործությունները: Անընդունելի համարվեցին միջնադարյան մեծ գրողներ՝ Գ. Նարեկացին և Ն. Շնորհալին: Ծանր հարված ստացավ գրականությունը: Այն դարձավ մեծ մասամբ գորշ ու անդեմ՝ կուսակցության ու սոցիալիզմի «մեծագործությունների» գովերգուն:

**Արվեստ** Պետական հովանավորությամբ նյութատեխնիկական պայմաններ ստեղծվեցին նաև արվեստի զարգացման համար: Գործում էին Երևանի և Գյումրիի դրամատիկական թատրոնները, որոնցում ընդգրկվել էին հայ բեմարվեստի ճանաչված ներկայացուցիչները՝ Վ. Փափազյանը, Յ. Աբելյանը, Յասմիկը, Ա. Ոսկանյանը, Յ. Ներսիսյանը, Վ. Վաղարշյանը և ուրիշներ:

20-ական թթ. դրվեց Յայաստանի կինեմատոգրաֆիայի հիմքը: «Յայկինոյի» հիմնադիրը եղավ ճանաչված կինոբեմադրիչ Յամո Բեկնազարյանը: Յայ երաժշտական արվեստի բնագավառում բացառիկ տաղանդով փայլեց Ալ. Սպենդիարյանը: 1933 թ. Երևանում շահագործման հանձնվեց նրա անունը կրող օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնի շենքը, որը նշանակալի իրադարձություն եղավ հայ մշակութային կյանքում: Այդտեղ առաջինը բեմադրվեցին ազգային օպերային արվեստի երկու գլուխգործոցները՝ Ալ. Սպենդիարյանի «Ալմաստը» և Ա. Տիգրանյանի «Անուշը»:

Շարունակում էր ստեղծագործել հայ կերպարվեստի նախախորհր-

դային սերունդը: Այս շրջանում ևս հայ նկարչական արվեստում, իր կտավների գույների նման, ամենավառ ներկայացուցիչը Մ. Սարյանն էր, որը ժողովրդի կողմից արժանացավ ամենաբարձր՝ Վարպետ կոչմանը: Հայ կերպարվեստի ճանաչված դեմքերից էր նաև Յ. Կոջոյանը:

Ավելի ակնառու էին հաջողությունները ճարտարապետության ասպարեզում, որի աշխատանքները շարունակում էր գլխավորել ակադեմիկոս Ալ. Թամանյանը: Կառուցապատվում էր հանրապետությունն ու հատկապես քաղաքամայր Երևանը: Քաղաքի շքեղ զարդերը դարձան վերոհիշյալ թատրոնի շենքը, Կառավարական տունը և Վ. Ի. Լենինի անունը կրող կենտրոնական հրապարակն իր համալիրով: Այս ամենով հանդերձ, 20-30-ական թվականներին քաղաքական բռնություններից զերծ չմնացին նաև արվեստի ներկայացուցիչները:

Այսպիսով, 20-30-ական թթ. խորհրդահայ մշակույթում ակնհայտորեն նկատվում էր երկվություն: Մի կողմից՝ պետական հովանավորությամբ նպաստավոր պայմաններ ստեղծվեցին կրթամշակութային կյանքի զարգացման համար, մյուս կողմից՝ իսկական, հայ ազգային մշակույթի զարգացումը կաշկանդվում էր կոնունիստական կուսակցության գաղափարայնությամբ: Ինչպես տնտեսությունն ու հասարակական-քաղաքական կյանքի մյուս ոլորտները, այնպես էլ մշակույթը ազատ ու ինքնուրույն չէին: Այս բնագավառը փորձում էին վերածել պետական-կուսակցական վարչաբյուրոկրատական համակարգի հլու կամակատարի:

## Գլուխ քսաներորդ

# ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐՈՅ ԵՐԿՐՈՌԴ ԱՃԽԱՌԱՍԱՐՏԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1939-1945 ԹԹ.)

**Պատերազմի սկիզբը** 1939 թ. սեպտեմբերի 1-ին սանձագերծվեց Երկրորդ համաշխարհային պատերազմը: Այն ուներ իր պատճառները: Ամենագլխավորը, թերևս, առաջին աշխարհամարտի արդյունքով Գերմանիային պարտադրված Վերսալյան պայմանագրի նվաստացուցիչ պայմաններն էին (այսպես կոչված, Վերսալյան սիստեմը), որոնք և, ի վերջո, գերմանական ժողովրդին մղեցին ֆաշիզմի ու ռևանշիզմի: 30-ական թթ. մեծ տերությունների միջև առկա հակասություններն ու հակամարտություններն անխուսափելի դարձրին պատերազմը: Եթե 1938 թ. սեպտեմբերին Արևմուտքի խոշոր տերությունները, Գերմանիայի հետ կնքված Մյունխենյան գործարքով, նպատակ էին հետապնդում Գերմանիայի առաջնորդ (ֆյուրեր) Ա. Շիտլերին կողմնորոշել դեպի Արևելք՝ ԽՍՀՄ, ապա 1939 թ. օգոստոս-սեպտեմբերին Մոսկվայում կնքված խորհրդա-գերմանական շիարձակման, բարեկամության ու սահմանների մասին պակտերով, ընդհակառակը, խորհրդային պետության առաջնորդ, «ժողովուրդների հայր» Ի. Ստալինը ձգտում էր Շիտլերին ուղղել դեպի Արևմուտք: Արդյունքում՝ ոչ Արևմուտքը և ոչ էլ Արևելքը չկարողացան խուսափել պատերազմից ու մնալ անմասն:

Սկսվելով 1939 թ. սեպտեմբերի 1-ին՝ Երկրորդ համաշխարհային պատերազմն իր շրջապտույտի մեջ առավ 64 պետություն, Երկրագնդի բնակչության 80 տոկոսը և տևեց ուղիղ վեց տարի՝ մինչև 1945 թ. սեպտեմբերի 2-ը:

1941 թ. հունիսի 22-ից, ֆաշիստական Գերմանիայի ուխտադրուժ հարձակումով, աշխարհամարտի մեջ ներքաշվեց նաև խորհրդային

**Միությունը:** Սկսվեց Հայրենական մեծ պատերազմը, որը տևեց 1418 օր և ավարտվեց 1945 թ. մայիսի 9-ին, հիրավի, շատ թանկ գնով ձեռք բերված հաղթանակով:

### **Հայկական**

#### **դիվիզիաների**

#### **կազմավորումը**

Հայ ժողովուրդը, խորհրդային մյուս ժողովուրդների հետ միասին, կատարելով իր հայրենասիրական-քաղաքացիական պարտքը, ոտքի ելավ պաշտպանելու խորհրդային երկիրը: Պատերազմի առաջին ամիսներին բանակ մեկնեցին տասնյակ՝ ազարավոր զինապարտներ, շատերը՝ որպես կամավոր: Պատերազմի առաջին փուլում խորհրդային գինված ուժերի կազմում կազմավորվեցին հայկական վեց ազգային դիվիզիաներ՝ 76-րդ իրազգայինը, որը գոյություն ուներ տակավին Հայաստանի խորհրդայնացման ժամանակներից, 89-րդ, 261-րդ, 390-րդ, 408-րդ և 409-րդ դիվիզիաները: Սրանցից առանձնապես աչքի ընկավ 89-րդ Թամանյան դիվիզիան, որը փառավոր մարտական ուղի անցավ՝ Կովկասյան լեռներից մինչև Բեռլին: Մի քանի դիվիզիաներ էլ՝ 61-րդ, 220-րդ, 31-րդ և այլն, կիսով չափ համալրվեցին հայ մարտիկներով: Բազմազգ խորհրդային երկրում առաջին դիվիզիաների ստեղծումը զգալիորեն նպաստեց Կարմիր բանակի հետագա հզորացմանը: Պատերազմի ժամանակ հարյուր հազարավոր հայազգի ռազմիկներ՝ զինվորներ, հրամանատարներ, քաղաքացիներ, իրենց մարտական ծառայությունն անցկացրին ազգային միավորումներից դուրս՝ այլ զորամասերում և միավորումներում: Ընդհանուր հաշվով խորհրդային բանակում հայ մարտիկների և հրամանատարների թիվը հաշվում էր շուրջ կես միլիոն:

### **Հայ ժողովրդի զորակցությունը Պատերազմին**

Հայ ռազմիկները պատերազմի ամբողջ ընթացքում մարտնչում էին ամենուրեք՝ ամենատարբեր ռազմաճակատներում ու գորատեսակներում: Նրանք մասնակցություն ունեցան գրեթե բոլոր ճակատամարտերին՝ Մոսկվայի, Ստալինգրադի, Կուրսկի և այլն, Կովկասի ու Լենինգրադի պաշտպանությանը, Ղրիմի ու Ուկրաինայի ազատագրմանը, Ղնեարի գետանցմանը և այլն: Աչքի էին ընկնում ոչ միայն շարքային զինվորները, այլև սպաներն ու հրամանատարները:

Պատերազմի առաջին իսկ ամիսներին՝ Կիևի, Օդեսայի և այլ քաղաքների պաշտպանության ժամանակ, աչքի ընկան հարյուրավոր

հայ ռազմիկներ ու գորահրամանատարներ, այդ թվում գեներալ-լեյտենանտ Միքայել Պարսեղովը, գնդապետ Իվան Վեքիլովը, օդաչու Պատրիկ Գազազյանը և ուրիշներ: Պարսեղովը աչքի էր ընկել դեռևս խորհրդա-ֆիննական պատերազմի ժամանակ և 1940 թ. առաջիններից մեկը արժանացել խորհրդային Միության հերոսի կոչման: Մեծ թվով հայ գորականներ ակտիվորեն մասնակցեցին Լենինգրադի հերոսական պաշտպանությանը: Իրենց խիզախությամբ ու անձնազոհությամբ հատկապես աչքի ընկան 42-րդ բանակի ռազմական խորհրդի անդամ, գվարդիայի գեներալ-մայոր Բենիամին Գալստյանը (զոհվել է արկի պայթյունից և թաղված է Նևսկի Լավր գերեզմանոցում) հրետանու գեներալ Նիկոլայ Շովիաննիսյանը, քաջարի տանկիստ, խորհրդային Միության հերոս Աշոտ Ղազարյանը, Բալթյան նավատորմի գրոհայիմ օդաչու, հետագայում խորհրդային Միության կրկնակի հերոս, փոխգնդապետ Նելսոն Ստեփանյանը: Յերոս քաղաք Լենինգրադի յուրօրինակ պաշտպանների թվում էին նաև Երմիտաժի տնօրեն, ակադեմիկոս Շովարտ Օրբելին, համրահոչակ դերասան Վահրամ Փափազյանը:

Մոսկվայի ճակատամարտի ճակատագրական օրերին անվեհեր մարտնչեցին հատկապես դիվիզիայի հրամանատար Սարգիս Մարտիրոսյանը և գնդապետ Յայկ Մարտիրոսյանը:

Յայ ռազմիկ-հրամանատարների քաջագործությունները ավելի ակնառու եղան հայկական ազգային դիվիզիայում: Բացի 261-րդ հրաձգային դիվիզիայից, որը մնացել էր թիկունքում ու կադրեր էր պատրաստում ռազմաճակատի համար, մյուսները մասնակցեցին պատերազմական գործողություններին: Առաջինը մարտի մեջ մտավ 390-րդ հայկական դիվիզիան, որը կազմավորվել էր Կերչում (Ղրիմ): 1942 թ. գարնանը, Կերչի պաշտպանության ահեղ օրերին, դիվիզիան օրիասական մարտեր մղեց, կորցրեց իր անձնակազմի կեսը: Զոհվեց նաև դիվիզիայի քաջակորով հրամանատար Սիմոն Զաքյանը: Թշնամին գրավեց Կերչը:

1942 թ. օգոստոս-սեպտեմբերից Կովկասյան նախալեռներից իրենց մարտական ուղին սկսեցին 89-րդ, 408-րդ և 409-րդ դիվիզիաները: 89-րդ դիվիզիայի հրամանատարն էր Արտաշես Վասիլյանը, իսկ 1943 թ. փետրվարից, նրա զոհվելուց հետո, սիրված զորավար Նվեր Սաֆարյանը: Յենց նրա հրամանատարությամբ դիվիզիան գործուն մասնակցություն ունեցավ Թամանյան թերակղզու ազատագրմանը, որի համար էլ գերագույն հրամանատարության հրամանով դիվիզիա-

յին շնորհվեց «Թամանյան» կոչումը: Այդ մարտերի ժամանակ էլ 1943 թ. սեպտեմբերին, անօրինակ սխրանք գործեց քաջարի ռազմիկ՝ Հունան Ավետիսյանը կրկնելով Ալեքսանդր Մատրոսովի հայտնի սխրանքը: Դիվիզիան աչքի ընկավ նաև Կերչի և Սևաստոպոլի ազատագրման համար մղված մարտերում: Նա իր մարտական հաղթական ուղին շարունակելով Ուկրաինայով, Բելոռուսով, Լեհաստանով, ավարտեց Բեռլինում: 409-րդ դիվիզիայի մարտական ուղին ավարտվեց Ավստրիայում և Սլովակիայում: 76-րդ լեռնահրաձգային դիվիզիան աչքի ընկավ Ստալինգրադի ճակատամարտում և 1943 թ. վերակազմվեց 51-րդ գվարդիական դիվիզիայի, որն արդեն ուներ ինտերնացիոնալ կազմ: Ստալինգրադի ճակատամարտում ռազմական բարձր վարպետություն հանդես բերեցին գեներալ-լեյտենանտ Յայկ Թումանյանը, գեներալ-մայոր Ասքանազ Կարապետյանը, գեներալ-լեյտենանտ Սերգեյ Գալաջևը, օդաչու Սերգեյ Բուռնազյանը և ուրիշներ:

1943 թ. ամռանը, Կուրսի ճակատամարտի ժամանակ, Օրյոլի ուղղությամբ թշնամուն կործանիչ հարված հասցրեց 11-րդ գվարդիական բանակը, որի հրամանատարն էր գեներալ-լեյտենանտ Յովիանես Բաղրամյանը: Յրամանատարական մեծ տաղանդի համար շուտով 1943 թ. նոյեմբերին, Յ. Բաղրամյանը նշանակվեց Առաջին Մերժբալթյան ռազմաճակատի հրամանատար, դարձավ ԽՍՀՄ-ի փառաբանված գորավարներից մեկը:

Կուրսի ճակատամարտում մեկ այլ ուղղությամբ գործում էր գնդապետ Յամագասապ Բաբաջանյանի տանկային բրիգադը: Նա և շուտով ստանում է համընդհանուր ճանաչում և նշանակվում զրահատանկային միավորման հրամանատար:

Խորհրդային զորքերի շարքերում հայ ռազմիկները և հրամանատարները գործուն մասնակցություն ունեցան նաև Ուկրաինայի ազատագրմանը: Դնեպրի անցման ժամանակ մեկուկես տասնյակ մարդ արժանացավ Խորհրդային Միության հերոսի կոչման: 1943 թ. նոյեմբերին ազատագրված Ուկրաինայի մայրաքաղաք Կիևի կայազորի պետ նշանակվեց գեներալ-մայոր Ս. Մարտիրոսյանը: Իսկ 409-րդ հայկական դիվիզիան Ուկրաինայի Կիրովոգրադ քաղաքի ազատագրման համար ստացավ «Կիրովոգրադյան» անունը: Ոչ պակաս նշանակալի էր հայերի դերը 1944 թ. Ղրիմի ու, մասնավորապես, Սևաստոպոլի ազատագրման գործում:

1945 թ. Յեռավոր Արևելքում ճապոնական միլիտարիստների դեմ էր գործում օդային բանակի հրամանատար, ավիացիայի մարշալ

(1944 թ.) Արմենակ Խանիքերյանցը (Խուլյակով): Նա մասնակցեց նաև դաշնակից պետությունների Յալթայի կոնֆերանսին որպես խորհրդական: Պատերազմի ավարտից մի քանի տարի անց, ցավոք, Ա. Խանիքերյանցն անհիմն բռնության գոհ դարձավ:

Պատերազմի ընթացքում ԽՍՀՄ ռազմածովային ուժերի շարքում մեծ ծառայություններ մատուցեց նավատորմի ծովակալ Յովհաննես (Իվան) Խսակովը: Նա սկզբում գործում էր Բալթիկ ծովում, իսկ հետո Սևծովյան նավատորմում:

Մեծ հայրենականում հայ ժողովրդի մասնակցությունն արտահայտվեց նաև թշնամու թիկունքում կազմակերպված պարտիզանական պայքարում: Դայ պարտիզանների մեծ մասը կազմում էին ռազմագերիները: Մեծ թվով հայ պարտիզաններ մարտնչեցին Ջյուսիսային Կովկասում, Ղրիմում, Ուկրաինայում, Բելոռուսում, Լենինգրադի մարզում: Միայն Ուկրաինայում գործող Ս. Կովպակի և Մ. Նաումովի պարտիզանական միավորումներում կրվում էին մոտ հազար հայ պարտիզաններ: Դայտնի պարտիզանական ջոկատներից էին «Դաղբանակ», Միկոյանի անվան, «Կարմիր աստղ» և այլն: Պարտիզանական ընդհատակյա աշխատանքում աչքի է ընկել Յենրիկ Զաքարյանը:

**Թիկունքը՝ Պատերազմին** Դայ ժողովրդի գորակցությունը պատերազմին մեծ չափով արտահայտվեց թիկունքի անդուլ աշխատանքով: Պատերազմի առաջին օրերից ռազմաճակատ մեկնողներին փոխարինում էին կանայք, տարեց մարդիկ, դեռահասները, որոնք կրեցին իրենց ուսերին ծանրացած հավելյալ աշխատանքի բեռը: Ինչպես Խորհրդային Միության թիկունքային մյուս տարածաշրջաններում, այնպես էլ Դայաստանում հիմնարկ-ձեռնարկությունների, ուսումնական, տնտեսական ու գերատեսչական այլ հաստատությունների ու կազմակերպությունների աշխատանքը արագորեն վերակառուցվեց պատերազմի պահանջներին համապատասխան: Ամենից առաջ հանրապետության արդյունաբերությունը սկսեց կատարել ռազմական պատվերներ ու արտադրել գենք, զինամթերք ու հանդերձանք: Ռազմական կարիքների համար Դայաստանում պատրաստվում էր շուրջ 300 տեսակի, այդ թվում՝ ռազմական արտադրանք (ավիաումբեր, նոնակներ, ականներ, հրացաններ և այլն):

Պատերազմի ընթացքում Դայաստանը խորհրդային քանակի համար պատրաստեց ու առաքեց 5 մլն 270 հազ. գույգ սպիտակեղեն,

350 հազ. կտոր զինվորական համագգեստ, 346 հազ. շինել, 41 հազ. կիսամուշտակ, 800 հազ. զույգ կոշիկ և այլն:

Յայաստանի աշխատավորներն իրենց խնայողություններից ու միջոցներից պաշտպանության և Կարմիր բանակի ֆոնդ մուծեցին 216 մլն ռուբլի: Նրանց միջոցներով կառուցվեցին մի շարք տանկային շարասյուներ, ավիաէսկադրիլիաներ, զրահագնացք և այլն: Ռազմաճակատ են ուղարկվել 1 մլն-ից ավելի զանազան տեսակի տաք հագուստ, 206 հազար անհատական ծանրոց որպես նվեր ռազմաճակատի մարտիկներին, և այլն: Յայաստանը մեծ օգնություն ցույց տվեց հանրապետությունում ապաստանած հազարավոր էվակուացված ընտանիքներին ու որբերին:

Ինչպես տեսնում ենք, իր կարողությունների, տնտեսական ու մարդկային հնարավորությունների համեմատ, շոշափելի է Խորհրդային Յայաստանի ու հայ ժողովոդի ներդումը Յայրենական պատերազմի հաղթանակի գործում:

Յարկ է մատնանշել, որ հայերի հայրենասիրական ներքին մղումներից մեկն էլ այն էր, որ պատերազմի ժամանակ գոյություն ուներ (ձևականորեն իրեն չեզոք հայտարարած, բայց իրականում հիտլերյան Գերմանիային համակրող) Թուրքիայի ներխուժման վտանգը:

### **Սփյուռքահայերի մասնակցությունը դատերազմին**

Երկրորդ աշխարհամարտում ֆաշիզմի ջախջախման գործում իր մասնակցությունն ունեցավ նաև սփյուռքահայությունը: Յակահիտլերյան խմբավորման երկրների գորքերի ու պարտիզանական առանձին խմբերի շարքերում կռվեցին մոտ 100 հազար սփյուռքահայեր: Միայն ԱՍՍ-ի զինված ուժերում կային շուրջ 20 հազար հայ ռազմիկներ: Մեծ թվով հայ մարտիկներ էին կռվում Անգլիայի և Ֆրանսիայի բանակներում: Իսկ շատերն էլ ընդգրկված էին դիմադրական-պարտիզանական պայքարում: Ֆրանսիայում ազգային հերոսի փառքով պսակվեց Փարիզի բազմազգ պարտիզանական ջոկատի հրամանատար, բանաստեղծ Միսակ Մանուչյանի անունը: Դիմադրական պայքարն ուժեղ էր նաև իտալիայում, Հունաստանում, Բուլղարիայում, Ռումինիայում և այլուր, որտեղ կռվում էին նաև հայ պարտիզանները: 1944 թ. հունիսին ֆաշիզմի զոհը դարձավ բուլղարահայ պարտիզանուիկի Յերմինե Ռազկրատյանը: Հունաստանի հակաֆաշիստական դիմադրական շարժման ընթացքում զոհվեցին 300 հայ քաջորդիներ:

Սփյուռքի մասնակցությունը հակաֆաշիստական պայքարին արտահայտվել է նաև նյութական-դրամական օգնության ձևով: Սփյուռքում հանգանակություն կազմակերպելու միջոցով ստեղծվեցին և խորհրդային ռազմաճակատ ուղարկվեցին «Սասունցի Դավիթ» երկու տանկային շարասյուները: Իրանահայերը միջոցներ հավաքեցին «Զորավար Բաղրամյան» տանկային շարասյան համար և այլն: Այս հանգանակությունների կազմակերպմանը մեծ աջակցություն ցույց տվեց հայ Եկեղեցին, որը, միաժամանակ, իր նյութական միջոցներից զգալի ներդրումներ կատարեց:

Բայց մյուս կողմից՝ սփյուռքահայության վերաբերմունքը պատերազմի խնդրում միանշանակ չի եղել: Սփյուռքահայության մի մասն էլ, ՀՀԴ կուսակցության գործիչների ղեկավարությամբ, աշխատեցին լոյալ վերաբերմունք ցուցաբերել Գերմանիայի նկատմամբ, որպեսզի ինչ-որ չափով ապահովեն խորհրդային ռազմագերիների շարքում գտնվող հայերի անվտանգությունը: 1942 թ. Բեռլինում հիմնվեց «Հայ ազգային խորհուրդ», որը գործում էր Գերմանիայի կողմից օկուպացված արևելյան շրջանների կոմիսարիատների Ենթակայության ներքո: Ազգային խորհրդի կազմում էին Ա. Աբեյյանը, Ա. Գյուլխանդայանը, Դ. Դավիթիսանյանը, Գ. Նժդեհը, Վ. Փափազյանը, Դ. Կանայանը (Դրո) և ուրիշներ: 1942 թ. ամռանը, գերմանական հրամանատարության թույլտվությամբ, հայ ռազմագերիներից կազմվեց Հայկական լեգեոն, որի համանատար նշանակվեց Դրոն: Հիմնականում գերմանական համակենտրոնացման ճամբարներում տեղակայված հայ ռազմագերիներից հավաքագրված լեգեոնն իր շարքերում ուներ շուրջ 8000 մարդ: Շուտով լեգեոնը ուղարկվեց Դրիմ ու Յուտիսային Կովկաս: Սակայն 1943 թ., երբ գերմանական բանակները ջախջախվեցին Ստալինգրադի մատուցներում, և թշնամին հետ շպրտվեց Յուտիսային Կովկասից, Հայկական լեգեոնում նույնպես սկսվեցին կազմալուծիչ գործընթացներ:

Ինչեւ, հայ որոշ քաղաքական շրջանակներ աշխատում էին այս ու այն ձևով շահել Գերմանիայի վստահությունն ու համակրանքը, մեղմել հայությանը սպառնացող վտանգը և հիտլերականների հնարավոր հաղթանակի դեպքում՝ ապահովել Հայաստանի ու հայ ժողովրդի անվտանգությունը: Պետք էր հաշվի առնել, որ այդ նույն ժամանակ Թուրքիան պատրաստվում էր միանալ գերմանական առանցքին: Դաշնակցությունը և «Հայկական լեգեոնը», ինչ-որ չափով շահելով Գերմանիայի համակրանքը, անկասկած, անում էին ամեն

ինչ զսպաշապիկ հագցնելու Թուրքիային Հայաստանի դեմ հնարավոր ագրեսիայի դեպքում:

Բայց խորհրդային վարչակարգին հակառակորդ սկյուռքահայ քաղաքական ուժերի հույսերը՝ հիտլերականների օգնությամբ «Հայաստանը կոմունիստական բռնատիրությունից ազատագրելու» վերաբերյալ, անհիմն էին: Ֆաշիստական Գերմանիան այն ուժը չէր, որ պետք է ազատություն բերեր Հայաստանին ու հայ ժողովրդին: Ավելին, հայ ժողովուրդն արդեն մեկ անգամ ճաշակել էր նախկին՝ կայզերական Գերմանիայի հասցրած դառնությունները, երբ առաջին աշխարհամարտի տարիներին, նրա անմիջական թողտվությամբ, երիտթուրքական կառավարության պարագլուխները իրագործեցին Հայոց Մեծ Եղեռնը Օսմանյան կայսրությունում:

### **Հայ ժողովրդի ավանդը: Հաղթանակի արդյունքները**

Պատերազմն ավարտվեց Խորհրդային Միության և հակաֆաշիստական խմբավորման մյուս դաշնակից երկրների (ԱՄՆ-ի, Անգլիայի, Ֆրանսիայի, Չինաստանի և այլն) հաղթանակով: Աշխարհամարտի առանցքը կազմող Հայրենական մեծ պատերազմն ամենից առաջ ռուս ժողովրդի մեծ հաղթանակն էր, որին իր արժանի ներդրումն ունեցավ նաև հայ ժողովուրդը: Մեծ հայրենականում հայ ժողովրդի ակտիվ մասնակցության ու անդուլ աշխատանքի լավագույն ապացույցը այն կորուստները, հերոսներն ու զորահրամանատարներն են, որ տվեց նա պատերազմի ընթացքում: Պատերազմի ժամանակ հայերն ունեցան 200 հազարից ավելի զոհ, 104 հայ ռազմիկներ արժանացան Խորհրդային Միության հերոսի կոչման, որոնց թվում՝ Նելսոն Ստեփանյանը և Շովիաննես Բաղրամյանը՝ կրկնակի, 27-ը դարձան փառքի երեք աստիճանների ասպետներ, մոտ 70 հազար մարտիկներ ու հրամանատարներ պարգևատրվեցին շքանշաններով ու մեդալներով:

Պատերազմի տարիներին ի հայտ եկավ հայ տաղանդավոր զորահրամանատարների մի ստվար փաղանգ: Դրամանատարական պոստեր էին զբաղեցնում ավելի քան 60 հայ զորավարներ, այդ թվում՝ մարշալներ Շովիաննես Բաղրամյանը, Արմենակ Խանփերյանը (Խուլյակով), Համազասպ Բաբաջանյանը և ԽՍՀՄ նավատորմի ծովակալ Շովիաննես Խակովը:

Այսպիսով, հայ ժողովուրդը գերծ չմնաց նաև երկրորդ աշխարհամարտից, կրեց մարդկային և նյութական զգալի կորուստներ և իր ավանդն ունեցավ ֆաշիզմի ջախջախման գործում:

## Գլուխ քսանմեկերորդ

### ՀԱՅԱՍՏԱՆ 1946-2000 թթ.

#### 1. Խորհրդային Դայաստանը 1946-1985 թթ.

##### Անցումը Խաղաղ աւխատանքի

Աշխարհամարտի տարիներին թեև Հայաստանը անմիջականորեն ռազմական գործողությունների բատերաբեմ չդարձավ, բայց և այնպես, ամբողջ Երկրի հետ միասին կրեց պատերազմի ողջ ծանրությունն ու արհավիրքները: Մեծ ջանքերի գնով հնարավոր Եղավ մի քանի տափա ընթացքում բուժել պատերազմի հասցրած վերքերը, վերականգնել տնտեսությունը, այն համապատասխանեցնել խաղաղ ժամանակաշրջանի պահանջներին, հասնել նախապատերազմյան մակարդակին և ավելի առաջ ընթանալ: Եթե արդյունաբերության բնագավառում վերականգնման գործընթացը բարեհաջող էր, ապա գյուղատնտեսությունը շարունակում էր հետ մնալ: Զգացվում էր պարենամբերքի և արդյունաբերական ապրանքների սուր կարիք, որը հնարավոր Եղավ մեղմել միայն 50-60-ական թվականներից:

##### Տնտեսական բարեփոխումների փորձեր

1953 թ. մարտի 5-ին նահացավ Ի. Ստալինը: Ժողովուրդը կարծես ազատ շունչ քաշեց: Խորհրդային պետության ղեկը ստանձնեց Նիկիտա Խրուշչովը: 50-ական թվականների կեսերից Երկրում նկատելի քայլեր արվեցին հասարակական կյանքի որոշ ազատականացման, օրինականության և իրավակարգի քիչ թե շատ անդապնդման ուղղությամբ: 1956 թ. փետրվարին կայացած ԽՄԿԿ XX համագումարում Կենտկոմի առաջին քարտուղար Ն. Ս. Խրուշչովի գեկուցմանբ բացահայտվեց ու քննադատվեց Ստալինի անձի պաշ-

տամունքը, և ուղիներ մատնանշվեցին դրա բացասական հետևանքները հաղթահարելու ուղղությամբ: Նախապատերազմյան և հետպատերազմյան շրջանում անհիմն բռնությունների ենթարկված բազմամիլիոն խորհրդային մարդիկ, այդ թվում նաև կուսակցական, պետական, տնտեսական, գինվորական ու մշակույթի գործիչներ, արդարացվեցին: Երկրի հասարակական կյանքի դեմոկրատացման այս առաջին նախաքայլերը որակվեցին որպես խրուշչովյան «հալոցք», այսինքն՝ ստալինյան բռնությունների «սառուցին» հաջորդեց հասարակական-քաղաքական կյանքի մեղմացումը, հալոցքը: Նախկինում բռնադատված միլիոնավոր անմեղ մարդիկ արդարացվեցին:

Զգալի փոփոխություններ տեղի ունեցան նաև տնտեսական քաղաքականության մեջ: Գյուղատնտեսության անկումը հաղթահարելու նպատակով, կոլեկտիվացման ժամանակներից ի վեր առաջին անգամ (1953 թ. սեպտեմբերից), ագրարային էական բարեփոխություններ կատարվեցին: Ավելի ուշ՝ 1958 թ., վերացվեցին մեքենատրակտորային կայանները (ՄՏԿ), և դրանց տեխնիկան պետական գներով վաճառվեց կոլտնտեսություններին:

50-ական թթ. կեսերին որոշ փոփոխություններ կատարվեցին նաև տնտեսության (արդյունաբերության) կառավարումը կատարելագործելու ուղղությամբ: Սրա իմաստն այն էր, որ տնտեսության կառավարման խիստ կենտրոնացված համակարգը մի փոքր ապակենտրոնացվեց: Փոքր-ինչ ընդլայնվեց հանրապետությունների և տնտեսական տարածաշրջանների ինքնուրույնությունը՝ տեղերում արդյունաբերության կառավարման, պլանավորման, ֆինանսավորման, աշխատուժի ու հումքի արդյունավետ օգտագործման և այլ հարցերում: Այդ նպատակով 1956 թ. կազմակերպվեցին, այսպես կոչված, ժողոտնիորիներ (սովորաբար կոչվում էին նաև կազմակերպություն): Հայաստանի ժողոտնիորիը միավորում էր հանրապետության մի քանի հարյուրի հասնող արդյունաբերական ձեռնարկությունները: Տնտեսության կառավարման ապակենտրոնացումը դրական ազդեցություն ունեցավ արդյունաբերության և շինարարության վրա: Տեղաշարժեր նկատվեցին մեքենաշինության, սարքաշինության և քիմիական արդյունաբերության մեջ:

Սակայն տնտեսության մեջ և հասարակական-քաղաքական կյանքում տեղի ունեցող այս փոփոխությունները, որոնք երբեմն ուղեկցվում էին նաև չկշռադատված ու կամային գործողություններով, երկար կյանք չունեցան: 60-ական թվականների սկզբներին կուսակցական-պետական դեկավարության վերին շրջանակներում խրուշչով-

յան բարեփոխությունների կուրսին ընդումություն առաջացավ: 1964 թ. հոկտեմբերին ԽՍՀՄ բարձրագույն ղեկավարության մեջ կատարվեց փոփոխություն. իշխանության ղեկին անցան Լ. Ի Բրեժնևը և նրան համախոհ կուսակցական-պետական պահպանողական բյուրոկրատիան, որոնք էլ շուտով կասեցրին Ն. Խրուչչովի առանձին առաջադիմական ձեռնարկները: 1965 թ. բրեժնևյան պահպանողական վարչակազմը վերականգնեց արդյունաբերության կառավարման կենտրոնացված համակարգը. վերացվեց տարածքային կառավարումը, լուծարվեցին ժողովնախորհները, և վերականգնվեցին ճյուղային նախարարությունները:

Արդեն 60-ական թվականներին ակնհայտ դարձավ, որ տնտեսական աճի տեմպերը դանդաղում են: Պարզ ուրվագծվում էր, որ կոշտ կենտրոնացման վրա հիմնված տնտեսավարման ու կառավարման վարչակամայական համակարգը աստիճանաբար իրեն սպառում է և այլևս չի ապահովում տնտեսական ու տեխնիկական կայուն առաջընթաց:

60-ական թվականների կեսերից, երկրի տնտեսական աճի տեմպերի դանդաղումը կասեցնելու, մարդկանց ու կոլեկտիվների աշխատանքային (անձնական) շահագրգուվածությունը բարձրացնելու, նյութական խթանումը ուժեղացնելու նպատակով տնտեսական բարեփոխումների նոր փորձեր արվեցին, սակայն այդ նույն վարչաբյուրոկրատական ապարատի դրսենորած անհետևողականության, պահպանողականության ու ձեռնարկված քայլերի կիսատ-պոատության պատճառով այդ ռեֆորմները հետագա զարգացում չստացան, մարեցին ու չտվեցին ցանկալի արդյունք: Ինքնին հասկանալի է, որ ԽՄԿԿ-ի ամբողջատիրության պայմաններում հնարավոր էլ չեղ իրագործել արմատական վերափոխություններ տնտեսության մեջ և հասարակական-քաղաքական կյանքում:

Արդեն 70-80-ական թվականներին խորհրդային հասարակությունը ապրում էր սոցիալ-տնտեսական և քաղաքական սքողված ճգնաժամ ու լճացում: Յնգամյակից հնգամյակ երկրի տնտեսական զարգացման տեմպերն ընկնում էին: Եղած ծավալային քանակական որոշ աճը, ժողովրդի նյութական պայմանների քիչ թե շատ բարելավումը ապահովվում էին գերազանցապես Միության վառելիքահումքային ռեսուրսների՝ արտասահմանում վաճառքի միջոցով:

**Արդյունաբերությունը** ԽՍՀՄ տնտեսական համալիրի մի մասնիկն էր նաև Հայաստանի տնտեսությունը, որը ղեկավարվում էր նույն օրենքներով ու մեթոդներով և կրում էր խորհրդային պլանային տնտեսությանը՝ «հասուն սոցիալիզմին» բնորոշ բոլոր երևույթները։ Հետպատերազմյան չորս տասնամյակներին Հայաստանի տնտեսությանը բնորոշ էին արդյունաբերականացման ավելի մեծ ծավալներ։ Այդ ժամանակամիջոցում կառուցվեցին տասնյակ ու հարյուրավոր նոր գործարաններ, ֆաբրիկաներ, էլեկտրակայաններ, ոռոգման համակարգեր։ Գործարկվեցին հանրապետության արդյունաբերության դեմքը որոշող այնպիսի խոշոր գործարաններ, ինչպիսիք էին Երևանի էլեկտրամեքենաշինական, կաբելի, ավտոդողերի, Քանաքեռի ալյումինի, Ժամացույցի, Պոլիվինիլացետատ, ռելեի, ԵՐԱԶ գործարանները, Կիրովականի քիմիական կոմբինատը և այլն։

Հայաստանի տնտեսության մեջ առաջացան արդյունաբերական նոր ճյուղեր՝ էլեկտրամեքենաշինական, հաստոցաշինական, ռադիոէլեկտրոնային, սարքաշինության և այլն։ Արդյունաբերության նոր ճյուղերի զարգացման հետևանքով մեծացավ ինժեներական կադրերի պահանջարկը։ ԵրՊի-ի մասնաճյուղեր բացվեցին Գյումրիում և Վանաձորում։

60-ական թվականներից տեղի ունեցավ արդյունաբերական ձեռնարկությունների կառուցման տարածական ընդլայնումը։ Հաշվի առնելով հանրապետության երկու-երեք (Երևան, Գյումրի, Վանաձոր) քաղաքներում ու հատկապես Երևանում արդյունաբերության մասշտաբային զարգացումը և դրա հետևանքով ուրբանիզացման, էկոլոգիական, սոցիալական հիմնահարցերի բարդացումը, արդյունաբերական ձեռնարկություններ սկսեցին կառուցվել և մասնաճյուղեր բացվել հանրապետության միջին ու փոքր քաղաքներում (Չարենցավան, Աբովյան, Սևան, Ջրագորան, Կամո, Ստեփանավան, Գորիս և այլն) և անգամ ավաններում ու գյուղերում։ Այդպիսի խելամիտ քաղաքականությամբ հնարավոր եղավ զգալի չափով լուծել նաև տեղերում ծագած աշխատուժի զբաղվածության հիմնահարցը։ Արդեն 70-ական թվականներից, արդյունաբերության կենտրոնացման և գիտության ու արտադրության ինտեգրացման պահանջով, ձևավորվեցին խոշոր գիտաարտադրական միավորումներ (ԳԱՄ)։ Դրանցից էին, օրինակ, «Նախրիտ», «Լույս», «Հայէլեկտրամեքենա» և այլ գիտաարտադրական միավորումներ։ Հայաստանի արդյունաբերությունը սպասար-

կում էր հսկայական միջոցներ կլանող համապետական ռազմաարդյունաբերական համալիրին; ԽՍՀՄ արդյունաբերության համալիրում գգալի տեսակարար կշիռ էին կազմում Հայաստանում արտադրվող շարժական էլեկտրակայանները, կոմպրեսորները, էլեկտրապոմպերը, լամպերը, ժամացույցները, կոնյակը և այլն: Մրցունակ մի շարք արտադրատեսակներ արտահանվում էին արտասահմանյան երկրներ:

Հետպատերազմյան տասնամյակներում գգալի ուշադրություն դարձվեց նաև էներգետիկ համակարգի զարգացմանը: Գործարկվեց Սևան-Հրազդան կասկադի խոշորագույն ՀԵԿ-ը՝ գյումուշի հիդրոէլեկտրակայանը: Սկսած 60-ական թթ. կառուցվածքային փոփոխություններ տեղի ունեցան հանրապետության էներգետիկ համակարգում: Մինչ այդ Հայաստանի էլեկտրաէներգիայի հիմնական աղբյուրը Սևան-Հրազդան կասկադն էր: Սակայն Սևանի մակարդակի աղետալի անկումն ու հանրապետության միակ խոշոր ջրային ավագանի կորստյան վտանգը հարց հարուցեցին, մի կողմից՝ կառուցել հզոր ջերմաէլեկտրակայաններ (Երևանում, Հրազդանում և Վանաձորում), որոնք պետք է աշխատեին դրսից ներմուծվող վառելիքով, մյուս կողմից՝ Սևանը փրկելու (ջրի մակարդակի իջեցումը կասեցնելու) համար կառուցել ջրատար թունել: Եվ պետք է ասել, որ կենտրոնական իշխանությունների (անձամբ Ն. Խրուչչովի) բարյացակամության շնորհիվ, ԽՍՀՄ Նախարարների խորհրդի որոշմամբ, 1961 թվականից սկսվեց Արփա-Սևան 48 կիլոմետրանոց, իր տեսակի մեջ եզակի, ջրատար թունելի շինարարությունը՝ Արփա գետի ջրերը Սևանա լիճ հասցնելու համար: Թունելի շինարարությունը տևեց ուղիղ 20 տարի և այն շահագործման հանձնվեց 1981 թ.:

Հայաստանի էներգետիկ համակարգում տեղի ունեցած մյուս փոփոխությունն այն էր, որ հաշվի առնելով հանրապետության էներգետիկ պաշարների սահմանափակությունը, 70-ական թվականներին կառուցվեց Մեծամորի ատոմային էլեկտրակայանը՝ Երկու բլոկով (1976 և 1979 թթ.): Դրանից հետո Հայաստանը լիուլի ապահովվեց էլեկտրական էներգիայով: Պետք է նշել, որ «Արփա-Սևանը» և Հայաստանի ատոմային էլեկտրակայանը (ՀԱԷԿ), իրենց նախագծային-շինարարական թերություններով, վտանգավորությամբ, մինչև օրս էլ, տրվող գնահատականների հակասականությամբ հանդերձ, հետպատերազմյան տասնամյակների խոշորագույն կառույցներն են:

Աղուհանդերձ, հետպատերազմյան տարիներին Հայաստանի բազմացյուղ արդյունաբերության քանակական փոփոխությունների կող-

քին չեն նկատվում որակական լուրջ տեղաշարժեր: Ինչպես Միության մյուս տարածաշրջաններում, այնպես էլ Հայաստանում արդյունաբերությունը զարգանում էր գերազանցապես էքստենսիվ՝ ծավալային, քանակական աճի ուղիով: Նույնպիսի բնույթ ուներ կրթությունը, այդ թվում՝ բուհականը: Էքստենսիվ զարգացումն ավելի սրեց սոցիալական ոլորտի հիմնահարցերը: Արտադրության մեջ ձեռքի աշխատանքի տեսակարար կշիռը Միության միջինից ավելի բարձր էր, կազմում էր 40-50 տոկոս, իսկ թողարկված արտադրանքը որակական ցուցանիշներով անմրցունակ էր, առանձին դեպքերում՝ պարզապես խոտան: Թեև 1965-1985 թթ. ընթացքում արտադրության ծավալն աճեց չորս անգամ, բանվոր դասակարգի թիվը հասավ շուրջ մեկ միլիոնի, բայց և այնպես դրանք չապահովեցին տնտեսության կայունություն և սոցիալիզմի վերջնական հաղթանակ:

Յնգամյակից հնգամյակ Հայաստանում էլ կազմվում էին խիստ հրահանգավորված ու քարոզչական նպատակներ հետապնդող վիճակագրական ժողովածուներ: Մեզանում նույնպես ձևավորվեց ուռուցած կառավարչական ապարատը: Ազատորեն գործում էր աշխատանքի հավասարեցման և վարձատրության համահարթեցման խորհրդային «մկրատը»: Երբեմն նույնիսկ վատ, անորակ աշխատողը լավ ու բարեխիղճ աշխատողից ավելի բարձր էր վարձատրվում: Գնալով խորանում էր սոցիալ-տնտեսական ճգնաժամը:

Միաժամանակ անհրաժեշտ է ընդգծել, որ հետպատերազմյան ժամանակաշրջանում հանրապետության տնտեսական զարգացումը որոշակի հաջողություններ ունեցավ: Իրենց բոլոր թերություններով հանդերձ, կառուցված և շահագործման հանձնված մի շարք արդյունաբերական, շինարարական և տրանսպորտային հզորություններ հիմքեր ստեղծեցին ապագա անկախ Հայաստանի ինքնուրույն գոյատևման համար:

Նշված տասնամյակներին հանրապետության էկոնոմիկայի առաջընթացին զգալիորեն նպաստեց Գրիգոր Շարությունյանի, Սուրեն Թովմասյանի, Յակով Զարոբյանի, Անտոն Քոչինյանի, Բաղալ Մուրադյանի, Կարեն Դեմիրճյանի, Ֆադեյ Սարգսյանի, Ալեքսան Կիրակոսյանի կազմակերպչական-դեկավար աշխատանքը:

**Գյուղատնտեսությունը** Ավելի բարդ էր վիճակը գյուղատնտեսության բնագավառում: Նետպատերազմյան տարիներին տակավին ծանր էին ազգաբնակչության տնտեսական ու

սոցիալական պայմանները: Տարիներ պահանջվեցին, մինչև որ վերացվեցին մթերքների բաշխման քարտային և պարտադիր պետական մթերումների համակարգերը: Հանրապետության գյուղատնտեսությունը շարունակում էր հետ մնալ, ինչը պայմանավորված էր գյուղացիության սեփականազրկվածությամբ, կենտրոնացված պլանավորմամբ, չնչին գներով հարկադիր մթերումներով և, ընդհանրապես, սոցիալիստական արտադրատնտեսական հարաբերություններով: Գյուղացին շահագրգոված չէր հանրային տնտեսության զարգացմամբ: Նա ավելի մեծ եկամուտ էր ստանում իր փոքրիկ տնամերձ հողամասից, քան մեծատարած հանրային տնտեսությունից: Գյուղացիության մի մասը, հատկապես երիտասարդությունը, լքում էր գյուղը, հեռանում քաղաք, այլ վայրեր, դիմում արտագնա աշխատանքների: Հանրապետությունից տարեկան շուրջ 20 հազար մարդ դիմում էր արտագնա աշխատանքի դեպի ԽՍՀՄ տարբեր տարածաշրջաններ:

Հետպատերազմյան տարիներին թեև իրականացվեցին հողաշխական ու մելիորատիվ աշխատանքներ, սակայն այդ նույն ժամանակ տասնյակ հազարավոր հա արգավանդ հողեր կամայական կերպով հատկացվեցին արտադրական համալիրներ և բնակելի գանգվածներ կառուցելու համար:

Անցած տասնամյակներին Հայաստանում իրականացվեց սոցիալ-ժողովրդագրական ոչ կշռադատված քաղաքականություն: Առանձնապես գյուղի ու գյուղացիության սոցիալական ոլորտի հիմնախնդիրներին ցուցաբերվում էր «մնացորդային մոտեցում»: Բավական է հիշեցնել, որ վարչական եղանակով 140 գյուղեր (նախալեռնային և լեռնային) «անհեռանկարային» պիտակով լքվեցին:

Մյուս կողմից՝ 60-70-ական թվականներին ժողովրդի դրամական և նյութական պայմանների որոշակի բարելավում նկատվեց: Այդ շրջանում լայն թափ ստացավ բնակարանային շինարարությունը, այդ թվում գյուղական վայրերում, նկատվեց ժողովրդի կենսամակարդակի ու բարեկեցության աճ: Բայց այդ բարելավումը երևութական ու ոչ տևական էր, քանզի իր հիմքում չուներ սոցիալ-քաղաքական և արտադրա-տնտեսական անուր կրվաններ: Կուսակցությունն ու կառավարությունը երկրում պարենային հիմնախնդրի լուծնան ուղղությամբ բազմաթիվ որոշումներ ու ծրագրեր ընդունեցին, բայց այդպես էլ խնդիրը մնաց չլուծված: Կյանքը ցույց տվեց, որ խորհրդային պլանային տնտեսական համակարգը ի վիճակի չէ լուծելու կենսականորեն անհրաժեշտ անգամ պարզունակ այդ խնդիրը: 80-ական թվականներից

կրկին սկսեց գործածության մեջ դրվել սոցիալիզմին այնքան բնորոշ մթերքների բաշխման նորմավորված կտրոնային համակարգը: Այս ամենի հիմնական պատճառն այն էր, որ գյուղացին օտարված էր հողից:

**Ճգնաժամի խորացումը:  
Սոցիալիզմի խորհրդային  
մոդելի սնանկությունը**

70-ական թվականներից գնալով խորացում էր ճգնաժամը խորհրդային հասարակության ներսում: Լճացման երևույթները, բացասական գործընթացները

ակնհայտ դրսերվում էին կյանքի բոլոր ոլորտներում՝ քաղաքական, տնտեսական, տեխնոլոգիական, սոցիալական, բարոյական: 70-80-ական թվականներին ավելի մեծ չափեր ընդունեցին կաշառակերությունը, հովանավորչությունը, կոռուպցիան, հափշտակությունները, ստվերային էկոնոմիկան, ղեկավար աշխատողների բարոյական անկումը և այլ երևույթներ, որոնք էլ ավելի խորացրին սոցիալ-տնտեսական ճգնաժամը և լճացման երևույթները:

Զգացվում էր, որ այլևս հնարավոր չէ ապրել և կառավարել նախկին ձևով: Ակնհայտ դարձավ, որ սոցիալիզմի լենինյան կաղապարը և երկիրը շուրջ 70 տարի միահեծան կառավարող կուսակցական-պետական վարչաբյուրոկրատական վերասերված համակարգը իրենց արդեն սպառել են:

Խորհրդային հասարակության փորձը վկայում է, որ վարչահրամայական համակարգի վրա հիմնված հասարակարգը կենսունակ չէ, այն վերջիվերջո դատապարտված է կործանման: Դասկանալի է, որ նման համակարգի պայմաններում, որքան էլ բարձր լինեին «կոմունիստական պայծառ ապագայի մասին» քարոզչական կոչերը, միևնույն է, դրանք ի զորու չեին երկար ժամանակ խանդավառել ու խթանել մարդկանց, աշխատավորական կոլեկտիվների նախաձեռնությունը և շահագրգուվածությունը: Այդ շահագրգուվածության, սրտավացության դեֆիցիտն էլ ի վերջո նպաստեց կոմունիստական ամբողջատիրության փլուզմանը: Աշխատավոր մարդը այդպես էլ օտարված մնաց արտադրության միջոցների՝ համաժողովրդական (պետական) հայտարարված սեփականությունից, էլ չենք ասում, որ ժողովրդավարության բացակայության պայմաններում նա օտարված էր ռեալ իշխանությունից (երկրի կառավարումից) և հասարակական ամբողջական արդյունքի բաշխումից: Այդպես էլ օդից կախված մնացին 20 տարում կոմունիզմ կառուցելու մասին մտացածին ծրագրերը:

**Ազգային նոր  
զարթոնքի  
նախադրյալները**

Պետք է նշել, որ այս ամենի կողքին, սկսած 60-ական թվականներից, Հայաստանում նկատվեցին ազգային զարթոնքի որոշ նախադրյալներ, որոնք զգալի չափով կապված էին խրուչչովան ժամանակաշրջանի մեղմացումների ու, մասնավորապես, ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Յակով Զարոբյանի (1960-1966 թթ.) ազգաշահ գործունեության հետ:

Ազգային ինքնագիտակցության զարթոնքին մեծապես նպաստեցին արձակագիր-հրապարակախոս Յրազյա Քոչարի, բանաստեղծներ Յովհաննես Շիրազի, Պարույր Սևակի, Սիլվա Կապուտիկյանի, պատմաբան Զոն Կիրակոսյանի, լրագրող Զորի Բալյայանի և ուրիշների ստեղծագործությունները, աշխատություններն ու գործունեությունը:

Երկրորդ աշխարհամարտին հաջորդած չորս տասնամյակները, իրենց բոլոր թերի կողմերով հանդերձ, հայ ժողովրդի կյանքում նշանավորվեցին որպես խաղաղ, ստեղծագործ աշխատանքի տարիներ: Կառուցվեցին ու բարեկարգվեցին բազմաթիվ գյուղեր և քաղաքներ, նոր շնչառություն ստացավ հայոց իինավուրց քաղաքանայր Երևանը: Հանճարեղ Թամանյանի նախագծով իրականացված քաղաքի կենտրոնական մասի հոյակերտ շինարարությունը, Մ. Մաշտոցի անունը կրող Մատենադարանը և համանուն պողոտան, «Յրազդան» մարզադաշտը և մարզահամերգային համալիրը, նրանից ոչ հեռու գտնվող Մեծ եղեռնի զոհերի անզուգական հուշահամալիրը, ինչպես նաև Սարդարապատի ու Բաշ-Ապարանի հերոսամարտերին նվիրված անձեռակերտ թվացող հուշարձանները խորհրդանշեցին հայ ժողովրդի ազգային ոգու վերածնունդը:

60-ական թվականներին հայ ազգային ինքնագիտակցության զարթոնքին իրենց նպաստը բերեցին շախմատի՝ համաշխարհային թագի համար մրցապայքարում հայազգի գրոսմայստեր Տիգրան Պետրոսյանի տարած փայլուն հաղթանակները և երկու անգամ անընդմեջ աշխարհի չեմպիոն հոչակվելը:

Ազգային ոգու հուժկու պոռթկում էին 1965-ի ապրիլին Հայոց մեծ եղեռնի 50-ամյա տարեղարձին նվիրված իրադարձությունները: Խորհրդային երկրում առաջին անգամ, այդ ողբերգական տարելիցի կապակցությամբ, ապրիլի 24-ին Երևանում համազգային մեծ ցույց կազմակերպվեց, որը չլսված դեպք էր խորհրդային երկրի պատմության մեջ: Պատահական չէր, որ արցախյան շարժման ներկա փուլում ակ-

տիվ գործունեության ասպարեզ դուրս եկած հայ մարդկանցից շատերը անցել էին Վերոհիշյալ օրերի քաղաքական պայքարի բովով: 1967 թ. Երևանում բացվեց Մեծ Եղեռնի զոհերի հուշարձանը:

Դայ ժողովրդի մի քանի սերունդների ներկայացուցիչների հոգում անջնջելի հետք թողեց 1968 թ. աշնանը Երևանի հիմնադրման 2750-ամյակին նվիրված տոնակատարության արարողությունը, որին մասնակցեցին նաև բազմաթիվ սփյուռքահայեր ու տարբեր երկրներից ժամանած հյուրեր: Արդարն, սա ոչ միայն տուրք էր մեր պատմական հարուստ անցյալին, այլև ազգային զարթոնքի ինքնադրսնորման արտահայտություն:

Պակաս հաջողությամբ չանցան նաև հաջորդ տարի հանճարեղ Թումանյանի և Կոմիտասի 100-ամյա հոբելյաններին նվիրված արարողությունները: Դիրավի, 60-ական թթ. կարելի է բնորոշել որպես ազգային զարթոնքի տարիներ: Այդ ընթացքում ձևավորվեց ազգային մտածողությամբ մի նոր սերունդ, որը հետագայում 'կարողացավ գիտակցորեն և համարձակորեն գնահատել անկախ պետականության գաղափարը, առաջ քաշել Դայ դատի, ցեղասպանության, Լեռնային Ղարաբաղի և այլ հիմնահարցեր: Դեռ այն ժամանակներում ստեղծվեցին Դայաստանի անկախության գործին նվիրված քաղաքական և մշակութային բնույթի այլախոհ ընդհատակյա խմբակներ ու կազմակերպություններ: Այդպիսիներից էր, օրինակ, Ազգային միացյալ կուսակցությունը (ԱՄԿ): 1960-1980-ական թվականներին, հակախորհրդային գործունեության համար, իբրև քաղբանտարկյալ դատապարտվել են շուրջ 100 մտավորականներ:

## 2. Հայաստանը «Վերակառուցման» Ժամանակաշրջանում (1985-1991 թթ.)

**Վերակառուցման հոչակումը** 1985 թ. մարտին ԽՍՀՄ բարձրագույն ղեկավարության կազմում նորից փոփոխություն կատարվեց: ԽՍԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար ընտրվեց Մ. Գորբաչովը: Քաղաքական նոր ղեկավարությունը, գիտակցելով Երևան տիրող ճգնաժամային իրավիճակը, վերջին ճիգը գործադրեց փրկելու սոցիալիզմն ու խորհրդային կայսրությունը վերջնական կործանումից: 1985 թ. ապրիլին հօչակվեց Երկրի սո-

ցիալ-տնտեսական զարգացման արագացման և խորհրդային հասարակության, այսպես կոչված, արմատական վերակառուցման ուղղագիծը: Սակայն «վերևից» հոչակված այդ «վերակառուցումը» մնաց լոկ օդից կախված հայտարարություն և չկենսագործվեց:

Գորբաչովյան վերակառուցումը ("պերեստրոյկա") ի սկզբանե դատապարտված էր ձախողման այն պարզ պատճառով, որ փորձում էր վերևից երկրի սոցիալ-տնտեսական զարգացման արագացում ու վերակառուցում իրագործել՝ պահպանելով նախկին, իրեն սպառած տնտեսական և քաղաքական կարգերը: Իսկ այն, ինչ վերակառուցման անվան տակ արվում էր այդ ուղղությամբ, ընդամենը գոյություն ունեցող համակարգերի գեղահարդարում էր: Ամենագլխավորը, քաղաքական տեսակետից, այն էր, որ շարունակվում էր ԽՄԿԿ-ի միահեծան ու անբաժան իշխանությունը, և նա մտադրություն չուներ հրաժարվել կամ նույնիսկ փոքր-ինչ կիսել այդ իշխանությունը քաղաքական որևէ այլ ուժի հետ: Իսկ տնտեսական առումով մարդն այդպես էլ սեփականության տեր չդարձավ և շարունակեց օտարված մնալ այդ սեփականությունից: Վերակառուցման դժվարին տեղամասերից էր գյուղատնտեսությունը: Խորհրդային պետությունն իր գոյության 70 տարում այս բնագավառին վերաբերող տասնյակ ծրագրեր ու որոշումներ ընդունեց, բայց այդպես էլ չկարողացավ սեփական ազգաբնակչությանն ապահովել անհրաժեշտ պարենամբերքով: «Վերակառուցման» անվան տակ իրականացվող կիսատ-պռատ ռեֆորմները ավելի խորացրեցին երկրի տնտեսական և քաղաքական ճգնաժամը:

## **Կացությունը Հայաստանում**

«Վերակառուցման» այս նույն «գործընթացները» տեղի էին ունենում Հայաստանում, թերևս ավելի վատթար ձևերով: Պատճառն այն էր, որ հանրապետության կուսակցական-պետական ղեկավարությունը դրսևորեց ավելի մեծ պահպանողականություն և անտարբերություն կյանքի բոլոր ոլորտների նորացման հանդեպ: Դրա համար էլ Հայաստանը ընթանում էր «վերակառուցման» ամենահետին շարքերում: Եվ պատահական չէր, որ վերևից թույլատրված «վերակառուցումը» հանրապետությունում տեղապտույտ էր տալիս, հանդիպում էր կուսակցական-պետական բյուրոկրատիայի ավելի մեծ դիմադրությանը:

80-ական թթ. կեսերից Հայաստանում լճացման և ստվերային երևույթները ավելի խոր դրսևորվեցին: Շուտով սրան գումարվեցին մի

շարք նոր երևույթներ 1988 թ. սկսված Արցախյան շարժումը, Սպիտակի երկրաշարժը, էկոլոգիական աղետալի վիճակը, մի շարք կարևորագույն գործարանների և ԱԵԿ-ի փակումը, շրջափակումները, հարյուր հազարավոր փախստականները, սոցիալական անարդարությունները և այլն, որոնք ծայրաստիճան սրեցին հանրապետության սոցիալ-տնտեսական և քաղաքական առանց այն էլ ծանր կացությունը: Հայաստանի կոմունիստական ղեկավարությունը ճիշտ չկողմնորոշվելով փոփոխված իրադրության մեջ՝ իր մեջ ուժ չգտավ գլխավորելու ներքեւից սկիզբ առած ժողովրդական ինքնաբուխ շարժումը:

### **1988 թ. Սովորակի Երկրաշարժը**

1988 թ. դեկտեմբերի 7-ին Հայաստանի հյուսիսարևմտյան շրջաններում տեղի ունեցավ բացառիկ ուժեղ (9 բալ հզորությամբ՝ Ռիխտերի սանդղակով) երկրաշարժ, որը խլեց տասնյակ հազարավոր (25 հազ.) մարդկանց կյանք: Միաժամանակ ավերիչ երկրաշարժը փլատակների վերածեց տասնյակ քաղաքներ ու գյուղեր: Անօթևան մնաց մոտ կես միլիոն մարդ: Դադարեցին գործելուց ավելի քան 170 արդյունաբերական ձեռնարկություններ: Տարերային աղետը Հայաստանի տնտեսությանը հասցրեց, այն ժամանակվա գներով, 13 մլրդ ռուբլու վնաս: Աղետի լուրը տարածվեց ամբողջ աշխարհով մեկ, և ժողովուրդները օգնության ձեռք մեկնեցին վշտահար հայությանը: Հայաստանին օգնության հասան խորհրդային Միության բոլոր հանրապետությունները, արտասահմանյան պետությունները, սփյուռքահայությունը, անհատ բարեգործներ ու միջազգային կազմակերպություններ: Աղետի գոտին վերածվեց շինհրապարակի: Չնայած պլանավորվել էր երկու տարրում բուժել երկրաշարժի հասցրած վերքերը և վերականգնել ավերված շինությունները, սակայն կյանքը ցույց տվեց, որ այդ խոստումները իհմնավոր չեին: Խորհրդային Միությունում արդեն սկսված բազմաբարդ գործընթացները ծգձգեցին, ապա հետին պլան մղեցին վերականգնման աշխատանքները: Աղետի գոտու վերականգնման իհմնական բեռն ընկավ Հայաստանի վրա: Երկրաշարժից հետո, հոգեկան մեծ ցնցում ու վախ ապրած ժողովրդի և քաղաքական նպատակներ հետապնդող որոշ ուժերի պահանջով, փակվեց Հայաստանի ատոմակայանը: Բայց հետագայում, հանրապետության աղետալի էներգետիկ ծգնաժամի թելադրանքով, կոկին հարց բարձրացվեց՝ վերագործարկել Հայկական ԱԵԿ-ը:

## **1988 թ. Սովորակի Երկրաշարժը**

Վերակառուցման տարիներին տեղի ունեցավ հասարակության քաղաքական կյանքի զարգությունը, ցույցեր, միտինգներ, հանրահավաքներ, գործադրություններ և անգամ՝ զինված ընդհարումներ, առաջացան համազգային շարժումներ ու ճակատներ: Վերակառուցումը տվեց, թերևս, միայն հասարակական կյանքի որոշ ազատականացում հրապարակայնություն, բացախոսություն, քննադատության ազատություն: Հատկանշականն այն է, որ որքան երկրում խորանում էին ժողովրդավարության ու դեմոկրատացման գործընթացները, այնքան Կենտրոնը կորցնում էր դիրքերն ու թուլանում: Սրվեցին հակասությունները կենտրոնի և ազգային շրջանների միջև: Ասպարեզ նետվեցին ազգամիջյան հիմնահարցերը: ԽՄՀՄ-ը կանգնեց փլուզման վտանգի առաջ: Առաջինը փլուզվեց հետպատերազմյան տարիներին խորհրդային Միության ռազմաքաղաքական և գաղափարական էքսպանսիայի հետևանքով ստեղծված սոցիալիզմի լագերը, իսկ 1991 թ. դեկտեմբերին, նախկին խորհրդային Միության փլատակների վրա 11 ինքնիշխան հանրապետությունների, այդ թվում նորանկախ Հայաստանի Հանրապետության ստորագրած համաձայնագրով, հիմնվեց Անկախ Պետությունների Համագործակցությունը (ԱՊՀ): Անգո պետության ղեկավար Մ. Գորբաչովը ստիպված էր ինքնաբացարկ տալ: Դրանով իսկ վերջ տրվեց ԽՄՀՄ-ին և թվացյալ «Վերակառուցմանը»:

### **3. Արցախյան շարժումը (1988-2000 թթ.)**

#### **Շարժման նախաղաւությունը**

Վերակառուցման քաղաքականության անխուսափելի հետևանքներից մեկը եղավ ազգային ինքնագիտակցության վերելքը և Արցախյան շարժման ծավալումը:

Դիշեցնենք, որ ՈԿ(թ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի 1921 թ. հուլիսի 5-ի անօրինական որոշմամբ Լեռնային Ղարաբաղը միացվել էր Ադրբեյջանին: 1923 թ. վարչական բաժանումով ստեղծվել էր Լեռնային Ղարաբաղի Ինքնակար Մարզ (ԼՂԻՄ), և տեղի 94 տոկոս կազմող հայ ազգաբնակչությունը շուրջ 70 տարի, փաստորեն, ընկել էր Ադրբեյջանի գաղութային լծի տակ: Սակայն արցախահայությունը լուսումունջ չկրեց այդ լուծը: Նա ժամանակ առ ժամանակ բողոքում էր, ընդվզում, պահանջում արդարության մերականգնում:

## **Արցախահայության դահլիճը**

Վերակառուցման ընձեռած ազատականացումը, հրապարակայնությունը և բացախսությունը արցախահայությանը հնարավորություն տվեց ամբողջ թափով խոսել նախորդ 70 տարիներին Բաքվի հշխանությունների կողմից իրենց նկատմամբ գործադրած ազգային խտրականության, ստորացումների ու բռնությունների մասին, հրապարակավ ցանկություն հայտնել՝ դուրս գալու Ադրբեջանի կազմից և միանալու Մայր Հայաստանին: 1988 թ. փետրվարի 20-ին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի պատգամավորական խորհուրդը, հենվելով ազգերի ինքնորոշման սահմանադրական իրավունքի վրա, որոշում ընդունեց ԼՂԻՄ-ը Ադրբեջանի կազմից դուրս բերելու և Հայաստանին միացնելու մասին: Փաստորեն, սրանով սկիզբ առավ Արցախյան շարժումը:

## **Սումգայիթի ոճագործությունը**

Ողջ հայ ժողովուրդը միահամուռ սատար կանգնեց Արցախի իր հայրենակիցների արդար պահանջին: Սկսվեց Արցախյան շարժումը, որը թե Արցախում և թե Հայաստանում կրում էր բացառապես խաղաղ ու քաղաքակիրթ բնույթ՝ ցուցերի, միտինգների, հանրահավաքների, դասադրությունների, գործադրությունների և այլ ձևերով: Հայ ժողովուրդը, հավատալով գորբաչովյան «Վերակառուցմանը», ցուցերի ու հանրահավաքների էր դուրս գալիս՝ «Լենին-կուսակցություն-Գորբաչով», «Միացում» և այլ լոգունգներով: Սակայն այդ որոշումը սվիններով դիմավորեցին թե Խորհրդային Ադրբեջանը և թե Կենտրոնական (Մոսկվայի) հշխանությունները: Շարժումը որակվեց որպես «ծայրահեղական» և «ազգայնական»: Փաստորեն, վերջիններիս թողտվությամբ և լուր համաձայնությամբ, 1988 թ. փետրվարի վերջին Ադրբեջանի Սումգայիթ քաղաքում տեղի ունեցավ հայ ազգաբնակչության ջարդ, որի հետևանքով վայրագ ամբոխի կողմից տանջամահ արվեց շուրջ 30 հայ, ծանր վիրավորվեց մի քանի հարյուր մարդ, կատարվեց մեծ թալան և ավեր: Սումգայիթի այս ոճագործությանը հետագայում հաջորդեցին Գյանջայի, Բաքվի, Շամխորի, Գետաշենի, Խանլարի և այլ վայրերի հայության կոտորածները և արտաքսումը: Սկսվեց հայության զանգվածային բռնագաղթը: Համանան գաղթ տեղի ունեցավ նաև Հայաստանում: Այստեղից արտագաղթեց ադրբեջանցի ազգաբնակչությունը:

## **Ազգային ազատագրական դայլարի վերելքը**

Սումգայիթի, Բաքվի, Գյանջայի և այլ շրջանների վայրագ բռնությունները չահարեկեցին հայ ժողովրդին և հետ չկանգնեցրին նրան իր արդարացի պահանջից: Ընդհակառակը, գնալով շարժումը վերելք ապրեց: Արցախյան շարժումը կազմակերպելու և ղեկավարելու նպատակով 1988 թ. մայիսին ստեղծվեց «Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտե»՝ «Ղարաբաղ կոմիտե», որի կազմի մեջ մտան Վ. Մանուկյանը, Լ. Տեր-Պետրոսյանը, Ռ. Ղազարյանը, Դ. Վարդանյանը, Բ. Արարքոյանը և ուրիշներ: Արցախյան շարժումը կրում էր համաժողովրդական բնույթ, չնայած Կենտրոնը շարունակում էր այն որակել որպես մի խումբ մարդկանց ծայրահեղական շարժում: Զորքեր մտցվեցին Երևան ու Ստեփանակերտ: Այս ինքնաբուխ շարժումը որևէ կերպ ղեկավարելու և ուղղություն տալու անընդունակություն ցուցաբերեցին Հայաստանի պաշտոնական իշխանությունները: Շարժումը գլխատելու նպատակով, օգտագործելով երկրաշարժի «ընձեռած բարեպատեհ հնարավորությունը», Կենտրոնի հրահանգով 1988 թ. ղեկտեմբերին ձերբակալվեցին և վեց ամսով մուկովյան բանտերում արգելափակվեցին «Ղարաբաղ կոմիտեի» անդամները: Սակայն համաժողովրդական շարժումը չթուլացավ: Ժողովուրդը պահանջում էր ազատ արձակել Ղարաբաղյան շարժման ապօրինաբար ձերբակալված ղեկավարներին և օրինական լուծում տալ Ղարաբաղյան հիմնահարցին: Ի պաշտպանություն հայ ժողովրդի՝ իրենց ձայնը բարձրացրին ռուս մտավորականներ՝ Ա. Սախարովը, Ե. Բոնները, Գ. Ստարովոյտովան, Մ. Դուդինը, Ա. Նույկինը և ուրիշներ: Բայց կենտրոնական իշխանությունները, Մ. Գորբաչովի գլխավորությամբ, մտադրություն չունեին Ղարաբաղյան հիմնահարցը դրականորեն լուծելու, քանզի նման նախադեպը կարող էր վարակիչ ու վտանգավոր դառնալ կայսրության մյուս տարածաշրջանների համար, որտեղ նույնպես սկսվել էին ազգային-ազատագրական շարժումները: ԽՍՀՄ բարձրագույն իշխանությունները խուսանավման նպատակով փորձեցին ինքնավար մարզի կառավարման կարգավիճակը փոխել (ստեղծելով Հատուկ կառավարման կոմիտե՝ Ա. Վոլսկու գլխավորությամբ), բայց դա սպասված արդյունքը չտվեց:

## **Չհայտարարված դատերազմ**

1991 թ. դեկտեմբերին, ԽՍՀՄ փլուզումից և ինքնիշխան հանրապետությունների հռչակումից հետո, Արցախյան շարժումը ստացավ բացահայտ ռազմական դիմակայության բնույթ: Յայ-ադրբեջանական տագնապը վերաճեց իսկական պատերազմի: Նորանկախ Ադրբեջանի Յանրապետության արագ փոփոխվող իշխանությունները, խաղարկելով «արցախյան խաղաքարտը», աշխատեցին բոնի ուժի միջոցով հայթափ անել հայոց իինավուրց երկրամասը և վերանվաճելով՝ ենթարկեցնել Բաքվին:

Թշնամին գրավեց մի շարք տարածքներ, այդ թվում՝ հայաբնակ Շահումյանի շրջանը: Օրնիբուն ռմբակոծվում էին մայրաքաղաք Ստեփանակերտը և այլ մեծ ու փոքր բնակավայրեր: Արցախահայությունը կյանքի ու մահվան կովի ելավ՝ պաշտպանելու իր հողն ու ազատ ինքնորոշման իրավունքը: Ստեղծվեցին ինքնապաշտպանական ջոկատներ: Արցախցիներին զորավիգ կանգնեց նորանկախ Յայաստանը, համայն հայությունը: Արցախի և Յայաստանի շրջափակումը Ադրբեջանի և նրա ցեղակից Թուրքիայի կողմից ստացավ համընդհանուր ու կայուն բնույթ: Ադրբեջանի իշխանությունները, Յայաստանը պատերազմի մեջ ներքաշելու և նրան ագրեսոր ներկայացնելու նպատակով, զինված հարձակումներ սկսեցին նրա սահմանների վրա:

Մինչ այդ, Յայաստանի սահմանները պաշտպանելու ու հակառակորդին հակահարված տալու նպատակով ստեղծվել էին աշխարհագորայինների ընդհատակյա խմբեր ու ջոկատներ, որոնք դարձան հայկական ապագա բանակի միջուկը: Յայոց ազգային բանակի ու երկրապահ կամավորականների ջոկատների ստեղծման գործին ակնառու ծառայություններ մատուցեցին Վազգեն Սարգսյանը, Սերժ Սարգսյանը, Ալբերտ Բագեյանը, Գևորգ Բաղդասարյանը, Աշոտ Նավասարդյանը, Աստվածատուր Պետրոսյանը, զորավարներ Գուրգեն Դարիբալթայանը, Նորատ Տեր-Գրիգորյանը, Միքայել Հարությունյանը, Արկադի Տեր-Թաղենոսյանը (Կոմանդոս), Սամվել Բաբայանը և ուրիշ ռազմական գորիչներ:

Մարտունակ զինուժ ստեղծելու միջոցով միայն հնարավոր եղավ կանգնեցնել թշնամու առաջխաղացումը թե Արցախում և թե՝ Յայաստանի սահմաններին: 1991-1992 թթ. համառ ու արյունահեղ մարտեր ընթացան Արցախում: 1992 թ. առաջին կեսին հայ ինքնապաշտպանական ջոկատները կարողացան անակնկալ շշմեցուցիչ հարված հասցնել հակառակորդին: 1992 թ. մայիսի 9-ին ազատագրվեց Արցա-

խի սրտում գտնվող հայկական հնամենի Շուշի քաղաքը: Հետ գրավվեցին Արցախի մի շարք գյուղեր ու տարածքներ: Լաշինով մարդասիրական միջանցք ստեղծվեց Հայաստանի և Արցախի միջև: Հետագա գործողությունների ընթացքում, զարգացնելով ռազմական հաջողությունները, Արցախի զինված ուժերը կարողացան հուսալի պաշտպանական երաշխիքներ ստեղծել արցախահայության անվտանգության համար:

Հիրավի, ակնբախ էին ռազմական հաջողությունները: Բայց այդ ամենը ձեռք բերվեց մեծ կորուստների ու թանկ զոհողությունների գնով: Արցախի ազատագրության համար մղվող մարտերում նահատակվեցին Սամվել Շահմուրադյանը, Թաթուլ Կրպեյանը, Սիմոն Աչիքայոցյանը (Դեղ), Արշակ Ղամբարյանը, Վարդան Ստեփանյանը (Դուշման), Մերուժան Մարգարյանը, Աշոտ Ղուլյանը (Բեկոր) և շատ ուրիշ խիզախներ: Ավելի վաղ, Հայաստանի սահմանների պաշտպանության ժամանակ, զոհվեցին հայ ժողովրդի արժանավոր զավակներ Մովսես Գորգիսյանը, Երվանդ Սահումյանը և ուրիշներ:

Կազմակերպչական և մարտերը վարելու բարձրավեստ հմտությամբ աչքի ընկան իրամանատարներ Մոնթե Մելքոնյանը (Ավո), Լեոնիդ Ազգալյանը, Տիգրան Սարգսյանը, Նորիկ Ղանիելյանը, Շահեն Մեղրյանը, Սամվել Գևորգյանը, Սանվել Եղիազարյանը, Սանվել Գրիգորյանը, Յակոբ Յակոբյանը և ուրիշներ, որոնցից շատերը նույնպես իրենց կյանքը զոհաբերեցին հայրենի հողի ազատագրման սուրբ գործին:

## **Դիվանագիտական ասուլեկտ**

Սովորաբար պատերազմներում, ռազմական հաջողություններ ունենալուց զատ, շատ կարևոր է, որ դրանք անրակայվեն ու նյութականացվեն դիվանագիտորեն և քաղաքականապես: Քանի կար ԽՍՀՄ-ը, Ղարաբաղյան հիմնախնդիրը, բնականաբար, համարվում էր ներքին հարց, իսկ նրա փլուզումից հետո, երբ հայ-ադրբեջանական կոնֆլիկտը ավելի խորացավ և ընդունեց բացահայտ պատերազմական բնույթ, ինքնըստինքյան աշխարհի շատ երկրներ անհանգստացան, և խնդիրը միջազգայնացվեց: Հիմնախնդրի խաղաղ կարգավորմանը արձագանքեցին ՄԱԿ-ը, Եվրոպայի անվտանգության և համագործակցության խորհուրդը (ԵԱՀԽ), աշխարհի շատ պետություններ, ընդունվեցին ամենաբարձր մակարդակի բանաձևեր, գործադրվեցին միջնորդական ջանքեր, մինչև որ հնարավոր Եղավ 1994 թ. մայիսից հաս-

տատել իրադադար: Սկսվեցին բազմակողմ բանակցություններ Արցախի կարգավիճակի և տարածաշրջանում կայուն խաղաղություն հաստատելու ուղղությամբ: Յարկ է առանձնահատուկ ընդգծել, որ հայ-ադրբեջանական հակամարտության ընթացքում Յայաստանի ղեկավարությունը կարողացավ վարել հիմնականում հավասարակշիռ քաղաքականություն: Այժմ խնդիրը բանակցային գործընթացը տրամաբանական հանգրվանին (վերջնակետին) հասցնելն է:

## **ԼՂՀ-ի անկախության հոչակումը**

ԽՄՀՄ կազմալուծման հետևանքով սկսված անկախացման գործընթացները չեն կարող անտարբեր բողնել արցախահայությանը:

Դեռ 1991 թ. սեպտեմբերի 2-ին Ղարաբաղի ժողովրդական պատգամավորների խորհուրդների նստաշրջանը, արտահայտելով Արցախի ժողովրդի կամքը, ընդունեց Յոչակագիր՝ Լեռնային Ղարաբաղի Յանրապետության (ԼՂՅ) հոչակման մասին, իսկ ավելի ուշ՝ 1991 թ. դեկտեմբերի 10-ին, արցախահայությունը, օգտվելով ինքնորոշման սահմանադրական իր իրավունքից, անցկացրեց հանրաքվե, և ժողովրդի միահամուռ ձայնտվությամբ հոչակվեց Լեռնային Ղարաբաղի Յանրապետության անկախությունը: Գերագույն խորհրդի առաջին նախագահ ընտրվեց Արթուր Մկրտչյանը, որի կյանքը, սակայն, 1992 թ. ապրիլին ողբերգական մահով ընդհատվեց: Յանրապետությունում կատարվեցին ժողովրդավարական ընտրություններ՝ կազմվեցին խորհրդարան, կառավարություն, պաշտպանության գերագույն մարմին, ընդունվեցին դրոշ, զինանշան, օրիններգ, պետականություն խորհրդանշող այլ անկապտելի հատկանիշներ: Ավելի ուշ (1995 թ.) ԼՂՅ խորհրդարանի կողմից հանրապետության նախագահ ընտրվեց Ռ. Քոչարյանը: Այն բանից հետո, երբ 1997 թ. ապրիլից Ռ. Քոչարյանը ՀՀ-ում բարձր պետական պաշտոններ ստանձնելով, փոխադրվեց Երևան, ԼՂՅ նոր նախագահ ընտրվեց Ա. Ղուկասյանը:

Արդ, Լեռնային Ղարաբաղի Յանրապետությունը, հաջողությամբ պաշտպանվելով՝ պայքարում է իր իրավունքների, անկախության և ազատության միջազգային ժանաչման համար:

## **4. Հայաստանի անկախության իռչակումը և պետականության կայացման գործընթացը**

**ՀՀՇ առաջացումը:** Վերակառուցման անխուսափելի հետևանքներից մեկն էլ եղավ անկախացնան գործընթացը: Խորհրդային կայսրության քաղաքական ու տնտեսական համակարգի փլուզման և Արցախյան շարժման ծավալմանը զուգընթաց ինքնաբերաբար առաջին պլան սկսեց մղվել նաև Հայաստանի անկախության գաղափարը: Անկախության շարժումը, սոցիալական, բնապահպանական, լեզվամշակութային, ժողովրդավարացման ու այլ հիմնահարցեր լծորդվեցին Արցախյան ազատագրական շարժմանը և հանդես եկան զուգահեռաբար: Այս բազմերանգ հոսանքները և շարժումները միավորելու և մեկ միասնական նպատակի ծառայեցնելու համար Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեի նախաձեռնությամբ 1989 թ. աշնանը ստեղծվեց «Հայոց համագգային շարժումը» (ՀՀՇ): Բայց այդ շարժումը չդարձավ իսկապես համագգային: Այդ իսկ պատճառով էլ ՀՀՇ-ն վերածվեց մի սովորական հասարակական-քաղաքական կազմակերպության: Բայց և այնպես, առանձին ազգաշահ խնդիրներում՝ Արցախի, անկախության և այլն, հաջողվեց հասնել որոշակի միասնության: Սկզբնական շրջանում ՀՀՇ-ն վայելում էր ժողովրդական զանգվածների մեծամասնության վստահությունը: Դա երևաց 1990 թ. մայիսի 20-ի Հայաստանի Գերագույն խորհրդի (խորհրդարանի) պատգամավորների այլընտրանքային ընտրություններից, երբ ՀՀՇ-ն կարողացավ գործնականում հաղթել Հայաստանի կոմունիստական կուսակցությանը (ՀԿԿ-ին): 1990 թ. օգոստոսի 4-ին հանրապետության նորընտիր խորհրդարանը Հայաստանի Գերագույն խորհրդի նախագահ ընտրեց ՀՀՇ վարչության նախագահ, Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեի անդամ Լևոն Տեր-Պետրոսյանին, իսկ վարչապետ՝ նույն շարժման գաղափարախոս Վազգեն Մանուկյանին: Դրանով իսկ Հայաստանում վերջ տրվեց կոմունիստական կուսակցության 70-ամյա մենիշխանությանը: Սկսվեցին արմատական փոփոխությունները Հայաստանի տնտեսական և քաղաքական կյանքում:

**Հայաստանի  
անկախության  
հռչակագիրը: ԱՆԿԱԽ  
ԹԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ԳՈՐԾԵՆՔԱԳԸ**

1990 թ. օգոստոսի 23-ին Հայաստանի նորընտիր Գերագույն խորհուրդն ընդունեց «Հռչակագիր Հայաստանի անկախության մասին», որով դրվեց անկախության գործընթացի սկիզբը: Հռչակագիրը դարձավ հետագա արմատական վերափոխումների, ազգային օրենսդրության և նոր սահմանադրության ստեղծման հիմքը: ՀԽՍՀ-ն վերանվանվեց ՀՀ: Ընդունվեցին ինքնիշխան Հայաստանի Հանրապետության ազգային պետականության խորհրդանիշները: Առանձին կետեր մտցվեցին հայերենը պետական լեզու ճանաչելու, ԽՍՀՄ գինուժից մասնաբաժին ունենալու, 1915 թ. Հայոց ցեղասպանության ճանաչմանը հետամուտ լինելու և այլ խնդիրների վերաբերյալ: Մի շարք սկզբունքային նոր օրենքներով՝ իշխանությունների տարանջատման, սեփականության, ազատ ձեռներեցության, հողի և ձեռնարկությունների սեփականաշնորհման, հասարակական-քաղաքական կազմակերպությունների, մամուլի, խղճի ազատության մասին և այլն, կարծ ժամանակամիջոցում փլուզվեց խորհրդային տնտեսական և քաղաքական համակարգը: Խնդիր ծառացավ պլանային տնտեսությունից անցում կատարել շուկայական տնտեսության: Հայաստանում սկսեցին գործել իրավաբանական գրանցում ստացած քաղմարիվ կուսակցություններ: Տարագրությունից հայրենիք վերադարձան հայ ազգային ավանդական կուսակցությունները ՀՀԴ-ն, Ս.Դ. Ինչակյանը և Ռամկավար ազատականը:

Հայաստանում առաջացան մի քանի տասնյակ կուսակցություններ, հասարակական-քաղաքական կազմակերպություններ ու միություններ՝ Ազգային ինքնորոշում միավորում-Քրիստոնյաներ (ԱԻՍՔ), Հանրապետական կուսակցություն, Դեմոկրատական կուսակցություն, Ազգային վերածնունդ, Քրիստոնեա-ժողովրդավարական միություն (ՔԺՄ), Ազգային ժողովրդավարական միություն (ԱԺՄ), Սահմանադրական իրավունքի միություն (ՍԻՄ) և այլն: Որոշակի ուժ էր ներկայացնում ընդդիմությունը: Հայաստանի խորհրդարանում, նրա պատերից դուրս, Հայաստանի հասարակական-քաղաքական կյանքում հաճախակի դրսենորվում էին անհանդուրժող, ժայրահեղական վերաբերմունք ու մոտեցումներ ինչպես կառավարող ՀՀԾ կուսակցության ու իշխանությունների, այնպես էլ ընդդիմության կողմից:

Հինը արագ քանդվեց, սակայն մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների թելադրանքով (ինի իներցիան, նոր մտածողության պա-

կասը, պարտադրված պատերազմական իրավիճակը, շրջափակումը, աղետի գոտին, Ատոմակայանի, Նախրիտի և այլ ձեռնարկությունների փակումը կամ կանգ առնելը, ինչպես նաև ղեկավարության թույլ տված առանձին սխալներն ու բացքողումները) դանդաղեց, իսկ տեղտեղ նույնիսկ արգելակվեց նոր տնտեսական հարաբերությունների, ժողովրդավարական կառույցների արմատավորումը, առանձին հարցերում դրսերվեցին ծայրահեղական, չկշռադատված մոտեցումներ, գլուխ բարձրացրին այլ բացասական երևույթներ: Այս ամենի հետևանքով ընկավ ժողովրդի կենսամակարդակը: Նա հայտնվեց սոցիալ-տնտեսական աննկարագրելի ծանր կացության մեջ:

Այստեղ, անշուտ, իրենց բացասական դերը խաղացին նաև հանրապետության քաղաքական ղեկավար (ՀՀԾ) կազմակերպության մեջ առաջացած ռազմավարական և մարտավարական բնույթի տարածայնությունները, որոնք հանգեցրին նրա պառակտմանը և նոր հասարակական-քաղաքական կազմակերպությունների առաջացմանը:

## **ՀՀ անկախության հռչակումը**

Այդուհանդերձ, անկախության գործընթացը նոր թափ ու որակ ստացավ 1991 թ.: 1991 թ. օգոստոսին ԽՍՀՄ-ը փրկելու նպատակով պետական-կուսակցական հետադիմական ուժերի կազմակերպած երևութական պետական հեղաշրջնան ձախողումից հետո անխուսափելի դարձավ ԽՍՀՄ փլուզումը: ԽՄԿԿ-ի գործունեությունը ժամանակավորապես կասեցվեց: Իր գործունեությունը դադարեցրեց նաև ՀԿԿ-ն: Եվ իրենց այս նպաստավոր պայմաններում՝ 1991 թ. սեպտեմբերի 21-ին Հայաստանում անցկացվեց անկախության մասին հանրաքվե: Արդյունքում՝ Հայաստանի ընտրական հասակի ազգաբնակչության 94 տոկոսից մվելին արտահայտվեց ԽՍՀՄ կազմից դուրս՝ անկախ, ժողովրդավարական Հայաստանի Հանրապետության օգտին: 1991 թ. սեպտեմբերի 23-ին Հայաստանի խորհրդարանը, իիմք ընդունելով ժողովրդական հանրաքվեի արդյունքները, միաձայն որոշում կայացրեց ու հանդիսավորապես հռչակեց Հայաստանի Հանրապետության անկախությունը: Այսպիսով, իրականացավ հայ ժողովրդի վաղեմի երազանքը, 70-ամյա ընդմիջումից հետո կրկին վերականգնվեց Հայաստանի անկախությունը՝ ՀՀ-ն հռչակվեց անկախ պետություն:

Ժողովրդավարական մյուս երկրների օրինակով, Հայաստանում ևս մտցվեց նախագահական (պրեզիդենտական) կառավարման համակարգ: 1991 թ. հոկտեմբերի 16-ին առաջին անգամ անցկացվեցին

նախագահական այլընտրանքային ընտրություններ, որոնց արդյունքով ձայների ճնշող մեծամասնությամբ (83 տոկոս), հանրապետության նախագահ ընտրվեց գերագույն խորհրդի նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը: Սկսեց նախապատրաստվել ՀՀ սահմանադրությունը:

Անկախության հոչակումից կարծ ժամանակ անց ՀՀ-ն ստացավ համընդհանուր միջազգային ճանաչում, անդամագրվեց ՄԱԿ-ին: Բոլորովին նոր տնտեսական հարաբերությունների հիմքի վրա սկսեցին կատարվել տնտեսության կայունացման ու աճի առաջին քայլերը: 1993 թ. նոյեմբերից, հապաղումով, շրջանառության մեջ դրվեց հայկական ազգային դրամանիշը՝ դրամը:

»

**Սահմանադրության հիմնական պետության օրենքը՝ սեփական Սահմանադրությունը:**

1993 թ. ստեղծվեց սահմանադրության մշակման հանձնաժողով: Հասարակական-քաղաքական սուր տարակարծությունների պայմաններում սահմանադրության նախագիծը, ձայների մեծամասնությամբ, հավանության արժանացավ խորհրդարանում և, ընդունված օրենքի համաձայն, դրվեց համաժողովրդական քվեարկության: 1995 թ. հուլիսի 5-ին ընտրախախտումներով տեղի ունեցած հանրաքվեով հանրապետության բնակչության մեծամասնությունը (68 %) արտահայտվեց սահմանադրության հաստատման օգտին: Այսպիսով, կյանքի ուղեգիր ստացավ անկախ ՀՀ սեփական սահմանադրությունը: Հանրապետությունում արմատավորվեց կիսանախագահական-կիսախորհրդարանական կառավարման համակարգ: Նոր սահմանադրությունը, իր թերություններով և ոչ կատարելությամբ հանդերձ, պետք է դիւել որպես պատմական նշանակալի իրադարձություն հայ ժողովրդի հազարամյակների պատմության ճանապարհին:

Այդ նույն օրը, հուլիսի 5-ին, սեղի ունեցան նաև նոր խորհրդարանի Ազգային ժողովի ընտրությունները: Բազմակուսակցական հիմքի վրա, մեծամասնական (մաժորիտար) և համամասնական (կուսակցական) ընտրակարգով անցկացված այս ընտրություններում դարձյալ կոպիտ խախտումներով «հաղթանակ» տարավ կառավարող ՀՀԾ կուսակցության գլխավորած «Հանրապետություն» բլոկը: Պատգամավորական որոշ տեղեր գրավեց նաև ընդդիմությունը: Աժ նախագահ ընտրվեց Բաբկեն Արարթյանը:

Առաջնորդվելով Սահմանադրության պահանջներով սկսեցին ձևա-

վորվել պետականական նոր կառույցներ: Յիմնվեցին առաջին ատյանի, վերաքննիչ և վճռաբեկ դատարանները: Այդ ուղղությամբ կարևոր քայլ պետք է համարել Սահմանադրական դատարանի ստեղծումը: Ազգային ժողովը ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահ նշանակեց Գագիկ Քարությունյանին:

ՀՀ տարածքային կառավարման կառուցվածքի բարելավման և տեղերում ինքնակառավարան խորացման նպատակին էին ծառայում վարչատարածքային փոփոխությունները և նոր միավորների՝ մարզերի ու համայնքների հիմնումը: Քանի ապետության շուրջ չորս տասնյակի հասնող շրջանների միավորման ու վերակառուցման միջոցով ստեղծվեցին 11 մարզեր: Դրանք են՝ Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Լոռիի, Կոտայքի, Շիրակի, Սյունիքի, Վայոց ձորի, Տավուշի մարզերը: Մարզի կարգավիճակ ստացավ նաև քաղաքամայր Երևանը: Կատարվեցին Սահմանադրության և ժողովրդավարության ոգուն համապատասխան այլ բարեփոխություններ:

Քայաստանի Սահմանադրության ընդունումը և նորընտիր Ազգային ժողովի կազմավորումը հիմք էին տալիս ենթադրելու, որ սկսվելու էր պետության ամրակայնան, երկրի ժողովրդավարացման, իշխանության մարմինների տարանջատման, օրենքների գերակայության, տնտեսական կայունացման ու առաջընթացի որակապես նոր փուլ:

Սակայն անկախացման առաջին իսկ տարիներից, օբյեկտիվ ու հատկապես սուբյեկտիվ մի շարք գործուների թելադրանքով, Քայաստանը կանգնեց լուրջ դժվարությունների առաջ: Իշխանության ղեկին անցած ՀՀԸ-ական ղեկավարների ու ընչափաղց ամենատարբեր մակարդակի պաշտոնյաների մասնագիտական անբավարար պատրաստվածության, ապիկարության, անպատասխանատու վերաբերմունքի, բարոյական ցածր որակների և այլ պատճառներով տնտեսական բարեփոխումների (մասնավորեցման, սեփականաշնորհման և այլն) անվան տակ տեղի ունեցավ համաժողովրդական ունեցվածքի ուղղակի թալան, ժողովրդական զանգվածները հայտնվեցին աղետալի վիճակի մեջ: Մյուս կողմում, հասարակության սոցիալ-տնտեսական շերտավորման ու բներացման հետևանքով, առաջ եկավ մեծահարուստների խավը. 70 և ավելի տարիների դնբացքում ստեղծված ազգային հարստության ավելի քան 90 տոկոսը հայտնվեց 5-6 տոկոս մարդկանց ձեռքում: Պետական համակարգում, հասարակական-քաղաքական կյանքում դանդաղեցին և նույնիսկ արգելակվեցին ժողովրդավարացման գործընթացները: Պետական իշխանության

և տնտեսության ոլորտում ձևավորվեց կլանային համակարգ, ուժեղացավ կոռուպցիան: Աստիճանաբար իշխող ՀՀՆ-ական վարչախմբի կողմից ավելի հաճախակի դարձան անցանկալի մարոկանց հետապնդումները և որպես կանոն չբացահայտվող սպանությունները: Իշխանությունների կողմից ուժեղացան անհանդուրժողականությունն ու հալածանքները ընդդիմադիր կուսակցությունների և առհասարակ այլախոհության նկատմամբ: 1994 թ. դեկտեմբերին հանրապետության նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի հրամանագրով ժամանակավորապես կանոնադրության գործունեությունը, փակվեցին թերթեր, այլ լրատվամիջոցներ, կազմակերպվեցին կեղծ դատապրոցեսներ: Օտարացման ու խորթության նոր շերտանստվածք առաջացավ Հայաստանի և Սփյուռքի միջև: Հանրապետության քաղաքական կյանքը առավել շիկացավ հատկապես այն բանից հետո, երբ 1996 թ. սեպտեմբերին, բացահայտ ընտրակեղծիքների ճանապարհով, Լ. Տեր-Պետրոսյանը կրկին «ընտրվեց» նախագահ: Մի կողմից ժողովրդի սոցիալ-տնտեսական ծանր կացությունը, մյուս կողմից իշխանությունների կողմից թույլ տված բացահայտ ընտրակեղծիքները, ինչպես նաև արցախյան հիմնահարցի խաղաղ կարգավորման խնդրում իշխող վարչախմբի դրսնորած ավելի ու ավելի պարտվողական (զիջողական) դիրքորոշումը դարձան այն գումարելիները, որոնց արդյունքում 1998 թ. փետրվարին Հայաստանում տեղի ունեցավ խաղաղ ճանապարհով իշխանափոխություն: 1998 թ. մարտ-ապրիլ ամիսներին տեղի ունեցած արտահերթ նախագահական ընտրությունների արդյունքում ԼՂՀ նախկին նախագահ, ՀՀ վարչապետ Ռ. Քոչարյանը ընտրվեց ՀՀ նախագահ: Չնայած կատարվեց իշխանափոխություն, բայց նախկին կոռումպացված իշխանական համակարգը և արդեն վարկաբեկված պետական չինովնիկների մեծ մասը վերահարմարվելով՝ պահպանեցին իրենց դիրքերն ու աթոռները:

1999 թ. մայիսի 30-ին տեղի ունեցան Ազգային ժողովի (խորհրդարանի) ընտրություններ, երբ հաղթանակ տարավ Հայկոմկուսի ԿԿ-ի նախկին առաջին քարտուղար Կ. Ղեմիրյանի և պաշտպանության նախարար Վ. Սարգսյանի գլխավորած «Միասնություն» դաշինքը «Կառուցենք և պաշտպանենք» կարգախոսով:

Դաշինքի այդ երկու ընդգծված առաջնորդներն էլ համապատասխանաբար՝ զբաղեցրին Ազգային ժողովի նախագահի և վարչապետի պաշտոնները: Սակայն մի քանի ամիս անց՝ 1999 թ. հոկտեմբերի 27-ին խորհրդարանի դահլիճում կատարվեց աննախադեպ ահաբեկչա-

կան ակտ, որի հետևանքով գոհվեցին Ազգային ժողովի նախագահ Կ. Դեմիրճյանը, վարչապետ Վ. Սարգսյանը և ուրիշներ: Ստեղծված քաղաքական ծանր իրավիճակում հանրապետության նախագահը և ամբողջ հայ ժողովուրդը իրենց մեջ ուժ գտան հաղթահարելու ճգնաժամը:

Ժողովորդի կյանքում կարևոր իրադարձություններ էին 1999 թ. կաթողիկոսական ընտրությունները, երբ Ամենայն հայոց հայրապետի գավազանը տրվեց Գարեգին II վեհափառին: Նոր հազարամյակը Հայաստանի և համայն հայության համար նշանավորվեց 2001 թ. քրիստոնեության որպես պետական կրոն հռչակվելու 1700-ամյակին նվիրված հանդիսություններով:

Ակտիվացավ ՀՀ արտաքին քաղաքականությունը, որը ԵՀԱԿ Մինսկի խմբի շրջանակներում փորձում էր հասնել դարաբաղյան հիմնախնդրի խաղաղ կարգավորմանը: Միջազգային տարբեր հեղինակավոր կազմակերպությունների, այդ թվում՝ ՄԱԿ-ի բարձր ամբիոնից ավելի հաճախ սկսեցին հնչել հայոց ցեղասպանության ճանաչման վերաբերյալ կոչերը: Աշխարհի մեկ տասնյակից ավելի երկրների պառլամենտներ պաշտոնապես ընդունեցին և դատապարտեցին հայ ժողովորդի մեծագույն ողբերգությունը:

Այսպիսով, չնայած առկա դժվարություններին, արտաքին ու ներքին բնույթի խոչընդոտներին, այնուամենայնիվ, Հայաստանի Հանրապետությունը առաջ է ընթանում անկախ պետականության կայացման ճանապարհով: XXI դար ուղք դրած հայ ժողովուրդը լիահույս է աշխարհի մյուս ազատ ազգերի ու երկրների շարքում կերտելու անկախ, ազատ և միասնացած, բարգավաճ, ժողովորակարական և իրավական պետություն:

## 5. Հայկական մշակույթը (1946-2000 թվ.)

**Զարգացման  
միտումները** Հետպատերազմյան տարիները, հիրավի, հայ մշակույթի քանակական և որակական էական տեղաշարժերի ժամանակաշրջան էին: Այն զարգանում էր թե Խորհրդային Հայաստանում և թե (ներքին ու արտաքին) սփյուռքում: Սակայն հայ ժողովորդի հատվածների աշխարհագրական տարանջատվածությունը և սոցիալ-քաղաքական տարբեր միջավայրերը իրենց կնիքն էին թողնում այդ մշակույթի դրսնորումների, բովանդակության և ուղղվածության վրա: Եթե սփյուռքահայ մշակութային կյան-

քի զարգացումը ազատ էր և չէր ենթարկվում գաղափարաքաղաքական կաշկանդումների, բայց օտար միջավայրում ուներ իր աճի դժվարությունները, ապա խորհրդահայ մշակույթը, բուն հայրենիքում ունենալով զարգացման ավելի լայն ու ապահով հնարավորություններ, միաժամանակ շարունակում էր ենթարկվել գաղափարաքաղաքական սահմանափակումների ու հարկադրանքի:

40-ական թվականների վերջերին և 50-ականների սկզբին երկրում սկսվեց քաղաքական բռնադատությունների ու զանգվածային աքսորի մի նոր ալիք: Միայն 1949 թ. հունիսի 14-ին Հայկական ԽՍՀ-ից «անբարեհույսի» պիտակով Ալթայի երկրամաս աքսորվեց շուրջ 3000 ընտանիք, դրանց թվում՝ նաև հայրենադարձներ, ֆաշիստական գերությունից փրկվածներ:

Հալածանքների ենթարկվեցին նաև շատ գիտնականներ Հր. Աճառյանը, Գր. Ղափանցյանը, Մ. Ներսիսյանը, Ա. Շովիաննիսյանը, Վ. Ռշտունին, Ա. Թախտաջյանը և ուրիշներ, որոնք մեղադրվեցին գիտության մեջ կուսակցականության սկզբունքի անտեսման, գաղափարական դիրքերից նահանջ կատարելու և բուրժուական օբյեկտիվիզմին տուրք տալու մեջ: Համանման որակումներ տրվեցին նաև գրականության և արվեստի շատ աշխատողների ստեղծագործություններին: Այդ ժամանակաշրջանը հայտնի է «միասնական հոսանքի» շրջան անունով: Բռնաճնշումների միջոցով ստիպում էին փիլիսոփա, պատմաբան, լեզվաբան, տնտեսագետ, կենսաբան և այլ մասնագիտության գիտնականներին հրապարակայնորեն ընդունել իրենց «սխալները» և «ինքնաքննադատաբար» վերացնել դրանք, իսկ ովքեր համառում ու հրաժարվում էին, ենթարկվում էին ամեն տեսակ նսեմացումների, բանտարկության ու աքսորի:

## Կրթությունը

Հետպատերազմյան տարիներին ավելի ընդլայնվեց կրթական համակարգը: Արդեն 70-ական թվականներին խորհրդային Հայաստանի 1,5 հազարի հասնող բոլոր տեսակի դպրոցներում սովորում էին 600 հազարից ավելի աշակերտներ: Նշված ժամանակաշրջանում կուսակցության հրահանգներով պարտադիր սկզբնական կրթությունից անցում կատարվեց ընդհանուր (պարտադիր) յոթնամյա, իսկ ավելի ուշ՝ ընդհանուր (պարտադիր) միջնակարգ կրթության: Կոմունիստական վարչակարգը, առաջնորդվելով ազգերի ծուլման արատավոր ծրագրային պահանջներով, միաժամանակ հրականացնում էր ազգային, լեզվամշակութային կյանքի զարգաց-

ման սահմանափակումներ: Գնալով հանրապետությունում ավելի ու ավելի էր մեծանում ռուսական դպրոցների տեսակարար կշիռը:

Նույն կերպ ընդլայնվեցին նաև բուհական և մյուս աստիճանի կրթության համակարգերը: Արդեն հետպատերազմյան շրջանում հանրապետությունում գործում էր 15 բուհ 60 հազար ուսանողով: 80-ական թթ. սկզբներին միայն ԵրՊի-ում սովորում էր 25 հազար ուսանող կամ հանրապետության ուսանողության 40 տոկոսը: Հայաստանում կադրեր էին պատրաստվում ավելի քան 100 մասնագիտությունների գծով: Սակայն, ինչպես արտադրության մեջ, այնպես էլ կրթության բնագավառում, ընկնելով համախառնի, տոկոսամոլության, քանակի հետևից, թողարկվող արտադրանքի, մասնագետ կադրերի պատշաճ որակ չէր ապահովվում: Մի շարք մասնագիտությունների (ինժեներական, մանկավարժական և այլն) գծով առաջացավ շրջանավարտ կադրերի ավելցուկ, փաստորեն, պրոֆեսիոնալ գործազրկություն:

Արդեն 90-ական թթ., անկախ Հայաստանի Հանրապետության հոչակումից հետո, պայմաններ ստեղծվեցին և ուղիներ փնտրվեցին կրթական համակարգի կատարելագործման ու հայեցի կրթության արմատավորման ուղղությամբ: Ամենից առաջ կրթությունը ազատվեց կոմունիստական գաղափարայնության կապանքներից:

**Գիտությունը** Կրթության հենքի վրա զարգանում էր նաև գիտությունը: Ինչ էլ որ լիներ, Խորհրդային Հայաստանն էր հայ գիտական մտքի կենտրոնը, իսկ նրա գիտական գլխավոր կաճառը՝ Հայաստանի գիտությունների ակադեմիան էր (հիմնված 1943 թ.), որն իր համակարգում ուներ ավելի քան 40 բազմաճյուղ ու բազմապրոֆիլ գիտահետազոտական ինստիտուտներ: Գիտական մտքի կենտրոններ էին նաև հանրապետության բուհերը, կոնստրուկտորական և գիտարտադրական հաստատությունները:

50-ական թթ. կեսերից սկսված գիտատեխնիկական հեղափոխության պայմաններում ավելի կարևորվեց գիտության դերն ու նշանակությունը: Միջուկային, ջերմամիջուկային էներգետիկաների, աստղաֆիզիկայի, կոսմիկական ճառագայթների, տիեզերական տեխնիկայի, ռադիոէլեկտրոնիկայի, հաշվողական տեխնիկայի, կիբեռնետիկայի, ֆիզիկոգիայի, ֆիզիկա-մաթեմատիկական հիմնարար գիտությունների և այլ ճյուղերի բնագավառներում ակնառու հաջողությունների հասան հայ գիտականներ Վիկտոր Շամբարձումյանը, Աբրահամ և Արտեմ Ալիխանյան եղբայրները, Սերգեյ Մերգելյանը,

Յովհաննես Կնունյանցը, Նորայր Սիսակյանը, Լևոն Օրբելին, Արտեմ Միկոյանը, Ֆադեյ Սարգսյանը և ուրիշներ:

1956 թ. Յայաստանում իիննվեց մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտ: Երեք տարի անց կազմակերպվեց Երևանի հաշվիչ մեքենաների «Էլեկտրոն» գործարանը: Արտադրվեցին հայկական առաջին հաշվիչ՝ «Արագած» և «Նախրի» մեքենաները: 1967 թ. Երևանում կառուցվեց ու գործարկվեց էլեկտրոնային օդակաձև արագացուցիչը:

Յամաշխարհային աստղագիտության ճանաչված կենտրոններից մեկը դարձավ Բյուրականի աստղադիտարանը, որը գլխավորում էր աշխարհահոչակ աստղաֆիզիկոս, Յայաստանի ԳԱ երկարամյա պրեգիդենտ, ակադեմիկոս Վիկտոր Յամբարձումյանը: Բնագիտական հիմնարար հետազոտությունների շատ արդյունքներ ներդրվեցին արտադրության մեջ, ստացան իրենց կիրառությունը, ժողովրդական տնտեսությանը տվեցին զգալի օգուտ և ճանաչում բերեցին Յայաստանի գիտությանը:

Զգալի հաջողություններ ծեռք բերվեցին նաև հասարակական գիտությունների ու, մասնավորապես, հայագիտության բնագավառում: Յետպատերազմյան ժամանակաշրջանի ամենաճանաչված հայագետներից էին Յ. Մանանյանը, Յ. Աճառյանը, Ա. Գ. Յովհաննիսյանը, Ս. Երենյանը, Մ. Ներսիսյանը, Բ. Առաքելյանը, Է. Աղայանը, Գ. Զահուկյանը, Է. Զրբաշյանը և ուրիշներ: Տասնամյակների կոլեկտիվ տքնածի արդյունք էին «Յայ ժողովրդի պատմության» ութիատորյակը, «Յայ նոր գրականության պատմության» հինգհատորյակը, լեզվագիտական բազմաբնույթ բառարանները: Յայ մշակութային կյանքում նշանակալի երևույթ էր նաև Յայկական հանրագիտարանի հրատարակումը՝ 12 հատորով և այլն:

**Գրականություն** 30-ական թվականների քաղաքական հալածանքներից ու բռնադատումներից հետո, հետագա տասնամյակներին, խորհրդահայ գրական կյանքում մի տեսակ վակուում առաջացավ: Գրականությունն իր ժամանակաշրջանի կյանքի ու իրականության հայելին է, և եթե հասարակական կյանքը լճացած ու ծգնաժամային էր, ապա դրանից չեր կարող գերծ մնալ նաև գրականությունը: Այդուհանդերձ, բռնաճնշումները, վերևում պարտադրվող քաղաքական-գաղափարական կաղապարները չեին կարող կանգնեցնել հայ գրական կյանքի առաջընթացը:

Դեռ երկրորդ աշխարհամարտի տարիներին հայ արձակի խոշոր փայլատակումները եղան Դ. Ղեմիրճյանի «Վարդանանք» և Ստ. Զորյանի «Պապ թագավոր» պատմավեպերը։ Հետպատերազմյան տարիներին ու հատկապես անձի պաշտամունքի դատապարտումից հետո խորհրդահայ գրական կյանքը աստիճանաբար մտավ կանոնավոր հունի մեջ։ Աքսորից վերադարձան ու իրենց գրական ընդհատված ուղին շարունակեցին Գ. Մահարին, Մ. Արմենը, Վ. Ալազանը, Վ. Նորենցը, Լ. Կամսարը և ուրիշներ։

Հետպատերազմյան ժամանակաշրջանում ստեղծագործական վերելք էր ապրում տաղանդաշատ գրողների մի ստվար փաղանգ՝ Պ. Սևակ, Յ. Սահյան, Յ. Շիրազ, Յ. Ռոչար, Ս. Կապուտիկյան, Խ. Դաշտենց, Ս. Խանզադյան, Գ. Էմին, Վ. Դավթյան, Յ. Յովիաննիսյան, Յ. Մաթևոսյան, Զ. Խալաֆյան, Վ. Պետրոսյան, Մ. Գալշոյան, Ռ. Դավոյան և ուրիշներ։

Հետչարենցյան շրջանի հայ պոեզիայի ամենավառ անհատականությունը, անկասկած, Պարույր Սևակն էր։ Նա որակական նոր աստիճանի հասցրեց գեղարվեստական խոսքը։ Գեղարվեստական մտքի կոթողներ դարձան նրա «Անլոելի զանգակատուն» պոեմը, «Մարդը ափի մեջ» և «Եղիցի լույս» ժողովածուները։

**Արվեստ** Զնայած խորհրդային իրականության ճնշող ազդեցությանը, այնուամենայնիվ, բուռն վերելք ապրեց արվեստը՝ երաժշտությունը, թատրոնը, կինոն, կերպարվեստը, քանդակագործությունը։ Ասպարեզում էին հայ արվեստի ճանաչված անհատականությունները, որոնք իրենց ստեղծագործություններում առաջնորդվում էին ամենից առաջ ազգային և համամարդկային չափանիշներով։ Այդպիսի ստեղծագործողներից էին երաժշտության բնագավառում երգահան Ա. Խաչատրյանը, կատարողական արվեստի ասպարեզում երգչուիի Գ. Գասպարյանը, դիրիժոր-խմբավար Յ. Չեքիջյանը, թատերական արվեստում Վ. Փափազյանը, Յ. Ներսիսյանը, Ա. Ավետիսյանը, Վ. Վաղարշյանը, Գ. Գաբրիելյանը, Վ. Աճեմյանը, Ա. Ասրյանը, Գ. Զանիբեկյանը, Յ. Ղափլանյանը, Մ. Սիմոնյանը, Բ. Ներսիսյանը, Ս. Սարգսյանը, Խ. Աբրահամյանը, Մ. Մկրտչյանը, Ա. Զիգարիսանյանը, կերպարվեստում Մ. Սարյանը, Եր. Քոչարը, Գ. Խանջյանը, Մ. Ավետիսյանը, Ն. Նիկողոսյանը, Լ. Թոքմաջյանը, Յ. Յակոբյանը, կինոարվեստում Յ. Մալյանը, Ս. Փարաջանովը, Ֆ. Դովլաթյանը և ուրիշներ։

Երկրորդ աշխարհամարտին հաջորդած չորս տասնամյակները, իրենց հակասական կողմերով հանդերձ, հայ ժողովրդի կյանքում նշանավորվեցին որպես արվեստի, ստեղծագործ աշխատանքի տարիներ: Կառուցվեցին ու կառուցապատվեցին բազմաթիվ քաղաքներ ու ավաններ, նոր շնչառություն ստացավ քաղաքանայր Երևանը:

Հետպատերազմյան տարիների հայ ճարտարապետաքանդակագործության գլուխգործոցներից են Երևանի Մ. Մաշտոցի անվան Մատենադարանը, Սասունցի Դավթի արձանը, Սարդարապատի ճակատամարտի և Յայոց մեծ եղեռնի զոհերի հիշատակին նվիրված հուշարձան-կոթողները, «Քրազդան» մարզադաշտը, Երևանի մարզահամերգային համալիրը, Երևանի մետրոպոլիտենը, «Զվարթնոց» օդանավակայանը և այլն:

**Մարզաշխարհ** Հետպատերազմյան տարիներին աննախառեալ վերելք ապրեց հայկական սպորտը: Տակավին 30-ականներին աշխարհով հոչակվեց հայազգի ոյուցազն Սերգո Յամբարձունյանի անունը: 1938 թ. դեկտեմբերի 30-ին տաղանդավոր ծանրամարտիկը կարողացավ գերազանցել գերծանր քաշում օլիմպիական չեմպիոն Յոզեֆ Մանգերի ռեկորդը և հոչակվեց մոլորակի ուժեղագույն մարդ: Այդ մարզական նվաճումն ուներ հոգեբանական և բարոյական մեծ արժեք. բուրքական կոտորածներ ու ստալինյան բռնություններ տեսած ժողովուրդը, ի դեմս հայ հսկայի, տեսավ իր անկոտրում կամքի ու ուժի առհավատչյան:

Յայաստանցի մարզիկների անունները սկսեցին փայլատակել համաշխարհային սպորտի երկնակամարում, երբ ԽՍՀՄ հավաքականների կազմում հնարավորություն տրվեց մասնակցել ժամանակակից օլիմպիական խաղերին: Առաջինը օլիմպիադայի հաղթող դարձավ հայկական սպորտի նահապետ Յրանտ Շահինյանը (մարմնամարզություն): Կրկնակի անգամ օլիմպիական չեմպիոնի կոչումը նվաճեց «օղակների արքա», նշանավոր Ալբերտ Ազարյանը: Նա միաժամանակ ճանաչվեց որպես 20-րդ դարի լավագույն հայ մարզիկ:

Տարբեր տարիների օլիմպիական խաղերում հաղթողներ դարձան Վլադիմիր Ենգիբարյանը (բռնցքամարտ), Իգոր Նովիկովը (ժամանակակից հնգամարտ, Ֆախնա Մելնիկը (ատլետիկա), Յուրի Վարդանյանը, Օգսեն Միրզոյանը, Իսրայել Միլիտոսյանը (բոլորն էլ ծանրամարտ), Էդուարդ Ազարյանը (մարմնամարզություն), Յրայա Պետիկյանը (հրաձգություն), Լևոն Զուլֆալակյանը, Մնացական Իսկանդար-

յանը (Երկուսն էլ հունահռոմեական ըմբշամարտ):

Բացառիկ արդյունքների հասան նաև Յայաստանից հեռու, աշխարհի տարբեր երկրները ներկայացնող հայ մարտիկները: Նրանցից օլիմպիական խաղերի կրկնակի չեմպիոններ դարձան Նորայր Նորիկյանը (ծանրամարտ, Բուլղարիա), Սանասար Յովիաննիայանը (ազատ ոճի ըմբշամարտ, Ռուսաստան), Արմեն Նազարյանը (հունահռոմեական ըմբշամարտ, Բուլղարիա): Օլիմպիադայի հաղթողներ դարձան Ռաֆայել Չմշկյանը (ծանրամարտ, Վրաստան), Սուրեն Նալբանդյանը, Վարդերես Սամուրդաշև (Երկուսն էլ հունահռոմեական ըմբշամարտ, Ռուսաստան): Յայ ժողովրդի անունը փառքով օծեց միջազգային գրոսմայստեր, աշխարհի չեմպիոն Տիգրան Պետրոսյանը (Մոսկվա): Պրոֆեսիոնալ բռնցքամարտի գծով փայլուն նվաճումների հասավ աշխարհի բազմակի չեմպիոն, արցախցի շնորհալի մարզիկ Արթուր Գրիգորյանը (Ուգրեկստան):

Նշված ժամանակահատվածում մեծ թվով հայ մարզիկներ տարբեր մարզաձևերից նվաճեցին աշխարհի, Եվրոպայի և ԽՍՀՄ չեմպիոնների կոչումները:

70-ական թվականներին իր խաղերով բազմահազար երկրպագուներին հիացրեց սպորտի վաստակավոր վարպետ, օլիմպիական չեմպիոն Նիկիտա Սիմոնյանի գլխավորած «Արարատ» ֆուտբոլային թիմը, որն արժանացավ ԽՍՀՄ չեմպիոնի և գավաթակրի տիտղոսներին:

Այսպիսով, հետպատերազմյան տարիներին խորհրդահայ մշակույթը, իր դժվարություններով և զարգացման հակասականությամբ հանդերձ, ավելի է առաջադիմում և իր արժանի տեղը գրավում հայ բազմադարյան մշակույթի անդաստանում:

## Գլուխ քսաներկուերորդ

### ՀԱՅԿԱՎՆ ՍՓՅՈՒՇՔԸ (1921-2000 թթ.)

#### **Սփյուռքի առաջացումը**

Դայոց Մեծ Եղեռնի տիտուր հետևանքներից մեկն էլ հայկական գաղթօջախներում աշխարհասփյուռ հայության կուտակումն էր և քաղաքական նոր իրողությունների հիման վրա նոր հասկացության Սփյուռքի առաջացումը: 20-ական թվականների սկզբներին սփյուռքում (գաղթաշխարհում) կար շուրջ մեկ միլիոն հայ: Դայահոծ զանգվածներ կային Իրանում, Սիրիայում, Լիբանանում, Եգիպտոսում, Թուրքիայում, Կիպրոսում, Բալկաններում, որոնք մազապուրծ փախել էին թուրքական կոտորածներից:

Մերձավոր Արևելքում հայ գաղթաշխարհի խոշոր կենտրոններ դարձան Դալեպ (Սիրիա) և Բեյրութ (Լիբանան) քաղաքները: Վերջինս դարձավ սփյուռքահայ հասարակական-քաղաքական ու մշակութային կյանքի ամենանշանավոր կենտրոններից մեկը:

Խոշոր գաղթօջախներ ձևավորվեցին Ֆրանսիայում, ԱՄՆ-ում, Կանադայում, ավելի ուշ՝ Արգենտինայում, Ավստրալիայում և այլուր: Դայ գաղթականության մի ստվար հատված էլ հանգրվանեց Ռուսաստանում և խորհրդային մյուս հանրապետություններում ու կոչվեց ներքին սփյուռք:

#### **Դայ գաղթականության խնդիրը Լոզանի կոնֆերանսում**

Դայ գաղթականությունը դեռևս հույսեր էր փայփայում Դայկական հարցի դրականապես լուծվելու դեպքում վերադառնալ իր բնավեր հայրենիքը և շենացնել այն:

1921 թ. փետրվար-մարտ ամիսներին Լոզանում հրավիրված միջազգային դիվանագիտական կոնֆերանսում մեծ տերությունների դե-

կավարները հույս հայտնեցին, որ Թուրքիայի հետ կնքվելիք ապագա հաշտության պայմանագրում կշոշափվի նաև հայերի խնդիրը, և որ նպատակահարմար կլինի գաղթական հայության համար Արևմտյան Հայաստանում կամ Կիլիկիայում, Թուրքիայի հովանու տակ, ազգային ինքնավար մի օջախ՝ տուն (Home) հիմնել: 1922 թ. նոյեմբեր-1923 թ. հուլիս ամիսներին տեղի ունեցավ Լոզանի միջազգային կոնֆերանսը, որի ժամանակ Թուրքիայի հետ կնքվեց հաշտության վերջնական պայմանագիր: Չեղյալ համարվեց Սկրի դաշնագիրը (պայմանագիրը): Հայաստանի և Հունաստանի նկատմամբ տարած հաղթանակների, ինչպես նաև ԽՍՀՄ դիվանագիտական աջակցության շնորհիվ՝ Անտանտի տերությունները ստիպված եղան իրավաբանորեն ճանաչել Թուրքիայի սուվերենությունը և տարածքային ամբողջականությունը:

Ինչ վերաբերում է Հայկական հարցին, ապա թուրքական պատվիրակությունը կտրականապես մերժեց հայերի համար Թուրքիայում «ազգային օջախ» ստեղծելու գաղափարը, իսկ մեծ տերություններն էլ չձգտեցին պնդել ու պաշտպանել այն: Խնդրի քննարկումների փուլում, 1923 թ. սկզբներին, հարցի լուծման մի յուրօրինակ առաջարկ արեց ԽՍՀՄ արտաքին գործերի նախարար Գ. Չիչերինը: Խորհրդային կողմը առաջարկեց արևմտահայ գաղթականներին փոխադրել բնակեցնելու Ռուսաստան՝ Դոնի և Կուբանի շրջանները: Հասկանալի է, որ Հայ դատով մտահոգ Սփյուռքի հայ քաղաքական շրջանները (ազգային-քաղաքական անհետանկարայնության իմաստով) չեն կարող համաձայնել նման առաջարկին:

Լոզանի կոնֆերանսն ավարտվեց Հայաստանի և հայության համար անարդյունք: Ստորագրված պայմանագրում ոչ մի հիշատատություն չարվեց Հայ դատի ու հայերի մասին: Միայն շոշափվեց քրիստոնյա գաղթականության հարցը և որոշվեց խնդրի իրավավարությունը հանձնել Ազգերի լիգային:

**Հայրենադար-  
ձությունը**      Դրանից հետո աստանդական հայությանը մնում էր, հնարավորության սահմաններում, ներգաղթել հո փոքրիկ հայրենիքը՝ Խորհրդային Հայաստան: Հիշենք, որ Խորհրդային Հայաստանում առանց այդ էլ քիչ չեն գաղթականներն ու որբերը: Հայրենադարձությունը իրականացնելիս խորհրդային իշխանությունները ցուցաբերում էին խիստ ընտրովի մոտեցում, որպեսզի ներգաղթածները գաղափարա-

պես լինեն վստահելի և չդառնան «հակահեղափոխության ռեգերվը»:

20-30-ական թվականներին տեղի ունեցավ տարագիր հայության սահմանափակ հայրենադարձություն դեպի Հայաստան: Ներգաղթի կազմակերպման գործում առանձնապես մեծ դեր խաղաց Ազգերի լիգայի ներկայացուցիչ, նորվեգացի հայտնի բևեռախույզ, մեծ հումանիստ Ֆրիտյոֆ Նանսենը: Այդ ժամանակամիջոցում Միջագետքից, Հունաստանից, Թուրքիայից, Բուլղարիայից, Ֆրանսիայից և արտասահմանյան այլ երկրներից Հայաստան ներգաղթեցին 42 հազար հայեր:

Հայրենադարձվող արևմտահայ գաղթական խմբերը, պատմական հայրենիքի գավառների ու բնակավայրերի վերհույշը վառ պահելու նպատակով, Հայաստանում իրենց բնակության նորահիմն թաղամասերն ու ավանները, իշխանությունների հաստատմամբ, սկսեցին կոչել իրենց ծննդավայրերի անուններով: Այդպես առաջացան Նոր Արաբկիր, Նոր Բուրանիա, Նոր Սեբաստիա, Նոր Մալաթիա, Նոր Զեյթուն, Նոր Հաճըն, Նոր Խարբերդ, Նոր Կիլիկիա, Նոր Մարաշ, Մուսալեռ և այլ անվանումները:

## **Զանգվածային հայրենադարձությունը**

Հայրենադարձությունն ավելի մեծ թափ ստացավ Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո, երբ Խորհրդային Միության դեկավարությունը, հետպատերազմյան խաղաղ կարգավորմանը նվիրված միջազգային խորհրդաժողովներում (Պոտսդամի, Լոնդոնի, Մոսկվայի) հարց բարձրացրեց նախկին Կարսի մարզի մի մասը Հայաստանին, իսկ մյուս մասը Վրաստանին վերադարձնելու վերաբերյալ: Այդ քայլով խորհրդային պետության դեկավարությունը ուզում էր պատժել Թուրքիային այն բանի համար, որ պատերազմի տարիներին նա վարում էր հակախորհրդային-թշնամական գիծ: Ինքնաստիճանի հասկանալի էր, որ Կարսի մարզի միացմամբ ավելի կը նդարձակվեին Խորհրդային Միության սահմանները: Չէր բացառվում նաև հարցի լուծման ուժային տարբերակը: Հայաստանում և սփյուռքում նկատվեց ոգևորություն ու լայն շարժում: Հայ ժողովրդի մեջ կրկին հույս առկայօնեց, որ մասնակի լուծում կատանա Հայկական հարցը:

1947 թ. ապրիլի 30-ին Նյու Յորքում բացված Հայկական համաշխարհային կոնգրեսը (715 պատգամավոր աշխարհի 22 երկրներից), իր ձայնը բարձրացնելով, Հայկական հարցի արդար լուծման հույս

Էր տածում: Կոնգրեսում ընթերցվեց Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ VI-ի (Չորեքշյան) հրապարակած կոնդակը «Հայկական հարցի լուծման մասին»: Հայկական համաշխարհային կոնգրեսը ՍԱԿ-ին և աշխարհի մեջ տերություններին ուղղված դիմումով պահանջում էր Խորհրդային Հայաստանի սահմանի մեջ ներառել արևմտահայ հողերը՝ ԱՄՆ-ի նախկին պրեզիդենտ Վ. Վիլսոնի՝ 1920 թ. վերջերին գծած հայ-թուրքական սահմանագծով:

Այսպիսի նպաստավոր իրադրության մեջ էլ, 1946-1948 թթ. տեղի ունեցավ սփյուռքահայերի զանգվածային հայրենադարձությունը, որի ընթացքում Մերձավոր ու Միջին արևելքի երկրներից, Բալկաններից, Ֆրանսիայից և այլ երկրներից Հայաստան ներգաղթեցին մոտ 100 հազար հայեր: Ներգաղթի գլխավոր շարժառիթը Թուրքիայից Հայաստանին վերադարձվելիք հայկական հողերում (Կարսի մարզում) հայրենադարձների բնակեցումն էր: Դրսի և ներսի օգնությամբ հայրենադարձությունը կատարվեց, սակայն Թուրքիայից պահանջվելիք հողային խնդիրը չլուծվեց: Հետպատերազմյան փուլում միջազգային լարվածության կտրուկ մեծացումը, այսպես կոչված, «սառը պատերազմի» առաջացումը, խորհրդա-ամերիկյան դիմակայության ուժեղացումը, միջուկային սպառնալիքը և այլ անբարենպաստ հանգամանքներ խափանեցին հարցի լուծումը: Հայտնի է, որ 1947 թ. մայիսին հրապարակվեց ԱՄՆ-ի պրեզիդենտ Յ. Տրումենի հայտնի «դոկտրինան», որով Ամերիկան, փաստորեն, իր հովանավորության տակ առավ Թուրքիային՝ պաշտպանելով վերջինիս տարածքային ամբողջականությունը «Խորհրդային Միության վտանգից»:

Դրանից հետո, աստիճանաբար, «Հայկական հողերի» նկատմամբ հետաքրքրությունը մարեց: Իսկ ավելի ուշ՝ 1953 թ., խորհրդային կառավարությունը պաշտոնապես հայտարարեց, որ ԽՍՀՄ-ը Թուրքիայի նկատմամբ տարածքային պահանջներ չունի: Նման պայմաններում արդեն ներգաղթած հայությունը հարկադրված էր դարձյալ ներպարփակվել խորհրդային Հայաստանի սահմաններում:

Այս ամենով հանդերձ հետագա տարիներին ու տասնամյակներին էլ շարունակվեց տարագիր հայության հայրենադարձությունը: Բայց պետք է ասել, որ հետպատերազմյան առաջին տարիներին հայրենադարձները առանձնապես մեծ զրկանքներ ու հալածանքներ կրեցին, նրանցից շատերը ապրեցին հոգեկան մեծ դրամա ու խոր հիասթափություն:

**Հայրենիք-Սփյուռք** Չնայած կոմունիստական համակարգի ողունորած կաղերի հետագա անվտահությանը՝ սփյուռքահայությունը միշտ էլ ընդլայնում է կարոտախտ ու խոր ակնածանք է ունեցել իր փոքրիկ հայրենիքի հանդեպ: Հայրենիք-սփյուռք առնչություններն ավելի սերտացան 50-60-ական թվականներից, երբ խորհրդային երկրում սկսվեց, այսպես կոչված, խրուշչովյան «հալոցքը» ազատականացումը: Այդ ժամանակներից հայրենիք-սփյուռք հարաբերություններում գոյություն ունեցող քաղաքական արգելքները զգալիորեն սահմանափակվեցին: Հայրենիք-սփյուռք կապերը ստացան ավելի կայուն բնույթ: 1964 թ. հիմնվեց Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտե, որը գիտամշակութային ամուր կապեր հաստատեց Հայաստանի և աշխարհով մեկ սփոված 2-3 մլն-ի հասնող հայության միջև: Խորհրդային Հայաստանը օգնում էր սփյուռքին հայապահպանության գործում, մայրենի դասագրքեր ու այլ գրականություն էր ուղարկվում արտերկիր, այնտեղից Հայաստան վերապատրաստման էին գալիս ուսուցիչներ, մտավորականներ, մշակույթի աշխատողներ, Հայաստանի բուհերում ու տեխնիկումներում ուսանում էին հարյուրավոր սփյուռքահայ երիտասարդներ, պարբերաբար կազմակերպվում էին մշակութային միջոցառումներ և այլն:

Բայց դրա հետ մեկտեղ՝ խոչընդոտվում էր հայրենիքի և սփյուռքի մշակույթի գործիչների ստեղծագործական լիաթոք կապը: Կուսակցական, քաղաքական-գաղափարական նկատառումներով սփյուռքահայ գրողները, մշակույթի մյուս գործիչները բաժանվում էին ցանկալիների և անցանկալիների: Հայաստանում տպագրվում էին առաջինների երկերը և գործերը, իսկ երկրորդներինը, ընդհակառակը, արգելվում ու հալածվում:

Հայրենիքի և սփյուռքի կապերը նոր հիմքերի վրա դրվեցին 90-ական թվականների սկզբներից՝ խորհրդային կայսրության փլուզումից և Հայաստանի անկախության հռչակումից հետո:

**Սփյուռքի  
հասարակական-  
քաղաքական կյանք:**  
**Հայ դատը միջազգային  
առյաններում**

Սփյուռքահայ հասարակական-քաղաքական կյանքը, ինչպես ամեն մի հասարակական օրգանիզմ, շերտավորված էր: Այնտեղ էին գործում հայ ավանդական կուսակցությունները՝ Հ.Յ. Դաշնակցությունը, Ս.Դ. Ինչակյանը և Ռամկավար ազատականը որոնցից առավել ազդեցիկն ու խորհրդային կոմու-

նիստական համակարգի հետ անհաշտը համարվում էր Դաշնակցությունը: Թեև այս կուսակցությունների միջև գոյություն ունեին միջկուսակցական և ներքաղաքական տարածայնություններ ու պայքար, որոնք էլ զգալիորեն խոչընդոտում էին սփյուռքի միասնությանը, բայց և այնպես ազգապահապահության, հայրենադարձության, Հայ դատի, մշակույթի հիմնախնդիրներում նրանք հիմնականում համերաշխվել են, գրավել են հայանպաստ դիրք:

Արտերկրում գտնվող հայի ամենանվիրական իղձերից գլխավորը եղել ու մնում է Հայկական հարցը լուծված տեսնելը, իր ազատագրված Երկիր վերադառնալն ու հանգրվանելը: Հարկ է նկատել, որ Հայ դատին՝ հայկական հողերի պահանջատիրությանը, Հայոց ցեղասպանության ճանաչմանը հետամուտ լինելը դարձել է սփյուռքահայության գոյատևման յուրահատուկ կենսաձևը: Ինչոր տեղ ու ինչոր չափով սփյուռքահայը ապրում ու գոյատևում է այդ պահանջատիրության երբեմն իրագործման հույսով: Եթե մարի այդ հույսը, ապա օտար միջավայրում սոցիալ-հոգեբանորեն ու գործնականորեն կարագանա նրա ուժացումը և վերջնական ձուլումը:

Այդ է պատճառը, որ սփյուռքի հասարակական-քաղաքական ակտիվ շրջանները մշտապես կենսարթուն են պահում Հայ դատը՝ հողերի պահանջատիրությունը, Եղեռնի միջազգային ճանաչումը, հայ ժողովրդին պատճառված վնասների հատուցումը և այլն: Նրանք բոլոր թույլատրելի և անգամ ծայրահեղ (ահաբեկչական-ԱՍԱԼԱ) միջոցներով ջանում են մեծ ու փոքր պետությունների, աշխարհի հանրության ուշադրությունը հրավիրել հայերի պահանջատիրության, Հայոց Եղեռնի ճանաչման վրա, և պետք է ասել, որ այդ թափած ջանքերի շնորհիկ վերջին տարիներին կարողացել են հասնել շոշափելի արդյունքների:

1987 թ. հունիսին Ստրասբուրգում (Ֆրանսիա) առաջին անգամ միջազգային հեղինակավոր Եվրախորհրդարանը (այն ժամանակ ներկայացնում էր 12 պետություն) 150 ձայնով ընդունեց «Հայկական բանաձև», որով, ՄԱԿ-ի ԳԱ 1948 թ. դեկտեմբերի 9-ին ընդունած ցեղասպանության մասին Կոնվենցիայի հիման վրա ճանաչվեց Հայոց ցեղասպանության փաստը և այն դատապարտվեց: Մինչ այդ, Հայոց Եղեռնը դատապարտել էին Ուրուգվայը, Արգենտինան, Կիպրոսը, Ֆրանսիան և այլ երկրներ, իսկ որոշ միջազգային կազմակերպություններ էլ (ինչպես ժողովուրդների միջազգային դատարանը՝ 1983 թ.) ճանաչել էին Թուրքիայի կողմից հայերի ցեղասպանության փաստը:

Հայկական հարցը և Եղեռնի ճանաչման խնդիրը նոր շրջափուլ թեակոխեցին 80-ական թվականների վերջերից, երբ սկսվեցին Արցախյան շարժումը և Հայաստանի անկախացման գործընթացը: Արտերկրում արցախյան հիմնախնդիրը դիտվեց որպես Հայկական հարցի բաղկացուցիչ մաս: 1990 թ. օգոստոսին Հայաստանի նորընտիր Գերագույն խորհրդի ընդունած առաջին իսկ հիմնարար փաստաթղթում՝ Անկախության մասին հոչակագրում, արձանագրվեց, որ Հայաստանի Հանրապետությունը սատար է կանգնում Հայ դատի միջազգային ճանաչմանը:

Հայոց մեծ Եղեռնի դատապարտման ու միջազգային ճանաչման գործում նշանակալի իրադարձություն հանդիսացավ 1995 թ. ապրիլին, ցեղասպանության 80-ամյա տարելիցի նախօրեին, Ռուսաստանի Դաշնության Պետական դումայի միաձայնությամբ ընդունած հայտարարությունը՝ 1915-1922 թթ. Օսմանյան կայսրությունում հայ ժողովրդի նկատմամբ գործադրված ցեղասպանության և դրա դատապարտման մասին:

Առանձնապես ուշագրավն այն է, որ այդ ծանրակշիռ փաստաթղթում հատուկ նշվում է, որ հայերի ցեղասպանությունը իրագործվել է իրենց իսկ պատմական հայրենիքում, և որ պանթյուրքիզմի պլաններից բխող այդ ոճրագործությունը նպատակ է ունեցել պայմաններ ստեղծել Ռուսաստանի փլուզման համար:

Անշուշտ, Եվրախորհրդարանի և Ռուսաստանի Դաշնության Պետական դումայի վերոհիշյալ պատմական որոշումները ուղենշային դարձան Հայ դատի միջազգային ճանաչման ճանապարհին:

Հայոց ցեղասպանության 80-ամյա տարելիցի նախօրեին ԱՄՆ-ի 68 կոնգրեսականներ ևս բարձրացրին ցեղասպանության ճանաչման հարցը: Հարկ է նշել, որ Հայոց անկախ պետականության պայմաններում առաջին անգամ ցեղասպանության տարելիցի նշումը մեծ արձագանք առաջացրեց ամբողջ աշխարհում: Մեկ տարի անց 1996 թ., Հունաստանի խորհրդարանը, ձայների ճնշող մեծամասնությամբ, «Ապրիլի 24-ը հոչակեց Թուրքիայի կողմից գործադրված Հայոց ցեղասպանության հիշատակի օր»: Խորհրդանշական է պատմական ճակատագրով հայ ժողովրդին բախտակից հույն օրենսդիր մարմնի այս որոշումը:

**Սփյուռքի մշակութային կյանք** 1915 թ. սրի քաշվեց ողջ արևմտահայ մտավորականության սերուցքը, որը մեծ հարված էր հայ մշակութային կյանքին: Այնուամենայնիվ, Յայրենիքը կորցրած արևմտահայության բեկորները իրենց մեջ ուժ գտան օտար հողի վրա շարունակելու ընդհատված արևմտահայ մշակութային կյանքը՝ ձևավորելով սփյուռքահայ յուրահատուկ մշակույթ:

Օտար երկրներում ձուլման մշտական վտանգի տակ գտնվող հայությունը երբեք չթուլացրեց իր կրթամշակութային կապերը մայր հայրենիքի հետ: Սփյուռքում կրթամշակութային գործի կազմակերպումը հիմնականում կենտրոնացած էր մշակութային, հայրենակցական ու բարեգործական միությունների ձեռքում: Առանձնապես համահայկական լայն ընդգրկում ուներ Յայոց բարեգործական ընդհանուր միությունը (ՅԲԸՄ): Այն հիմնվել էր 1906 թ., եգիպտահայ մեծահարուստ, ազգային խոշոր գործիչ Պողոս Նուրար փաշայի կողմից: Յայ բարեգործականը հասարակական-քաղաքական և կրթամշակութային բազմաբեղուն գործունեություն ծավալեց գաղթաշխարհում: Նա իր մասնաճյուղերն ուներ աշխարհի 20-ից ավելի հայաշատ պետություններում: Յայոց բարեգործականի հայանպաստ դերը գնահատելու համար բավական է ասել, որ հետպատերազմյան հայրենադարձության կապակցությամբ, 1946-1947 թթ. ընթացքում, նա ցույց տվեց ավելի քան 1,5 մլն դոլարի օգնություն՝ այդ գումարի մի մասը փոխանցելով ՀԽՍՀ կառավարության հաշվեհամարին:

Օտար միջավայրում հայության, հայոց լեզվի, հայկական մշակույթի պահպանման ու զարգացման կարևոր օջախներն էին համարվում դպրոցն ու եկեղեցին: 70-ական թթ. կեսերին սփյուռքում գործում էին շուրջ 300 տարրական և միջնակարգ դպրոցներ՝ մոտ 90 հազ. սովորողներով: Արտերկրում լավ համարում ունեին Յայկազյան քոլեջը (Բեյրութ), Լևոն Նաճարյան-Գալուստ Կյուլպենկյան միջնակարգ դպրոցը (Յալեպ), Մելգոնյան (Կիպրոս) և Մուրադ Ռաֆայելյան (Վենետիկ) վարժարանները, Ամերիկյան միջազգային քոլեջը (ԱՄՄ) և այլն:

Սփյուռքում լույս էին տեսնում ավելի քան 150 անուն հայերեն պարբերականներ թերթեր ու ամսագրեր, որոնք ունեին կուսակցական, գիտական, գրական-գեղարվեստական և մշակութային ուղղվածություն: Դրանցից առանձնապես հանրածանաչ էին հնօրյա «Բազմավեպն» ու «Յանդես ամսօրյան», «Անահիտը», «Յայրենիքը», «Արեգը», «Վեմը», «Յառաջը», «Ասպարեզը», «Մարմարան», «Ալիքը», «Բագինը», «Արևածագը» և այլ պարբերականներ:

Հայկական գաղթօջախներում գիտության ամենազարգացած ճյուղը հայագիտությունն էր: Այս բնագավառում ակնառու դեմքներից էին Ներսես Ակինյանը, Արշակ Չոպանյանը, Արշակ Ալպոյածյանը, Գարեգին Շովսեփյանը, Հակոբոս Տաշյանը և ուրիշներ:

Սփյուռքում էին ստեղծագործում հայ գրականության ականավոր շատ դեմքներ՝ Ավետիս Ահարոնյանը, Լևոն Շանթը, Նիկոլ Աղբալյանը, Զապել Եսայանը, Երվանդ Օտյանը, Համաստեղը, Հակոբ Օշականը, Հակոբ Մնձուրին, Վահան Թեքեյանը, Շահան Շահնուրը, Մուշեղ Իշխանը, Վահե Հայկը, Հակոբ Կարապենցը և այլք:

Արտաքին ու ներքին սփյուռքում, կապված հայ ժողովրդի պատմական ճակատագրի հետ, ասպարեզ են գալիս նաև օտարագիր հայ գրողներ՝ Վիլյամ Սարոյանը, Մարիետա Շահինյանը, Մայքլ Արլենը, Անրի Թրուայան, Շառլ Ազնավուրը, Սևիա Սևանը և ուրիշներ: Բայց նրանք սերտորեն կապված էին Հայաստանին և նույնպես պատկանում են հայ գրական ընտանիքին: Սփյուռքահայ գրողների ստեղծագործությունների հիմնական թեմաներն էին Մեծ Եղեռնը և հայպահպանության խնդիրը: Նրանց ավելի ու ավելի բնորոշ է դառնում, այսպես կոչված, «կարոտի» և «նահանջի» գրականությունը:

Անցած ավելի քան 70 տարիներին սփյուռքում հանդես եկան արվեստի (կերպարվեստի, գեղանկարչության, երաժշտության, թատրոնի, կինոյի և այլն) համաշխարհային ճանաչում ստացած անհատականություններ (Շառլ Ազնավուր, Բարսեղ Կանաչյան, Ալան Շովիաննես, Լիլի Չուգասյան, Լուսին Ամարա, Էդգար Շահին, Հակոբ Գյուրջյան, Գառզու (Գառնիկ Զուլումյան), Ժանսեմ (Շովիաննես Սեմերջյան), Հարություն Կալենց, Գրիգոր Շլյյան, Ռուբեն Մամուլյան, Անրի Վեռնոյ (Աշոտ Մալաքյան) և շատ ուրիշներ:

Սփյուռքի մշակույթը հայ ժողովրդի միասնական մշակույթի ինքնատիպ ու անբաժան մասն է:

## **ԿԱՐԵՎՈՐ ԴԵՊՔԵՌԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

### **Մեր թվարկությունից առաջ**

- 1 մլն տարի առաջ - Մարդու հանդես գալը Հայկական լեռնաշխարհում:  
800 հազ. - 10 հազ. թթ.- Հին քարի դարը (պալեոլիթը) Հայկական լեռնաշխարհում:
- X-VI հազարամյակներ - Նոր քարի դարը (նեոլիթը) Հայաստանում:
- VI-IV հազ. - Հնդեվրոպական նախամայր լեզվի տրոհումը Առաջավոր Ասիայում:
- V-IV հազ. - Պղնձի-քարի դարը (էնեոլիթը) Հայաստանում:
- III-II հազ. - Բրոնզի դարը Հայաստանում:
- III-II հազ. - Հայ ժողովրդի կազմավորումը:
- XXIII դար - Աքքաղական արծանագրության հիշատակությունը Արմանի (Արմանում) Երկրի մասին:
- XIV-XIII դդ. - Հայասա-Ազգի ցեղային միությունը (թագավորությունը):
- XIII-IX դդ. - Նաիրի ցեղային միությունը:
- II հազ. վերջերից - Երկաթի դարի սկզբնավորումը Հայաստանում:
- IX-VI դդ. - Վանի (Ուրարտու, Արարատյան) թագավորության ժամանակաշրջանը:
- 860-843 թթ. - Վանի թագավորության հիմնադիր Արամե կամ Արամ թագավորի գահակալությունը:
- 810-786 թթ. - Սենուա արքայի գահակալությունը:
- 786-764 թթ. - Արգիշտի I-ի գահակալությունը:
- 782 թթ. - Երեբունի-Երևան քաղաքի հիմնադրումը:
- 714 թ. - Ասսուրական Սարգոն II թագավորի արշավանքը և Խալդի տաճարի կողոպտումը Մուսասիր քաղաքում:
- 612 թ. - Ասորեստանի մայրաքաղաք Նինվեի կործանումը:
- 580-ական թթ. - Վանի թագավորության վերացումը:
- VI դարի առաջին կեսեր - Երվանդյան արքայատոհմի հիմնադրումը. Երվանդ Սակավակյաց:

- 550-529 թթ. - Պարսից Կյուրոս Մեծ արքայի գահակալությունը:
- 521 թ. - Յայերի ապստամբությունը Աքեմենյան տիրապետության դեմ: Բեհիսթունյան արձանագրությունը:
- 331 թ. - Գավգամելայի ճակատամարտը:
- 323 թ. - Ալեքսանդր Սակեդոնացու մահը:
- 312 թ. - Սելևկյան տերության հիմնումը:
- 190 թ. - Սագմեսիայի ճակատամարտը հռոմեական և սելևկյան զորքերի միջև:
- 189 թ. - Մեծ Յայքի և Ծոփքի անկախության հռչակումը:
- 189-160 թթ. - Արտաշես I-ի գահակալումը: Արտաշեսյան հարստության հիմնումը:
- 170-ական թթ. - Արտաշատ մայրաքաղաքի հիմնադրումը:
- 95-55 թթ. - Տիգրան II Մեծի գահակալությունը:
- 69 թ. հոկտեմբերին - Տիգրանակերտի ճակատամարտը:
- 68 թ. - Արածանիի ճակատամարտը:
- 66 թ. - Արտաշատի հաշտության պայմանագիրը:
- 55-34 թթ. - Արտավազդ II-ի գահակալությունը:
- 53 թ. - Խառանի ճակատամարտը:
- 36-34 թթ. - Անտոնիոսի պարթևական արշավանքը:
- 31 թ. սեպտեմբերի 2-ին - Ակտիումի ծովային ճակատամարտը:
- 31 թ. - Արտավազդ II-ի մահը:
- 30-20 թթ. - Արտաշես II-ի գահակալումը:
- 27 թ. մ.թ.ա. - 14 մ. թ. - Օկտավիանոս Օգոստոսը հռոմեական կայսր:

## Մեր թվականություն

- 1 թ. - Արտաշեսյան արքայատոհմի անկումը:
- 52 թ. - Տրդատ Արշակունին հայոց գահակալ:
- 54-64 թթ. - Տասնամյա պատերազմը:
- 64 թ. - Յուանդեայի հաշտության պայմանագիրը:
- 66 թ. - Տրդատ I-ի թագադրումը Յոռմում:
- 77 թ. - Գառնիի հեթանոսական տաճարի կառուցումը:
- 226 թ. - Սասանյան արքայատոհմի հաստատումը Պարսկաստանում:
- 298 թ. - Սծրինի 40-ամյա հաշտության պայմանագիրը:
- 298-330 թթ. - Տրդատ III Մեծ գահակալությունը:
- 301 թ. - Յայաստանում քրիստոնեության՝ որպես պետական կրոնի ընդունումը:
- 303 թ. - Ս. Եջնիածնի Մայր տաճարի հիմնումը Վաղաշապատում:
- 325 թ. - Նիկիայի տիեզերական առաջին ժողովի գումարումը և քրիստոնյաների «հավատո հանգանակի» ընդունումը:
- 330-338 թթ. - Խոսրով III Կոտակի գահակալությունը:
- 330-ական թթ. - Ղվին մայրաքաղաքի հիմնադրումը:
- 350-368 թթ. - Արշակ II-ի գահակալումը:

- 354 թ. - Յայ եկեղեցու առաջին օրենսդիր ժողովը Աշտիշատում:
- 370-374 թթ. - Պապ Արշակունու գահակալությունը:
- 371 թ. - Զիրավի ճակատամարտը հայ-հռոմեական և պարսկական զորքերի միջև:
- 387 թ. - Յայաստանի առաջին բաժանումը Պարսկաստանի և Հռոմի միջև:
- 406 թ. - Յայոց գրերի ստեղծումը Մեսրոպ Մաշտոցի կողմից:
- 428 թ. - Յայ Արշակունյաց թագավորության անկումը:
- 451 թ. մայիսի 26-ին Ավարայրի ճակատամարտը:
- 451 թ. - Քաղեղոնի համաքրիստոնական տիեզերական ժողովը:
- 481-484 թթ. - Ազատագրական կոհիվները Յայաստանում Վահան Մամիկոյանի օլխավորությամբ:
- 484 թ. - Նվարսակի հաշտության պայմանագիրը հայերի և պարսիկների միջև:
- 527-565 թթ. - Յուստինիանոս I կայսեր գահակալությունը:
- 552 թ. - Յայկական տոմարի առաջին տարին (1 թվականը):
- 571-572 թթ. - Յայերի ապստամբությունը Պարսկաստանի դեմ Կարմիր Վարդանի օլխավորությամբ:
- 591 թ. - Յայաստանի երկրորդ բաժանումը Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև:
- 640-ական թթ. - Արաբական առաջին արշավանքները Յայաստանում:
- 643 թ. - Զվարթնոցի տաճարի կառուցումը:
- 652 թ. - Յայ-արաբական հաշտության պայմանագիրը Թ. Ռշտունու և Մուավիայի միջև:
- 699 թ. - Յայաստանի վերջնական նվաճումը արաբների կողմից:
- 703 թ. - Վարդանակերտի ճակատամարտը:
- 774-775 թթ. - Յայերի մեծ ապստամբությունը արաբական խալիֆայության դեմ:
- 850-855 թթ. - Ժողովրդական նոր ապստամբությունը արաբների դեմ:
- 862 թ. - Իշխանաց իշխան պաշտոնի շնորհումը Աշոտ Բագրատունուն:
- 885 թ. - Բագրատունյաց արքայատոհմի հաստատումը:
- 885-890 թթ. - Աշոտ I Սեծի գահակալությունը:
- 890-914 թթ. - Սմբատ I-ի գահակալությունը:
- 893 թ. - Ղվինի ավերիչ Երկրաշարժը:
- 894 թ. - Ղողսի ճակատամարտը:
- 908 թ. - Վասպուրականի Արծրունյաց թագավորության առաջացումը:
- 914-928 թթ. - Աշոտ II Երկաթի գահակալությունը:
- 921 թ. - Սևանի ճակատամարտը և արաբների վերջնական վտարումը Երկրից:
- 961 թ. - Անիի հոչակումը Յայաստանի մայրաքաղաք:
- 963 թ. - Կարսի կամ Վանանդի թագավորության առաջացումը:
- 978 թ. - Գուգարքի (Լոռու) թագավորության հիմնումը:
- 987 թ. - Սյունիքի կամ Կապանի թագավորության ստեղծումը:
- 990-1020 թթ. - Գագիկ I-ի գահակալությունը:
- 1021 թ. - Վասպուրականի միացումը Բյուզանդիային:
- 1045 թ. - Անիի գրավումը Բյուզանդական զորքերի կողմից: Բագրատունյա

գավորության անկումը:

1047-1048 թթ. - Սելջուկ-թուրքերի առաջին արշավանքները Յայաստան:

1071 թ. - Սամազկերտի ճակատամարտը (սելջուկների և բյուզանդիացիների միջև):

1080 թ. - Ռուբինյան իշխանության առաջացումը Կիլիկիայում:

1084 թ. - Յայկական տոնարի կայունացումը Յովհաննես Ինաստաների կողմից:

XII-XIII դդ. - Զաքարյանների իշխանապետությունը Յայաստանում:

1198 թ. - Կիլիկիայի հայկական թագավորության հռչակումը:

1198-1219 թթ. - Լևոն II-ի՝ Կիլիկիայի հայոց թագավորի գահակալությունը:

1220 թ. - Մոնղոլների առաջին հետախուզական արշավանքը դեպի Անդրկովկաս:

1226 թ. - Յեթումյան արքայատոհմի հաստատումը Կիլիկիայում:

1236-1245 թթ. - Յայաստանի նվաճումը մոնղոլների կողմից:

1254 թ. - Յայ-մոնղոլական դաշինքի կնքումը:

1280 թ. - Գլածորի համալսարանի հիմնումը:

1342 թ. - Լուսինյան դինաստիայի հաստատումը Կիլիկիայում:

1375 թ. - Կիլիկիայի հայկական թագավորության անկումը:

1386 թ. - Լանկ Թեմուրի առաջին արշավանքը Յայաստան:

1441 թ. - Ամենայն Յայոց կաթողիկոսական աթոռի վերահաստատումը և Եջմիածնում:

1453 թ. - Կ. Պոլսի գրավումը թուրքական զորքերի կողմից:

1461 թ. - Յայոց պատրիարքության հիմնադրումը Կ. Պոլսում:

1502 թ. - Սեֆյան պետության հիմնումը Պարսկաստանում:

1512 թ. - Յայկական տպագրության սկզբնավորումը Վենետիկում Յակոբ Մեղապարտի կողմից:

1512 թ. - Թուրք-պարսկական պատերազմների սկիզբը:

1547 թ. - Յայ Ժողովորի ազատագրությանը նվիրված գաղտնի ժողովը Եջմիածնում:

1555 թ. - Ամասիայի հաշտության պայմանագիրը: Յայաստանի բաժանումը Օսմանյան Թուրքիայի և Սեֆյան Պարսկաստանի միջև:

1604 թ. - Ծահ Աբասի կողմից հայերի զանգվածային բռնագաղթեցումը Պարսկաստան և Նոր Ջուղա հայկական գաղթօջախի հիմնումը:

1639 թ. - Դիարբեքիրի հաշտության պայմանագիրը և Յայաստանի Երկրորդ բաժանումը Պարսկաստանի և Թուրքիայի միջև:

1677 թ. - Յայաստանի ազատագրությանը նվիրված Եջմիածնի գաղտնի ժողովը: Յակոբ Ջուղայեցի կաթողիկոսի ղեկավարությամբ:

1699 թ. - Անգեղակորի գաղտնի ժողովը:

1701 թ. - Խորայել Օրու գործունեության սկիզբը Ռուսաստանում:

1717 թ. - Մխիթարյան միաբանության հիմնումը Վենետիկի սուրբ Ղազար կղզում:

1722 թ. - Ռուսական բանակի Կասպիական արշավանքը:

1722-1730 թթ. - Ազատագրական պայքարը Արցախում և Սյունիքում:

- 1724 թ. - Թուրքական գործերի արշավանքները Երևանի վրա: Երևանի հերոսական պաշտպանությունը:
- 1727 թ. - Հալիծողի ճակատամարտը:
- 1728 թ. - Դավիթ-Բեկի և Եսայի Հասան-Զալալյանի մահը:
- 1794 թ. - Հայկական առաջին պարբերականի՝ «Ազդարարի» լույս ընծայումը Սադրասում՝ Հարություն Շմավոնյանի խմբագրությամբ:
- 1801 թ. - Արևելյան Վրաստանի միացումը Ռուսաստանին:
- 1804-1813 թթ. - Ռուս-պարսկական առաջին պատերազմը:
- 1806-1812 թթ. - Ռուս-թուրքական պատերազմը:
- 1813 թ. - Գյուլիստանի հաշտության պայմանագիրը:
- 1815 թ. - Լազարյան ճեմարանի հիմնումը Մոսկվայում:
- 1824 թ. - Ներսիսյան դպրոցի բացումը Թիֆլիսում:
- 1826-1828 թթ. - Ռուս-պարսկական Երկրորդ պատերազմը:
- 1827 թ. օգոստոսի 17-ին - Օշականի արյունահեղ ճակատամարտը:
- 1827 թ. հոկտեմբերի 1-ին - Երևանի գրավումը ռուսական գործերի կողմից:
- 1828 թ. փետրվարի 10-ին - Թուրքմենչայի հաշտության պայմանագրի կնքումը: Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին:
- 1828 թ. մարտ - Հայկական մարզի ստեղծումը:
- 1828-1829 թթ. - Պարսկահայերի ներգաղթը Արևելյան Հայաստան:
- 1828-1829 թթ. - Ռուս-թուրքական պատերազմը:
- 1828 թ. հուլիսի 23-ին - Կարսի ամրոցի գրավումը ռուսական գործերի կողմից:
- 1829 թ. հունիսի 27-ին - Կարինի (Երզրումի) գրավումը ռուսական գործերի կողմից:
- 1829 թ. սեպտեմբերի 2-ին - Անդրիանապոլսի հաշտության պայմանագիրը Ռուսաստանի և Թուրքիայի միջև:
- 1829-1830 թթ. - Արևմտահայերի ներգաղթը Արևելյան Հայաստան:
- 1836 թ. մարտի 11-ին - Հայ Եկեղեցու «Կանոնադրության» ընդունումը:
- 1840 թ. - Հայկական մարզի վերացումը:
- 1844 թ. - Կովկասի փոխարքայության հիմնումը:
- 1849 թ. հունիս - Երևանի նահանգի կազմակերպումը:
- 1853-1856 թթ. - Ղրիմի պատերազմը:
- 1853 թ. - Բաշկադրլարի ճակատամարտը:
- 1854 թ. - Քյուրուկդարայի ճակատամարտը:
- 1855 թ. - Կարսի գրավումը ռուսական գործերի կողմից:
- 1856 թ. - Փարիզի հաշտության պայմանագիրը:
- 1860 թ. մայիսի 24-ին - Արևմտահայերի՝ «Ազգային սահմանադրության» ընդունումը:
- 1861 թ. փետրվարի 19-ին - ճորտատիրական իրավունքի վերացումը Ռուսաստանում:
- 1862 թ. - Զեյթունի ապստամբությունը:
- 1863 թ. մարտ - «Ազգային սահմանադրության» վավերացումը թուրքական կառա-

- Վարության (Բարձր Դուռ) կողմից:
- 1870 թ. մայսի 14-ին - Գյուղացիական ռեֆորմի (կանոնադրության) ընդունումը Հայաստանում:
- 1872 թ. - «Միություն ի փրկություն» գաղտնի կազմակերպության հիմնումը Վանում:
- 1874 թ. - Գևորգյան ճեմարանի բացումը Եջմիածնում:
- 1877-1878 թթ. - Ռուս-թուրքական պատերազմը:
- 1877 թ. նոյեմբերի 1-ին - Կարսի մարզի կազմավորումը:
- 1877 թ. նոյեմբերի 6-ին - Կարսի ամրոցի գրավումը ռուսական զորքերի կողմից:
- 1878 թ. փետրվարին - Սան Ստեֆանոյի հաշտության պայմանագրի կնքումը Ռուսաստանի և Թուրքիայի միջև:
- 1878 թ. ամառ - Բեռլինի միջազգային կոնֆրենսի (Վեհաժողովի) հրավիրումը:
- 1881 թ. - «Պաշտպան հայրենյաց» գաղտնի կազմակերպության ծեավորումը Կարինում:
- 1882 թ. - «Հայրենասերների միություն» խմբակի ստեղծումը Սոսկվայում:
- 1885 թ. - Արմենական կուսակցության հիմնումը Վանում:
- 1887 թ. - Հնչակյան կուսակցության առաջացումը Ժնևում:
- 1890 թ. - Հայ Հեղափոխական Դաշնակցության ստեղծումը Թիֆլիսում:
- 1890 թ. հուլիսին - Գում Գափուի ցույցը Կ. Պոլսում:
- 1890 թ. սեպտեմբերին - Սարգիս Կուկունյանի գլխավորած մարտական խմբի արշավանքը դեպի Արևմտյան Հայաստան:
- 1894 թ. ամռանը - Սասունի ապստամբությունը:
- 1895 թ. մայիսին - Արևմտյան Հայաստանում բարենորոգումների ծրագիրը:
- 1895 թ. սեպտեմբերին - Բար Ալիի ցույցը Կ. Պոլսում:
- 1895-1896 թթ. - Հայերի զանգվածային կոտորածները Օսմանյան կայսրությունում:
- 1895-1896 թթ. - Զեյթունի ապստամբությունը:
- 1896 թ. - Վանի հերոսամարտը:
- 1896 թ. օգոստոսին - Հայ ահաբեկչների կողմից օսմանյան բանկի գրավումը Կ. Պոլսում:
- 1896 թ. - Վերակազմյալ հնչակյան կուսակցության առաջացումը:
- 1897 թ. - Խանասորի արշավանքի կազմակերպումը:
- 1899 թ. - Աղբյուր Սերոբի Եղերական մահը:
- 1899 թ. - Թիֆլիս-Ալեքսանդրապոլ-Կարս երկաթուղագծի գործարկումը:
- 1901 թ. - Առաքելոց վանքի կրիվը:
- 1903 թ. հունիսի 12-ին - Ցարական կառավարության օրենքը՝ հայ Եկեղեցու կալվածքների ու գույքի հարքունիս բռնագրավման մասին:
- 1904 թ. - Սասունի ապստամբությունը:
- 1905-1907 թթ. - Համառուսաստանյան առաջին հեղափոխությունը:
- 1905-1906 թթ. - Հայ-թաթարական արյունալի ընդհարումները:

- 1905 թ. հոկտեմբերի 17-ին - Ցարական իրամանագիրը օրենսդիր Պետական դումա (խորհրդարան) իրավիրելու և դեմոկրատական այլ ազատություններ շնորհելու մասին:
- 1906 թ. նոյեմբերի 9-ին - Ռուսաստանի վարչապետ Պ. Ստոլիպինի առաջադիմական ագրարային օրենքը:
- 1906 թ. - Յայոց բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸ) հիմնումը:
- 1907 թ. մայիսի 26-ին - Գևորգ Չառլի մահը Սուլուխի հայտնի կովում:
- 1907-1912 թթ. - «Յ.Յ. Դաշնակցություն կուսակցության դատավարության գործը»:
- 1907 թ. օգոստոսին - Եռյակ համաձայնության (Անտանտի) ստեղծումը:
- 1907 թ. դեկտեմբերին - Թուրքիայի ընդդիմադիր կուսակցությունների կոնգրեսը (համագումարը) Փարիզում:
- 1908 թ. հուլիսին - Երիտրուրքերի պետական հեղաշրջումը Թուրքիայում:
- 1908 թ. հոկտեմբերին - Յայ սահմանադրական ռածկավար կուսակցության հիմնադրումը:
- 1909 թ. ապրիլին - Կիլիկիահայության կոտորածները:
- 1912-1913 թթ. - Բալկանյան պատերազմները:
- 1912 թ. - Յայոց գրերի գյուտի 1500-ամյակի տոնակատարությունը:
- 1912 թ. դեկտեմբերին - Յայ ազգային պատվիրակության ստեղծումը՝ Եգիպտահայ մեծահարուստ Պողոս Նուբար փաշայի նախագահությամբ:
- 1913 թ. ամռանը - Արևմտյան Յայաստանում բարենորոգումների ռուսական (Մանդելշտամի) նախագծի մշակումը:
- 1914 թ. հունվարի 26-ին - Ռուս-թուրքական համաձայնագիրը՝ Արևմտյան Յայաստանում բարենորոգումներ անցկացնելու վերաբերյալ:
- 1914 թ. հուլիսի 19-ին - Առաջին համաշխարհային պատերազմի սկիզբը:
- 1914 թ. հոկտեմբերին - Պատերազմական գործողությունները Կովկասյան ռազմաճակատում:
- 1914 թ. դեկտեմբեր-1915 թ. հունվար - Սարիդամիշի ճակատամարտը: Թուրքական 3-րդ բանակի ջախջախումը:
- 1915 թ. ապրիլի 24-ին - Յայոց մեծ եղենի սկիզբը:
- 1915 թ. ապիլին - Վաճի հերոսական ինքնապաշտպանությունը:
- 1915 թ. հուլիս-օգոստոս - Մուսա լեռան դյուցազնամարտը:
- 1916 թ. փետրվարին - Կարինի (Երգրումի) գրավումը ռուսական գործերի կողմից:
- 1916 թ. - Յայ կամավորական գնդերի կազմացրումը:
- 1917 թ. փետրվարի 27-ին - Փետրվարյան հեղափոխության հաղթանակը Ռուսաստանում:
- 1917 թ. մարտի 9-ին - Կովկասի փոխարքայության վերացումը և Անդրկովկասյան հատուկ կոմիտեի (ՕԶԱԿՈՍ) ստեղծումը:
- 1917 թ. ապրիլին - Յայ ժողովրդական կուսակցության ստեղծումը:
- 1917 թ. մայիսին - Արևմտահայերի առաջին համագումարի իրավիրումը:
- 1917 թ. սեպտեմբեր-հոկտեմբերին - Արևելահայերի ազգային համագումարի իրավիրումը:

- 1917 թ. հոկտեմբերին - Յայոց Ազգային խորհրդի ստեղծումը:
- 1917 թ. հոկտեմբերի 25-ին - Բոլշևիկների գինված հեղաշրջումը Պետրոգրադում և խորհրդային իշխանության հռչակումը Ռուսաստանում:
- 1917 թ. նոյեմբերի 15-ին - Անդրկովկասյան կոմիսարիատի ստեղծումը:
- 1917 թ. դեկտեմբերի 5-ին - Երգնկայի գինադադարի ստորագրումը:
- 1917 թ. դեկտեմբերի 29-ին - «Թուրքահայաստանի մասին» դեկրետի ընդունումը Խորհրդային Ռուսաստանի կառավարության կողմից:
- 1918 թ. հունվարին - Թուրքական գորքերի հարձակումը Կովկասյան ռազմաճակատում:
- 1918 թ. փետրվարի 10-ին - Անդրկովկասյան Սեյմի (խորհրդարանի) բացումը:
- 1918 թ. մարտին - Տրապիզոնի հաշտության բանակցությունները Անդրկովկասյան կառավարության և Թուրքիայի միջև:
- 1918 թ. մարտի 3-ին - Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմանագիրը Խորհրդային Ռուսաստանի և Ավստրո-Գերմանական խմբակցության միջև:
- 1918 թ. ապրիլի 9-ին - Անդրկովկասի դեմոկրատական դաշնակցային հանրապետության (ԱԴԴՀ) անկախության հռչակումը:
- 1918 թ. ապրիլին - Կարսի գրավումը թուրքերի կողմից:
- 1918 թ. մայիսին - Բաթումի հաշտության բանակցությունները անդրկովկասյան իշխանությունների և Թուրքիայի միջև:
- 1918 թ. մայիսի 15-ին - Ալեքսանդրապոլի գրավումը թուրքերի կողմից:
- 1918 թ. մայիսի 22-26-ին - Սարդարապատի հերոսամարտը:
- 1918 թ. մայիսի 23-28-ին - Բաշ-Ապարանի ճակատամարտը:
- 1918 թ. մայիսի 24-28-ին - Ղարաքիլիսայի ճակատամարտը:
- 1918 թ. մայիսի 26-ին - Անդրկովկասյան Սեյմի լուծարումը և Վրաստանի անկախության հռչակումը:
- 1918 թ. մայիսի 27-ին - Ադրբեջանի անկախության հռչակումը:
- 1918 թ. մայիսի 28-ին - Յայոց ազգային խորհրդի ընդունած որոշումը՝ Յայաստանի անկախության հռչակման մասին:
- 1918 թ. հունիսի 4-ին - Բաթումի հաշտության պայմանագիրը Յայաստանի Յանրապետության և Թուրքիայի միջև:
- 1918 թ. օգոստոսի 1-ին - Յայաստանի խորհրդի (առաջին խորհրդարանի) բացումը:
- 1918 թ. հոկտեմբերի 30-ին - Մուղրոսի գինադադարը: Թուրքիայի կապիտուլյացիան:
- 1918 թ. նոյեմբերի 11-ին - Առաջին աշխարհամարտի ավարտը:
- 1919 թ. հունվարի 19-ին - Փարիզի հաշտության կոնֆերանսի բացումը:
- 1919 թ. մայիսի 28-ին - Յայաստանի կառավարության հայտարարությունը Միացյալ և Անկախ Յայաստանի հռչակման մասին:
- 1919 թ. օգոստոսի 1-ին - Յայաստանի 2-րդ խորհրդարանի բացումը:
- 1920 թ. հունվարի 31-ին - Յայաստանի համալսարանի բացումը:
- 1920 թ. ապրիլի 28-ին - Ադրբեջանի խորհրդայնացումը:

- 1920 թ. մայիսին - Բոլշևիկների Մայիսյան ապստամբությունը Հայաստանում:
- 1920 թ. օգոստոսի 10-ին - Սևրի հաշտության պայմանագիրը:
- 1920 թ. սեպտեմբերի 1-8-ին - Արևելքի ժողովուրդների համագումարը Բաքվում:
- 1920 թ. սեպտեմբերի 23-ին - Թուրք-հայկական պատերազմի սկիզբը:
- 1920 թ. հոկտեմբերի 30-ին - Կարսի գրավումը թուրքերի կողմից:
- 1920 թ. դեկտեմբերի 2-ին - Երևանի համաձայնագրի կնքումը Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչ Բ. Լեգրանի և Հայաստանի կառավարության ներկայացուցիչ Դրոյի միջև: Հայաստանի խորհրդայնացումը:
- 1920 թ. դեկտեմբերի 2-ին - Ալեքսանդրապոլի հաշտության պայմանագրի կնքումը:
- 1921 թ. փետրվարի 18-ին - Ժողովրդական ապաստամբության հաղթանակը Հայաստանում:
- 1921 թ. փետրվարի 25-ին - Վրաստանի խորհրդայնացումը:
- 1921 թ. մարտի 16-ին - Ռուս-թուրքական բարեկամության պայմանագիրը:
- 1921 թ. ապրիլի 2-ին - Երևանի վերագրավումը Կարմիր բանակի կողմից: Խորհրդային իշխանության վերականգնումը Հայաստանում:
- 1921 թ. հուլիսի 5-ին - ՌԿ(թ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի որոշումը Լեռնային Ղարաբաղը (Արցախը) Ադրբեյջանին բռնակցելու մասին:
- 1921 թ. սեպտեմբերին - Հայաստանի օգնության կոմիտեի (ՅՕԿ) ստեղծումը:
- 1921 թ. հոկտեմբերի 13-ին - Կարսի պայմանագիրը Անդրկովկասյան հանրապետությունների և Թուրքիայի միջև:
- 1922 թ. մարտի 12-ին - Անդրֆեդերացիայի ստեղծումը:
- 1922 թ. դեկտեմբերի 30-ին - ԽՍՀՄ կազմավորումը:
- 1922 թ. նոյեմբերի-1923 թ. հուլիս - Լոզանի միջազգային կոնֆերանսի գումարումը:
- 1935 թ. - ԽՍՀՄ ԳԱ Հայկական մասնաճյուղի (Արմֆանի) հիմնումը:
- 1936 թ. դեկտեմբերի 5-ին - ԽՍՀՄ Նոր սահմանադրության ընդունումը:
- 1937 թ. - Զանգվածային բռնությունների բարձրակետը:
- 1939 թ. սեպտեմբերի 1-ին - Երկրորդ աշխարհամարտի սկիզբը:
- 1941 թ. հունիսի 22-ին - Հայրենական մեծ պատերազմի սկիզբը:
- 1943 թ. նոյեմբերին - Հայաստանի գիտությունների ակադեմիայի հիմնումը:
- 1945 թ. ապրիլի 30-ին - Հայկական համաշխարհային կոնգրեսի բացումը Նյու Յորքում:
- 1945 թ. մայիսի 9-ին - Ֆաշիստական Գերմանիայի դեմ տարած հաղթանակի օրը:
- 1945 թ. սեպտեմբերի 2-ին - Երկրորդ աշխարհամարտի ավարտը:
- 1949 թ. հունիսին - Հայերի զանգվածային աքսորը Ալբայի Երկրամաս:
- 1953 թ. մարտի 5-ին - Ի. Ստալինի մահը:
- 1956 թ. փետրվարին - ԽՍԿԿ Համագումարը: Անձի պաշտամունքի դատապարտումը:
- 1961-1981 թթ. - Արփա-Սևան ջրատար թումելի (48 կմ) շինարարությունը:

- 1965 թ. - Հայոց մեծ Եղեռնի 50-ամյա տարեդարձի նշումը:
- 1968 թ. - Երևանի հիմնադրման 2750-ամյակին նվիրված տոնակատարությունը:
- 1987 թ. հունիսին - Եվրախորհրդարանը դատապարտեց Հայոց ցեղասպանությունը:
- 1988 թ. փետրվարի 20-ին - Արցախյան շարժման սկիզբը:
- 1988 թ. դեկտեմբերի 7-ին - Սպիտակի ավերիչ Երկրաշարժը:
- 1989 թ. նոյեմբերին - «Հայոց համագոյային շարժում (ՀՀԾ)» կազմակերպության ստեղծումը:
- 1990 թ. օգոստոսի 23-ին - Հայաստանի Գերագույն խորհրդի (խորհրդարանի) հոչակագիրը Հայաստանի անկախության մասին:
- 1991 թ. սեպտեմբերի 21-ին - Հայաստանի անկախության հանրաքվեի անցկացումը:
- 1991 թ. սեպտեմբերի 23-ին - Հայաստանի անկախության հոչակումը:
- 1991 թ. դեկտեմբերի 10-ին - Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության հոչակումը:
- 1991 թ. դեկտեմբերին - ԽՄՀՄ փլուզումը և Անկախ պետությունների համագործակցության (ԱՊՀ) ստեղծումը:
- 1992 թ. - Հայաստանի անդամագրվելը ՄԱԿ-ին:
- 1992 թ. մայիսի 9-ին - Շուշիի ազատագրումը:
- 1995 թ. ապրիլի 14-ին - Ռուսաստանյան Դաշնության Պետական դումայի կողմից հայոց ցեղասպանության ճանաչումը:
- 1995 թ. հուլիսի 5-ին - Հայաստանի Սահմանադրության ընդունումը և Հայաստանի Ազգային ժողովի (խորհրդարանի) ընտրությունների անցկացումը:
- 1999 թ. մայիսի 30-ին - Հայաստանի Ազգային ժողովի ընտրությունները:
- 1999 թ. Հոկտեմբերի 27-ին - Աննախադեպ ահաբեկչական ակտ Հայաստանի Ազգային ժողովի դահլիճում:

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Խոսք ընթերցողին.....	5
Հայաստանի բնաշխարհը .....	7
ԲԱԺԻՆ ԱՌԱՋԻՆ: ՀՆԱԳՈՒՅՆ ԵՎ ՀԻՆ ՂԱՐԵՐ .....	13

## Գլուխ առաջին

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՍԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ (ՀՆԱԳՈՒՅՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻՑ  
ՄԻՆՉԵՎ Մ.Թ.Ա. VI ՂԱՐԵ)

1. Հայաստանը նախնադարում .....	13
2. Հայկական լեռնաշխարհի հնագույն ցեղերն ու ցեղային միությունները: Հայ ժողովորդի կազմավորումը.....	16
3. Վանի (Արարատյան) թագավորությունը (մ. թ. ա. IX-VI դարեր).....	20

## Գլուխ երկրորդ

ՀԱՅԱՍՏԱՆԸ Մ.Թ.Ա. VI-I ՂԱՐԵՐՈՒՄ

1. Երվանդումիների (Հայկազունների) համահայկական թագավորությունը (մ. թ. ա. VI-III դդ.) .....	25
2. Մեծ Հայքի միասնական թագավորությունը: Արտաշես I .....	29
3. Հայաստանի հզորացումը Տիգրան Մեծի օրոք.....	31
4. Հայաստանը Տիգրան Մեծի հաջորդների օրոք: Արտաշեսյան թագավորության անկումը.....	34

## Գլուխ երրորդ

ՀԱՅԱՍՏԱՆԸ Մ.Թ. I-V ՂԱՐԵՐՈՒՄ

1. Արշակունյաց թագավորության հաստատումը Հայաստանում: Տրդատ I.....	37
2. Հին Հայաստանի տնտեսական կյանքը և պետահասարակական կարգը.....	42
3. Հին հայկական մշակույթը (հնագույն ժամանակներից մինչև մ. թ. III դարը).....	48
4. Ավատատիրական հարաբերությունների ձևավորումը: Քրիստոնեության ընդունումը.....	52
5. Պայքար հայկական պետականության պահպանման համար IV դարում: Արշակ II.....	56

6. Հայաստանը Պապի գահակալության տարիներին:	
Արշակունյաց թագավորության անկումը:.....	59
ԲԱԺԻՆ ԵՐԿՐՈՐԴ: ՄԻԶԻՆ ԴԱՐԵՐ (V-XVIII դդ.).....	63
<b>Գլուխ չորրորդ</b>	
ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՉԱՐԸ V-VI ԴԱՐԵՐՈՒՄ	
1. Ազատագրական պայքարը 450-451 թթ.: Ավարայրի ճակատամարտը.....	64
2. Ազատագրական կոհիվները Հայաստանում 481-484 թթ.....	67
3. Հայաստանը VI դարում: Հայաստանի երկրորդ բաժանումը.....	69
<b>Գլուխ հինգերորդ</b>	
ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՐԱԲԱԿԱՆ ԽԱԼԵՖԱՅՈՒԹՅԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱԿ (VII-IX դդ.)	
1. Արաբական արշավանքները Հայաստան VII դարում:	
Հայաստանի նվաճումը.....	73
2. Հայ ժողովրդի ազատագրական պայքարը արաբական տիրապետության դեմ VIII դարում.....	75
3. 850-855 թթ. ապստամբությունը արաբական տիրապետության դեմ.....	78
4. Հայկական մշակույթը IV-IX դարերում.....	80
<b>Գլուխ վեցերորդ</b>	
ՀԱՅԱՍՏԱՆԸ ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ IX-XI ԴԱՐԵՐՈՒՄ	
1. Հայաստանի անկախության վերականգնումը:	
Բագրատունիների թագավորության հաստատումը.....	86
2. Սմբատ I-ի և Աշոտ II-ի պայքարը Հայաստանի անկախության ամրապնդման համար.....	88
3. Բագրատունյաց թագավորության վերելքը (X դարի 30-ական թթ. -XI դարի սկիզբ).....	90
4. Բագրատունյաց թագավորության մասնատումը և անկումը.....	92
5. Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքը և պետական կարգը IX-XI դդ.....	94
<b>Գլուխ յոթերորդ</b>	
ԱՊԱՆՈՎՈՐԱԿԱՆ ԾԱՐԺՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ VII-XI ԴԱՐԵՐՈՒՄ	
1. Պավլիկյան շարժումը Հայաստանում VII-IX դարերում.....	99
2. Թոնդրակյան շարժումը Հայաստանում IX-XI դարերում.....	101
<b>Գլուխ ութերորդ</b>	
ՀԱՅԱՍՏԱՆԸ ՍԵԼՁՈՒԿ-ԹՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՄՈԽՈԼՆԵՐԻ ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ (XI-XV ԴԱՐԵՐ)	
1. Հայաստանը սելջուկ-թուրքերի արշավանքների և տիրապետության շրջանում (XI-XIII դարեր).....	104
2. Հայաստանը մոնղոլների տիրապետության շրջանում:	

Թուրքմենական ցեղերը Հայաստանում (XIII-XV դդ.).....107

### **Գլուխ իմներորդ**

Կիլիկիա3Ի ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ (XI-XIV ԴԱՐԵՐ)

1. Ուրբինյան իշխանության առաջացումը և  
թագավորության հռչակումը: Լևոն II.....111
2. Կիլիկիայի հայկական թագավորությունը XIII-XIV դարերում.....114

### **Գլուխ տասներորդ**

ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ X-XIV ԴԱՐԵՐՈՒՄ.....118

### **Գլուխ տասնմեկերորդ**

ՀԱՅԱՍՏԱՆԸ XV-XVIII ԴԱՐԵՐՈՒՄ

1. Թուրք-պարսկական պատերազմները XVI-XVII դարերում և  
Հայաստանի բաժանումները.....123
  2. Հայաստանի ազատագրության հարցը և  
Խորայել Օրին (XV դար և XVIII դարի սկիզբ).....126
  3. Ազատագրական պայքարը Արցախում (1722-1730 թթ.).....129
  4. Ազատագրական պայքարը Սյունիքում: Դավիթ-Բեկ:  
Մխիթար Սպարապետ (1722-1730 թթ.).....132
  5. Հայ ազատագրական պայքարի նոր վերելքը  
XVIII դարի երկրորդ կեսին: Հովսեփ Էմին.....133
  6. Մադրասի խմբակը և Հայաստանի ազատագրության  
ծրագրերը XVIII դարի երկրորդ կեսին.....135
  7. Հայկական մշակույթը XV-XVIII դարերում.....137
- ԲԱԺԻՆ ԵՐՐՈՐԴ: ՆՈՐ ԵՎ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆ.....141

### **Գլուխ տասներկուերորդ**

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻԱՑՈՒՄԸ ՈՒԽԱՍՏԱՆԻՆ

(XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԵՐԵՍՆԱՅՅԱԿ)

1. Իրադրությունը Հայաստանում XIX դարի սկզբին.....143
2. 1826-1828 թթ. ռուս-պարսկական պատերազմը և  
Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին.....145
3. 1828-1829 թթ. ռուս-թուրքական պատերազմը.....149

### **Գլուխ տասներեքերորդ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՏՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

XIX ԴԱՐԻ 30-70-ԱԿԱՆ ԹՁ.

1. Արևելյան Հայաստանը Ռուսաստանի կազմում  
(XIX դարի 30-60-ական թվականներ).....152
2. Արևմտյան Հայաստանը XIX դարի 30-60-ական թթ.....155
3. 1862 թ. Զեյթունի ապստամբությունը.....159
4. Հայկական մշակույթը XIX դարի առաջին կեսին.....161

5. Հայ իասարակական-քաղաքական հոսանքները 1850-1860-ական թթ.....	163
6. 1870 թ. գյուղացիական ռեֆորմը և կապիտալիզմի զարգացումը հետոք ռեֆորմյան Հայաստանում.....	166

### **Գլուխ տասնչորսերորդ**

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ  
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ  
(XIX ԴԱՐԻ ՎԵՐՁԻՆ ՔԱՌՈՐԴ)

1. 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը և Հայկական հարցը.....	169
2. Հայ ազգատագրական խնբակներն ու կազմակերպությունները 1870-1880-ական թթ.....	172
3. Հայ ազգային-քաղաքական կուսակցությունների ձևավորումը.....	174
4. Հայ ազգային-ազատագրական շարժումները և հայկական կոտորածները XIX դարի 90-ական թթ.....	178
5. Հայկական մշակույթը XIX դարի երկրորդ կեսին.....	185

### **Գլուխ տասնհինգերորդ**

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀԽ ԴԱՐԻ ՍԿՋԲՆԵՐԻՆ (1900-1914 ԹԹ.)

1. Հայաստանը ՀԽ դարի սկզբին.....	189
2. Արևելյան Հայաստանը համառուսաստանյան առաջին հեղափոխության և դրան հաջորդող տարիներին (1905-1912 թթ.).....	196
3. Արևմտյան Հայաստանը 1908-1914 թթ.....	202

### **Գլուխ տասնվեցերորդ**

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴՈՉ ԱՌԱՋԻ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1914-1917 ԹԹ.)

1. Ռազմական գործողությունները Կովկասյան ռազմաճակատում և հայերը (1914-1917 թթ.).....	210
2. Հայոց մեծ եղեռնը.....	213
3. Արևմտահայերի ինքնապաշտպանական մարտերը 1915 թվականին.....	216

### **Գլուխ տասնյոթերորդ**

ՌՈՒՍԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՒՄԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՏԿԱԽՈՒԹՅԱՆ  
ՀՈՉԱԿՈՒՄԸ (1917 Թ. ՓԵՏՐՎԱՐ-1918 Թ. ՄԱՅԻՍ)

1. Հայաստանը 1917 թ. փետրվարյան հեղափոխության և հոկտեմբերյան հեղաշրջման ժամանակաշրջանում.....	218
2. Թուրքական զորքերի ներխուժումը Հայաստան 1918 թ.՝ Մայիսյան հերոսամարտերը.....	223
3. Հայոց անկախ պետականության վերականգնումը: Բաթումի հաշտության պայմանագիրը.....	227
4. Հայկական մշակույթը ՀԽ դարի սկզբներին (1900-1917 թթ.).....	229

## **Գլուխ տասնութերորդ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ (1918-1920 թթ.)

1. Հայաստանի Հանրապետության կազմավորումը.....	233
2. Հայկական հարցը Փարիզի կոնֆերանսում: Սկրի պայմանագիրը.....	240
3. 1920 թ. Մայիսյան ապստամբությունը Հայաստանում.....	246
4. Արցախը և Զանգեզուրը 1918-1921 թթ.....	250
5. 1920 թ. թուրք-հայկական պատերազմը: Հայաստանի Հանրապետության անկումը: Հայաստանի խորհրդայնացումը.....	255

## **Գլուխ տասնիներորդ**

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ (1920-1939 թթ.)

1. 1921 թ. Փետրվարյան ապստամբությունը Հայաստանում.....	265
2. 1921 թ. մարտի 16-ի Մոսկվայի և հոկտեմբերի 13-ի՝ Կարսի պայմանագրերը .....	270
3. Անդրֆեդերացիայի հիմնումը և ԽՍՀՄ կազմավորումը.....	272
4. Հայաստանի տնտեսության վերականգնումը (1921-1928 թթ.).....	274
5. Խորհրդային Հայաստանի տնտեսությունը նախապատերազմյան տարիներին (1929-1939 թթ.).....	279
6. Խորհրդային Հայաստանի մշակույթը 1920-1930-ական թվականներին.....	284

## **Գլուխ քսաներորդ**

ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐԴԱՄԱՐՏԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

(1939-1945 թթ.) ..... 289

## **Գլուխ քսանմեկերորդ**

ՀԱՅԱՍՏԱՆԸ 1946-2000 թթ.

1. Խորհրդային Հայաստանը 1946-1985 թթ.....	297
2. Հայաստանը «Վերակառուցման» ժամանակաշրջանում (1985-1991 թթ.) .....	306
3. Արցախյան շարժումը (1988-2000 թթ.).....	309
4. Հայաստանի անկախության հռչակումը և պետականության կայացման գործընթացը .....	315
5. Հայկական մշակույթը (1946-2000 թթ.).....	321

## **Գլուխ քսաներկուերորդ**

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒԹԸ (1921-2000 թթ.)..... 328

ԿԱՐԵՎՈՐ ՂԵՂՔԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ..... 337

ԱՇԽՍ ՍԱՐԳՍԻ ՍԱՐԳՍՅԱՆ,  
ԱՐԱՐԱՏ ՄԻՒԹԱՐԻ ՀԱԿՈԲՅԱՆ

**ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ**  
(Հնագույն շրջանից մինչև մեր օրերը)

**ԽՄԲԱԳԻՐ  
և վերստուգող սրբագրիչ՝ Հ.Ց. ՊԵՏՐՈՍՅԱՆ**

Ստորագրված է տպագրության՝ 14.06.2004թ.:

Տպագրությունը՝ փոքր օֆսեթ:

Ֆորմատ՝ (60x84) 1/16:

Շարվածքը՝ համակարգչային:

Ձուլդը՝ «օֆսեթ»: 22 տպ. մամ.:

Պատվեր՝ 616

Տպաքանակ՝ 500

*Տպագրված է Հայաստանի Պետական ճարտարագիտական  
Համալսարանի տպարանում*

Երևան, Տերյան 105